


# ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ



# ԱՄԵՆԵՆ ՄԱՔՈՒՐ ՀԱՅԵԼԻՆ ՑԵՂԻՆ...

Ակնարկներ դասական  
երաժշտության մասին



## ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇ

ԱՍԵՆԵՆ ՍԱԶՈՒՐ ՀԱՅԵԼԻՆ ՑԵՊԻՆ...  
Ակնարկներ դասական երաժշտության մասին

Երևան


Գրականության և արվեստի բանգարանի հրատարակչություն  
2008

**DANIEL YERAZHISHT**

**THE BEST REFLECTION OF THE NATION...  
Essays on Classical Music**

36194

Yerevan  
Publishing House of Museum of Literature and Art  
2008



ՀՏԴ 78  
ԳՄԴ 85.3  
Դ 171

Առաջարանը՝ արվեստագիտության թեկնածու Մհեր Նավոյանի:  
Խմբագիր՝ բանասիրության թեկնածու Աքծովի Բախչինյան:

Դ 171 Դանիել Երաժիշտ, Ամենեն մաքուր հայելին ցեղին... Ակնարկներ դասական երաժշտության մասին: - Եր.: Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 2008, - 276 էջ:

Գիրքն ընդգրկում է ճանաչված երգահան, դիրիժոր, երաժշտագետ Դանիել Երաժշտի հոդվածների և էսսեների մի ընտրանի:  
Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 85.3

ISBN 978-99930-60-80-2

© Դանիել Երաժիշտ, 2008:  
© Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 2008:

## **ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ**

Սույն ժողովածուն կարելի է բնորոշել կոմպոզիտոր Մաքս Բուտինգի խոսքերով՝ «Իմ վերապրած երաժշտության պատմություն»:

Այն պարունակում է «Համաշխարհային դասական երաժշտություն» հեղինակային հաղորդաշարիս նյութերը, որոնք հեռարձակվել են «ՎԵՄ» ռադիոկայանով։ Զետեղված են նաև մամուլում տպագրված հոդվածներ և էսսեներ։

Գրքի երատարակմանն աջակցելու համար խորին երախտագիտություն եմ հայտնում քրոջ՝ դաշնակահարուիկի Ժասմեն Դանիելյանին։

Շնորհակալություն առաջին ընթերցողիս, կնոջ՝ Ռուզան Հովսեփյանին։

Երախտապարտ եմ նաև Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի քանգարանի աշխատակցուիկ Հեղինե Մուրադյանին՝ գրքի սըրագրական աշխատանքներն ինքնակամ հանձն առնելու համար։

Շնորհակալ եմ նաև գրքի խմբագիր Արծվի Բախչինյանին՝ օգտակար խորհուրդների և գիրքը կոմիտայան խոսքերով վերնագրելու համար։

Ժողովածուն արգասիք է սիրո՝ սեր, որ բխում է Բախի, Մոցարտի, Բեթհովենի, Բրամսի, Կոմիտասի և այլ դասականների երաժշտության խորքերից, սեր, որը ակնածանքով փոխանցում եմ ընթերցողներին։

**Դանիել ԵՐԱԺԻԾ**

2008, փետրվար, Երևան

**Գ**րիգոր Դանիելյանի գրքի ճախարանն այսպես վերնագրեցի՝ փաստելու համար, որ հայ երաժշտության պատմության մեջ նշանավոր երաժշտների շարքում այլևս երկու երախտավոր կա Դանիել Երաժիշտ անունով։ Ուստի, Գրիգոր Մագիստրոսի «Թղթերից» և այլ աղբյուրներից հայտնի միջնադարյան անվանի երաժշտից այս մյուս Դանիել Երաժշտին տարբերելու ընդունված ձևակերպումը պատմական ժամանակովի հղումն է. «Դանիել Երաժիշտ. Ի.-Ի. Պ. դր.»։

Բարեբախտություն է, որ Ի.-Ի. Պարերի Դանիել Երաժիշտն իր միջնադարյան անվանակցից տարբերվելու է պահպանված, մեզ և մեր հասարակությանը ծառանգությամբ։ Այդ ժառանգությունը բաղկացած է նախ երաժշտական ստեղծագործություններից, իր իսկ հիմնած, դեկավարած մի քանի երաժշտական կոլեկտիվների համար մշակած երկացանկերից և երաժշտագիտական, առանց չափազանցության, հսկա երաժշտական ըննադարատական, երաժշտական-հրապարակախոսական հողվածներից։

Դանիել Երաժիշտն իր սերնդի հայ ակնառու երաժշտագետներից է, քայլ գործունեությամբ նեզանում ամենահայտնի և սիրված կատարողարվեստագետներից։ Միքայել Սալրումյանի, Ժան Տեր-Մերկերյանի, Գենադի Ռոժենստինսկու փայլուն ուսանողը, մնալով մեծ նվազախմբային արվեստը խմելարկող ցմահ ծառա և քուրմ, նախընտրեց դառնալ հայ ազգային երաժշտությունը տարածող մեր ժամանակի ամենահներնատիպ երաժշտներից մեկը՝ իր ոլորտը, իր ժանրը, իր երաժշտական կոլեկտիվները, իր երկացանկը սկզբից, «ապիտակ» էջից ձևավորած արվեստագետ։

Խորհրդային տարիներին ազգային արվեստը շարգելված, քայլ նորմավորվող, վերապահելի գործունեության ոլորտ էր։ Դրա ներսում հոգևոր-եկեղեցական արվեստը գուցե թե կարող էր գիտական ուսումնասիրման, քառի բուն իմաստով՝ էկիտար ճյուղ լինել, գուցե թե կարող էր պարփակվել եկեղեցում, այն էլ՝ խորհրդային «ուշ» շրջանում, քայլ երերից Պատարագի դրվագ կարող էր հնչել սոսկ «Կոմիտաս, խմբերգեր» Վերնագրով կամ չհնչել առհասարակ։ Դանիել Երաժշտը հանձնառու եղավ այդ տարիներին հայ ազգային և հայ հոգևոր-եկեղեցական երաժշտություն կատարելու։

Սնը երաժշտական իրականության այն տարիների էին մեկ իրողություն. Եկրոպական երաժշտական արվեստի քարոկու շրջանը և ավելի վառ՝ Վերածնության երաժշտությունը հայ կատարողների երկացանկում ընդգրկվում էին մեկ-երկու դարակազմիկ երևույթների ստեղծագործություններ։

բյամբ, միայն, ասեմք, Վիվալդի, Բախ, Հենդեև, Էլի թիշ անուններ, բայց այդ շրջանի, այդ ոճի թիշ թե շատ նպատակային արտացոլանք չկար: Դանիել Երաժշտի գործունեության մյուս երեսն էլ այդ հզոր, հոյակերտ արվեստի հաստատումն էր արձանագրում մեր կատարողական երկացանկերում, մեր երաժշտական կենցաղում: Նա այն առաջին արվեստագետներից էր, որ նախ կարևորեց եւրոպական արվեստի հիշյալ շնորհը գեղարվեստական արժեքի անհրաժեշտությունը մեզանում, ապա ձեռնամուխ եղավ համապատասխան կազմի երաժշտական համույթի ստեղծմանը և այնուհետև՝ մի շարք վարպետների մեզ թիշ հայտնի ստեղծագործությունների կատարմանը:

Այս ինապոտվ Դանիել Երաժշտը 1970–1980-ականներին մեր երաժշտական փորձառության (պրակտիկայի) շրջանակներն ընդլայնող ամենաերկելի արվեստագետներից է: Սակայն իմ խոսքի պատճենությունը, ուրախ առիջը Դանիել Երաժշտի սույն ժողովածուն է: Լայն մտահորիզոնի, ընդհանուր և մասնագիտական ինացականության առումով վրատահարք կարող ենք ասել՝ մեզանում Դանիել Երաժշտը թիշ համենատելիներ կարող է ունենալ: Դրանով հանդերձ, նրա՝ որպես երաժշտական-հասարակական ընթացքներին հետևող երաժշտ-երաժշտագետի ամենակարևոր, ամենասուր զենքը ծկուն երաժշտագիտական միտրն ՝ շաղախսված նուրբ հումորով, սրամիտ բառախսաղերից մինչև սուր սարկազմի հասնող դիպուկ ձևակերպումներով: Իսկ երաժշտի մտավորական կեցվածքը պայմանավորող հիմնական սկզբունքը հասարակության նշակարային կյանքի ախտի և աղտի հետ սուր «անհամատեղելիությունն» է և արժանի, դրական երևույթների նկատմամբ սրտաբաց ողջույնի, շոայլ մեծարանքի պատրաստականությունը: Մի խոսքով, եթե չեմ սիավուն, դեռևս 19-րդ դարում ձևավորված «հին» սկզբունքներով, իրական արվեստի, իրական արժեքի կշրջան ունեցող հայ մտավորական է երաժշտ-հրապարակախոս Դանիել Երաժշտը:

Եթե փորձեմք իրար շաղկապված երաժշտական քննադատության և երաժշտական հրապարակախոսության ամենակարևոր տարրերակիշները քվել, ապա գուցե առաջիններից մեկը այն է, որ քննադատը կոնկրետ դրսնորման, երևույթի վերլուծողն ու արժենորդն է, իսկ իրապարակախոսությունը, դրանով հանդերձ, մշակույթի զարգացման ընդհանուր տրամաբանության ախտորոշմանք, կանխորոշմանք, ուղղորդմանք գրադպողը: Գուցե այսպես կամ գուցե վիճելի է այս մոտեցումը, սակայն երկու ոլորտներն էլ մեզանում ամենազարգացմաներից չեն, թեև իսկապես երևելի քննադատներ ունեցել ենք:

Հրապարակախոսական ֆորմատը շատ ավելի եզակի է եղել մեր իրականության մեջ, որովհետև հիշյալ գաղափարախոսական ընդհանրացման գործառույթը խորիրդային տարիմերին չնպարագված էր պաշտոնա-

կամ գաղափարախոսության անշրջանցելիությամբ: Այլ խոսքով՝ հասարակական հնչողության մշակութային երևոյթների մասին այլ «մտածողներ» կային, և դա երաժշտ-մտավորականի պարտը չէ:

Ինչուեւ, ոլորտի նշանավոր անուններն ավելի արժեքավոր են մեզ համար, քան մույն ոլորտի թերությունները:

Ահա, առիր է խոսելու նորագույն շրջանի հայ ամենավառ երաժշտ-հրապարակախոսի՝ Դանիել Երաժշտի մասին: Ընդգրկված հոդվածներն ու էսսեները արտացոլում են իր հետաքրքրությունները, իր դավանած արժեքները և մեր հասարակության հոգևոր միջավայրի առողջ զարգացման համար, իր ընտրությամբ, առաջնահերթ անհրաժեշտության երաժշտական դրսորումները: Ասած փաստելի է նրանով, որ հեղինակն այդ արժեքներին անդրադարձել է կան համերգային, կան երաժշտագիտական ելույթներում, կան հեռուստատեսային և ուղիղուաղողումներում և կան թերթային, ամսագրային հոդվածներում: Այսինքն, Դանիել Երաժշտը հրատապ է համարում մեզանում համաշխարհային երաժշտական այս արժեքների սերմանումն ու դրանց խորացումը: Ներկայացված են կոմպոզիտորներ, որոնց արվեստը շարքային երաժշտի կրթության հիմքն է, սակայն Դանիել Երաժշտի իդեալը այդ արժեքների գրու մասնագիտական շրջանակի ճեղքումն ու լայնացումն է:

Նպատակը, պետք է խոստովանել, դժվար հասանելի է մի հասարակության մեջ, որը հսկա մշակութային ժառանգության տեր լինելով, այսօր իր երաժշտական կենցաղի ցուցիչով նշանակալիորեն վարակված է ուսուվ, զգալիորեն բռնված փոփ ազդեսիայի հիստերիկ տենդով, զիտակցված կամ տարերարայնորեն միսրճած թե՛ արևելյան, թե՛ արևմտյան ցածրորակ բիզնես-մշակույթի անմաքուր, իեղեղող թթվացրների մեջ:

Դանիել Երաժշտը պնդում է, որ մաքուր երաժշտական ճաշակն իր դաստիարակման ճանապարհին այլընտրանք չունի համաշխարհային եվրոպական կոմպոզիտորական արվեստի այնպիսի խորքային երևոյթների համեմատ, ինչպիսիք են Ծյուտցը, Վիվարիին, Տելեմանը, Բախը, Հենդելը, Հայդնը, Սոցարտը, Բերհովենը, Պագանինին, Շոպենը, Բրամը, Ծորաուսը, Սիբելիուսը, Կոմիտասը, Խաչատրյանը: Պնդում է հենց այն ոռմանտիկ խանդավառությամբ, որով դարձյալ ու կրկին անդրադառնում է արժեքների դասական, «նստվածքային» շերտերին: Պնդում է և, իր նպատակին համահունչ, համերգ-դասախոսության յուրատիպ ժանր է մշակել, որը մատչելի է դասական արվեստից անզամ շատ հեռու ունկընդորին:

Այս հատորում էլ ընթերցողը կհանդիպի մատչելի, պարզ և կենդանի գրույցի ոճով գրառումների, սրամիտ շարադրանքով փայլատակող խոկումների, ոչ ստանդարտ և միշտ թիրախին հարվածող, հաճախ անսպասելի ձևակերպումներով դրվագների:

Ակզրություն հրաժարվում եմ վերլուծել այս հոդվածներն ու էստեմերը, ինչը, թերևս, ժամրի պահանջը կարող էր համարվել: Հրաժարվում եմ, որովհետև երաժիշտ-հրապարակախոսի իմնական նպատակը եղել է անանց արժեքների մասին հասկանալի և համոզիչ խոսք ասել իր հասարակության ամենալայն շերտերին. Երաժշտագիտական կամ այլ բնույթի Վերլուծությունն այս դեպքում չբացատրված, անտրամաբանական հավելող էր դառնալու: Դրա փոխարեն ընթերցողը մեկ-երկու էջ ավել կկարդա Դանիել Երաժշտի գրքից՝ գրիություն պատճառելով իրեն և ինձ:

**ՄՃԵՐ ՆԱՎՈՅԱՆ**  
Արվեստագիտության թեկնածու

«ՀՄԵԼՔԱԸԸ ԴԱՐՊԱՄՆԵՐԻ ՍՈՏ Ե»...

Կրթվածորյան բարձրագույն գործուներից է՝ խոսել սեփական լեզվով: Ժողովուրդը պատկանում է ինքն իրեն: Կորի ամեն օտար բան, ընդհուայ մինչև լատինական տառերը:

Ասպարեզ է ինչու ինչ-որ ճեկը ու մի միջակ բան է կատարում: Բոլորը ողջունում են նրան՝ որպես իրենց հավասարի՝ խնամում ու փայփայում են՝ «Դու մերոնցից ես»...

Հեղեղ

**Ա**շխարհահոչակ դաշնակահար Ալեքսեյ Լյուրիմովը «ՎԵՄ» ուղղությանում մեզ տված հարցազրույցում խոստովանեց. «Զգիտեմ Հայաստանում ինչպես, բայց Ռուսաստանում մշակութային աղետ է... Ամենազարգացած 20-րդ դարում առաջ է եկել «մշակույթի ողբ» հասկացությունը... մեռնող մշակույթի վրա ենք ողբում»... Իսկ թե ինչպես է Հայաստանում, ապա այդ մասին բազմից ասել է մամուլում, եթերում և այլուր:

Պարզապես առանձնացնենք մի բանի դրվագ: Ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանը մի հարցազրույցում ասել է. «Ժողովրդի 99 տոկոսը չի հասկանում Արվեստը... որը, ցավոք, ճրա համար պահանջ չէ... ամեն մեկը իրեն դնում է այդ 1 տոկոս հասկացողների մեջ... Այն, ինչով հրապուրված է մեր երիտասարդությունը, կապ չունի արվեստի հետ: Ցավոք, շարժական հոգեբանությունն է տիրապետող ամենուր...»<sup>1</sup>: Ներկայիս երիտասարդությանը ակադեմիկոսը բնորոշում է որպես ազգային կերպարից զորկ, իսկ իշխանությունների վերաբերմունքը՝ «ապիկարություն, ցինկ անհոգություն և բացարձակ անպատճախանատվություն»՝ պատմականութեն աննախադեպ»...

Հիրավի, դեռ Գարեգին Նժդեհն էր ասում. «Կուլտուրան եթե ազգային չէ, կուլտուրա չէ: Ազգը եթե կուլտուրական չէ, ազգ չէ»: Գրիգոր Գուրզադյանը, մտահոգված արտազարթով, կոչ է անում. «Երկիր լինելու, ժողովուրդ լինելու ամենակարևոր պայմանը՝ կառչած մնալ մայր հողին»:

Վերջերս նույն «ՎԵՄ» ուղղությանով իր մտահոգությունն է հայտնել նաև կոմպոզիտոր Եղուարդ Հայրապետյանը. «Ես վախ եմ ապրում, որ հայ դասական երաժշտությունը կործանվի... ամեն ինչ անում են, որ ոչընչացնեն...»:

1. «Հայացք Երևանից», Երևան, 2002, թիվ 2, էջ 23:

Դարեր շարունակ հալածված հայ ժողովորդը առանց պետության կարողացել է կերտել, պահել իր մշակույթը, հավատը: Եվ փոխստարձարար՝ եկեղեցին, մշակույթը պահել են ժողովրդի ինքնությունը: Իսկ այսօր ունենք մի պետություն, որը կարելի է ասել «նվեր» և ստացել «պատրաստի» մի ժողովորդ իր փառահեղ մշակույթով, և այս ամենը «իր աչքի առաջ» վատնում է, փոշիացնում, «գայլերի» բաժին դարձնում, այն էլ «գորշ գայլերի»...

Հանրապետության համապատասխան մարմինները հաճախ են դիմում միջազգային կազմակերպություններին՝ կանխսելու համար արտերկրի հայկական հուշարձանների ավերումը: Մինչդեռ մենք ինքներս ենք հարված հասցնում մեր մշակույթին:

Այսպես որ շարունակվի, օտարները ավելի շատ կօգտվեն հայ մշակույթից, քան հայերը...

Դեռ մ.թ.ա. 5-րդ դարում Պլատոնն էր ասում, որ պետության լավագույն պաշտպանությունը երաժշտությունն է՝ վեհ, ներդաշնակ, պարզ և համեստ, այլ ոչ կանացի, վայրի կամ խառնիճաղանց: Իսկ Պլատոնից առաջ, աշխարհի մյուս ծայրում, Կոնֆուցիոսն ասել է. «Հոգ տանել այն երաժշտության մասին, որը բարեհմայում լինելով, միաժամանակ վեհացնող է... Չեյն հարստության երաժշտությունը արգելել... այն խոռվությունը է սերմանում... խուսափել սին ճառախոսությունից...»: Ըստ չինացի փիլիսոփայի, իմաստությունը, անշահախնդրությունը և խիզախությունը ձևավորվում և կատարելագործվում են վայելության և երաժշտության օրենքներով<sup>2</sup>: Ինչ վերաբերում է այսօրվա զանգվածային «երգարտադրության», ապա զա համաճարակ է, երաժշտական աղանդ, երաժշտության «քաղցկեր» սրընթաց տարածվող:

Տարբեր դարերում այդ «շարվեստը» հակադրվել է ազնիվ արվեստին և ստացել համապատասխան որակում: Մովսես Խորենացու օրոր հայոց եկեղեցին կշտամբում էր վարձակներին՝ մարմնական երգերի ու նվազների համար: Եկրոպայում նման երգերը անվանում էին «սատանայական երգեր»: Մարտին Լյուիզերը դրանք բնութագրել է որպես «անամոք երգեր» և ստեղծել բարեպաշտ երգերի մի ժողովածու, որպեսզի երիտասարդները հեռու մնան դրանցից:

Այսօր հասարակությունը պաշարվել է «սինթեզատորային-հարվածային» խելահեղ երգերի, երգիշների հրոսակախմբերով: Երգերի «կենդանի դիակներ», որոնք «քիված» են հայկական, ոռոսական, բուրբական, պարսկական, արաբական, նեգրական ոճերի տնազներից և բավոններից: Եվ այս ամենը հաճախ խցկված է լինում մեկ երգի սահմաններում:

2. Կոնֆուցիոս, Զրույցներ, Եր., 1991, էջ 109, 123:

Նույնը վերաբերում է երգերի անհերեք խոսքերին, կիրառվող նվազարամներին: Աղմկալից այս երգերում հաճախ հնչում են հայոյանքներ, կատարվում անվայել շարժուձևներ: Տարօրինակ է, բայց 20-րդ դարի շարարաստիկ նորամուծություններից է «կանացի սերսուալ երգի» ժանրը: (Այդ երգերը կարելի է կոչել «Վեներական երգեր» կամ «ֆիզիոլոգիական»): Եվ հենց ըստ էստրադայի վարպետներ Եվգենի Պետրոսյանի, Սիխայի Զաղորնովի, Եվգենի Վինոկորի, նման երգերը հասցեազրված են «գերիներին», իսկ երաժշտագետ Ա. Տրոհցիկին դրանք անվանում է «կետտից պատրաստած կոնֆետներ»: Եվ այդ «կոնֆետներով» էլ սնում են նաև մատադ սերնին՝ պղտորելով երիտասարդների հոգիները: Մի՞ն երաժշտության անտեսանելիությունը ազատում է այն աղավաղելու, պղդելու պատասխանատվորությունից...

Եթե պետությունը տեսնում է այդ վտանգը, բայց չի ցանկանում դիմակայել, ուրեմն... Եթե պետությունը չի տեսնում և չի հասկանում վտանգը, ուրեմն...

Իսկ եթե պետությունը տեսնում և հասկանում է վտանգը, բայց ուժ չունի պահպանելու մշակույթը, պաշտպանելու իր ժողովրդին, ուրեմն... ինչ չիցե, ուստի կ կննդանիներն իրենց ապրելու, սմվելու միջավայրը ձգտում են մարութ պահել: Ինչ խոսք, ինչ-որ բան արվում է, սակայն մշակության այս պատերազմում այդ «ինչ-որ բանը» կոսմետիկական նորոգումներ է հիշեցնում: Հաճախ է եղել երբ պետություններն իրենց թերությունները ռողարկել են գիտության, արվեստի, սպորտի նվաճումներով: Ներկայուն հայկական մշակույթի ասպարեզում տեղի են ունենում առանձին փայլատակումներ, բայց դրանք համաժողովրդական ընդգրկում և հճնդություն չունեն, քանզի ինչպես վերը ճշվեց, ժողովուրդը դրա պահանջը չունի. մեծ մասը հացի խնդրով է գրադարձ, իսկ «ուրախ» խավը նման է «հարրած նավի» ուղևորների՝ իրենց խնջույքներով, «մարմնական» երգերով, ավելի ստույգ՝ աղմուկով:

Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը համոզված էր, որ իսկական արվեստը, երաժշտությունը մեծ ուժ է, և եթե «մարդկության ղեկավարները խորապես ըմբռնեին այն, մեր ճակատագիրն էլ այլ կիմներ»: Պատմությանը հայտնի են թագավորներ, որոնք տաղանդավոր կոմպոզիտորներ են եղել: Այսօր էլ կան պետական գործիչ երաժիշտներ՝ Շրյուդերը, Վիտանուտա Լանդգրեգիսը... Ճիշտ է, Պետրոս 1-ինը արվեստագետ չէր, բայց մեծ տեղ էր տալիս մշակույթին, և ի թիվս նյուու քարեփիխությունների, կարգադրել էր «քոյարներին» շարարը մեկ ունկնդրել արևմտաեվրոպական դասական երաժշտություն: Պետերքուրգ էր հրավիրում իտալացի երաժիշտների, ուստի ին էր գործուղում Խոտայի և այլն:

Այսօր անհնարին է նման բարեփոխություններ իրականացնել Հայաստանում: Պատահական չէ Գրիգոր Գուրգառյանը պնդում, որ ներկա

անմիտիքար վիճակը շուտ չի կարգավորվի: Եթե պետությունն ավելի շատ հանդուժում է անձաշակ՝ քան ազնիվ արվեստը, ապազգայինը՝ քան ազգայինը, եթե միևնույն մրցանակը պարզեւում է հակոտնյաներին, ապա դրանով իսկ արժեզրկում է իր իսկ շնորհը: Ուստի անհմաստ է սպասել պետության հովանափորությանը: Այս դեպքում ո՞րն է ելքը:

«Ora et labora»՝ «Աղոթիր և բանի՛ր», ահա վաղնջական կոչը, որին պետք է հետևենք և մենք:

Մատադ սերնդի հայեցի դաստիարակությունը պիտի ստանձնեն «անձինք նուիրեալը»՝ առաջին քրիստոնյա նահատակների նախանձախընդուրությամբ: Մեծ դեր պիտի խաղա ուսուցիչների անձնական օրինակը:

Եթե ժողովուրդը չունենա կրոն, մշակույթ, արվեստ, ապա պաշտպանելու քան էլ չի ունենա, քանզի հետությամբ կարող է չդիմադրել, ծովվել ու տարրալուծվել հակառակորդի զանգվածի մեջ: Զինվորը պետք է քաջ գիտակցի իր կոչումը, իմանա՝ ում և ինչ է պաշտպանում: Այս գործում անգերազնահատելի է ուսուցիչների, դպրոցի դերը:

Ահավասիկ մշակույթի պաշտպանությանը նպաստող մոտավոր մի ծրագիր.

1. հայ երեխայի առաջին տպավորությունները պիտի լինեն հայոց լեզուն և լեզվից բխած հայկական ժողովրդական և դասական երաժշտությունը:

2. Անհրաժեշտ է վերականգնել օրորոցային երգերի ավանդույթը (բայց ոչ ձայնագրված վիճակում):

3. Դադարեցնել մանկապարտեզներում, դպրոցներում և այլ կրթօջախներում որպես ֆոն հնչող անձաշակ երաժշտությունը՝ լինի դա հայկական թե օտար:

4. Կրթօջախներում կազմակերպվող միջոցառումներում կիրառվող երաժշտությունը նախ պիտի լինի ազգային, հետո միայն հանրամատչելի, ընդ որում՝ միայն քարձրաճաշակ:

5. Միջնակարգ դպրոցներում, բուհերում «Մշակույթի պատմություն», «Կրոնի պատմություն» առարկաների շրջանակներում լուսաբանել կրոնի, մշակույթի և արվեստի առնչությունները:

6. Երգ-երաժշտության դասերին դպրոցականները պիտի սովորեն խմբովի երգել հայկական-ժողովրդական, ազգային-հայրենասիրական և հոգևոր երգեր:

7. Անհրաժեշտ է դասական երաժշտության հայտնի նմուշների ունկնդրումներ, ֆիլմերի դիտումներ, որոնց ընթացքում աշակերտները կտիրապետնեն լրելու և լսելու արվեստին (հեռու կմնան «սին ճառախոսներից»):

8. Ուսումնական հաստատություններում, հիմնարկներում ստեղծել երգչախմբեր, մեծ տեղ տալ խմբերգային արվեստին, որի միջոցով հասա-

բակության մեջ կանավորվի հոգևոր միասնականության ճշնոլորտ (այսոք է գոնե մի քանի երգ կարողանանք ողջ ազգով երգել):

9. Ձեսպորել իայեցի կրթությամբ մարդ-մասնագետ, քաղաքացի, այլ ոչ դերակատար, կամակատար:

10. Ինչպես Լեզվի տեսչությունը հսկում է հանրապետությունում հայոց լեզվի անխաթար կիրառմանը, ինչպես նախկինում Հուչարձանների պահպանման կոմիտեն էր հսկում պատմամշակութային հուչարձանների վիճակը, հարկ է հիմնել նման մի կազմակերպություն, որը կվանի ազգային մշակույթի աղավաղությը և ոչնչացման փորձերը:

Այս բարեփոխությունները պետք է շտապ իրագործել, քանզի վտանգը վերահաս է՝ «Հանիքալը դարպասների մոտ է»...

«Մշակույթի պատմական գանձարանն այնքան հարուստ է, որ ապագա համալրման իմաստով անհանգատանալու կարիք չկա: Սինչեն մշակույթն ունի գործնական, բարոյական մի կողմ, որն առօրյա կյանքում անվանում ենք նրբավարություն, քաղաքավարություն... Այն ունի եզակի և վիրսարի նշանակություն», – գրում է Վլադիմիր Սոլովյովը:

«Զի կարելի ոչ մեկից պահանջել ո՛չ բարձրագույն առարինություն, ո՛չ մեծ խելք կամ հանճարեղություն: Բայց կարելի է և պարտադիր՝ բոլորից պահանջել նրբավարություն: Դա այն նվազագույնն է, որի շնորհիվ մարդիկ կարող են ապրել մարդավայել», եզրակացնում է մեծ փիլիսոփան: Հիրավի, առանց այդ նվազագույնի, առանց փոխադարձ հարգանքի նոյնիկ ամենավեհ մշակույթը չի պատվաստվի, այն կրող չի լինի, չի տարածվի, ինչպես ալիքները՝ առանց տարածման դաշտի: Մյուս կողմից, նման նրբավարություն մարդ ձեռք է բերում հաղորդվելով գեղեցիկի, վեհի, բարձր արվեստի հետ: Թվում է, թե մոզական մի շրջան է՝ նախ աշխարհը պետք է փրկի գեղեցիկը, որպեսզի գեղեցիկը փրկի աշխարհը:

## ՍՈՆՈՂԻԱ, ՊՈԼԵՖՈՆԻԱ ԵՎ ՀՐԳԵՎՈՐ ԵՐԱԺԾՏՈՒԹՅՈՒՆ

Յիրափ բազմաձայն երգեցողութիւնը  
սքանչելաց սքանչելիք է...

Կոմիտաս<sup>1</sup>

**Մ**երօրյա մշակութային պատերազմի բովում, արհեստական խառնածին երաժշտության համաճարակի մթնոլորտում առավել և անհրաժեշտություն է առաջանում արժեքների վերագնահատման: Անյնա կերպով են վարդում Բախի, Բերիովենի, Կոմիտասի և այլ դասականների ժառանգության հետ, ներկայացնում են ջազային և էստրադային ոճով՝ հակասելով դրանց առաքելությանը: Նույն կերպ են վարդում ժողովրդական և աշուղական երաժշտության հետ: Եվ մեխանիկական այս խառնորդը որակվում է որպես նորարարություն, մշակում՝ խաքարելով նաև այս հասկացության իմաստը: Ստեղծվել է ոճերի, ժանրերի, լեզուների բարելոյնան մի խառնարան:

Տարածայնություններ կան նաև հնագույն, հոգևոր երաժշտության մեկնարանության և կատարման ասպարեզում:

Ոմանք պահանջում են «քարողի» ժամանակաշրջանի երաժշտությունը կատարել միայն քանզարանային նվազարաններով, իին լարվածքով, առանց vībrato, յուրօրինակ տենպերով, հնյունարանությամբ և այլն: Ոմանք էլ նույն «փաստավագերագրական» մուտեցումը պահանջում են միջնադարյան հոգևոր երաժշտության վերարտադրման գործում:

Հինը տառացի վերարտադրելու ջատագովներին ժամանակին ժամանակակին պատասխանել է մեծ դիրիժոր Վիլիելմ Ֆուրբվենգերը: «Կամերային-երաժշտական էֆեկտները, որոնց մասին մենք խոսում ենք այսօր որոշ դարաշրջանների առնչությամբ, այսինքն՝ այն մեկնությունները, որոնք արհեստականորեն և գիտակցարք սահմանափակում են հեղինեղուկ հնչողությամբ, սեթեր, չոր մաներայով, երբեք և ոչ մի տեղ գոյություն չեն ունեցել, գոյց քե միայն մեր երևակայության մեջ»:<sup>2</sup> Նման «պահանջատերերին» ամվանելով «փարիսեցիններ», իսկ իինը տառացիորեն վերականգնելու փորձերը՝ «կեղծարարություն», Ֆուրբվենգերը տարակուսում է, թե նրանք հաշվի չեն առնում, որ ժամանակակից մեծ սրահը, երեւ շունի եկեղեցու արձագանք, ոչ միայն քուացնում, այլև փոխում է հնչողության որակը: Ունկնդիրների հոգերանությունն էլ այլ է, քան անցյալում: Անշուշտ, միաձայն երգեցողությունն իր հմայքը և կյանքի իրավունքն ունի,

1. Կոմիտաս, Նամակներ, Եր., 2000, էջ 68:

2. Исполнительское искусство зарубежных стран, Москва, 1966, стр. 162.

սակայն միայն դրանով սահմանափակվելը կաղքատացնի մեզ: Ըստ փիլիսոփաների, առանց զանազանության մշակույթը ինքնազարգացում չի ունենա:

Հիրավի, միաձայն շարականի երգեցողությունը համերգասրահում, կտրված արարողությունից, հնչում է մերկ, ոչ այնքան ազդեցիկ, որքան եկեղեցում: Զգացնել է տալիս խումկի բուրմունքի, սպառապատկերների, սրբազն մքնուրոտի պակասը: Մինչդեռ բազմաձայն երգեցողությունը, կարծեն, լրացնում է այդ պակասը՝ ուշադրությունը գրավելով հնչյունային «տիեզերռով»:

Այս և նման այլ մտքերը հիմնավորելու և տեղատարափ հարցերի լարիինքուից ելք գտնելու համար դիմում ենք դասական անանց արժեքներին: Այդպիսիք են միջնադարյան հոգևոր երգարվեստը և դրանից բխած դասական երաժշտությունը:

Եվ որպես «Արիադնեի թել», զիմվում ենք լույսի շղողով, որը անդրադառնում է, ճառագում սաղմուներից, խորամերից դեպի Բախի բազմաձայն արգելաւոր, շարականներից՝ դեպի Կոմիտասի երգարվեստը և անցնում գալիքին...

Սույն գրության մեջ փորձում ենք հետևել միաձայն երգից դեպի բազմաձայնություն (լայն ինաստով) տանող ուղիներին, ըմբռնել եկեղեցու հայրերի, փիլիսոփաների, երաժշտագետների գաղափարները և դրանց բախումներն ու զարգացումը: Մեր օգտագործած աղբյուրների գօալի մասը դեռևս չկա հայերեն բարգմանված: Սրանով է պայմանավորված մեջքերումների առատությունը, քանզի ջանացել ենք հնարավորին շատ տեղեկություններ փոխանցել հայ ընթերցողին՝ դրանով իսկ «ականատես» և հաղորդակից դարձնել այդ «գաղափարների դրամային»:

\*

\*

Պոլիֆոնիան՝ բազմաձայնությունը, բխել է մոնողիայից՝ միաձայնությունից, ինչպես ծրածանի գույները մեկ՝ «սպիտակ» լույսից: Ինչպես հասկը՝ ցորենի հատիկից, ինչպես խիտ սաղարթը՝ մանանեիսի սերմից: Սրանք լոկ մակերեսային համեմատություններ չեն: Շե՞ որ ցանկացած հնչյունի հետ միաժամանակ հնչում են նաև իր օքերտոնները՝ վերնահընչյունները: Ահա այդ «թարմնված» հնչյուններից էլ գոյացել են հնչյունաշրերը, որոնք և հանդիսանում են բազմաձայնության հիմքը:

Որոշ ժողովրդական նվազարանների, օրինակ, վարդանի օքերտոնները այնքան լսելի են, որ իմնական մեղենին նվագելիս գոյանում են «օքերտոնային մնանդիններ»<sup>3</sup>:

Ըստ 11-րդ դարի փիլիսոփա Էրիգենայի, Աերդաշնակությունն, առհա-

3. Музыкальная энциклопедия, том 3, Москва, 1976, стр. 1066.

սարակ, «երաժշտության էությունն է, ներքին սկզբունքը՝ հիմնված բազմաձայնության վրա»<sup>4</sup>: Նույնը պնդում էր և Հովոն Սեն-Վիկտոր մենաստանից: «Երաժշտությունը կամ հարմոնիան բազում հակադրությունների միավորված համաձայնեցում է»<sup>5</sup>: Բազմաձայնության անցած այդ ճանապարհը լի էր դժվարություններով:

Պատմության ընթացքում որևէ նոր երևոյթ ընդունվում կամ ներժվում է հաճախ ոչ որպես այդպիսին, այլ գաղափարական, կամայական կամ այլ նկատառումներով: Նման բան նկատվում է նաև Եկեղեցում նվազարանների գործածության և երգեցողության հարցում: Հին կտակարանը վկայում է, որ Դավիթն իր սաղմուներում կիրառել է բազմաթիվ նվազարաններ: Միջնադարում քրիստոնեական եկեղեցու հայրերը, երաժշտագետները նվազարանների գործածության վերաբերյալ ցուցաբերել են տարբեր նոտեցումներ: Ոմանք դրական էին վերաբերվում, մյուսները դրանք դիտում էին որպես խորիդանիշեր, այլաբանություն: Ոմանք էլ պնդում էին, թե նվազարանները սատանայից են՝ մատնանշելով վարձակներին, փողոցային նվազածուներին, վկայակոչելով հերանոսական խրախճանքները:

Ասովածաշունչը վկայում է. «Դափիք առնում էր քնարը և իր ձեռքովը ածում, և Ասովող հանգստանում և լաւանում էր, և չար ոգին նորա վերայից գնում էր» (Ա Թագ. ԺԶ, 23):

Բացի քնարից, Դափիք սաղմուներում նշվում են բազում այլ նվազարաններ: Սակայն Կղեմենտ Աղեքսանդրացին, Աքանաս Սեծը տաս լարանի սաղմուն նվազարանը համարում էին տասը պատվիրանների նշանակը, իսկ եռանկյունաձև քնարը՝ Սուրբ Երրորդության:

Ըստ Բարսեղ Կեսարացու, երգեհոնը խորիդանշում է մարդու մարմինը, որը լարված է երաժշտության սկզբունքով՝ Արարշին վառաքանելու համար<sup>6</sup>:

Մեկ այլ աշխատության մեջ Կղեմենտ Աղեքսանդրացին միևնույն նվազարանը դիտում է որպես մի քանի խորիդանիշ՝ «Հավանաբար սաղմուներովի քնարը այլարանորեն նշում էր նախ Տիրոջը, իսկ երկորդը՝ նրանց, ովքեր Տիրոջ ներշնչմամբ, իրենց հոգու լարերից հնչյուններ են բխեցնում... Գուցեն քնարը խորիդանիշն էր փրկության ճանապարհը բռնած մարդկանց, ովքեր Բանի ներշնչմամբ և Աստծուն ճանաշելով՝ գովերգում են Արարշին»<sup>7</sup>: Կղեմենտ Աղեքսանդրացուն համամիտ են եղել

4. Музыкальная эстетика западноевропейского средневековья и Возрождения (составление текстов и вступительная статья В. П. Шестакова), М., 1966, стр. 57.

5. Անդ, էջ 58:

6. Անդ, էջ 21:

7. Անդ, էջ 99:



Բարսեղ Կեսարացին, նրա եղբայր Գրիգոր Նյուսացին և այլ հայրեր:

Դավթի առաջին սաղմոսի մեկնարանության մեջ Բարսեղ Կեսարացին գրում է. «Թեպետև գոյություն ունեն բազմաթիվ նվազարաններ... սակայն սաղմոսը միակ նվազարանն է, որը մարգարեն հարմարեցրել է սաղմոսերգությանը՝ նշելով, ըստ իս, որ այն օրինված է ի վերուստ՝ քանզի այն միակն է, որի հնչյունները բխում են զլիսամասից... որպեսզի մնենք էլ ճգվենք դեպի Բարձրյալը, այլ ոչ թե հմայվենով մեղեղիով՝ մղվենք դեպի մարմնի կրքերը»<sup>8</sup>: Հովհաննես առաքյալն իր Հայտնության մեջ երկնքից քնարահարների նվազի ճայն է լիւ: Աստվածաշունչը վկայում է, թե առաջին նվազարանը ստեղծել է Ղամերի որդի Հորալը, որ «քնարահարների և սրբնահարների հայրն Եղան» (Ծննդ. Դ, 21): Ըստ մեկնիչների, Հորալ անունը նշանակում է «հորելյան», այսինքն՝ շեփորի ճգվող ճայն: Փաստութեան, Հորալի շեփորը ազդարարեց երաժշտության երկրային պատմության սկիզբը, որը պիտի ավարտվի մեռյալների հարուրյունը և Անեղ դատաստանը ազդարարող Գարդիել հրեշտակապետի շեփորի կանչով... Ըստ Սուրբ գրքի, շեփորների ճայնը ազդարարում էր Աստծո եջը Սինա լեռ: Շեփորներով էին ուղեկցում Ուխտի տապանակը՝ անապատով դեպի Երուսաղեմ: Յոր քահանաների շեփորների «համազարկից» փլվեցին մերի մեջ քաղված Երիքով քաղաքի պատերը: Փողեր էին նվազում «շեփորների տոնի» և այլ ծեսերի ժամանակ: Արարչի պատվերով էր Սովուսը պատրաստել երկու արծարեն «հորելյանական շեփորներ», որոնք պետք է ազդարարեին հորելյանական տարիները: Պատահական չէ, որ հետագայում Յոհան Սեբաստիան Բախը իր աղոթերգություններում այդքան շատ էր գործածում քարձրահունչ փողերը: Այսպիսվ, նվազարանները ոգեղեն են և տրված են մարդուն ի վերուստ:

Հատկանշական է, որ Հովհաննես Ոսկերեանը այլարանորեն դիտելով նվազարանները, այնուամենայինվ խոստովանում է, որ իրեանները «... ծնծղանների, շեփորների, քնարների միջոցով ավելի հասկանալի էին դարձնում սաղմոսների իմաստը»<sup>9</sup>: Հետաքրքիր հարցադրում է արել Խորմա Ակվինացին. «Եթե նվազարանները մերժել են, որպեսզի շնմանվեն իրեաններին, ուստի կարելի է կարծել, որ երգեցողությունը նույնական չափոր է ընդունել ժամերգության մեջ»<sup>10</sup>: Այդպես էլ կիններ, երեք ի կատար ածվեր Բրուն Կարտուզի և եկեղեցում երգն ու նվազը մերժող իր համախոհների ցանկությունը:

13-րդ դարի մի փաստաթղթում արդեն նշված էր, որ Եկեղեցում որպես միակ նվազարան օգտագործվում է երգեհոնը: Հետագայում զգուշացվել

8. Անդ, էջ 106:

9. Անդ, էջ 115:

10. Անդ, էջ 301:

է, որ երգեհոնը օգտագործեն չափավոր, որպեսզի շխանգարի քարոզին, շխացնի երգեցողության խոսքերը:

Նվազարամների մասին մեր շարադրանքն ամփոփենք Ռոջեր Բեկոնի (1214-1292) խոսրով, որը միավորում է նվազարամների վերաբերյալ հիմնական երկու մոտեցումները. «...Կատարյալ աստվածարանը պետք է գաղափար ունենա նվազարամների կառուցվածքից, իմանա օգտվել դրանցից՝ հանուն անբիկ միստիկ իմաստների, ել չեմ ասում քառացի իմաստների մասին»<sup>11</sup>:

Այժմ անդրադառնանք քազմաձայնությանը:

Ոչ պակաս փշոտ էր քազմաձայնության հաստատման ճանապարհը: Եկեղեցական երգեցողության ավանդույթը ունի վաղեմի պատմություն:

«Քրիստոնեական պաշտոներգության մեջ Սաղմոսի կիրառությունը հիմնել է դեռ Հիսուս Քրիստոսը. երբ նա խորհրդավոր ընթրիքից հետո, ավարտելով երգեցողությունը, ուղղվեց դեպի Զիթենյաց լեռը, իսկ Զատիկը նա կատարեց հրեական սովորույթի համաձայն, ըստ որի պահանջվում էր երգել 112-117 օրիներգական սահմոսները: Քրիստոսի օրինակով էլ, առաջալները եկեղեցիներ հիմնելով... պատվիրել են երգել Սաղմունը»<sup>12</sup>:

Այս ավանդույթը շարունակեցին Սուրբ Իգնատիոսը, ինչպես նաև միշտանցի եպիսկոպոս Ամբրոսիոսը (մոտ 335-397 թթ.), ում անվամբ էլ վաղ շրջանի եկեղեցական երգեցողությունը կոչվեց ամբրոսիական: Այնուհետև Հռոմի պապ Գրիգորիոս 1-ինը (590-604) կանոնակարգեց կարոլիկ եկեղեցու պաշտոներգությունը: Ձևագրվեց գրիգորյան խորալը:

Այս գործընթացի վրա լույս է սփռում նաև երաժշտագետ Վալենտինա Կոնսենի հետևյալ պնդումը. «Գրիգորյան խորալը, որը կարոլիկ պաշտոներգության և դրանով հանդերձ հիշյալ ժամանակի եվրոպական մասնագիտացված երաժշտության հիմքն է, գոյացել է հայկական Պատարագի ուրբակի ագրեցությամբ»<sup>13</sup>:

Հայկական աղեցությունների առումով համամիտ է նաև երաժշտագետ Տամարա Լիվանովան<sup>14</sup>: Ի դեպ, այս հարցին ժամանակին անդրադարձել է նաև Վենսան դ'Էնդին: 1904-ի մայիսի 18-ին իր աշակերտ Գրիգոր Գալֆայանին հասցեագրած նամակում ֆրանսիացի կոմպոզիտորը գրել է. «...Ձեր հայ երաժշտութիւնը ճիշդ մեր գրիգորեան երգերուն յատկանիշներն ունի. վասն զի այս երկու երաժշտութիւններն սերած են մի և

11. Ան, էջ 307:

12. Толковая Библия, 2-ое издание, том 1, Стокгольм, 1987, Псалтырь, стр. 134-135.

13. В. Конен, Значение внеевропейских культур для профессиональных композиторских школ XX века, "Советская музыка", М., 1971, №10, стр. 51.

14. Т. Ливанова, История западноевропейской музыки, том 1, М., 1983, стр. 29.

նոյն սկզբունքն, այն է՝ կրօնական հաւատքը...»<sup>15</sup>.

Բազմաձայնության առաջին «ծլարձակումներն» առաջացան 9-րդ դարում, կարովիկ ժամերգության առաջին դրվագներում: Ստեղծվել է «ողիաֆոնիա», «զուգահեռ օրգանում»: Այն բաղկացած է հիմնական ճայնից՝ խորալից և սրան կցված, զուգահեռ շարժվող 2-րդ ճայնից: Սակայն բուն պոլիֆոնիան սկսվում է այն նույշներից, որոնցում երկրորդ ճայնը շարժվում է ոչ զուգահեռ, այլ՝ որոշ չափով ինքնուրույն: Պոլիֆոնիայի հետագա զարգացումը ընթացավ ճայների բանակի շատացման, անհատականացման, երաժշտական տարածության, հորիզոնների ընդլայնման, այսինքն՝ բովանդակության հարստացման ուղղությամբ: Անդրադառնալով «զուգահեռ օրգանումին», երաժշտագետ Յովյա Եվդոկիմովսան գրում է. «Սոնողիայի համեմատ դա որակապես նոր հնչողություն է, որն ընկալվեց որպես հրաշք: Հնչունային արվեստում այն բացահայտեց միանգամայն անսպասելի հնարավորություններ»<sup>16</sup>: Մինչդեռ իսկական հրաշքը դեռ առջևում էր՝ Յոհան Սերաստիան Բախի արվեստում՝ խորալային պրելյուդներում, ֆուգաներում և այլ գործերում:

Նախքան Բախի ասպարեզ գալը բողոքական խորալը արդեն բյուրեղացել էր: Եթե «ավետարանական երգեցողության հայր» Մարտին Լյութերը, Յոհան Վալտերը, Կոնրադ Ուուփֆը և մյուս երգահանները կյանքի կոչեցին այդ խորալները և դրանք նտան հավատացյալ համայնքի կյանքի ոլորտը՝ Եկեղեցի, ապա Բախն իր հորինած ճայներով, պարուրելով այդ միաձայն երգերը, խորալներին տվեց հավիտենուկան կյանք: Սակայն մինչ այդ հնչունային շատ հոսանքներ, «առվակներ» ու «գետեր» են հոսել դեպի այն ծովը, որին Բերիովենը անվանել է «Բախ»:

Նվազարանային երաժշտության ժամերի պես, բազմաձայնությունը և անցավ փորձությունների բովի միջով: Դեռ Ամբրոսիոս էր ասում, թե միաձայն երգեցողությունը Եկեղեցական միաբանության խորիդանիշն է<sup>17</sup>: Իսկ Նիկիտա Եպիսկոպոսը անամոքություն էր համարում ընդհանուրից առանձնացող ճայնը<sup>18</sup>: Ըստ Պրոսպեր Ակվիտանացու, առանձնացող ճայները չեն կարող հաճելի լինել<sup>19</sup>:

Ավելի հանդուրժողական էր Հոռմի պապ Հովհաննես 22-րդը, որը 1322թ. կոմղակում կշտամբելով «նորաստեղծ գեղգեղանքները», խորալին նոր ճայներ, ժողովրդական պարզունակ մեղեղիներ կցելը՝ այնուամենայ-

15. «Կոռնկ», Բարիգ, 1904, էջ 10:

16. Ю. Евдокимова, Многоголосие средневековья, том 1, М., 1983., стр. 29.

17. Музыкальная эстетика западноевропейского средневековья..., стр. 112.

18. Անդ, էջ 33:

19. Անդ:

նիվ շարգելեց թերևսակի միջանտությունները: Կոմղակում ասվում է. «Սակայն սրանով մենք չենք արգելում, մանավանդ տոն օրերին, մեսսաներում կամ այլ արարողություններում պարզ եկեղեցական երգեցողությանը հավելել որոշ մելոդիկ կոնսոնանսներ, օրինակ՝ օկտավաներ, կվինտաներ, կվարտաներ և այլն... քանզի նման բարեհնչյունները ուրախացնում են լսողությունը, արթնացնում են բարեպաշտություն և չեն հոգնեցնում»<sup>20</sup>:

Հատկանշական է, որ մոտ երկուսուկես դար հետո Հռոմի պապ Պիոս 4-րդը (1559–1566) պիտի ջանար պատմության անիվը հետ դարձնել: Նա առաջարկում էր Տրիդենտի տիեզերական ժողովին եկեղեցուց առհասարակ Վտարել երաժշտությունը: Եվ միայն Ֆերդինանդ I-ին կայսեր միջանտության շնորհիվ կանխվեց այդ աղետը<sup>21</sup>: Զարմանալի է, որ այդ ժամանակ արդեն շողողում էր Պալեստրինայի քաղմածայն փառակեղ արվեստը: Ինչպես նշել է Օսվալդ Շվենցելը, յուրաքանչյուր մշակույթ կյանքի նախին իր հասկացողությունն ունի, քանզի յուրաքանչյուր մշակույթ ապրում է յուրովի:

Եթե տոն օրերին Հռոմի պապ Հռվիաննես 22-րդը թույլ էր տալիս օգտագործել քաղմածայնության որոշ տարրեր, ապա Մարտին Լյութերի համար, կարենի է ասել, քաղմածայն երաժշտությունն ինքնին տոն էր, «Աստծո կատարելագույն հայտնություններից մեկը»: Ահավասիկ. «Երբ քնական երաժշտությունը զարդարվում է և կատարելագործվում արվեստով, այնիմ մեծագույն զարմանքով նկատում ենք... Աստծո մեծ և կատարյալ իմաստությունը, ի դեմս հրաշալի ստեղծագործության, այսինքն երաժշտության: Այնպիս որ, ովքեր քիչ թե շատ հասկանում են դա և դրանով ոգեշնչվում, շափազանց զարմանում են և գտնում, որ աշխարհում ավելի հրաշալի քան չկա, քան քաղում ձայներով զարդարված նման երգեցողությունը»<sup>22</sup>:

Քաղմածայնության ջատագովմերից էր նաև ոուսական առաջին ցար Իվան Վասիլիչը՝ Անելը: Ցարը պարբերաբար երգում էր եկեղեցում: Նրա գրչին են պատկանում մի շարք հոգևոր երգեր՝ ստիլսիրաներ: Հայտնի է Իվան Անելի դիմումը եկեղեցական ժողովին՝ Մոսկվայի եկեղեցիներում քաղմածայն երգեցողությունը թույլատրելու նպատակով, ինչպես այն ընդունված էր Նովգորոդում և Պուլկովում: «Այսպիսով, 1551 թվականը կարենի է համարել այն տարեթիվը, երբ եկեղեցական իշխանությունների կողմից արտոնվեց քաղմածայն երգեցողության մուտքը Մոսկվան պետքանիւթյան եկեղեցիներ»<sup>23</sup>:

20. Музыкальная эстетика западноевропейского средневековья..., стр. 61.

21. Ան, էջ 323-324:

22. А. Швецлер, И. С. Бах, М., 1964, стр. 24.

23. Н. Успенский, Древнерусское певческое искусство, М., 1971, стр. 227.

Բազմաձայնության զարգացումը ընթացավ ոչ թե ուղիղ գծով, այլ ալիքածն՝ իր մակընթացություններով ու տեղատփություններով։ Պարզվեց, որ ճշմարիտ երգը, նվազարանային երաժշտությունը, ձայների քանակը, որպես այդպիսին, չեն պարունակում որևէ բան, որ հակասեր, վնասեր բարեպաշտությանը, կրոնական զգացմունքներին։ Պարզապես խնդիրը շափակոր գործածության մեջ էր։ Շաշակի, շափակորության կողմնակիցներից էր նաև 16-րդ դարի նշանավոր երաժշտագետ Յարլինոն, որը վկայակոչելով 50-ձայնանի մի աղմկալից ստեղծագործություն, ըննադատել է բազմաձայնության շահարկումը, ինքնանպատակ դարձնելը<sup>24</sup>։ Երաժշտությունը այնքան զորեղ է, որ նույնիսկ Ավգուստինոս Երամելին էր մտահոգվում, որպեսզի հնչյունների վայելը, գեղագիտական կողմը շեղի աղոքքի խոսքերից<sup>25</sup>։ Իսկ դա կախված է ոչ միայն երաժշտության որակից, այլև լսողի, կատարողի ընկալունակությունից։

Օրինակ, ըստ Հովհանն Սավիրի՝ «Երգեցողությունը մի միջոց է, որը խորապես ցնցում է հավատացյալի սիրտը, մինչդեռ խոսքերը չեն հասնում այս աստիճան խորության»<sup>26</sup>։

Եվ բազմաձայնությունը, փորձելով իր շառավիղը, եզերքը, կրկին վերադարձավ միաձայնության, բայց ոչ մոնողիայի, այլ բազմաձայնության մի նոր որակի և տեսակի, որի մեջ մեկ ձայնը պարզապես գերիշխող է, իսկ մյուսները հանդես են գալիս որպես լրացում, հարմոնիկ հենարան, նվազակցություն։

Այսպես, միաձայնությունից բխեց երկու տեսակ բազմաձայնություն՝ պոլիֆոնիա և հոմոֆոնիա։ Առաջինի կատարելատիպը դարձավ ֆուգան, երկրորդինը՝ սոնատ-սիմֆոնիկ ցիկլ՝ իր «սոնատային ալեգրո» դիմամիկ ձևով և զարգացման սկզբունքով։

## ՄՈՆՈԳԻՄՆ ԵՎ ՊՈԼԻՖՈՆԻԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԵՍԱԿՅՈՒՐՆԵՑ

Եթե միջնադարի որոշ մտածողներ միայն մոնողիայի մեջ էին տեսնում մարդկանց հոգիների միաբանությունը, ապա տարրական այդ համաձայնությանը հաջորդեց բարձրագույն միաբանությունը, որն արդյունք էր բազմաձայնության սինթեզի, միաձույլի։ «Արվեստի վիխիսովայությունը» աշխատության մեջ Ֆրիդրիխ Շելինգը գրում է. «...Ընդհանուր առնամք, ոիքմիկ երաժշտությունը անվերջության ծավալումն է վերջավորի մեջ...»

24. Музыкальная эстетика западноевропейского средневековья..., стр. 90.

25. Ան, էջ 27:

26. Ան, էջ 17:

մինչդեռ հարմոնիկ երաժշտության մեջ վերջավորը կամ զանազանությունը դրսերպվում է լոկ որպես անվերջություն կամ միասնության այլաբանություն<sup>1</sup>: Տվյալ դեպքում փիլիսոփիան նշում է բազմաձայն երաժշտության առավելությունը մոնողիայի նկատմամբ: Ըստ Շելինգի, ոիթմիկ, այսինքն միաձայն երաժշտությունը ավելի շատ արտահայտում է բավարարվածություն և առողջ զգացողություն, իսկ հարմոնիկը՝ ճգտում և անձկություն: «Ուստի անհրաժեշտ էր, որպեսզի հենց եկեղեցում, որի աշխարհայնցողության հիմքը սպասումն է, բազմազանության ճգտումն է միասնության, որպեսզի հենց եկեղեցում բացարձակի մեջ՝ բոլորի հետ միավորվելու յուրաքանչյուր անհատից բխող ճգտումը վերածվեր հարմոնիկ երաժշտության՝ առանց ոիթմի»<sup>2</sup>...

Ասելով «առանց ոիթմի», Շելինգը տարբերություն է դնում ժամանակի մեջ կոտորակվող առանձին հնչյունների տարածականության և մեկ ակրոջի, համահնյունի մեջ մի քանի հնչյունների միաժամանակյա տևողության միջև, այսինքն այն, ինչ երաժշտության մեջ հայտնի է որպես երիգոնական և ուղղահայաց կերտվածք: Այստեղ Շելինգը, չբացառելով անտիկ երաժշտության ուժը, վկայակոչում է բազմաձայնության ջատագովներին, որոնց հանդմանք իսկական երաժշտությունը սկսվում է «կոնտրապոնկտից», այսինքն՝ պոլիֆոնիայից<sup>3</sup>:

Միաձայնության և բազմաձայնության հնարավորությունների մասին պատկերացում տալու համար Շելինգը համեմատում է Սոֆոկլեսի «Եղիպ» և Շերսպիրի «Լիր արքա» ողբերգությունները: «Եղիպ»-ում «քացի եղելության «մեղեղից» ոչինչ չկա, մինչդեռ այստեղ դատեր կողմից լրված Լիրին հակառակում է հոր կողմից լրված որդու պատմությունը»<sup>4</sup>:

Միայն բազմաձայնության միջոցով է, որ կարելի է կերտել «զուգահեռ դրամատորգիա», դրսորել «ամքիվալենտ»՝ այսինքն հակառամիասնական զգացմունքներ, համադրել անձի «ես»-ը իր «երկրորդ ես (alter ego)»-ին:

Եթե 2-3 հոգու միաժամանակ խոսելը անհեթերություն է, ապա մի քանի զործող անձանց միասնական երգեցողությունը օպերային ժանրի դրամատորգիական կարելոր հանգույցներից է: Վառ օրինակներից է Վերդիի «Շիգոլետո» օպերայի հայտնի կվարտետը: Գերազանց օրինակ են Լայպցիգում հորինած Մոցարտի երկու կանոնները, որոնց մասին Ո-դաշտոցը պատմում է. «Մեկը եղերական էր, մյուսը՝ կոմիկական: Ցուրաքանչյուրն առանձին հիանալի էր, սակայն երբ այդ երկու կանոնները

1. Փ. Շելլինգ, Փիլոսոփիա ու կյանք, Մ., 1966, ստ. 204.

2. Անդ:

3. Անդ, էջ 205:

4. Անդ:

երգեցին միասին, ապա... ստացվեց միածուլված հակադրությունների օրգանական միասնություն։ այնքան ցցողո, որ մենք սարսափելի հովված էինք»... Սեզբերելով սա, Գ. Չիշերինը մեկնարանում է. «Մենք խորանում ենք տիեզերական ուժերի այնպիսի խորքերը, որ հակադրությունների միասնությունը իրականություն է»<sup>5</sup>: Հատկանշական է նաև Օսվալդ Շփենգերի դատողությունը. «Հելլենական երաժշտությունը դարձավ հնչյունների պլաստիկա, առանց պոլիֆոնիայի, հարմոնիայի, որոնք արտահայտում են հնչյունային տարածականություն, և իրու ինքնուրույն արվեստ, անտիկ երաժշտությունը զրկվեց մեծ հնարավորություններից»<sup>6</sup>: Մինչդեռ, ըստ փիլիսոփայի, Արևմուտքում երաժշտությունը գերազանցեց բոլոր արվեստներին: Եվ դա սկիզբ առավ «քարոկ» ժամանակաշրջանից: Ըստ երաժշտագետ Մ. Լորանովայի, «հենց բարոկ շրջանում կարողացան երաժշտության մեջ «զեեկ» տարածությունը և տարածության մեջ լսել երաժշտությունը, երաժշտականորեն իմաստավորել և զարդարել տարածությունը»<sup>7</sup>:

«Ոչ տարածական երաժշտությունը ա priori ոչ փիլիսոփայական է», եզրակացնում է Շփենգերը<sup>8</sup>:

Քազմաձայնությունը փիլիսոփան համեմատում է գեղանկարչության հեռանկարի գյուտի հետ: «Սակայն, հանձին Բախի, զուտ նվազարանային երաժշտությունը հայրեց գեղանկարչությանը, լինելով աստվածագացության բացահայտման միակ և վերջին միջոցը»<sup>9</sup>:

Նախքան Շելինգը Գեորգ Հեգելը նշել է, որ եկեղեցական երաժշտությունը գործ ունի ոչ թե սուբյեկտիվ, առանձին զգացմունքի, այլ համայնքի ընդհանրական զգացմունքի հետ:

Կրոնական երաժշտությունը Հեգելը համարում է այն ուժեղագույնը և խորագույնը, ինչը ընդհանրապես կարող է ստեղծել արվեստը: Եվ որպես կատարելատիպ, փիլիսոփան Վկայակոչում է Բախի արվեստը, մասնավորապես Քրիստոսի տառապանքները նարմնավորող «ապահովները»<sup>10</sup>: Պատահական չէ, որ «Զարչարանքներ ըստ Մատթեոսի» պահոնը Շփենգերը իր հերթին համարում է «համայն մարդկության զգացմունքների ողջ խորության սպառչ արտահայտողը»<sup>11</sup>:

5. Г. В. Чичерин, Моцарт, Ленинград, 1979, стр. 102-103.

6. О. Шпенглер, Закат Европы, Минск-Москва, 2000, стр. 337.

7. Генрих Шютц, [Сборник статей], М., 1985, стр. 240.

8. О. Шпенглер, Закат Европы, стр. 357.

9. Անդ, էջ 451:

10. Г. Гегель, Эстетика, том 3, М., 1971, стр. 333.

11. О. Шпенглер, Закат Европы, стр. 359.

Դժվար է պատկերացնել Բախի արվեստը առանց միջնադարյան արվեստի նախընթաց զարգացման: Անդրադառնալով հոգևոր երաժշտությանը՝ Ա. Շվայցերը համեմատում է Մարտին Լյութերի և Ժան Կալվինի դիրքորոշումները:

Գերմանական բարեփոխված եկեղեցու պաշտոներգության համար Լյութերը ճշգրիտ զգացողությամբ ընտրեց, հարդարեց 14-15-րդ դր. բանաստեղծության զանձարանից, ինչպես նաև ժողովրդական երգարվեստից քաղված բազմաթիվ նմուշներ և կազմնեց գերմաներենով երգվող խորալների ժողովածու:

Կալվինը հիմք ընդունեց ոռմանական ժողովուրդներին հոգեհարազատ միայն լատիներեն երգերը: Շվայցերը գորում է. «Գերմանական Ունիֆորմացիայի բախտը բերել է, որ գտնվել է Լյութերի պես մեկը, որը բույլ չտվեց ծառահատեն հիմ անտառը... Գիտակցեց, որ նոր երգը պետք է աճի հնի ստվերում»<sup>12</sup>: Իսկ ոռմանական հոդի վրա հոգևոր երգը չբարգավաճեց, բացի այդ կարողի եկեղեցին վտարել էր և երգեհոնը: Ահա թե ինչու հետագայում ստիպված եղան սաղմոսներին գորմարել գերմանական խորալներ և անգլիական երգեր: Սինչետ խորալի հիման վրա Գերմանիայում ստեղծեցին խմբերգեր, երգեհոնային պրեյսումներ, ֆուզաներ: Ըստ երաժշտագետ Միխայիլ Դրուսկինի, Բախն իր արվեստում օգտագործել է ավելի քան 389 խորալներ<sup>13</sup>: Այս և այլ երաժշտաձևերը նախքան Բախը զարգացրել էին Յոհան Պախելբելը, Գեորգ Բյումը, Դիտրիխ Բուրստեհունեն:

Շվայցերը առանձնացնում է խորալային մեղեդու մշակման երեք կերպ: Սի դեպքում մեղեդին մնում է անփոփոխ՝ որպես cantus firmus: Սա բնորոշ է Պախելբելին: Բյոնը վարդում է այլ կերպ: Նա մեղեդին տարրալուծում է զարդանախշերում, պատառուի պես ներկայություն հարմոնիայի մեջ: Իսկ Բուրստեհունեն խորալի մեղեդու հիման վրա կերտում է ազատ ֆանտազիա:

Բախը եկավ ամփոփելու և կատարելության հասցնելու նախորդների փորձը: Բացի Լյութերի երգերից, Բախը օգտվել է միջնադարյան Ծննդյան, Զատկական երգերից, լատինական բարգմանված հիմներից, Յոհան Ֆրանցի, Պաուլ Գերհարդի և այլոց հոգևոր երգերից: Բացի այդ, Բախը ամփոփել է նաև ֆրանսիացի և իտալացի վարպետների արվեստի ձեռքբերումները: Հատկապես Զովաննի Գարդիելիի, Կլաուդիո Սոնտեվերդիի նվաճումները, որոնք նույն Գարդիելիի մոտ կրթված Հայնրիխ Շյուտցը ներմուծեց Գերմանիա:

12. Ա. Ռեմայեր, Ի. Ս. Բախ, սր. 9.

13. Մ. Ս. Ճրբունի, Ի. Ս. Բախ, Մ., 1982, սր. 185.

Կարծես, Եվլուսան իր պարտքը վերադարձեց Հայաստանին՝ հանձին Կոմիտասի և Եկմալյանի, որոնք իրենց բարձրագույն կրթությունը ստացան Եվրոպայում:

Մեկ այլ գուգահեռ:

Ինչպես Լյութերը, Վալտերը և Ռուաֆը կամոնավորեցին գերմանական խորալները, այնպես էլ երեք դար հետո հայ Եղիշել՝ Գևորգ Դ կարողիկոսը, Նիկողայոս Թաշճյանը և Մակար Եկմալյանը, կարգավորեցին Պատարագը, Շարակնոցը և Ժամագիրը:

Գևորգ Դ կարողիկոսի նպատակն էր նոտագրել խմբագրել հոգևոր երգը և վերացնելով հայկական եկեղեցիներում տեղ գտած երգեցողության տեղային տարբերակները՝ ի մի բերել պաշտոներգությունը:

Հաջորդ քայլ կատարեց Մակար Եկմալյանը. այս բյուրեղացրած մոնղիաների հիման վրա կերտեց իր բազմաձայն Պատարագը, որը լույս տեսավ Լայպցիգում, 1896-ին:

Ժամանակներն ուրիշ էին, և ի տարբերություն միջնադարյան Հռոմի պապերի, Ամենայն Հայոց կարողիկոս Խրիմյան Հայրիկն անմիջապես ողջունեց Եկմալյանի բազմաձայնած Պատարագը: «...այսու Հայրապետական կոնժակով քաջալերենք զքեզ, զի առաւել ես ի յառաջադիմություն նկրտիցիս: Այդ ոչ միայն նեզ ցանկալի եւ նախանձելի է, այլ եւ համաձայն հայոց եկեղեցակը ժողովրդեան՝ հոգեզմայլութեամբ լսել զրադցրածայն գերգեցողութիւնս, զոր պաշտէ Հայաստանեայց եկեղեցին»<sup>1</sup>:

Եկմալյանի Պատարագի բազմաձայնությունը ունի հոգնֆոն-հարմոնիկ կերտվածք, որում գերիշխողը մեղեդին է, իսկ մնացած ձայները լոկ ակորդային հենարան են: Մինչդեռ Կոմիտասի Պատարագի բազմաձայնությունը բուն պոլիֆոնիկ շարադրանք է, որտեղ ձայները ինքնուրույն են:

1912-ին Կոմիտասը հիմնականում ավարտեց իր Պատարագը: Արսորից հետո Վարդապետը որոշել էր մաքրագրել և ամբողջացնել այն, հասալ մինչև 17-րդ էջը, սակայն վերահաս հիվանդությունը և 1915-ի Հայոց ցեղասպանությունը ընդհատեց ոչ միայն Պատարագը, այլև անդունդի եզրին հասցրեց հայ մշակույթի և ողջ ժողովրդի ֆիզիկական գոյությունը:

ճակատագրի հաջորդ հարվածն էր 1917-ի հեղաշրջումը, որի հետևանքով ստեղծված աստվածատյաց խորիրդային պետությունը խարթեց հոգևոր երաժշտության զարգացումը:

1930-ին ԽՍՀՄ տարածքի վրա փակվեցին եկեղեցիները, պապանձվեցին զանգերի ավետարեր դողանջները: Խորիրդային կոմպոզիտորները երկար ժամանակ իրավունք չունեին հոգևոր երաժշտություն հորինելու, իրենց արվեստում օգտագործելու եկեղեցական երգարվեստի նմուշներ:

1. Ն. Թահմիզյան, Մակար Եկմալյան, Եր., 1981, էջ 31:

Ալեքսանդր Փիրումյանը առաջինն էր, որ Ստալինի մահից հետո, 1954-ին, իր 2-րդ կվարտետում համարձակվեց օգտագործել Գրիգոր Նարեկացու «Հայկ» տաղի մեղեղին: Նոյն տաղը հանդիսացավ Եղար Հովհաննիսյանի 1-ին սիմֆոնիայի (1959 թ.) հիմնանյութը: Տաղի մեղեղու մասնիկները աննկատ կերպով խմորվում են, հասունանում 1-ին և 2-րդ մասերի «ընդերքում» և հասնելով, այսպես ասած, կրիտիկական մասսայի, մեղեղին իր ամբողջ ուժով և «հասակով» ժայռում է սիմֆոնիայի 3-րդ մասում: Ժայռում, ինչպես ծովից բխած հրաբուխ, ու կրկին տարրալուծվում ալեկոն ծովում: Միանով հանդերձ, մեղեղին դառնում է մի առանցք, որի շորջը, կենտրոնաձիգ ուժերի շնորհիվ, համախմբվում է ողջ սիմֆոնիայի հնչումազանգվածը, ինչպես նոլորակները արևի շորջ:

Ըստ Ա. Ալշվանդի, թեմագոյացման, ձևակառուցման այս սկզբունքը հիմնել է Բերիովենը: Մինչ այդ ստեղծագործության թեմաները կոմպոզիտորները ներկայացնում էին պատրաստի վիճակում, ինչպես գեղանկարիչներն իրենց ավարտված կտավները: Մինչեռ Բերիովենի 9-րդ սիմֆոնիայում թեման ծնվում է ունկնդիր ներկայությամբ: Ֆրիդրիխ Նիցշեն կասեր. «Ես լուս եմ երաժշտության գոյացման պատճառները»<sup>2</sup>:

Անդրադառնալով Բերիովենի 9-րդ սիմֆոնիայի թեմագոյացման կերպերին՝ Ալշվանդը նեղբերում է Ալեքսանդր Սերովի հետևյալ դիտարկումը. «Ամբողջական զարափարի այդ վիրխարի, բազմազան և հետևողական փոփոխությունը, զիսավոր կերպից չեղվող «մետամորֆոզների» այդ շղթան, արվեստում առաջին անգամ հանդիպում է Բերիովենի մոտ»<sup>3</sup>:

\*

\* \* \*

Երբ, այսպես կոչված, «խրուշչովյան ձնհալից» հետո հնարավոր եղանակ արձարձել Հայոց ցեղասպանության 50-ամյակը, ազգային ինքնազիտակցության երեկոյի ալիքի վրա ասպարեզ եկան հոգևոր երգերի մի շարք մշակումներ: Միան նպաստեց նաև Հայաստանի կոմպոզիտորների տաճ համեզարակում երգեհոնի տեղադրումը: Ասպարեզ եկավ Վահագն Ստամբուլյանը, իիմնադրեց երգեհոնային դպրոց, տարածեց Բախի, Հենդեկի և այլոց գլուխգործոցները, Լուսինե Զաքարյանը թեմ հանեց հոգևոր երգարվեստը:

1965-ին լույս տեսան միջնադարյան տաղերի՝ Ռոբերտ Արայանի մշակումները՝ ձայնի և դաշնամուրի (կամ երգեհոնի) համար: Դրանց

2. Փ. Նիշի, «Сочинения», т. 2, М., 1990, стр. 528-529.

3. А.Альшванг, Л. ван Бетховен, М., 1971, стр. 426-427.

թվում էին նաև Գրիգոր Նարեկացու «Հայիկ», «Հատում, հատում», «Սայլայն հօաներ» տպերը<sup>4</sup>:

1971-ին տպագրվեցին Սեսրուպ Մաշտոցի 8 շարականներ՝ Գևորգ Արմենյանի մշակմամբ, 1974-ին Սահակ Պարբեի շարականները՝ Էմին Արխատակեսյանի կողմից: Զայնի և դաշնամուրի համար մշակված այս երգերը հիմնականում ունեն հոմոֆոնիկ կերտվածք: «Համեմ» տաղի բուն պոլիֆոնիկ մշակում 1964-ին կատարել է Լևոն Աստվածատրյանը իր «Prologue» նվազախմբային գործում: Խոկ 1970-ականների սկզբին Սերգեյ Աղաջանյանը ստեղծեց չորս «Պոլիմոնոթիա»՝ լարային նվազախմբի համար: Սրանք հիմնված են Գրիգոր Նարեկացու «Համեմ», «Հատմ, հատուն» և Ներսես Շնորհալու «Ստեղծող մանկանց» ու «Տեր յերկնից» երգերի վրա: Որոշ խտացումներով և նորացումներով այս մոնողիանները ամբողջությամբ հերթու ամզում են չորս ճայների միջուն:

Ժամանակին վիճահարույց «պոլիմոնդիա» եղրը առաջարկել է կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը: Այն բառացի նշանակում է բազմամիաձայնություն կամ միարազմածայնություն: Երաժշտագետներից ոմանք այս հակասական եղրը ընդունում են որպես լոկ ստեղծագործության անվանում, իսկ մյուսները պոլիմոնդիան, ինչպես որ կա, համարում են դասական առիջֆոնիայի հմիտագինոն մի ձև, լուսաւեսակ մի կանոն:

Թվում է, թե վեճերը կդադարեն, եթե շետը դրվի ոչ թե ձևակառուցման կամ ձայների շարադրման եղանակի (հմիտացիայի), այլ ստեղծագործության բովանդակության, իմանանութիւնի, ձայների ֆունկցիայի վրա: Այսինքն՝ պղլիմնոդիայում սովորական հմիտացիայի է ենթարկվում ոչ թե սովորական չեզոք թեման՝ իր մասնիկներով հանդերձ, այլ հատուկ դիմագիծ և կառուցվածք ունեցող հայկական միջնադարյան մոնողիան, որը չի տրհիվում մասնիկների:

Այս իմաստով՝ պոլիմոնոդիհան յուրահաստով՝ մի «մակրոկանոն» է: «Պոլիմոնոդիհա» եզրի հակասությունը մեղմվում է, եթե նկատի առնենք, որ «հոմոֆոնիա» նշանակում է մեկ, միևնույն ձայն, բայց սրանով նշում են բազմաձայնության մի տեսակը: Եվ հակառակը, «մոնոդիհա» նշանակում է մեկ մեղեղու կատարումը առանց նվազակցության: Երաժշտական հանրագիտարանում գրված է. «... սակայն օրինաչափորեն է նաև տերմինների այլ գործածությունը՝ հոմոֆոնիա, որպես միաձայնություն, «միահնչողություն», իսկ մոնոդիհան՝ որպես նվազակցվող մեղեղի, «երգեցողություն»՝ ձայներից մեկում»<sup>5</sup>:

4. Циу мисսին մահրաման տես՝ А. Аревшатян, Монодия и поэзия средневековых в творчестве современных армянских композиторов, «Լրաբեր հասարակական գիտությունների»,Եր., 1978, N 12:

5. Музикальная энциклопедия, том 1. М., 1973. стр. 1047-1048

Մինչ երաժշտագետները վիճում էին, Եղուարդ Փաշինյանը ջանապարհար շրջանառության մեջ էր դնում հիշյալ եզրը: Նշելով արևմտաեվրոպական և հայկական երաժշտության լազամտածողության և քազմաձայնության կերտվածքի տարբերությունները՝ Փաշինյանը գրում է. «Կոմիտասը այդ հարցը լուծել է պոլիլաղային-պոլիտոնայ պոլիմոնոդիկ ֆակտուրային գոյացումների դիրքերից... հուսալի ճանապարհ հարթելով ազգային կոմպոզիտորական արվեստի հետագա զարգացման համար»<sup>6</sup>: Քանի որ խոսքն այստեղ հիմնականում եկեղեցական երաժշտության բազմաձայնման մասին է, ուստի չենք հիշատակում արեխստական գաղափարախոսության գոհ դարձած կոմպոզիտորներին: Սակայն անհնարին է խոսել հայ երաժշտության մասին և չնշել Արամ Խաչատրյանի անունը, որը թեպետ զուտ կրոնական բովանդակությամբ գործեր չի ստեղծել, բայց ի վերուստ օժտված է եղել աստվածային ներդաշնակության և գեղեցիկի զգացողությամբ: «Ա. Խաչատրյանի երաժշտությունը, գրում է Վիկտոր Յուզեֆովիչը, ։ Անրող է այս գեղեցիկ աշխարհին: Քանզի, ինչպես ասաց ամերիկացի մի քննադատ, եթե լույսը, մարուր լույսը վերածուենք հնչյունի, ապա դրանից ծնված երաժշտությունը կլինի Խաչատրյանի երաժշտությունը»<sup>7</sup>: Խսկ գեղեցիկը, ներդաշնակը և լույսը նույնպես աստվածայինի դրսւորումներն են:

Ի դեպ, հայտնի է, որ Խաչատրյանն իր 2-րդ սիմֆոնիայում մեծ վարպետությամբ միահյուսել է «Dies irae» («Օրն ցասման») գրիգորյան խորալը և «Որսկան ախաբեր» ժողովրդական երգը: Ահեղ դատաստանը հիշեցնող այս խորալը հնչում է նաև կոմպոզիտորի 1-ին սիմֆոնիայում: Եվ հատկանշական է, որ այս առիթով երաժշտագետ Գեորգի Խորբով նշում է. «Այստեղ պատմական էքսկուրսի տեղը չէ, սակայն «Dies irae» միջնադարյան խորալային սեկվենցիայի արևելյան ծագումն, ըստ իս, անկանած է»<sup>8</sup>: Այս, լույսը ծագում է Արևելքից և բազմապատկված արտացոլվում Արևմտաբրում: Եթե Գեորգի Խորբովը պատմական էքսկուրս կատարեր, հավանաբար Վ. Կոնենի և S. Լիվանովայի պես կեզրակացներ, որ այդ «Արևելքը» Հայաստանն է՝ քրիստոնեական առաջին պետությունը:

Արամ Խաչատրյանին հաջորդող սերունդները հայտնվեցին ավելի նապատակոր պայմաններում: Եվ նրանք սկսեցին առատորեն օգտվել միջնադարյան հոգևոր երաժշտության ակունքներից:

Հատկանշական է նաև այն, որ ԽՍՀՄ տարածքի վրա գտնվող եկեղե-

6. Э. Пашинян, Полиладово-полигтональное полимоноадилическое начало - основа многообразия хоровых произведений Комитаса, «Երաժշտագիտական աշխատությունների ժողովածու», պր. 1, Եր., 2000, էջ 20:

7. В. Юзэфович, Арам Хачатуров, М., 1990, стр. 8.

8. Г. Хубов, Арам Хачатуров, М., 1962, стр. 82.

ցիմերի զանգերն արգելվելուց հետո Եկեղեցական զանգը որպես նվազարան կիրառեցին Սերգեյ Պրոկոֆևը, Արամ Խաչատրյանը՝ հիշյալ սիմֆոնիայում, որը երաժշտագետ Գեորգի Խուբովի բնորոշմամբ անվանում են «Զանգով սիմֆոնիա»: Հոգևոր և աշխարհիկ արվեստի տարրերի միաձույլ է Հայաստանի նախկին հիմնը, որը հեղինակը՝ Արամ Խաչատրյանը, սկսել է «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգի հնչերանգով («Պատարագից») և ավարտել «Զեյթունցիների քայլերգն» ավարտող հաղբական հնչերանգով:

Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու երգերը շատերն են բազմաձայնել: Բացի վերը նշվածներից՝ նաև Ռուբեն Ալբումյանը, Միքայել Կոկժայանը... Ամենաուշագրավ տաղերից է հիշյալ «Հայիկը»: Պատահական չէ, որ այդքան շատ կոմպոզիտորներ են դիմել այդ երգին: Գրիգոր Նարեկացու այս գրլիսգործոցը մեզ հասել է Կոմիտասի հարդարմամբ և փոխանցմամբ: 1912-ին ճայնագրության անկատար միջոցներով իրականացված Կոմիտասի ճայնասկավառակից այդ տաղը նոտագրել է Սուշեղ Աղայանը: Ժամանակակից տեխնիկայի միջոցներով հնարավորին մաքրված նույն սկավառակից մի նոր տարրերակ է գրառել Տիգրան Սահսուրյանը: Ահա այս տարրերակն է Կոմպոզիտորը մշակել լարային ալտի և հարվածայինների համար: Նախքան այս մշակմանը անդրադառնալլ կանգ առնենք նույն տաղի այլ մշակումներին, որ կատարել են Երվանդ Երկանյանը և Վարդ Մանուկյանը:

Անփոփոխ բողնելով տաղի մեղեդին՝ Վարդ Մանուկյանն ավելացրել է դաշնամուրի նվազակցությունը, որը մերք հնչում է որպես Եկեղեցական զանգեր, մերք իր խաղիկներով նմանակում հնագույն նվազարաններին: Իսկ Երկանյանը նույն տաղը բազմաձայնել է նրգեհոնի համար: Ընդ որում մեղեդու տարրեր հատվածները կոմպոզիտորը բաշխել է և շղթայել տարրեր ճայներում և օկտավաներում: Մեղեդին վերին ոլորտներից իջնում է վար՝ 3-րդ օկտավայից մինչև վոքքը օկտավա և Վերստին բարձրանում վեր: Այսպիսով «հայիկը պայծառ» արևի պես վերևից իջնում է վար՝ «մայր մտնում» մերքի ոեգիստրում և հետզհետեւ կրկին բարձրանալով՝ պայծառանում:

Այս գաղափարի մեծակերտ դրսևորումն է Ռիխարդ Վագների «Լոհենգրին» օպերայի նախանվագը: Զուրակները բարձրագույն ոեգիստրից սահում են վար, սրանց հետզհետեւ միանում են մյուս նվազարանները և ողջ նվազախումբը «լուսավորվելուց» հետո տեղի է ունենում հակառակ շարժում դեպի վերին ոլորտները, որտեղից այն սկսվել էր: Սա առարինի ասպետ Լոհենգրինի էջը էր երկնային դոյլակից (Գրաալից), որը եկել էր պաշտպանելու հալածվածներին: Եվ քանի որ ասպետին չհավատացին, ծյունափետուր աղավնին բարձրացրեց նրան երկինք...

Հիմնանյութի բաշխման առումով (բայց ոչ վիրտուոզությամբ) Երկան-

յանի գողտրիկ Աշակումը հիշեցնում է Բախի «Ein feste Burg» խորալային պրելյուդը: Վերջինիս մասին Ալբերտ Շվայցերը գրել է, թե ինչպես է Բախը մեղեղին մասնաւում տարրեր հատվածների, որոնք լսողի առջև ընթանում են Բուրգստեկուդի ոգով գրված փայտուն, աշխայշ փանտազիայի թերով: Առաջին ֆրազը նա հանձնարարում է սոպրանոյին, երկրորդը՝ ալտին, երրորդը՝ տենորին, չորրորդը՝ բասին<sup>9</sup>:

Այլ կերպ է վարվում S. Սանսուրյանը իր «Համեկ» տաղում: Մեղեղինը բողնում է ամբողջական և հաճախ առանց նվազակցության: Վիրավոնը սկսում է նախանվազը՝ հնչում է Կոմիտասի «Ես առուն ջուր է գալիս» երգի մի դարձված, այնուհետև՝ տաղի մի «ծվեն», որից հետո ալտը սկսում է նվազել բուն տաղը: Ժողովրդական և հոգևոր երգի տարրերը Մանսուրյանը միաձուլում է և «Հաւատով խոստովանին» երկում: Իսկ «Համեկուն» գումարվում է նաև գուսանական երգի շունչը: Իր Վերծանած մեղեղիում Մանսուրյանը որոշ կիսատոներ ամբողջացրել է և հակառակը, որանով իսկ ընդգծել տաղի հայեցի բնույթը:

Հետաքրքրական է, որ Մուշեղ Աղայանի տարբերակի 9-րդ տակտի կիսատոն ֆորչազը Մանսուրյանը դարձրել է մեկ տոն, սակայն ֆորչազի այդ ալտերացված «gis» (սոլ դիեզ) հնչյունը (Մանսուրյանը մեկ տոն բարձր է նոտագրել) ալտի «ց» (սոլ) հնչյունի հետ հնչում է միաժամանակ (Վիրավոնի «Երերում»)<sup>10</sup>: Այդ «սոլ դիեզը» «ու տոնիկայի» հետ կազմում է Մանսուրյանի նախասիրած «եռատոն» լայրինտերվալը, որը առանցքային է նաև «Հաւատով խոստովանին» երկում:

«Համեկ» գործիքավորումը գտնված է, դիպուկ: Վիրավոնը հայկական նվազարան չէ, սակայն օրգանապես միահյուսվում է տաղին: Նրա ծգվող և օդում «հավլող» հնչյունները, զանգակների դողանջները, ասես «փարաջանովլյան» գույները, պարուրում են տաղի մեղեղին, ինչպես թեքեյանը կասեր, «քուլա-քուլա խունկերով»... Ի դեպ, մի առիթով Տիգրան Մանսուրյանը տողերիս հեղինակին խոստովանել է, թե «Համեկ» տաղի հնչողությունը է. Հովհաննիսյանի 1-ին սիմֆոնիայում շափազանց հզոր է, իսկ ինըը, ի տարբերություն այդ մեծակերտ մեկնարանուրյան, շեշտում է տաղի քնարական, մտերմիկ կողմը:

Այս առօսմով հատկանշական է Կարլ Գերինգերի մի դիտարկում՝ կապված Յոհաննես Բրամսի «Գերմանական ուրվաւեմի» հետ: «Աննման են... 2-րդ մասի սկզբի տեսիլային ուրախությունը և ցնծագին բերկրանքը, որը Վերափոխվում է հեզությամբ լի պայծառացման: Ցանկացած այլ կոմպոզիտոր, Բրամսի փոխարեն, «Թող նրանք լցվեն հավերժական ուրախությամբ» խոսքերը կրնացներ ամբողջ ուժով, մինչեւ Բրամսը մինչ խորյամբ» խոսքերը կրնացներ ամբողջ ուժով, մինչեւ Բրամսը մինչ

9. A. Ռեմայեր, Ա. Եախ, տր. 36.

10. Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հ. 2, Եր., 1950, էջ 101:

այդ հասունացրած «Փորտիսիմո» հնչողությունը մարում է մինչև «պիանո», նույնիսկ շառակային «պիանիսիմո», քանզի քրամսի համար երջան կուրյան գերազույն դրսնորումը մերժ գորովանքն է»<sup>11</sup>:

Սահ հենց սա է արվեստի անսպառ ներուժը, շարժիչ ուժը՝ «տարրերակային բազմազանությունը»: «Համեմատ մի մշակող կարող է հիմք ընդունել, «զգայնիկըն ողորմուկ», «զաշերն արտասուօք» խոսքերը, մյուր՝ շեշտել «գաբրիէլեան փողոյն նման աննման» հնչողությունը, և սա կապել նույնիսկ Ահեղ դատաստանի զաղափարի հետ... Սրբազն խորալները, շարականները և տաղերը ասես երաժշտության պատմության «լայրութիվներն» են: Հավերի պես թշում են դարից դար, մի ստեղծագործությունից մյուսը, յուրաքանչյուր կոմպոզիտորից ստանում յուրովի հանդերձանք և հարատևում մինչև օրս:

Օրինակ «Dies irae» խորալ կիրառել են Բեռլիոզը, Լիստը, Չայկովսկին, 20-րդ դարում՝ Արքուր Հոմենգերը, Սերգեյ Ռախմանինովը, Արամ Խաչատրյանը, Դմիտրի Շոստակովիչը, մեր օրերում՝ Էդվարդ Սիրզոյանը և այլք:

Ես մեկ օրինակ: 16-րդ դարի կոմպոզիտոր Հայնրիխ Խավակի «Օ, Ինարուկ, ես այսի լրեմ քեզ» երգը՝ կերպարանափոխված խորալի, մի քանի տարրերակով բազմաձայնված Բախի կողմից, հնչում է նրա կանոնատերում, պասիոններում:

«Օ, աշխարհ, ես այսի լրեմ քեզ» վերնագրված նույն խորալի հիման վրա Բրամսը կերտել է իր 3-րդ և վերջին՝ 11-րդ խորալային պրելյուդները՝ երգեհոնի համար: Այս մասին Կառլ Գերինգերը գրել է. «Այս ցանցող ստեղծագործությամբ, որի մեջ յուրաքանչյուր տողը ավարտվում է արձագանքով, Բրամսը ընդմիշտ հրաժեշտ տվեց իր արվեստին և կյանքին»<sup>12</sup>: Այսպիսով, անցյալի խորալները, շարականները և տաղերը «կամարակապում» են դարերը, հարատևում ներկայում և ապագայում, ինչպես սրբալույս մյուսոնի մերանը, միահյուսվում նորանոր երգերի, և ինչպես Գուստավ Սալերո կասեր, քվում է, թե ողջ Տիեզերքն է երգում...

Ավարտելով մեր խորիրադությունները, կարելի է եզրակացնել հետևյալը.

Երաժշտության պատմության ընթացքը միաձայնությունից դեպի բագմաձայնություն ոչ միայն զուտ երաժշտության զարգացման խնդիր և արդյունքն էր, այլև, առհասարակ, մարդկային ինքնազիտակցության վերելք, կյանքի իմաստի, նպատակի որոնումների արդյունք, միմյանց և Արարի հետ մարդկության հաշտության անհրաժեշտության գիտակցումը: Մի քան, որի խորիրադանիշը, կատարելաւատիան է բազմաձայն, ներդաշնակ երաժշտություն՝ տիեզերական երաժշտության երկրային դրսնորումը:

11. Կ. Գերինգեր, Ի. Բրամս, Մ., 1965, սր. 331.

12. Անդ, էջ 237:

## ՖՈՆՇՈՒՖԵՐԱՌ ԱՇԱՎԱՐՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

**Մ**եր խոսքը սկսենք մի հին անեկոտով. Նիազարայի մոտ հավաքված մի խումբ արևելցի գրոսաշրջիկների երսկուրսավարը տեղեկացնում է, թե սա աշխարհի ամենահզոր ջրվեժն է՝ ամենագեղեցիկ ծիածանով, որի արևագոչ ծայնը լսվում է շատ հեռուներում: «Եվ եթե մի պահ լրեր՝ դուք էլ կլսեք Նիազարայի որոտնդոստ ծայնը»:

Ահա և երկրորդ մի բնաբան՝ որպես օժանդակ թեմա:

Ծառը պիտի կտրեն,  
Իսկ թռչուններն անհոգ  
Բույն են հյուսել այնտեղ:

(բարգմ.՝ Ն. Զարյան)

ճապոնական բանաստեղծության այս պատկերը մի՞թե չի հիշեցնում մեր իրականությունը: 618 թվականին Կոմիտաս կարողիկոսն իր «Անձինք նուիրեալը» շարականում գովերգում էր Հռիփսիմյանց կույսերին: Երբ կառուցվում էր Հռիփսիմն տաճարը՝ «քարե շարականը», նոյն ժամանակ ծևափորփում էր խալանը, Ղուրանը, որն այսօր դրոշ են դարձրել ջիհանի կոչ անող միջազգային ահաբեկիչները: 2000 տարի է Փրկիչը բախսում է մեր դրաները, իսկ բացող չկա, և այժմ, ինչպես սարսափած հոռմնացիք էին ասում՝ «Հանճրավն է դարպասների մոտ»: Դարերի սահմանագծին հաճախ փիլիսոփաները, պոետները կանխագուշակում են հասարակական բախումներ, արհավիրքներ, նաև աշխարհի վախճանն: Կանխագգում են, ինչպես հավերը՝ երկրաշարժը: Օսվալդ Շփենզելը «Եվրոպայի մայրամուտը» աղմկահարույց աշխատության մեջ համաշխարհային ուղղագիծ պատմության միալար պատկերի փոխսարեն տեսնում էր հզոր մշակույթների բազմություն, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է ծևավորում նյուրը, մարդկային բնությունը, ունի սեփական գաղափար, կամք, եռանդ և մահ: Ամեն դարաշրջան իր գոյութեանական հարցականներն է տալիս, որոնք բնականարար բափանցում են նաև մշակույթի, արվեստի ոլորտը: Ունանատիզմի հարցականներից էր Վագների «Տրիստանը», որը և փորձում էր պարզել, թե արդյո՞ք մեր երկրային կյանքում սեր կա: Նոյն հարցը հնչում է Սեզար Ֆրանկի սիմֆոնիայում, Ֆերենց Լիստի «Պրեսուլներում», որտեղ սիրո, կյանքի պոռթկումները դիտվում են իրքև նախանվագներ:

20-րդ դարում հարցականի տակ ընկալ առհասարակ կյանքը, շարով ականապատ մեր մոլորակի գոյությունը: Այս տագմանի արդյունք էր ամերիկացի կոմպոզիտոր Չարլզ Այվզի «Անպատասխան մնացած հարց» կամ «Տիեզերական բնապատկեր» ստեղծագործությունը (1908):

Նվազախումքը կազմված է երեք մասից՝ լարայիններ, չորս ֆլեյտա և մենավագող շեփոր: Առաջինների «անվերջ» ծգվող միալար հնչողությունը մարմնավորում է տիեզերական հավերժության ամտարբերությունը, իսկ խորրում ֆլեյտաների անհաճիխատ հնչյունաբույկոր դրոշմվում են հանց «ցասման ողկույզներ», մինչդեռ շեփորը յոթ անգամ կրկնում է իր խորհրդավոր հարցը, կարծես փորձում է ըմբռնել գոյության տրամաբանությունը, թափանցել դրա իմաստի մեջ...

Եղերական 20-րդ դարի ականատես եղավ հասարակական աննախադեպ ցնցումների, ճաշակեց արվեստի, գիտության և տեխնիկայի վերելքն ու թշվառությունը: Սանձազերծ ատոմն ավելի շատ ավերեց, այրեց, քան ջերմացրեց: Եվ «շղթայական ուսակցիան» տարածվեց ու իր հետքը քողեց բոլոր բնագավառների վրա: Հիրոսիմայի ողբերգությանն անդրադապ Պենդերեցկին, Ուիլյամ Բուկովն իր «Էլեկտրոնային բալետով» և Շնիտկեն «Նազասակի» օրատորիայով... Ասես, քանդվեցին մարդու ենթագիտակցության զսպանակները, պղտորքեց միտքը, «որքան քանդկացավ իրը՝ այնքան էժանացավ մարդը» (Լեոնիդ Անդրեև): Մարդու նմանվեց, ինչպես Հիմ Կոտակարանում է ասվում, թափված ջրի, իսկ արվեստը՝ կոտրված հայելու: Նորն արտացոլելու համար տրոհվեց դասական իրնչյունակարգը, դիստնանսը «զարմացած» քարացավ՝ դառնալով կայուն մի նորմա: Եթե նախորդ ժամանակաշրջանները կարելի է բնորոշել որպես ոռմանտիզմ, վերածնունդ և այլն, ապա 20-րդ դարը գունադիտակի պես փոփոխվող ուղղությունների, նորանոր «փղմերի» ու ոճերի մի խճանքար է, երաժշտության նախընթաց պատմության մի ամփոփագիր: Մի կողմից իրարամերժ ձևերի սերտաճում, մյուս կողմից՝ հակադրությունների ծայրահեղ ընկացում: Մի կողմից երաժշտության «շինանյութի»՝ առանձին հնչյունի «անձնավորում» (Անտոն Վերենենի արվեստում), մյուս կողմից՝ կլաստերների, արհեստական հնչյունների, լուսային և այլ էֆեկտների շաղախ փորձարարական երաժշտության մեջ, ժողովրդական և դասական նվազարանների համակցում՝ Տերտերյանի և Գուրայդուլիմայի ստեղծագործություններում: Զարգացավ գործիքաշինությունը՝ Մարտենյի ալիքներից մինչև աֆրիկյան, լատինամերիկյան և այլ ժողովուրդների նվազարանների կիրառումը: Տիգրան Մանսուրյանն իր վերջին գործերից մեկում կիրառել է քանոն, բաս-կարմետ և մարիմբաֆոն: Նման «վերենյան» գույներով նա «ոսկեզօծել» է Աննա Ախմատովայի «Բանաստեղծություն» հղված այրված տեսդրին» ստեղծագործությունը: Չնայած Բուլգակովն ասում էր, թե ձեռագրերը չեն այրվում, սակայն վերջերս կոմպոզիտորների միության գրադարանում ձեռքս ընկավ Մանսուրյանի «Պարտիտոր», որի մի մասը հայտնի հրդեհից այրվել էր (ճիշտ է, արտագրողի ձեռագիրն էր, սակայն, այնուամենայնիվ պատկերը խորհրդանշական էր): Բայսի ջութակի մի-մաժոր Պարտիտի հովերով ստեղծված այս

Երկը շարունակությունն էր նեռ-քարոկկո հոսանքի, որի արգասիքն էր նաև Եղար Հովհաննիսյանի ջութակի Բարոկ-կոնցերտը: Մինչ այդ սկզբնավորվել էր մեռկալասիկան: Պրոկոֆյան իր «Դասական համանվագով» ողջոված էր հղել 18-րդ դար՝ Հայոցին, Ստրավինսկին Պերգոլեզիի թեմաներով ստեղծված «Պուշկինը» բալետով «Երկարացրեց» իտալացի վաղամեռիկ կոմպոզիտորի կյանքը: Արևմտանվորական և ոռու երաժշտաստեղծների արևելապաշտությանը լիարժեք հագեցում տվեց Արամ Խաչատրյանը, որի արվեստում խաչվեցին Արևելքն ու Արևմուտքը: Նույնը կարելի է ասել ոռուսական հրեա Չորջ Գերշվինի կատարած աֆրոամերիկյան ֆոլկլորի դասականացման վերաբերյալ: Լայն տարածում գտած կողաժներում խառնվեցին տարրեր ժամանակները, տարածությունները, ինչպես՝ Իոսիֆ Բրոդսկու պոեզիայում, արդիապաշտների կուրքը դարձած Էզրա Փառունիի «Կոնֆուցիական բանաստեղծությունները»: Եվ միայն առանձին արվեստագիտներ, Ստրավինսկու խոսքերով ասած, կարողացան ինֆորմացիոն հեղեղից մաղելով դեն նետել ավելորդը և ստեղծել ճշմարիտ արվեստ: Որոշ կոմպոզիտորներ իրենց մանիթեստներով, գեղագիտությամբ, նոտագրությամբ հիմնեցին խմբակներ: 20-րդ դարում երաժշտություն բառը ստացավ հոգնակի նշանակություն՝ տեխնիկական, էլեկտրոնային, կոնկրետ, աղմկային և այլն: Այս ամենը խորապես ուսումնասիրված ու գնահատված է Վերա և Յուրի Խոլոպովների, Ցտիրադ Կոգուտտեկի և այլ անվանի երաժշտագիտների աշխատություններում, որոնք Արիադնեի թելն են մեր կյանքի լարդիրներուում... 20-րդ դարի մեծագոյն նվաճումներից է Եյնշտեյնի հարաբերականության տեսությունը, որն աշխարհայացքային հեղաշրջում կատարեց: Ըստ մաթեմատիկոս Լորենցի, մի համակարգի տարրեր մասերում միաժամանակ տեղի ունեցող դեպքերն այդ համակարգի նկատմամբ շարժվող այլ համակարգերով՝ համաժամանակյա չեն: Որոշ ընդհանրություն կարելի է տեսնել այս երևույթի և Եղար Վարեգի հետևյալ արտահայտության մեջ. «Դմ երաժշտությունը հիմնված է իրարից անկախ երկու հնչյունային համակարգերի վրա՝ այն իմաստով, որ նրանք միաժամանակ շարժվում են տարրեր ուղղություններով»: Սա հիշեցնում է Այվգի Վերոհիշյալ «Անպատճախան մնացած հարցի» երկու տարրեր՝ լարայինների և ֆլեյտաների զարկերակները: Մեր դարի մեծ շարիքներից է աղմուկը, որը ներխուժեց նաև պոեզիայի և երաժշտության տիրույթը: Որքանո՞վ է գեղագիտական գովերգել աղմուկը, տեխնիկայի հոնոյունը, ինչը սարքերի անկատարության նշան է և թշնամի՝ շրջակա միջավայրին: Աղմուկ են մեծահասակները, երեխաները, նաև կննդանները: Աղմուկ են վախից պաշտպանվելու, ինքնահաստատվելու համար: (Ի դեպ, ամերիկյան սուզանավերի շարժիչներն անաղմուկ են): Ինչիցեւ, ստեղծվեցին մի շարք գործեր, որոնք աղմկալի հաջողություն ունեցան (Արքուր Հոնեգերի՝ շոգեքարշին

նմանակող «Պասիֆիկ 231»-ը, Մոսուլովի «Գործարանը»): Որքան էլ զարգանան, բազմանան արտահայտչամիջոցները, որքան էլ զիլ դրդան Զիջյանի ծոված ծննդաներն ու տամտամները Գուրեցկու «Գենեզիսի» մաքսիմումներում, միևնույն է, ամենազորեղ միջոցը մնում է... լուրջյունը: Լուրջյուն՝ հագեցած հնչյուններով, որպիսին է «լոռության մաեստրո» Վերեռնի պուանտիլիստական երաժշտությունը: Ըստ Քարլայի, խոսքը մարդու բախտարաժինն է, լուրջյունը՝ Աստծո: Պիհատոսի հարցերին Հիսուսը պատասխանեց լուրջյամբ: Հատկանշական է Գուրայդուլինայի «Լուսն եմ, լոեց» համանվագը, որի ավարտից հետո խճրավարը շարունակում է իր ժեստերը լուրջյան մեջ, ինչպես տրոնքնահարը շարժում է կուլիսան, բայց չի փշում: «Լուս» երաժշտությամ զագաթնակետը կարելի է համարել Չոն Քեյջի «4 րոպե, 33 վայրկյան» հայտնի գործը, որի ընթացքում երաժիշտը լուս նստում է դաշնամուրի դիմաց և ապա լրում բեմը: Պետք չէ շտապել հեգմել ավելի լավ է փորձել հասկանալ: Լուրջյան կոչեր էին անում Միքելանջելոն, Տյուտչևն իր «Silentium»-ով: Չեն-բուրդայական մի վարդապետ պատրաստվում էր քարոզել ծառի տակ հավաքված իր սաներին, սակայն քարացավ՝ լսելով հավերի դայլայլ սաղարթերի արանքից, ու երբ թոշունը լոեց, նա ասաց՝ «Քարոզն ավարտված է» ու հեռացավ: 8-9-րդ դարերի շինացի Բո-Ցզյու-ի պրետը գրել է. «Երբեմն իմ քնարը կախում եմ ծառի ճյուղերի արանքում վստահելով լսրերի տատանումը զեփյուտին: Եվ այնժամ հնչում է նորագույն երաժշտություն, առանց դույզն-իսկ զանքի»: Սիգուել Քեյջը նո՞ւյնպես ականջ էր դնում քամուց հնչող դաշնամուրի լսրերի բրիում, մանավանդ որ հարում էր բուրրայական հովերին: Դրա մնկ այլ վկայությունն էլ նույն հեղինակի «Կորսված լուրջյան որոնումներն» են, որն էլ յուրատեսակ մի ընդվզում է 20-րդ դարի համատարած աղմուկի դեմ: Աղմուկին մեծապես նպաստել են ուղիոյի, ճայնագրության և քազմաթիվ այլ գյուտեր: Եթե, ըստ Պլատոնի, նույնիսկ գրերի գյուտն ինչ-որ չափով աղքատացրեց մարդու մտածելակերպի յուրօրինակուրեյունը, ապա լսատեսողական տեխնիկան առաջ բերեց բյուր նմանակողների, որոնք առանց ստեղծագործական երկունքի, կոճակի մի սեղմումով սկսեցին երաժշտական առատ արտադրանք տալ (արհեստական բեղմնավորման նմանությամբ): Դեռ 9-րդ դարում շին նկարիչ Մի Ֆուն դժգոհել է, որ հասարակությունը հաճախ պատճեն գերադասում է բնօրինակից: Լեզվագետ Կրաուսն ասում էր, թե պեղիայի բախտը չի բերել, քանզի նրա արտահայտչամիջոցը խոսքն է, և խոսել իմացողներից շատերն են իրենց բանաստեղծ կարծում, այս դեպում նաև՝ երաժիշտ: Ումանց էլ թվում է, թե գրող դառնալու համար հարկավոր է ընդամենը երեք քան՝ սեղան, գրիչ և թուղթ (Նիշշե): Այսպիսով, ամբոխը խուժեց արվեստի տաճար: Ականա մտարերում են Հիսուսին, որը վոնդեց տաճարից վաշխառուներին, անասնավաճառներին, ասելով՝ «Իմ

Հոր տունը վաճառատան մի՛ վերածեք»: Մաքսիմ Գորկու վկայությամբ, երբ մուժիկներին տարան Լենինգրադի Էրմիտաժ, ապականեցին ցուցանմուշները, այլևս նարուր ու սական ու սկահակ չմնաց: Ամենացավալին թերեւս դասական կորողների ոչնչացումն է: Ժամանակին դատապարտեցին, այսպես կոչված, էջինիզմը, երբ Թուրքիայի տարածքում գտնվող հունական հուշարձանները ջարդում էին և մաս-մաս վաճառում Եվրոպայի քանօգարաններին: Երածշտությունն էլ շնչո՞ղ ճարտարապետությունն է, և նրա ոչ շոշափելիությունը չի ազատում պատասխանատվությունից նրանց, ովքեր աղավաղում են դասականը: Օրինակ, հաղորդում են Սուցարտի «Ըներվիեմը», և համեկարծ ներխուժում է ոիրմ-քլոկը, և երկնային այդ երգը հայտնվում է ունփի ամբակների տակ: Եվ այդ սիմբոլով դառնում է արտուրդ մի «ունփի-վիեմ»: (Որքան նախանձախնդիր էր անցյալում Շարակնոցի խճագիր Գրիգոր Խուզը, որ մոնով փակել էր ականջները՝ շարականներն աշխարհիկ հովերից զերծ պահելու համար: Իսկ Սոցարտի հայրը ներողություն էր խնդրել Հռոմի եկեղեցու սպասավորից այն քանի համար, որ Վլիֆգանց Ամադեուսը մեկ անգամ եկեղեցում լսելով Գրեգորի Ավեգորիի ինը ձայնանի «Miserere»-ն, տանը հիշողությամբ նուտագրել էր այն, մինչեւ Պապի հրամանով արգելված էր եկեղեցուց դուրս հանել այդ երկը): 20-րդ դարում ծաղկեց ոչ միայն ջազը, ոոքը, այլև կակաչն ու մարիխուանան, որոնք հնձեցին ջազի ու ոոքի աստղերից շատերի ծաղկել կյանքը: Դրանց անքածան էին դարիս տարբերանշանները՝ հնչունամուլությունը, աղմուկը, որպես ամրոխի «գեղագիտություն», որ խացնում էին և իրենց, և լսողների ձայնը: Այս ամենը կարելի էր համարել ժողովրդավարության քափուններ, անցողիկ, եթե չիններ մատաղ սերնդի դաստիարակության հարցը: Չե՞ որ նորաշեն սափորի մեջ լցված առաջին հեղուկի բուրմունքն է հարատեսում: Իսկ պատանիները, տակավին ազգայինի, դասականի, մայր օրինակները չլսած, իրենց «ստարուլա ռազմային» սեպում են դասականների երկերի ջարդուններից շղթայված պոպուրիներ, ժողովրդականը՝ էստրադային ծանածոռությամբ՝ ջազը, ոարիսի հետ գիրկունդիսան: Երածշտագետ Տ. Զերեղմիշենկոն պոպ երածշտության այս դրսւորումները Զիգմունդ Ֆրոյդի ոգով քննորոշել է որպես «սեռական արտանետում» հասարակությանը. «սուպեր-էգոն» ճնշում է մարդու անսանձ կիրքը, և լարվածությունը լուծելու նպատակով պոպ երգին իր արվեստով, վիրտուոզ կերպով «օրինականացնելք» է փորձում իր սեռական նկորութումները: Մինչեւ աղաջրի պես՝ որքան խմում է, այնքան ծարավում է... Նույն Զերեղմիշենկոյի դիտարկմանը՝ դարասկզբին դեռ հանդիպում էին մորը նվիրված երգեր, սակայն հետագայում կինը մեծամասամբ դիտվեց որպես սոսկ սեռական օբյեկտ, զուգընկեր: Բերելովնի 9-րդ համանվագում երգվում է. «Նեղ օրվա համար Արարիչը մեզ ընկեր է պարզեել... իսկ միջատներին՝ տոփիամբ ու կիրք»: Այսօր մարդկությունը պաշարված է

«չարվեստով». այս բառը գործածում եմ երկու իմաստով՝ ոչ արվեստ և չարվեստ: Դեռ Պլատոնն էր պահանջում պատահներին հրամցնել վեհ երաժշտություն, որպեսզի նրանք չտարվեն անմիտ զվարճալիքներով: Նոյն կարծիքին էր և Մարքին Լյութերը. «Ուստի ես հավաքել եմ մի քանի հոգեսոր երգ, վերածել քառաձայնի, որպեսզի երիտասարդությունը կարողանա հեռանալ ամորալ ու մարմնական երգերից և փոխարենը սովորեն հոգեփրկիչ բաներ»: Այսպիսով երաժշտագիտության և քննադատության առջև ծառանում է մի քանի խնդիր. երաժշտական էկոլոգիայի՝ ֆոնոսֆերայի անաղարտ պահպանումը: Վերջին տերմինն առաջարկում ենք կիրառել ակադեմիկոս Վերնադսկու «նոոսֆերայի»՝ «մտքերի հարատևման ոլորտի» օրինակով: Ֆոնոսֆերան մոլորակը պատող մեկ այլ ոլորտ է, որտեղ կուտակվում ու պահպում են մարդկության հնչյունային գործունեության արդյունքները, ինչը պետք է զերծ պահել հնչյունակույտերի բռնությունից և էքսպանսիայից: Մեր խնդիրն է պաշտպանել դասական կոմպոզիտորների իրավունքները, թույլ չտալ որ դրանք աղավաղվեն (հիմա արդեն շան կեր կամ հակարեղմնավորիչների գովազդները ուղեկցվում են Քերիովենի կամ Վիվալդիի երաժշտության հնչյուններով): Անհրաժեշտ է բյուրեղացված շափանիշները պահպանել օրենքով... Ասում եմ՝ գեղեցիկը կփրկի աշխարհը, մինչդեռ այսօր գեղեցիկն ինքն է փրկության կարիք գործմ: Ուստի և փրկենք գեղեցիկը՝ մեր իսկ սեփական փրկության համար...»

## ՊԱԼԻՆԴՐՈՍԻՆ - ԴԱՐՁԳԻՐ

**20** -րդ դարի արվեստում գոյացավ ստեղծագործական ուղղությունների, մերոդականի, ձևերի, մանիֆեստների, մի խոսքով՝ «վեցուների» մի խառնարան: Եվ որքան էլ դրանք իրարամերժ լինեին, ի վերջո կոչված էին արտացոլելու ժամանակի հովերը և ամբողջացնելու 20-րդ դարի արվեստի, հոգևոր կյանքի խճապատկերը:

Նպատակ չունենալով բազմազանության այդ աշխարհով «վտանգավոր» ճանապարհորդություն ձեռնարկելով՝ հպանցիկ անդրադառնանք միայն երկու դարակազմիկ ստեղծագործական մերոդների: Մեկը հիմնը ված է, այսպէս կոչված, «գիտակցության հոսքի» վրա՝ սկզբունք, որն առավել արծարծվեց գրականության բնագավառում, մյուսը՝ երաժշտության մեջ հաստատված 12-կիսատոնային համակարգի՝ դրուելաֆոնիայի վրա: Ծիշու է, այս մերոդները հակուռնյաներ են, սակայն երկուսի միջոցով յուրովի արտացոլել են նոյն ժամանակաշրջանի մարդու հոգու խորխորատները: Գրական հանրագիտարանից տեղեկանում ենք հետևյալը. «Գիտակցության հոսքը», ըստ փիլիսոփա և հոգեբան Ռիխամ Զեյմսի, գիտակցության յուրովի հնքնարտացոլումն է: Գիտակցությունը երբեք չի գործում մասնատված կերպով, չի ընթանում «շղայլած» կամ «շարքով», այլ հոսում է, ինչպես գետը: «Գիտակցության հոսքը» նոյնացվում է «մերքին մենախոսության» հետ: Այս մերոդով ստեղծված գրականությունը հարում է մողեռնիզմին: Գրողը, դիտելով իր գիտակցության, հոգեշարժումների հոսքը, ջանում է որսալ միտքը ինչպես որ կա, անմիջականորեն վերաբռնարել, գրանցել այն: Հայտնի են «Ուլիս» վեպի հեղինակ Զեյմս Զոյսի այդօրինակ գեղումները, որոնք ասես, մեկ շնչով են գրված և տասնյակ էջերի ընթացքում կարող են համուշել ընդամենը մեկ կետաղրական նշանի<sup>1</sup>: Նույն ոգով է գրված դեռ 18-րդ դարում հայտնի «Տրիստրամ Շենոյի կյանքը և կարծիքները» վեպը, որի հեղինակին՝ Լորենս Սթերնին, Պուշկինը անվանել էր «անտանելի դետ»:

Կարելի է պատկերացնել, թե ինչպես կրնորշեր Պուչկինը այն արվեստագետներին, որոնք, այսպես ասած, արտացոլել են «ենրագիտակցության հոսքը», մի աշխարհ, որը բացահայտել է հոգեվերլուծող Զիգմոնդ Ֆրոյդը: Ահապասիկ, Մարտել Պրուստը, Թոմաս Էլիոթը, Սքոր Ֆիցգերալդը, Ռիխամ Ֆոլքները, Օլրու Հարսլին և ուրիշներ...

Ինչ վերաբերվում է դրուելաֆոնիային մերոդը կիրառող կոմպոզիտորներին, ապա դրանց ստեղծագործական ակտը ննանվում է Վոլֆգանգ

1. Краткая литературная энциклопедия, М., 1968, т. 5, стр. 917-918.

Գյորեի նկարագրած պուստի արարմանը: Ըստ Վիլհսովիայի, «արվեստը տիրապետում է տարերքին՝ զետեղելով այն կարծր շրջանակների մեջ: Երգի առյուրը պիտի լինի «հոգու կրակը»: Եվ անհրաժեշտ է մարել այն, «պաղեցնել սրտերը», ձեռք բերել այն հոգեկան անդրրը, որն անհրաժեշտ է, որպեսզի դուրս պոռքկացող խոսքին երգի ձև տար»<sup>2</sup>:

Եվ դոդեկաֆոնիայի կանոններն ու ձևերը դարձան այն կարծր կաղապարները, որոնք պարուեցին 20-րդ դարի մարդու հոգու հրահեղուկը: Հատկանշական է այս առումով Անտոն Վեբեռնի 1931-ի մարտի 17 թվակիր նամակը՝ հասցեագրված Հիդեգարդ Յոնեին: Թարգմանաբար ներկայացնում ենք հետեւյալ հատվածը:

«Ինձ թվում է, որ ես մի նոր (նվազախճբային) ստեղծագործության հիմքը դրեցի: Ես կազմել եմ մի «շարք» (ոչ Ձեզ հայտնի 12 տոռներն են), որն ինքնին արդեն պարունակում է բավական բարդ կապեր (այդ 12 տոռների միջև): Սի շարք, որը հավանաբար, ինչ-որ բանով նմանվում է հայտնի հնագույն ասույթին»: Նամակի վերջում Վեբեռնը մեջբերում է լատիներեն այդ հմայախոսքի բանաձեռ. SATOR, AREPO, TENET, OPERA, ROTAS.

S	A	T	O	R
A	R	E	P	O
T	E	N	E	T
O	P	E	R	A
R	O	T	A	S

Ահա բառացի թարգմանությունը. «Գեղջուկ սերմնացան Արեապոն ձեռքով բռնած է գուրանը (կամ անկիները) և ղեկավարում է աշխատանքը»: Ըստ երաժշտագետ Պոլյանուերի, Վեբեռնը այս բանաձեռ ընթերցում էր որպես «քրուտրոֆելոն», որ հունարեն նշանակում է «շրջում եմ եզանը» և նկատի ունի հիմ հունարեն գրելառը. 1-ին տոռը կարդում են ձախից աջ, 2-րդ տոռը՝ հակառակը՝ աջից ձախ և այլն<sup>3</sup>: Ընթերցման այս եղանակի արդյունքում ստացվում է հետեւյալ նախադասությունը. «Սերմնացանը ղեկավարում է աշխատանքը, ղեկավարում է աշխատանքը սերմնացանը»:

Վեբեռնի մեջբերած այս հմայախոսը ունի բազում այլ ընթերցումներ և մեկնաբանություններ...

Սովորական այս բառակուսում բառը վերջից դեպի սկիզբ կարդալու եղանակը երաժշտության մեջ անվանում են խեցգետնային շարժում: Բացի այդ, հայտնի են նաև նույն թեման, հնչյունների շարքը շարադրելու

2. М. Кессель, Гете и "Западновосточный диван", М., 1973, стр. 52.

3. А. Веберн, Лекции о музыке, письма, М., 1975, стр. 98-99.

մյուս կերպերը՝ հայելանման և հայելանմանի խեցքետնային շարադրանքը: Բազմաձայնության այս տեխնիկայի կիրառման կատարյալ նմուշներն են Յոհան Սերաստիան Բախի «Ֆուգայի արվեստը», «Երաժշտական դնծան» և այլն: Այս տեխնիկայի վրա է հիմնվել նաև դոդեկաֆոնիան: Ըստ Պոլմառուերի, Վերեռնող հիշյալ նամակում ակնարկում է իր Կոնցերտը (օր. 24), որի կոմպոզիցիոն սկզբունքը հեղինակը համեմատել է նշված հնագույն բանաձևի հետ:

Եթե պոլիֆոնիայում որևէ թեմայի վերջից դեպի սկիզբ շարադրելը կոչվում է խեցքետնային շարժում, ապա բանաստեղծական արվեստում այն անվանում են պալինդրոն կամ պալինդրոնոն: Սա հունարեն նշանակում է «վազում են», «վերադարձող» և նկատի ունի այն, որ այս տեխնիկայով գրված որևէ բանաստեղծություն կամ նախադասություն կարենի է կարդալ թե՛ սկզբից դեպի վերջ և թե՛ հակառակը, ընդ որում երկու դեպքում էլ տերսող և իմաստող նույնն են:

Նման սահմանափակումների դեպքում, եթե հոգու և մտքի բոլշը կաշկանդվում է «ապրոկրուստյան մահճի» շրջանակներով, դժվար է համատեղել և՛ բառակապակցությունը, և՛ գեղեցիկը, և՛ իմաստավորը: Ըստ մասնագետների, նույնիսկ ոչ բոլոր լեզուներն են լայն հնարավորություններ ընձեռում: Օրինակ, պալինդրոնի ձևով ստեղծած բազմաթիվ բարձրարվեստ բանաստեղծություններ կամ շինարենով, մինչդեռ եվրոպական լեզուներով գրվածները որոշ արիեստականություն են պարունակում: «Նյուրի դիմադրության հաղթահարման» առումով օրինակելի է Բախի արվեստը: Ըստ Ռոբերտ Շումանի, պոլիֆոնիայի խստ կապանքները, Բախի ձեռքերի համար, պարզապես, ծաղկել դրասանգներ էին, որոնք ի զորու չին խոչընդոտելու նրանց թերեւ ճախրանքը: Նոյնը չես ասի պոեզիայի պարագայում, ուր նաև բառերի իմաստի և քերականության հետ հաշվի նըստելու խնդիր է ծառանում: Ահա այս հանգամանքն է, որ օրինակ, ֆուտուրիստ պոետ Վելիմիր Խերբեկովի «Ծագին» բացառիկ պոեմը, որ ամբողջությամբ գրված է պալինդրոն ձևով, որոշ արիեստականություն է պարունակում: Ահա հետաքրքիր մի պատառիկ. «Պա, ոչչ յշն բար», որ բարգմանվում է. «Ճո՞րտ, գորգուրի՛ր տերերի կանանց»<sup>4</sup>: Ավելի բանաստեղծական է հնչում մեծ դաշնակահար Վլադիմիր Սոֆրոնիցկու պալինդրոնը. «Հօ հևալս արքան, մօրօն յօրօն լօց հա քրամ, և մասեն օհ»: Ահա բարգմանուրյունը. «Զյունը նախշել է տաճարը՝ և զարմանահրաշ է այն, սակայն անտեսանելի է հրեշտակապետը»:

Անշուշտ հայերենով գրված պալինդրոններ ևս կան: Առաջին նմուշը, որ հանդիպել եմ դպրոցական տարիներին, ահավասիկ. «Մենակ կատակ

4. Կրակալ լիտերատուրալ энциклոպեդիա, стр. 655-656.

կանեմ» զավեշտական օրինակն էր: Հետո ինքը էլ փորձեցի և ներկայացնում եմ շատ թե իհողոված տարրերակներից մեկը՝ «Մարդ ունի գին ու դրամ»: Հետագայում ինացա, որ գերմանացի գրող Էրիխ Մարիա Ռեմարկի իսկական ազգանունը «Կրամեր» էր, որը գրողը դարձել էր հակառակը՝ «Ռեմարկ»: Ի դեպ, կոմպոզիտոր Դանիել Ղազարյանն էլ իր որդուն է անվանել «Լեհնար», որ «Դանիել» անվան դարձգիրն է... Խոկ Գևորգ Էմինը 1937-ին գրել է «Նորեն ահա Ներոն, Նարեկն առանց կերպա» սկսվածքով մի քառյակ:

Դառնանք երաժշտությանը: Ըստ «Երաժշտական հանրագիտարանի», առաջին հայտնի դարձգիրը կիրառված է փարիզյան «Նոտր դամ» դպրոցի ժամանակաշրջանի (13-րդ դ.) «Վլանգոլա» կոչված երգասացույուններից մեկում<sup>5</sup>: Նույն աղբյուրից տեղեկանում ենք նաև, որ երբեմն դարձգիրը խորհրդանշել է անսահմանություն, հավերժություն: Օրինակ, Սամուել Շայսի (16-17-րդ դր.) դարձգիրը եռաձայն կանոնը «Tabulatura nova» ժողովածուից: Կանոնը հիմնված է հետևյալ խոսքերի վրա. «Տե՛ր, բոլ հավետ ամոռով շմսամ»: Դավիթ այս աղոթքը քաղված է թիվ 30 սաղմոսից: «Հույսս որի թեզ վրա, Տեր...»: Խոկ Հանրագիտարանում վկայակոչված Պիեռ ող լա Ռյուի (15-րդ դ.) «Missa Alleluia» մեսսայում դարձգիրը օգտագործված է որպես Քրիստոսի խոսքերի հնչյունային պատկերազարդում: Ահա՝ այդ խոսքերը. «Ետևն զնա, սատանա»: Եվ հնչյունները սկսում են նահանջել հետ-հետ զնալ: Ամենահայտնի օրինակներից է Գիյոմ ող Մաշոյի (14-րդ դ.) եռաձայն ոռնդոն, որը կոչվում է «Խմ վերջն իմ սկիզբն է, իմ սկիզբն իմ վերջն է»:

Այս ոռնդոն ունի սիմետրիկ ձև, ընդ որում երկրորդ կեսը առաջինի դարձգիրն է: Դարձգիրի բարձրագույն նմուշներ հանդիպում են Բախի «Երաժշտական ընծա» շարքում, մասնավորապես երկճայն անվերջանայի կանոնում, Մոցարտի «Ֆուլիտեր» սիմֆոնիայի ֆինալում, Բերդուկենի, Հայդնի, Բրամսի, Շուտակովիչի և այլոց արվեստում: Դարձգիր մեծակերտ նմուշ է Պաուլ Հիմնենի թիվ «Անդ և ետ» օպերան, որում զարգացումը հասնելով շրջադարձային կետին, ասես արտացոլվելով հայելում, նոյնուրյամբ վերադառնում է իր սկզբին:

\*

\* \* \*

Դարձգիր կիրառել են նաև ժամանակակից հայ կոմպոզիտորները: Տիգրան Մանսուրյանի 2-րդ ստուարի 1-ին մասի վերջում դաշնամուրի որոտը մղոստ ակորդներից հետո զութակի հնչյունների «սոսափյունը»

5. Музыкальная энциклопедия, М., 1978, т. 4, стр. 528.

երեք պիանոյից աճում է մինչև մեկ պիանո և դաշնամուրի առանցքային ակորդից հետո նոյն ճանապարհով հետ դառնում ու աներևութանում:

Այս գողտրիկ դարձգիրոն ընկալվում է որպես հպանցիկ մի տեսիլ:

Հետաքրքրական է Միքայել Կոկժակի «Օրորոցայինը» դաշնամուրի համար՝ նվիրված կոմպոզիտոր Հրաչյա Մելիքյանի հիշատակին: Այն գրված է 12-կիսատոնային եղանակով: Որպես ձևակառուցման հիմք, շինանյութը, Կոկժակը վերցրել է հինգ հնչյունից բաղկացած մի սերիա՝ շարքը: Տվյալ շարքը կոմպոզիտորը կազմել է «Հրաշ» անվան տառերին համապատասխանող լատիներեն նիշերից՝ սոլ-ու-յա-դո-սի: Սա յուրատեսակ երաժշտական արրոտակոս է: Այս շարքը և նրա ածանցյալ երեք սերիաները կոմպոզիտորը թողի վրա գծագրել է խաչի տեսրով: Ընդ որում, խաչի ծախս թեր բուն սերիան է, ներքին թեր՝ այդ սերիայի հայելանման շարադրանքը, վերին թեր՝ բուն սերիայի դարձգիրը, իսկ աջ թեր՝ հայելանման սերիայի դարձգիրը: Գրաֆիկական երաժշտության այս խաչակերպ պատերը դիտվում են որպես ստեղծագործության և՛ բնարան, և՛ ձևավորում:

Իսկ բուն «Օրորոցայինը» բխում է նշված չորս սերիաների զանազան համակցություններից:

Ի դեպ, 16-րդ դարից պահպանված նոտային գրաֆիկայի խաչակերպ մի նմուշ՝ հանելուկային մի կանոն նոյն ինքը՝ Մ. Կոկժակը գետեղել է «Երաժշտական տարածության տոպոլոգիա» վերնագրված իր գրքում, որը 2004-ին տպագրվել է Մոսկվայում:

Որպես կոմպոզիցիոն սկզբունք, դարձգիր օգտագործել է նաև Մարտունի Խորայելյանը՝ սիմֆոնիկ նվազախմբի համար գրված «Կոնտրաստների» շարքում: Ամենացայտուն կերպով այն արտահայտված է շարքը ամփոփող 5-րդ «Կոնտրաստում», որը կերտված է 12-կիսատոնային (դոդեկափոն) եղանակով: Այս «Կոնտրաստում» դարձգրի սկզբունքը ձեռք է բերում գերիշխող, համապարփակ բնույթը: 5-րդ «Կոնտրաստի» կառուցվածքը հիշեցնում է Հինդենիթի «Անդ և ետ» օպերայի երաժշտության զարգացման ընթացքը: Այս «Կոնտրաստը» ևս բաղկացած է երկու կեսից, ընդ որում, սկսած 41-րդ տակտից երաժշտությունը վերադառնում է դեպի սկիզբ՝ նոյն ճանապարհով, որով եկել էր:

Այս «Կոնտրաստը» տրամաբանական մի կուր կառույց է: Այստեղ գործում է սիմետրիայի օրենքը, ընդ որում տարբեր բաղադրիչների մակարդակով՝ ինտերվալյային, գործիքավորման, տեսսիտուրայի, ֆակտուրայի, նյութի, ծավալի բախչման, հնչութիւն և այլն:

«Կոնտրաստի» ուրսում տակտերից առաջին և վերջին քասան տակտե-

6. М.Кокжасев, Топология музыкального пространства, М., 2004, стр. 10.

որ Խսրայնյանը շարադրել է Անտոն Վերեռնին հատուկ «պատաճառիստական» եղանակով, որը բնորոշվում է որպես «պատզաներ, շրջապատված հնչյուններով»:

Բուն սերիայի հնչյունները հերթով շարադրում են կարճետք, ֆագուտը, հորոյը, թավջութակը և այլն: Սրանք շշովով հնչող կտրուկ հնչյուններ են: Առաջին և վերջին 20 տակտերում լարայինները նվազում են «պիցցիկատո», որոնք փողայինների հետ մեկտեղ կարող են հիշեցնել անձրևի կարիներ կամ աստղերի թարթելը կամ մեկ այլ պատկեր: Ինչպես նկարչի վրձինը հետզինետեն ներկում է, պատում կտրավի «սպիտակ թերթ», այնպես էլ այստեղ՝ երաժշտական տարածության (կտրավի) պատզաները հետզինետեն լցվում են նորանոր նվազարամների հնչյուններով: Զայների հյուսվածքը գնալով խտանում է, ծանրանում, «ճակընթացության» հնչուժը կուտակվում է և հասնում մինչև «կրիտիկական զանգվածի»: Նվազախումբն ամբողջությամբ սկսում է հնչել ու դրդու 34-րդ տակտից և տևում է մինչև 42-րդ տակտը: (Բոնգոնները կոմպոզիտորը օգտագործել է միայն 3-րդ «Կոնտրաստում»):

Ինչպես նշվեց, 41-րդ տակտից սկսվում է հետընթաց շարժումը՝ «տեղատվությունը», և երաժշտությունը վերադառնում է «փ շրջանս յուր»...

Եթե հարկ լիներ հակիրճ բնութագրել 5-րդ «Կոնտրաստը», ապա կիրառենք Վասիլի Կանդինսկու կոմպոզիցիաներից մեկի անունը՝ «Ծանրը թերեկի մեջ»: Ընդ որում, «քերևը» առաջին և վերջին 20 տակտերն են, որոնք երիզում են «ծանր» միջուկը...

Դարձգրի կիրառման հայտնի զավեշտական դեպքով էլ ավարտենք մեր խոսքը: Ասում են կոնսերվատորիաներից մեկի մի ուսանող չեր հասցրել հորինել քննությանը պահանջմանը պահանջմանը ստեղծագործությունը, և իր փորձառու ընկերոջ խորհրդով արտագրել էր իր ուսուցչի ստեղծագործությունը: Բայց, որպեսզի «չըռնվի», այն արտագրել էր հակառակ ուղղությամբ՝ վերջին հնչյունից մինչև սկիզբ ու ներկայացրել քննությանը: Պարզվել է, որ դա Ֆերենց Լիստի 2-րդ ուապսողիան էր...

ՀԱՅՆՐԻԽ ՇՅՈՒՏ

**16** -ող դարավերջը շատ արգասարեր էր Գերմանիայի արվեստի համար. մեկը մյուսին հաջորդելով, աշխարհ եկան Հայնրիխ Շյուտը՝ 1585-ին, Յոհան Շեյնը՝ 1586-ին և Սամուել Շեյտը՝ 1587 թվականին: Այս եռյակի անունները նույն տառով են սկսվում, ուստի նրանք հայտնի են, որպես «Երեք մեծ «Օ»:

Շեյտը մեծ դեր խաղաց «մոտետո» բազմաձայն երգեցիկ ժանրի ձևավորման գործում, զարգացրեց նաև կենցաղային երգարվեստը: Նա առաջիններից էր, որ կիրառեց նվազարանային սյուիտ ձևը՝ իր հինգ պարային մասերով, իսկ Շեյնը մեծ երգեհոնահար էր, նրա հիմնական ստեղծագործությունը՝ «Նոր տարուլատուրա» եռհատորյակն է, որը պարունակում է բազմաձայն մշակված խորաներ, ֆուզաներ, տոկատներ, ֆանտազիաներ: Սյուս խոչոր գործն է «Տարուլատուրային գիրը», որն ամփոփում է 100 հոգևոր երգ և սաղմոսներ:

Մինչդեռ Հայնրիխ Շյուտը հիմնադրեց առաջին գերմանական օպերան, բալետը և օրատորիալ-կանտատային ժանրը: «Դափնե» օպերան ներկայացվեց 1627-ին, «Օրփեոս և Էվրիդիկե» բալետը, որտեղ օգտագործվեց երգեցողություն, 1638-ին (առաջինը՝ բալետի պատմության մեջ բնմադրված տարրեր կոմպոզիտորների նույն սյուիտով բալետներից), իսկ առաջին օրատորիան՝ «Ծննդյան պատմությունը», 1664 թվականին: Շյուտը կողմից ձևավորված օրատորիալ ժանրը իր գագաթին հասավ Հենդելի և Բախի արվեստում:

Հայնրիխ Շյուտը Բախի հայրենակիցն է, ծննդել է Տյուրինգիայի Կյոստրից քաղաքում, Բախսից ուղիղ մեկ դար առաջ: Երաժշտական առաջին դասերը ստացել է Վեյսենֆելս քաղաքում: Հայնրիխը լավ ձայն ուներ, և մի օր Հեսսենի իշխան Մորիկը, լսելով տղայի երգը, ընդունեց նրան իր պալատական երգչախումբը: 14-ամյա Շյուտըն իր ուսումը շարունակեց Կասել քաղաքում, «Ազնվազարմ երիտասարդաց կոլեգիայում»: Կոմպոզիցիայի ուսուցիչն էր պալատական կապելլայի ղեկավար Օտտոն: Հայնրիխը այնուհետև ավարտեց Մարքուրգի համալսարանը և ստացավ իրավագիտության դոկտորի կոչում: 1609-ին Կասելի կոմսի



առաջարկությամբ և հովանավորությամբ Շյուտցը մեկնեց Վենետիկ՝ կատարելագործվելու: Խոտախայում Շյուտցը յուրացրեց Վերածնության շրջանի նվաճումները, խորացավ Եկեղեցական խմբերգային արքեստի մեջ, որը ներկայացված էր Պալեստրինայի, նաև վենետիկյան և նիդեռյանական կոմպոզիտորական դպրոցներով: Նա ծանոթացավ նաև մադրիգալ աշխարհիկ ժամրին, Յակոպո Պերիի, Ջովիո Կաչչինի և Կլաուդիո Մոնտեվերդիի օպերաներին: Շյուտցի առաջին՝ վենետիկյան շրջանի արդյունքն էր 19 խոտախան մադրիգալներից բաղկացած ժողովածուն, որը նա հրատարակել է 1611-ին: Վերադառնալով հայրենիք՝ կոմպոզիտորը ստանձնում է Կասելի պալատական երգեհոնահարի, այնուհետև՝ Դրեգունի պալատական երաժշտապետի պաշտոնը: Այստեղ էլ նա ստեղծեց «Դափնե» օպերան՝ Սաքսոնիայի իշխանի դստեր ամուսնության կապակցությամբ: Նախքան Շյուտցը, 1600-ին, արդեն ստեղծվել էր աշխարհի առաջին օպերան, որի հեղինակն էր խոտախի Յակոպո Պերին: Դա նույն «Դափնեն» էր, որի տեքստը գրել էր Օտտավիո Ռինուչչին: Հենց այս տեքստն էլ Շյուտցի նույնանուն օպերայի համար բարգմանել էր գերմանացի բանաստեղծ Մարտին Օպիցը:

1628–1629 թվականներին կոմպոզիտորը կրկին Խոտախայում էր: Նա հաճախ ներկա էր լինում ազնվականների տներում «նոր ոճի» ստեղծագործությունների կատարումներին: Ի տարբերություն բազմաձայնության, որտեղ բոլոր ձայնները ինքնուրույն են, «նոր ոճին» հատուկ էր հոմֆոնիկ կերտվածք, որը գերիշխում է մեկ ձայնը, մասնավորապես մեմերգը, որի նվազակցությունը հիմնվում է, այսպես կոչված, «գեներալ-քասի» և միջին ձայնների ակորդների հաջորդականության վրա: «Բողոքականության և խոտախանի, այսինքն, սպիրիտուալիզմի և դասականի միաձույլից ծնվում է բազմաձայնության նոր ձև, ոչ միայն կոնտրապունկի օրենքներով, այլև հարմոնիայի հիմքի վրա, որտեղ ձայններն ավելի ազատ չարժվում, – գրել է արվեստաբան Էնդիքնը: – Եկեղեցական երաժշտության այս բարեկիսությանը զուգահեռ Շյուտցը աշխատում է նոր ժամրերի վրա՝ օպերայի և բալետի, այսինքն՝ արքունական, աշխարհիկ երաժշտության»<sup>1</sup>:

Այսպիսով, Շյուտցը բյուրեղացրեց նոր արտահայտչամիջոցներ: Խոտախայից Դրեգուն վերադառնալուն պես Շյուտցը շարունակեց երաժշտապետի իր պարտականությունները, բայց դա երկար չևեց: Գերմանական բողոքական իշխանների և Գերմանիայի կայսեր միջև ծագած 30-ամյա պատերազմը (1618–1648), որից «քրոնկվեց» ողջ Եվրոպան, մեծ վնաս հասցրեց նաև արվեստին: 1636-ին հրատարակված Շյուտցի «Հոգևոր փոքր կոնցերտներ» ժողովածուի նախարանում կոմպոզիտորը

1. И. И. Иоффе, Немецкое искусство XVI-XVIII вв., Л., 1937, стр. 102.

նշում է, թե պատերազմը ինչ վճասներ է հասցրել երաժշտությանը:

Ծյուտը բազմից դիմել է Սարտնիայի իշխան Գեորգին՝ քարելավելու համար Դրեզդենի կապելլայի վիճակը և երաժշտների նյութական պայմանները: Պատերազմի տարիներին Ծյուտը շրջազայել է տարրեր քաղաքներում, դեկապարել է Հաննովերի կապելլան, 1633-1645 թթ. ընթացրում երից այցելել է Դանիա, կազմակերպել Կոպենհագենի արքունական կապելլան: Այստեղ է նա բենադրել իր «Դանիայի հարդահանեսը» բալետը: 1633-ին Ծյուտը այցելել է նաև Նիդեռլանդներ: Այդ է վկայում Ռենբրանդի Վրձնած «Երաժշտի դիմանկարը», որը գտնվում է Վաշինգտոնի Քորորան պատկերասրահում: 1664-ին կոմպոզիտորը Վերադարձել է Դրեզդեն: 70 տարին լանապուց հետո Ծյուտը տեղափոխվում է Վեյսենֆլս, սակայն կապերը չի խզում Դրեզդենի երաժշտական կյանքի հետ:

Ծյուտի երաժշտական ուղին քաժանում են երեք շրջանի:

Առաջինն ընդգրկում է 1611-ից մինչև 1628 թվականը: Այս տարիների գործերից են մարդկավաները, խմբերգերը, «Հարության պատմություն», «Դավթի սաղմոսները», «Դափնե» օպերան: Այս շրջանում առավել զգացվում են իտալական ազդեցությունները, մասնավորապես վենետիկյան կոնցերտային ոճը:

Երկրորդ շրջանը ծավալվում է 1629-ից մինչև 1650 թվականը: Այս շրջանում Ծյուտը ստեղծել է վոկալ-գործիքային կոնցերտները, որոնք կոչվում են «Սրբազն սիմֆոնիաներ», «Հոգևոր փոքր կոնցերտներ», «Հոգեհանգստյան երգասացություններ»: Այս շրջանին են պատկանում նաև «Հիսուսի յոթ խոսքերը խաչի վրա», «Հոգևոր խմբերգերը», մոտենական ժողովածուն, առաջին գերմանական ուրվիթներ և այլ գործեր:

Երրորդ շրջանն ընդգրկում է 1650-ից մինչև 1671 թվականը: Այս վերջին շրջանում Ծյուտը ստեղծել է «Ծննդյան պատմություն» օրատորիան, Հովհաննեսի, Մատթեոսի, Ղուկասի ավետարանների հիման վրա հորինած պասիոնները:

Եթե «Դասինները» Ծյուտը հասցեագրել է առանց նվազակցության երգչախմբին, ապա «Ծննդյան պատմության» մեջ կոմպոզիտորը նվազարանների միջոցով բնութագրում է գործող անձանց, որոնց մասին պատմում է ավետարանիչը: Հովհանների խմբերգում ֆիետաները և ֆագոտները «Երիգում են» բնապատկերը, քահանայապետերը ներկայացվում են տրոմբոններով, իսկ Հերովդես թագավորը՝ շնչորներով:

Ավետարանի ուշիտափիվ (ասերգությունը) հիմնվում է երգեհոնի և քայլ ընդգծող այլ նվազարանների վրա՝ ուր անգամ ընդմիջվերը ինտերմետիաներով: Առաջինում հանդես է գալիս «Հրեշտակը» երկու փոքր ալտերի նվազակցությամբ: Երկրորդը իրեշտակների վեցձայնանի խըմբերոց է լարայինների, ֆագոտի և երգեհոնի նվազակցությամբ: Մրան հա-

զորդում է հովիվների քերկրալի եռերգը՝ ֆլեյտաներով ու ֆագոտով:

Չորրորդ ինտերմեջիան եռերգի միջոցով պատկերում է երեք մոգերին: Հինգերորդի կվարտետը ներկայացնում է քահանայապետերին: Վեցերորդը, ինչպես վերը նշվեց, Հերովուեսին: Յոթերորդ ինտերմեջիայում հրեշտակը Հովսեփին զգուշացնում է Հերովուեսի շարագործությունների մասին, որին և հաջորդում է մանուկների կոտորածը:

Վերլուծելով Շյուտցի «Պասիոնները» և «Ծննդյան պատմությունը» օրատորիան, երաժշտագետ Տամարա Լիվանովան զուգահեռ է անցկացնում Շյուտցի և Բախի նույնանուն գործերի միջև ու նշում պատիսների ընդհանուր հատկությունները՝ վեհ, զուսպ լրջությունը և յուրօրինակ հակադրությունը օպերային ժամբին քննողշ շափազանց արտահայտչականությանը<sup>2</sup>:

Կյանքի վերջում Շյուտցը կարծես նախազգում էր իտալական օպերայի ներխուժումը, որը մեկ ու կես դար անց հեղեղեց ողջ Գերմանիան:

Վարպետը հիմնեց կոմպոզիտորական դպրոց՝ հանձին իր աշակերտներ Սատիս Վեկմանի, Քրիստոֆոր Բեռնհարդի և Յոհան Թայլերի: Շյուտցը ստեղծել է և կոմպոզիցիայի ուսմունք, որի մի մասը հիմք է շարադրել, մնացածը՝ Բեռնհարդը:

Ահավասիկ «Հոգևոր խմբերգեր» ժողովածուի նախարանը, որտեղ Շյուտցը ներկայացնում է իր երաժշտական հայացքները: Հաջորդ տերսուն է «Կոմպոզիցիայի ընդլայնված տրակտատը»: Երրորդը «Կոմսունաներ և դիստնաներ գործածելու մանրամասն խորհուրդներն» է, իսկ Վերջին տերսունը՝ «Երգեցողության արվեստի կամ մաներայի մասին»: Շյուտցի Վերջին ստեղծագործությունն էր 1671-ին հորինած «Դավթի 119-րդ սաղմոսը՝ 100-րդ սաղմոսի և գերմանական մագնիֆիկատի հավելմամբ», որը հեղինակը համարել է իր «կարապի երգը»: Նույն ժամանակաշրջանում, մահից 2 տարի առաջ, Շյուտցը խնդրել է իր աշակերտ Բեռնհարդին իր համար ստեղծել հոգեհաճախույան հնգամայն մոտենության վեցնվածքը՝ 118-րդ սաղմոսի վրա: Ժամանակին Շյուտցը վեցձայնանի մոտեն էր կերտել Յոհան Շեյնի հիշատակին: 118-րդ սաղմոսում ասպիս է. «Թո հրամաններն ինձ համար երգ եմ իմ պանդիստության տան մեջ...»:

Ըստ Էռյան, այս խոսքերը Շյուտցի ողջ ստեղծագործական կյանքի բնարանն էին, քանզի Արարջի պատվիրանների, հորդորների խստությունը կոմպոզիտորի սերն առ Աստված վերածում էր քաղցրահունչ երգերի: Շյուտցը հորինել է «սորագան սիմֆոնիաների» երեք շարք՝ լատիներենով և գերմաններենով: Առաջին շարքը ստեղծել է 1628-ին Վենետիկում, երկ-

2. Т. Ливанова, История западноевропейского музыкального искусства до 1789 г., т. I, М., 1983, стр. 476.

րորդ այցելության ժամանակ: Երկրորդ՝ 1647-ին, իսկ երրորդ շարքը՝ 1650-ին:

Ծյուտի արվեստը հնչող Աստվածաշունչ է, և սուրբգրային հատվածների ընտրությունը արտացոլում է նաև կոմպոզիտորի աշխարհայացքը, դիրքորոշումը: «Ուրախացեք իմ հետ, որովհետև իմ կորած ոչխարը գտա», Դուկասի ավետարանի 15-րդ օլիմի այս խոսքերը երգվում են մի կոնցերտում, այսինքն՝ «Սրբազն սիմֆոնիայում»: Մեկ այլ կոնցերտ հիմնված է 21-րդ օլիմի վրա. «Զգույշ կացեք անձներիդ, մի գուցն ձեր սըրտերը ծանրանան շատակերությունով և արքեցությունով և ապրուստի հոգսերով, և այն օրը հանկարծ հասնե ճեղ վերա... Ուրեմն արթուր կացեք, և ամեն ժամանակ աղորք արեք, որ արժանի լինիք ազատվի այն բոլոր քաներիցը, որ պիտի լինին, և կանգնել մարդի Որդու առաջին»:

Նոյն ավետարանից է նաև «Ավե Մարիա» կոնցերտ-երկիսոսությունը, որտեղ իրեշտակն ավետում է Մարիամին Հիսուսի ծնունդը: Ծյուտին ոգեշնչել է և Հին կտակարանը. «Սրբազն սիմֆոնիաներից» մեկում երգվում են Թագավորաց Ա գրքի հետևյալ խոսքերը. «...Տիրոջ պես սուրբ շկա... և մեր Աստուծո պես վեմ չկա»:

Ծյուտը երաժշտության է վերածել նաև բազմաթիվ սաղմոսներ: «Սրբազն սիմֆոնիաներում» ասես վերհանում է Դավիթ սաղմոսերգուն ու ասում. «...քնարով, տասը թելավոր սաղմոսարանով սաղմոս երգեցեք նորան»: Մեկ այլ կոնցերտում՝ «Ես կորհեմ Տիրոջը իմ կյանքումը, սաղմոս կասեմ իմ Աստծում, քանի որ կամ»...

Ծյուտի «Օրփեոս և Էվրիդիկե», «Պարիս և Հեռինե» բալետների երաժշտությունը կորսված է, պահպանվել են միայն լիբրետոները... Մեզ չի հասել կոմպոզիտորի և ոչ մի երաժշտաբաներական ստեղծագործություն: Սակայն աշխարհիկ երգեր պահպանվել են, օրինակ՝ «Ծնորհակալական երգը» (Danklied): Այս գողտրիկ ներքողի 29 տակտից 20-ը երգի մեղեդին է, իսկ 9-ը՝ կրկնանվագը: Տեքստի 10 տմերում «տեղավորվել» է մի ամբողջ տիեզերք՝ յոթ մոլորակները, դիցարանական կերպարները՝ Վուլկանը, Դեմալոսը, Չորջապարի մեջ են Պոռտևսը, ծաղկավետ Ֆլորան, պտղաբեր Պոմոնան, Շիմֆաները, հիշատակվում են անտիկ բանդակագործներ Պոլիկլետոսը, Զեքսիսը, փորորկահույզ Նեպտունը: Վերջում խնդրում են Տիրոջը, որպեսզի Սարսոնիայի իշխան Վիլելմին երկար կյանք պարգի:

Աշխարհիկ երգերից է նաև «Ուսկեմազիկ, ինչպես Ավրորան» գործը: Սա Սոնտեվերդիի մի մահրիգալի մշակումն է սոպրանոյի, ալտի, երկու ջութակի և բասս կոնտինուուի համար: Այս երգում պահպանված են «Սրբազն սիմֆոնիաներում» կիրառվող ճայների ծավալման երեք «հարկերը» (ինչպես Ալբրեխտ Դյուրերի նկարներում): Վերին ճայները՝ ջութակները (կամ փողայինները), խորիդանշում են երկինքը, բասը՝ եր-

կիրճ իր ընդերքով, իսկ երգը՝ մարդուն, որը տատանվում է այս երկու քևեռների միջև: Հոգևոր երգերում վերին ձայները երիզելով, ոսկեզօծելով մեղեղին՝ ասես լուսապսակ են գծագրում, ինչպես սրբապատկերներում...

Իտալական ազդեցություններից հիշատակ մնաց նաև Շյուտցի անվան լատիներեն բարգմանությունը՝ Սագիտարիուս, որ նշանակում է նետածիզ: Սակայն Շյուտցի «հրացանից», ինչպես կասեր բանաստեղծը, «սոհնակներ ու աղավնիներ են թոշում», ինչպես «սրբազն սիմֆոնիաներից» մեկում, որը հիմնված է «Երգ երգոցի» հետևյալ խոսքերի վրա. «Ով աղավնիս, որ վեմի խոռոշներումն նս... ցույց տուր ինձ քո երեսը»...

Շյուտցը իր վերջին ստեղծագործությամբ խաղաղություն հայցեց Արարչից... Նա ապրեց երկար, արգասաքեր կյանք և գնահատվեց ըստ արժանվույն: Կոմպոզիտորը վախճանվեց 1672-ին, նրա շիրմին գրված է.

«Դարաշրջանի ամենակարկառուն երաժշտը,

Օտարմերի ուրախությունը և Գերմանիայի լույսը»:

Եվ այդ լույսը դարերի խորքից հասնում է մեզ ու անցնում գալիքին...

Գերմանական կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Հայնրիխ Շյուտցը ապրել ու ստեղծագործել է 16-17-րդ դարերում: Ուսանել է Իտալիայում, աշակերտել մեծն Չովաննի Գարրիելիին և Ժան Բաունդելի համար կոմպոզիտորների ճեռքբերումները: Շյուտցի օրոք Ֆլորենցիայի վարպետները ձևավորում էին մոնողիկ ոճը: Տվյալ դեպքում «մոնողիա» ասելով նկատի ունենք ոչ թե միաձայն երգասացություն, ինչպես խորալը կամ շարականը, այլ նվազակցվող երգ, մադրիգալ, որոնցից սկզբնավորվեց օպերայի ժանրը:

Մինչեւ Վենետիկյան կոմպոզիտորները բյութեղացնում էին բազմախմբերգային մեծակերտ ոճը, ինչպես նաև զուգակցում ձայները և նվազարանները, ստեղծում նորանոր երաժշտածեներ: Ահա այս նվաճումներն էլ Շյուտցը տեղափոխեց Գերմանիա, զարգացրեց և հիմք դրեց գերմանական եկեղեցական երաժշտությանը, որն իր կատարելությանը հասավ մեկ դար անց՝ Բախի արվեստում:

Հայնրիխ Շյուտցի «Դահմեն» հանդիսացավ գերմանական առաջին օպերան, իսկ «Օրփեոս և Էվրիդիկեն»՝ առաջին բալետը: Կոմպոզիտորի գրչին են պատկանում նաև օրատորիաներ, կանտատներ և այլ երկեր: Հայտնի են «Հարության պատմություն», «Ծննդյան երեք պասիոն» ըստ Մատթեոսի, Սարկոսի և Հովհաննեսու «Հիսոս Քրիստոսի յոթ խոսքերը խաչի վրա», «Դավթի սաղմոսները» և այլ գլուխգործոցներ:

Շյուտցի արվեստում առանձնահատուկ տեղ են գրավում վոկալ-նվազարանային կոնցերտները, այսպես կոչված, «հոգևոր» կամ «սրբազն սիմֆոնիաները»:

17-րդ դարի կոնցերտային կոմպոզիցիաների անունները հաճախ պայմանական էին՝ «մոտենու», «սաղմոս», «սիմֆոնիա», «դիալոգ», «կան-

տատ», նույնպես հաճախ էին հանդիպում «հիբրիդ» ձևերը՝ տարբեր ժամկերի, տարրերի զուգորդումը մեկ ստեղծագործության մեջ:

«Սրբազն սիմֆոնիա» անվանումը Շյուտցը ժառանգել է Զովաննի Գարբիելիից: Այդ «սիմֆոնիանների» խոսքերը քաղված են Աստվածաշնչից՝ սաղմոսներից, «Երգ-երգոցից» և այլ աղբյուրներից: Օրինակ՝ «Ես կօրինեմ Տիրոջ իմ ողջ կյանքում», «Օրինեցեր նրան շեփորի ձայնով», «Ցնծացեք Տիրոջ առջև», «Արի ինձ հետ Լիքանանից», «Սափող» և այլն:

16-17-րդ դարերում արվեստի կարևոր սկզբունքներից էր երաժշտությունը հնարավորինս մոտեցնել խոսակցական լեզվի հնչերանգին, բանաստեղծական տեքստի տողացի, բառացի «քարզմանությունը» երաժշտության լեզվով: Նման պահանջը պայմանավորված էր հոնտորական արվեստի հզոր ազդեցությամբ: Սա բխում էր նաև հոգևոր երաժշտության առաքելությունից՝ պատկերավոր դարձնել աստվածաշնչյան խոսքերը, քարոզը, աղոքը: 17-18-րդ դարերի կոմպոզիտորները մեծ հոնտորներ, կրոնական քարոզիչներ էին: Խոկ երաժշտագետ Ֆորկելը Բախին համարում էր «երաժշտության մեծագույն պուտ և հոնտոր, որին հավասարը չկա և դժվար թե լինի»<sup>3</sup>: Երաժշտագետ Օլգա Զախարովան գրում է. «Հոնտորական արվեստի կողմից ձևակերպված խնդիրները, որոնք էին՝ ուսանելը, բերկրանք պատճառելը, հուզվելը, հոշակվում էին որպես բարոկո արվեստի գլխավոր խնդիրներ, որոնք կոչված էին կազմակերպել ստեղծագործական անքողջ գործներացը»<sup>4</sup>: Ժամանակին իտալացի կոմպոզիտոր Զովաննի Բարդին ասում էր, թե երաժշտությունը նախևառաջ խոսք է, հետո՝ ոիթմ և հնչյուն: Ահա թե ինչու ճարտասանական հնարքները, այսպես կոչված, ֆիզուրաները՝ պատկերները, իրենց դրոշմն էին թողնում երաժշտության վրա: Օրինակ, Աղամին անկումը հաճախ պատկերում էին վարդներաց շարժումով, որը հոնտորական արվեստում կոչվում է կատարասիս: Խոկ Հիսուսի հարությունը պատկերում էին վերընթաց շարժումով, որը կոչվում է անարասիս:

Մահիր պատկերող տարածված հնարանքն էր ապոսիոպեսիս կոչվող պատկերը, որը կիրառել են Կլաուդիո Մոնտեվերդին «Օրփեոս» օպերայում, Հայնրիխ Շյուտցը՝ «Հիսուսի յոթ խոսքերը» օրատորիայում և ուրիշներ:

Նշված պատկերը պահանջում է բոլոր ձայների հնչողությունը պաուզյով ընդհատել:

Անդրադառնալով Շյուտցի հիշյալ «սրբազն սիմֆոնիային», նշենք,

3. О. Захарова, Ритосторика и западноевропейская музыка XVII–первой половины XVIII вв., М., 1983, стр. 56.

4. Անդ, էջ 13:

որ այստեղ ևս կոմպոզիտորը կիրառում է բազում հոեստրական պատկերներ, որոնք թևավորում են մեղեդին, գունավորում հարմոնիան, շնչավորում ոիթճնել:

«Սիմֆոնիան» գրված է տեսնոր ձայնի, երկու ջութակի և բասի համար: Ընդ որում բասը կատարվում է կամ երգեհոնով, կամ կլավեսինով, որոնց ներքին ձայնը կրկնապատկում, ընդգծում են թավջուրակով կամ կոնտրաբասով: Ինչպես մյուս սիմֆոնիաներում, այստեղ էլ Շյուտցը միահյուսում է պոլիֆոնիան և հոմոֆոնիան: Թվագիր բասի սյունազարդ ակորդների վրա կամարների պես ճախրում են ջութակահարների ինքնուրույն ձայները, որոնք նմանակում են երգին, մերք՝ ժապավենի պես պարուրում նեղեղին, մերք՝ ծիածանի պես բոցավառվում, լուսապսակի պես շողշողում: «Սիմֆոնիան» իրենից ներկայացնում է մեկ ամբողջական կառույց, որի ներքին ստորարաժանումները խմբավորվում են երեք բաժնի: Այս «Սիմֆոնիայում» գործում է և թվերի խորհուրդը, և տարածության իմաստարանությունը:

Թե՛ «սիմֆոնիայի» երեք բաժինները և թե՛ ձայնաբաժինների երեք, այսպես ասած, հարկերը, այսինքն՝ ջութակները, տեսնորը և բասը, խորհրդանշում են Սուրբ Երրորդություն, նաև՝ խաչ: Ինչպես նշում է երաժշտագիտ Լորանովան. «Հենց բարոկ ժամանակաշրջանում կարողացան «զեել» տարածությունը երաժշտության մեջ և երաժշտությունը՝ տարածության մեջ, կարողացան երաժշտությամբ իմաստավորել և զարդարել այդ տարածությունը»<sup>5</sup>:

Ասվածի լավագույն վկայություններից է Շյուտցի “Venite ad me” («Եկայք առ իս») «սրբազն սիմֆոնիան» որը հիմնված է Քրիստոսի հետևյալ խոսքների վրա. «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և թեոնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ»: Մատթեոսի ավետարանում գլուխած այս խոսքնը ավարտվում են այսպես. «...որովհետև իմ լուծը քաղցր է, և թեոք՝ թերթ» (գլուխ ԺԲ, 28-30): Բավական է թողուցիկ մի հայացք ձգել և մեր առջև կրացվի այս հնչյունակերտ տաճարի գեղեցկությունը, ձեմ և բովանդակության ներդաշնակությունը:

Նախանվազը ստեղծում է հոգևոր մթնոլորտ, նախապատրաստելով Հիսուսի կոչը՝ «Եկեք ինձ մոտ բոլոր հոգնածներդ...»: Մատթեոսի 11-րդ գլուխ 28-րդ համարով ավարտվում է կոմպոզիցիայի առաջին բաժինը: 2-րդ բաժինը ամենածավալունն է, որովհետև տեքստն ընդգրկում է բարդ ստորադասական նախադասություն, այսինքն՝ 29-30 համարները: 2-րդ բաժինը նույնպես սկսվում է նախանվագով, որն իր նոր ոիթճնով զգացնել է տախի մտքի շրջադարձը՝ «Իմ լուծը ձեզ վրա վերցրե՛ք և սովորեցե՛ք ինձնից...»:

5. Г. Шютц, Сборник статей, М., 1985, стр. 240.

Երկրորդական նախադասությունը վերականգնում է չորս քառորդ չափը. «որ հեզ եմ և սրտով խոնարհ...»: Հաջորդ երկրորդական նախադասությամբ, այսինքն՝ 30-րդ համարով, ավարտվում է 2-րդ քածինը և ավետարանի 11-րդ գլուխը՝ «...որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև»: Ընդ որում վերջին համարը կոմպոզիտորը ֆակտորայի միջոցով իր հերթին տրոհում է երկու հատվածի՝ մեկը «...իմ լուծը քաղցր է...», մյուսը՝ «իմ բեռը թեթև»:

Ուժինիկ և ֆակտորային այս քազմազանությունը ներդաշնակելու և երաժշտական կառույցը աճրողացնելու նպատակով կոմպոզիտորը կրկնում է առաջին քածնի նյութը նույն նախանվագով և խոսքերով հանդերձ: Ահա այս երրորդ քածնի, այսինքն ուսպիքայի շնորհիվ կոմպոզիցիան ձեռք է բերում սիմետրիկ, հավասարակշիռ ձև:

Հոնետորական քազմաքիվ հնարանքներից Շյուտցն իր «սիմֆոնիայում» կիրառում է մի քանիսը: Օրինակ, կրկնությունները՝ «Եկե՛ք ինձ մոտ» հորդորը առաջին քածնի ընթացքում պարբերաբար կրկնվում է 18 անգամ (6 եռյակ): «Իմ լուծը ձեզ վրա վերցրե՛ք» կոչը՝ 12 անգամ, «հեզ եմ և սրտով խոնարհ»՝ 2 անգամ, «իմ լուծը քաղցր է»՝ 3 անգամ, «իմ բեռը թեթև»՝ 8 անգամ, մինչդեռ վերջինս ջուրակները կրկնում են 14 անգամ՝ արձագանքելով երգին և միմյանց: Իսկ ուսպիքայում «Եկե՛ք ինձ մոտ» հորդորը կրկնվում է 12 անգամ:

Ի՞նչ է տալիս մեզ այս թվարանությունը: Չնայած, որ նման կրկնարանությունները տարածված են կանոնադրում, աղոթերգություններում և առհասարակ երգեցողության մեջ, Շյուտցը, որպես հանճարեն քարոզիչ հոնետոր, այս և այլ հնարանքների միջոցով հասնում է մեծագոյն ներգործության, ինչպես պատարագիչը՝ «Խաղաղություն ամենեցուն» օրինության կրկնությամբ:

Ազդեցիկ է նաև այն, որ «իմ լուծը ձեզ վրա վերցրե՛ք» խոսքերի մեղենին սկսելով «մինորում», աստիճանաբար քարձրանում է վեր, այնուհետև խոնարհվում ցած՝ խաղաղվելով լուսավորվում մաժոր հարմոնիայի ոլորտում: Իսկ «իմ բեռը թեթև» խոսքի երաժշտական դարձվածները, շնորհիվ արագավազ 16-րդական հնչյունների, իրոք ստեղծում են թերեւության, ճախրանքի տպավորություն և ուղղվում դեպի երկինք: «Հատկապես ազդեցիկ է ուսպիքայում կիրառված հնարքը՝ կոմպոզիտորը ավելացնում է եղանակավորող մի քառ՝ «ergo», որը նշանակում է «այսպիսով» կամ «այսպես ուրեմն» և հնչում է այսպես: «Այսպիսով, Եկե՛ք ինձ մոտ»: Սա ևս հոնետորական հնարք է, որն առաջին քածնի կրկնությունը դարձնում է հիմնավորված արդյունք, եզրահանգում:

Հիրավի, լսելով, կատարելով այս «Սրբազն սիմֆոնիան»՝ մարդու հոգին խաղաղվում է: Նախրան Շյուտցի ասպարեզ գալը արվեստի նպատակն եր ոչ թե հուզել, կրքեր բորբոքել, այլ խաղաղություն ներշնչել:

Ծյուտցի ժամանակ վերելք էր ապրում Սոնտեվերդիի ստեղծած հոգական, պարետիկ ոճը: Անսալով ավետարանի խոսքերին՝ Ծյուտը տուրք տվեց խաղաղ ոճին: Նույն աղբյուրից բխող խաղաղությունը մեզ է փոխանցվում պոեզիայի, գեղանկարչության և այլ արվեստների միջոցով: Խաղաղությամբ է համակված, օրինակ, Վարդգես Սուրենյանցի «Եկայր առ իս» նկարը, որտեղ պատկերված է Հիսուսը կանգնած՝ խոնարի կեցվածքով, ծեռքերը փոքր-ինչ պարզած, պատրաստ իր գիրկն առնելու մոլորյաներին: Նկարի վրա գրված է Հիսուսի խոսքերը. «Եկայր առ իս ամենայն վաստակեալը և բեռնաւորը, և ես հանգուցից զձեզ»:

Ինչպես Ալֆրեդ Շնիտկեն խոստովանել էր, թե Նարեկացու խոսքերով Կոնցերտը գրելիս ինքը՝ Նարեկացին էր շարժում գրիչը, այնպես է Ծյուտցն իրավամբ կարող էր ասել, որ իր գրիչը շարժել էր Սուրբ Հոգին:

Ահա այսպես, Հիսուսի կանչը արձագանքում է դարենար ու փոխանցվում սերնդեւ սերունդ:

«Երկինք ու երկիր պիտի անցնեն,  
բայց իմ խոսքերը չպիտի անցնեն»:

## ԳԵՂՐԳ ՖԻԼԻՊ ՏԵԼԵՍԱՆՆ

(1681-1767)

Կորիլին է մեծարքած,  
Լյովին՝ փառի տաճարում,  
Տելեսանն է միայն վեր  
Ամեն տեսակ գովեստից<sup>1</sup>:

**Մ**յսպես է գովերգել կոմպոզիտորին նրա գրչակից Յոհան Մատեղոնը: Գեղրգ Ֆիլիպ Տելեսանը գերմանական լուսավորչության ռահվիրան է երաժշտության ասպարեզում: Նրա արվեստը հասցեագրված է լայն զանգվածներին: Կոմպոզիտորի հավատամբը արվեստի ժողովրդայնությունն էր, մատչելիությունը: Նա գրել է. «Ով կարող է օգտակար լինել շատերին, ավելի լավ է վարվում, քան նա, ով գրում է քչերի համար»<sup>2</sup>:

Այս իմաստով հիշարժան է Տելեսանի «Ազգերի նախներգանքը», որում երաժշտական միջոցներով պատկերված են իրմ ունոր սերնդի գերմանացիք, շվեդներ, իսպանացիք: Իսկ մի սյուհտում հանդիպում ենք հետևյալ Վերնագրերը՝ «Թուրքեր», «Ծվեյցարացիներ», «Մուսկվացիներ», «Պորտուգալացիներ»:

Տելեսանը Լեհաստանում՝ կոմս Պրոմենիտցի պալատում ծառայության տարիներին, զգացել է լեհական և չեխական երգերի հմայքը և օգտագործել իր արվեստով, մասնավորապես, «Լեհական կոնցերտներում», «Լեհական պարտիտայում»: Ժողովրդայնության այս միտումը հետագայում «միս ու արյուն» է դարձել մեկ այլ «լուսավորչի՝ Յոհան Հերդերի «Ժողովուրդների ձայնը երգերում» ժողովածուում, այնուհետև ստեղծագործական անսպառ աղյուր հանդիսացել թերհովենի և հատկապես ոռմանտիկների արվեստում: Մատչելիության գգուումը առաջ է քերել նաև, այսպես կոչված, ծրագրային երաժշտությունը, որը հիմնվում է որևէ գաղափարի, գրական սյուժեի վրա:

Տելեսանի գրչին է պատկանում «Օրվա շրս ժամերը» հովերգական օրատորիան, որն ասես ձայնակցում է Վիվալդիի «Տարվա եղանակներ»:



1. Յլ. Եօրեն, Տելեման, Մ., 1974, սր. 5.

2. Անդ, էջ 55:

ոին» և նախորդում Հայոնի «Տարվա եղանակներ» օրատորիային: Իսկ Համբուրգի ծովափին թևածող զեփյուսի հովերը, հողմերի տիրակալ Եորսի ալեկոծումը պատկերող սյուիտը, որ կոչվում է «Երաժշտություն ջրի վրա», իիշեցնում է Հենդելի համանուն ստեղծագործությունը:

Տեղեմանի ծրագրային գործերից է նաև երկու ջութակի համար գրված «Գովլիվերի ճանապարհորդությունները», լարայիններին և կլավեսինին հասցեագրված «Դոն Կիխոտ» սյուիտը, որը հեղինակը վերածել է կոմիկական օպերայի, ավելի քան 700 երգ ու նվագ՝ կլավեսինի, ֆլեյտայի, ջութակի, վիոլա դա գամբայի համար և այլն: Տեղեմանը մեծ ուշադրություն է դարձրել կենցաղային երաժշտությանը, ինքնուս երաժիշտների նվագացանկին: Խոկ «Խնջույքի երաժշտության» երեք ցիկլի շարանվագները ոչ միայն նախատեսված են ժամանցի համար, այլև համերգային բարձրարդիկատ երկեր են: Դրանցից է մի մինոր սյուիտը՝ 8 մասից: Այս բացվում է ֆրանսիական տիպի վեհաշոր նախերգանքով, որի ավանդական ձևը բաղկացած է երեք բաժնից՝ հանդիսավոր մի դրվագ, ապա աշխույժ ֆուգա և կրկին հանդիսավոր դրվագ: Այս նախերգանքին հաջորդում են Սկերցո, Ռունդո, Լուր, Պասայե, Արիա, Ժիգա և մի եղբափակիչ մաս, որը կրկնելով նախերգանքի ֆուգայի դարձվածքները՝ վեհաշոր կերպով ամբողջացնում է կառույցը:

Սյուիտը, հիյամի, «Խնջույք» է՝ գույների, երգային և պարային հնչերանգների, ֆլեյտաների ու լարայինների փոխկանչերի մի երավառություն:

Սատչելիությանը, ծրագրայնությանը տուրք տալը անհետևանք չնընաց՝ Տեղեմանի արվեստում տեղ գտավ նակերեսայնությունը, որը նշում էին նույնիսկ իր ժամանակակիցները, մասնակորապես Բախի որդի Ֆիլիպ Էնանուելը: Սակայն միայն դա չէր պատճառը, որ Տեղեմանի հավերժ թվացող փառը ինչ-որ չափով սասամնեց:

Գերզգ Ֆիլիպ Տեղեմանը չէր ստացել երաժշտական հիմնավոր կրթություն: Նա Մագդեբուրգում ընդամենը չորս տարի սովորել էր բանակի գրեթավոր մատակարար Կասպար Կալվորի մոտ, որը նույնպես երաժիշտ էր:

Ըստ երաժշտագետ Վլադիմիր Բորեյի, Տեղեմանը հասավ բարձունքների՝ շնորհիկ իր օժտվածության, պրայտումների: Դեռ 12 տարեկան էր, երբ հորինեց իր առաջին օպերան: «Սակայն մինչ Բախը ուրոք երկար ճանապարհ էր կտրում-անցնում (ավելի քան 300 կմ)՝ մեծ երգեհոնահարներ Բուքստեհունեկին, Ռեյնլենին հանդիպելու, ապա Տեղեմանը... խոշոր իշխանների նստավայրում ծանոթանում էր իտալական և ֆրանսիական երաժշտության նորագույն «թատերական» ոճին: Այս ոճի ազդեցությանը են ստեղծված «Դարոցի ոսուցիչը», «Դեղձանիկի մական սգը երաժշտությունը» կանտատները, որոնց տեքստի հեղինակը ևս Տեղեմանն է:

«Համբերատար Սոկրատեսք» զավեշտական օպերայում ակնարկվում է իր խև երկրորդ անհաջող ամուսնությունը: Կոմպոզիտորի մյուս հայտնի օպերան՝ «Պիմպինոնեն», ունի հետաքրքիր նախապատմություն: Տելեմանին նվիրված հիշյալ մենագրությունից տեղեկանում ենք, որ «Պիմպինոնեն» մի ինտերմեդիա էր, որի տեսարանները ներկայացվում էին Հենդելի «Թամերլան» («Լենկրեմուր») օպերայի ընդմիջումներում: Հետագայում այդ տեսարաններն առանձնացրին և մատուցեցին որպես ինքնուրույն օպերային ներկայացում: «Պիմպինոն» օպերայի ստեղծումից ուր տարի անց նոյն բովանդակությամբ Պերգոլեզին ստեղծեց իր հայտնի «Աղախին-տիրուիխն» օպերան:

Տելեմանի «Պիմպինոնեն», ըստ Էուրյան, կամերային օպերա է նվազագույն կազմով՝ երկու երգիչ, լարային նվազախումբ և կլավեսին: Լիբրետոյում գուգակցվում են գերմաներեն և իտալերեն լեզուները: Օպերայի հերոսակին՝ աղախին Վեսպետտան, խորանանկությամբ կարողանում է ամուսնանալ իր հարուստ, բայց ոչ խելացի տիրոջ՝ Պիմպինոնի հետ...

Ի դեպ, Սերաստիան Բախն էլ դեմ չեղ զվարճալի երաժշտությանը, սակայն որպես բացառություն, օրինակ՝ «Սուրճի կանտատը»: Ըստ Շվայցերի, Բախն իր որդի Ֆրիդենանի հետ երրենն հաճախելով Դրեզդենի բատրոն՝ Ներկայացվող օպերաները հեգնանքով անվանում էր «Որեգդենյան երգիկներ»...

Օտարամուտ ազդեցությունները, արվեստի դեմոկրատացումը, արվեստի և կրոնի աշխարհականացումը հանգեցրեց այն բանին, որ Տելեմանի օրոք նոյն իմաստությունը ստեղծված օրատորիաները չեն համարվում հոգևոր երաժշտություն՝ բայս բուն իմաստով: Տելեմանի օրատորիաները սերենադների և կամերային երկերի հետ մնակտեղ կատարվում էին համերգներում, մասնավորապես, ֆրանկուրտում, իր գըլխավորած «Ֆրաուենշտայն» ընկերության միջոցառումների ընթացքում: Այդ ընկերությունը նման էր մի ակումբի, ուր քաղաքի երևելիները հավաքվում էին զրոյցի և ժամանացի:

Տեղին է հիշել Բախին, որի համոզմանը երաժշտության ուսուցումը կրոնական գործ է: Պատահական չեղ, որ նրա «Եղոգեհոնային գրքովկի» բնաբանն է «Հ փառս Աստծո, ի գիտություն մերձավորիս»: Իսկ «Գեներալ-բաս» աշխատության մեջ Բախը նշում է, որ երաժշտության վերջնական նպատակն է Աստծո փառարանությունը և հոգու զվարքացումը՝ մնացյալ «սատանայական դատարկախոսություն է և աղմուկ»...

Անշուշտ, Տելեմանն էլ նտահոգված էր մատադ սերնդի ձևավորմանը ու քաջ գիտակցում էր երաժշտության և բարոյականության սերտ կապը: «Երգեցողության, նվազածության և հորինման գարժություններ» աշխատության մեջ կոմպոզիտորը զետեղել է նաև բարոյականության կանոնները:

Ինքնակենսագրության մեջ Տելեմանը գրել է. «Երաժշտության համընդիանուր հիմքը երգն է... ուստի անդադար հորդորեցեք երիտասարդ ներին երգել»<sup>3</sup>:

Ըստ երաժշտագետ Բորեյի, «Ի տարբերություն Բախի, Տելեմանը քիչ է հակած փիլիսոփայական ինքնախորասուզման, և նրա երաժշտությունը առավելապես արտացղում է շրջակա աշխարհի կենդանի, անմիջական ընկալումը, բոլորին հասկանալի պարզ զգացմունքները և հույզերը»<sup>4</sup>:

Այնուամենայնիվ, Տելեմանը Բախի պես հանճար չէ, սակայն, ինչպես Շելինգը կասեր, նա երբեմն հասնում է հանճարեղ գեղումների: Օրինակ, «Երանելի խոհեր Հիսուս Քրիստոսի դառը տառապանքների և մահվան մասին» պասիոնային օրատորիայի որոշ հատվածներում Հիսուսի արիան՝ «Բարի գիշեր, սիրելիներս», որի գործիքավորումը և խաղաղ ընթացքը ստեղծում է «մքնշաղային» մի պատկեր: Հանճարեղ պարզություն կա նաև «Die Andacht» («Աղոքք») կոչվող աղոքքային դրվագներում: Նույնը կարելի է ասել և «Չարչարանքներ ըստ Մատթեոսի», «Չարչարանքներ ըստ Ղուկասի» պասիոնների վերաբերյալ: Անշուշտ, առինքնող բազում էջեր կան նաև նվազարանային երկերում՝ «Ուղիղ և թեք ֆլեյտայի և նվազագախմբի կոնցերտում», հորոյի, շնչորի և այլ կոնցերտներում, տրիո-սոնատներում և այլն:

Տելեմանը հանճարեղ էր իր բազմակողմանիությամբ, իր արհեստին տիրապետելու առումով, իր եռանդով, նորարարությամբ ու հասարակական գործունեությամբ:

Իր ծննդավայր Մագդեբուրգից 20-ամյա երիտասարդը տեղափոխվեց Լայպցիգ, ընդունվեց համալսարանի իրավաբանական բաժինը: Ստեղծեց իր առաջին ուսանողական «Collegium musicum» երաժշտական ընկերությունը, որը հետագայում դեկավարեց Բախը: Ուսմանը զուգահեռ նա օպերաներ էր հորինում տեղի բատրոնի համար, կատարում տեսնորի երգարաժինը, հանդես գալիս որպես դիրիժոր և եկեղեցական երգեհոնահար, կանոնատներ ստեղծում Սուրբ Թովմաս եկեղեցու համար:

Որպես երաժշտական դեկավար, Տելեմանը ծառայել է նաև Սաքսոն-Էյզենախի հերցոգի պալատում:

1712-ից մինչև 1721-ը կոմպոզիտորը ապրել և ստեղծագործել է Մայնի Ֆրանկֆուրտում, իսկ 1721-ից մինչև կյանքի վերջը (1767 թվական)՝ Համբուրգում: Տելեմանի անվան հետ են կապված բազում մեծագործություններ: Նա ինմանադրել է Գերմանիայում առաջին երաժշտական ամսագիրը, մեծ դեր է խաղացել առաջին համերգասրահի բացման գործում, առաջին-

3. Անդ, էջ 99:

4. Անդ, էջ 42:

ներից էր, որ նվազախմբում կիրառեց կլառնետ նվազարանը:

Վիվալդիի և Բախի կողքին Տելեմանն իր ներդրումն ունի մենանվագ գործիքի և նվագախմբի կոնցերտի ժամանակաշրջան մեջ, ինչպես նաև հոմնֆոնիկ մտածողության սկզբնավորման գործում, որի զարգացման գագարնակետը դարձավ բերիովենյան սիմֆոնիզմը:

Տելեմանը ստեղծագործել է բոլոր ժամերում: Նրա 40 օպերաներից պահպանվել են 7-ը, 44 պասիոնից՝ 23-ը: Համբուրգի կայազորի ավանդական տոնախմբությունների համար Տելեմանը ստեղծել է 33 շարքից բաղկացած երաժշտություն, իսկ եկեղեցու համար՝ հոգևոր կանտատների 23 տարբա շարքեր, ընդ որում՝ մեկ տարբում կատարվում էր 72 կանտատ:

600 նվագախմբային սյուիտներից մեզ է հասել 126-ը, նշենք նաև 170 կոնցերտները, կլավիրյային 36 և ջութակի 13 ֆանտազիաները...

Տելեմանին բարձր են գնահատել նաև Բախը և Լեոպոլդ Մոցարտը, որոնք նրա որոշ երկեր արտագրել են՝ իրենց զավակների կրթության նպատակով: Տելեմանը ևս օգացել է Բախի հանճարը և իր գնահատական տվել նրա մահվան առիթով գրած ստենտում:

Տելեմանն ասել է. «Թող իտալիան պարծենա իր վիրտուոզներով, բայց և Գերմանիան ոչ պակաս տաղանդներ է կրում: Հանգույցյալ Բախն, քչերը կիամենատվեին քեզ հետ: Որպես երգեհոնահար դու վաղող ես Մեծ, իսկ քո երկերի համար կիառաքանվես դարեղար: Աշակերտներդ և նրանց սաները այսուհետ հյուսում են քո պսակը: Որդիներից ո՞րը չէ փառահեղ երաժիշտ, բայց մեզ ամենից հաճո է քո ժառանգական տաղանդը, որը Բեուխնը գնահատել է քո զավակի մեջ»:

Ավարտելով ստմետը՝ Տելեմանը ակնարկում է Բախի որդիներից Ֆիլիպ Էմանուէլին: Սոնետը վկայում է նաև Տելեմանի մարդկային վեհության մասին, քանզի նա զերծ էր նախանձի, այսպես ասած, «աալերիզմի» բույնից և զիտեր ըստ արժանվույն գնահատել իրենից զորեղ արվեստագետին:

Տելեմանի արվեստը սկսեց վերածնվել 20-րդ դարի 60-ական թվականներից, երբ Սագոնքուրզում հիմնվեց Տելեմանի անվան ընկերություն, և մինչ օրս չի նվազում հետաքրքրությունը նրա երաժշտության հանդեպ: Դեռ 1931-ին Մոսկվայում Սոստրասի խմբագրությամբ իրատարակվել է «12 ֆանտազիա ջութակի համար» շարքը, որը հետագայում ալտի համար է փոխադրել Կոմիտասի անվան քառյակի նախկին ալտահար Հենրիկ Թալլայանը:

Տելեմանի արվեստը այսօր ներկայացնում են հայտնի երաժշտախմբեր և անհատ կատարողներ՝ Համբուրգի «Տելեման», Քյոլնի հնագույն երաժշտության համույթը՝ Ռայնհարդ Գյոբելի ղեկավարությամբ, ֆիլեյտահար Ֆրանց Բրյուգենը, դիրիժորներ Թիլոր Պիմնոկը, Ֆրիստոֆեր Հոգվուդը...

Հայ իրականության մեջ Տելեմանի երաժշտության տարածողներից է «Կեմ» անսամբլը:

## ԳԵՂՄԳ ՖՐԻԴՐԻԽ ՀԵՆԴԵԼ (1685-1759)

**«»** Ենդելլ մեծագույնն է կոմպոզիտորներից, որ երբեք ապրել են: Ես կուզենայի ծնկի իշխել նրա գերեզմանին», այս խոնարհ խոսքերն ասել է ամենաըմբռատ կոմպոզիտորը՝ Լյուդվիգ Վան Բեթհովենը<sup>1:</sup>

Մինչդեռ Յոհաննես Բրամսը նախապատվությունը տալիս էր Յոհան



Սեբաստիան Բախին: Երբ նա ստանում էր Բախի երկերի նորալուս հատորը, ամեն գործ բողնում ու սկսում էր նվագել, և ասում էր. «Ծերուկ Բախի մոտ ինչ-ոք մի նոր բան կգտնես, իսկ ամենակարևորը՝ նրանից կարելի է սովորել»: Մինչդեռ Հենդելի երկերի հատորը ստանալիս Բրամսը այն տեղափորում էր գրապահարանում՝ ասելով. «Անշուշտ, սա հետաքրքիր է, երբ ժամանակ ունենամ, անպայման կմայեմ»<sup>2:</sup>

Այս երկու հանճարների համեմատությունը պայմանավորված էր ոչ միայն արտարին գործոններով, որ երկուսն էլ ծնվել են նոյն 1685 թվականին, որ նյանց օրոր տարածված էր արվեստագետների միջև հրապարակային մրցակցությունը: Այս

հարցում կարևոր էր, թե մրցակիցներից ո՞րն էր կանխորոշելու «ապագայի արվեստը», այսուել նաև բախսկում էին ավանդականն ու մոդայիկը, ազգայինն ու Եվրոպայում գերիշխող «փոլալականությունը»: Մեծ դեր էին խաղում ժանրերի ընտրությունը, նրանց գաղափարական բովանդակությունը, բաղադրական պատեհապաշտությունը, նույնիսկ կատարողական կազմի շափերը, հնացող նվազարանների կիրառությունը և այլն: Ի դեպ, նման մի պատճական գործակեռ ինքնարերաբար առաջացել էր օպերային արվեստի բարեփոխիչ Վազների և Վերդիի պարագայում, որոնք ծնվել են նոյն 1813 թվականին: Համեմատելով Հենդելին Բախի հետ, ավելի խորն ես ճանաչում թե՝ մեկին, թե՝ մյուսին...

Ալբերտ Շվայցերը, Ռումեն Ռուլանը, Գեորգի Խուրովը և այլ երաժշտագետներ նշում են Բախի և Հենդելի միջև բազմաթիվ ընդհանրություններ ու

1. Р. Роллан, Генделль, М., 1984, стр. 88.  
2. А. Швейцер, И. С. Бах, стр. 163.

տարբերություններ: Եվ առաջին տարբերությունն այն է, որ անցյալից ազատագրվելու մղումով Հենդելը գրեթե չօգտագործեց խորալային մեղենիները, իսկ Բախսն իր արվեստը հիմնեց հենց այդ հինավորոց հոգևոր երգերի վրա: Մի երաժշտագետ ասում էր, թե Բախը ինքն իրենից ոչինչ չի գրում, այլ գրում է այն, ինչը որ «Աստվածն է դնում Բախի հոգու վրա»: Ըստ Ռումեն Ռուլանի, Հենդելը երբեք չի եղել եկեղեցական երաժիշտ, և գրեթե երբեք եկեղեցու համար չի ստեղծագործել<sup>3</sup>, ավելի շատ հորինել է հիմնականում գործիքային երկեր, օպերաներ, օրատորիաներ և այլն: Անգամ նրա Սաղմոսները, «Te Deum» («Ձեզ ենք վառարանում, Տեր») ընդհանուր վերտառությամբ ներողների շարքը և «Մեսիան» («For unto us the Child is Born») հայտնի սկսվածքով) հասցեազրկած էին արքունիքում կատարելու բացառիկ դեաքերի համար:

Այսինքն՝ որոշ վերապահումով, կարելի է ասել, որ Հենդելը բատերական կոմպոզիտոր է, իսկ Բախը՝ եկեղեցական: Բախի արվեստը ավելի հոգևոր է, հոգերանական, աղոքքային: Հենդելը արվեստը ավելի աշխարհիկ է, վայելչազարդ, որտեղ չես գտնի, ինչպես Ռումեն Ռուլանն է ասում, Բախի բարեպաշտ խոկմունքը և ինքնափոփոխությունը: Բախը լուրջան մեջ գրուցում է իր Աստծո հետ, ինչպես Նարեկացին՝ «ի խորոց սրտի ընդ Աստծոյ»...

Բախսի որոշ խմբերգեր երթեմն այնքան քնարական են, սրտառուչ, որ դրանք բնորոշում են որպես խմբերգային արիա, օրինակ՝ «Հովհաննես պասիոնի» թիվ 67-ը: Բախսի կատարողական կազմը՝ երգչախոմքը և նվազախոմքը, ավելի փորբարիկ են, քան Հենդելինը, որի բիբլիական օրատորիաների, օպերաների զանգվածային, մեծակերտ և միաձույլ երգչախմբերը խորհրդանշում են ժողովուրդը, նրա պայքարը հանուն ազատության: Բախսի հարմոնիաները և ոիբրեն ավելի հարուստ են, մեղեդին ավելի սերտ և կապված բանաստեղծական տեքստի հետ, ֆրազաներն ավելի լարված են: Հենդելն ավելի շատ կիրառում է Խոտիխայում նորոգված նվազախմբի շարժումակ կազմ, իսկ Բախսի երկերում օգտագործված ֆլեյտաները, հորոյի հնագրւյն տարատեսակները՝ վիճը և այլ նվազարանների գուգորդումը բիբլիական հնարքույր մթնոլորտ է ստեղծում: Բանի որ Բախսի բազմածայնության առանձին ճայներն ավելի զարգացած են և ինքնուրույն, ուստի մեծ թվով նվազողներ կամ երգիչները կարող են ծանրացնել ճայների հյուսվածքը, «զծագիրը». սա վերաբերվում է նույնիսկ նրա ամենամեծակերտ կորողին՝ «Չարչարանքներ ըստ Մատթեոսի» պահոնին, որին մասնակցում են երկուական նվազախոմք և երգչախոմք:

Մինչդեռ Հենդելի «Հրավառության երաժշտությունը»՝ նվիրված

3. P. Rollan, Գենդել, стр. 96.

«Ախենյան խաղաղության» հոչակմանը, կատարվել է 100 փողային նվազագարաններով: Կոմպոզիտորի հիմնադրած բացօթյա կատարման համար նախատեսված նոր ժանրի մյուս նմուշը՝ «Երաժշտություն ջրի վրա» ստեղծագործությունը, նույնական մոնումենտալ գործ է և հճել է Թեմզա գետի վրա Անգլիայի Գեորգ I-ին բագավորի բագադրության առիթով: Իսկ «Հուդա Մակարայեցի» օրատորիայում Հենդելն ասես չքավարարվելով գործիքային կազմի ուժգությամբ, կիրառում է հրազեն, որը հետագայում օգտագործել է նաև Քերլիոզը:

Գեորգ 2-րդի զահակալությանը նվիրված «Թագադրական ներքոյների» կատարման ժամանակ Վեստմինստերում Հենդելն ուներ բավականին մեծ նվազախումը և 47 երգի:

Սինչեն, ըստ Շվայցերի, «Բախը շատ նեղություններ էր կրում լարային մեծ նվազարանների անկատարության պատճառով»<sup>4</sup>: Սի առիթով կոմպոզիտորը նոյնակ ստիլված եղավ նոր գործիք ստեղծել՝ «վիլյա պոմպոնա», բայց դա բացառություն էր: Իսկ «Էսրայելը Եգիպտոսում», «Հուդա Մակարայեցի», «Դերորա» և այլ օրատորիաներում, որոնցում արտացոլված են բիբլիական իրադարձությունները, ժողովուրդների բախումները, Հենդելը կիրառում է մեծարիվ երգաշամբեր: Անշուշտ, երբ Քերիվնը հիացմունքով նշել է Հենդելի դասական ունակությունը, այն է՝ նվազագույն միջոցներով հասնել առավելագույն ազդեցության, նկատի ուներ ոչ թե կատարողների քանակը, հնչեղությունը, այլ բարդ գաղափարների պարզ արտահայտությունը, երաժշտական լեզվի շարադրանքի հանճարեղ պարզությունը: Բախը ձգուում էր հանդիպել Հենդելին ոչ թե մրցելու նրա հետ, այլ մի նոր բան սովորելու համար: Պատահական չէր, որ Հենդելի «Պասիոնը» Բախն արտագրել էր իր կնոջ հետ, և շնորհիվ հենց այդ ձեռագրի է պահպանվել Քրիստոսի շարչարանները պատկերով այդ կորողը:

Որպես երգեհոնահար, Բախին ժամանակակիցները ավելի բարձր էին դասում, սակայն իրեն կոմպոզիտոր, Հենդելը շատ հայտնի էր: Ըստ երաժշտագետ, կոմպոզիտոր Մատեղոնի՝ Հենդելը Բախին գերազանցում էր կրկնակի ֆուզա ստեղծելու և ինպրովիզացիայի արվեստում<sup>5</sup>:

Իսկ Ռիխարդ Շտրաուսը հակադրում է պոլիֆոնիկ և սիմֆոնիկ ուղղությունը, որը սկիզբ է առել Բախի արվեստից, և հոմոֆոնիկ, բատերգական հոսանքը, որը բխել է Հենդելից: Սի պահ Հենդելն իր երկերով Բախի արվեստի վրա ստվեր էր նետել, հատկապես «Սևսիայով»՝ «Փրկիչ» օրատորիայով, սակայն պատմությունն ամեն ինչ իր տեղը ունեց: Բախի կամատանը կենտունակությունը անվիճելի էր:

4. A. Ռուբենս, Ի. Ս. Բախ, ստ. 625.

5. R. Ռոլլան, Գենելը, ստ. 119.

Ա. Ծվայցերը մեջբերում է գերմանացի երաժշտագետ Յոհան Ռոխլիցի գնահատականը, ըստ որի Բախը «գերմանական երաժշտական արվեստի Ալքրեխտ Դյուրերն է, քանզի նրա արվեստում վեհությունը ստեղծվում է խորունկ զարգացումով և պարզ տարրերի անսպառ համակցությունների միջոցով»<sup>6</sup>: Այսուհետև Ծվայցերն անփոփում է. «Թեկուզն Հենդեմ ավելի ճոխ է, սակայն Բախը ճշմարտացի է: Եթե նա Դյուրերն է, ապա Հենդելը Ռուբենսն է»<sup>7</sup>: Ի դեպ, այս երկու «հնչեղ» մարդկանց «կապը» վկայում է Արամ Խաչատրյանի վաղ շրջանի լուսանկարներից մեկը, որտեղ պատկերված է 19-ամյա Արամը, դիմացը դրված նոտաների վրա երևում է «HÄNDEL» անունը...

Սրանով չի սահմանափակվում անհամենատեղի թվացող այդ կոմպոզիտորների ընդհանրությունը: «Արամ Խաչատրյան» վավերագրական ֆիլմում Խաչատրյան-դիրիժորը խնդրում է նվազախնճի անդամներին ներողամիտ լինել իր պահանջկոտ ձայնի խրոխտության համար, քանզի դրանից շահում է գործը, այսուհետև իր խորքն ավարտում է՝ ասելով հետևյալը. «Եվ ընդհանրապես ես «հնչեղ» մարդ եմ»: Ահա այսպիսի «հնչեղ» մարդ էր և Հենդելը:

Անշուշտ, Հենդելն ու Խաչատրյանը ավելի շատ տարրերություններ ունեն: Դրանցից մեկն այն է, որ Հենդելը մինչև կյանքի վերջը մնաց քատերական կոմպոզիտոր, որն անհագուրդ կերպով ծգուում էր զանգվածային մեծակերտ կորողներ ստեղծել ինչպես և Բեթհովենը: Իսկ Խաչատրյանը, ինչպես և Բախը, Բրամսը, կյանքն ավարտեցին մեկ նվազարանի համար գոած մենախոսությամբ:

1751-ին կոմպոզիտորը կուրացավ: Ըստ Ռումն Ռոլանի՝ կորցնելով աշքի լույսը, Հենդելը կտրվեց իր ներշնչանքի վերջին աղբյուրից՝ հաղորդակցվելուց կերպարվեստի նույների իր հսկ հավաքածուից, մի ամբողջ պատկերասրահ, որի քաֆն ու պասալը Ռեմբրանդի երկու մեծադիր կտավներն էին: Եվ անկախ այն քանից, թե դրանց մեջ կա՞ր Ռեմբրանդի հայտնի «Բաղրամարի խնջույքը», թե՝ ոչ, Հենդելի համանուն օրատորիան վկայում էր երկու մեծերի արվեստի հոգեհարազատության մասին: Կուրացած Բախի պես «Սամսոն» կուրացած հեղինակը ևս իր ստեղծագործության, կարելի է ասել, իր կյանքի վերջին էջերը, բելազրելով էր անմահացրել: Ինչպես նշվեց, դա «Եփրայե» օրատորիան էր: Ըստ գերմանացի երաժշտագետ Պաոլ Միսի, Բեթհովենի մոտ 80 գործ, մտահղացումներ, մնացին անավարտ<sup>8</sup>: Մեզ հայտնի չէ, թե Հենդելի որքա՞ն երկեր, իդեռ

6. А. Швецер, И. С. Бах, стр. 175.

7. Անդ, էջ 176:

8. Проблемы бетховенского стиля, М., 1932, стр. 319.

մնացին անավարտ, սակայն կոմպոզիտորի վերջին ցանկությունն իրականացավ: Նա փափագում էր հրաժեշտ տալ կյանքին ուրբար օրը, որպեսզի իր իսկ խոսքերով, միավորվի իր «Աստծուն, Տիրոջը, Փրկչին՝ նրա հարության օրը»<sup>9</sup>: Գրեքե այդպես էլ եղավ, 1759-ի ապրիլի 14-ին, շաբաթ առավոտյան, Հենդելն արդեն անմահացել էր...

«Նա հաղբանդամ էր, հսկա հասակով, քայլում էր լայն քայլերով, ուղիղ կեցվածքով, գլուխը բարձր... Նա նայում էր դիմացինի ուղիղ դեմքին, համարձակ հայացքով, ծիծաղախիտ ու կրակուտ աչքերով...»<sup>10</sup>: Երբ կարդում ես Ռուսներ Ռուսներ այս տողերը, թվում է, թե նա նկարագրում է ուսաց քագավոր Պետրոս Մեծին:

Սակայն գերմանացի կոմպոզիտոր Գեորգ Ֆրիդրիխ Հենդելի հերոսական խառնվածքում ևս արքայական վեհության գծեր կային, ինչը դրսնորվել է նաև նրա արվեստում:

Հենդելի 44 օվերաներից շատերի գործող անձինք քագավորներ ու հերոսներ են՝ Ալեքսանդր Սակերոնացին, Օտոն Գերմանացին, Հովհանն Կեսարը, հնդիկ արքա Պորոն, Պտղոմեոս Եգիպտացին և այլք: Կոմպոզիտորի ավելի քան 30 օրատորիաների գգալի մասը նույնպես պատկերում է առաջնորդներին, որոնք պայքարել են հանուն արդարության, ժողովրդի ազատության. «Հուդա Մակարայեցին», «Սամսոն», «Հեսուս», «Եփրայեն», «Սողոմոնը»...

Եվ Հենդելի արժանիքը ոչ թե արվեստում ընդունված այդ թեմաների ընտրության մեջ էր, այլ այդ կերպարների հիրավի «արքայական» մարմարումնամարման մեջ:

Բացի այդ, հերոսներ կերտելիս, արվեստագետը նաև իր հոգու շտեմարանից է քաղել այս կամ այն գործող անձի հատկությունները, բնափորության գծերը: Ինչպես ասել է սուրբ Բեռնարդը. «Եթե մարդու աչքն ու երկինքը ընդիանուր քան չունենային, աչքը ինչպես պիտի տեսներ երկինքը»<sup>11</sup>:

Հենդելի մասին արտահայտվելիս հաճախ են օգտագործում «արքա», «քագավոր» բառերը: Նրա երկերը Ռուսներ բնորոշում է որպես «արքայական, վայելչակազմ ծեներ», «Հուդա Մակարայեցի» օրատորիայի երաժշտության մեջ նկատում է «մասպելունյան» ոգի: Իսկ երգեհոնային կոնցերտների առիթով 1735-ին լուսունյան մանուկը գրել է. «Կյանքի աղբյուրը, դադարեցրեք ծեր վագրը, լսե՛ք, լսե՛ք, թե ինչպես է նվազում անզուզա-

9. Р. Роллан, Генделль, стр. 87.

10. Անը, էջ 120:

11. Мейстер Экхарт, Духовные проповеди и рассуждения, М., 1991, стр. 49.

կան Հենդելը... Լոեր և դուք, թուղթ մրտողներ, ձեզ չի օգնի իշխանների հովանին՝ այստեղ Հենդելն է բագավոր»<sup>12</sup>:

Ահա այսպիսին էր Հենդելը, և ըստ Ռումեն Ռոլանի, միայն Բերիովենը քայլեց նրա լայն հետքերով և շարունակում էր ընթանալ Հենդելի բացած ճանապարհով: Միայն հերոսական խառնվածքի տեր մարդը կարող էր հաղթող դուրս գալ ճակատագրի տեղատարափ հարվածներից, որոնք առատորեն բաժին ընկան Հենդելին:

Երաժիշտ դառնալու ճանապարհին Հենդելի առաջին խոշընդուռը հայրն էր, որը փափագում էր իր զավակին տեսնել ոչ թե դիրիժորի ֆրակով, այլ դատավորի պատմումանով: Հենդելը այնքան էր հարգում իրը, որ նրա մահից հետո, այնուամենայնիվ, ընդունվեց իր ծննդավայր Հայե քաղաքի համալսարանի իրավաբանական բաժինը: Այս առիթով Ծվայցերը սրամտել է. «Գերմանական իրավագիտությունը կարող է հպարտանալ, որ իր միջավայրից են առաջացել 17-18-րդ դարերի լավագույն երաժշտները՝ Շյուտցը, Վալտերը, Սատեզոնը, Հենդելը, Կունաուն, Էնանուիլ Բախը...»<sup>13</sup>:

Նախարան համալսարան ընդունվելը Հենդելը արդեն հեղինակ էր մի շարք կանոնադրությունների ու երգեհոնային մանրանվագների և ծևազորվել էր որպես երաժիշտ կատարող: Դեռ հինգ տարեկան լկար, երբ ինքնուսուցմամբ սկսեց կլավեսին նվազել: Մի առիթով ավագ Հենդելը իր զավակի հետ այցելեց Վեյսենֆելս՝ Սաքսոնիայի իշխանի նստավայրը: Յոթնամյա Գեորգի նվազն այնքան հոգեց իշխանին, որ նա պնդեց, որ տղայի ապագան կապեն երաժշտության հետ:

Այսպես, Հենդելին տարան Հայեում ապրող հայտնի երաժիշտ Ֆրիդրիխ Ցախանուի մոտ դասերի: Պատաճին յուրացրեց բազմաձայնության և հարմոնիայի արվեստը, խորապես ուսումնասիրեց տարբեր կոմպոզիտուրական դարպոցների սկզբունքները, կատարողական արվեստի ոճնը:

Իր առաջին ստեղծագործությունները Հենդելը հորինել է 11 տարեկանում: Դրանք էին՝ երկու հորոյի և քահանա համար գրված վեց ստեղծություն՝ Նոյն տարին ելույթներ էր ունենում Բեռլինում: Նա տիրապետում էր երգեհոն, կլավեսին, ջութակ և հորոյ նվազարաններին:

Համալսարանական տարիներին նա դասավանդում էր երգեցողություն և տեսություն գիմնազիայում ու աշխատում նկեղեցում որպես երգեհոնահար և երաժշտական դեկավար:

1703-ին Հենդելը տեղափոխվեց Համբուրգ, աշխատեց օպերայում՝ որպես ջութակահար: Մեկ տարի անց կատարվեց Հենդելի առաջին պասինը՝ «Չարչարանքներ ըստ Հովհաննու»: Համբուրգը հայտնի էր իր օպե-

12. Р. Роллан, Гендерль, стр. 61.

13. А. Швեմպեր, И. С. Бах, стр. 52.

լային քատրոնով, որը առավել քիչ էր ագրվել իտալական արվեստի հզոր հովերից: Այստեղ էլ ներկայացվեցին Հենդելի առաջին օպերաները՝ «Ամիրան» և «Ներոնը»: Այստեղ նա ծանոթանում է անվանի երաժիշտ և տեսարան Յոհան Սատեզոնի հետ, որը հետագայում Հենդելի առաջին կենսագիրը դարձավ: Նրանք միասին այցելել են Լյուբեկ՝ ունկնդրելու մեծ երգեհոնահար Դիտրիխ Բուրատեհոտեհին: Հենդելը նաև դեկավարել է Սատեզոնի օպերաներից մեկը, որի գլխավոր դերը կատարում էր ինքը՝ հեղինակը: Շուտով Համբուրգի օպերան էլ տեղի տվեց իտալական ազդեցությանը և անկում ապրեց: Հենդելը մեկնեց Իտալիա: 1707-ին Ֆլորենցիայում կատարվեց նրա առաջին իտալական օպերան՝ «Ո-ողիդոն»: Հաջորդ օպերան «Ազրիափինան» էր:

Կոմպոզիտորը հորինում է նաև իր առաջին օրատորիաները՝ «Հարուբյուն», «Բանականության և ժամանակի հաղթանակը», «Ացիս, Գալատեա և Պոլիբեն» հովվերգական սերենադը: Բացի այդ՝ նա ստեղծում է նաև կանտատներ, սահմոսերգություններ, զանազան անսամբլներ: Իտալիայում Հենդելը ճանաչվեց որպես անզուգական երգեհոնահար, կլավեսինահար, իմպրովիզացիայի մեծ վարպետ: Նրան կոչում էին «Օրփեոս»: Հենդելն այցելեց նաև Նեապոլ, Վենետիկ, ուր մտերնացավ Դոմենիկո Սկարլատուի հետ, իսկ մեկ տարի անց, Հռոմում ծանոթացավ Դոմենիկոյի հայր Ալեսանդրո Սկարլատուի, ինչպես նաև Արկանջելո Կորսիկ, Բենեթետտո Մարչելոյի և այլ հայտնի կոմպոզիտորների հետ:

1710-ին Հենդելը վերադարձավ Հանովեր, ուր ստանձնեց պալատական երաժշտապետի պաշտոնը: Սակայն շուտով հրավիրվեց Լոնդոն: «Ո-ինալդո» օպերայով սկսվեց Հենդելի հաղթարշավը Անգլիայում: 1720-ին Հենդելը արդեն դեկավարում էր Արքայական ակադեմիան, իսկ 1727-ին կոմպոզիտորն ընդունեց անզիական հպատակություն:

Անգլիայում Հենդելն անցկացրեց իր ստեղծագործական կյանքի մեծ մասը, կերտեց բազմաթիվ երկնք՝ կոնցերտներ երգեհոնի, հորոյի, գալարափողի, երկու երգեհոնի համար, 12 կոնչերտո-գրոսս, բազավորական սաղմոս-ներռողներ՝ նվիրված Գերոգ 2-րդ քաջավորին, նաև անօթևան երեխաներին, որոնց հովանավորն էր ինքը՝ Հենդել...

Եկ իր արևաշող երաժշտությամբ մեծ գերմանացին ցրում էր «ամպամած Ալիոնի» ամպերը, ջերմացնում թե՛ թագավորների, թե՛ որք երեխաների սրտերը...

Հենդել Լոնդոնում կամա թե ակամա ներքաշվեց հակասությունների, հասարակական բախումների մեջ: Թագուհի Աննան տենչում էր վերականգնել կարոլիկությունը, մինչդեռ հանովերյան դինաստիան՝ անզիական բազի ժառանգորդը, բնականաբար դավանում էր բողոքականություն: Իսկ Հենդելը հանովերյան արքունիքի հովանավորյալ էր: Այսինքն՝ երկու տիրոջ ծառա: Թագուհու ծննդյան օրվան նվիրված կոմպոզիտորի

Ճոնը փափկեցրեց Աննայի սիրտը, որից հետո և բացառությամբ, այլազգի Հենդելին պատվիրեցին “Te Deum” և “Jubilate” («Գովք քեզ, Տեր» և «Օրինեցեք Աստծուն») ներռողները, որոնք հնչեցին «Ուրեխիր խաղաղությանը» նվիրված հանդիսությանը: Այսպես Հենդելը արժանացավ պալատական կոմպոզիտորի կոչմանը: Սինչետը բագուի Աննան վախճանվեց, և բագը ժառանգեց Գեորգ Հանովերցին: Հենդելը մեծ դառնություն ապրեց, և ինքն իրեն ասում էր, թե մեկ տարի է սպասեր, իր «Te Deum» ներռողը կինչեր նոր դիմաստիայի բազարության ժամանակ<sup>14</sup>: Սակայն «չկա չարիք, առանց բարիքի»: Նորընծա բազավորի համար Հենդելը ստեղծեց «Երաժշտություն ջրի վրա» գլուխգործոցը և այդ նորարարական գործով հարստացրեց արվեստը:

Ըստ Ռոլլանի, Հենդելը «օժտված էր իր ժամանակի գերմանացի մեծ արվեստագետների հոգեբանությամբ, որոնց համար հայրենիքը արվեստն էր և կրոնը: Պետությունը նրա համար առանձնապես նշանակություն չուներ»<sup>15</sup>: Անգլիայի ազնվականների գգալի մասը պահանջում էր մատչելի, ոյուրամարս երաժշտություն, պարզունակ սյուժեներ, և այս առիրից մեծապես օգտվում էին իրավիրյալ խույսացիր: Հենդելին ջատում էին նաև այլ խոչընդոտներ: Երգչուիինների ճնշումը կոմպոզիտորի վրա այնքան էր ուժեղացել, որ Հենդելը ստիպված երկու մրցակցող աստղ-երգչուիինների համար հատուկ ստեղծեց «Ալեքսանդր» օպերան, որտեղ նրանք կատարում էին զյուսվոր եերոսի սիրուիինների դերերը: Այսպիսի օրինակները մեծ հարված հասցրին Արքայական օպերային: «Ալեքսանդր» օպերայի հերոսուիինները և հեղինակը դարձան մի կատակերգության հեգնանքի առարկա: Իսկ Զոհ Փեկուշը իր «Ալքատմերի օպերան» ծաղրերգության մեջ խարազանեց խույսական ոճը և նրա երկրպագուներին:

Այսուել է, որ Հենդելն իր առջև դրեց գերխնդիր և ճանապարհ հարթեց դեպի օրատորիա ժանրի բարձունքները: Նա ասում էր. «Ինձ համար ցավալի կլիմեր, եթե մարդկանց ես լոկ հաճույք պատճառեի: Իմ նպատակը նրանց ավելի լավը դարձնելն է»: Մարդու կատարելագործման խնդրում Հենդելի և Բախի նպատակները նույնն էին:

«Իսրայելը Եգիպտոսում» օրատորիայի առիրով 1740-ին լոնդոնյան թերթերից մնկը գրել է. «Եթե սերը նման երկերի նկատմամբ համակեր ժողովրդի բոլոր խավերին, ապա ժողովուրդը նման ծանր պայմաններում, որոնք պատկերվում են օրատորիայում, նոյն համառությամբ կծառեր ազատագրման, ինչպես դա մենք նկատում ենք այս երկի որոշ համարնե-

14. Р. Роллан, Генделъ, стр. 58.

15. Անդ, էջ 57:

րում: Այդ դեպքում... Անգլիան չեր վախենա ապագայում որևէ ներխուժումց»<sup>16</sup>:

Դեռ 20-րդ դարի սկզբին Ռումեն Ռումանը նշել է, որ դարաշրջանը կորցրել է Հենդելի նման արվեստագետներին ընկալելու ընդունակությունը, արվեստագետ, որը դիմում էր ժողովրդին և արարում ժողովրդի համար: Իսկ ժամանակակից արվեստագետները ստեղծագործում են իրենց և իրենց գրչակիցների համար: Մինչդեռ «Հուդա Սակարայեցի» օրատորիան մարմնավորում էր հայրենիքը, և նման արվեստն ընդունակ է համախմբել ժողովրդին և մղել հաղթանակի: Իսկ մեր օրերում ոչ միայն արվեստագետներն են փոխվել, այլև ժողովրդները:

Չարունակելով Հենդել-Բախ զուգահեռը՝ մի պահ անդրադառնանց նրանց ապրելակերպին: Երկու կոմպոզիտորներն ել մեծ համբերությամբ և համառությամբ հարթել են կյանքի փշոտ ճանապարհը:

Կյանքի վերջին տարիներին երկուսն էլ կուրացան:

Այսպիսով, Հենդելը նմանվեց իր իսկ կերտած հերոս Սամսոնին, որին կուրացրել էին փողտացիք: Սակայն ի տարբերություն Սամսոնի, որը կործանեց իրեն անարգողների տունը, կուրացող Հենդելն իր վերջին ուժերը, լույսի վերջին շողերը հավաքեց և վեր խոյացրեց իր վերջին հնչյունային տաճարը՝ «Եփրայե» օրատորիան:

Լույրնյան շրջանում Հենդելը երեք անգամ սնանկացավ ու ստիպված եղավ սկսել զրոյից, նոր երաժշտախմբեր հավաքել: Նրան լիցքավորում էր ստեղծագործելու անպարտելի մղումը: Հենդելի երաժշտությունը Ռումանը համարում է «պոետական ապաստան», որի մեջ «կարելի է բուժել մեր անստուդ հուզումները և կրկին ձևոր բերել հանգստություն և առողջություն»:

Կոմիտասն էլ կյանքի անողոր հարվածներից ապաստան էր զոնում արվեստում: 1906-ին, իր աշակերտուիկ Սարգարիս Բաբայանին գրած նամակում, նա խոստովանել է. «... Էյ միսիքարում եմ ինձ և ասում, որ կայ բնութեան մէջ մի ազնի քան՝ գեղարտեստը, որին ամենքը նատչելի չեմ, և հենց այնտեղ եմ գտնում իմ անդրորութիւնն ու հանգստութիւնը և զգում եմ, որ մի վայրկեան հեռու եմ ալացել աշխարհի անօրէնութիւններից»<sup>17</sup>:

Որքան էլ Հենդելը օտար լիներ, որքան էլ հալածեն նրան, ի վերջ կյանքի օրոր շնորհակալ անգլիացիք իրենց ազգային հերոս Հենդելի մարմարե արձանը տեղադրեցին Թենմզայի ափին զտնվող գեղատեսիլ այգում: Իսկ Բախը իր հայրենիքում շարունակում էր իր ծառայությունը որպես եկեղեցական երգեհոնահար, ստանում իր աշխատավարձը և ինչ-

16. Վ. Գալացալ, Գենցել, Մ., 1960, ստ. 75.

17. Կոմիտաս, Նամակներ, էջ 16:

պես նրա ժամանակակից բանաստեղուի Մարիաննա Ցիվլերն է վկայում. «Ծայրը ծայրին հազիվ էր հասցնում»...

Եվ վերջին գուգահեռը՝ պատկերավոր ասած, Հենդելը օգտվում էր թագավորական սեղանից, իսկ Բախսը՝ «սեփական զավառում մերժված մարդարեն», Դանիել մարգարեի պես բավարարվում էր ոչ ճոշ կերակուրով...

Այսուամենայնիվ, իրենց տարրերություններով հանդերձ, այս երկու հսկաները շռայլրեն օժտված էին Աստծո շնորհով՝ գեղարվեստական հանճարեղ տեսանողությամբ: Եվ Մոցարտին տրված երաժշտագետ Հերման Աբերտի գնահատականը լիովին կիրառելի է նաև այս պարագայում:

«Մենք գիտենք, որ Մոցարտը, ինչպես նաև այլ մեծ երաժշտները, որպիսիք են Հենդելը, Հայդնը, Բերհովենը, իրենք իրենց դիտում էին, զգում որպես բարձրագույն ուժի մի անոթ... ուստի Մոցարտի կյանքն անհնարին է զատել իր իսկ արվեստից՝ և ստեղծագործության, և կյանքի դրսևորումներում գործում է միևնույն ուժը»<sup>18</sup>: Այդիսին են և Բախսը, և Հենդելը, և Բերհովենը. Վերջինիս հավատամբն էր «հանուն արվեստի գոհին, գոհի՞ր կենցաղային մանրութմերը՝ Աստված վեր է ամենից»<sup>19</sup>...

Գերմանիայում չկան Սիս ու Մասիսի պես իտուներ, բայց կան Հենդելը և Բախսը, որոնց արվեստը համաշխարհային նշակույթի զագարմերն են: Սակայն ի տարրերություն Սիս ու Մասիսի, Գերմանիայի այլ երկու հանճարեղ զավակները երկրային կյանքում միմյանց այդպես էլ շիամիլապեցին: Նրանք անբաժան են մշակույթը կրող սերունդների սրտում: Հրավի, երբ լսում ես Բախսի թիվ 29 կանտատը, զգում ես Հենդելի ազդեցությունը, նույնը և «Տրիո-սոնատներում», մի երաժշտաձև, որը Հենդելը նշակել է մինչև Բախսի կիրառելը:

Բախսի պասիոններին ևս նախորդել են Հենդելի «Չարչարանքներ» պասիոնը (ըստ Բրոբեսի տեքստի), «ուր Սիսնի դստրերի և երգչամբի երկխոսությունն իր եսքիլեսյան հարցերով, պատասխաններով ու բացականչություններով օրինակ են ծառայել Բախսի «Չարչարանքներ ըստ Մատթեոսի» պասիոնի համար»<sup>20</sup>:

Նույնը նկատում ենք «Չարչարանքներ ըստ Հովհաննոս» պասիոնի թիվ 48 «Արիա և խմբերգ» համարում, որտեղ երգչախումբը կատարանանընթացքում 27 անգամ հարցնում է. «Ո՞ր, ո՞ր, ո՞ր...», և մեներգիչը պատասխանում է. «Դեպի Գողգոթա»:

Հենդելի և Բախսի ազդեցությունները խաչվում և զգացվում են Մոցարտի «Ռեքվիենմի» «Kyrie eleison» կրկնակի ֆուգայում և այլ մասերում: Հեն-

18. Г. Аберт, Моцарт, М., 1989, т. 2, кн. 1, стр. 4.

19. Р. Роллан, Жизни великих людей, Ереван, 1987, стр. 194.

20. Р. Роллан, Генделль, стр. 110.

դեյի երաժշտության գորությունը, էներգետիկան դրսևորվում են ոչ միայն շնորհիվ հարմոնիաների լարման և լուծման, բազմաձայն հյուսվածքի խտացման և նոսրացման: Մեծ դեր են խաղում նաև պայրուցիկ պառագաները, որոնք հանկարծակի ընդհատում են հնչյունային զանգվածի ընթացք՝ լարումը հասցնելով գերագույն աստիճանի: Այդ պառագաները, կայծկլտացող հնչյունների «աստղաբույլերի» համեմատ, ասես գերիշտ աստղեր լինեն, այսպես կոչված «ու խոռոչներ», որոնք կլանում են նախընթաց ամբողջ էներգիան և պայթելուց հետո ծնունդ են տալիս եզրափակիչ ակորդների: Համայն նարդկության խորհրդանիշ երգչախումբը, որպես հավատքի հաստատում, ի լուր տիեզերքի, բացականչում է՝ «ԱՍԵՆ»: Այս, այստեղ Հենդելը անգերազանցելի է: Այդպես է «Փրկիչ» օրատորիայում, հատկապես «Ալելույա» խմբերգում, այդպես է «Հուդա Մակարայեցի» կորդոնում և այլ գլուխգործոցներում:

Հենդելի օրատորիաները ոգևորել են Հայոնին կերտելու «Աշխարհի արարում» օրատորիան: Հենդելի շունչը զգացվում է Մոցարտի «Դոն Շուան», «Ֆիտոսի գրասրտությունը» և այլ օպերաներում:

Մոցարտը մշակել է «Սեսիա», «Ացիս և Գալատեա», «Սերբողներ սուրբ Ֆեղիլային», «Ալեքսանդրի տոնախմբությունները» կոքողները և ստեղծել իր՝ նոցարտյան տարրերակները: Ավելացնենք նաև Մոցարտի «Նախերգանք Հենդելի ոճով» ստեղծագործությունը: Չնայած որ Հենդելի արվեստն այնքան էլ հոգեհարազարտ չէր Մոցարտին, ինչպես Բախինը, գլխավորապես Հենդելի հոգեկերտվածքում մոցարտյան միստիցիզմի պակասի պատճառով: Ինչպես նշել է Ռոմեն Ռոլանը, Հենդելը «ոչ մի հակում չուներ միստիցիզմի հանդեպ»<sup>21</sup>: Սակայն այս հանգամանքը չի խոչընդոտել Մոցարտին վերաշարադրելու Հենդելի մի շարք ստեղծագործություններ: Ռոլանը նաև նվաճագործել է, որ Հենդելի ոճով գրված հիշյալ նախերգանքն ազդել է Մոցարտի «Ուերվիեմի» վրա: Ավելի խորն են «Սեսիայի» կապերը «Ուերվիեմի» հետ: Վառ օրինակ է «Ուերվիեմի» հենդելյան մոնումենտալ կադանսները, որոնք նույնական հենդելյան պայրուցիկ պառագաներից հետո եզրափակում են «Kyrie eleison» կրկնակի ֆուգան՝ ստեղծագործության սկզբում և վերջում: Այս կադանսները չեն կարող չիշեցնել Հենդելի օրատորիաները եզրափակող տիեզերահունչ «ամեն» ակորդային սյուները: Երաժշտագետ Հերման Արենտը և նկատում է Հենդելի, ինչպես նաև Բախի ազդեցությունը կրկնակի ֆուգայի թեմայի վրա, որի նախատիպն է Հենդելի «Սեսիա» օրատորիայի «Եվ նրա վերընը շնորհիվ մենք ապահնված ենք» խմբերգը (թիվ 23, ֆա-մինոր): Իսկ ֆուգայի առաջին և երկրորդ թեմաների համակցման

21.Անդ, էջ 16:

կերպը (Երկրորդի ներխուժումը) հիշեցնում է «Հովսեփ» օրատորիայի «ալելույան»<sup>22</sup>:

Հենդելի «Աներկայությունը», շունչը առկա է նաև Բրամսի «Վարիացիա-ներ և ֆուգա Հենդելի թեմայով» դաշնամուրային երկում, նոյն Բրամսի «Գերմանական ուսումնական իմբլիւմի» խմբերգային կրկնակի ֆուգաներում: Ի դեպ, երբ Բրամսը ստանձնեց Վիեննայի «Երաժշտասերների ընկերության» համերգային բաժնի դեկավարությունը, առաջին գործը, որ նա կատարեց, Հենդելի «Դետինգենյան Տե Դեստ» ներքողն էր, որը կոմպոզիտորը ստեղծել է ֆրանսիացիների հանդեպ Դետինգենյում տարած անգիտացիների հաղթանակի առիրով: Այս գործի ազդեցությամբ էլ գրված է Բրամսի «Հաղթանակի երգը»:

«Ուինալդո» օպերան էլ ոգևորում է Բրամսի՛ ստեղծելու իր համանուն կանտատը: Հիրավի, «հենդելյան աղաջո» կարելի է անվանել Բրամսի «Պարկեների երգը» կանտատի ավարտը: Նման օրինակները շատ են, նոյնիսկ այնքան, որ ակադեմիկոս Ասաֆը երաժշտագետներին զգուշացնում է 20-րդ դարի արվեստում Հենդելի ազդեցություններ որոնելով շատ չգայթակոլվել: Մինչդեռ Լեոնիդ Էնտելիսը գործ է. «Հենդելի ավանդույթներով ստեղծված Արքուր Հոնեգերի «Դավիթ թագավոր», «Հուդի» օրատորիաները և «Անտիգոն» ողբերգությունը գերում են Երաժշտական լեզվի թարմությամբ...»<sup>23</sup>:

Այս ժառանգականությունը արտացոլում է արվեստի պատմության զարգացման ընթացքը, որն իրենից ներկայացնում է ոչ թե մեկուսացված օդակներ, այլ օդակներից բաղկացած շղթա, կամ ինչպես սրբալուս մյուռնի մերանը, որ կապում է անցյալը պապայի հետ: Այս օրինաչափությունը չհասկանալը ժամանակին տեղի է տվել անարդար մեղադրանքների: Երաժշտագետ Պետեր Վինթերը կշտամբում էր Մոցարտին, որ նա կողոպտել է Հենդելին<sup>24</sup>: Իր հերթին, Սեղլի Ֆեյլորը պնդում էր, որ Հենդելը «կողոպտել է» թե՝ կենդանի, թե՝ մեռած, թե՝ հայտնի և թե՝ անհայտ երաժշտներին: Այս հարցը արծարծել են Շվայցերը, Ռոլանը, և որիշներ ու եկել հետևյալ եզրակացությունների:

Հանճարը ուրիշի թեմաներում կարող է բացահայտել այնպիսի կերպարներ, ներուժ, հավիտենական այնպիսի արժեքներ, որոնք տվյալ հոդինվածքի հեղինակը չի նկատել: Ըստ Ռումեն Ռոլանի՝ գոշակցից պատշաճ կերպով փոխառելը և շենացնելը ժամանակին դիտվում էր որպես հարգանք «դուռը ի հանդեպ»: Հանճարը նա չէ, ով ստեղծում է նոր, անյալից մեկուսացված, մտացածին ծեր, այլ նա է, ով եղածը կարող է

22. Г. Аберт, В. Моцарт, ч. 2, кн. 2, М., 1990, стр. 388-389.

23. Л. Энгелис, Сиуэты композиторов 20-го века, Л., 1975, стр. 84.

24. Г. Аберт, В. Моцарт, т. 1, кн. 2, М., 1988, стр. 453.

հասցնել դասական կատարելությամ՝ խթանելով արվեստի հետազա զարգացմանը։ Այդպիսին էին և Բախը, և Հենդելը։ Երաժշտագետ Յովի Կրեմլյովը հիշատակում է Հենդելի ծննդյան 100-ամյակի հանդիսությունը, որի ժամանակ մեծն Հայոնը իր երախտագիտությունը հայտնելիս արտավել է։ Այսօր մենք ուրախությամբ ենք կրկնում Հայոնի ասածը. «Հենդելը մեր բոլորի ուսուցիչն է»<sup>25</sup>...

---

25. Ю. Кремлев, Йозеф Гайди, М., 1972, стр. 169.

## ՅՈՒՄՆ ՍԵԲԱՍՏԻԱՆ ԲԱԽ (1685-1750)

Եթե կյանքը խի հույսը և հավատոյ, ապա մի-  
այն այս խորալը բավական է, որպեսզի վե-  
րագտնես դրանք<sup>1</sup>:

Ֆ. Մենդելսոն Բախի "Schmücke dich" ("Բա-  
րեգարդվիր, ինգիս") խորախ մասին

**Ω** ասական երաժշտությունն ամնախաղեաց վերելք ապրեց  
17-18-րդ դարերում, Յոհան Սեբաստիան Բախի արվեստում:  
Բախի մասին առաջին մենագրության հեղինակ, գերմանացի երաժշ-

տագետ Յոհան Նիկոլաոս Ֆորկելն ասում էր. «Անհնարին է խոսքերով հաղոր-  
դել Բախի երաժշտության գեղեցկությու-  
նը»: Այս, անհնարին է բոնել շանքը, սա-  
կայն համարձակվում եմ ներկայացնել սո-  
նատները (Լարեդոյի և Գովիդի սկավառա-  
կը)՝ լսելու ընթացքում կատարած որոշ ճե-  
պագրություններս՝ հիմնավորելով Ալբերտ  
Շվայցերի դիտարկումներով:

...Ի՞նչ է ավետում Բախի երաժշտու-  
թյունը: «Այսուեղ, ասես, իրականացված է  
այն, ինչը պատկերում էր բոլոր ժամանակ-  
ների փիլխոփայությունը՝ որպես արար-  
չագործության վերջին գաղտնիք, այն է  
իդեայի ինքնազարգացումը, որն արարում

է իր հակադրությունը, որպեսզի հադրա-  
հարի այն, ինտո կրկին ստեղծում նոր հակադրություն, որպեսզի նորից  
հադրահարի, և այդպես շարունակ, մինչ իդեան շվերադանա ինքն իրեն  
այն բանից հետո, երբ կյանքը սպառված է: Նման անհասանելի անհրա-  
ժեշտության և առեղծվածային բավարարության տպավորություն են վե-  
րապրում՝ Բախի կոնցերտներում հետևելով քենայի զարգացմանը. երբ  
թեման սկզբում ներկայանում է նվազախմբի միասնական նվազում, հետո  
ենթարկվում մասնատող ուժերի խորհրդավոր ազդեցությանը և եղրափա-  
կիչ ընդհանրական նվազում դարձյալ վերագտնում իրեն»<sup>2</sup>:

Արդյոք Ա. Շվայցերի այս միտքը չի՝ խորհրդանշում նաև Հիսուսի  
Արդյոք Ա. Շվայցերի դաստիարակության մասին առաջին աշխատանքում նաև Հիսուսի

1. A. Շվեմպեր, H. C. Bach, стр. 181.

2. Անդ, էջ 300:

Հայտնությունը, Մարդեղությունը, Խաչնությունը և Հարությունը: Նույնին է ակնարկում և հայոց սուրբ «Պատարագի» թափորի դրվագը («Բարեխօսութեամբ»): Սոնատներում, ասես, ամփոփված են ավետարանական դեպքերի ականատեսի ապրումները: Այս սոնատների մողելը հիմնված է խոլական, այսպես կոչված, տրիո-սոնատի ձևի վրա, որի մասերն են՝ 1. հանդարտ, 2. արագ (ֆուզա): 6-րդ սոնատը հինգմասանի է, Ֆլեյտայի և բասի 1-ին սոնատը՝ վեց: Բախի նորամուծությունն էր երեք ձայների նոտագրումը, ինքնուրույնությունը, մեկը՝ մենակատարինը, մյուսը՝ կլավեսինի աջ ձեռքինը, 3-րդը՝ ձախ ձեռքինը (բաս): Մինչեւ Բախից առաջ կոմպոզիտորների կողմից հորինած բասի հիման վրա կատարողներն իրենց ազատ իմպրովիզացիաներով լրացնում էին միջին ձայների տարածը: Բյուրավոր հոգեշարժումներն այստեղ (Բախի սոնատներում) համախմբվում են մի քանի ոլորտում՝ դանդաղ մասերում տիրում են վեհ, աղոթքային մքնոլորտ, երանություն, ողբ, գորովանք, սեր, ապաշխարանք... արագներում՝ շարի հաղթահարումը, լույսի հաղթանակը, փառատրությունը: Մի խորով՝ «հավերժական կյանքի շողերի ցոլքը՝ կենաց ծովի ալիքների վրա» (Հեգել):

Լայպցիգի Սուրբ Թովմասի եկեղեցու երաժշտապետ Բախի համոզմանը, երաժշտության առաքելությունն է փառարանել Արարշին և նպաստել մարդկային հոգու փրկությանը: Անդրադառնալով եկեղեցական երաժշտությանը՝ Գեորգ Հեգելն իր «Եսթետիկայում» գրում է. «Իսկական կրոնական երաժշտությունն իր ազենցությամբ այն խորագույնն է և ուժեղագույնը, որ ընդհանրապես կարող է ստեղծել արվեստը... Այդպիսին է նաև առաջ Սեբաստիան Բախի երաժշտությունը... Տիրոջ տառապանքների փառարանումն այստեղ մարմնավորվել է օրատորիա ձևի մեջ և ստացել իր ավարտուն տեսքը»<sup>3</sup>: Անշուշտ, յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իրեն համահունչ երաժշտության վերելքը: Սակայն արվեստի մեծությունը պայմանավորվում է իր միջոցով՝ արտահայտվող իդեալների և դրանց արժանի արտահայտչամիջոցների կարողությամբ, ձևով ու բարձրագույնությամբ: Օրինակ, ըստ Օսվալդ Շփենզլերի, հելլենական երաժշտությունն իր հնչյունների ստատիկայով նմանվեց քանդակի: Առանց քազմաձայնության և հարմոնիայի, որոնք կառուցում ու արտահայտում են հնչյունային տարածականությունը, այն գրկվեց մեծ հնարավորություններից և իջակ ու վերածվեց պարի և դրամայի նվազակցության: Մինչեւ Արևմուտքում երաժշտությունը գերազանցեց մյուս բոլոր արվեստներին: Փիլիսոփայի կարծիքով, «Հանձին Բախի, գործիքային երաժշտությունը հաղթեց գեղանկարչությանը՝ լիմելով աստվածազգա-

3. Г. Ф. Гегель, Эстетика, т. 3, М., 1971, стр. 333.

ցուրյան միակ և վերջին միջոցը արվեստում»<sup>4</sup>: Եվ Ծյուղի, Հասլերի ու Բախի երգեհոնային ֆուզաները, նաև Հիսուսի շարչարանքներին նկիր-ված օրատորիաները, պասիոնները, ըստ Շփենգերի, արտացոլում են Արարչին:

Այս ամենն իրագործելու համար անհրաժեշտ էին համապարփակ ար-տահայտչամիջոցներ, որպիսիք էին պոլիֆոնիան (բազմաձայնությունը) և հարմոնիան, նաև երաժշտածներ: Այսպես մակրոկոսմոսը կյանքի կո-չեց միկրոկոսմոսը, մարդկային երաժշտությունը դարձավ տիեզերականի մանրակերտը: Բանաստեղծի խոսքով ասած՝ արևն արտացոլվեց, տեղա-վորվեց ջրի մի կարիլի մեջ: Բազմաձայնությունը խորհրդանշում է եկեղե-ցին՝ Քրիստոսի մարմնի անդամները, իսկ հարմոնիան դրանց միաձույն է: Պոլիֆոնիայում մի քանի մեղեդիներ հոսում են զուգահեռ գետերի պես, հանգուցային հատվածներում դառնում հաղորդակից անորմեր: Հենց այստեղ էլ գոյանում են ակլորդները, որոնց ուրահայաց հենասյուները կազմում են հարմոնիկ ատաղճը: Եվ հասկանալի է, թե ինչու էր Բերիովե-նը Բախին համարում «հարմոնիայի հայր»:

Ինչպես վկայում է Շվայցերը, երաժշտագետ Յոհան Ռոխիցը «հա-մարձակվում է Բախին Հենդեկից բարձր դասել, քանի նրա ճայները միշտ այնքան ինքնուրույն են (միևնույն ժամանակ համագործակցելով միմյանց հետ), ստեղծում են այնպիսի հրաշալի միասնություն, որպիսին հազիվ թե կարելի է գտնել որիշ մնկի մոտ: Թեկուզ և Հենդեկն ավելի ճոխ է, սակայն Բախը ճշմարտացի է: Եթե նա Դյուրերն է, ապա Հենդեկը Ռու-բենսն է»<sup>5</sup>:

Աստվածաշնչյան գաղափարներ, տեսարաններ մարմնավորելու գոր-ծում մեծ էր նաև պոլիֆոնիայի և հարմոնիայի առումով ամենակատար-յալ նվազարանի՝ երգեհոնի դերը, որն անվանում էին հոետորական, քա-րոզչական, աստվածային գործիք, նմանեցնում գորական տաճարին: Եր-գեհոնային արվեստում ևս Բախը դարձավ անգերազանցելի: Պատաճի հասակից նա ծառայում էր եկեղեցում, հաճախ հանպատրաստից նվա-զակցում էր քահանայի քարոզմերին, երգեհոնի արտահայտչականու-թյունը մոտեցնում խոսրին, գաղափարների ու կերպարների կոնկրետու-թյանը: Տեղին է հիշել Ներսես Լամբրոնացու հայտնի աղորքը. «Թեպետ եւ անարժան տաճար եմ քո բնակութեան համար, սակայն Դու, առատա-ձեռն, միայն քո ծայնի հնչման գործիք դարձրու»: Հովհաննես Ուսկերե-րանն էլ կոչ էր անում. «Դու ուրեմն դատնաճր Սուրբ Հոգու նվազարանը... Թող նա դիաչի, հնչեցնի մեր հոգիները: Հնչե՞ք ներդաշնակ երգով՝ հուրա-

4. О. Шпенглер, Закат Европы, стр. 451.

5. А. Швецлер, И. С. Бах, стр. 176.

խուրյուն մարդկանց և երկնային ուժերի»<sup>6</sup>: Խսկ ըստ Գրիգորիոս Նյուտոնի, Արարիչը պահանջում է մեր ապրելակերպը նմանեցնել սաղմոսարանի<sup>7</sup>: Եվ Բախն այդպես էլ ապրեց ու գործեց: Նա հաճախ իր երկերի սկզբում, իր անվան փոխարեն գրում էր՝ «Միայն Աստծուն է փառքը», «Փառք Բարձրյալին»: Դրանցից է «Երգեհոնային գրքույկը», որին Ալեքսան Շվայցերը համարում է «համայն երաժշտության մեծագույն նվաճումներից մեկը»<sup>8</sup>: Գրքույկը ստեղծվել է 1717-ին, Վայմարում և պարունակում է Բախի բազմաձայնած խորալներից 45-ը: Ըստ Շվայցերի, «Գրքույկը» Բախի երաժշտական լեզվի բառարանն է, նրա արվեստը խորապես ընդունելու բանալին:

16-րդ դարում եկեղեցին ազգային դարձնելու նպատակով Մարտին Լյութերն ընտրեց, և ապա իր համայստիների հետ ստեղծեց ու կազմեց հոգևոր երգերի՝ խորալների ժողովածու: Հետազայում Բախը բազմաձայնեց խորալային այդ մնացորդները բազում տարբերակներով՝ երգչախմբի, երգեհոնի համար, զարգացրեց պրելյուդներում, ֆուգաներում: Եվ ամենուր խորալը, ոսկե թելի պես, անցնում է բազմաձայն հյուսվածքի միջով՝ ինչպես մի պատվիրան: Եվ խորալը, մանանեխիս սերմի պես, վերածում է բարձրութեց, սաղարթախիտ մի ծառի: Ոչ միայն հնչյունները, տեմբրները, այլև բվերի խորհուրդն է Բախը ծառայեցրել աստվածաշնչյան գաղափարներին: Իր տնաստները, սյուխտները և այլ երկեր վեցական վնշելով՝ նա ակնարկել է արարշագործության 6 օրերը: Երգեհոնային մի-բեմոլ մաժոր Պրելյուդ և եռակի ֆուգայում Շվայցերը տեսնում է Սուրբ Երրորդության գաղափարը: «Տասը պատվիրան» խորալում թեման հնչում է 10 անգամ: Մեկ այլ խորալում գալարփող մնացորդների հիշեցնում է դրախտի օճը, մեկ ուրիշ տեղ եկեղենները նմանվում են Հորդանանի ալիքներին: Երերացող ոիկոն վերարտադրում է խաչը ուսած Հիսուսի քայլերը, իսկ հաստատում զարկերը, ձայների վերխոյացումը պատկերում է Փրկչի հաղթարշավը խորհրդանշող գիմի քանողի հաղթական քայլերը...

Բախը ծնվել է 1685-ին, մարտի 21-ին, Այգենախում: Բախի տոհմում երաժշտների թիվը հասնում է հիսումի: Կոմպոզիտորներ էին և Բախի զավակներ Յոհան Ֆրիստիանը, Վիլհելմ Ֆրիդերիքը և Ֆիլիպ Էմանուիլը, որի նորարարական արվեստը մի կամուրջ ծագեց Բախից մինչև Բերիովեն: 10 տարեկանում որբացած Սերաստիանին պատսպարեց Օրդրությունը բնակվող իր եղբայր Յոհան Ֆրիստոֆը, որի դեկապարությամբ էլ սկսվեցին առաջին դասերը: 15 տարեկանում պատանին մեկնեց Լյութեր-

6. Музыкальная эстетика западноевропейского средневековья и Возрождения, М., 1966, стр. 116.

7. Անդ, էջ 110:

8. А. Швейцер, И. С. Бах, стр. 208.

բուրգ, ուր երգում էր եկեղեցում: Այնուհետև աշխատեց Մյուլհաուզենում, որպես եկեղեցու երգեհոնահար, իսկ Վայմարում՝ պալատական ջութակահար: Կարիքը ստիպում էր նրան քաղաքից քաղաք տեղափոխվել: Եվ դա տևեց 20 տարի՝ մինչև 1723-ը, երբ Բախն իր բազմանդամ ընտանիքով հաստատվեց Լայպցիգում, ուր և ապրեց մինչև կյանքի վերջը՝ 1750 թվականը:

Ընդունված է Բախի կյանքի ուղին բաժանել երեք շրջանի: Վաղ շրջանը՝ 1695-ից մինչև 1703-ը: Միջինը, այդ բվում նաև Վայմարի և Ֆյորենի շրջանը՝ 1703-ից մինչև 1723-ը: Իսկ վերջինը լայպցիգյան շրջանն է:

Աստվածահաճ աշխատանքը Բախի համար ևս աղորդ էր; Վաղ հասակից նա ստեղծագործել է, ուստանասիրել և տվորել մեծերից: Հիշարժան է 1705-ի ցրտաշոնչ աշնանը Բախի կատարած երաժշտական ուստագնացությունը: Նա ոտքով հաղթահարեց մոտ 350 կիլոմետր, Արնշտադից գնաց Լյուբեկ՝ ունկնդրելու երգեհոնահար Դիտրիխ Բուրսենիում: Բախը քայլել է և մինչև Համբուրգ՝ լսելու Աղամ Ռեյնկենի նվազը, որի «Երաժշտական պարտեզ» ժողովածուից Բախը փոխառել է բնաներ և նոր որակի հասցրել իր երկերում: Ահավասիկ, կավիրային շամինոր և դո-մաժոր ստնատները, երգեհոնային սոլ-մինոր ֆուգան: Վերջինիս առիրով Շվայցերը գրում է. «Այսպես, Բախը իսկական կյանքի էր կոչում և սերունդների համար պահպանում բազում մեծ գաղափարներ, որոնք արտահայտչածի անկատարության պատճառով թարնված էին մնում ուրիշների երկերում»<sup>9</sup>: «Ուրիշներ» ասելով Շվայցերը նկատի ունի Աղամ Ռեյնկենին, Բենեդիկտոս Մարչելլոյին, Չովաննի Լեգրենցիին, Անտոնիո Վիվալդիին, Տոմազո Ալբինոնիին և այլոց: Նշված գործերից բացի, Բախն իր կյանքի երկրորդ շրջանում ստեղծել է 100-ից ավելի հիգեստ և աշխարհիկ կանոնատներ, երգեհոնային տոկատներ, կոնցերտներ, սոնատներ ֆլեյտայի, ալտի համար, անգլիական և ֆրանսիական սյուիտներ: Նաև Բրանենբրուրգյան 6 կոնցերտ, բազուրակի 6 սյուիտ, ջութակի 6 սոնատ և պարտիտներ՝ հանճարեղ Զակոնայով հանդերձ, «Լավ տեսպերացված կլավիրի» 1-ին հատորը, որը պարունակում է 24 պրելյուդ և ֆուգաներ: Վերջինիս երկու հատորյակը Բերհովենն անվանել է «Երաժշտական Աստվածաշունչ»...

Լայպցիգյան շրջանում Բախը կերտել է իր մեծագույն կորողները՝ «Զարչարանքներ լստ Հովհաննոս», «Զարչարանքներ լստ Մատթեոսի», «Վեհ մեսսան», «Ծննդյան», «Զատկական», և «Քրիստոսի Համբարձման» օրատորիաները, «Մագնիֆիկատը» («Սեծացուցե»), Արքա Ֆրիդրիխ Անդի Սեծի թեմայով ստեղծած «Երաժշտական ընծառ» շարքը, «Ռեփորմացիոն կանոնատարը» և շատ ու շատ գլուխգործոցներ: «Ռեփորմացիոն կան-

9. Անդ, էջ 145:

տատի» հիմնանյութն է «Տերն իմ ամրոցն է» խորալը: Ըստ երաժշտագետ Սիխայիլ Դրուսկինի, այս կանտատը Բախի արվեստի գագաթնակետն է<sup>10</sup>: Սակայն նոյնը իրավամբ կարելի է ասել պասիոնների մասին: Պասիոնի ձևակառուցման հիմնական տարրերն են ուշխտատիվը, արիան, խմբերգը և խորալը: Ուշխտատիվը թվերգություն է, ասերգություն, որի միջոցով ավետարանիշը պատմում է եղելությունը:

«Արիանները երաժշտա-քանաստեղծական խորիրդածություններ են կրոնական քեմաներով: ...Ըստ իմաստի, դրանք գործողության քնարական դադար, մտորումներ են», պարզաբանում է Դրուսկինը<sup>11</sup>: Բախը «Չարչարանքներ ըստ Հովհաննու» («Յոհաննես-պասիոն») է ներմուծել «Սիոնի դստեր» կերպարը, որը ողբում է: «Այս, տարան իմ Հիսուսին»: Արիաններում լսում ենք, թե ինչպես է «զգումը պլատոում մեղավորի սիրտը», «Վերադարձեր իմ Հիսուսին» կոչը, «Երե այտերիս արցունքները չեն օգնի, ապա սիրտս վերցրու» աղերսանքը... Սակայն երաժշտագետը զգուշացնում է շանձնավորել արիանները, դրանք չնույնացնել գործող անձանց հետ, և օրինակ է քերում այն, որ Պետրոսի ուրացումը արտահայտող «Խոդա ինձ» արիան «Մատքեռս-պասիոնից» Բախը հասցեագրել է կանանց ալտ ձայնին:

Այսահիտվ, խմբերգերը, խորալները, որ սյուների պես կամարակապ-վում են արիաններով ու ուշխտատիվներով, հնչյունային մեծակերտ տաճարների տեսք են ստանում: ԵՎ կատարողները, և ունկնդիրներն ասես ականատես են դառնում Գողգոթայում կատարվածին, խաչակից դառնում Հիսուսին...

Կյանքի վերջում «Երգեհոնային գրքույկում» գետեղված «Երբ մեզ պաշարում են ծանրագույն արիավիրքները» խորալի հիման վրա Բախը կերտեց երգեհոնային մի ֆանտազիա: Կորացած և մահամերձ երգահանը այն թելադրում էր իր փեսս Ալտնիկոլին, որի շնորհիվ էլ պահպանվեց այդ լուսավոր, երկնային երաժշտությունը:

Թեմաներ ստեղծելիս Բախն օգտագործել է նաև իր ազգանվան տառերը՝ «Յ» տառը համապատասխանում է սի-քեմոլ հնչյունին, «Ա» -ը՝ լա հընյունին, «Ը»-ը՝ դո-ին, «Հ»-ը՝ սի հնչյունին: Այս դարձվածքը նաև կիրառել է կլավիրայն սի-քեմոլ-մաժոր Պրելյուդ և Ֆուգայում, սրանով կնքել է նաև իր թիվ 6 «Անզիական սյուիտի» Ժիդան: Բախի «Ֆուգայի արվեստը» շարքի թիվ 15 ֆուգայի վերջում իր որդի Ֆիլիպ Էնանուիլը գրել է: «Այս ֆուգայի վրա աշխատելիս, B-A-C-H հակառիք քեման շարադրելիս, հայրս մահացավ»:

Պատմությունը ցույց տվեց, որ նա կարող էր գրել «ՀԱՅՐՍ ԱՆՍԱՀԱՑԱՎ»...

10. Մ. Դրսկին, Ի. Ս. Բախ, Մ., 1982, ստ. 28.

11. Նույնի, Պատմություն Ի. Ս. Բախ, Լ., 1972, ստ. 29-30.

## ԲԱԽ. «ԶԱՐՉԱՐԱՆՁՆԵՐ ԸՍՏ ՀՊՎՀԱՇԱՋԻ» ՊԱՄԽՈՆԸ

**Վ**աղ միջնադարում եվրոպյական երկրներում քրիստոնի Ծննդյան և Զատկի օրերին տեղ էին ունենում ժողովրդական հանդիսություններ: Ներկայացվում էին ավետարանական դրվագներ, որոնք պատմում էին Փրկչի կյանքի, վարդապետության, մատնության, խաչելության և մարդկության համար բախտորոշ այլ իրադարձությունների մասին: Խաչն ուսերին թափորը շարժվում էր քաղաքից դրւս՝ հիշեցնելով դեպի խաչելության վայրը՝ շարաբաստիկ Գողգոթա տաճող տառապալից ճանապարհը: Այս միստերիաներից է գրյացավ «պասիոն» (տառապանք, շարշարանք) երաժշտական ժանրը: Ըստ Յո. Մատտեոնի՝ հոգևոր երաժշտության քատերականացումը հին հունական ողբերգության մի նմանակումն էր քրիստոնեական հողի վա: Կավելացնեի՝ նաև անհամեմատ զարգացումն ու վեհացումը: Ավետարանիշների բվին համապատասխան, կան չորս պասիոններ՝ ըստ Մատթեոսի, Մարկոսի, Ղոկասի և Հովհաննեու: Առաջին պասիոնների հեղինակներն էին Յակոպ Օրբելյանը (1505), Հայնրիխ Շյուտցը, Օռլանդո Լաստն և ուրիշներ: Պատիններն իրենց կատարելությանը հասան Յոհան Սերիաստիան Բախի արվեստում, որը երգեցողությանը միահյուսելով զարգացած բազմաձայն նվազակցություն՝ բացահայտեց աստվածաշնչան խոսքերի հոգական խորհուրդը: Բախից մեզ հասել են «Յոհաննես-պատինը» (26.02.1723) և «Մատթեոս-պատինը» (15.04.1729): Դրանց ներկայացնան օրերը ուրբաթն էր՝ Հիսուսի խաչելության օրը: Ըստ Շվայցերի, «Յոհաննես-պատինը» Բախի օրոր կատարվել է հինգ անգամ (Լայպցիգում), իսկ «Մատթեոսը»՝ չորս: Վերջինս, ստեղծումից հարյուր տարի անց, մոռացությունից Վեր հանեց Ֆելիքս Սենդելսոն: Ի-ին պատինն ընդգրկում է Հովհաննու ավետարանի 18-19 գլուխները, իսկ երկրորդը՝ Մատթեոսի 26-27 գլուխները: Հովհաննես առաջյալը պատմում է, թե ինչպես Հիսուսը, մատմավերով իր աշակերտ Հուդայի կողմից, բերկում է քահանայապետերի մոտ, ուր նրա մյուս աշակերտ Պետրոսը վախից ուրանում է՝ իրը չի ճանաչում Հիսուսին: Հետո նրան տանում են հոռմեացի կուսակալ Պիդատոսի մոտ՝ դատելու: Ավանդույթի համաձայն, տոն օրերին ազատ էին արձակում որևէ քանտարկյալի, և ամբոխի ու նախանձախնիր քահանայապետերի պահանջով Պիդատոսը ազատեց մարդասպան Բարաբային, իսկ ամենդի Հիսուսին չարշարեցին, խաչեցին ու քահեցին զինվորների կողմից հսկվող մի գերեզմանում, որտեղից էլ նա հարություն առավ... Այսպես կատարվեց Հին Կտակարանում գրվածը, տեղի ունեցավ մեծագույն անարդարությունը՝ մարդկության մեղքերի համար խաչեցին Աստծո Միածին անմեղ Որդուն: Այս ամենը երաժշտության մեջ ճարմանավորելու համար Բախը օգտուն:

տագործել է չորս բաղադրիչ՝ ուշխտատիվ, արիա, խմբերգ և խորալ: Ինչ վերաբերվում է արտահայտչամիջոցներին, ապա Ա. Շվայցերը բացահայտել է Բախի երաժշտական լեզվի իմաստաբանությունը, խորհրդանշերը՝ հաղթական, հանդիսավոր քայլքի, տագնապի, սգո, նտրակի հարվածների ոիթմեր, դեպի երկինք սլացող, դեպի սանդարամնետ գահավիժող և այլ դարձվածքներ: Մեղեդիների ուրվազգերը, ելեկջները մերք նմանվում են արադաղի կանչի (Պետրոսի ուրացումից հետո), մերք՝ զինվորների կեղծ խոնարհվելուն (կապկապված Քրիստոսի առջև) կամ խաչի վրա ցավից գալարվող Հիսուսի մարմնի կծկումներին... Ուշխտատիվը ասերգություն է, որի միջոցով ավետարանչը (յուրաքանչյուր վանկը մի հնչյունով երգելով) պատմում է եղելությունը: Երգչի ձայնին աջակցում են երգեհոնը, քասերը՝ ձգված ձայներով կամ ակորդների շարանով: Արիան դեպքերի բնարական անդրադարձն է՝ մտորումներ, սիրո զեղումներ, աղոքք, զղում... Ուշխտատիվի և արիայի միջև տեղ-տեղ զետեղված են արիոգներ, որոնք երաժշտապես ու բովանդակությամբ նախապատրաստում են արիաները: Խմբերգերը երկու տեսակի են՝ մադրիգալյային և, այսպես կոչված, «սոուրբե» (աճրիսային): Մադրիգալյային խմբերգերը ծավալուն են, գրված են ոչ միայն ավետարանական, այլև տարբեր բանաստեղծների խոսքերով: Ամբոխային խմբերգերը հակիրճ են, ներխուժում ու աշխուժացնում են գործողություննը՝ Հիսուսին փնտրող զինվորների, աշակերտների, քահանայացների բացականչություններով: Իսկ խորալներն իրենց կառուցիկությամբ մարմնավորում են միաբան համայնքը, որն արձագանքում է, կարեկցում եղելությանը: Օրինակ, «Օ, արյունու ու վիրավոր ճակատ», «Սիրասուն Հիսուս», «Օ, աշխարհ, տե՞ս, այստեղ է քո կյանքը» և այլ խորալներ: «Յոհաննես-պասիոնում» կա 11 խորալ իսկ «Չարչարանքներ ըստ Մատթեոսի» («Մատթեոս-պասիոն») երկում՝ 15: Ընդ որում, խորալները երբեմն կրկնվում են՝ նպաստելով ձևակառուցմանը:

Խորալային մեղեդիները շարականների զուգահեռն են հոռմեական (կաքոլիկ) և գերմանական (բողոքական) հոգևոր արվեստում: Բախը բազմաձայնել է դրանք (քառաձայն) և ներմուծել նաև պասիոնների մեջ: Խորալները ամբոխային խմբերգերի հակապատկերն են՝ խոնարի ու բարապատ համայնքի ապրումներն են արտահայտում, հաճախ նմանվում են անտիկ ողբերգությունների խմբերգերին, որոնք մեկնարանում էին քեմում կատարված: Եվ այսպես, ուշխտատիվներով ու արիաներով կամարակապելով սյունազարդ խմբերգերն ու խորալները՝ Բախը կերտում է իր հնչյունային տաճարները՝ պասիոնները:

«Յոհաննես-պասիոնը» բաղկացած է երկու մասից: 1-ինը՝ ավարտիւմ է Պետրոսի ուրացումով. թիվ 19 արիայում երգվում է՝ «Ա՞խ, սիրո իմ, ինչպես սփոփեմ... ծառան Տիրոջը ուրացավ», այնուհետև խորալի վեր-

զում (թիվ 20) հաճայնքի լեզվով խնդրում է՝ «Հիսուս, հանգստացրո՛ խիղճս»: «Յոհաննես-պատիոնի» 1-ին նաև ունի երկու բաժին: Կորողը բացվում է մեծակերտ խմբերգով՝ «Տեր, մեր Տեր», որն իր բնույթով հիշեցնում է Խաչի բափորը՝ Գիեյտաներն ու հորյոները հեծեծում են, նրանց ձայները՝ խաչվում, ինչպես ողբացող Տիրամոր մատներ, բամբ ձայները խաչի ծանրության տակ երերացող բայերի պատկերներն են ստեղծում: 1-ին բաժինը («Մատնություն և ձերբակալում») ծավալվում է մինչև թիվ 11 արիան՝ «Սեղբերիս կապանքներից ինձ ազատեցիր, Փրկիչ իմ»: 2-րդ բաժինը (ուրացում) սկսվում է «Ետրոսի խոստումից»՝ «Ուրախ բայերով հետևում եմ քեզ, իմ կյանք, իմ լույս» (թիվ 12) մինչ 2-րդ մասը, որն իր հերթին վիճակած է հաջորդ չորս բաժիններից: 3-րդ բաժինը («Դատ և խարազանում») սկսվում է խորալից (թիվ 21) մինչև թիվ 32 արիան՝ «Մտածենք նրա արյունոտ մեղքի մասին...»: Այս արիայի ճախրող նվազակցության մեջ Ա. Շվայցերը տեսնում էր մեղքերից սրբագրծված աշխարհի վրա ծածանվող ծիածաննը... 4-րդ բաժինը («Դատապարտում, Գողգոթա, Խաչելություն») թիվ 33 ուշիտատիվով պատմում է փշեղեն պասակ և ծիրանի հազցնելու մասին՝ մինչև նրա մահը: 5-րդ բաժինը («Մահ և հրաժեշտու») թիվ 53 ուշիտատիվից («Բայց զինվորները, երբ Հիսուսին խաչ հանեցին, նրա հանդերձներն առան և չորս բաժին արին...») ճգվում է մինչև թիվ 63 արիան («Սիրտ իմ, պարպակիր արցունքներիս հոսրի մեջ»): 6-րդ բաժինը («Ամփոփումն ի գերեզման») ընդգրկում է թիվ 64 ուշիտատիվից («Զինվորներից մեկը գեղարդով նրա կողը խոցեց, և շուտով արյուն ու գոր դուրս եկավ... այս բաները եղան, որ գրվածը կատարվի...») մինչև վերջին խորալ՝ թիվ 68: Վերջին խմբերգում (թիվ 67) երգվում է. «Թող այս սորք մարմինը խաղաղ հանգչի... Այս գերեզմանը փակեց դժոխը և բացեց Երկինքը»: Ահա սա է Բախի հանճարեղ գործի հիմնական գաղափարը՝ Հիսուս խաչի վրա պատարագվելով՝ մարդկության առջև բացեց հավիտնական կյանքի դրույլ...

ԱՌՏՈՆԻ ՎԻՎԱԴԻ  
(1678-1741)

«ՏԱՐՎԱ ԵՂԱՄԱՎԿՆԵՐԲ»

1983



Այս երկու մեծերին ընդիմարացնող շատ հաճգիտություններ կան՝ մասնավորապես, հոգևոր երաժշտության ասպարեզում: Սակայն կա մի արահետ, որը սկիզբ է առնում Վիվադիից, անցնում Հայդին ստեղծագործության միջով, Բերեխովենի «Հովվերգական սիմֆոնիայով», փոխանցվում Զայկովսկուն, հասնում մինչև մեր օրերը, ճյուղավորվում՝ Էդուարդ Միրզոյանի, արգելատինացի կոմպոզիտոր Աստոր Պյացոլայի, Էստոնացի Կուլյար Սինկի արվեստում: Իրենց էական տարրերություններով հանդերձ՝ այս բոլոր կոմպոզիտորների նույնարձույթ երկերը ընդհանրանում են մեկ անվանք՝ «Տարվա եղանակները»:

Վիվադիի ծրագրային գործերից առավել հայտնի է «Տարվա եղանակներ» շարքը, որն ընդգրկում է չորս կոնցերտներ ջութակի, լարային նվազախմբի և բասսո կոնտինուույի համար: Այս քառապատումը մըշտապես կատարվել է Փարիզում՝ սկսած 1728 թվականից: Հայտնի է նաև 1-ին կոնցերտի երգեցիկ տարրերակը՝ «Գ-արտուն» մոտենը:

Յուրաքանչյուր կոնցերտին կցված է մեկ սոնետ: Սոնետները պարու-

ნაკონ պարտիტურამ լույս է տხუნ 1725 թվականին, Ամստերդամում:

Երաժշտագետներից ոմանք այդ բանաստեղծությունները վերագրում են Վիվալդիին, սակայն տարածայնություն կա, թե երբ են գրվել՝ երաժշտությունից առաջ՝, թե՞ հետո: Իգոր Բելեցկին գրում է. «Եղենլով ընծայագրից՝ կոնցերտները հայտնի էին մինչ սոնտեսների հրատարակվելը: Բանաստեղծական տեքստը, հավանաբար, հորինվել է արդեն իսկ ստեղծված երաժշտության համապատասխան»<sup>1</sup>: Իսկ Տամարա Լիվանովան ենթադրում է հետևյալը. «Հավանաբար «Գարուն» սոնտը իրոք հորինել է կոմպոզիտորը, ով նախատեսել է սոնտի կառուցողական հնարավորությունների արտացոլումը երաժշտության մեջ»<sup>2</sup>: Ավելի հավաստի են հեղինակի կերպարային և կատարողական նշումները պարտիտորայում: Օրինակ, «Գարուն եկավ», «Հավերի երգը», «Որոտ», «Տերևների և խոտերի սոսափյունը», «Ծան հաշոցը», «Փորորիկ», «Որս» և այլն:

Ի դեպ, Յոզեֆ Հայդնի օրատորիայում ևս առկա են փորորիկի և ամպրոպի պատկերներ՝ նույն «Ամառ» մասում, «Բերդի տոնը» և «Որսը» նույն «Աշուն» մասում, ճնոան ճանապարհին վայրիվերումները և օջախի ջերմությունը՝ նույն «Զմեռ» մասում:

«Բուխարիկի մոտ» և «Որսը» անվանումները հանդիպում են նաև Չայկովսկու «Տարվա եղանակները» դաշնամուրային շարքի «Հունվար» և «Սեպտեմբեր» պիեսներում, որոնց բնարանները քաղված են Կիմի պոեզիայից: Իսկ առհասարակ, մարդու և բնության հարաբերությունների երկխոսության երաժշտական մարմնավորման կատարելատիպն է Բերիվենի «Հովվերգական սիմֆոնիան»:

Անշուշտ, իր տեսակի մեջ կատարյալ է և Վիվալդիի գլուխգործոցը, որի գեղանկարչական զուգահեռը կարելի է տեսնել ֆլամանդական վարպետների արվեստում, իսկ գարունը գովերգող փերիների շուրջպարն ասես Սանդրո Բուտիչելլիի «Գարուն» կտավի երաժշտական փոխադրությունն է... Սոնետների իմացությունը և ընթերցումը նպաստում է Վիվալդիի կոնցերտների ծրագրային մտահղացումների ընթոնմանը և հնարավատասխան մինուրը ու տրամադրությունը է ստեղծում երաժշտության ընկալման համար:

Ստորև առաջին անգամ բարգմանաբար հայերեն ներկայացնում ենք Վիվալդիի «Տարվա եղանակներ» սոնետների շարքը.

1. И. Белецкий, А. Вивальди, Л., 1975, стр. 77.

2. Т. Ливанова, История западноевропейской музыки, стр. 586.

## 1-ին կոնցերտ՝ «Գարուն»

### I Allegro

Գարնան գալուստը հավքերն են երգում,  
Ծախորում են կապույտ երկնի եղերքում,  
Զեփյունն է շոյում տերև ու բողբոջ,  
Լսկում է մեղմիկ առվակի խոխոչ:

Բայց հանկարծ քնդաց երկինքը մթին,  
Փայլատակեցին կայծակ-նետերը՝  
... Ահա վաղ գարնան վառ նշանները:  
Փոքրիկն անցավ, երկինքը բացվեց,  
Խունն երամը համարձակ ճախրեց,  
Հավքերի նրգը հնչում է կրկին:

### II Largo

Ծաղկանց մեջ բուրյան, շան կողքին պառկած,  
Զահել հովիվը քնել է անուշ  
Բուրմունքից հարբած, սիրով համակված:

### III Allegro

Պարկապօնիկի ձայնն է հնչում  
Ծաղկավետ դաշտում, և փերիները  
Ծուրջպար են բռնել, գարուն գովերգում:

## 2-րդ կոնցերտ՝ «Ամառ»

### I Allegro non molto

Դանդաղ շարժվում է այծերի հոտը,  
Դժվար է շնչել շիկացած օդը,  
Տապից խանձվել է դաշտերի խոտը:

### Allegro

Երգում է կկուն ստվերու ամտառում  
Տատրակն է այգում ուրախ դունդունում,  
Մեղմ քամիները հոգոց են հանում...  
Եվ, հանկարծ ըմբուստ հյուսիսի քամին  
Փոքրիկեց, սուրաց երկնքով ծավի:

## II Adagio. Presto

Իր բախտից դժգոհ եռվիվճ է լալիս:  
Վախենում է նա որոտի ձայնից,  
Կայծակից սարսում, խոցվում անխմա՝  
Չի կարող փախչել մոծակի պարսից:

## III Presto

Եվ ահա ամայրովը հեղեղ է հղում,  
Բարձունքից ի վար, դաշտեր ողողում  
Գոռում, ավերում շինձած արտեր,  
Կարկուտը դաժան չի ջռկում բնավ  
Ոչ պարտեզ, ոչ արտ՝ ջարդում է, պոկում  
Հասկ ու ծաղիկի թագերը հպարտ:

## Յ-րդ կոմներա՝ «Աշուն»

### I Allegro

Երկինքը պարզկա, աշնան եղանակ,  
Այգի ու պուրակ հազել են կրակ.  
Գեղջուկը ուրախ և ողջ իր տունը  
Տոնում են ահա ոսկե աշունը:  
Դաշտերից առատ բերքը հավաքվեց,  
Հոգսերի ծանր լուծը բորափիվեց,  
Երգի ու պարի ժամն է արդ հասել:  
Տակառը լի է Բարոսի գինով:  
Ով գեք մի գավաք խմի մինչ հատակ,  
Իր ճոխ խնջույքը կավարտի քնով:

### II Adagio. molto (Երազ)

### III Allegro

Շեփորն է հնչում, շները հաշում,  
Որսի են գնում, խորունկ անտառով,  
Քայլերը ուղղում գազանի հետրով,  
Փախչում է գազանը մոտալուս նահից,  
Շները արձակ հասնում գազանին,  
Դեմն են առնում բավուտում մթին:

## 4-րդ կոնցերտ «Զմեռ»

### I Allegro non molto

Չյունը ծածկել է ճամփեքը բոլոր,  
Մարդը իր համար, ոտքերով սառած,  
Ուղի է հարթում ոլոր ու մոլոր,  
Վազում է ցրտից մի կծիկ դարձած:

### II Largo

Երջանիկ է նա, ով իր օջախում,  
Տաք ու լուսավոր, նստած է, նայում  
Ինչպես է դրսում բուքը գալարվում:

### III Allegro

Դժվար է քայլել սառույցի վրա,  
Բայց ջահելմերը շմուշկ են խաղում,  
Սահուն եգերքով գգուշությամբ անցնում,  
Սայթաքում, ընկնում սառույցին բարակ  
Ու վախից ելնում, փախչում են արագ:

Սոլեգնող բուքը երկինքն է պատել,  
Զնդանից փախած գերիների պես  
Տարբեր քամիներ իրար են քախվում,  
Պատրաստ մեկմեկու կոկորդը պատռել:  
...Ծանր կլիներ ձմեռող տաճել,  
Թե չիննին բերկրանքի պահեր:

## ՖՐԱՆՑ ՅՈՎԵՆ ՀԱՅԴՆ (1732-1809)

**Ֆ**րանց Յովենի Հայդնը «վիեննական դասական դպրոցի» հիմնադիրներից է: Կոմպոզիտորին անվանում են «սիմֆոնիայի հայր», իսկ նրա աշակերտները՝ Մոցարտը, Բեթհովենը, նրան պարզապես «հայրիկ» էին կոչում: Հայդնի արլեստը շրջափուլային է. նա ամփոփեց և խորացրեց նախընթաց երաժշտության նվաճումները, կատարելագործեց իտալական երաժշտածները՝ հագեցնելով նոր բովանդակությամբ, բյուրեղացրեց նաև «մանհայմյան» և «գետինյան» դպրոցների ստեղծագործական սկզբունքները, կանխորչեց դասական երաժշտության հետագա զարգացումը:

Երաժշտագետ Հերման Արենտը մանրամասն ներկայացնում է այն ներդրումը, որը կատարել են Հայդնի նախորդներ Ֆիլիպ Էմանուել Բախը, նաև մինչդասական «վիեննական դպրոցի» ներկայացուցիչներ Գեորգ Մոննը, Յովենի Շտարցերը և

Գեորգ Վագենգելլը<sup>1</sup>: Հայդնը ինքն էլ նշում էր իր արվեստի ակունքները: Հատկանշական է, որ Հենդեկին նվիրված փառատոնի ժամանակ նա խոստովանել է. «Հենդեկլ մեր բոլորիս ուսուցիչն է»:

Հայդնի օրոք, 18-րդ դարի երկրորդ կեսին, Բեռլինում կիմնադրված «Երաժշտական ըմկերությունը» կազմակերպում էր համերգներ, ինչում էին Հենդեկի «Սեսիա» օրատորիան, Բախի աշակերտ Յոհան Ագրիկոլայի երկերը, Կարլ Գրաունի «Հիսուսի մահը» կանտատը և այլ գլուխգործոցներ: Իսկ Մանհայմում գործում էին պալատական կոմպոզիտոր Յան Վացլավ Ստամիցի դեկավարած սիմֆոնիկ նվագախումբը, ձևավորվում էր սիմֆոնիայի նոր ձևը:

Մինչ այդ Իտալիայում «սիմֆոնիա» անվանում էին երգեցղությունը ընդմիջող գործիքային դրվագները, նաև օպերային նախերգանքները, որոնք կատարվում էին և օպերայից առանձին: Մինչեւ Մանհայմում բյուրեղացավ դասական քառամաս սիմֆոնիայի ձևը: 1-ին մասն ալեգրո

1. Ի. Գ. Աբերտ, Վ. Ա. Մոցարտ, Մ., 1978, Վ. 1, հա. 1, ստ. 177-178, 355.

է (արագ տեմպ), 2-րդը՝ անդանտէ (քայլմբաց տեմպ), 3-րդը՝ մենուետ և 4-րդ մասը՝ արագմբաց ֆինալ:

Այսպես հատակացավ յուրաքանչյուր մասի դիմագիծը: Զեավորվեց նաև «մանհայմյան» կատարելառոճ, հնչութիւ կոնտրաստները, տևական աճը (կրեշենդո) և նվազումը (դիմինուենդո):

Մեղենին զարդարվեց նախշերով, «հոգոցներով» և այլն:

Հայդնն ավելի առաջ գնաց: Նա խորացրեց մինորի և մաժորի, թեմաների հակադրումը, թեմայի տրոհումը, մոտիվային մշակումը, զարգացրեց ոռնդունատային ձևը, որը շատ նպատակահարմար կառույց է ֆինալների համար: Ակտիվացրել է փողային նվազարանների փունկցիան սիմֆոնիկ նվազախմբում և այլն: Ընդլայնվել է տոնայնությունների և հարմոնիաների ոլորտը: Հրաշալի օրինակներից է օպուս 54, թիվ 1 կվարտետի երանավետ 2-րդ մասը, որը Հայդնը մեզ տանում է մի «ճանապարհորդության» տոնայնությունների աշխարհով: Այն սկավում է դո-մաժորից ու գմում մինչև հեռավոր տոլ-բեմոլ-մաժոր: Դա մի աստիճանական մոդուլյացիա է էնհարմոնիզմի միջոցով: Կվարտային տոնայնությունների այդ շրջապտույտը ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդկային հոգու նորանոր ոլորտների բացահայտում...

Հայդնը բյուրեղացրել է նաև դարակազմիկ մեղենիական դարձվածները, որոնք ասես ավերիզմներ լինեն: Եվ «քեսավոր խոսքներ» պես այդ ուղերձները հասել են կոմպոզիտորների գալիք սերունդներին:

Այսպես, «Տրիստանի» հարմոնիան, որը թևածում է Վագների համանուն օպերայում, Բերհովենի 5-րդ սիմֆոնիայի, «Ապասիոնատայի», «Ավորայի», «Կորիլովանի» և այլ երկերի թեմաները սկզբնավորվել են Հայդնի տոնատմերում, կվարտետներում և այլ տտեղծագործություններում: Իսկ քաջորակի և նվազախմբի համար գրված դո-մաժոր մեծ կոնցերտի 1-ին մասի 42-45 տակտերի դարձվածը հանդիպում ենք Վագների «Տրիստանում», Զայկովսկու 5-րդ սիմֆոնիայի 2-րդ մասում՝ զալարակողի մենավագում, ինչպես նաև Մալերի 5-րդ սիմֆոնիայի «Աղաջնտայում»: Հետաքրքիր է, որ Հայդնը, ազդելով Մոցարտի վրա, իր հերթին կրել է իրենից 24 տարի փորբ Մոցարտի ազդեցությունը, օրինակ, զգացմունքների նրբերանգների, ծևակառուցման կատարելության, քասի մեղենիացման (ըստ Յովիլ Կրեմլյովի<sup>2</sup>) ոլորտում:

Հայդնին անվանում են նաև «Կվարտետի հայր»: Սկսելով պարզ, մանրակերտ կվարտետներից՝ վերջին կվարտետներում նա մոտենում է Բերհովենի մեծակերտ սիմֆոնիկ կվարտետներին»:

Հայդնի օպուս 76, թիվ 2 կվարտետը, որ կոչվում է «Կվինտային», արդեն կարելի է բնորոշել որպես «քերիվենյան», քանզի ձայները, հասած

2. Ю. Кремлев, Йозеф Гайдн, стр. 228.

նուան պես, ասես ճեղվքում են լարվածությունից: Կվարտեսի «ափերը», քվում է, նեղ են էներգիայի նոր ալիքների առջև, և զուրակահարների ու ալտի նվազաբաժնում գոյանում են կրկնակի հնչյուններ, հզոր ակորդներ: Առեցուն և դինամիկ է նաև կվարտեսի, այսպես կոչված, «վիուզների մենուտը» թե՛ իր կանոնիկ շարադրմամբ, թե՛ հնչութի ծավալումով՝ երկու պիանոյից մինչև երկու ֆորտե:

Ավելացնենք փոխազդեցությունների մի քանի օրինակ ևս: 1791-ին իրատարակած Հայդմի դաշնամուրային մի-քենու-մաժոր սոնատի 1-ին մասի փոխկանչերը (53-56, 108-116 տակտերում) թերհովենի 5-րդ սիմֆոնիայի լայրմուտիկի նախատիպն են հանդիսանում: Նոյն սոնատի 1-ին և 2-րդ մասերում երաժշտագետ Կարլ Գեյրինգերը նկատում է Մոցարտի ազդեցությունը: 1767-ին գրված ուժ-մաժոր սոնատում զգացվում է Ֆիլիպ Էմանուել Բախի ոճը: Իսկ, այսպես կոչված, «Մեծ սոնատում» առկա է թերհովենյան հնչութ...

Հայդմին իրավամբ կարելի է անվանել խաղաղության, ժողովուրդների բարեկամության երգի, քանզի նա իր արվեստում օգտագործել կատարելագործել է ավատրիական, չեխական, սերբական, եռվագական, գրնչուական և այլ երգեր: Ի դեմ, մեխանիկական երգեհոնի համար Հայդմը ստեղծել է «Հունգարական ոգով» մանրանվազը, ինչպես նաև «Ռուսական պար» և այլ երգեր: Այս առումով ևս Հայդմը օրինակ է ծառայել հետնորդներին... Եվ այս ամենը վարպետն ամփոփել է պարզ, կառուցիկ ձևերի մեջ: Հայդմը ստեղծեց սիմֆոնիա, սոնատ, կվարտետ դասական ձևերը և ճանապարհ հարթեց դեպի թերհովենյան սիմֆոնիզմը:

Նա ապրեց երկար, բեղմնավոր կյանք, որի ընթացքում հասցրեց կատարելագործվել և պատվով իրագործել իր առաքելությունը: Նա կերտել է 104 սիմֆոնիա, 83 կվարտետ, բազում կոնցերտներ, օրատորիաներ, 30 օպերաներ, այդ քվում՝ «Դեղագործ», «Ակիս և Գալաքեա», «Ռուսական պալատին», «Լուսային աշխարհ», «Արմիդա» և այլն: 14 մեսսաներից նշենք «Սուրբ Նիկոլայ», «Սրբուհի Յեցիլիա», նաև երկու երգեհոնային մեսսա, «Փոքր մեսսա», երկու «Te deum», «Stabat Mater», 52 դաշնամուրային սոնատ և շատ ու շատ այլ երկեր:

Հայդմին ըստ արժանվույն են գնահատել և ժամանակակիցները, և հետագա սերումները: Կոմպոզիտորին նվիրված Յովի Կրեմլյովի մենագրությունում մեջքերպած են տարրեր ժամանակների երաժշտագետների, կոմպոզիտորների գնահատականները: Վալենտինա Կոննենը գրում է. «Հայդմի մեծագույն ժառայությունն այն է, որ նա առաջին ժողովեց նվազախմբային տարրեր ժամբերում, ուղղություններում, դպրոցներում սկիոված քազմաքիվ տարրերը և ստեղծեց միացյալ մի համակարգ, որ ոչ մի տարր մյուսներից անկախ գոյություն չունի: Հայդմի երաժշտաձևների բափանցիկությունը, հստակությունը, լակոնիկությունը այնքան կատար-

յալ են, որ առաջին հայացքից ձեզ թողնում է գրեթե պարզունակ տպավորություն»<sup>3</sup>:

Հատկանշական է Չայկովսկու խոսքը. «Ես շատ եմ հարգում պատկանելի, նոյնիսկ մեծ ծառայությունները, որոնք սիմֆոնիկ և կամերային երաժշտությանը մատուցել է այդ բարեհոգի ծերուկը: Հայդնն իրեն անհացընթաց է եթե ոչ հայտնագործությամբ, ապա տնատի և սիմֆոնիայի գերազանց, իդեալական, բնական ձևի կատարելությամբ, որը հետազայտմ Մոցարտը և Բեթհովենը հասցրին լիակատար ավարտվածության և գեղեցկության<sup>4</sup>: Չայկովսկին միաժամանակ նշում է Հայդնի սառնությունը, դիմամիզմի պակասը:

Հիրավի, կյանքի երեսուն տարիներին ապրելով և ստեղծագործելով Էստերհազի իշխանների պալատում՝ Հայդնը հեռու էր աշխարհի ալեքայումներից և, կարծես, թիկունքից էր դիտում «կենաց պատերազմը»:

Այս մասին ինքն էլ է խոստովանել, մինչդեռ Բեթհովենը պայքարի բովում էր:

Պատահական չէ, որ իր աշակերտին՝ ըմբուտ Բեթհովենին, Հայդնն անվանում էր «Մեծ Մոդը»:

Հայդնը խառնվածքով զուսպ էր և կենսուրախ, ինչպես և իր երաժշտությունը: Նոյնիսկ, եթե 1809 թվականին Վիեննայում ֆրանսիական արկերից մեկը պայքեց Հայդնի տաճ մոտ, կոմպոզիտորը տնեցիներին ասաց. «Երեխաններ, մի վախնցեք, այնտեղ ուր Հայդնն է, ոչ մի վատ բան չի կառող պատահել»<sup>5</sup>:

Ինչ խոսք, Էստերհազիի պալատում ևս «ամպամած» օրեր էին լինում: Ծառայության երկարուժիք տարիներից հետո, ազատության առաջին օրերին, Հայդնը գրում է Սարիաննա Գենցինգերին. «Օ, իմ գքամիրտ տիրուիի, այնուամենայնիվ, որքան քաղցր է փոքր-ինչ ազատությունը: Ես ունի լավ իշխան, բայց երբեմն ստիպված էի կախված լինել ստոր հոգիներից: Ես տնբում էի, երազում ճերբազատվել և ահա այժմ որոշ չափով ազատված եմ»<sup>6</sup>:

Հայդնը պալատում ուներ «հանապազօրյա» մի նվագախումբ և երգչախումբ ու միշտ կարող էր փորձարկել իր երաժշտական զաղափարները: Դա հազվագյուտ երջանկություն է կոմպոզիտորի համար: Նա նմանապես լավ վարձատրվում էր: Դա Աստծո ողորմածությունն էր մանկության օրերի զրկանքների դիմաց:

3. Անդ, էջ 285:

4. Անդ, էջ 9:

5. Անդ, էջ 280:

6. Անդ, էջ 202:

Հայդնի արևաշող արվեստը, որ սկզբում պարզ էր, «նախվ», հետզինուն մշուշփում է, հագենում պարետիկայով, դրամատիզմով:

Սակայն որքան էլ կյանքը բարդանար, որքան էլ կոմպոզիտորի սիրտն ալեկոծվեր, միևնույն է, նրամից «հերոսական սիմֆոնիա» չէր բխի: Պիտի զար թերհովենը՝ կյանքի դիալեկտիկական ըմբռնումով և արտացոլումով: Ժամանակն էլ պիտի հասունանար, որպեսզի կյանքի կոչվեն 5-րդ, 9-րդ սիմֆոնիաները, «Ֆիդելիո» օպերան... Եվ ընդհանրապես, Հայդնի հուսուով լի, լավատես խառնվածքին բնորոշ չէր ընդլավումը: Նա ինքն էլ խոստովանում էր, թե Աստված իրեն «որախ սիրտ» է պարզել:

Սոհասարակ, Հայդնը աստվածավախ մարդ էր: Նշելով Հայդնի չափավորությունը և ժումկալորթյունը՝ կենսագիրը հետաքրքրական մի փաստ է բերում: Կյանքի վերջին տարիներին կոմպոզիտորը ընթրիքին օգտագործում էր միայն հաց և գինի: Կարելի է ենթադրել, որ դա «փորիդրուավոր ընթրիքի» հեռավոր մի վերհուշ էր...

Մրտառուչ է նաև այն, որ ստեղծագործելուց առաջ և հետո Հայդնը հաճի ծնրադիր աղորում էր, խնդրում շնորհել ներշնչանք, Նարեկացու պես հայցում Տիրոջ օգնությունը ավարտին հասցնելու իր սկսած գործը: Այդպես էր և «Աշխարհի արարումը» օրատորիայի պարագայում: Հայդնն իր բարեպաշտությունը, երկրային կյանքի փիլխոսփայությունը, սերն առ Արարիչը, բնությունը, լավագույնս արտահայտել է իր վերջին օրատորիայում, որի մեջ տարվա եղանակները խորհրդանշում են մարդու երիտասարդությունը, հասունությունը, ծերությունը և մահը: Ամեն ինչ անցնում է, մնում է միայն առաքինությունը: Օրատորիան, ընդհանուր առմամբ, ներբող է ստեղծագործ աշխատանքին, մարդու և բնության ներդաշնակությանը...

Ֆրանց Շողեֆ Հայդնը ծնվել է 1732 թվականին Ավստրիայում, Լեյտա գետի ափին ծվարած Ռորառ գյուղում:

Բարեպաշտ ծնողներից տղան ժառանգել էր աստվածապաշտություն, աշխատասիրություն, քարեխանություն: Երաժշտական առաջին դասերը ստացել է իր բարեկամ Յոհան Ֆրանցից, որը տնօրինում էր մոտակա Հայնբուրգ քաղաքի դպրոցը և երգչախումբը: Այստեղ Հայդնը սկսեց երգել և նվազել փողային գործիքներ:

Մի առիթով Հայնբուրգ էր ժամանել Վիեննայի Սուրբ Ստեփանոս եկեղեցու երաժշտապետ Գեորգ Ռոյքերը, որը նկատեց Հայդնին և որոշեց նրան տանել Վիեննա: Եվ ուրամյա ծայնեղ տողային ընդգրկեցին եկեղեցու մանկական երգչախումբ: Ռոյքերից Հայդնը ստանում է ընդամենը երկու դաս: Այնուհետև ինքնուրույն ուսումնասիրում է Ֆուրսի և Մատտեզոնի տեսական աշխատությունները, սովորում է նվազել ջուրակ. դաշնամուր:

Ի դեպ, 1741-ին Վիեննայում վախճանվեց Անտոնիո Վիվալդին: Արդյոք իննամյա Հայդնը մասնակցե՞լ է մեծ իտալացու հոգեհանգստյան արարողությանը, որը տեղի է ունեցել հենց Սուրբ Ստեփանոս եկեղեցու: Ինչկատեցնելու համար Հայդնը շարունակում է երգել կապելլայում մինչև 1749 թվականը:

Զայնը բեկվելուն պես նրան ազատում են երգչախմբից: Երաժիշտը հետագա ութ տարիներին ստիպված է լինում մասնավոր դասերով, անսամբլներում նվագելով օրվա հաց հայրայիրել: Հետագայում Հայդնը պիտի խոստովաներ, թե կարիքը հանձար է ծնունդ: Մեկ այլ առիթով ասել է, թե հաց հայրայիրել շատ հանձարների տանում է կործանման, քանզի կատարելագործվելու համար այլևս ժամանակ չի մնում:

1753-ին Հայդնը ծառայության է ընդունվում իտալացի կոմպոզիտոր Նիկոլա Պորպորայի մոտ որպես երգեցողության դասերի նվագակցող և սպասավոր: Նա ստանում է նաև կոմպոզիցիայի դասեր: Ծանոթանում է Գյուլի, Վագենզեյլի և այլ կոմպոզիտորների հետ: Առաջիկա չորս տարիներին Հայդնը ստեղծում է իր առաջին գործերը՝ մեսսա, դիվերտիստներ, դաշնամուրային երկեր:

1755-ին հորինում է իր առաջին կվարտետները, որոնք կատարում են երաժշտասեր մեկնաս Կարլ Ֆյուրմբերգի կվարտետում, որտեղ Հայդնը ջուրակ էր նվագում:

Իսկ 1759-1761 թվականներին Հայդնը ծառայում է Չեխիայում, կոմս Սորգինի Լուկավիցե կալվածքում: Այստեղ էլ Հայդնը ստեղծում է իր առաջին սիմֆոնիան:

1761-ից սկսվում է Հայդնի ծառայությունը հունգարացի կոմս Էստերհազիի պալատում: Հայտնի է, որ նախկինում առաքինի իշխանները հապատանում էին ոչ այնքան հարստությամբ, ուժով, որքան արվեստասիրությամբ, հովանավորչությամբ, գեղանկարչությամբ, քանդակագործությամբ, նույնականացնելով իր առաջնահանդիսականությունը:

Զանազան միջոցառումները, պատկանադրությունը, հոբելյանները և այլ իրադարձությունները մշտապես ուղեկցվում էին երգ ու երաժշտությամբ, նոր գործերի շնորհանդեսներով....

Էստերհազիի պալատում Հայդնն ապրեց և ստեղծագործեց մինչև 1791 թվականը: Այս ընթացքում կոմպոզիտորը հորինեց քազմաքիլ կվարտետներ, սիմֆոնիաներ, օւերաներ, կոնցերտներ: Նշենք նաև 125 տրիոնները, ավելի քան քսան զուգանվագները, բարիտոն-նվագարանի և նվագախմբի երկու կոնցերտները, որոնցում բարիտոնը նվագում էր Նիկոլայ Էստերհազին: Եվ վերանում էր ծառա և իշխան տարրերությունը, դեռ ավելին՝ նրանք միասին ծառայում էին գեղեցիկին...

Շուտով Հայդնի համբավը տարածվում է Եվրոպայով մեկ: Փարիզում, Լոնդոնում, Ամստերդամում հրատարակվում են կոմպոզիտորի երկերը:

1781-ին լույս տեսան Հայդմի առաջին 12 երգերը: Նույն թվականին Վիեննայում տեղի ունեցավ Հայդմի և Մոցարտի հանդիպումը, որը վճռորշ էր երկու հանճարների համար, քանզի փոխադարձ ազդեցությունները հսկայական նշանակություն ունեցան երաժշտության պատմության համար:

Հայդմի նկատմամբ Մոցարտն իր երախտագիտությունը արտահայտեց նաև մի շարք լարային կվարտեսների ընծայումով, որոնք այդպես էլ կոչվում են «հայդմյան»:

1790-ին, կոմս Անտոն Էստերհազիի մահից հետո, կապելլան լուծարվեց, սակայն կոմպոզիտորի ծառայություններն այնքան մեծ էին, որ հետագայում Նիկոլայ Էստերհազի Սրանչելին նրան շնորհեց ցմահ քարձր թոշակ:

1790-ին Հայդմը Էստերհազիից տեղափոխվեց Վիեննա: Անգլիացի ջութակահար և ձեռներեց Փիբեր (Չոռն) Սալոննը հրավիրեց նրան Անգլիա, որտեղ մեկուկես տարվա ընթացքում Հայդմը տվեց քազմաքիլ համերգներ, ստեղծեց «Փիլիսոփայի հոգին» օպերան, «Որնդոնյան սիմֆոնիաների» առաջին վեցյակը և այլ երկեր:

1791-ի ամռանը Օքսֆորդի համալսարանը Հայդմին շնորհեց պատվավոր դոկտորի կոչում: Հաջորդ տարի տեղի ունեցավ մեկ այլ պատմական իրադարձություն՝ Հայդմը Բոննում հանդիպեց 22-ամյա Բերիովենին, որը դարձավ նրա աշակերտը:

Հայդմը երկրորդ անգամ այցելեց Անգլիա 1794-ին: Այս վերջին այցելությունը նշանավորվեց «Լոնդոնյան սիմֆոնիաների» երկրորդ վեցյակի ստեղծմամբ: Հորինեց նաև դաշնամուրային վերջին սոնատները: Նա շօգտվեց քազավոր Գեորգ Յ-րի: Անգլիայում մնալու առաջարկությունից: Եվ 1795-ին վերադարձավ Վիեննա, որտեղ և Բերիովենի կատարմամբ լսեց իրեն՝ Հայդմին նվիրված դաշնամուրային սոնատները:

1796-ից սկսվում է Հայդմի ստեղծագործական գործունեության վերջին շրջանը: Մեզը մյուսին հաջորդելով լոյս են տեսնում նրա մեսսաները՝ «Պատերազմական մեսսան» (լիտավորների հարվածներով) և «Սուրբ, սուրբ» մեսսան: 1798-ին «Նելսոն» մեսսայի կողմին վեր խոյացավ «Աշխարհի արարումը» օրատորիան, իսկ 1802-ին՝ «Հարմոնիա» մեսսան, որի անունը պայմանավորված է փողային նվազարանների ճոխությամբ: Մեսսաներին զուգահեռ Հայդմը կերտեց երկու օրատորիա:

18-րդ դարը պատկեց «Աշխարհի արարումը» օրատորիայով և «Թերեզա» մեսսայով, իսկ 19-րդ դարասկիզբն նշանավորվեց «Տարվա եղանակները» օրատորիայով և «Արարչագործություն» մեսսայով, որի մեջ օգտագործված են «Աշխարհի արարումը» օրատորիայի դրվագները:

Այս մեծակերտ կորողների կողմին կոմպոզիտորը ստեղծում է նաև այլ գործեր՝ «Ըեփորի և նվազախմբի կոնցերտ», տասը կվարտետներ: Վեր-

Զին կվարտեսող, որը թվով 83-րդն է, ունի երկու մաս: Այս անավարտ կվարտեսին կոմպոզիտորը կցել է մի զավեշտական «հետգրություն»՝ մեջքերեկ է իր իսկ «Ծերուկը» երգի մի դարձվածը հետևյալ խոսքերով. «Ուժերս հատել են, ես ծեր եմ և տկար»:

Այստեղ էլ Հայդնը հավատարիմ մնաց հումորին: Կյանքի վերջին տարիներին վարպետը շրջապատված էր մեծ հարգաճքով և հոգատարությամբ: Նրան շնորհում են զանազան կոչումներ, շրանշաններ...

1809-ին Վիեննայի համալսարանի սրահում մեծ շուրջով տոնեցին Հայդնի ծննդյան 76-ամյակը: Հնչեց «Աշխարհի արարումը»: Հանդիսությանը մասնակցում էր և Բեթհովենը: Օրատորիայի 1-ին մասից հետո վատառողջ Հայդնը ստիպված եղավ լրել դահիճը: Կոմպոզիտորին նվիրված վերոհիշյալ մենագրությունում նկարագրված է այդ հուզիչ տեսարանը: Երբ Հայդնը սկսեց դրդացնել, ազնվազարմ տիկնայր իրենց շալերով պարուեցին ծերունում: Ականա հիշում ես գեղեցկուի Արիսակին, որն իր անմեղ մարմնով ջերմացնում էր զառամյալ Դավիթ բագավորին...

Եվ նշված հանդիսությունից ուղիղ երկու ամսի անց, մայիսի 27-ին, ավարտվում է Հայդնի երկրային կյանքի ուղին:

Կոմպոզիտորի մահվանը գուգաղիպես նապոլեոնյան մարշալ Ժան Լաննի վախճաննը, որը վիրավորվել էր Վիեննայի մատույցներում: Նապոլեոնը ցնցված էր, և այդուհանդերձ, լսելով Հայդնի մահվան գույժը, կարգադրեց կոմպոզիտորի տաճ նոտ պատվո պահակ կանգնեցնել:

Այսպիսով՝ Նապոլեոնն էլ Սոլրատեսի ոճով կարող էր ասել. «Ավստրիան իմ քշնամին է, բայց ճշմարտությունն ավելի քանկ է»...

Իսկ Հայդնը, որ սիրում էր Հորացիոսի խոսքերը, հիրավի անմահ է, և նրա շիրմաքարին այդպես էլ գրված է. «Ես խսպառ չեմ մեռնի»...

## ՀԱՅԴՆ. «ՄԵՐ ԽԱԶՎԱԾ ՓՐԿՉԻ ՅՈԹ ԽՈՍՔԵՐԸ»

Երաժշտական արվեստը իր բարձունքներին հասավ, երբ «փարվեց» ու շաղախսվեց աստվածաշունչ կենարա խոսքերին՝ ի դեմք Բախի, Հենդելի, Հայդնի, Սոցարտի, Բեթհովենի և այլ մեծերի գլուխագործոցների: Սիևնույն սաղմոսը կամ ավետարանական դրվագը յուրովի է արտացոլվել տարբեր ժամանակների կոմպոզիտորների գործերում: Օրինակ, «Մեր խաչված Փրկչի յոթ խոսքերը» վերնագրով երկեր են հորինել Հայնրիխ Շյուտցը՝ 17-րդ, Յոզեֆ Հայնրին՝ 18-րդ, Սոֆյա Գուբայդուլինան՝ 20-րդ դարում: Ըստ որում, ինչպես նշում է Վալենտինա Խոյոպովան, որպես հանգերգ, Գուբայդուլինան իր հորինվածքում մեջքերում է Շյուտցի համանուն օրատորիայից մի դարձված, որ պարբերաբար հնշում է 1-ին, 3-րդ և 5-րդ մասերում<sup>1</sup>: Այս մեջքերել է նաև Թոմաս Բուխհոլցը՝ իր 7-րդ սիմֆոնիայում («Եխեու»):

Ահա չորս ավետարաններից քաղված այդ յոթ խոսքերը.

1. Երբ հասան գագար կոչված տեղը, այնտեղ նրան խաչը հանեցին, և շարագործներին էլ՝ մեկին աջ կողմը, մյուսին ձախ կողմը՝ խաչեցին: Եվ Հիսուս ասաց. «Հայր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անուա» (Ղուկաս, գլ. 23, 34)

2. Իսկ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա նայրը և նրա մորաքոյրը՝ Կղենվասի կիճ Մարիամը և Մարիամ Մագդաղենացին: Երբ Հիսուս տեսավ մորը և այն աշակերտին, որ մոտ էր կանգնած, որին նա սիրում էր, մորն ասաց. «Ո՛վ կիմ, ահա՛ քա որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քա մայրը» (Հովհաննես, գլ. 19, 26-27)

3. Իսկ կախված չարագործներից մեկը հայիսում էր նրան ու ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. Վիրկի՛ր ինքը քեզ և մեզ»: Նրա ընկերը նրան սաստելով՝ պատասխան տվեց և ասաց. «Աստծուց չե՞ս վախտենում, դու, որ նույն պատիմն ես կրում: Եվ մենք իրավացիորեն արժանի հատուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ սա որևէ վասրան չի արել»: Եվ ասաց Հիսուսին. «Հիշիր իմձ, Տեր, երբ զայ քո արքաքան չի արել»: Եվ ասաց Հիսուսին. «Հիշիր իմձ, Տեր, երբ զայ քո արքաքան յուրյամբ»: Եվ Հիսուս նրան ասաց. «Ծշմարդիա եմ ասում քեզ, այսօր ինձ եեւա դրախտում կլինեա» (Ղուկաս, գլ. 23, 39-43)

4. Եվ վեցերորդ ժամից սկսած ամբողջ երկորի վոյա խավար եղավ մինչև իններորդ ժամը: Իններորդ ժամի մոտ Հիսուս բարձր ձայնով գոյեց ու համարող ժամից: Իններորդ ժամի մոտ Հիսուս բարձր ձայնով գոյեց ու համարող ժամից: Իններորդ ժամից: Այսինքն՝ «Աստվածիմ, Աստվածիմ, իմ, իմը ու բաղեցիր իմձ» (Մատթեոս, գլ. 27, 45-47):

1. В. Холопова, Э. Рестанъо, София Губайдулина, М., 1996, стр. 201.

5. Այնուհետև Հիսուս, գիտենալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի կատարվի գրվածը, ասաց. «**«Ծարավ եմ»** (Հովհաննես, գլ. 19, 28-29):

6. Եվ այնտեղ քացախով լի աման կար. նրանք լեղախառն քացախով մի սպոնգ բրջեցին և այն դրին եղեգի ծայրին ու մոտեցրին նրա թերանին: Երբ Հիսուս լեղախառն քացախը բերանն առավ, ասաց. «**«Անեն ինչ կատարված է»** (Հովհաննես, գլ. 19, 29-30):

7. Եվ շորջ վեցերորդ ժամն էր. և խավար եղավ աճրող երկրի վրա մինչև իններորդ ժամը, արեգակը խավարեց: Եվ տաճարի վարագույրը մեջտեղից պատովեց: Եվ Հիսուս բարձրածայն աղաղակեց և ասաց. «**«Հայր, քո ձեռքն եմ ավանդում իմ եղանակին»** (Ղուկաս, գլ. 44-46):

Ավետարանի այս տիեզերական խոսքերը «արձանագրվել» են և գեղանկարչության մեջ (նաև՝ հայ): Վահան Տերյանն էլ «այաստան աշխարհն անվանել է «յոթնապատիկ խոցված տիրամայր»:

«Հիշենք նաև, որ 7 թիվը նախևառաջ խորիրդանշում է հենց Արարշին: Փրկչի յոր խոսքերի հիման վրա իր «յոթնապատումը» Հայոնը կերտել է 1785 թվականին: Այն հասցեագրված է լարայինների, փողայինների, լիտավորների նվազախմբին և բաս ձայնի ուժչտատիվմ: Գործը պատվիրել էր Քաղիքի եկեղեցին: Հայոնը այնքան էր սիրում այս ստեղծագործությունը, որ այն փոխադրեց լարային քառյակի, ինչպես նաև դաշնամուրի համար: Իսկ Անգլիա կատարած իր երկրորդ այցելությունից հետո այս գործը վերափոխեց մի փորբիկ օրատորիայի: Նվազախմբային տարրերակը բաղկացած է նախարանից, այնուհետև յոր մեկմասանի սոնատներից և վերջարանից:

Պարտիտորիի մեջ յուրաքանչյուր սոնատից առաջ, որպես բնարան, լստիմերենով գրված են Հիսուսի խոսքերը: Եվ նվազից առաջ ասմունքող ընթերցում է ավետարանի համապատասխան համարը, որը պարունակում է Փրկչի խոսքը:

Երաժշտագետ Յովի Կրեմլյովը նշում է Հայոնի աշակերտ Մոցարտի ազդեցությունը այս երկի վրա՝ մասնավորապես, մեղեդայնությունը և գորովանը<sup>2</sup>:

Ավելացնենք նաև «Ռեվիենմային» «ուն-մինոր» տոնայնությունը, ինչպես նաև նմանությունը նույն Մոցարտի «դու-մինոր» դաշնամուրային մեծ կոնցերտի 1-ին թեմայի պարետիկ պոռքկումին, որն արտահայտված է փոքրացրած սեպտիմա առանցքային ինտերվալի թոփշրով: Վառ կերպարներով առլեցուն Հայոնի այս գլուխգործոցում կարելի է լսել դեպի Գողգորա տանող ծանր քայլերը, Հիսուսի ձեռքերն ու ոտքերը խաչին գամող մուրճի հարվածները, Տիրամոր ողը, տաճարի վարագույրի պատըր-

2. Ю. Кремлев, Йозеф Гайдн, стр. 164.

վելը և Գողգոթայում կատարվածի այլ վկայություններ: Այս տեսարանները կատարելապես պատկերված են նաև Յոհան Սեբաստիան Բախի «Չարչարանքներ» ըստ Հովհաննոս» պասիոնում:

Ահավասիկ, տեսորի (թիվ 32) արիայի մասին Ալբերտ Շվայցերը գրել է. «Ժպիտ՝ արցունքի միջով: Թվում է, թե տեղափոխված ես մի դաշտ, ուր ծաղկում են զանգակածաղիկներ: Արիայի նվազարանային ճայնագծերի կամարներում երևում է մի ծիածան, որը սփռվում է մեղքերից սրբված աշխարհի վրա»<sup>3</sup>:

Հատկանշական է, որ Սոֆյա Գորբայդովինայի հիշյալ գործը Վալենտինա Խոլոպովան վերլուծելիս նույնպես համեմատություններ է անում ծիածանի հետ<sup>4</sup>: Մարդուն արարչի հետ հաշտեցնող այդ խաղաղատար ծիածանը, որպես լուսապսակ, շողշողում է և բրբում նաև Յոզեֆ Հայդնի այս բիբլիական ստեղծագործության հնչյունային տիեզերքում:

3. А. Швейцер, И. С. Бах, стр. 450.

4. В. Холопова, Э. Рестанъо, Софья Губайдулина, нոյն տեղում:

# ԱՌԵՖԱՄՎԱ ԱՍՏԳԵՈՒՄ ՄՊՅԱՐԾ (1756-1791)

## «ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԿԱՏԱԿԵԼՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ»

«Հաշամանուկ», «18-րդ դարի հրաշք», «Արևաշող հանճար»՝  
ահա բնորոշումներից մի քանիսը, որոնք տրվել են Մոցարտին:



Սակայն որքան էլ հնչեղ լինեն այս և այլ գնահատականները, միևնույն է, Ամադեուսը, այսինքն՝ Աստծո սիրեցյալը, վեր է այս ամենից: Որքան էլ փառաբանական խոսքեր շոայլենք, հասարակ մահկանացուներիս հիացական խոսքերն ի զորու չեն դույզն-ինչ պատկերացում տալու Մոցարտի մեծության մասին: Նույնիսկ Մոցարտի ժամանակակից Օ'Ջելլին դժվարանում էր նկարագրել կոնայողիտորին ու ասում էր. «Դա նույնն է, ինչ նկարել արևի ճառագայթ»: Ուստի փորձենք Մոցարտի կերպարը ուրվագծել իր գրչակիցների և այլ մեծերի օգնությամբ:

«Իմ խորին համոզմամբ, Մոցարտը այն բարձրակետն է, որին Գեղեցիկը երբեկ հասել է երաժշտության ոլորտում, — գրել է Պյոտր Չայկովսկին և շարունակել: — Ոչ ոք չի ստիպել ինձ արտասլել, իիացմունքից դողալ իդեալին նոտ լինելու գիտակցումից: Մոցարտի մեջ ես սիրում եմ ամեն ինչ, քանզի այն նարու մեջ, որին մենք իսկապես սիրում ենք, սիրում ենք ամեն քան: Ամենից շատ սիրում եմ «Դոն Շուան» օպերան, որովհետև դրա շնորհիվ ես իմացա, թե ինչ է երաժշտությունը»<sup>1</sup>:

Տարօրինակ է, բայց 19-րդ դարում «Դոն Շուանը» ըստ արժանվույն չգնահատվեց հոտակայում: Իտալացիք չեն ժխտում իտալերենով երգվող այդ օպերայի երաժշտության գեղեցկությունը, սակայն նրանց համար նոր օպերան անսովոր է: Պատահական չէ, որ Մոցարտին համարում են ժամանելու «պայքեցնող»: Ինչպես Շերսպիրը քատրոնում, այնպես էլ Մոցարտը օպերայում միահյուսել էր ողբերգականը և կատակերգականը, վեհը և առօրեականը՝ ինչպես դա լինում է իրական կյանքում: Մոցարտը այդպես էլ բնորոշել էր իր օպերայի ժամանքը՝ «դրամա ջոկովա», այսինքն՝

1. Б. Левин, Музикальная литература зарубежных стран, М., 1973, стр. 126-127.

որախ դրամա: Նոր կյանքի, նոր աշխարհայացքի մարմնավորումը արվեստում նոր ձևեր էր պահանջում, այլ կերպ, ինչպես ասում են, «Նոր գիմին կպատռեր իին տիկերը»:

Այսուամենայինվ, մեծ իտալացի Ռոսինիի մի արտահայտությունը հակաշռուց իտալացիների կարճատեսությունը: Այն հարցին, թե իր իսկ օվերաներից որն է ամենասիրելին, Ռոսինին պատասխանել էր. «Մոցարտի «Դոն Չուանը»:

Սոցարտը և իտալացիները խորապես հակադիր էին օվերային ժանրի էռոքյան նկատմամբ ունեցած իրենց հայացքներով: Սոցարտի օվերաներում ներկայացվում է կենդանի, զործող, զգացող, եռանդուն մարդը, իսկ իտալական օվերաներում գոյություն ուներ միայն մերասամը, պայմանական հերոսականությունը:

Սոցարտը նորարար էր, և դա պայմանավորված էր ապագայի նոր տեսմիլով: Ազգային ինքնափառակցության ձևավորման, անձի ազատության գիտակցման ժամանակներն էին, «Գրոհ և փորորիկ» գրական շարժման, Գյորեի «Ֆաուստ» դարաշրջանն էր: Դասական երաժշտության «Էպիկենտրոնը» Խտահայից պետք է տեղափոխվեր Գերմանիա: Եվ դա իրականացրեց Սոցարտը: Համակվելով միջերկրականածին արվեստի հովերով, իտալական մեղեդիների նրբագեղությամբ, ֆրանսիական երաժշտության արդուզարդով, յուրացնելով Բախի և Հենդեի բազմաձայնությունը, Ֆիլիպ Էմանուել Բախի տոնատային ձևակառուցումը, Հայդենի սիմֆոնիզմը, մանհայմյան դպրոցի նվաճումները, իր ավարտին հասցնելով Գյուլի բարեփոխությունները՝ Սոցարտը ստեղծեց իր դարակազմիկ ոճը:

Ազգային զարթոնքի առաջին «ծիծենակներից» էր Սոցարտի «Առևանգում հարեմից» զինզապիլ: Սա կոմիկական օվերա է՝ գերմանեն երկխոսություններով համեմատ, որտեղ, չնայած իտալական օվերային բնորոշ ավանդական բովանդակությանը, զգացվում է Սոցարտի բնարականությունը, հումորը, երոսների ծշմարիտ հովերանությունը:

Սակայն այս մի ծաղկով գարուն չեկավ: Խտալական օվերան դեռ իշխում էր, պալատական կոմպոզիտոր Անտոնին Սալերին շարունակում էր, ինչպես ասում են «Եղանակ ստեղծել»: Եվ Սոցարտը ստիպված էր տուրք տալ նաև իտալական օվերային:

Նրա մյուս օվերան՝ «Ֆիգարոյի ամուսնությունը», ավելի մեծ հաջողություն ունեցավ՝ Պրահայում, քան Վիեննայում:

Սի նամակում Սոցարտը վրդրվվում էր. «Գեր մեկ հայրենասեր դեկավար ունենայինք, ամեն բան այլ տեսք կունենար»:

Սոցարտի նորարարություններին կայսր Յոզեֆ 2-րդը հավանություն շեր տախս, և դա անհետևանք չեր մնում: Նույն կայսրն էր, որի կարծիքով «Առևանգում հարեմից» օվերայում շափից ավելի են նոտաները, և Սո-

ցարտը հանդգմել էր պատասխանել. «Նոտաները ճիշտ այնքան են, որքան անհրաժեշտ է»:

Նույնիսկ Մոցարտի հայրը՝ Լեոպոլդը, որ հայտնի կոմպոզիտոր էր, չեր ըմբռնում որդու մտքի թոփշը և դեմ էր 1773-ին ստեղծած Մոցարտի սոլ-մինոր սիմֆոնիայի հրատարակմանը՝ համարելով այն անարժան նի հորինվածք:

Մոցարտն առաջինն էր, որ ընդվզեց արվեստագետի կախյալ վիճակի դեմ: Եթե նրա ավագ ժամանակակից Հայդնը կարողացավ 30 տարի համբերել, վայելել Եստերհազի իշխանների հովանավորությունը, ապա Մոցարտը մի քանի տարի էլ չկարողացավ տանել Զալցբուրգի արքեպիսկոպուսի իշխան Կոլորենդոյի դաժան լուծը: Սակայն նմկավ մեկ այլ լօի՝ աղքատության ծիրանների տակ: Նոյն Հայդնն ասում էր, թե որքան հանձարներ է ծնել կարիքը և հակառակը՝ որքան հանճարների է կործանել հանապազորյա հաց վաստակելու հոգսը:

Մոցարտը քաջ գիտակցում էր, թե ինչ է իրեն սպասվում: Երբ նրա հրատարակին առաջարկում էր մատչելի երաժշտություն գրել, նա հրաժարվում էր՝ ասելով. «Ուրեմն ես այլևս ոչինչ չեմ վաստակի և պիտի քաղցեմ»:

Մոցարտի պարագայում աղքատությունը ոչ թե նվազեցրեց նրա շնորհը, այլ պարզապես կտրեց 36-ամյա հանճարի կյանքի թելը: Մոցարտագետներ Հերման Աբերտը, Ջիերինը այդպես էլ պնդում են, թե Մոցարտը պարզապես նահատակվեց, նահացավ աղքատությունից: Այս, նա գերադասեց մեռնել, բայց շնունդանալ «այս աշխարհի զորեղների» առջև, որոնց մասին ասում էր. «Մեծ բան չէ իշխան լինելը»: Եվ որքան էլ հայրը հորդրեց, նա ոչ մի նոտա չգրեց, ինչպես իմքն էր ասում, «երկար ականջներ ունեցողների համար»:

Մոցարտի երկրպագումներից մեկը, որը չէր կարողանում հաշտովել նրա վաղաժամ նահվան հետ, իր վարկածն է առաջարկել: Իրքև թե դրախտում նվազախումք էին կազմում, և անհրաժեշտ էր դեկավար, ուստի Աստված իր սիրեցյալ Ամադեոսին շոտառ տեղափոխեց երկինքը: Իրոք, երկնային է Մոցարտի երաժշտությունը: Նրա «Աղջոններում» բացվում է հանճարների արվեստում համդիպող այլքան հազվագյուտ «երաժշտածաղիկը»... «Կախարդական սրինգ» օպերայի նախերգանքի մասին Հերման Աբերտը գրել է. «Ամենացնցողն այդ Ալեգրոյում այն է, որ խորագույն լրջությունը զգեստավորված է թերեւագույն հանդերձանքով և ոչ մի տեղ չի հպվում հոդի ձգողության հետ»<sup>2</sup>:

Իրոք, Մոցարտի երաժշտությունը ճախրող է: Որպես Մոցարտի մտա-

2. Գ. Աբերտ, Վ. Ա. Մուսարտ, Մ., ս. 2, հի. 2, 1990, ստ. 304.

ծողության կարևորագույն հատկություն, «տարբերանշան», Զիշերինը նշում է ամբիվալենտուրյունը, այսինքն՝ երկու հակասական վիճակների հակադրամիասնությունը: Եվ օրինակ է բերում «Այդպես են վարդում բոլորը» օպերան, որտեղ «հին ու նոր սերը, ձգողությունը և վանունը, որը և վայելքը, հիացականը և քերահավատությունը մերը պայցարում են, մերը միահյուսվում, մեր կազմում ավելի խոր օրգանական միաձույր»: Իսկ օպերայի առաջին հրաժեշտի կվինտետը և ֆինալը երաժշտագետը բնորոշում է որպես «քողերյան երկինք և դժոխք»: Դեռ պատանեկան դաշնամուրային ֆա-մաժոր տնատում (K 332) Զիշերինը նկատում է մոցարտյան հակադրությունները՝ սկ-սպիտակ, լուսավոր-մոռայլ, երանություն-խոռոչ, դրախտ-դժոխք: Փոխեփոխ հնչող այս քենոները հետազայտում հասուն գործերում հնչում են միաժամանակ: Այս իմաստով Մոցարտին համեմատում են Լեոնարդո դա Վինչիի հետ, որն ի դեմ առեղծվածային Չոկոնդայի, միավորել է անմեղությունը և բարոսուիո կրորությունը: Չուզահեռ են անցկացնում նաև Մոցարտի և Շերամիի միջև:

Ի դեպ, հակադրամիասնության դրսորումները հանդիպում ենք դեռ իին հոռմեացի բանաստեղծ Կատովլովի պոեզիայում, «Odi et amo» («Ատում եմ և սիրում») հայտնի բանաստեղծության մեջ: Իսկ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում այդ «սրտի դիալեկտիկան» հասնում է կատարելության: Մեզ մնում է ավելացնել, որ հակադրամիասնությունը, որը դիմամիկայի լարվածության հզոր միջոց է, լավագույնս դրսորվում է երաժշտության ոլորտում, քան որևէ արվեստում: Հիրավի, 4-5 դերասանների միաժամանակ խոսնլ, վիճնը ամհերերություն կլիներ, մինչեւ երաժշտության մեջ նման բազմաձայնությունը գորեղ արտահայտչամիջոց է: Որպես ցնցող օրինակ Զիշերինը նշում է Մոցարտի վերջին կվարտետներից մեկը՝ Ֆա-մաժորը (K550): Հենց կյանքն ինքն է բազմաձայնություն և հավերժական շարժում: Ոչ մի արվեստ ի զորու չէ այդքան ճշգրիտ և ազդու վերարտադրելու կյանքի եռթյունը, որքան երաժշտությունն իր բազմավտակ հնչյունային «գետերով», «ջրվեժներով», երաժշտությունը, որը փիլխոփաս Ալեքսան Լուսեղ բնորչել է որպես «ձևակորված քառոս»: Այնքան համարուն են փիլխոփայի խոսքերին Տյուտչևի հետևյալ տողերը, որ Զիշերինը երկու անգամ վկայակոչում է իր հակիրդ ուսումնասիրության մեջ, մասնավորապես «Ֆիզարոյի ամուսնությունը» օպերայի հերոս՝ սիրով կրօռվ բռնկված Զերութինոյին բնութագրելիս՝

Օ, մի երգիր այդ երգերն ահավոր,  
Նրանցում նախաստեղծ քառս է շարժվում...

Մոցարտն էլ իր հոգու կամքը կատարեց՝ Երկրային իր կյանքն ի սպաս դրեց հավերժին: Ըստ Արերտի, կոմպոզիտորը ոչ թե ինքն էր հարմարվում արտարին կյանքին, այլ հակառակը, նրա ներքին ստեղծագործական մնումն էր պայմանավորում, ձևավորում իր արտարին կյանքը, քանզի Մոցարտը Երկնային ուժերի մի անոք էր, որի մեջ ալեկոծվում էին իր Վրա իշխող ստեղծագործ ուժերը: Ահա այս ուժերն են, որ Գյորեն բնորոշում էր որպես դեմոնիզմ, և մոցարտագետներն այն դիտում էին որպես Մոցարտի անձի և ողջ ստեղծագործության կարևորագույն հատկությունը և շարժիչ ուժը:

Մոցարտի ներանձնական և արտարին կյանքի բախումը ողբերգական էր, և թախծի առկայութումները, որ պարուղում են «Կախարդական սրինգ» արևաշող օպերան, Արերտը բացահայտում է Երկրային կյանքում իդեալի անհասանելիությամբ:

Կոմպոզիտորի ողջ գիտակցական կյանքը և գործունեությունը կենաց և մահու մի Երկխոսություն էր, անզիջում պայքար ստեղծագործական բոլշըր կաշկանդող ուժերի դեմ:

Չիչերինը նշում է, որ 17 տարեկանից Մոցարտի կյանքը և արվեստը համակվում են ողբերգականության զգացումով, որը նրա կյանքի վերջին հինգ տարիներին վերածվեց տիեզերական ողբի և ժայթքեց իր արվեստում:

Դեռ 1772-ին Զալցբուրգում ստեղծած լա-մաժոր սիմֆոնիայի լուսավոր «Անդամտեում» անսպասելի տեսչություն է սանդարամնելի վիճը և ջանում լույսի շողերից...

Ըստ Մոցարտի՝ մարդկայինը և տառապանքը հոմանիշներ են:

1777-ին 21-ամյա Մոցարտը Մանհայմից գրում է հորը. «...Երջանկությունը լինում է միայն Երևակայության մեջ»: Մեկ տարի անց նոր հանկարծակի մահվան կապակցությամբ Փարիզից գրել է. «Երեք քան է ինձ միսիթարում» Աստծո կամքին բացարձակ վստահելը և ներարկվելը, այնուհետև՝ մայրիկի թերեւ, գեղեցիկ մահը, որ ինձ ներշնչեց, թե որքան երջանիկ է լինելու նա մեկ ակնբարք հետո: Ես էլ ցանկացանք նրա հետ հեռանալ և այդ տեսնանքից բիսեց իմ եղրդող սփոփանքը, այն, որ մեզ համար նա ընդմիշտ կորած չէ, և մենք բոլորս միասին երբեւ կլինենք ավելի երջանիկ, քան այս աշխարհում»: Իսկ 1787-ին հորն ուղղված վերջին նամակում ամբողջանում է մոցարտյան մահվան փիլիսոփայությունը. «Զանի որ մահը, եթե լինենք ճշգրիտ, իրոք մեր կյանքի վերջնական նպատակն է, ապա ես մի քանի տարի է այնքան եմ մոտեցել նրան՝ մարդկանց այդ խական և լավագույն բարեկամին, որ նրա կերպարը բնավ չի վախեցնում ինձ, այլ հակառակը, հանգստացնում է և միսիթարում: Ես ես շնորհակալ եմ Աստծուց, որ նա երջանկացրեց ինձ, ինարավորություն տալով ի դեմս մահվան, տեսնել ճշմարիտ երանության բանալին: Որքան էլ ես Երիտա-

սարդ եմ, երբեք չի լինում մի օր, որ քննելուց առաջ շնորհենք, որ առավոտյան կարող է շարժնանամ: Եվ ոչ մեկը չի կարող ասել, որ ես մոռայ եմ և տխուր... Եվ ի սրտե ցանկանում եմ այդ երանուրյունը յուրաքանչյուր մերձավորին»<sup>3</sup>: Ահա այստեղից է բխում, Գարեգին Նժդեհի խոսքով ասած, «մահվան հետ կատակելու աստվածային արվեստը»:

Վոլֆգանգ Ամադեոս Մոցարտը ծնվել է 1756-ի հունվարի 27-ին, Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում: Մոցարտի լրիվ անունն է Յոհան Քրիզոսոս Վոլֆգանգ Թեոֆիլ: Եվ կոմպոզիտորը արժանի էր իր Քրիզոսոս անվանը՝ հիրավի Ռուկերերան և Աստծո սիրեցյալ: Մոցարտի առաջին ուսուցիչը հայրն էր՝ կոմպոզիտոր և ջութակահար Լեոպոլդ Մոցարտը, որը ծառայում էր Զալցբուրգի արքապիսկոպոսի կապելլայում: Հետագայում պատաճին հարստացրեց իր գիտելիքները՝ շփվելով Յոզեֆ Հայնրի հետ: Մեծ դեր խաղաց Մոցարտի կյանքում նաև հանդիպում Յոհան Քրիստիան Բախի հետ: Ավելի քան մեկ տարի, լոնդոնյան ելույթներին զուգահեռ, 8-ամյա Վոլֆգանգը դասեր է ստացել Յոհան Քրիստիանից: Թերևս ավելի կարևոր էր այն, որ որդու միջոցով Մոցարտը ծանոթացավ հոր՝ Յոհան Սեբաստիան Բախի արվեստին:

Հիշարժան է նաև, թե ինչպես փոքրիկ Վոլֆգանգը Սուրբ Շովմաս եկեղեցուն կից դպրոցում իր ծնններին, արուներին, սենյակի հատակով մեկ սփոռել էր Սեբաստիան Բախի երկերի նոտաները (ձայններն առանց պարտիտուրի): Նրա հայացը «քռչկոտում էր» քերքից քերք, տակտից տակտ, ինչպես մեղուն՝ ծաղկից: Սեբաստիանը, զմայլված, քարանում էր: Եվ ինչպես բանաստեղծը կասեր, «պախրան ջուր է խմում լճակից, բն՝ համբուրում ջինջ լճակի հայելին», ծարավի Վոլֆգանգը անհապ «խմում էր» Բախի արվեստի «ավագանից» (խորհրդանշական է, որ «քախ» գերմաներեն նշանակում է «առվակ»): Եվ Մոցարտի այս հաղորդությունը վեհ երաժշտության հետ անցնջելի հետք քողեց նրա կյանքում և արվեստում: Հետագայում կոմպոզիտորը տարբեր գործիքների համար փոխադրել է Բախի հինգ քառածայն ֆուգաները՝ «Լավ տեմպերացված կլավիրից», ևս հինգ եռաձայն ֆուգաներ և այլն: Բացի այդ, Բախի ազդեցությամբ նաև ձևավորել է իր պոլիֆոնիկ ոճը: Բազմածայն կերտվածքի բացառիկ օրինակներ ենք հանդիպում Մոցարտի երկու դաշնամուրի համար գրված ֆուգայում, կվարտետում, «Յուպիտեր» սիմֆոնիայում, «Ուեբվիեմի» ֆուգաներում և այլուր: Մոցարտի ֆենոմենալ երաժշտական ընդունակություններն ի հայտ են եկել դեռ 4 տարեկանում, իսկ 6 տարեկանից նա ըսկանեց իր ստեղծագործական և համերգային կյանքը՝ քրոջ հետ՝ հոր դե-

3. Լիերձ Շուլը, Եсли бы Мозарт вел дневник, Будапешт, 1963, стр. 77.

կավարությամբ: Յ տարի շրջագայեցին Եվրոպական Երկրներով: Վոլֆ-գանգը վարպետորեն նվազում էր կլավեսին, ջութակ և երգեհոն: Առաջին սիմֆոնիան նա գրել է 8 տարեկանում: 10 տարեկանում Վոլֆգանգը մասնակցեց «Առաջին պատվիրան» հոգևոր քատերգության ստեղծմանը, իսկ 11-12 տարեկանում հորինեց առաջին օպերաները՝ «Ապոլոնը և Հիակին-բոսը», «Բաստիենն ու Բաստիենան»:

Երկու տարի անց Զալցբուրգի մեկնեցին Վիեննա, այնուհետև՝ Իտալիա: 14-ամյա Մոցարտն ընտրվեց Բոլոնյայի և Վերոնայի ֆիլհարմոնիկ ակադեմիաների անդամ: Հոռմի պատր պատանուն պարգևատրեց «Ուսկե խթան» շրանշանով, իսկ Միլանի քատրոնը պատվիրեց նրան «Պոնտոսի քագավոր Միլրուատը» հերոսական օպերան:

1770-73 քվականներին հայր և որդի Մոցարտները երեք անգամ այցելեցին Իտալիա: 1772-ին Միլանի քատրոնը պատվիրեց 2-րդ հերոսական օպերան: «Լուցիո Սուլլան»: 1773-ին կոմպոզիտորը վերադառնում է հայրենիք: 1774-ի դեկտեմբերին Մյունխենից ստացավ պատվեր և Ամանորի պարահանդեսի կապակցությամբ Մոցարտը ստեղծեց «Կարծեցյալ այգեպանուիին» օպերան: 1778-ին Մոցարտը կատարեց Զալցբուրգի արքային կոպուադուից՝ կոմս Կոլորեդոյի լծից ազատվելու իր առաջին փորձը: Հյուրախաղերի մեկնեց Մյունխեն, Մանհայմ, այնուհետև՝ Փարիզ, ուր ժամանել էր օպերային ժանրի քարեփոխիչ Գլուկի և Պիշինի կողմնակիցների միջև պայքարը:

Փարիզում նրան անուշադրության մատնեցին: Իտալիայի և Ֆրանսիայի անտարբերությունը Հերման Աքերտը որակում է որպես Մոցարտի գեղարվեստական պարտություն: Սակայն պատմությունը ցույց տվեց, որ դա ոչ թե Մոցարտի, այլ նրա արվեստի հմայքը չհասկացողների պարտությունն էր: Եվ մինչ վիճաքանում էին, թե որն է օպերայում կարևորը՝ երաժշտությունը, թե պոեզիան, Մոցարտը մեկը մյուսի հետևից ստեղծում էր իր գոյխազդողները:

1780-ին Մյունխենի քատրոնը Մոցարտին պատվիրեց «Իդոմենիս» հերոսական օպերան, որը նորարարության պատճառով խանդավառություն չառաջացրեց:

Ընդունված է կոմպոզիտորների ստեղծագործությունը և կյանքի ուժին քաժանել երեք շրջանի: Սակայն Մոցարտի երկրային կյանքն այնքան կարճատև էր, որ այն քաժանում են երկու շրջանի՝ վաղ և հասուն, և եզրագիծն էր «Իդոմենիս» օպերան:

Մոցարտի վերջին հանգրվանն էր Վիեննան՝ դասական երաժշտական դպրոցի օրրանը, որի հիմնադիրներից էր նա: Այստեղ էլ տեղի է ունեցել Մոցարտի և Բեթհովենի պատմական հանդիպումը: Մոցարտի դաշնամուրային դո-մինոր կոնցերտի կատարման առիրով Բեթհովենը խոստովանել է. «Կրամեր, մենք երբեք նման որևէ քան չենք կարող ստեղ-

**ծելը»<sup>4</sup>:** Բերիովենը հետագայում մեծ սիրով կատարում էր Մոցարտի երկերը, կոմպոզիտորի այրի Կոնստանցային նյութական օգնություն ցուցաբերելու նպատակով կազմակերպված համերգին, «Տիտուսի ողորմածությունը» օպերայի գործողությունների միջև նա կատարեց Մոցարտի դաշնամուրային ռե-մինոր կոնցերտը: Վիեննայում Մոցարտը կերտեց ու կատարեց իր վերջին անմահ կորողները՝ «Դավիթի զջումը» օրատորիան, «Թատրոնի տնօրենը» կատակերգական օպերան, «Անևանգումը հարեմից», «Ֆիզարոյի ամուսնությունը», «Այդպես են վարվում բոլորը» օպերաները, վերջին երեք սիմֆոնիաները, հայտնի «Ռեքվիեմը» և այլ գործեր: Վիեննայից Մոցարտը պարբերաբար մեկնում էր հյուրախաղերի: Լինց քաղաքում նա կատարեց «Լինց» սիմֆոնիան, Պրահայում հնչեց ռե-մինոր համառուն սիմֆոնիան (առանց մենուետի), նոյն Պրահայում տեղի ունեցավ «Դոն Շուան», «Տիտուսի ողորմածությունը», «Կախարդական սրինգ» օպերաների այլնմիերաները: Լինելով շուրջ 20 օպերաների, ավելի քան 40 սիմֆոնիաների, 31 դիվերտիսմենների, 25 դաշնամուրային կոնցերտների և այլ երկերի հեղինակ՝ Մոցարտն իրեն համարում էր եկեղեցական կոմպոզիտոր, ինչպես դա նշել է կայսեր Լեոպոլդ 2-րդին և Վիեննայի նագիստրատին ուղղված նամակներում: Այդ մասին վկայում են Մոցարտի 19 մեսսաները, 4 աղոքերգերը, կամտատները, մոտետները, երեք եկեղեցական սոնատները՝ երգեհոնի և լարային նվազախմբի համար, Սագնիֆիկատը և այլ հոգևոր ստեղծագործությունները:

1791-ին նոյեմբերի 18-ի համերգը վերջինն էր Մոցարտի կյանքում: Դեկտեմբերի 5-ին նա վախճանվեց: Մահվան օրը Մոցարտը արտավագին դիմել էր իր աշակերտ Ջուսայերին. «Ասում եմ, չե՞», որ այս «Ռեքվիեմը» ինձ համար եմ գրում»: Եվ, կարծես ինքն իրեն սիրու տալով, սկսեց երգել Պապագենոյի արիան «Կախարդական սրինգ» օպերայից՝

Թոշուն որսող եմ ես հայտնի,  
Սիշտ զլարք եմ և ուրախ,  
Ահել, ջահել ինձ գիտեն,  
Թեպետ հարուստ չեմ քնավ:

Չիշերինը մեջքերում է Պառվ Բեկերի հետևյալ միտքը նորարարության մասին. «Մոցարտը արվեստագետներից առաջինն էր, որն իր ողջ կյանքը նվիրեց սեփական ազատության միման, իր կամքի նվաճմանը և պահպանմանը: Առաջինն էր, որն արվեստը դարձնում է իր անձի անմիջական արտացոլումը և գաղափարական բովանդակությունը»<sup>5</sup>:

4. А. Альшванс, Бетховен, М., 1971, стр. 261.

5. Г. Чичерин, Моцарт, стр. 74.

Ուրեմն կարելի է ասել, որ Մոցարտի ստեղծագործությունն իր ինքնարտահայտումն է, ինչ-որ իմաստով՝ կոմպոզիտորի «ինքնանկար»։ Հանձին Մոցարտի՝ կյանքն է խոսում, տիեզերը է հորդում և հարթահարելով ինը՝ հաստատում է նորը։ Իրականության խոշնդուսները, բախումները առաջ էին բերում այն ողբերգականությունը, որով շաղախված է Մոցարտի արվեստը։ Անշուշտ, Մոցարտի կյանքի և արվեստի շարժի ուժն էր նաև սերը, որի մասին Արերտը գրել է. «Հանճարի մոտ սերը միանգամայն այլ կերպ է արտահայտվում, քան «ոչ արվեստագետի»... Կիրքը ի ծնե է տրված հանճարին, և նրա բոցավառման համար բնավ անհրաժեշտ չեն հատուկ պայմաններ... Բնրիովենը չէր պատկերացնում իր կյանքն առանց սիրո»<sup>6</sup>:

Ծիշտ այդպես էլ Մոցարտի սրտում միշտ ապրում էր սիրո ձգտումը։

Ստեղծագործողի մոտ գիշավորն այդ ձգտումն է։ Մոցարտին այդպես էլ տրված չէր իրականացնելու իր երազանքը։ Նրա առաջին սերն էր երգչուիի Ալիդիա Վերերը, որին նա նվիրել է համերգային հայտնի մեծակերտ արիան։ Սակայն կոմպոզիտորի ծնողները տապալեցին այդ սերը։ Ալիդիայի բրոց՝ Կոնստանցայի հետ ամուսնությունը չմիշիքարեց Մոցարտին։ Այդուհաներձ մինչև կյանքի վերջը նա սիրավիր ու հավատարիմ մնաց իր կնոջը։ Եվ կյանքի հարգանքներին Մոցարտը պատասխանեց իր արվեստով՝ ստեղծելով «Երկրորդ իրականությունը», որն ավելի իրական է և հարատէ, քան շրջապատող կյանքը։ Հոգու խորխորատներից, սեփական ապրումներից նա վերստեղծեց իր երաժշտական կերպարները և իր անկատար երազները իրականացրեց արվեստում։ Պատահական չէր, որ նա դիմեց Ֆոմարշեի արգելված «Ֆիզարդի ամուսնությունը» կատակերգությանը։ Արգելված, քանզի խարազանում էր միշնադարյան հոռի բարձերը, մասնավորապես «առաջին ամուսնական գիշերվա» իրավունքը։ Եվ Ֆիզարդ ծառան շրջանցում է իշխան Ալմավիկայի այլ արատավոր իրավունքը ու ամուսնանում իր սիրեցյալի՝ Սյուզաննայի հետ։

Մոցարտի օպերաներում տեղի են ունենում «սիրո փոխակերպումներ»։ Կոմպոզիտորը արտացոլել է ոչ թե «պատրաստի, հարուցված կյանքը, ոչ թե հասարակության կողմից իրեն հարմարեցրած մարդուն, կամ թե ինչպիսին պետք է լինի իդեալական մարդը, այլ տիեզերական ուժերը, որոնք իշխում են համայն մարդկության վրա։

Արերտը բացահայտում է սիրո մոցարտյան ըմբռնումը։ Սերը մի նախատեղ, բնական, ճակատագրական ուժ է, որը վեհացնում է կամ նսնացնում մարդուն, ըստ այն քանի, թե ինչպիսի այլ ուժերի հետ է այն բախվում մարդու հոգում։

6. Գ. Աբերտ, Վ. Ա. Մուսարտ, Մ., գ. 2, հն. 1, 1989, ստ. 16.

Այսպես, կոմպոզիտորի սերմ առ Ալիջիա Վերերն իդեալական էր, իսկ Մարիա Թեկլայի հանդեպ՝ բնազդական, մարմնական, և դա արտահայտվում էր նոցարտյան տարօրինակ կատակներում ու նամակներում:

Երաժշտագետը գուգահեռ է անցկացնում Սոցարտի և նրա կերտած հերոսների միջև։ Կոմպոզիտորի մեջ միաձուլված են և Դոն Շուանը, և Ֆիգարոն, և Մշտապես սիրահարված Քերուքինոն։ Սոցարտը և Պապագենոն է, և արքայազն Տամինոն, որը հաղթահարելով բազում փորձություններ, ի վերջո գտավ իր սիրեցյալին։ Եվ Տամինոյի ուկե սրինգը այսօր էլ հաղթահարում է չարը, մարդկանց քշնամանքը Վերափոխում միու։ Այդպիսին է և Սոցարտի ողջ արվեստը։

## ԳԱՐԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ. ՄՊՑԱՐՏԻ «ԲԱԽԻԱՆԱՆ»

«Մենք բոլորս Բախի գավակներն ենք», խոստովանել է Ֆեյիքս Սենդլելսոնը: Երախտագիտության այս դրսերումը վկայում է երաժշտության հետագա զարգացման վրա Բախի արվեստի հզոր ազդեցության մասին: Այս իմաստով, Բախի արժանի ժառանգներից է Վոլֆգանգ Ամադեոս Մոցարտը: Բախական է նշել Սոցարտի «Ռեքվիեմի» ֆուգաները, «Յուպիտեր» սիմֆոնիայի ավարտը, երգեհոնային գործերը...

Բախի արվեստի հետ Սոցարտի առնչությունների մասին տեղեկանում ենք նաև Հերման Աքերտի «Սոցարտ» մենագրությունից:

1782 թվականի ապրիլի 10-ին հորը հասցեագրված նամակում Սոցարտը Վիեննայից գրել է. «Յուրաքանչյուր կիրակի ժամը 12-ին ես գնում եմ քարոն Ֆոն Սվիտենի մոտ, այնտեղ Հենդելից և Բախից բացի ոչինչ չեմ նվագում: Ի դեպ, ես ինձ համար կազմում եմ Բախի ֆուգաներից մի հավաքածու՝ թե՛ Սերաստիանի, թե՛ Էմանուելի և Ֆրիդերիկի ...»: Որոշ ժամանակ անց Սոցարտը գրել է քրոջը. «Բարոն Ֆոն Սվիտենը, ուս համդիպում եմ յուրաքանչյուր կիրակի, ինձ տրամադրել է Հենդելից և Բախի բոլոր ստեղծագործությունները (բարոնի համար նվագելուց հետո...)»<sup>1</sup>:

Ո՞վ էր բարոն Ֆոն Սվիտենը, որին Բեթհովենը նվիրել է իր 1-ին սիմֆոնիան:

Նա Ավստրիայի դեսպանն էր Բեռլինում, բացի այդ վարել է մի քանի պաշտոններ: Կայսերական գրադարանի տնօրենն էր, լուսավորության և գրաքննության հանձնաժողովի նախագահը, նաև Երաժշտություն էր իր իրմում: Բարոնը կազմակերպել էր նաև դասական «Երաժշտության հոգաբարձուների ազնվական ընկերությունը», որի նպատակն է հաղորդակցից լինել մեծ արվեստին: Կայսերական գրադարանի համերգներում Սոցարտը հանդես էր գալիս որպես նվագող, դիրիժոր, բացի այդ, վոկալ քայլակում երգում էր ալտի երգարածինը և միաժամանակ նվագակցում: Ըստ Աքերտի, ի տարբերություն այլ մեկնամաների, բարոն Սվիտենը շահազանց ժլատ մարդ էր: Մեծապես օգտվելով Սոցարտից, նա մնաց անտարեր և մեղավոր էր, որ Սոցարտի գերեզմանը այդպես էլ անհայտ մնաց:

Սվիտենի համերգներին Սոցարտի դեկավարությամբ հնչել են Ֆիլիպ Էմանուել Բախի «Քրիստոսի Հարությունը և Համբարձումը», Հայդնի «Տարվա եղանակները», «Աշխարհի արարումը», որի լիրետոն գրել էր նոյն բարոն Ֆոն Սվիտենը: Բացի այդ, «Ազնվական ընկերության» համար Սոցարտը մշակել էր Հենդելի «Ակիս և Գալատեա», «Սնսիա», «Ներ-

1. Անդ, էջ 87:

բող սրբուիի Յեցիլային», «Ալեքսանդրի տոնախմբությունը» և այլ գործեր: Նույն նպատակների համար Մոցարտը փոխադրել էր և Սեբաստիան Բախի ֆուգաները: Մոցարտի խնդիրն էր ցույց տալ Բախի հանճարեղ պոլիֆոնիկ վարպետությունը:

Ուստի Բախի «Լավ տեմպերացված կլավիրի» ֆուգաներից մի քանի սղ նա փոխադրել է լարային քառյակի համար: Զայների նման դերաբաշխումը չորս տարբեր կատարողի միջև անհատականացնում է յուրաքանչյուր ձայնի հոսքը, առավել շոշափելի կերպով գծագրում ձայների հարաբերակցությունը:

Ըստ երաժշտագետ Ալֆրեդ Էյնշտեյնի, կվարտետի համար Մոցարտը փոխադրել է Բախի հինգ, նույնիսկ վեց ֆուգաները: Բացի այդ, Մոցարտը փոխադրել է ևս վեց ֆուգա՝ ջուրակի, ալտի և քավչուրակի համար:

Հետևելով Բախին՝ Մոցարտը յուրաքանչյուր ֆուգային կցել է մի հանդարտ մաս, որը ալբեմուի դեր է խաղում և ֆուգայի հետ կազմում մի ցիկլ:

Այսպիսով, վեց նման զույգերից կոմպոզիտորը ստեղծել է մեկ ամբողջական շարք, որը մենք կանկանեինք Մոցարտի Բախիանա:

Ահա այդ շարքը:

1-ին՝ Աղաջոն ուն-մինոր և ֆուգա թիվ 8, «Լավ տեմպերացված կլավիրի» 1-ին հատորից: Ընդ որում, ֆուգայի մի բեմոլ-մինոր տոնայնությունը Մոցարտը փոխել է ուն-մինորի՝ հարմարեցնելով Աղաջոյին:

2-րդ՝ Աղաջոն սոլ-մինոր և ֆուգա թիվ 14, սոլ մինոր, «Լավ տեմպերացված կլավիրի» 2-րդ հատորից:

3-րդ՝ Աղաջոն ֆա-մաժոր և ֆուգա ֆա դիեգ-մաժոր, թիվ 13՝ «Կլավիրի» 2-րդ հատորից» փոխադրված ֆա-մաժոր:

4-րդ՝ Աղաջոն ֆա-մաժոր, որը Մոցարտը վերցրել է Բախի երգեհոնային 3-րդ սոնատից և կցել Բախի «Ֆուգայի արվեստ»ի թիվ 8, ուն-մինոր ֆուգային:

5-րդ՝ Լարգո մի բեմոլ-մաժոր և ֆուգա դո-մինոր. թե՛ լարգոն, թե՛ ֆուգան Մոցարտը վերցրել է Բախի երգեհոնային 2-րդ սոնատից:

6-րդ՝ Աղաջոն ֆա-մինոր և ֆուգա ֆա-մինոր:

Այս ֆուգան պատկանում է Վիլհելմ Ֆրիդենան Բախի գրքին:

Այսպիսով, այս շարքից Մոցարտին են վերագրվում 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ Աղաջոնները: Վերագրում են, քանզի մինչ այժմ չեն լուծված տարածայնությունները Աղաջոնների հեղինակի վերաբերյալ:

Բախի ֆուգաները լարայինների համար փոխադրել են շատերը, մանականդ 19-րդ դարում, այդ թվում նաև Բեթհովենը: Նման ֆուգաների մի ստվար քանակ գտնվում էր Ֆրանց 2-րդի հավաքածուում: Մոցարտի հեղինակության խնդիրը մանրամասն վերլուծել է Կոնստանտին Սակվան: Պարզվում է, որ տարածայնությունների պատճառ այն է, որ մինչ օրս չի հայտնաբերված հիշյալ շարքի Մոցարտի ձեռագիրը:

Մոցարտի հեղինակության մասին առաջինը ենթադրություն է արել Վիլհելմ Ռուստը, որը Բախի մահից 130 տարի հետո ժառանգել էր Լայպցիգի սուրբ Թոմաս Նկեղեցու երաժշտապետի նույն պաշտոնը:

Մոցարտի հեղինակությանը դևմ է երաժշտագետ Ռոբերտ Այտները, որը բոլոր Աղաջոնների հեղինակ է համարում Յոզեֆ Հայդնին:

Մարիոս Ֆլորտիոյսը ենթադրում է, որ 1-ին Աղաջոյի հեղինակը Յոզեֆ Հայդնն է, իսկ 6-րդ ֆուգայի նախաբանը՝ ֆա-մինոր Աղաջոն այնքան է հիացրել Ֆլորտիոյսին, որ նա այն արժանի է համարում թե՛ Հայդնին, թե՛ Մոցարտին:

Մնացած Աղաջոնները զիջում են սրան:

Ռուս երաժշտագետներ Տամարա Լիվանովան, Վլադիմիր Պրոտոպառյովը, ինչպես նաև դիրիժոր Գենարի Ռոժեստվենսկին համոզված են, որ բոլոր Աղաջոնների հեղինակը Մոցարտն է:

Շեքսպիրի խոսքով ասած, վարդին ինչ էլ ամփանես, այն իր բուրմունքը չի փոխի:

Այդպես էլ Աղաջոնների և ֆուգանների այս փունջը ունի իր անկրկնելի բույրը:

## «ՈՒԵՔՎԻԵՄ»

Ես միշտ եղել եմ Մոցարտի ամենախանդավառ երկը-պազուներից մեկը և կմնամ մինչև վերջին շունչը:

Քերիովին

Հայտնի է, «ուեքվիեմ» բառը լատիներեն նշանակում է հանգիստ: «Հավիտենական հանգիստ շնորհիր նրանց, տեր»՝ այս աղոքքով է բացվում «Ուեքվիեմը», կարողիկ եկեղեցու կանոնացրած հոգեհանգառյան մեսան, որն իր նախնական տեսքով գրիգորյան խորալի միաձայն մեղեդիների փունջ էր: 15-րդ դարում ստեղծվեցին բազմածայն ուեքվիեմներ երգչախմբի համար՝ Գիյոմ Դյուֆախի, Յան Օկենեմի հեղինակությամբ: 17-18-րդ դդ. սգո մեսանները հնչում էին նաև եկեղեցուց դուրս՝ համերգասրահներում, երգչախմբի, նվազախմբի և մեներգիչների կատարմամբ: Ուեքվիեմներ հորինել են Պալեստրինան, Օղլանդը ող Լաստոն, Շարպանտյեն, Քերորիինին և ուրիշներ: Ժանրը փոփոխությունների են ենթարկել Շյուտցը, Պրետորիուսը, Հայդնը, որոնց սգո մեսանների լեզուն զերմաններենն էր: Եվ ոչ միայն լեզվի տեսակետից: Օրինակ, Բրամսի «Գերմանական ուեքվիեմում» բացակայում է Աներ դաստաստանի սարսափները պատկերող «Dies irae» մասը, որով և ստեղծագործությունը դառնում է ավելի սփոփիչ: Սինչետ Վերդիի «Ուեքվիեմում» ամենահզոր մասը հենց աշխարհացունց Ղատաստան է:

20-րդ դարում հանդես եկան աշխարհիկ բովանդակությամբ ոերվիեմ-ներ՝ Քրիտենի, Կարալսկու և այլոց:

Ահավասիկ «Ուերվիեմի» շարադրանքի փոքր-ինչ կրճատ թարգմանությունը.

1. Հավիտենական հանգիստ շնորհիր նրանց, տեր, թող հավերժական լույսը լուսավորի նրանց... Տեր ողորմյա, Քրիստոս ողորմյա...

2. Այն օրը, Դատաստանի օրը, երբ հայտնվի Դատավորը, փոշի կղարձնի տիեզերքը, ինչպես Դավիթը գուշակեց Սիրիլայի հետ:

3. Երբ հնչի հրաշալի Վտողի ձայնը, երբ մեռյաները հառնեն, քո ահավոր բեմի առջև մահը քարանա և Դատավորը հայտնվի, ամեն զաղտնիք հայտնի կղառնա, ոչինչ անհատույց չի մնա: Ես՝ թշվառ, ի՞նչ կանեմ այն-ժամ...

4. Ահավոր թագավոր, դու, որ փրկում ես արժանիներին, ինձ էլ փրկի՛ր, աղբյու՛ր երանության:

5. Հիշի՛ր, քարեգութ Քրիստոս, որ հանուն ինձ խաչվեցիր, քավի՛ր, գքա՛ ինձ, արդար դատավոր, նախքան դատաստանը, ինչպես Մարիամին, ավագակին:

6. Ամաշեցնելով անծյալներին, կրակի մատնվածներին... փրկի՛ր ինձ մահիցս հետո:

7. Այն օրը, արցունքով լի օրը, երբ փոշուց կհառնի մարդը ոչ դատվելու համար, գքա՛ նրան, տեր:

8. Տեր Հիսուս Քրիստոս, փառաց քագավոր, փրկի՛ր արդար ննջեցյալ-ներին հոգիների սանդարամետից, առյուծի երախից, թող դժոխքը նրանց չկլանի, չընկնեն խավարի մեջ, ինչպես խոստացել էր Աքրահամին և նրա սերունդներին:

9. Չոհեր և աղաշանքներ ենք մատուցում քեզ, Տեր, փառարանելով քեզ, ընդունի՛ր դրանք հանուն նրանց, ում ոգիկոչում ենք այժմ, թող նրանք մահից դեպի կյանք դառնան, քանի այդպես խոստացար Աքրահամին և նրա սերունդներին:

10. Սուլը, սուլը, սուլը տեր գորությանց, քո փառքով լի են երկինք և երկիր, օվաննա ի քարձունս:

11. Օրինյալ է, ով զալիս է Տիրոջ անվամբ: Փառք ի քարձունս, օվաննա ի քարձունս:

12. Գառն Աստծո, դու որ վերցրիր աշխարհի մնոքը, տո՛ր նրանց հավիտենական հանգիստ, թող հավերժական լույսը լուսավորի նրանց, քանզի օրինյալ ես դու...

Սոցարտի «Ուերվիեմի» տիտղոսաբերի վրա կոմպոզիտոր Յոհան Հիլերը գրել է. «Վեհագույն մարդու քարձրագույն ստեղծագործություն»: Ի դեպ, նշված օպուս քառորդական լույսը լուսավորի նրանց, քանզի օրինյալ ես դու...

մայն տեղին է, եթե հիշենք, թե ինչ պայմաններում է Մոցարտը հյուսել իր կարավախ երգը:

Հերման Արերտի Մոցարտին նվիրված քառահատոր մենագրությունը որոշակի լույս է սփռում «Ռեբվիենի» ստեղծման առեղծվածի վրա: Մոցարտի մահից հինգ ամիս առաջ մի անձանոր անանուն մի նամակ է թերեւ, որտեղ կոմպոզիտորին պատվիրել է հոգեհանգստյան մեսսա: Մոցարտի զգայուն երևակայության մեջ դրոշմվեց գորշագույն զգեստով այդ անձանորի ճակատագրական կերպարը: Լորենցո դա Պոնտեին հասցեագրած նամակում Մոցարտը գրել է. «Մշտապես տեսնում եմ նրան իմ առջե, նա աղաչում է, արագացնում ու անհամբերությամբ պահանջում ստեղծագործությունը»<sup>1</sup>:

Սոանց այդ էլ գերլարվածությունից, թերսնումից, հյուրախաղերից հյուծված Մոցարտը պարբերաբար ուշագնաց էր լինում: Այդ վիճակում նա գուգահետ աշխատում էր նաև «Կախարդական սրինգ» օպերայի վրա: Մոցարտի երազանքն էր գեր մեկ շաբաթ հանգստանալ սակայն նա նախազգում էր իր մոտալուտ մահը: Հիշյալ նամակում նա շարունակում է «Ես պատրաստ եմ մենեն... հարկ է հաշտվել, կյանքն այնքան գեղեցիկ էր... Իմ առջև թաղման երգն է, չեմ կարող այն անավարտ թողնել...»<sup>2</sup>:

Դեռ տարիներ առաջ Մոցարտն իր նամակներում արծարծում էր մահվան և հարության գաղափարները: Ուսումնասիրելով նրա հայացքները՝ կարելի է պատկերացնում կազմել Մոցարտի «մահվան փիլիսոփայության» մասին: Մոր մահը նա տանելի դարձեց շնորհիվ «երեք միսիքարանների»՝ կատարյալ խոնարհություն Աստծո կամքին, մոր մահվան թերևությունը և այն հույսը, որ Մոցարտը նրան կրկին կիանդիպի մի ավելի երջանիկ աշխարհում, քան երկրայինն է: Ավելի ուշ, մահամերձ հորը նա միսիքարում էր՝ մահ համարելով մարդու լավագույն բարեկամ և երանության բանալի, իր գոհունակությունն էր հայտնուն Ալարչին այդ շնորհի համար: Նա հորդորում էր հորը չերկյուղել, քանի մահը բնական երևույթ է, այդ գիտակցումից է, որ Վոլֆանգը հիմնականում միշտ զվարք էր, և հասարակության մեջ նրան ոչ որ մռայլ չէր տեսել: Փաստորեն խորսն ավելի շատ անմահության զգացողության մասին էր: Սակայն, երբ այդ երանակետ մահը ընդհուպ մոտեցավ Մոցարտին, նա խիստ հուզվեց: 1791-ի դեկտեմբերի 4-ին, ցերեկը, կոմպոզիտորը կիվանդ պառկած էր և ընկերների հետ երգում էին «Ռեբվիենը»: Եվ երբ հասան 7-րդ համարին («Այն օրը, արցունքներով լի օրը»), Մոցարտը, համոզվելով, որ այլև չի կարողանա պարտել իր ստեղծագործությունը, բարձրածայն արտավել է: Մոտ 13 ժամ անց նա անմահացավ:

1. Г. Аверт, В. А. Мощарт, ч. II, книга 2, М., 1990, стр. 371.

2. Անդ:

Ինչպես հասկանալ Մոցարտի արցունքները: Դրա պատասխանը նույնագում գտնում ենք դա Պոնտեին գրած վերոհիշյալ նամակում: «Ես հանգչում եմ ավելի վաղ, քան կարող էի օգտվել ինձ շնորհված տաղանդից»<sup>3</sup>: Մոցարտը դեռ անսպառ ասելիք ուներ, ինչպես ավետարանական առակում, նա դեռ պիտի բազմացներ իրեն շնորհված «տաղանդները», բայց ավա՞ն, ուժի մեջ էր հայտնի ասույթը, թե արքաւոց երկար է, մինչդեռ կյանքը՝ կարճ: Եվ ականա հիշում են ճապոնական հայտնի եռատուողը՝

Այնքան շուտ վերացավ վաղորդյան ցողը:  
Կարծես անելիք չուներ  
Այս անմարուր աշխարհում<sup>4</sup>:

Սի տիտուր օր Մոցարտը խոստովանել էր նաև կնոջը՝ Կոնստանցյահն, թե իրեն բունավորել են և «Ուերվիեմն» իր համար է կերտում, այսինքն՝ իր «մահն է գուտում զանգը»: Այսպիսի հոգեվիճակում նա շարունակում էր կերտել իր անմահության հուշարձանը:

Այդ օրերին ներխուսութեան մեկ այլ անխուսափելի պատվեր: Պրահայում կայսր Լեռպոլդ 2-րդի կայանալիք բազարությանը մնացել էր 18 օր, և այդ կարճ ժամանակամիջոցում նա հասցրեց ստեղծել «Տիտոսի գրությունը» օպերան: Չունենալով Հռոմի Տիտոս կայսեր գրությունը՝ Լեռպոլդ կայսեր կինը Մոցարտի օպերան անվանեց «գերմանական խողություն»: Վայսրունու սրտից պոկված այդ ժայռաքեկորը փշրեց Մոցարտի «քյուրենյա դյյակը»: Հետագայում սուլ պայմաներում հայտնված Մոցարտի այրին, Վախսենալով, որ «Ուերվիեմն» պատվիրատուն կարող է հետ պահնջել հոնորարը, հանձնարարեց կոմպոզիտորներ Յոզեֆ Այբերին և Ֆրանց Ջյուսմայերին ավարտել ստեղծագործությունը: Վերջինս Մոցարտի աշակերտն ու օգնականն էր, արտագրություններ էր անում, Կոնստանցյահի ու Մոցարտի հետ երգում, ստուգում «Ուերվիեմն» նորաստղծ դրվագները: Ջյուսմայերը ձեռքի տակ ուներ անավարտ մասերի երիգները, իսկ սրտում՝ ուսուցչի պատգամները, հանձնարարականները գործիքավորման ու ձևակառուցման և այլ գործոնների վերաբերյալ (աշխատանքին որոշ առնչություն է ունեցել նաև արքա Մաքսիմիլիան Շրադերը):

Ծառ է խոսվել ու հակասական գնահատականներ տրվել «Ուերվիեմն» տեղ գուած ազդեցությունների և փոխառությունների շուրջ: Այս-

3. Անդ:

4. Հեղինակային բարգմանություն: Եթե մեջբերվող բանաստեղծությունների բարգմանը նշված չէ, ապա լրանք հեղինակին են:

պես, 1-ին և 7-րդ մասերը նմանեցնում են ֆրանսիացի Գուսեկի «Ոերվիենին», Զյուսամայերին են վերագրում «Սուրբ, սուրբը», «Գառն Աստծոն» և այլ հատվածները: Մոցարտի «Ոերվիենում» նկատում են Չիմարոզայի, Բախի, Հայդնի հովերը: Բայց դա օրինաչափ է: Մի՞թե Բախը, հիմնվելով խորավի վրա, չի ամփոփել նախնիների ու ժամանակակիցների (Վիվարի, Բուքաստեհուղեն, Մարչելո) փորձն ու նվաճումները: Այդպես են վարփում բոլոր հանճարները, ինչպես նշել է Հայնեն. «Ծերսափիրն իր դրամատիկ ձևերն ստացել է ժամանակակիցներից... Ողբերգությունների բովանդակությունները, ընդհուպ մինչև մանրամասները, վիխառել է... Բարձրագույնը ձեռք է բերփում միայն այդ ճանապարհով: Ինչպես Հոմերոսը միայնակ չի հյուսել «Ելիականը», այնպես էլ Ծերսափիրը...»<sup>5</sup>: Ինչեւ, Մոցարտի «Ոերվիենը» մնում է անգերազանցելի: Ըստ Հայդնի՝ այն բավական է հեղինակին անմահացնելու համար: Իսկ երաժշտագետ Յելտերն էլ գտնում էր, որ «Ոերվիենը» չի կարող տուժել ո՛չ բացասական քննադատությունից, ո՛չ էլ վատ կատարումից. ավելացնենք՝ ո՛չ Զյուսմայերի կողմից շռայլրեն կիրառված ծանր տրոմբոններից և ձայնատարության մեջ նրա քույլ տված անբարեհունչ զուգահեռ կվինտաներից, ո՛չ էլ խորհրդավոր պատվիրատու կոմս Վալդեզի կեղծիքից, որը մի քանի տարի շարունակ ներկայացրել էր այն որպես սեփական ստեղծագործություն:

Վաղուց ի վեր ավանդույթ է դարձել անվանի մարդկանց հիշատակը նշանակորել Մոցարտի «Ոերվիենով»: Կոմպոզիտոր Ռոմերգ, արքաներ Ֆրիդրիխս Վիլհելմ 3-րդ, Ֆրիդրիխս Վիլհելմ 4-րդ... Տարօրինակ է, բայց Բեթհովենը կտակել էր, որպեսզի իր հոգեհանգստին ինչի Քերուբինիի ոերվիեններից մեկը, թեև նշել էր, որ հավատարիմ կմնա Մոցարտին մինչև իր Վերջին շունչը: Մինչդեռ Շոպենի կտակում նշված էր Մոցարտի «Ոերվիենը»: Եվ սակայն Բեթհովենի հոգեհանգստին կատարեցին նաև Մոցարտի «Ոերվիենը», որի կախարդական հնչյունները բերևս կարող էին կյանքի կոչել ննջեցյալ Բեթհովենին, որը հազիվ էր ազատվել այս դիրտ, մոցարտասպան աշխարհից և որի Վերջին խոսքերն էին «Կատակերգությունն ավարտվեց»...

5. Г. Гейне, Собрание сочинений, т. 9, Л., 1959, стр. 173.

## ԼՅՈՒԴՎԻԿ ՎԱՆ ԲԵԹՀԵՎԵՆ (1770–1827)



ԲՆՈՒԹՅՈՒՆ-ԱՐՎԵՍՏ  
(Բեթհովենի թիվ 8 կվարտանի առքիվ)

Վերևում աստեղազարդ երկինքն է,  
Խսկ մեր մնջ՝ բարոյական օրենքը:  
Իմանողի Կանոն

Ես կանգնած էի անշարժ,  
Հեռավոր աստղերով զնալված,  
Աստղերի բույների և իմ մեջ  
Ինչ-որ մի կապ ծնվեց անշարժ:  
Խորհուս էի, թե ոչ ո՞վ գիտե,  
Նրանց խմբեցն էր լսվում հեռվից,  
Եվ աստղերն էին քննուշ դրում,  
Ու սիրեցի աստղերն անքիծ:

Աֆանասի Ֆեռ

«**Բ**նուքյուն-արվեստ» հարաբերուքյունը՝ այդ հավերժական

երկխոսությունը, դարերի ընթացքում ենթարկվել է զանազան ձևափոխությունների և յուրովի լուսաբանվել տարբեր իմաստունների կողմից:

Անտիկ շրջանի փիլիսոփաներ Պյուրագորասի, Պլատոնի, հետազյում նաև Պլոտինի և նրանց հետևորդների հայացքներն այս հարցի վերաբերյալ հակիրճ կերպով արտացոլված են հետևյալ մեջբերումներում:

16-րդ դարի իտալացի երաժշտագետ Կոզիմո Բարտոլինի իր «Ականեմիական խորհրդածություններում» գրել է. «Երաժշտության վրա է հիմնված տիեզերքի զապանակը: Չէ՞ որ եթե յոք մոլորակների և երկնային այլ մարմինների ներդաշնակությունը չիներ՝ աշխարհը կկործանվեր»<sup>1</sup>:

Ըստ Պլատոնի, «Երաժշտությունը և նրա բոլոր դրսնորումները ինքնուրույն նշանակություն չունեն: Դրանք լոկ աստվածային բարձրագույն ուժի արտացոլումն են, տիեզերական հարմոնիայի այլարանական արտացոլումը»<sup>2</sup>:

Նորավառականները ամենայն զգացականը համարում էին հավեր-

1. Музикальная эстетика Средневековья и Возрождения, М., 1966, стр. 531.

2. Ան, էջ 19:

ժական և բացարձակ գեղեցիկի արտացոլքը, որը ճառագում է Աստծուց»<sup>3</sup>: Ելնելով այս գաղափարից, երաժշտագետները պնդում են, թե ստեղծագործել երգել, նվագել՝ կնշանակի դիմել Արարչին, ընկալել և արձագանքել նորորակների երաժշտությանը:

Խորհրդածելով հոգևոր կյանքի, կրոնի, արվեստի սկզբնավորման, բնության հոգևոր իմաստավորման մասին՝ Գեորգ Հեգելը «Եսրետիկա» աշխատության մեջ նշել է, որ մարդկային ոգին օժտված է բնությանը «ականջ դնելու», անսալու, նախազգալու և իմաստը որսալու ունակությամբ և նղումով: Սակայն ոգին կանգ չի առնում նախազգալու և ձգտման վրա: Նա իմբն իրեն պատասխան և հագեցում պիտի տա այդ ձգտմանը: Եվ դա դրսերպվում է Պանի մասին պատկերացումներուով:

Երբ մարդը մեն-մենակ, դեմ առ դեմ կանգնած է բնության, տիեզերքի առջև, ինչպես մի սփինքսի դիմաց, ապա հարցեր են տրվում երկու կողմից: Եվ այդ անորոշությունը առաջացնում է չպատճառարանված զարմանք ու սարսափ: Այդ զարմանքը և սարսափը իմ հույների մոտ մարմնավորված էր՝ ի դեմս անտառների ու պուրակների արկադիական չաստված Պանի կերպարի, որն իրեն լսելի էր դարձնում, իր մասին ազդարարում որպես սրնահար: Ըստ Հեգելի՝ դիցարանական Պանը իր յոթնափող սրնգի հարմոնիաների միջոցով ազդարարել է տիեզերքի հարմոնիան: Հին հույները իրենց երաժշտությամբ մեկնաբանել են բնության խորհուրդը: Ունկնդելով մութ քարայրից բխող աղբյուրի կարկաչը՝ անորոշությունից, անբացարելի նախազգացումից իմ հույնի երևակայությունը հորինել է փերիներ, ջրահարսներ, հետազայում նաև՝ մուսաներ, որոնց երգերը ոչ թե աղբյուրների խոխոչը կամ տերևների սոսակյունն էին, այլ իր իսկ երևակայության պտուղը: Ուստի իմ հույնի համար բնությունը լոկ առիթ էր և խրան՝ արարման: Օրինակ, Ապոլլոնի կերպարը ստեղծելու առիթը արևն էր: Այս ամենից հետո Հեգելը եզրակացնում է, որ Հոմերոսի մուսան իր իսկ ստեղծագործական ոգին էր:

Այսպիսով, մարդն էր իմաստավորում բնությունը, երևույթները: Այդ պիսին էր և հույների կրոնը, որին հատուկ էր «անտրոպոլոգիզմը», այսինքն՝ մարդկային հարաբերությունների վերագրումը տիեզերքին<sup>4</sup>:

Հետաքրքիր է զուգահեռ անցկացնել հունական և ճապոնական աշխարհների միջև: Ինչպես նշում է ճապոնագետ Կարանովը՝ ձենքուրդայական ճգնավորմների համար բնությունը ընկեր էր, օգնական և զրուցակից... Նրանք իրենց զգացմունքները վերածում էին բանաստեղծությունների: Գովերգում էին բնաշխարհը, որի հետ հաղորդակցվելով՝ ազատվում էին աշխարհի ունայնությունից: 17 վանկանց եռատող բա-

3. Անու:

4. Г. Гегель, Эстетика, М., 1973, т. 4, стр. 329-330.

նաստեղություններում այդ պոետները կարողանում էին տեղափորել մի ամրող տիեզերք<sup>5</sup>:

Այդ մանրակերտները կոչվում են հորու, որոնց թեման մարդն է և բնաշխարհը, իսկ նպատակը՝ ստեղծել բազում մարդկային և երկնքի կողմից տրված կերպարներ, որոնք կապված են տարվա եղանակների փոփոխության հետ:

«Բանաստեղծ-բնություն» հարաբերության հարցում ևս զոյլություն ունի երկու մոտենալու: Մի դեպքում գերիշխում է պոետի երևակայությունը, մյուսում՝ բնությունն ինքնին, առանց պոետի «ես»-ի ակտիվ միջամտության: «Գեղեցիկի ընկալումը անտիկ և միջնադարի շրջանի մարդկանց կողմից, սահմանափակ էր, — զրում է գեղագետ Արամսոնը, — քանզի մարդն իրեն չէր զատում իրեն շրջապատող իրականությունից: Իրականության մեջ ճշմարիտ կերպով քափանցելը հնարավոր է լինում, եթե մարդը դադարում է իրեն զգալ որպես դրա մասնիկը»<sup>6</sup>: Իսկ 17-րդ դարի հանճարեղ պոետ Մացու Բասյոն կարծեն հավասարակշռում է այս երկու մոտենալուները. «Եթե առարկան և ես տարանջատվում ենք, որեմն իսկական պոեզիա չի ստեղծվի»<sup>7</sup>: Բայց դեռ վեց դար առաջ ապրած շինացի պոետ Սու Դուն-պոն քանաստեղծություններից մեկում ասես հաստատել է նրա սկզբունքը: Նկարագրելով իրաշագրության մարդիշ Յոյ-Կեհն բաժրուկ պատկերելիս՝ պոետը վկայում է. «Շրջապատից և մարդկանցից վերացած՝ նա միայն իր մետաքսն է տեսնում և ամբողջ մարմնով ու հոգով ինքնամոռաց խորասուզվել է քամրուկի մեջ և քացահայտում է նոր եզրեր ու մարդություն...»<sup>8</sup>: Ի դեպք, Բասյոն ասում էր. «Սոճից սովորիր տաճի լինել»<sup>9</sup>:

Պոետի և բնության միասնությունը, նաև առանձնությունը պարզունակ չեն, ինչպես կարող է բվալ առաջին հայացքից: Բայց ասում է. «Եթե տիեզերքն ունի մեկ սիրտ, ապա յուրաքանչյուր մարդու սիրտը տիեզերք է»<sup>10</sup>: Բայց աշակերտ Հատուրի Դոխոն վկայում է «Վարպետի ուսումնքը կոչ է անում... հասնելով պայծառության՝ վերադառնալ այս հովեղեն աշխարհ»: Այս, վերադառնալ, սակայն նոր որակով, իմաստնացած:

Ինչպես վերը նշվեց, բնության հանդեպ տածած իին հույսների սարսափը, Հեգելի բնորոշմամբ, պատճառարանված չէր, այլ բնազրական: Գրե-

5. Человек и мир в японской культуре, М., 1985, стр. 85, 208.

6. Անդ, էջ 259:

7. Անդ, էջ 204:

8. Су Дун-по, Стихи, мелодии, поэмы, М., 1975, стр. 94.

9. Человек и мир в японской культуре, стр. 220.

10. Су Дун-по, стр. 216.

թե նույնպես է բնորոշում ճապոնացիներին քանասեր Տատյանա Գրիգորևան: «Մոնո-նո ավարե» նշանակում է գեղեցիկով հմայվածության հուզումնալից մի զգացում, սակայն շաղախված չպատճառաբանված քախծի երանգով»<sup>11</sup>: Թախիծը հաճախ վերածվում է աշխարհի հանդեպ սարսափի: «Գեղեցիկ» և «սարսափ» թե՛ռացումը իր հաշտեցումն է գլունում արվեստում: Հաշտեցման տարրեր տեսակներ և աստիճաններ կան:

Օրինակ, ճապոնացի պոետը, հաշտվելով մահվան հետ, փափագում է, ինչպես Օվիդիոսի «Մետամորֆոզներում» է տեղի ունենում, հաջորդ կյանքում դառնալ սոճի կամ թուփ, քար, որ իր սիրեցյալը անցնելիս զգեստով դիպչի իրեն: Ի դեպ, այս հովերով է համակված Վոլֆգանգ Գյորեի «Մանուշակ» գորդորիկ քանաստեղծությունը, որը խանճակառել է Մոցարտին. Շուրեւտին, Բրամսին՝ կերտելու երգարվեստի գլուխգործոցներ: Ըրիստոնյայի հաշտությունը ոչ թե հողի, երկրի հետ է իրագործվում, այլ՝ ինքն իր հետ, Աստծո հետ, երկնքի հետ:

Հին հոյւնը, լսելով Պանի սրինգը, մոլորակների երաժշտությունը, ներդաշնակում էր բնորյան հետ:

Հեգելը գրել է. «Հաճախ ենք լսում այն նասին, թե մարդը պետք է մնա բնորյան հետ անմիջական միասնության մեջ: Սակայն նման միասնությունը իր վերացականությամբ իրենից ներկայացնում է հենց կոպտություն և վայրենություն: Եվ այդ միասնությունը քանդելով՝ արվեստը նորք ձեռքբերով մարդուն ազատում է բնորյան կախվածությունից և նրանից վեր քարձրացնում»<sup>12</sup>: Իմաստասերը պնդում է, որ մարդու և տիեզերքի լիարժեք հաշտեցում տեղի չի ունեցել ոչ հոյւների և ոչ հնդիկների շրջանում, քանզի նրանց շաստվածները չեն հայտնվել մարդկությանը, ինչպես Հիսուս Քրիստոսը իր մարդեղությամբ:

«Թեպետ Աստծուն, – գրում է Հեգելը, – կարելի է նկատել բնորյան, արևի, լեռների, ծառերի, «անկեզ մորենու» մեջ...., այնուամենայնիվ, այս ամենի մեջ Աստված ընկալվում է միայն մարդու ներաշխարհում: Եվ բնորյան այս բոլոր երևույթները ինքնին ոգեկանություն չեն պարունակում»<sup>13</sup>: Ըստ իմաստասերի՝ նույնիսկ եթե Աստված հայտնվում է բնորյան և մարդկության մեջ, ապա Աստծո ամենակատարյալ հայտնությունը Հիսուսի մարդեղությունն է:

Հիրավի, հերանոսական արվեստում մարդու և բնորյան հարաբերությունը հակասական է: Մի դեպքում բնորյունը օգնական է, մյուս դեպքում քախիծ է պատճառում: Պատահական չէ, որ բուդդայականները գգուշաց-

11. Человек и мир в японской культуре, стр. 259.

12. Г. Гегель, Эстетика, М., т. I, стр. 55.

13. Г. Гегель, Эстетика, М., 1973, т. 4, стр. 345.

Առում էին «արտով չկպչել այս աշխարհին, քանզի բաժանումն անխուսափելի է: 12-րդ դարի ճապոնացի պետ Սայգյոն գրել է»:

Չատ երկար ես նայեցի  
Ծաղկափրիթ բալենուն.  
Սիրտս աննկատ կպավ:  
Ծառը ծաղկաբափ եղավ:  
Մնաց միայն վիշտ ու ցավ:

Ինչպես նշվեց, ճապոնացիների, նաև չինացիների համար բնությունը կենդանի գրուցակից է: Արևելագետ Նիկոլայ Ֆեռորեննկոն նշում է. «Դարեր ի վեր ճապոնացիները երկրպագում էին քարերը որպես կենդանի արարածներ, որոնց հետ մարդը կարող է հաղորդվել»<sup>14</sup>: Քրիստոնեական մշակույթում ևս բնությունը շնչավոր է, կենդանի: Ֆյոդոր Տյուտչևը գրում է.

Բնությունը այն չէ, ինչ կարծում եք դուք,  
Այն դիմակ չէ, ոչ էլ անշունչ կաղապար,  
Հոգի ունի, ազատություն նա ունի,  
Այն սեր ունի, լեզու և վեհ գաղափար:

Եվ արվեստագետներին հասու է բնության լեզուն: Բնությունը մեզ հետ խոսում է նաև գեղանկարիչների կտավներից, կոմպոզիտորների հնյութների «քարզմանությամբ»: Օրինակ, Վիվալդիի «Տարվա եղանակները», Բերհովվենի «Հովվերգական սիմֆոնիան», Սենդելսոնի «Հերքիդներ» նախերգանքը և այլն: Արվեստի գլուխգործոցները հաճախ արտացոլում են բնության արտաքին դրսևությունները՝ փոքրորիկ, ծովի ալեկոծումը, առվակի խոխոջը, հավերի երգի նմանակումները և այլն: Սակայն բնությունից ամեն գործող ուժերը, նրա եռթյունը ճանաչելու փորձը շատ քերին է տրված: Այդ եզակիներից է Բերհովվենը: Բնության հանդեպ իր մեծ սերը Բերհովվենը արտահայտել է նաև նամակներում: 1808 թվականին Զուլինետուա Գուակարդիին, ում նվիրված է հայտնի «Լուսնի ստնատը», կոմպոզիտորը գրել է. «Մեզ շրջապատող իրաշք բնության մեջ փնտրիր օգնություն և հնագանդվիր, դա անխուսափելի է»<sup>15</sup>:

Ո-ոմեն Ռուսաց վկայում է, որ կոմպոզիտորի մահից հետո նրա սենյակում ձեռագրերը ցուցակագրելիս, տեսել են նաև ինանուիլ կանտի «Բնակիտություն» և երկնքի տեսություն», Բողեի «Ալստեղային երկնքի ուսում-

14. Человек и мир в японской культуре, стр. 210.

15. Համաշխարհային սիրերգության նամականին, Եր., 1992, էջ 47:

նասիրության ներածություն» և աստվածաբան Թովմաս Կեմպացու «Նմանութիւն Յիսուսի Քրիստոսի» գրքերը<sup>16</sup>: Անշուշտ, Բերեհովենը միայն գրքերով չէր հաղորդակցվում բնությանը: Ահա կոմպոզիտորի ստացած տպակիրությունը, որի նաև կամ տեղեկանում ենք գերմանացի երաժշտագետ Պաուլ Միսի «Էսքիզների նշանակությունը Բերեհովենի ոճի ուսումնասիրության գործում» աշխատությունից:

«Եթե ես երեկոները զնայլված դիտում եմ երկինքը և իրենց ուղեծիրներով հավերժ պատովող լուսատուների բազմազանությունը, որոնք արևմեր կամ երկիրներ են կոչվում, իմ ոգին սլանում է միլիոնավոր մղոններ հեռու գտնվող այդ համաստեղությունների միջով դեպի սկզբնադրյուրը, որից բխում է ամբողջ արարչագործությունը և որից հավերժորեն պիտի գոյանան նորանոր ստեղծագործությունները: Իսկ ես ժամանակ առ ժամանակ փորձում եմ իմ հուզումները պարուիլ հնչյունային ձևերի մեջ, ավաղ, ես խորապես հիասքափիւմ եմ և իմ աղտոտված թրեքը Վրորվմունքով նետում եմ գետնին՝ հաստատ համոզված լինելով, որ և ոչ մի մահկանացու ի վիճակի չէ ոչ հնչյումներով, ոչ խոսքերով, ոչ գոյւներով կամ հատիչով մարմնավորելու երկնային այն տեսիլները, որոնք երջանիկ պահերին անցել են նրա հուզված երևակայության միջով: Այո՛, այն, ինչ կարող է հուզել սիրտը, պետք է զա ի վերուստ, այլապես դրանք միայն նոտաներ կիմնեն՝ մարմին առանց հոգու... Ոգին պետք է վերհանի երկրի վրա, ուր Աստծո կայծը գտնվում է ժամանակակոր աքտրում... Այսպէս, միայն այսպես, համառ աշխատանքով, նրան շնորհված ուժերով արարածը երկրապագում է Արարշին, անսահման բնության ստեղծողին»<sup>17</sup>:

Սեղբեկով Բերեհովենի իիշյալ խոսքերը՝ Պաուլ Միսը եզրափակում է. «Հիրավի, էսքիզները դրսնորում են «համառ աշխատանք», իսկ այն, որ Բերեհովենը կարողանում էր բավական հաճախ հարթահարել այդ պատահական վարանումները, ապացուցում են նրա անմահ կորողմերը»<sup>18</sup>:

Այդպիսիք են կոմպոզիտորի սիմֆոնիաները, կոնցերտները, «Քրիստոսը Զիթենյաց լեռան վրա» օրատորիան և շատ ու շատ գործեր:

Հայ Բերեհովենի աշակերտ Կարլ Շերնիի, Վարպետի 8-րդ կվարտետի Աղաջոյի հանճարեղ երաժշտությունը և ներշնչված է աստղալից երկնքի հայեցողությունից: Ի դեպ, այս կվարտետով զնայլված Իգոր Ստրավինսկին նշել է, թե միայն Աղաջոյի վերաբերյալ կարելի է մի ամբողջ գիրք գրել՝ «Բերեհովենը և օկտավան» վերմագրով<sup>19</sup>: Աղաջոյն բազում զուգոր-

16. Р. Роллан, Жизни великих людей, М., 1987, стр. 198.

17. Проблемы ветховенского стиля, М., 1932, стр. 320.

18. Անդ:

19. И. Стравинский, Диалоги, Л., 1971, стр. 256.

դրւմներ է առաջացնում: Նույն աստղերի լույսը փայլատակում է 4-րդ սիմֆոնիայի Աղաջոյում, որը Բերհովենը կերտել է նույն ժամանակ: Հետագայում այդ լույսը արտացոլվել է նաև Յոհաննես Բրամսի 1-ին սիմֆոնիայի Անդանտեում՝ նույն մի-մաժոր ճամսոլորտում: Զարմանալի զուգաղիպությո՞ն, թե՞ օրինաչափություն: Ահավասիկ, անդրադառնալով տոնայնությունների գունային ասոցիացիաներին, ակադեմիկոս Բորիս Ասաֆել նկատել է. «... մի-մաժոր՝ զիշերային աստղալից երկինք է, շատ խորը, շատ հեռո՛ւ-հեռո՞ւ»... Արդարի: Աղաջոն արքնացնում է նաև բանաստեղծական գուգահեռներ: Ահավասիկ, լին բանաստեղծ Լեռպող Ստաֆի՝ գրեթե կանույան տողերը.

Ես պառկած եմ նավակում,  
Մքնշաղ է, լուրջուն:  
Վերև՝ աստղեր,  
Ներքև՝ աստղեր,  
Աստղեր՝ խաղաղ իմ սրտում:

Կվարտետի առաջին մասից հետո Աղաջոն կարող է ընկալվել ինչպես Ֆեռդոր Տյուտչևի «Պոեզիա» քերթվածը.

Կենաց ծովի ալիքներում,  
Թեժ կրքերի բովում զորեղ,  
Տարերային բախտսմներում՝  
Նա իշնում է փառահեղ,  
Երկնից դեպի որդիքս երկրի,  
Հայացքով ջինջ, լազուրաշյա,  
Եվ մարտնչող ծովի վլա  
Ցողում մյուտոն հաշտության:

Վոլֆգանգ Գյորեն ասել է. «Արվեստը, որպես մարդկային ոգու ստեղծագործություն, բնության նաև կազմում, և արվեստագետի նպատակն է ըմբռնել ու արտահայտել բնության իմաստը<sup>20</sup>:

Գյորենի այս միտքն ասես իր զարգացումն է գտնում Վլադիմիր Սոլովյովի «Արվեստի ընդհանուր իմաստը» հոդվածում: «Բնության ի՞նչ երևույթներ են ընդգծված, խտացված, օրինակ, Բերհովենի ստատնություն», հարցնում է ոռոս վիլխովիան և լուսաբանում արվեստի ու բնության գեղագիտական կապը, որն ավելին է, քան ընդունված էր կարծել<sup>21</sup>:

20. В. Н. Холопова, Аnton Bebeरи, М., 1984, стр. 135.

21. В. Соловьев, Смысл любви, М., 1991, стр. 69.

Ըստ Սոլովյովի՝ արվեստը ոչ թե պիտի կրկնի, այլ շարունակի բնության կողմից սկսած գեղարվեստական գործը և այն հասցնի իր լրումին: Արվեստը պիտի ֆիզիկական կյանքը վերածի հոգևորի: Սակայն արվեստի բարձրագույն նպատակը, այսինքն՝ բացարձակ գեղեցիկի մարմնափորունք մեր իրականության մեջ դեռ չի իրագործված, քանզի այն պիտի համընկնի աշխարհի փախճանի հետ: Եվ քանի համաշխարհային պատմությունը դեռ շարունակվում է, ապա, ինչպես պնդում է Սոլովյովը, համարներն առաջմ մարդկությանը պարգևում են կատարյալ գեղեցիկի մասնակի փայլատակումներ: Նրանց գլուխօրոժոցները կապում են բնության գեղեցկությունը ապագա կյանքի գեղեցկության հետ: Փիլիսոփայի այս միտքը արձագանքում է Դոստոևսկու այն բնորոշմանը, թե Սուրբ Հոգին գեղեցիկի անմիջական ընրոնումն է, ներդաշնակության մարգարեական գիտակցումը, ուստիև՝ անշեղ ձգտումը դեպի այն: Սոլովյովը խորացնում է նաև Հեգելի այն միտքը, թե գեղեցիկը համապարփակ և հավերժական գաղափարի մարմնավորումն է անցողիկ երևույթներում, որոնք նյութական աշխարհում ալիքների նման մի պահ արտացոլում են հավերժի շողարձակումը և անհետանում: Մինչդեռ, ըստ Սոլովյովի, այդ արտացոլքը անտարեր չէ, այլ նպատակ ունի բարենփոխել անցողիկը, հաղորդակից դարձնել հավերժին<sup>22</sup>:

Այս գաղափարը յուրովի արտահայտել է դեռ Գրիգոր Նարեկացին, որն ամենամեծ իրաշը համարել է մեղակոր սրտի զջումը, դարձը, այսինքն՝ մարդու վերատին ծնունդը, որ տրվում է ի վերուստ: Ահա գեղեցիկի ամենակարևոր առաքելություններից մեկը: Սրան համամիտ է Յոհան Սեբաստիան Բախը, որը երաժշտության գերազույն նպատակը տեսնում էր Արարշին փառաբանելու և նարդու հոգեփրկությանը նպաստելու մեջ:

Եվ պատահական չէ, ինչպես Վկայում էր անվանի դաշնակահար Ալեքսեյ Լյուբիմովը, որ Բախի «Չարչարանքներ ըստ Սատրենսի» պահիոնը լսելուց հետո ունանք դառնում են հավատավոր քրիստոնյաց:

Երաժշտությունը խորապես ընրոնողների համար այդպիսի ազգեցիկ գործերից է նաև Բերհովենի 8-րդ կվարտետն՝ իր աստեղային Աղաջոյով համերձ:

Կոմպոզիտորի 7-րդ, 8-րդ և 9-րդ կվարտետները ստեղծվել են 1805–1806 թվականներին՝ ուստի դիվանագետ, մեկնաս, ջութակահար Անդրեյ Ռազումովսկու պատվերով: (Ի դեպ, նոյն Ռազումովսկուն և իշխան Լորկովիչին են նվիրված նաև Բերհովենի 5-րդ և 6-րդ սիմֆոնիաները): Կվարտետները անվանում են «ոռուսական», քանզի առաջին երկուտիմ օգտագործված են ոռուսական ժողովրդական երգերի մեղեղիներ, 7-րդ կվարտետում՝ «Ախ, իմ բախտը», 8-րդում՝ «Ինչպես փառքը երկնքում»:

22. Ան, էջ 76:

Վերջինս հնչում է կվարտետի Սկերցոյի տրիոյում: Եթե 2-րդ մասը՝ Աղազոն, ողողված է աստղային լուսով, ապա 3-րդ մասի, այսինքն՝ Սկերցոյի հիշեցնում է Բերիովենի 9-րդ սիմֆոնիայի Սկերցոյի տրիոն, որ ևս լսվում են ոռուսական պարերգի հնչերանգները: Կվարտետի տրիոն շարադրված է յուրօրինակ ֆուգայի ձևում, որը թեման ամբողջությամբ կրկնվում է 13 անգամ (14-րդը՝ կրծատ): Ընդ որում, թեման տեղաշարժվում է ներքին ուղարկությունում դեպի վերին ոլորտները, կարծես երկրից դեպի երկինք: Եվ դա պատահական չէ, քանզի խոսքը երկնային փառքի մասին է: Այս ժողովուրդական երգի ուրվագծի վրա է կառուցված 1-ին մասի գլխավոր թեման: Մակայն կվարտետի սկիզբն ազդարարող այդ վերընթաց թեման հատուկ խորհրդական է: Այն հնչում է խորհրդավոր շնորհական գործություններում, ուղղված մարդուն հոգող գոյաբանական հարցերի բնույթ ունի: Դրանց պատասխանը տրվում է խաղաղարար 2-րդ մասում, Սկերցոյի զվարք տրիոյում և ֆինալի ցնծագին դրվագներում:

Կվարտետում ծավալվում է խավարի և լուսի, քառսի և ներդաշնակության, մարմնի և հոգու վիրխարի պայքար, որի ասպարեզը Բերիովենի սիրտն է: Ֆիշտ է, միշտ չէ, որ արվեստագետի կյանքի ալեկոնդումները միանշանակ կերպով արտացոլվում են նրա ստեղծագործություններում, ասկայն որոշ տեղեկություններ երբեմն լուս են սփոռում խնդրա առարկայի վրա: Այսպես, հիշյալ կվարտետների մտահացման և հորինման ժամանակաշրջանում Բերիովենը սիրահարված էր բազմազավակ այրի ժողովինական գույնին: Կոմպոզիտորի գրած նամակներում կարդում ենք հետևյալ խոստովանությունները. «... Դուք կիմանաք, այն մասին, թե ինչն է ինձ տանջում և այն պայքարի մասին, որը ես որոշ ժամանակ փարել եմ ինքս ինձ հետ՝ մահվան և կյանքի միջև պայքարի մասին»: Մեկ այլ նամակում նա գրել է. «... Միևնույն է, ոչ մի խոսքով հնարավոր չէ արտահայտել Զեր կատարելությունը: Միայն հնչյուններով: Այս, արդյոք չափից ավելի անհամեստ չե՞մ, որ կարծում եմ, թե ինչյուններն ինձ ավելի կենքարկվեն, քան խոսքերը... Այս, ո՛չ, իմ հնչյուններով ես չեմ կարողանա արտահայտել այն: Թեպես դու, բնույթուն, չես խնայել ինձ տրվելիք այս շնորհը, այնուամենայնիվ այն չափազանց քիչ է նրա համար: Մեղմ բարախիր, իմ խեղճ սիրտ, դա այն ամենն է, ինչ Դու կարող ես անելք»<sup>23</sup>:

Հիշյալ նամակի վերջում Բերիովենն աղորում է իր սիրեցյալի համար. «Ո՞՛վ Արարիչ, պահպանի՛ր նրան, օրինի՛ր նրա օրերը, հետացրո՛ բոլոր դժվարությունները նրանից և ինձ տուր: Միայն թե նրան ո՛ւժ տուր, երանություն շնորհիր և միշտարություն՝ մահկանացուների այս խոնուկ, բայց

23. А. Аլյանց, Լյուդвիգ ван Բետհովեն, стр. 470-471.

այնուամենայնիվ, հաճախ երջանիկ կյանքում...»<sup>24</sup>: Արդյոք Բերիովենի այս ապրումները կարո՞ղ էին չանդրադառնալ նրա «աստեղային» կվարտետի անմահ երաժշտության վրա: Եվ կվարտետը լսելուց հետո մենք բանաստեղծի խոսքերով կարող ենք ասել.

Եվ երկինքն ու հոգին տառապած  
Դեռ երկար ժամանակ  
Մնում են լույսով ողողված...

(Հիլեգարդ Թոմե)

---

24. Անդ:

ՖՐԻԴԵՐԻԿ ՇՈՊԵՆ  
(1810-1849)

ԴՈՒ ԲՐՈՆԶ ՉԵՒՐ, ԱՅԼ ԵԹԵՐ...

Աշխարհը պառակտվել է, և ճեղքն  
անցնում է պոետի սրտի միջով:  
Հայնրիխ Հայն

**1810**-ի փետրվարի 22-ին Ժեյազովա Վոլյայի պարզ ու գեղատեսիլ մի տաճ մեջ ծնվեց համաշխարհային երաժշտության ամենապայծառ դեմքերից մեկը՝ Ֆրիդերիկ Շոպենը:

«Լեհական Մոնարք»՝ այսպես են անվանել ուրամյա Շոպենին, քանզի նա էլ հրաշանանուկ էր, նա էլ ապրում էր «երաժշտության մեջ»: Շոպենի հայրը՝ ֆրանսիական ծագումով Սիկոլայ (Շիկոլայ) Շոպենը, երիտասարդ ժամանակ ազգային զվարդիայի զինվոր էր, իսկ հետո՝ սպա, 1794-ի ապրանքության մասնակից: Հետազայում Սիկոլայը Վարչավայի Լիցեյի պրոֆեսոր էր, ուսուցանում էր գերմանացին ու ֆրանսերեն: Լինելով երաժշտասեր՝ նա անբաժան էր իր ֆիեյտայից ու ցուրակից: Շոպենի մայրը՝ Շուատընա Կշիժանովսկայան, դաշնակահարուիի էր: Նրանց ընտանիքում սիրված էր լեի ժողովրդի հերոսական անցյալը արտացոլող «Պատմական երգերի» ժողովածուն: Երեխան լսում էր նաև դասական երաժշտություն, օգինսկու հայրենաշունչ պոլոնեզները: Դաշնամուր նվագելու առաջին դասերը Ֆրիդերիկը ստացել է քրոջից՝ Լյուվիլկայից:



Շոպենի արվեստի գիտակ, մենագրության հեղինակ Իգոր Բելզան նշում է, որ Ֆրիդերիկի բացառիկ ընդունակությունների առաջին մղմանը մորեն օգնելու էր; Սի գիշեր երեխան կամացուկ ծայրով հնչեցնում էր մոր նվագմերը, որոնցով պարել էին սովորեցնում: Արքնացած մոր հարցին՝ «Ի՞նչ ես անում», նա պատասխանել է, թե պատրաստվում է փոխարինելու հոգնած մայրիկին:

Կենսագիրները Շոպենին բնորագրում են իրու աշխույժ, բազմակողմանի զարգացած երեխա. նա նկարում էր, դիպուկ կապկում պալատա-

կանոներին՝ բարձր պահելով իր արժանապատվությունը: «Հետագայում է երախտագետ երաժիշտը չզայթակղվեց, չկորուացավ ոչ երգչուի Կատալանի նվիրած ուսլյա ժամացույցի փայլից, ոչ կայսր Ալեքսանդր առաջին ընծայած աղամանյա մատանու շողերից, ոչ փառի առաջին ճառագայրներից, ոչ էլ ուսական կայսեր՝ առաջին դաշնակահարը լինելու առաջարկից...»

Շոպենը ստեղծագործական առաջին քայլերը սկսել է վեց տարեկանից, չեխ կոմպոզիտոր Վլյուելու Ժիվմի օգնությամբ: 1823–1826 թթ. սովորել է լիցեյում, իսկ 1826–29 թթ.՝ Վարշավայի Բարձրագույն երաժշտական դպրոցում՝ ճանաշված կոմպոզիտոր Յոզեֆ Էլսների ղեկավարությամբ: Էլսները Շոպենին պատվաստեց հարուստ գիտելիքներ, նրա հորդացող երաժշտականությունն ուղղեց դասական ու ռոմանտիկ հունով, իսկ շուտով Շոպենի ազգային վառ երանգի գետը հոսեց մի նոր հունով: Տղայի առաջին հորինվածքներից թիվ բան է հասել մեզ, բայց հայտնի է, որ դրանք եղել են պոլոնեզներ, մազուրկաներ, վալսեր և քայլերգեր: Լեհական հանդիսավոր պոլոնեզի շեփորային բնույթը դեռ Օգինսկին էր վերամարմնավորել իրքն ազգային զարդութիւն կոչնակներ: Շոպենի բալլարդներում և շնչտված է ազգային ազատատենչ ոգու բոիչը: Պատահական չէ, որ Շոպենի մազուրկաները Շումանը բնորոշել է որպես ծաղիկների հետևում բարձրված քննանորեր:

Մեծ Պազանինին երաժիշտներից ակնկալում էր ցնցող ներգործություն: Ուրամյա Ֆրիդերիկի առաջին իսկ ելույթը (1818-ին, 24 փետրվարի) ցնցեց ներկաներին, և նրա համբավը տարածվեց ամբողջ Եվրոպայով: Շոպենի հանճարի դրսնորմանն անհրաժեշտ էր միջազգային ասպարեզ, սակայն կառավարությունը ներժեց արտասահմանյան կրթաքուակի մասին հոր դիմումը: Մինչդեռ դաշնակահարի անդրանիկ համերգը Վիեննայում հիացմունք պատճառեց վիրտուոզներ տեսած ավստրիացիներին: Այդ ժամանակ նա արդեն բազմարիվ հասուն երկերի հեղինակ էր՝ նոկտյուրներ, վալսեր, 1-ին տոնատ, Մոցարտի թեմայով վարդացիաներ... Բացի այդ, ձեռք էր թերել համերգային մեծ փորձ:

1830-ի աշնանը Վարշավյան հնչեցին Շոպենի դաշնամուրի վերջին ակորդները, և թիվ անց Վիեննայում նրան հասան վարշավյան զարդութիւն համազարկերը: Նուսական գորքը մտավ Վարշավա՝ գեներալ Պասկվիչ-Էրիկանսկու գլխավորությամբ: 1831-ին Շոպենը Փարիզում էր, և ապրուամբության պարտության գույժը արձագանքվեց նրա «Հեղափոխական ետյուդում», 1-ին բալլարդում, պրելյուդներում: Իսկ Կրակովյան ընդգմանը նա ծայնակցեց թագութակի տոնատով (1846):

Շոպենի հոգեվիճակին համահունչ էին նաև Բերհովենի առնական արվեստը, Մոցարտի երկնային երաժշտությունը, և իր գործերի կողքին նա հնչեցնում էր դասականների երկերը՝ գերազանցելով հոչակավոր

Կալկրեններին, Տալերգիմ և այլ վիրտուոզներին: Կալկրեններն այնքան էր զմայլված Շոպենով, որ հաղթահարելով հպարտությունը՝ ցանկություն էր հայտնել նրա մոտ սովորելու, սակայն Շոպենը «քափարարվեց» իր համեստ սաներով՝ Օքրեսկովա, Լենց, հայազգի Կարլ Միկուլի...

Ինչպես երկնային լուսատունները ձգում են միմյանց, անդրադառնում ու փոխանցում հավերժի լույսը, այնպես էլ արվեստի աստղերը, հաղորդակցվելով մեկմեկու հետ, հարստանում են՝ լուսավորելով նաև այլոց: Լիստ, Պագանինի, Սենդելտոն, Բալզակ, Դելակրուա, Միջկիշ, Շուման, Հայն... ահա Շոպենին շրջապատող աստղաբույլը: Մեծ լեհին փոխանցվեց Լիստի նվազի մեծակերտությունը, Լիստն իր հերթին ազդվեց Շոպենի նրբագեղությամբ, Պագանինին ցույց տվեց նվազարանի հորիզոններն ու ընդլայնման հեռանկարները: Պագանինիի կրակու նվազից մերք բոնկվում էին լսողների սրտերը, մերք պարուրվում խորունկ բախիծով: Սակայն «Պագանինիի մելամաղճությունը միայն իր հոգու բախմծն էր, դյուրազգացության, սեփական դժբախտության արտահայտումը, մինչդեռ Շոպենի հայրենակից ջուրակահար Լիպինսկին իր բախմում, սրտալիության մեջ արտահայտում է ողջ Հյուսիսի մելամաղճը» (Մոխնացկի)<sup>1</sup>: Նման բախմիծը հատուկ է ճնշված ժողովուրդների հայրենաբաղ զավակներին: Հայերս լավ գիտենք դա: Հազարավոր տարագիրների դրաման կսկիծով արտահայտել է նաև լեհ մեծ բանաստեղծ (մայրական կողմից՝ հայկական գեներով) Յովիուշ Սլովացկին՝

Դեգերում ես դու այստեղ, դժբախտ տարագիր,  
Եղբորդ շճանաշող, իմ լեհ բարեկամ,  
Ուտիները Սենայի  
Սգատես են ավելի, քան ուսիբը Եփրատի...

Այս տողերը ակնարկում են 136-րդ Սաղմոսը, որ պատմվում է, թե ինչպես գերված հրեաները Բարելոնի գետերի մոտ ուղիներից կախել էին իրենց տավիղները և հրաժարվում էին երգել գերիշների համար հայրենի երգերը: Նույն սաղմոսի խոսքերով հորինված խմբերգով Բեղոյնի կոնսերվատորիայի սան Կոմիտասը արձագանքել է հայերի զանգվածային կոտորածներին...

Վիեննա, Փարիզ, Պրահա՝ որ էլ որ Ելույթ ունենար Շոպենը, ամենուր սկիոռում էր Հյուսիսի, այսինքն իր հայրենիքի ջերմությունը, սակայն ինքը մնում էր անմիտքար, քանզի Լեհաստանը դեռ չեղ ազատագրված: Ահա թե ինչու Դելակրուան Շոպենին պատկերել է դափնե պասկով, որի տերեւները ավելի շատ փշերի են նման:

1. Ի. Եզլեա, Ռոպեն, Մ., 1968, սր. 101.

Ծոպենի կյանքում եղել են նաև կարճատև ուրախության պահեր: Բնուրյան գեղեցկությունը, երգչուիի Դելֆինա Պոտոցկայան, գեղանի Մարիա Վլոձինսկայան, ֆրանսիացի գրող Ավրորա Դյուլիսանը (ժորժ Սանդ) հուզել են Կոնապօփիտորին, ստեղծել երջանկության պատրամբ: Ֆան Ֆինոր կոնցերտի երկրորդ մասը հաճարում են երգչուիի Կոնստանցիա Գլանդուկսկայայի հոգու պատկերը՝ ըստ Ծոպենի, և Լիսու այն դիտել է իրեւ կատարելատիա: Ավաղ, այս կանայք այդպես էլ չըմբռնեցին Ծոպենի աշխարհը; Եթե իր սիրեցյալ Մարիա Վլոձինսկայայի նամակների բորբապանակի վրա Ծոպենը գրել է «Իմ դժբախտությունը», ապա քանի հոգի նրա հատորների վրա կգրենին «Իմ երջանկությունը»...

Սայովիկա շնաշխարհիկ կղզում, ժորժ Սանդի ամառանոցում անցկացրած օրերն էլ դառնացան հիվանդության սաստկացումով: «Երկիրը գեղեցիկ է, ինչպես քո հոգին, իսկ հողը՝ սև, ինչպես իմ սիրտը», - գրել է Ծոպենն ընկերոջը՝ Յուլյան Ֆոնտանային:

Կոմպոզիտորի գործերի իրատարակիչ Ֆոնտանան էլ տարագիր էր, երբ Լոնդոնում վերջ տվեց իր կյանքին, քանզի «կորցրեց Լեհաստանը, Ծոպենին և լողությունը»<sup>2</sup>:

Ծոպենի վերջին համերգը տեղի ունեցավ 1848-ի նոյեմբերի 16-ին, Լոնդոնում: 1849-ի հոկտեմբերի 17-ին Փարիզում Ծոպենն ավարտեց իր բաժին երկրային կյանքը: Համաձայն կտակի՝ հոգեհանգստին հնչեց Սուցարտի «Ուերվիենը»: Կատարվեցին նաև Ծոպենի Սգր քայլերգը, Օրորոր և Վեցերորդ պրելյուդները (երգեհոնով)... Նրա մարմինն ամփոփեցին Պեր-Լաշեզ գերեզմանատանը, իսկ խոցված սիրտը տեղափոխեցին Վարչավայի Սուրբ Խաչ մատուռ:

Մահից հետո էլ Ծոպենին հանգիստ չին տալիս. 1863-ին Վարչավայի ընդունած օրերին գնդակողված պալատներից մեկում վճառվեցին մշակույթի բազմաթիվ մասունքներ, իսկ այն դաշնամուրը, որին շնչավորել էին Ծոպենի մատները, զինվորները լրսամուտից նետեցին փողոց: Այս առիթով «Ծոպենի դաշնամուրը» բանաստեղծության մեջ Զիպրիան Նորվիդը գրել է. «Խոր քարերն էլ տնրացին, ԷԴԵՍԼ դիպավ փողոցին»: Հետագայում հիտլերականներն ավերեցին Ծոպենի հուշարձանը Վարչավայում՝ մի անգամ ևս խոցելով նրա սիրտը: «Վարչավայում Ծոպենի հուշարձանը ավերելու առիթ» բանաստեղծության մեջ Լեոպոլդ Ստաֆը ասում է

Դու բրոնզ չիր, այլ եթեր,  
Հնչյունների Աստվածաշունչ,  
Համբակներին անհասու,  
Հոշոտեցին թեզ գայլ ու շուն...

Հուշարձանիդ քարը տնքաց,  
Դու մնացիր անտրտունջ,  
Եկ աշխարհիս Չարն ես քաղում  
Քայլերգովդ երկնահունչ:

2. Անդ, էջ 347:

## ԱՐՅՈՒՆՆԵՎ ԱՆՁՐԵՎ

«Փոքորիկը ծովում», «Անձրև», «Արցունը», «Լուսնի սոնատ», «Ավրորա», «Ռուգամունդա»... Նվազարանային ժանրերում տեղ գտած այս և նման անուններ միշտ չեն, որ տրվել են հեղինակների կողմից: Օրինակ, իր 14-րդ դաշնամուրային սոնատը Բերհովենը անվանել է «Սոնատ-ֆանտազիա», մինչեղ բեռլինցի բանաստեղծ Լյուդվիգ Ռյուշտարը այն անվանել է «Լուսնի սոնատ»: Իսկ 3-րդ սիմֆոնիայի հեղինակային անվանումը՝ «Հերոսական», պահպանվել է: Ալեքսանդր Բորոդինի 2-րդ սիմֆոնիան քննադատ Վլադիմիր Ստատովն անվանել է «Դյուցազնական»: Իսկ Մոդեստ Մուսորգսկին կոչել է «Հերոսական պավոնական»: Արամ Խաչատրյանի նժղեհաջուն 2-րդ սիմֆոնիան հայտնի է Գերգի Խովովի տված «Զանգով սիմֆոնիա» անվամբ:

Նման օրինակներ կարելի է շատ թերել: Սակայն նշենք մի արտառոց դեպք, որը չեր կարող չվկանվել Շոպենին, որը ընդհանրապես հակված չեր ծրագրային վերնագրեր կցել իր գործերին: Բանն այն է, որ Վեսելի հրատարակությունը Լոնդոնում Շոպենի 1-ին բալլարդ տպագրել էր «Սիրուհիս» թերեամիտ վերտառությամբ: Եվ դա՝ 1831-ի լեհական ապստամբության պարտությունից հետո, որի ազդեցությունը դեռ երկար տարիներ պիտի դառնացներ կոմպոզիտորին: Սինչեր ֆրանսիացի դրամատուրգ Ժան Պիեռ Մալեքիլի վկայությամբ, երբ Ադամ Միցկիչը լսում էր այս բալլարդը, այնքան էր հուզվում, որ «կարծես իր գրչակից նախնի Դանքենին հարցնում էր երկնքի գաղտնիքների և աշխարհի ճակատագրի նախն»<sup>1</sup>: Չէ՞ որ Շոպենի բալլարդ արտացոլված է Միցկիչի գովերգած ազգային ազատագրական պայքարի հերոս Կոնրադ Վալենրոդի կերպարը:

Առհասարակ, երաժշտության ծրագրայնության վերաբերյալ տարբեր նոտեցումները կարելի է համախմբել երկու թերեների շուրջ: Մեկը ներկայացնում է Էդուարդ Հանսյիկը, ըստ որի «կոնկրետ գաղափարների իմացությունը, որոնցից բխում է այս կամ այն երաժշտական ստեղծագործությունը, ոչինչ չի տալիս՝ այն հասկանալու համար... Այն, ինչը գտնվում է գեղարվեստական ստեղծագործությունից դուրս՝ գեղագիտական դատության համար գոյություն չունի»<sup>2</sup>:

«Ճիշտ չեն, – Հանսյիկին առարկում է Ալբերտ Շվայցերը և շարունակում, – անշուշտ, երաժշտությունն ինքնին միայն «մարուր» երաժշտություն է: Սակայն այդ «մարուր» երաժշտությունը տալիս է միայն կերպար»:

1. Ի. Եզլա, Ռոպեն, ստ. 191.

2. Ա. Ռևենպեր, Ի. Ս. Բախ, ստ. 332.

ների նշանները, նշանագրերը, որոնցից օգտվելով՝ կոնկրետ երևակայությունը «Ակարում» է պատկերներ, որոնք օժտված են հուզական որոշակի բովանդակությամբ: Այդ պատկերները համառորեն դիմում են լսողի երևակայությանը և պահանջում գգացմունքների տվյալ դրամայի հակադարձ քարգմանությունը... որպեսզի լսողը կրկին, գոնե ինչ-որ չափով, անցնի այն ճանապարհը, որով ընթացել է կոմպոզիտորի ստեղծագործական երևակայությունը»<sup>3</sup>:

Ըստ Հայոց իր համարմունքը հիմնավորում է բազում օրինակներով: Եթր Բերհովենիմ հարցել են իր 17-րդ և 23-րդ սոնատների մասին, նա հորդուել է ընթերցել Շեքսպիրի «Փոքրիկը»: Իսկ 1-ին լարային քառյակի «Ալաջոյում» Բերհովենի աշրին տեսիլվում էր հուղարկավորության տեսարանը՝ «Առմեն և Զուլիետ» ողբերգությունից:

Ըստ Հայոց իր համարձակ և ընդունելի է համարում Բերհովենի 14-րդ կվարտեսի ծրագրային մեկնությունը Ուիխարդ Վազների կողմից: Վազները խոսում է արվեստագետի կյանքի մեկ օրվա վայրիվերումներից, նշում առավոտվա լուսավոր հայացքը արտաքին աշխարհի վրա, այնուհետև՝ մոայլ մտորումները, մոլեգին պարը և այլ գործողությունները: Ավելի կոնկրետ Կարլ Մարիա Վեբերի դաշնամուրային «Կոնցերտչուուկի» ծրագիրը, որը կոմպոզիտորը պատմել է ներկաներին՝ նվազելու պահին: Նա խոսում էր մի խաչակիր ասպետի կնոջ մասին, որը դրյակի քարձությունը անհանգիստ հայացք էր ձգում դեպի հեռուները՝ Ավետյաց երկրից աճուանու մասին լուրերի ակնկալիքով: Ստեղծագործությունն ավարտվում է ասպետների վերադարձով, որոնք ուսերի վրա բերում են Հիսուսի առևանգված խաչափայտը...

Ուսումնասիրելով Յոհան Սեբաստիան Բախի արվեստը՝ Ա. Ըստ Հայոցը բացահայտել է բյուրեղացված բանաձևեր, խորհրդանիշեր: Եվ նվազագարանային երկերում հանդիպելով որոշակի դարձվածների, որոնք վոկալ երկերում կյանքի են կոչվել բանաստեղծական տեքստից և կրում են խորերի դրումը, Ըստ Հայոցը դրանց վերագրել է նույն բովանդակությունը և իմաստը:

Այսպիսով, երաժշտագետը կազմել է Բախի երաժշտական լեզվի «քառարանը», որի միջոցով նա վերծանում է այս կամ այն գործի բովանդակությունը, գաղափարը:

Ծրագրայնության բազմարիվ օրինակներ է բացահայտում Ծոպենի արվեստում Իգոր Բելզան: Այսպես, 14-րդ դաշնամուրային պրելյուդում, ինչպես նաև 2-րդ սոնատի ֆինալում, նա զուգահեռներ է նկատում Դանթեի «Դժոխքի» կերպարների հետ: Լա-մինոր պրելյուդը ստեղծվել է լիհա-

3. Անդ, էջ 332-333:

կան ապստամբության պարտության լուրճ առնելուն պես և հայտնի է «Աղոթք ամպրոպի ժամին» անվանք: 6-րդ նոկտուրնի (օր. 15, թիվ 3, սոլ-մինոր) ձեռագրի վրա հեղինակը նշել է. «Հանճետ» ներկայացումից հետո», ինչը հիմք է տալիս երաժշտագետին սկզբի թախծոտ մենեղին դիտել որպես Օֆենյայի երգը: Իսկ խորալային դրվագը, որը հեղինակը պահանջում է կատարել շշուկով և կրոնական ոգով, խորհրդանշում է Օֆենյայի հուղարկավորության տեսարանը: Մինչդեռ դրան նախորդող կտրուկ ակորդներում, ասես, հնչում է Համլետի «Լինե՞ թե՞ շինել» հարցը: Ֆամինոր վալսի աջ ձեռքում ու-քենոլ հնչյունի 12 անգամ կրկնվելը պատկերում է հարեւան եկեղեցու ժամացույցի զարկերը, որը նա կապում է Դրեգդմից Շոպենի վերադարձի ժամի հետ: 15-րդ պրելյուդի մասին թեզան գրում է հետևյալը. «Շոպենի գործերում հազիվ թե գտնվի մեկը, որը կարողանար նրգել 15-րդ պրելյուդի հետ՝ ծրագրային վարկածներ վերագրելու և առասպելներով պարունակությունը առումով: Հարկ չկա անդրադառնալ այդ առասպելներին և մակդիրներին, որոնք տեղում են այդ «անձրևային» պրելյուդի վրա (ինչպես այն վաղուց ի վեր անվանում են) համարելով, որ միշտին ձայնում համառորեն կրկնվող հնչյունները պատկերում են անձրկի կաթիլների աղմուկը»<sup>4</sup>:

Երաժշտագետն այս պրելյուդում նկատում է ավելի խորը բովանդակություն, քան լոկ անձրևի նմանակումը: Վեհ, թախծով լի այս ստեղծագործության մեջ ժողովրդի թաքնված ուժերն արթնացնելու կոչեր են լըսվում...

Եթե այս պրելյուդում անձրևի զաղափարը վիճահարույց է, ապա Յոհաննես Բրամսի թիվ 1 ստուտը՝ գրված ջութակի և դաշնամուրի համար, ամբողջությամբ հիմված է իր իսկ «Անձրևի երգը» և «Արձագանք» երգերի մեղեղիների վրա: «Անձրևի երգի» խոսքերի հեղինակը Կլաուս Գրուն է: Երգում գուգահեռ է անցկացվում անձրևի կարիլների և մարդու արցունքների միջև: Անձրևից խոտերը ծանրանում ու խոնարհվում են, իսկ այդ արցունքներից այտերն են այրվում: Եթե արևը կրկին բացվում է, կարիլները գոլորշանում են, խոտերը վերատին վեր են խոյանում: Մինչդեռ արցունքները ավելի են փայլում ու երեսին վառվում: Հիշյալ ստուտում ջութակը երգում-մորմորում է, ասես արտացոլում է մարդու արցունքները, իսկ դաշնամուրային նվազաքամնի տևական զարկերակը լավագույնս պատկերում է անձրևի կարիլները: Այնպես որ, այս ստեղծագործությունը իրավամբ կարելի է անվանել «Անձրևային ստուտ»: Ի դեպ, Բրամսի «Գերմանական ուքվինեմի» 2-րդ մասում ևս հանդիպում ենք անձրևի վառ տեսարանի: Եթե երգչախտումը երգում է «... սերմնացանը համբերությամբ սպասում է առավոտվա և երեկոյան անձրևին» խոսքերը, 1-ին ֆիեյտայի

4. Ի. Եղլա, Ռոպեն, ստ. 253.

և տավիկ «կաթկացող» հնչյունները պատկերում են անձրևի կարիքնեռը...

Անձրևի և արցունքի համեմատությունը բավական տարածված է համաշխարհային պոեզիայում, որի լավագույն նմուշներից է Ֆեոդոր Շյուտչևի «Արցունքներ մարդկային» բանաստեղծությունը:

Օ, արցունք աղի, արցունք մարդկային,  
Հոսում եք կանուխ, հոսում ուշ ժամին...  
Հոսում եք անլոր, անտես ու ծածուկ,  
Անսպառ եք հոսում, անթիվ, անհամար,  
Հոսում եք ինչպես անձրևի շիբեր՝  
Աշնան օրերին՝ դուք զօր ու գիշեր:

Նշված օրինակներում խոսքը անձրևի ու արցունքի գուգահեռի մասին էր, մինչդեռ Ալիքիուս Բերտրանի «Ունդինա» շնաշխարհիկ բանաստեղծության մեջ ջրահարսի արցունքները փոխակերպվում են անձրևի շիբերի. «Իսկ ես պատասխանեցի ջրահարսին, թե սիրում եմ երկրային մի աղջկա».

Ջրահարսը հոնքերը կիտեց և վրդովված,  
Մի քանի արցունք քափեց, նույն պահին պոռքկաց ծիծաղից  
Եվ վերածվեց գարնանային անձրևի շիբերի,  
Որոնք սպիտակ վտակներով հոսեցին լուսամուտի  
Կապույտ ապակու վրայով:

Որպես բնարան «Ունդինա» բանաստեղծությունը Սորիս Ռավելը կցել է իր դաշնամուրային համանուն ստեղծագործությանը, որտեղ նա իմպրեսիոնիստական գույներով ձայնանկարել է այս ֆանտաստիկ տեսքիը...

Որքան էլ համոզիչ լինի Ա. Շվայցերի «Արվեստների փոխանցության գաղափարը», այսուամենայնիվ, ծայրահեղության մեջ ընկնելու համար, հարկ է անսալ նաև է. Հանսլիկին, որը փիլիսոփա Գորիոլը Եփրամին Լեսինզի պես, սահմանազատում է արվեստները:

Ըստ Հանսլիկի, երաժշտությունը չի կարող, չի էլ կոչված պատկերացում տալու առարկաների մասին, այլ կարող է արտահայտել շարժումը՝ իր ողջ բազմազանությամբ հանդերձ՝ թե՝ մարդկային հոգու, թե՝ բնության:

Այս իմաստով դժվար է հաստատել օրինակ, Անտոն Բրուքների Յ-րդ սիմֆոնիան սկսող ջուրակների «կաթացող» հնչյունները անձրևի՝ կաթիւներ են, թե՝ անձրևի պես հորդացող արցունքներ, ինչպես Տյուտչևի վերոբերյալ բանաստեղծության մեջ... Գուցե նման պահ է ապրել ճապոնացի պոետը, երբ գրել է՝

Ամեն ինչ ճերմակ է, ամեն ինչ:  
Խառնվել են իրար ձյուն ու ծաղիկ,  
Ո՞րն է ձյունը, ո՞րը ծաղիկ.  
Բուրմունքն է միայն ցույց տալիս՝  
Որն է ձյունը, որը՝ սալորի ծաղիկ:

---

5. Классическая поэзия Индии, Китая, Кореи, Вьетнама, Японии, М., 1977, стр. 671.

## ՆԻԿՈԼՈ ՊԱԳԱՄԻՆԻ (1782–1840)

«ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ՎԵՐՋՄԱՆՈՒՄ Ե ՄԵՐ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ,  
ՍԿՍՎՈՒՄ Ե ՊԱԳԱՄԻՆԻՆ»

**Ա**նշուշտ, որևէ արվեստագետի, նրա առաքելության մասին պատկերացում կազմելու համար հարկ է նախ ուսումնասիրել նրա ստեղծագործական ժառանգությունը:

Սակայն տվյալ գործի դիմանկարն ամբողջանում է նրա ապրած դարաշրջանի, ժամանակակիցների իդեալների, հասարակության կյանքի շարժիչ ուժերի և պատմական այլ տեղեկությունների իմացությամբ:

Հետո նշուշտի հայտնի առակում քամին իրեն արևից ուժեղ երևակայելով՝ պատառուում է ճամփորդի շորերը, բայց չի կարողանում մերկացնել նրան: Մինչդեռ արևի մի ժայռից ջերմացած նույն մարդը կանալոր հանվում ու բերևացնում է իր հանդերձանքը:

Ահա այսպես, 19-րդ դարասկզբին Նապոլեոնը ամպագուզոռ բնդանորներով և այլ գեներով փորձեց ծնկի բերել ամբողջ Եվրոպան: Նույն ժամանակաշրջանում Նիկոլ Պագամինին իր ջութակի մեղմօրոր շշուկով ընդմիշտ նվաճեց Եվրոպան: Խսկ թիզ անց նրա անմահ երաժշտությունը գերեց ողջ աշխարհը: Խտալացի հանճարեն ջութակահար, կիթառահար, ոսմանտիկ, հակասական խառնվածքի տեր մարդ էր, հակասական էին նաև նրա ժամանակակիցների կողմից տրված գնահատականները: Օրինակ, Ֆերենց Լիստը գրել է. «Ոչ մեկի փառքը չի կարող համեմատվել նրա փառքի հետ... երկրորդ Պագամինի չի լինելու... Նա մեծ էր»<sup>1</sup>: Խսկ 1831-ի հունիսին լոնդոնյան «Օրգերվեր» թերթը գրել է. «Պագամինին անկրկնելի է, նա, անշուշտ, բոլոր ժամանակների ամենամեծ տաղանդն է...»: Ահա և գերմանացի մեծ ջութակահար Լյուդվիգ Շպորի անդրադարձը. «Ես լսել եմ Պագամինին... Նրա ձախ ձնորը, ինտոնացիայի մաքրությունը և «առյ»



1. Мария Тиасальди-Къеза, Паганини, М., 1986, стр. 3.

լարը գարմանալի են թվում: Սակայն նրա ստեղծագործությունները, ինչպես նաև դրանց կատարման ոճը, ներկայացնում են հանճարեղի և ինչ-որ մանկական միամստուքյան մի խառնուրդ, այդ պատճառով էլ դրանք միաժամանակ և՝ գրավում են, և՝ վաճում<sup>2</sup>: Այս և հետագա մեջբերումների առյուրը՝ Մարիա Տիբարդի-Կյեզայի «Պագանինի» մենագրությունը, «Արիադնեի թելի» պես օգնում է գտնելու հակասությունների լարդինքուսի ելքը: (Մենք օգտվել ենք այդ գրի ուստերեն բարգմանությունից, քանզի հայերենում կան որոշ կրօնական մեջբերումներ):

Նիկոլոյ Պագանինին ծնվել է 1782-ի հոկտեմբերի 27-ին, Չենովայում, Անտոնիո Պագանինիի և Թերեզա Բոչչարդոյի ընտանիքում: Հայրը նավահանգստի բանվորներից էր, այնուհետև՝ մանրավաճառ: Նա շկայացած երաժիշտ էր, նվագում էր մանդոլին և ջուրակ: Մայրը հավատավոր, խոնարի կին էր: Ինչպես նշում է Մարիա Տիբարդի-Կյեզան, անուսնու ծանր բնավորությունից ճնշված Թերեզան միշտարվում էր կրոնով և իր երեխաներով: Մայրը փափագում էր Նիկոլոյին տեսնել մեծ երաժիշտ դարձած: Եվ այդ իդաք նա երազում տեսած հրեշտակի միջոցով հղել էր առ Աստված: Նիկոլոյն չափազանց զգայուն էր երաժշտական հնյունների նկատմամբ: Բավական էր հայրը հնչեցներ իր մանդոլինը կամ ջուրակը, կամ լսվեր եկեղեցու զանգը, երգեհոնը, տղան անմիջապես զմայլվում էր, «կոկոնի պես ուրախանում արևի առաջին շողից»: Սա նկատելով՝ հայրը սկսեց պարապել զավակի հետ: Ինչպես փոքրիկ թերիովենի հայրը, Անտոնին ևս անողոք էր և ստիպում էր երեխային ժամերով նվազել: Թերիովենի հայրը՝ Յոհանն, համառորեն գգուում էր իրագործել իր ծրագիրը. «Լյուտիկիցը կդառնա «իրաշամանուկ»... Հայրը միջամտում էր ուսուցման ընթացքին, գրեթե բռնի կերպով ստիպում էր տղային օրական մի քանի ժամ նվազել»<sup>3</sup>: Պագանինիի հայրն էլ երբեմն ծեծում էր տղային, երբեմն՝ սոված պահում: Հայրն իր սահմանափակ գիտելիքներով երկար չէր կարող ուսուցանել Նիկոլոյին, ուստի շուտով տարավ ավելի բանիմաց նաև նագետների մոտ: Նախ՝ Չովաննի Չերվետոսոյի, հետո Ֆրանչեսկո Նյեկկոյի: Վերջինս մի շաբաթ արժեքավոր խորհուրդներ տալուց հետո տղային ուղարկեց իր ուսուցչի՝ եկեղեցու երաժշտապետ Զակոնու Կոստայի մոտ:

Այլ հրաշամանուկների համեմատ Պագանինին մի քիչ ուշ է մկնել նվազել՝ ինը տարեկանից, սակայն, ինչպես ասում են, նա աճում էր ոչ քեզոցը, այլ ժամ առ ժամ: Տաս տարեկանում նա արդեն հորինում ու հեշտությամբ նվագում էր բարդ գործեր: Նիկոլոյն մշտապես նվագում էր եկեղեցում, մասնակցում կիրակնօրյա և այլ հանդիսավոր արարողություններին: Այդ մասին վկայում է Չենովայի «Ավկիզի» քերքի հոդվածը

2. Անդ, էջ 345:

3. A. Ալյաշվանց, Լուծուց առ Բետխովեն, ստ. 22.

(31.05.1794), որը մեջքերված էր իիշյալ մենագրությունում: «...Սան Ֆիլապոյի եկեղեցում... հնչեց հարմոնիկ մի կոնցերտ, որը կատարեց հայտնի ուսուցիչ Զակոնո Կուտայի սան, տասմնենկամյա բարձրարվեստ սինյոր Պագանինիմ առաջացնելով համբնդիանուր իիացմունք»<sup>4</sup>: Նույն այս թերթը տեղեկացնում է, որ Պագանինի առաջին հրապարակային ելույթը համերգասրահում տեղի է ունեցել 1795-ի հուլիսի 31-ին: Ի թիվս այլ գործերի, Նիկոլոն կատարեց իր հորինած Վարիացիաները «Կարմանյոլա» հայտնի երգի թեմայով: Ֆրանսիական հեղափոխության հովերով համակված այդ երգը և զուրակահարի վիրտուոզ Կերպարափոխությունները ցնցեցին ունկնդիրներին: Քիչ անց այս նույն ստեղծագործությունը իիացրեց նաև հայտնի զուրակահար Սալվատորե Տինտիին և արվեստասեր իշխան Զանկառը դի Նեգրոյին: Վերջինն Նիկոլոյին և նրա հորը տարավ Ֆլորենցիա և ներկայացրեց անվանի վարպետ Ալեսանդրո Ռուզային: Այդ հետաքրքրական համբիաման մասին տեղեկանում ենք իիշյալ գորից: «Այդ օրը Ռուզան հիվանդ էր և տրամադիր չէր հյուրեր ընդունելու: Հարևան սենյակում սեղանի վրա Նիկոլոն տեսավ զուրակ և նոտաներ: Պարզվեց, որ դա մաեստրոյի նորաստեղծ կոնցերտն էր: Տղայի հայրը աշքով արեց, և Նիկոլոն վերցրեց զուրակը ու սկսեց հանպատրաստից նվագել Ռուզայի նոր գործը: Հիվանդ կոմպոզիտորը ցնցվեց, անկողնուց վեր բռավ, մոտեցավ հյուրերին և տեսնելով, որ նվագողը 13-ամյա երեխս է, աշքերին և ականջներին շիավատաց: «Տղաս, ես, քեզ ոչինչ չեմ կարող սովորեցնել, – հուզված բացականչեց նա, – ի սեր Աստծո, գնա Պատրի մոտ»<sup>5</sup>: Ռուզան նկատի ուներ ժամանակի հոչակավոր կոմպոզիտոր Ֆեռդինանդ Պաերին (1771–1839):

Այսուհետ Պագանինիի հետագա վերելքը շղթայվում է նման և առավել զարմանալի հրաշագործություններից: Այսպես, Պարմա քաղաքում գեղանկարիչ Պազինին Նիկոլոյի առջև պայման էր դրեւ, որ եթե տղան կարողանա հանպատրաստից նվագել անծանոք մի կոնցերտ, նրան կնվիրի Գվարների վարպետի պատրաստած իր հրաշալի զուրակը: Ահա այսպես Պագանինին նվաճեց իր առաջին զուրակը: Նման դեպք տեղի ունեցավ և Լիվոնո քաղաքում, ուր Նիկոլոն հայտնվել էր առանց զուրակի՝ գրասնում ունենալով ընդամենը երեք լիր: Այդ օրերին Պագանինին նտաղրված էր մեկնելու Պետերբուրգ՝ իր հանապագօրյա հացը վաստակելու: Սակայն քահստը նույնական սիրում էր «իմպրովիզացիաներ» ամել: Լիվոնյի եկեղեցում մի հավաքույթի ժամանակ մեծահարուստ արվեստասեր Լիվոնը իր զուրակը տրամադրեց Պագանինին և խնդրեց նվագել Վիստիի կոնցերտը, որից հետո հիացած սինյոր Լիվոնը իր հրաշալի զու-

4. Мария Тибальди-Къеза, Паганини, стр. 24.

5. Ան, էջ 32:

թակը նվիրեց Նիկոլոյին: Մաղրեց նաև, որ Պագանինից բացի ուրիշ ոչ մեկի մատները չդիպչեն այդ ջուրակին: Սրանք Պագանինիի առաջին հաղթական քայլերն էին: Եվ եթե Նապոլեոնը գալիս էր տիրելու Խոտայան, ապա Պագանինին գնում էր նվաճելու Փարիզը, Բեռլինը, Վիեննան, Լոնդոնը և այլ խոշոր կենտրոններ:

Այդ ժամանակաշրջանը ընդունված է անվանել նապոլեոնյան, սակայն նույն հաջողությանը կարելի է կոչել նաև Պագանինիի դարաշրջան: Նապոլեոնի և Պագանինիի միջև գուգահեռ է անցկացրել դեռ Վոլֆգանգ Գյորեն, ինչը վկայում է Պագանինիի նվազի ներգործման աննախաղեաց գորության մասին: Եքերմանի հետ ունեցած իր գրույցներում Գյորեն ասել է. «Դեմոնիզմը (Դիվականությունը – Դ. Ե.) այն է, ինչը շեն կարող ըմբռնել ոչ դատողությունը, ո՛չ բանականությունը: Իմ խառնվածքում այն բացակայում է, սակայն ենթակա եմ դրան: Նապոլեոնը վերջին աստիճանի օժտված էր դրանով... Դիվականությունը դրսևորվում է բացառապես դրական ենթագիայում... Այս ավելի շատ դրսևորվում է երաժշտության, բան գեղանկարչության մեջ: Դիվականությունը չափազանց բնորոշ էր Պագանինին, ինչով և բացատրվում էր նրա նվազի անջնջելի տպավորությունը...»<sup>6</sup>: Բալզակն էլ է Պագանինին համեմատել Բոնապարտի հետ՝ անվանելով նրան իր արվեստի Նապոլեոն:

Մինչ Պագանինին մեկը մյուսի հետևից հաղթում էր իր մրցակիցներին, նրա երկրպագուներն, ասես, մրցում էին, թե ով ավելի խորը, ավելի բարձր կլմբոնի, կգնահատի նրան, փորձում էին բացատրել Պագանինի երևոյթի առեղծվածը, ընդգրկել անընդգրկելին: Ահավասիկ Նյուրնբերգի համերգից հետո նրան անվանեցին «նոր Օրփեոս» իսկ Դրեզդենի «Մերկյուր» թերթը ջուրակահարին կոչեց «Շերսայիր՝ արտիստների մեջ»<sup>7</sup>: Ծովուտգարտի «Մորգենբլատ» թերթը 1829-ի դեկտեմբերի 12-ի համարում գրել է. «Ջուրակի արվեստում Պագանինիից սկսվում է մի նոր դարաշրջան»<sup>8</sup>: Նոր, ոռնանտիկ ժամանակաշրջանը պահանջում էր նոր մտածելակերպ, նոր արտահայտչամիջոցներ: Եվ Պագանինին ընդլայնեց ջուրակի հնարավորությունները: Բանաստեղծ Լյուդվիգ Ռյուշտարը, որը Բեթհովենի 14-րդ սոնատն անվանել էր «Լուսնի սոնատ», Պագանինիի նվագով ցնցված, ասել է. «Ես կյանքում չէի լսել, որ նվագարանը լաց լինի... Չէի կարծում, որ երաժշտության մեջ կարող են լինել նման հնչյուններ: Նա խոսում էր, նա լալիս էր, նա երգում էր...»<sup>9</sup>:

Բացահայտելով լարերում բարձրված նորանոր հնչյուններ, այսպես

6. Անդ, էջ 345:

7. Անդ էջ 172:

8. Անդ, էջ 185:

9. Անդ, էջ 173:

կոչված՝ ֆլամուլետներ, Պագանինին, ասես, երկարացրեց ջութակի լարելը: Նա առատորեն կիրառում էր աջ և ձախ ձեռքի «կսմիքներով» ստացած հնչյուններ, որոնք նմանակում էին մանդոլինի, կիբառի կամ տավղի հնչողությանը: Աղեղի ուժգին հարվածներով ջութակահարը միաժամանակ հնչեցնում էր մի քանի լար միասին, ձախ ձեռքի մատների լայն քացվածքի շնորհիվ ստանում հնչյունային նոր համակցություններ: Այս ամենի միջոցով՝ Պագանինի ջութակը հնչում էր որպես մի քանի գործիքների խումբ: Ասես, զրոյից էին բոնվում ջութակը, ֆլեյտան, գալարափողերը, կիբառը, թմրուկը... «Վհուկների պարը» վարիացիաներում սրանց ավելանում էր ֆագոտի նմանակումը, փիուկների պարի ֆանտաստիկ ելեկցները: Պագանինի 9-րդ կապրիսում «Փլեյտաներին» արձագանքում են «գալարափողերը», և ստեղծվում է որսի տեսարան որտորդական փողերի փոխկանչերով: Կապրիսը այդպես էլ կոչվում է՝ «Որս»: 20-րդ կապրիսում ընդվոր «ոռե» բաց լարի «գամճը» նմանվում է պարկապղուկի: Պագանինին անհասանելի բարձունքի հասցրեց ինպրովիզացիայի արվեստը: Հանգատրաստից նվազելու շնորհը ևս մերձեցնում է երկու հանճարներին՝ Պագանինին և Ըերենովենին: Պագանինին էլ իր հընթաց հորինած հնչյունային ժանյակներով զարդարում էր իր և ուրիշների ստեղծագործությունները: Ավագձի վառ վկայություն է Պագանինինի և ֆրանսիացի ջութակահար Շառլ Լաֆոնի մրցույթը: Միլանի «Լա Սկալա» թատրոնի բենում իր կոնցերտը նվազելուց հետո Պագանինինին միացավ Լաֆոնը և միասին կատարեցին Ռուտոլֆ Կրեյցերի երկու ջութակի և նվագախմբի կոնցերտը: Մենանվագ դրվագներում, նվագախմբի պաստառի վրա Պագանինին իր շողարձակ հնչյուններով այնպիսի նախշեր գործեց, որ հմայվել էին ոչ միայն ունկնդիրները, այլև՝ իր ախտյան Լաֆոնը: Այս մրցույթի հաղթական «ակորդը» Պագանինինի վերոհիշյալ «Վհուկների պարը» գործն էր: Այն կերտված է կոմպոզիտորի նախասիրած վարիացիաների ձևով և հիմնը ված է Զյուսմայերի «Քենեվենտոյի հարսանիքը» բայետի թեմայի վրա: Ջութակի և նվագախմբի համար գրված միջամտործում չուրականակարը մվագում է միայն մեկ լարի, այսինքն՝ 4-րդ (սոլ) լարի վրա և ցուցադրում վիրտուոզ տեխնիկա ու բագում հնարքներ: Նույն ձևով է կառուցված նաև «Նապոլեոն» փառահեղ ստնատը: Մինչ այդ Պագանինին հորինել և կատարել էր «Սիրո տեսարան» պիեսը՝ ջութակի երկու լարի վրա: Ընդ որում, լարերից մեկն, ասես, սիրահարված աղջկա սրտի «լարն» է, մյուսը՝ իր սիրեցյալի: Այս երկու Պագանինին արտահայտել է իր սերը Նապոլեոնի քողջ՝ գեղասիր Թոթենի հանդեն: Այդ ժամանակ Նապոլեոնը արդեն քագարկված էր Խտալիայի արքա: Եվ Նապոլեոնի ծննդյան օրը, 1805 թվականի օգոստոսի 15-ին, կայացած հանճարությանը նա մեծ շուրջով կատարեց «Նապոլեոն» ստնատը: Դա տեղի է ունեցել Բոնապարտի մյուս քրոջ՝ Ելիզայի տիրապետության տակ գտնվող Լուկա քաղաքում: Այսպիսով,

«Նապոլեոն» սոնատն իր արժանի տեղը գրավեց Նապոլեոնին ձռնված Ժաք-Լուի Դավիդի և Անտուան-Ժան Գրոյի գլուխգործոցների շարքում: Սիլլանում կայացած համերգից հետո սկսվեց Պազանինի սոնատի հաղթաշավը դեպի Իտալիայի չնվաճված քաղաքները, այնուհետև՝ Եվրոպայի տարբեր երկրներ: Մինչդեռ ջուրակահարի համբավն արդեն թևածում էր Իտալիայի սահմաններից դուրս: Ահա Սիլլանում կայացած նրա համերգներից մեկի մասին Լայպցիգի երաժշտական թերթի արձագանքը. «1813-ի հոկտեմբերի 29-ին սինյոր Պազանինին, Զենովայից, կատարեց Կրեյցերի մի մինոր կոնցերտը և իր հորինած վարիացիաները 4-րդ լարի վրա: Բոլորն ուզում էին տեսնել և լսել այդ հրաշագործին, բոլորը խորապես ցնցված էին»<sup>10</sup>:

Հետագայում Լայպցիգի երաժշտասերները և մասնագետները ականատես պիտի լինեին և ոչ պակաս ցնցվեին Պազանինի նվազից: Նույն տեղի ունեցավ Վիեննայում, Պրահայում, Բեռլինում, Փարիզում, Լոնդոնում և այլուր: Ամենուր հաղթանակ, ծափեր, ծաղիկներ, արցունքներ, համբույրներ, նվերներ...

Ի դեպ, ոչ միայն ինքն էր բերկրանքի արցունքներ պարզեւում: Վիեննայում Բեթհովենի 7-րդ սիմֆոնիան լսելուց հետո ինքը՝ Պազանինին էլ արտասվեց... Վարչավայում, արքունիքում կայացած համերգից հետո, Ռուսիո կայսրը Պազանինին նվիրեց աղամանդներով զարդարված ոսկյա մատանի: Եվս մեկ մատանի ջուրակահարը ստացավ Անգլիայի բազավորից: 1830-ին իշխան Ֆրիդրիխ 4-րդը Պազանինին շնորհել էր բարոնի տիտղոս: Անշուշտ, սրանով չի սահմանափակվում այն տիտղոսների, պարզեների թիվը, որոնց արժանացել է ջուրակահարը: Այս ընծանելի, շրանշանների համապատկերում կարելի է նկատել բնուրագրական մի նրբագիծ: Դա այն է, որ Պազանինինի համար արվեստը բարձր է կանգնած քաղաքականությունից, քշնամությունից և ունի նաև մարդկանց միավորող առաքելություն: Ահավասիկ, Պազանինինին մեծարում էին և Ռուսիո կայսրը, և նրա ախտյան Նապոլեոնի քույր Էլիզա Բոնապարտը, որը մահեստրոյին շնորհել էր Լուկլիայի հանրապետության առաջին ջուրակահարի տիտղոսը: Իր հերթին, ինչպես նշվեց, կոմպոզիտորը Նապոլեոնին սոնատ էր ձևնել: Այլ կերպ էր վարվել Ծոպենը: Նա շընդունեց նույն կայսրից Ռուսիայի առաջին դաշնակահարի տիտղոսը: Իր սկզբունքայնությունը ցուցաբերել էր և Բեթհովենը: Ֆրանսիական հեղափոխությունից հետո, երբ խոստացած ազատության, եղբայրության, հավասարության փոխարեն Նապոլեոնը ինքն իրեն հոչակեց կայսր, հիասքափված Բեթհովենը պատուեց և դեռ նետեց Նապոլեոնի անունը կրող միմֆոնիայի տիտղոսաբերը և այն վերանվանեց «Հերոսական»: (Նմանապես վարվեց մեծ

10. Աճ. էջ 73:

ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին՝ հայերի կոտորածից հետո դեռ նետելով սովորանից ստացած շքանշանը):

Մինչդեռ Պագանինին իրեն տրվող պարզեներն ընդունում էր ոչ այնքան փառասիրությունից, որքան իր միակ օպավակի բարօրությունն ապահովելու նպատակով, որպեսզի Արքիլեն հոր պես աղքատ և վատառողջ չմեծանա: Բացի այդ, ջուրակահարը նյութապես օգնում էր նաև կարիքավորներին: Միա վառ վկայությունն է ֆրանսիացի կոմպոզիտոր Հեկտոր Բեոլիոզին նվիրաբերած 20000 ֆրանկը: Բեոլիոզը դուրս եկավ ճգնաժամից, ստեղծեց «Ռումեն և Չուխնետ» դրամատիկական սիմֆոնիան և այն նվիրեց Պագանինին:

Մաեստրոյի բազմաթիվ բարեգործական համերգներից հիշատակենք միայն մեկը, որը տեղի է ունեցել 1829-ի ապրիլին՝ ի նպաստ իհվանդների: Այդ օրերին Փարիզում մոլեգնում էր խոլերայի համաճարակը: Հաճարակ քայլ էր Պագանինիի կողմից, մանավանդ երես հիշենք, որ նա արդեն տառապում էր աղիքային հիվանդությամբ, ինչը մեծացնում էր վարակվելու վտանգը: Իր ընկերոջը՝ Զերմին հասցեագրած նամակում նա տեղեկացրել է զանգվածային զոհերի և փախստականների մասին. «Ռուսինին վախից մեկնեց, իսկ ես, ընդհակառակը, ոչնչից չեմ վախենում, այլ ուզում եմ օգտակար լինել մարդկանց»<sup>11</sup>:

Եվ երես մինչ այդ Պագանինին ասում էր. «Մեծերից չեմ վախենում, խեղճերին չեմ արհանձնարկում», ապա Փարիզի եղույթից հետո նա կարող էր ավելացնել. «Խոլերայից էլ չեմ վախենում»: Այս առունով էլ կարելի է գուգահեռ անցկացնել Պագանինիի և Նապոլեոնի միջև, որը ժամանակին այցելում էր Վարակված զինվորներին, ձեռքով բարեկում ու քաջալելում երանց...

Պագանինիի գրասրտությունը դարևորվում էր ամենատարբեր ձևերով: Մի անգամ Վիեննայի փողոցներից մեկում մի մուրացկան տղայից նա վերցնում է ջուրակը և սկսում է ինքը նվազել: Եվ հավաքում է մի մեծ գումար: Հայտնի է մեկ այլ հետաքրքրական դեպք, որը նույնպես տեղի է ունեցել Վիեննայում: Մի կառապան իր ծառայության համար պահանջել էր իինձ գուղին: Այդքան կարճ ճանապարհի համար իինձ գուղինը Պագանինին շատ է համարում: Սակայն կառապանը առարկում է, նշելով, որ ջուրակահարի համերգի տոմսը նույնպես իինձ գուղին է, մինչդեռ նա նվազում է ընդամենը մեկ լարի վրա: «Խսկ դու կարո՞՞ն ես սայլակդ քշել մեկ անիվի վրա», - կատակում է Պագանինին և նրան նվիրում իր համերգի մեկ տոմս: Եղույթից հետո կառապանը խնդրում է Պագանինիի համաձայնությունը իր կառը անվանել «ա-լա Պագանինի»...

Որքան էլ կլանված լիներ հյուրախաղերով, ջուրակահարը, այնուամե-

11. Անդ. էջ 250:

նայնիվ, հասցնում էր ժամանակ տղամադրել աշակերտներին: Պագանին անվճար դասեր էր տալիս և չափազանց արդյունավետ: Պագանինին կարողացավ յոթնամյա Կամիլը Սիլվրիի հետ այնպես պարապել, որ երկու շաբաթ անց տղան հրապարակավ եղույթ ունեցավ: Կիրառելով իր մեթոդ՝ Պագանինին այնպես վերափոխեց միջակ բավորթակահար Չանդելին, որ երեք օր անց նա արդեն «ուրիշ երաժիշտ էր»: Վարպետի մերողի գաղափարներից մեկն այն էր, որ վարժությունները նա համապատասխանեցնում էր ձեռքերի, մատների մկանների բնական կառուցվածքին: Հզոր խրան էր նաև անձնական օրինակը: Պագանինինի նվազը շանքի պես էր միսրամում աշակերտի հոգեւոր ոլորտը և ներքուստ բոցավառում նրան: Սա հիշեցնում է իմաստուն Վիվեկանանդայի հետ կատարվածը: Բավական էր, որ ծանրանալիս իր ուսուցիչը բներևակի դիաչեր նրա արմունկին, որպեսզի նա ցնցվեր, պայծառակերպվեր և ինքն իրեն նոր մարդ զգար:

Քանի որ Պագանինինի ժամանակ գոյուրյուն չուներ ձայնագրման տեխնիկան, նրա արվեստի, նրա հոգեկերտվածքի մասին պատկերացում ենք կազմում ըստ նրա ստեղծագործությունների: Ծիշտ է ասված, թե Պագանինինի երաժշտությունն իր իսկ դիմանկարն է: Հիրավի, Ունմրանի պես, նա էլ ստեղծել է իր բազմարիվ հնչյունակերտ «փնճնաղիմանկարները», տարբեր տարիքի, տարբեր բնույթի: Դրանք են՝ ջուրակի մենանվագ 24 կապրիսները, ջուրակի և նվազախմբի 5 կոնցերտները, «Մովսեսի աղորքը», «Վիուկների պարը», ալտի և նվազախմբի ստեղծությունները, գործեր՝ կիրառի և ջուրակի համար, կվարտետներ և այլն: Մի առիթով Պագանինինի երաժշտագետ Շոտկին խոստովանել է, թե այլև ուրիշ ստեղծագործություններ չի կատարելու, քանի որ նա գերադասում է իր գործերի միջոցով դրսնորել իր ոճը, իր խառնվածքի առամձնահատկությունները: Նա համոզված էր, որ ունկնդիրների մեծ մասը նույնպես ակնկալում էր իր նորաստեղծ գործերը լսել: Այդուհանդերձ, ջուրակահարը սիրով նվազում էր Հայդնի, Մոցարտի, Բերհովենի կվարտետները: Հայտնի մի կվարտետը կատարելուց հետո Պագանինին իր ընկերոջը գրել է, որ նախ ճշգրիտ է նվազել հեղինակի տեքստը, առանց իր իմարտվիզացիաների միջամտության: Բացի այդ, ասել է հետևյալը. «... Իմ նվազից ինչ-որ մի թովշամբ էր բխում, որը չեմ կարող նկարագրել»<sup>12</sup>:

Պագանինինին մեծ էր, բայց ոչ մեծամիտ: Նա չէր թերագնահատում իր արժանի ախտյաններին: Ահա նրա կարծիքը պարտված ֆրանսիացու մասին. «Լաֆոնի հնչյունը գուցե ավելի գեղեցիկ էր, քան իմը, սակայն

12. ԱՅԵ, էջ 94:

ունկնդիրների ծափերն իմաց պարզ հասկացրին, որ այդ պայքարում ես շպարտվեցի»<sup>13</sup>:

Համերգներից հետո Պագանինին երբեմն հարցնում էր. «Ճիշտ է, չ՞», վերջում ես ավելի լավ նվագեցի»<sup>14</sup>: Արվեստագետին արժանավայն իր կեցվածքը, մեծ վարպետի հաղթական ոգին հաճախ էին շարժում ոմանց նախանձը, բորբոքում իմբնասիրությունը: Պագանինին նախանձում էին ոչ միայն երաժշտները, այլև՝ իշխանավորներ:

Խոսրի հանճարեղ վարպետներ Գյորեն, Հայնեն, Բյոնեն և այլք նրան բնութագրելիս, օգտագործելով «հրաշագործ», «հանճար», «գերբնական» բնորոշումները, դարձյալ ասում էին, թե խոսր չեն գտնում արտահայտվելու: Եվ դա լսվագույն հաստատել է կոմպոզիտոր Զակոն Մեյբրեդը: Պագանինին ներկայացնելով Պրուսիայի քաջավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ 3-րդին, նա ասել է. «Այստեղ, որ վերջանում է մեր երևակայությունը, սկսվում է Պագանինին»<sup>15</sup>: Ոչ բոլոր իշխանավորներն էին հանդուրժում նրա փառքը, անկախությունը: Այսպես, 1817-ի փետրվարին Տուրինի համերգին Պագանինին հրաժարվել էր ծրագրից դուրս նվազել, և վրդովված նահանգապետը հանել էր հաջորդ համերգը: Իսկ Դուրցինում ինքը՝ Պագանինին էր հրաժարվել հերթական համերգից, քանի որ իր շարժումները բեմում՝ ծիծաղ էր առաջացրել դահլիճում:

Հակասական էր նաև հոգևորականների վերաբերմունքը: Մի կողմից Հոռմի պապ Լուս 12-րդը Պագանինին շնորհում է «Ուսկե խրան» շրանցանը, մյուս կողմից հոգևորականներից ոմանց նրան նեղադրում են սատանայի հետ կապ ունենալու մեջ: Մինչդեռ, ինչպես գրում է Մարիա Տիրարի-Կյեզան. «Պագանինին աթեստ չէր: Դա երևում է նրա բազում նամակներից: Դա են ապացուցում նաև այլ փաստեր՝ իր որդուն նա դաստիարակել է քրիստոնեական հավատով և ստիպում էր կատարել կարողիկան եկեղեցու ծեսերը... Նա իմանալով մոր մահը՝ ցանկություն էր հայտնել հանդիպել նրան երկնքում...»<sup>16</sup>: Ի դեպ, Մոցարտն էլ ժամանակին մոր մահվան առիրով նամակով մշտիքարել է հորը, համոզնունք հայտնել, թե համերձյալ կյանքում կրկին կիանդիպեն սիրելի մայրիկին:

Առանց Աստծո կամքի և հաճության Պագանինին կամ որևէ մահկանցու չէր կարողանա ստեղծել նման գլուխգործոցներ, չէր կարողանա այդպես նվազել: Պատահական չէ, որ նույնիսկ հայտնի ջուրակահարները, սովորաբար աշքով դիտելով, եկան այն եղրակացության, որ Պագանինի գործերը անհնարին է նվազել: Միայն 20-րդ դարում, կատարողա-

13. Անդ, էջ 86:

14. Անդ, էջ 208:

15. Անդ, էջ 172:

16. Անդ, էջ 329:

կան տեխնիկայի վերելքի փուլում, հնարավոր եղավ վերածնել մեծ իտալացու արվեստը: Եվ առաջին կատարողն էր չեն ջուրակահար Յան Կուրելիկը:

Պագանինին օժտված էր ոչ միայն գեղագիտական և բարոյական լիցքով: Նրա արվեստը հաղորդակցվողին մղում է ստեղծագործելու: Կյանքի հարվածներից հուսալրված Ֆերենց Լիստը, լսելով նրա նվազը, զարբոնք ապրեց և իր առջև դրեց գերիննիդի՝ հասնել Պագանինիի բարձրորդյանը: Ծգմեց, տքնեց և հասավ: Բազում կոմպոզիտորներ Պագանինիի մնացելի ները, թեման օգտագործել են որպես թթվամոր՝ կերտելով նոր գործեր, նորով բացահայտելով նրա թեմաների ներուժը: Դաշնամուրային գործերից նշենք Լիստի «Մեծ էտյուտները՝ ըստ Պագանինիի», «Մեծ ֆանտազիան»՝ Պագանինիի «Կամպանելլայի» հիման վրա, Բրամսի «Վարիացիաները՝ Պագանինիի թեմայով», Ռախմանինովի «Ռապսոդիան՝ Պագանինիի թեմայով» (դաշնամուրի և նվագախմբի համար), Վիտոլ Լյուտոսկու ավագուու «Վարիացիաները» երկու դաշնամուրի համար, Ալֆրեդ Կազելայի «Երազների վարդը» բալետը, «Պագանինիանան» սիմֆոնիկ նվագախմբի համար և այլն: Ըստ երաժշտագետ Իզրայիլ Յամպոլյանի, Պագանինիի 21-րդ կապրիսում կիրառված են մեղեդոր զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք կանխանշել են Լիստի և Վագների հնարները: Պագանինիի ազդեցությունը զգացվում է Սերգեյ Պրոկոֆևի Ջուրակի 1-ին կոնցերտում, Մորիս Ռավելի «Գնչուին» ֆանտազիայում, Կարոլ Շիմանովսկու «Սիրոսներում» և այլն<sup>17</sup>:

Այսօր էլ Պագանինիի գործերը ջուրակահարների կատարողական տեխնիկայի, վարպետության և հասունության չափանիշ են: 1954-ին Զենվայի Պագանինիի անվան ինստիտուտը հիմնել է ջուրակահարների ամենամյա միջազգային մրցույթը: Այն կազմում է Քրիստովոր Կողովորությունը և կիշատակին նվիրված տոնահանդեսների մի մասը: Այստեղ էլ կարելի է զուգահեռներ նկատել՝ եթե Պագանինիի հայրենակից Կոլումբոսը երկրագնդի վրա էր հայտնագործություններ կատարում, ապա Պագանինին բացահայտում էր հնչյունային նոր աշխարհներ, մարդկային հոգու նոր ոլորտներ:

Նշված մրցույթում հաղթողին պատիվ է վերապահված տոնախմբության եզրափակմանը նվազել Պագանինին պատկանող ջուրակը: Պագանինիի անվան մրցանակին արժանացել են Սալվատորե Ակվառորն, Էմիլ Կամիլարովը, Օլեգ Կրիստոն, Ժակ-Ժան Կանտորովը, Վիկտոր Պիկայզենը, Գիյոն Կրեմերը և ուրիշներ: Պագանինիի երաժշտության մեկնարանան բնագավառում մեծ ներդրում են կատարել Դավիդ Օյստրախը, Լեոնիդ Կոզմանը, Ռուզիերո Ռիչչին և այլք:

17. Մայկալինա энցիկլոպեդիա, թ. 4, ստր. 148-149.

Կան ջութակահարմեր, որոնք իրենց առջև գերխսնդիր են դնում՝ կատարել և ծայնագրել Պազանինի բոլոր 24 կապրիսները: Հայտնի են Վիկտոր Պիկայզնի, Մայրլ Ռարինի, Թոմաս Չնիետմայնի և այլոց ձայնագրությունները: Հայ ջութակահարմերից այդ խնդիրը բարձր վարպետությամբ իրականացրել է Նիկոլայ Մահոյանը: Խոկ ճախքան Մահոյանը, 1995 մուը ու ցուրտ թվականին մեկ համերգի ընթացքում Պազանինի բոլոր 24 կապրիսներն անզիր նվազել երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողութիւն Գոհար Դանիելյանը<sup>18</sup>:

Ամփոփելով մեր խոսքը Պազանինի մասին, նշենք, որ նրա արվեստի կենաւունակության և հանճարեղության վեմերից կարևորագույնը ազգային հենքն է, ջութակի կատարողական արվեստի ավանդույթները, որոնք բյուրեղացրել են Մարտինին, Կորելին, Վիկալիին, Լոկատելիին: Եթե զարգացման փուլերը համեմատենք լեռնաշղթայի հետ, ապա Պազանինին էվերեստն է:

Ըստ նորվեգացի ջութակահար Ուլե Բուլի, Պազանինին լավ հասկանու համար պետք է ուսումնասիրել իտալական դասական «քելկանտո», այսինքն՝ «գեղեցիկ երգեցողության» ոճը: Պազանինին արվեստի անկյունարարերից է իտալական ժողովրդական երգը, նաև Սիջերկրական ծովի «երգը»: Եվ պատահական չէ, որ ուր էլ լիներ, Պազանինին կարուսում էր իր հարազատ Իտալիան, երկիր, որը նրան «ետուր արև», երկիր, ուր երգն ու նվազը միշտ պաշտամունք է եղել: «Տեսմեն Նեապոլը ու նոր մեռմեն». իտալացիների այս բաղձանքը Պազանինին յուրովի է արտահայտել քրոջը հասցեագրված նամակում: Նախազգալով իր մոտալուս մահը, նա հույս է հայտնել դեռ «մի քիչ էլ շնչել Դանքեի և Պետրարկայի օդը...»: Եվ այսպես, Պազանինին շունչը ընդիշտ միահյուսվեց Դանքեի, Պետրարկայի, Լեռնարդոյի «օդին», նրա սրտի բարախյունը, նրա ջութակի որոտընդուստ ձայնն ու շշուկը ծովվեցին Սիջերկրական ծովի հավերժող երգին...

18. «Ինչքան մուրը սև՝ ես այնքան համառ»: Տերյանի այս խոսքերով էր բնութագրել ջութակահարուհոն Տիգրան Մանսուրյանը: Նոյն խոսքերով է Վերնագրված «Հայաստանի համբաւետություն» թերթում 1995-ի մայիսի 2-ին տպագրված հոդվածը, որտեղ ճամսավորական գրված է. «...Մաս իրադարձություն կոնսերվատորիայի երաժշտական կյանքում. կամքի, ոգեկանության բացառիկ դրսւորում անվանեց համերգը հաստատության ուկտոր, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը: Այս պայմաններում, այս տարիքում, թե՛ տեհնինկական, թե՛ գեղարվեստական իմաստով հաղորդական բոլոր հնարանքների այս համբաւիտարանը, հերոսություն է: Մասնաւոր նկատի ուներ և, իր խոսքերով, ջութակի կատարողական դպրոցի մեծագույն վարպետ, ուսուցչապետ 85-ամյա Կարայ Դոմբակին, և նրա 20-ամյա սանուիուն:

## ՅՈՀԱՆՆԵՍ ԲՐԱՄ (1833–1897)

Երբ Բրամն են նվագում,  
Ես ցնցվում եմ ու հանձնվում:  
Բորի Պատոնանակ



Իրավի, Բրամն լսելս փարվում ես նրա հնչյունների ալեկոծում-ներին և խաղաղվում տարերի փորձություններից հետո: Պատեռնակը նկատել է Բրամսի երաժշտության ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը: Փորձենք բացահայտել և առավել ընթացնել այս երևույթը և առհասարակ վերաբերձել Բրամսի արվեստի յուրիհնակության խնդիրը:

Տարիներ առաջ ուսուցիչս՝ դիրիժոր Սիրայել Մալունցյանը, անսպասելի մի հարց տվեց ինձ: «Կարո՞ղ ես մեկ բառով բնուրագրել Բրամսի երաժշտությունը»: Ես չփորձած էի, բանզի պրոֆեսորը պետք է որ տեղյակ լիներ դեռ Բախի կոնցերտների մասին կոմպոզիտորի կենսագիր Յոհան Ֆորկելի ասածին, որ անհնարին է խոսքերով հաղորդել դրանց գեղեցկությունը<sup>1</sup>:

Կամ Ֆրիդրիխ Նիցշեի միտքը, թե բնարերգության բոլոր արտահայտչամիջոցներն ի զորու չեն հաղորդել մի անպանույց մեղեղու արտահայտչականությունը: Համենայն դեպք, հարցը տրված էր: Եվ պատասխանն էր՝ «Իմաստությունը»:

Այս հատկությունն է գերիշխողը, հատկապես Բրամսի հասուն շրջանի գործերում, մանավանդ աստվածաշնչյան հովերով համակված երկերում: Օրինակ, 2 մոտեները (օր. 74), 3 մոտեները (օր. 110), «Չորս խըստաշունչ երգերը» և այլն:

Բրամսի իմաստությունը արդյունք էր նրա խառնվածքի, տարիների կենսափորձի, անցյալի հոգևոր ժառանգության իմաստավորման ու յուրացման և վերջապես ամենակարևորը՝ Բրամն նարդու ներքին պայքարի, ինքնահաղթահալուման, ապաշխարության և Արարշի կամքին տրվելու: «Երանի սրտով մաքուրներին, որովհետև նրանք Աստծուն պիտի տես-

1. A. Ռեմազեր, Ա. Ա. Բախ, Մ., 1969, սր. 307.

նեն»՝ այս հորդորին հետևելով է, որ Բրամսի սիրտը լցվում էր աստվածաշունչ մեղեղիներով: Ինչպես որ նույնը տեղի էր ունենում Յոզեֆ Հայդնի հետ, երբ ստեղծագործելուց առաջ նա դիմում էր աստծուն՝ խնդրելով լավ մեղեղիներ, թեմաներ:

Բրամսի ազնվության մասին վկայել է նաև Հերման Լիխին: «Հաճարեղ դիրիժորը դաշնակահարուի Կլարա Շումանին գրել է. «Նա (Բրամսը - Դ. Ե.) ինձ երևաց որպես մաքուր արվեստագետի և մարդու կերպար, իսկ դա մեր ժամանակներում շատ բան է վկայում»<sup>2</sup>: Իսկ բանաստեղծ Ռիխարդ Ֆուսը վկայում էր, որ Բրամսի անձը ներգործում էր ինչպես նախաստեղծ մաքրությամբ ուժեղ լեռնային կենարար օդի մի ամբողջ հոսանքը<sup>3</sup>: Սա Գերինգերը վերագրում էր Բրամսի հոգևոր ուժին: Գերմանացի փիլիսոփա Գեորգ Լիխտենբերգն ասում էր. «Խմաստության առաջին քայլը՝ հարձակվել ամեն ինչի վրա, վերջինը՝ տանել այդ բոլորը»<sup>4</sup>: Այս խոսքերն, աևն, լուսաբանում են Բրամսի անցած ուղին: Սիավասիկ, պատամի կոմպոզիտորի առաջին գործերից մեկի՝ «Դաշնամուրային տրիոյի» (օր. 8) բնաբանը. «Թեկուզկ մեռնես, քայլ պիտի հաղթես»: Սինչդեռ վերջին երկերը՝ երգիհոնային խաղաղ պրելյուդները, հիմնված են հետևյալ անունները կրող խորալների վրա. «Ամբողջ սրտով ճգտում են երանավետ վախճանիս», «Ուկ աշխարհ, ես պիտի լրեմ քեզ»: Սիա այս երկու բետոների միջև է ծավալվում կոնճոզիտորի ողջ արվեստը, այս երկու ափերի միջև է ալեկոնդվում այն ծովը, որ կոչվում է «Բրամս»: Ըստ Ալբերտ Շվայցերի՝ կան «սուրյեկտիվ» և «օբյեկտիվ» արվեստագետներ: «Առաջնները, ի հեճուկս ժամանակի, իրենք իրենց օրենքն են ստեղծում, իրենց նորերն արտահայտելու համար նոր ձևեր են կերտում: Այդպիսին է Ռիխարդ Վագները»<sup>5</sup>: Բախին Շվայցերը համարում է օբյեկտիվ արվեստագետ, քանզի նա իր դարի զավակն է, օգտվում է արդեն գոյություն ունեցող ձևերից և նորարարության չի ճգտում: Դրանց ապրած կյանքը և ապրումները ստեղծագործության միակ աղբյուրը չեն, ուստի իրենց երկերի եռությունը չի բացատրվում հեղինակների ճակատագրով...

Բախի գործերը նույնը կմնային, եթե նույնիսկ նրա կյանքի ողջ ուղին այլ լիներ: Դիցուք, մենք ավելի շատ իմանայինք նրա կյանքի մասին, քան գիտենք, և մեզ հասած լինեին նրա բոլոր նամակները, միևնույն է, նրա գործերի ծագման մերքին պատճառների մասին մենք տեղեկացված կի-

2. Կ. Գերինգեր, Ի. Բրամս, Մ., 1965, սր. 105.

3. Անդ, էջ 355:

4. Գ. Լիխտենբերգ, Ավորիգմներ, Եր., 1979, էջ 117:

5. Ա. Ռեմայեր, Ի. Ս. Բախ, սր. 5.

Անհնը ոչ ավելի, քան այժմ: Օրյեկտիվ արվեստագետի արվեստը ոչ թե անձնական է, այլ վերանձնական:

Ինչ վերաբերվում է Բրամսին, ապա նրան դժվար է «տեղավորել» Ըվայցերի առաջարկած կաղապարներում: Գեղարվեստական ձևերի կիրառման առումով Բրամսը Բախի պես «օրյեկտիվ» է. նոր ձևեր, «սխեմաներ» չի ստեղծել, այլ հենրիմ նոր շունչ է հաղորդել: Հատկանշական է Բրամսի հակառակորդ Վագների գնահատականը: 1864-ին Վիեննայում տեղի է ունեցել այս երկու մեծերի միակ հանդիպումը, որի ժամանակ Բրամսը նվազել է իր դաշնամուրային «Վարիացիաները Հենդելի բեմայով» և Վագներն ասել է. «Անմիջապես երևում է, թե ինչի կարելի է հասնել՝ օգտագործելով ինը ձևերը, եթե հայտնվում է նա, ով կարողանում է դրանց հետ վարվել»<sup>7</sup>:

Անշուշտ, որևէ ստեղծագործողի կյանքը և արվեստը միմյանցից քաշարձակ մեկուսացած չեն: Խոսքը երաժշտության տիրույթի մեջ արտաքին ազդակի առավել կամ պակաս միջամտության մասին է: Օրինակ, Արամ Խաչատրյանն իր Չուրակի կոնցերտի մասին ասել է. «Ես հորինում էի, ասես, երջանկության ինչ-որ ալիքի կատարիմ՝ ամբողջությանք համակած բերկրանքով: ճախրանքի ու կյանքի արքեցումի այդ վիճակը փոխանցվեց երաժշտությանը»<sup>8</sup>: Սա դեռ չի նշանակում, որ այդ կոնցերտը ծրագրային է: Սակայն Ֆերենց Լիստի «Պրելյուդներ», Ռախմանինովի «Մեռյալների կղզին» և այլ նոյնաբնույթ գործեր ծրագրային են, քանզի դրանց մեջ երաժշտությունը ծառայում է քանաստեղծական կամ այլ գաղափարի մարմնավորմանը: Մինչդեռ ծրագրային երաժշտությունը Բրամսը որակում էր որպես «գրականամուլտություն»: Եվ ինչ գաղափարներ էլ որ մարմնավորեր որևէ կոմպոզիտոր, միևնույն է, արդյունքում գերիշխողը մնում էր երաժշտությունը և նրա օրենքները:

Պատահական չէ, որ Բրամսը չընդունեց Լիստ-Վագներյան նոր գերմանական երաժշտության բարեփոխումները, այլ գնաց, այսպես կոչված, «մաքուր երաժշտության» ուղղով, վերադարձավ Բախի և այլ պոլիֆոնիաների ավանդույթներին՝ նոր բովանդակություն հաղորդելով ինը ձևերին:

Բովանդակության առումով Բրամսի արվեստը և նրա կյանքը նման են հաղորդակից անոքների: Բրամսի նամակագրությանը նվիրված երաժշտագետ Ռոգովոյի աշխատության գլուխներից մեկի հարցադրումը հետևյալն է. «Արդյոք Բրամսի կյանքը նրա երաժշտության «գաղտնի

6. Անդ:

7. Կ. Գերինգեր, Ի. Բրամս, стр. 98.

8. Վ. Յոզեֆովիչ, Արամ Խաչատրյան, Մ., 1990, стр. 95.

ծրագի՞րն» է<sup>9</sup>: Բերվող փաստերն ապացուցում են, որ դա այդպես է: Նոյնիսկ ամենաչեղոր և հեռավոր թեմաներով զրված գործերի հերոսների կրծքում դարձյալ Բրամսի սիրտն է բարախում՝ լինի խաչակիր ասպետ Ռինալդոն, սուրբ նահատակ եպիսկոպոս Էմմերանոն կամ Հաֆեզի երգերի սիրատոշը հերոսը... Կան երկեր, որոնք պարզապես ինքնակենսագրական են: Այդ մասին վկայում են «ծածկագիր ծրագիր» պարունակող գործերը. այդ մասին իր նամակներում և զրոյցներում խոստովանել է ինքը՝ Բրամսը:

Կոմպոզիտորին նվիրված Կարլ Գեյրինգերի մենագրությունից տեղեկանում ենք, որ 2-րդ սերստետի (օր. 36) վերաբերյալ ընկերոջը՝ Յոզեֆ Գենսբախներին ուղղված նամակում Բրամսը գրել է. «Այստեղ ես ազատագրվեցի իմ վերջին սիրուց»<sup>10</sup>: Կոմպոզիտորը նկատի ուներ երգչուիկ Ազարե ֆոն Զիրոլիին, ում հետ նա այդպես էլ շամունացավ: Նա Ազարեին խոստովանել էր. «Ես սիրու եմ Քեզ... սակայն չեմ կարող կապաճքներ կրել»...

Հիշյալ սերստետի 1-ին մասում ջութակները երեք անգամ «արտասանում» են «Ազարե» անունը, որի «տառերը»՝ *a-g-a-d-h-e* համապատասխանում են լյա-սոլ-լյա-պն-սի-մի հնչյուններին: Իսկ դաշնամուրային 1-ին կոնցերտի «Աղաջոն» Կլարա Շումանի, Կոմիտասի խոսրով ասած, «ձայնանկարն» է, ինչպես այդ մասին դաշնակահարուիուն ուղղված նամակում վկայել է Բրամսն ինքը:

Անդրադառնալով Բրամսի 1-ին սիմֆոնիայի ստեղծման նախապատմությանը՝ Ռոգովոյը բերում է հետաքրքիր փաստեր: Սիմֆոնիայում երաժշտագետը նկատում է Յոհաննեսի և Կլարայի միջև լորջ տարածայնությունների հետևանքները: Այս առիթով Ռոգովոյը վկայակոչում է Բրամսի «հնչող» նամակը Կլարային՝ գրված 1868-ի սեպտեմբերի 12-ին շվեյցարական Ալպերից: Այն պարունակում է լընդամենը մեկ նախադասություն «Արդ, ալպյան փողը այսօր շեփորում է»: Սրանից հետո նուաներով շարադրված է մի մեղեդի, որի խոսրերն են. «Լեռներից ու դաշտերից, ուր խավար է ու արև, հղում եմ Քեզ հազար քարե»<sup>11</sup>: Ահա այս երգը՝ բազում խոսրերից ավելի ազդու, անմիջապես լուծեց Բրամսի և Կլարայի հակասությունները: Եվ ուր տարի անց ալպյան փողի այս կանչը վերհասկեց 1-ին սիմֆոնիայի ֆինալում՝ զալարափողի հնչմամբ: Եթե Ռոգովոյը զուգահեռ է անցկացնում 1-ին սիմֆոնիայի և Բրամսի կենսագրության միջև, ապա Գեյրինգերն այն դիտում է գլորալ տեսանկյունից՝ ընդգծելով Բրամսի 1-ին և Բեթհովենի 5-րդ և 9-րդ սիմֆոնիաների ընդհանրությունը՝

9. С. Роговоя, Письма Иоганнеса Брамса, М., 2003, стр. 381.

10. Ան, էջ 385:

11. Ան, էջ 89:

համամարդկային հնչեղությունը: Այս գլուխգործոցները միավորող գաղափարը մարդկային պայքարն է և արարումը, «իշերի միջով առ աստղեր», «ժամանակակից դեպքի լույս» հաղբարշավը: Իսկ «ալպյան փողի» հիշյալ թեման ընկալվում է որպես փրկությամ ավետիս, որպես ծագող արև, որի շողերը ցրում են դժոխքի խափարը՝ «ազդարարելով հաղբանակ վախի և տառապանքների հանդեպ»:<sup>12</sup> Այս սիմֆոնիան թերևս ամենաքերհովելյանն է, ում նշանաբանն էր շիլերյան «In Tiranno» (Ընդհան բոնակալների) կոչը: Մինչդեռ Բրամսի պարագայում տիեզերական հակամարտ ուժերի բախումը, պայքարը տեղափոխվում է կոմպոզիտորի ներաշխարհ, և բախումների ասպարեզը դառնում է մարդու սիրտը, «ուր վաղուց են հարևան Աստվածն ու ստանան» (Անգելու Սիլեգիուս): Զուգահեռ անցկացնելով Շումանի «Հոնոնոյան սիմֆոնիայի» և Բրամսի 3-րդ սիմֆոնիայի միջև՝ Ռոգովոյը Վերջինիս մասին գրում է. «Սիմֆոնիայի մասերին և ամբողջ կառույցին բնորոշ է բալլադային ձևին հատուկ ազատությունը, որը սկիզբ է առնում ձևերի շումանյան անհավասարակշուգածությունից: «Լյա» և «Վյա-քենով» հնչյունների գաղափարաբանական հակասությամբ այստեղ վերհաննում է «Կրայսերի և Բրամսի» պայքարը<sup>13</sup>: Հայտնի է, որ Բրամսն իրեն կոչում էր «Յոհաննես Կրայսեր կրտսեր»՝ Եռնեստ Հոֆմանի «Խմբավար Կրայսերի երաժշտական տառապանքները» նովելի հերոսի անվամբ:

Եվ Բրամսի անձի երկատվածությունը լավագույնս արտահայտվել է իր իսկ խոստովանությամբ՝ «Իմ մեջ պայքարում են Կրայսերը և Բրամսը»<sup>14</sup>:

Յոհաննեսը Կրայսերի պես ապրում է քաղընիական, նյութապաշտական հասարակարգում և դատապարտված է մենության ու տառապանքների: Քանիզ նրա անձը երկինողկված է դառը իրականության և հոգևոր կյանքի միջև: Այս տրամադրությունը արտահայտված է նաև Բրամսի մեկ այլ նամակում. «Այս աշխարհում մենք ոչ մեկին պետք չենք»<sup>15</sup>: Իսկ երբ իր ծննդավայր Համբուրգում մեծ շուրջով նշում էին Բրամսի ծննդյան 50-ամյակը, նա դառնությամբ խոստվանել է ընկերությը, թե իրեն այդպես էլ չարժանացրին Համբուրգի ֆիլհարմոնիայի դիրիժորի պաշտոնին. «Իսկ այժմ ես թափառաշրջիկ եմ»<sup>16</sup>: Եվ սա ասել է մի արվեստագետ, որ դեկավարել էր Վիճանայի «Երաժշտասիրաց ընկերու-

12. Անդ, էջ 268:

13. Անդ, էջ 388:

14. Անդ, էջ 330:

15. Մ. Դրյուսին, Իօգանոս Բրամս, Մ., 1970, սր. 24.

16. Կ. Գելրինգեր, Ա. Բրամս, սր. 91.

բյունը», արժանացել Լոնդոնի ֆիլհարմոնիկ ընկերության ոսկե մեդալի... Հակասական էր նաև Բրամսի կացությունը, երբ Գերմանիան պարտության մատնեց Ավստրիային. նա արդեն ապրում էր «Վիեննայում և ամբողջ Եվրայամբ կապված էր ավստրիացիներին... Մարդկային հոգում առկա իրարամերժ զգացնութեների հիշյալ հակադրամիասնությունը հոգեբանության մեջ բնութագրվում է «ամբիվալենտ» հասկացությամբ: Անշուշտ, նման հակասությունները այս կամ այն շափով դրսնորվել են բազում արվեստագետների ստեղծագործություններում: Ինչպես ասել է նրա հայրենակից Հերման Հեսսեն. «Ես մերք երկնքում էի, մերք՝ դժոխքում, բայց հաճախ՝ այստեղ և այնտեղ միաժամանակ»:

Ըստ Վերլուծաբանների՝ Բրամսի բնավորության ձևավորման վրա ազդել են նաև ընտանեկան հակասությունները: Մասնավորապես նշում են, որ մայրը՝ Քրիստիանա Նիսսենը, հորից՝ Յակոբ Բրամսից մեծ էր 17 տարով: Նաև գուգահեռ են անցկացնում Յոհաննեսի և իր սիրեցյալ Կլարայի տարիքային տարրերության հետ. Կլարան 14 տարով մեծ էր Բրամսից: Գեյրինգները նշում է այն ծանր հարվածը, որ կրեց Բրամսը ծնողների ամուսնալուծությունից, երբ հոգով խաղաղասեր որդին ստիպված պիտի լիներ «դատավորի» դեր ստանձնել: Մայրը իր վերջին խոստովանական նամակում որդուն հաղորդել էր մի քանի ցավալի զաղանքներ: Այն, որ եսակենտրոն հայրն ավելի շատ վատնում էր, քան վաստակում, անտարբեր էր զավակների ճակատագրի հանդեպ՝ համոզված լինելով, որ ինչպես ինքն էր հաճախ ասում. «Կտեսնես, որ տղաները ոչնչի ել չեն հասնի»<sup>17</sup>:

Սա այն դեպքում, երբ 13-ամյա Յոհաննեսը, ինչպես իր հայրը, ստիպված էր լինում պանդոկներում նվազել: Եվ նրան հաճախ ուշ երեկոյան կանչում էին նվազակցելու պարողներին, որի համար չնշին գումար էին վճարում և բույլ էին տալիս խմել որքան ցանկանար: Սակայն պատահին այդ փորձությունն էլ էր հաղթահարել: «Քչերն են այսպես ծանր ապրել, ինչպես՝ ես», մի առիթով խոստովանել էր Բրամսը<sup>18</sup>: 1853-ին 20-ամյա Բրամսը կանգնել էր մի երկնտանքի առջև: Նրա սրտում պայքար էր ծավալվել Կլարա Շումանի նկատմամբ սիրո և նրա ամուսնու՝ Ռոբերտ Շումանի հանդեպ հավատարմությունը պահպանելու միջև: Չե՞ որ երիտասարդ Բրամսի ասպարեզ զայլուն և ճանաշմանը մեծապես նպաստել էր հենց Ռոբերտ Շումանը: Նա իր հրատարակած «Նոր երաժշտական հանդեսում» «Նոր ուղիներ» Վերնագրված հոդվածում Բրամսին բնորոշել էր որպես «արվեստագետ, որը կոչված է կատարելապես արտահայտելու դարաշրջանի բարձրագույն դրսւորումը»<sup>19</sup>: Ըստ Գեյրինգների՝ Բրամսի

17. С. Роговий, Письма Иоганнеса Брамса, стр. 70.

18. М. Друскин, Иоганнес Брамс, стр. 30.

19. К. Гейрингер, И.Брамс, стр. 54.

իիշյալ ծանր ապրումները արձագանքվել են 1854-ին գրած մոայլ և պոռ-կումնալից բալլարդներում, հետագայում նաև այդ օրերին հղացած 1-ին սիմֆոնիայում և դաշնամուրային կվարտետում, որոնք գրված են նույն «ղող-մինոր» տոնայնության մեջ, որում շարադրված է նաև Բերիովենի դաշնամուրային «Պարետիկ» տոնատրության մեջ, որում շարադրված է նաև Բերիովենի կվարտետը բնութագրելիս Բրամսն ընկերոցն ասել է. «Պատկերացրու անելանելի վիճակում հայտնված մի մարդու, որն ուզում է ինքնասպան լինել»<sup>20</sup>:

Ահա այսպես, վերթերյան որոնումներով, համեւտյան վարանումներով Բրամսն ընթանում էր իր վեհ նախատակներին ընդառաջ: Հետագայում Բրամսը Կարա Շումանին պիտի գրեր. «Բանական մարդը ոչինչ չի կարող փոխել... ուստի՝ առաջ...»: 1853-ին Բրամսը ծանորացել էր հոնգարացի ջուրակահար Էդե Ռեմենյիի հետ և որպես դաշնակահար հանդես եկել հյուրախաղերով Գերմանիայի մի շարք քաղաքներում: Եվ Բրամսի համար անսպասելիորեն նա ընդհատել էր համերգները և անհայտացել: Այս առիթով Բրամսը մեծ ջուրակահար Յուխիմին գրել էր հետևյալը. «Եթե ես չկրեմի Կրայսեր անունը, այժմ ես ծանրակշիռ պատճառներ կունենայի փոքր-ինչ հուսալըվելու, անիծելու սերս արվեստի հանդեպ... դառնալու ճգնավոր... Ոչ մի անհրաժեշտություն չկար, որ ես ձեռք բերեի նաև այսպիսի դառը փոքր. այս առումով ես որպես պոետ և կոմպոզիտոր արդեն ավելի քան բավական նյութ ունեմ»<sup>21</sup>:

Նման և բազմապիսի շատ հարվածներ է ստացել Բրամսը: Սակայն այդ բոլորը նա հաղրահարում էր որպես իսկական արվեստագետ, որի «գլխավերնում աստեղազարդ երկինքն էր, իսկ ներսում՝ քարոյական օրենքը» (Ի. Կանտ): Եվ ճակատագրի այդ հարվածները նա հրաշքով փոխակերպում էր մարդկանց երջանկացնող երաժշտության: Աննա Ախմատովան կասեր. «Մի վիշտ ևս ավելացավ, մի երգ ևս կծնվի»:

Բրամսը բավական ինքնարբնադատ էր: Իր հաջողորդյունները վերագրում էր ոչ թե իր հանճարին, այլ ունկնդիրների ոչ պահանջկուտությանը: Նա գտնում էր, որ դասականների «ոսկե դարն» անցել է և ժամանակակիցների մեջ չեղ տեսնում նրանց հավասարագոր որևէ մեկին: Եվ պատհական չէ, որ մի առիթով նա ասել է, թե պատրաստ է իր ամքող արվեստը տալ Սենդելստին «Հերիդոն» նախերգանքի դիմաց: Իսկ երբ երկրպագուներից մեկը կոմպոզիտորին հյուրասիրել էր իր պատրաստած «Բրամս» անունը կրող գինին և հարցրել կարծիքը, Բրամսը պատասխանել էր. «Խսկ Բախ անունով գինի չունե՞ք, ես կգերադասեի այն»:

20. ԱՅդ, էջ 64:

21. ԱՅդ, էջ 48:

Այս ամենը նա ասում էր սրտանց, այլապես որպես իր կյանքի երկու կարևորագույն իրադարձություն չէր նշի Գերմանիայի միավորումը և Բախի երկերի լիակատար ժողովածովի հրատարակությունը: Այս, Գերմանիայի ամբողջական տարածքը հայրենիքի մարմինն ու գրահն էր, իսկ Բախի աստվածաշունչ արվեստը՝ Գերմանիայի հոգին...

Բախի հանդեպ Բրամսի մեծագույն սերը բորբոքել են նրա ուսուցիչները՝ դաշնակահար Օտտո Կոսսելը և պոլիֆոնիայի վարպետ կոմպոզիտոր Էդուարդ Մարքսենը: Վերջինիս նվիրված դաշնամուրային թիվ 2 կոնցերտը աշակերտի երախտագիտության և ուսուցչի պատգամների արգասիքն էր: Հավատարիմ մնալով իր ուսուցչին՝ Բրամսը հաստատում էր, որ աշխարհին պետք է նայել պոլիֆոնիկ ակնոցով: Հիրավի, աշխարհը, կյանքն իր բազմաձայնությամբ, լավագույնս կարող է արտացոլվել բազմաձայն երաժշտության մեջ:

Հատկանշական է, որ նա իր բարեկամ ջութակահար Յոզեֆ Յոպիկին համոզել էր, որպեսզի յուրաքանչյուր կիրակի միմյանց փոխանցեն բազմաձայնության մեկ վարժություն: Իսկ ահա երիտասարդ Ռիխարդ Շտրաուսին տրված վարպետի խրատը. «Զեր սիմֆոնիայում չափից ավելի են թեմատիկ աճպարարությունները: Միայն ոիթմով հակադրվող այլքան շատ թեմաների կուտակումը մի եռահնչյունի վրա ոչինչ չարժե»<sup>22</sup>:

Երախտապարտ Շտրաուսը հետագայում խոստովանել է. «Այնուհետև ես հակացա, որ կոնտրապունկտն արդարացված է միայն այն դեպում, եթե երկու կամ մի քանի թեմա, որոնք տարբերվում են ոչ միայն ոիթմով, այլև հարմոնիայով՝ ենթելով գեղարվետական անհրաժեշտությունից, ստիպված են ժամանակավորապես միավորվել»<sup>23</sup>:

Հիրավի, միայն պոլիֆոնիայի օրենքները, տրամարանությունը կարող էին կարգավորել, տեղավորել Բրամսի հոգու կրակը, անսահման երևակայության բոհջքը, ծևափորել ներքին պառակտումից ժայթքող հրարությունը: Վառ օրինակներից է 1-ին սիմֆոնիայի նախարանը: Այստեղ միաժամանակ հակադրվում են երկու մեղեղի-կերպար՝ մեկը կրօքու է, համար, նպատակասլաց կերպով ձգտում է դեպի վեր՝ երկինը: Մյուսը, մեր ընկալմամբ, գոջում արտահայտող խոնարհ մեղեղի է, որ շարժվում է դեպի վար՝ հողը: Առաջինը շարադրում են ջութակները և բազութակները, երկրորդը՝ փայտյա փողայինները, գալարափողերը և ալտերը: Միմյանցից հեռացող այս կենարունախույս մեղեղիների միջև լարվածությունը զնալով սաստկանում է: Այն ուժեղացվում է, միևնույն ժամանակ և զըսպիտ կոնտրարաբասերի և լիտավորի վիրխարի քայլերով, որ հարվածում են նույն կետին՝ տոնիկական «ղող» հնչյունին, որը ձգում են 1-ին և 2-րդ գա-

22. Է. Կրայչ, Ռիխարդ Շտրաուս, Մ., 1961, տր. 174.

23. Ան:

լարավորենը: Եվ ինը տակտ անց տեղի է ունենում պայքարուն, իսկ հետագա «շղթայական ուսակցիայից» գոյանում է հնչյունազարդ մի տիեզերք... Յնցող օրինակ է և 4-րդ սիմֆոնիան, հատկապես ֆինալը, որը կերտված է «պասակալիա» ձևով: Պոլիֆոնիկ վարիացիաների այս կոտ ճեղ հիմնված է 8 տակտից բաղկացած մի թեմայից, որը 31 անգամ հնչում է մերք բասում, մերք միջին, մերք վերին ձայներում, ընդ որում՝ ամեն անգամ նոր հանդերձանքով՝ միահյուսված նորանոր ձայների, մեղեղիների հետ: Հակադրամիասնության զորեղ օրինակ է հենց առաջին վարիացիան: Թեմայի յուրաքանչյուր հնչյուն, որ տևում էր երեք քառորդ, այժմ մեկ քառորդ հնչելուց հետո գահավիժում է մեկ օկտավա ցած և հնչում մնացած երկու քառորդի չափով: Այսպիսով, բասերը նմանվում են հսկայի երերացող քայլերի: 1-ին ջուրակների կրրու, առաջ մովող մեղեղին նոյնպես «ղեմ է առնում» 2-րդ քառորդի վրա: Իսկ 2-րդ ջուրակների և ալտերի հևացող սիմվոլաները (չեշտափոխությունները) «ղեմ են առնում» 3-րդ քառորդի վրա և ասես կրակի վրա յուղ են լցնում: Առաջընթացը զավոր այս արգելակների դիմադրությունը շիկացնում են «էմոցիաները», կուտակվում է վիթխարի եներգիա, որը ծնունդ է տալիս հաջորդ վարիացիային: 2-րդ վարիացիայում տեղի է ունենում էներգիայի մակընթացություն և տեղատվության չորս ցիկլ: Եվ ալիքներն անցնում են 3-րդ վարիացիայի տիրույթը: Եվ այսպես շարունակ: Այսպիսով, վարիացիաները նմանվում են բազմատիճան մի հրթիռի, որի յուրաքանչյուր աստիճան այրվելով՝ կրակը փոխանցում է բոցավառում հաջորդ աստիճանը: Եվ այս հրթիռը տանում է այնտեղ, որտեղ, ըստ երաժշտագետ Հերման Կրեչմարի, «մարդկային խոնարիկում է հավերժի առջև»:

1-ին, 3-րդ և 4-րդ սիմֆոնիաներում Բրամսը հանդես է գալիս որպես շեքսափիյան, բերհովենյան մակարդակի ողբերգակ: Միևնույն ժամանակ նա կիրառում է դրամատորգիկական ուրույն լուծումներ: 4-րդ սիմֆոնիայի ֆինալում զարգացումը վուլսային է, իսկ Բերհովենը գերադասում է միջանցիկ զարգացումները, հաղթանակի հասնում նպատակալաց, հետևողական պայքարի միջոցով: Բերհովենին ավելի քնորոշ է Մակերնացու պես մի հարվածով կտրել «գորոյան հանգույցը», մինչդեռ Բրամսը կարող էր համբերատար արձակել կծիկը:

Բրամսի 1-ին սիմֆոնիայի ֆինալում հաղթանակը ոչ թե արդյունք է հետևողական պայքարի, այլ մի երրորդ ուժի միջամտության: Ինչպես նշվեց, ամենաթեժ պահին պայքարն ընդհատվում է, և գալարափողի ավետիսը ազդարարում է փրկության լուրը, որը գալիս է երկնքից: Բանաստեղծ Տյուտչի խոսքով ասած, փրկության լուրն «իջնում է երկնքից և սփոռվում մարդկության ալեկոծ ծովի վրա հանց հաշտեցնող մյուռոն»... Բացի վերը նշվածից՝ Բրամսի լեզվամտածողության և հուզաշխարիի առանձնահատկությունները դրսնորվում են իր երաժշտության հյուսված-

քի տարրեր բաղադրիչների միջոցով, ոնդ որում՝ տարրեր համատեքստում տարրեր երանգներով: Դրանցից է պղլորիթմիան, որը հանդիպում ենք բազում գործերում: Զայներից մեկը շարժվում է «տրիոններով», մյուսը՝ «որուլներով» կամ «կվարտուներով»: Զայներից մեկը զապում է մյուսի ընթացքը, և տպավորություն է ստեղծվում, թե երկու սիրու է բարձախում: Հաճախ են հանդիպում «ախնկոպաները», երբ շեշտը տեղափոխվում է ուժեղ մասից բույլի վրա՝ «կոտրելով» շարժման պարբերականությունը, իներցիան: Խորալն իր ակորդային կերտվածքով մի պահ դադար է ստեղծում ու պատմեցում հնչյունների անսանձ հոսքը, ինչպես՝ 1-ին սիմֆոնիայի վերջում: Սրան հակառակ, 4-րդ սիմֆոնիայի ֆինալում հնչող խորալն ընկալվում է որպես խաղաղություն փոքրիկից առաջ: Այն կարծես մի ժպիտ է ուղղված իր հակառակորդ Վագներին:

Բրամսի այս խորալը արձագանքում է Վագների «Տանհոյզեր և ասպետների մրցույթը Վարթրուգում» օպերայի ուխտագնացների խորալին: Բրամս և Վագներ «ասպետների» մրցույթից շահեցին երաժշտությունը և մենք: Անդրադառնալով վերջին բաղադրիչիմ՝ մոտիվին, որն ըստ Էլեյյան երաժշտության հյուսվածքի բջիջն է, նշենք Բրամսի նախասիրած ոիրմիկ դարձվածներից մեկը՝ «յամբը» (մեծավերջ): Այն բաղկացած է երկու հնչյունից՝ անշեշտ և շեշտված (շունչ և արտաշունչ): Երաժշտության մեջ այն արտահայտում է նաև հոգոց: Մեծավերջ մոտիվներից է շղայված 4-րդ սիմֆոնիան բացող մեղեդին: 19 տակտերից բաղկացած այս բեմայում պարունակվում է 11 մեծավերջ մոտիվ:

Նույն ոիրմիկ բջիջներից է հյուսված նաև «սի-թեմոլ մինոր» դաշնամուրային ինտերմեցցոն (օր. 117, N 2): Այս երկու թեմաներն ասես «քոյրեղայր» են: Ի դեպ, անդրադառնալով իտալական և գերմանական երաժշտության էական տարբերությանը՝ Գեորգ Հեգելը նշել է. «Գերմանական շատ երգերում կրկնվող «յամբերի» միապահաղ, մերկ վանկարկությունը, սպանում է մեղեդու ազատ, բերկրայի զեղումը և զապում է նրա հետագա վերելքը»<sup>24</sup>: Սակայն, ինչպես վերը նշվեց, Բրամսը «վարվել գիտեր հնագույն ծների հետ»: Ահավասիկ, հիշյալ ինտերմեցցոյում թեմայի մոտիվները միահյուսված են նվազակցությանը (ֆիգուրացիային) և մերքնդմերը շղարձակում են՝ ինչպես լրացի ցոլքը ծովի ալիքների կատարին: Նույնը և 4-րդ սիմֆոնիայում՝ մոտիվների մասնաւուվածությունը, դրանց միջև տարածությունը լրացվում են բավութակների և ալտերի տավղանման արպեջոններով:

Մեղեդիաստեղծման առումով սրանց հակապատկերն է, օրինակ, Ռախմանինովի դաշնամուրային 3-րդ կոնցերտի 1-ին մասի գլխավոր թեման, որը լայնաշունչ է և անտրոհելի: Իսկ Բրամսի այս երկու հանճարեղ

24. Г. Гегель, Эстетика, М., 1971, т. 3, стр. 304.

շնչակտորը թեմաներն իրենց հոդաբաշխությամբ մոտենում են խոսակցական լեզվի կոնկրետությանը: Հավանաբար սա նկատի ուներ Կլարա Շումանը, որը, ցնցված Բրամսի «Ալտի, արական երգախմբի և նվազախմբի ուապսողիայից», հոգոց է հանել. «Մի, եթե նա կարողանար նույնըն սրտառուչ արտահայտվել խոսքերով»<sup>25</sup>: Բրամսի ինքնամփոփ ընավորության մասին են վկայում նաև Կլարային ուղղված նամակի հետևյալ խոսքերը. «Իմ մտքերը ես արտահայտում եմ հնչյուններով»: Հիրավի, ինչպես երաժշտագետ էլերտն է ասել. «Բրամսը մտածում է սրտով և գգում՝ ուղեղով...»:

Հասուն շրջանում Բրամսն ավելի շատ կիրառել է ոչ թե հակադրման, այլ համադրման սկզբունքը, և նրա գործերից շատերն ավարտվում են հաշտությամբ և միխրարական տրամադրությամբ: Այդպիսին են «Գերմանական ուերվիենը», «ճակատագրի երգը», «Պարկեների երգը», «Նենիան» և այլն: Ըստ Գեյրինգերի՝ Բրամսի համար երգանակության բարձրագույն դրսևորունք խաղաղ, մեղմ գորովաճրն է:

Ինչպես նշվեց, Բրամսի երաժշտության գորությունը պայմանավորված է նաև ամցյալի մշակութային ժառանգության իմացությամբ: Հիրավի, նա ամփոփել է 500 տարվա երաժշտության նվաճումները՝ սկսած Պալեստրինայից և Նիդեղլանդական պոլիֆոնիայի սկզբանավորումից մինչև իր ժամանակակիցների արվեստը: Բրամսը կիրառել է ոչ միայն պրոֆեսիոնալ երաժշտության հնագույն ձևերը, արտահայտչամիջոցները, այլև օգտվել է ժողովրդական երգարվեստի գանձարանից, մշակել 99 ժողովրդական երգ, այդ թվում սերբական, հունգարական, գնչուական և այլն:

Հատուկ երանգ են հաղորդում նաև միջնադարյան եկեղեցական լաղերը՝ «Ուերվիեն» 3-րդ մասի բարիտոնի մեներգը՝ գրված Եղվանական մինորում («Տեր, սովորեցրու ինձ, որ ես պիտի վախճանվեմ»), «Ով խեղճ աշխարհ» մոտենող (օր. 110, թիվ 2)՝ դորիական մինորում: Եսկ 4-րդ սիմֆոնիայի 2-րդ մասը բացող գալարափողի մեղեղին շարադրված է հնարույ «փոյուգիական» մինորում: Եսկ սա չեր կարող շանդրադառնալ սիմֆոնիայի այս մասի դնդիանուր տրամադրության վրա, որը Ուիխարդ Շտրաուսը բնորոշել է որպես «լուսնի լույսով լուսավորված, բարձունքներով ընթացող սպո բափոր»<sup>26</sup>: Փաստորեն Բրամսի արվեստի ծավալը պատմականորեն կարելի է չափել միջնադարյան լաղերից մինչև լսդատունայնության բայրայումը, որը տեղի ունեցավ 20-րդ դարում: Սա հաստատում է նաև կոմպոզիտոր Անտոն Վեբեռնը. «Վերին աստիճանի ցնցող օրինակ է Բրամսի «Պարկեների երգի» վերջավորությունը: Պարզապես ապշում ես, թե ինչ-

25. М. Друскин, Ηογαννης Βραις, стр. 14.

26. К. Гейриңгер, И. Браис, стр. 175.

պիսին են այստեղ կադենցիաները և որքան է այս երկը հեռացել տոնայ-նություննից»<sup>27</sup>: Եվ համեմատելով Վագների հետ՝ Վեբեռնը եզրակացնում է. «Հարմոնիկ կապերի տեսակետից Բրամսը, այնուամենայնիվ, ավելի հարուստ է»<sup>28</sup>: Այսպիսով, Բրամսի արվեստի դիապազոնն է Պահանջինայից մինչև Շյոնբերգ...

Բրամսի վերջին գործերում ուժեղանում է միստիկ տարրը: Երբեմնի ալեկոծ հոգին սկսում է առավել խաղաղվել: Եվ ոչ թե տառապանքն է քշանում, այլ խոնարհությունն է շատանում:

Կարելի է ասել, որ Բրամսը վերապեր է Մայստեր Էքհարտի նախանշած կյանքի բոլոր փուլերը: Ահավասիկ՝ «Խաղաղ և լուս կյանքը, որ անց է կացել Աստծո մեջ, լավ է: Ցավերով լի կյանքը, որն ապրվել է համբերությամբ, ավելի լավ է: Բայց ցավով լի կյանքում խաղաղություն գտնելը՝ լավագույնն է»<sup>29</sup>: Ահա այդպիսի խաղաղություն գտավ և Բրամսը: Այս մասին վկայում են նրա վերջին երգեհոնային պրելյուդները՝ իմննված խորալների վրա: Ահա մի քանիսի վերնագրերը՝ «Հիսուս իմ, որ ինձ ընտրեցիր հավիտենական կյանքի համար», «Իմ քաղցր Հիսուս, ո՞ր որ հանցանքը», «Օ, որքան երանելի եք դուք, քարեպաշտներ»: 11 պրելյուդներից երկուսը հիմնված են միենույն խորալի վրա.

Ամբողջ հոգով տենչում են երանավետ վախճանիս,

Ուզում են պոկվել այս աշխարհից,

Որպեսզի տեսնեմ հավերժ քերկրանք.

Հիսուս, շուտ արի:

Ինչպես և Բախը, Բրամսը հրաժեշտ տվեց կյանքին երգեհոնային հնչյուններով...

«Ով աշխարհ, ես պիտի լքեմ քեզ» պրելյուդի յուրաքանչյուր նախադասության վերջին ֆրազները (հանգերը) մեղմաձայն արձագանքում են տարրեր ստեղնաշարերի վրա: Այդ փոխկանչերը տարածության մեջ ընկալվում են որպես «հնչյունային հեռանկար»՝ փորտեն իրական է, երկրային, իսկ «պիտանոն»՝ հեռափոր, անդրաշխարհային, երկնային, թվում է հրեշտակներն են արձագանքում: Սա հիշեցնում է Տերունական աղոքը. «Երկու կամք քո՝ որպես յերկինս և յերկրի»...

## ԴԱՇՆԱՍՈՒԻՐԱՅԻՆ ԿՈՆՉԵՐԸ ԹԻՎ 1

Երաժշտական աշխարհում 1997-ը հոչակված էր Շուրերտի և Բրամսի տարի: Ուղիղ մեկ դար առաջ Վիեննայում վախճանվեց Բրամսը: Սեծ

27. А. Веберн, Лекции о музыке, Письма, М., 1975, стр. 66.

28. Անդ, էջ 68:

29. Майстер Экхарт, Лукопные проповеди и рассуждения, М., 1991, стр. 49.

ավստրիացի Հայոնի պես նա էլ կարող էր ասել. «Ես չե՞մ մեռնի իսպառ», քանզի նրա կյանքը շարունակվում է իր անմահ կորողմերում՝ 4 սիմֆոնիա, 4 կոնցերտ, կանտատներ, խմբերգեր, մանրանվագներ և այլն:

«Թաքնված սիմֆոնիաներ», այսպես է բնորոշել Բրամսի դաշնամուրային ստուտները Ռուբերտ Շումանը: Այդպիսին էր մանավանդ երկու դաշնամուրի համար գրված ստուտը, որը հեղինակը վերանձակեց 1-ին դաշնամուրային կոնցերտի: Երկու դաշնամուրը հիրավի բավական չեղ՝ «տեղավորելով» համար Բրամսի սրտի ալեկոնումները: Բրամսի արվեստի գիտակ Կարլ Գեյրինգերը կոնցերտի 1-ին մասի ալեկոնումները: Բրամսի արվեստի գիտակ Կարլ Գեյրինգերը կոնցերտի 1-ին մասի ալեկոնումները: Այս գնահատականները ավելի շատ վերաբերում են 1-ին մասի գիսավոր և եզրափակիչ թեմաներին: Մինչդեռ օժանդակ թեման լուսավոր է՝ էպոսային պատումի հանդարտ ծավալումվէ: 1856-ին Բրամսը գրել է 23-ամյա Կլարա Շումանին. «Մեղմ գույներով կերտում եմ քո դիմանկարը, որը պիտի վերածվի «Ալդազոյի»<sup>1</sup>: Խոսքը կոնցերտի 2-րդ մասին էր վերաբերում: Սա հիշեցնում է Շուպենի 2-րդ կոնցերտի միջին մասը, որը երգչուի Կոնստանցիա Գլադկովսկայայի երածշտական դիմանկարն է: Շուպենը դեռ իր 1-ին կոնցերտի ոոմանսի մասին է ասել, թե այն ննան է հուշեր արբանացնող մեղմ հայացքի, խոկնունք է զարնան պահին, բայց լուսնի ներքո: Լուսնի լույսով է ողողված նաև Բրամսի «Ալդազոն», բայց կարծես «աշճանային» լուսնի, մանավանդ հորոյների երգը, որից բխող լույսը կայծկլում է դաշնամուրի տավիղային այսպիսների վրա: Բրամսի ձեռագրում «Ալդազոն» վերնագրված էր. «Երանելի է նա, ով գալիս է Տիրոջ անվաճք...»:

Կոնցերտի 1-ին և 2-րդ մասերն իրենց դիմանմիկայով ու կոնտրաստով ինչ-որ տեղ հիշեցնում են նաև Վիտսորեն Կարպաչոյի «Սուրբ Գեորգ» նկարը, որտեղ ծիավոր գրավարը խոցուում է վիշապին, իսկ կտավի աջ մասում խոնարի կանգնած է Անջելիկան, որը եկեղեցու խորհրդանշին է: Ինչպես Գեորգ գրավարը Անջելիկային, այնպես էլ Բրամսը հավերժացրել է մահկանացու Կլարա Շումանի գեղեցիկ ու ներդաշնակ կերպարը՝ հավերժացնելով առաջին սերը: Բերհովենի «Լուսնի ստնատի» միջին մասը Ֆերենց Լիստը բնորոշել է իրեւ «ծաղիկ երկու անդումների միջև»: Արդյոք սա չի՞վերաբերվում նաև Շուպենի և Բրամսի կոնցերտներին, չէ՞ որ ինչպես Զուլինետտա Գուակարդին, որին Բերհովենը նվիրել է սոնատը, այնպես էլ Կոնստանցիա Գլադկովսկայան և Կլարա Շումանը անքառամ ծաղիկներ են:

Կոնցերտի վերջնամասը վիրտուոզ մի ոոնդո է, ուր հերոսական շնչով

1. Կ. Գերինգեր, Ի. Երամս, стр. 264.

գրված թեման փոխենքոյիս հնչում է դաշնամուրի և նվազախմբի նվազաբաժնում՝ ընդմիջվելով հակընդդեմ դրվագներով։ Զգուշությամբ խոտուվանեմ, որ Բրամսի երաժշտության մեջ հյուսիսային հոգերը, վիկինգային լայն քափը, որ առավել արտահայտված է նրա հետագա սիմֆոնիաներում, գալիս են Սկանդինավիայից, հավանաբար մոր՝ նորվեգուիհի Քրիստիանա Նիւենի գեներով։ Կոնցերտի առաջին կատարումը տեղի է ունեցել 1859-ին, Հանովերում, այնուհետև Լայպցիգում։ Կատարում էր հեղինակը՝ Յոզեֆ Շուխիմի դիրիժորությամբ։ Ընդամենը մի քանի ծափ տվեցին, դրանք էլ մարտեցին աղմուկի տակ։ Այս առիթով Բրամսն իր ոճով գրել է Կլարա Շումանին։ «Համերգը շատ լավ անցավ... Դու հավանաբար գիտես, որ այն տապալվեց... Բայց դա իմ վրա ոչ մի ազդեցություն չրողեց»<sup>2</sup>։ Բրամսն իր արժեքը լավ գիտեր։ 1865-ին Մանհայմում շատ լավ ընդունեցին Բրամսի և դիրիժոր Լեվիի ելույթը, նույնը՝ 1874-ին Վիեննայում։ Երկիր թե լավագույնը համարվում է 1895-ի համերգը դաշնակահար Էժեն դ'Ալբերի կատարումը՝ Բրամսի դեկավարությամբ։ Ըստ Միխայիլ Դրուեկինի՝ «կան կոմպոզիտորներ, որոնք ներխուժում են մեր հոգեւոր կյանքի մեջ... ու տանում իրենց հետևից։ Այդպիսին էր Բեքհովենը։ Բայց լինում է այնպիսն, որ երաժշտությունը միանգամից չի գերում լսողներին, և միայն երբ կարողանում են հաղթահարել հոգական զավկածության արգելը, որով հեղինակը պատճեշել է իրեն, որպեսզի զայի իր մտքերի ու զգացմունքների անսանձ հոսքը, այնտամ ամբողջությամբ բացահայտվում է կոմպոզիտորի ստեղծագործությունների կատարելությունը։ Այդպիսին է Բրամսը»<sup>3</sup>։ Ֆուրտվենգլերն էլ ասում էր. «Բրամսի երկերը քարնված գանձեր են, և ով հայտնագործի, անսպառ հարստության տեր կդառնա»։ Բրամսն այնքան խորն է, որ նույնիսկ Բեռնարդ Շոուն է շփորվել գնահատելիս։ 1-ին կոնցերտը նրան քվացել է հնչունների մի քարդ կույտ, որը կարող է հաղթահարել ցանկացած օրիորդ, եթե օժտված է պատշաճ տեխնիկայով։ Սակայն 48 տարի անց նա գրել է. «Բրամսի երաժշտության այս շուտափույթ, եթե շատեմ, հիմար գնահատականը լավ նախազգուշացում կլիներ բռնը չափից ավելի իմացող քննադատներին... Խսկ ես, երբ գրում էի հոդված, դեռ չէի գնահատել Բրամսի յուրօրինակությունը։ Ներողություն եմ խընդիում»<sup>4</sup>։

Բրամսի արվեստի գագաբներից է «Գերմանական ոերվիենը» (ստեղծագործություն թիվ 45, առաջին կատարումը՝ 1868-ի ապրիլի 10-ին, Բեռնենի Մայր տաճարում)։ «Ոերվիեն» բառով է սկսվում կաթոլիկ հոգեհանգստյան մեսսան՝ «Հանգիստ հավիտենական տուր նրանց, Տեր...»։

2. Անդ, էջ 76:

3. М. Ляцкский, Иоганнес Брамс, стр. 5.

4. Бернард Шоу, О музыке и музыкантах, Москва, 1965, стр. 165.

Հանգուցյալներին անդորր հայցող սգո երգեցողորյան առաջին նմուշները հոռմեական ծիսակարգում երգվել են լատիներեն: Երաժշտական մասերի շարքը կարգավորվել է 14-րդ դարում՝ գրիգորյան խորալների մի փունջ, որտեղ «Փառք» և «Հավատամք» մասերի փոխարեն ներմուծված են «Անեղ դատաստանը» և այլ դրվագներ: Ռեքվիեմների առաջին հեղինակներն են Յոհաննես Օկեհենը, Գիյոմ Դյուֆային, Պալեստրինան, Լաստոն... Հետագայում փոփոխության ենթարկվեցին ոչ միայն մասերի քանակը, այլև լեզուն: Գերմանական ոերգինեմներ հորինել են Հ. Շյուտը, Պրետորիուսը, Սիխայիլ Հայդնը: Գերմանականի հիմքում ընկած են լութերյան Աստվածաշնչից քաղված տեքստեր:

1865 թ. ապրիլի 24-ին Կյարա Շումանին հղած նամակից երևում է, թե ինչպիսի ակնածանքով ու խատապահանջությամբ է Բրանսը վերաբերվել իր ապագա Ռեքվիեմին: «... Խնդրում եմ ցոյց մի տուր Յոախիմին խըմբերգու, որը տվյալ պահին հիշյալ «Գերմանական ոերգինեմ» ամենարույն մասն է... Քանի որ նտահղացումն կարող է ի շիր դառնալ... ուստի գոնե այժմ կարդա այն սրանշելի տեքստը, որով պիտի սկսվի ստեղծագործությունը: Ֆա-մաժոր խմբերգը առանց ջութակների, բայց տափոլ և այլ գեղեցկություններով՝ հետևյալ տեքստով.

«Երանի սգավորներին, քանզի նրանք կմխիթարվեն:

Ովքեր արցունք են ցանում, երջանկություն կիմձեն:

Ովքեր շալակած տանում էին սերմերն իրենց ու լաց լինում գնալիս,

Հետ պիտի գան ցնծալով և քարձած պիտի բերեն խրձերն իրենց»:

Տեքստը կազմել են Աստվածաշնչից: Քեզ ուղարկված խմբերգը չորրորդ համարի տակ է: Երկրորդ համարը դո-մինորում է քայլերգի տեսալով. «Ամեն մարմին ննան է խոտի, և մարդու ամբողջ փառքը ննան է խոտածաղկի»: Մի՞թե ննան գերմանական տեքստը կարող է քեզ նույնան դուր գալ, որքան սովորական լատինականը: Լիահույս եմ, որ այս ամենը կկարողանամ ինչ-որ չափով ամբողջացնել, ընդունին չկորցնելով արիություն և խանդակառություն»<sup>5</sup>:

Նման ոերգին ստեղծելը Շումանի շիրականացված մտահղացումն էր, որը խրանեց Բրամսին: Վերջինիս «Գերմանական ոերգինը» ներառում է իր մեջ նախորդների նվաճումները: Այստեղ շաղախված են խորալային խաղաղ մեղեղիները, եղական պարզ հնչյունաշարը (3-րդ մասի քարիտոնի մեներգում) և ոռմանտիկ երաժշտության բարդ եկեղեները: Ոճական քողարկված առնչությունները հաղորդակից են դարձնում անցյալին, համակում հավերժի հովերով: Նշմարվում են աղերսներ Բախի «Ակտուս տրագիկուս» կանտատի հետ, քարիտոնի հիշյալ մեներգը («Տեր, սովորեցրու ինձ, որ ես ել պիտի մերմեմ») նմանվում է Բերիովենի

5. С. Роговоӣ, Պուստա Իօգաննես Բռաւս, стр. 74.

«Ձրիստոսը Զիքենյաց լեռան վրա» օրատորիայից Հիսուսի ուշիտաւի վին (ասերգ), 3-րդ և 6-րդ մասերի կրկնակի (Երկու թեմայով) ֆուզաները գրված են հենցելյան մեծակերտ ոճով ու ոգով և այլն:

Բրամսի «Ուերվիենը» բաղկացած է յոթ մասից: 1-ին մաս. «Երանի սգավորներին, քանզի նրանք կմխիթարվեն: Ովքեր արցունք են ցանում, երջանկություն կինձեն...»:

2-րդ մաս. «Որովհետև ամեն մարմին խոտի պես է և մարդու ամեն փառքը խոտի ծաղկի պես, խոտը չորացավ և նրա ծաղկիը բափվեց: Խսկ Տիրոց խոսքը մնում է հավիտյան...»:

3-րդ մաս. «Տեր, ստվորեցրու ինձ, որ ես էլ պիտի մեռնեմ... Որքան անցողիկ եմ բոլոր նրանք, որոնք կուտակում են ունայն հարստություններ՝ շինանալով, թե Վերջում ինչ է սպասվում, մոլորվում ու մոլորեցնում են ուրիշներին... Հովանուդ տակ են արդարները»:

4-րդ մաս. «Որքան գորովակից է քո օթևանը, զորաց Տեր...»:

5-րդ մաս. «Դուր դեռ սգո մեջ եք... Ես շատ կորուստներ եմ ունեցել, բայց Վերջապես գոտա սփոփանք: Արդ, թող դա միխիթարի ձեզ, ինչպես մայրը...»:

6-րդ մաս. «Այստեղ չեմ մեր խսկական ոստանը, մեզ ձգում է ավելի հուսակ կացարանը...»:

7-րդ մաս. «Երանի ննջեցյալներին, նրանց վաստակի պտուղները և ձուլվել են Արարշին...»:

«Ահեղ դատաստան» դրվագի բացակայությունը ընդգծում է Բրամսի կորողի միխիթարական բնույթը: Մոր մահից հետո (1865) կոմպոզիտորը գրում է Կլարա Շումանին. «Բանական մարդը ոչինչ չի կարող փոխել...»<sup>6</sup>: Բրամսը հաշտվում է ճակատագրի հետ: 32 տարեկան էր, խսկ ահա ուր տարի առաջ նույն Կլարային նա հղել է. «Գեղեցիկ, խսկական մարդը խաղաղ պիտի լինի թե՛ ուրախության, թե՛ տիսրության, թե՛ սգո պահերին»<sup>7</sup>: Եվ «Ուերվիենում» հեղինակը հավատարիմ է մնում այս կանխադրույթին: Ըստ Կարլ Գեյրինգերի, ցանկացած այլ կոմպոզիտոր «Հավիտենական ուրախությանը թող լցվեն նրանք» խոսքերը կինչեցներ ամենայն ուժով, սակայն Բրամսը, որ մինչ այդ հասել էր գերինչողության, մենցում է մինչև պիհանիսին (Չշուկ), քանզի երջանկության գերագույն դրսևորումը նրա համար մեղմ գորովանքն է»:

Ամբողջ «Ուերվիենը» ողողված է մեղմիկ լույսով: 1-ին մասում բացակայում են ջութակները, կլառնետները և սուր շնչողները, հնչողությունը

6. Կ. Գեյրինգեր, Ի. Բրամս, стр. 108.

7. Ս. Պոգոսյան, Պիծման Իօհաննես Բրամս, стр. 59.

8. Կ. Գեյրինգեր, Ի. Բրամս, стр. 331.

Երգեհոնային է: Բրամսյան հավասարակշռվածությունը տարածված է կորողի բոլոր գործոնների վրա: Այն սիմետրիկ է, մասերի  $3+1+3$  կառուցվածքով, առանձին մասերում ևս գերիշխում է եռմասանի ձևը: Դրամբ մոլորակների պես պտտվում են մեղմօրդր 4-րդ մասի շուրջը, որը գերմանական ժողովրդական օրորոցային է հիշեցնում: «Նշերանգային ընդհանությունները կուտ կապում են մասերը, որոնք համակենտրոն շրջանների նման ձայնակցում են միմյանց, 1-ինը՝ 7-րդին, 2-րդը՝ (սգր քայլերզը՝) 6-րդին, 3-րդը՝ 5-րդին: Եվ այս ամենի վրա վերհառնում է մոր կերպարը՝ ինչպես Ռաֆայելի Տիրամայրն՝ անպերի վրա: Սակայն Բրամսը Բրամս չէր լինի, եթե տիեզերացուց պոռթկումով, գիսաստղի կամ կայծակի փայլատակումով չլուսավորեր իր հոգու խորխորատները, սանդարամետը: «Մահ, ո՞ւր է քո խայթոցը, դժոխը, ո՞ւր է քո հաղթանակը» դրվագում կարծես երևում են աստղերը լիզող հավիտենական կրակի լեզվակները, բայց Սահկան պարի այդ ճրլկապտույտը կատացնում են լարայինների շողերը, և լույսը բացվում է («Տեր, թեզ վայել է փառք...»): «Ուերվիեմը» ներդաշնակում է մեր հոգինները, հուսադրում. «Ահա մի խորհուրդ եմ ասում ձեզ, ոչ թե ամենը կննջենք, այլ ամենը կփոխվենք, որովհենու փողը կփչի և մեռյալները հարություն կառնեն անապականենի...» (6-րդ մաս): «Ուերվիեմը» թևափորում է մեր հոգինները սուրբ աղավնու թևերով (ու տավիղի գեվիուռով), տանում մահից դեպի հավիտենական կյանք, մեղավոր Աղամից դեպի Քրիստոս...»

## ՈՒԽԱՐԴ ՇՏՐԱՈՒ. «ՍԱԼՈՍԵ»

Որբան չընաղ է այս երեկո  
արքայադուստր Սալոմն...:  
Օսքար Ռայլ



ամանակին Բերհովենը մերժել է «Դոն Շուան»-ի թեմայով  
օպերա կերտելու գաղափարը՝ այդ նյութը համարելով ոչ բա-  
րյական:



Այլ էին Սոցարտի ժամանակները, բարերը, որոնք հանդուրժում էին նման  
սյուժեին անդրադատնալի: Սակայն Բերհո-  
վենի ապրած նախափորորկային ժամա-  
նակաշրջանը պահանջում էր ոչ թե սիրա-  
յին արկածներ, այլ հերոսականություն:  
Ժամանակ, որի նշանաբանն էր Ֆրիդրիխ Շիլերի բոցաշունչ կոչը՝ «In tiranno» –  
«Ընդդեմ բռնակալների»: Պատահական  
չէր, որ Բերհովենն իր 3-րդ սիմֆոնիան վե-  
րանվանեց: Պատառութելով Նապոլեոնի  
անունը կրող տիտղոսաթերթը՝ կոմպոզի-  
տորը նորի վրա գրեց պարզապես «Eroica»՝  
հերոսական: Ահա այսպես արտահայտվեց  
Բերհովենի հիմարափորթյունը Նապոլեո-  
նից, քանզի նա, հակառակ խոստումներին  
և սպասումներին, իրեն հոչակեց կայսր: Անշուշտ, «Դոն Շուանի» բովան-  
դակության արատավոր կողմերն ի գորու չեղան ստվերելու Սոցարտի  
երաժշտությունը, և նա կերտեց մի գլուխագործոց:

Մինչդեռ Բերհովենի աշխարհայցքն առավել գաղափարական էր,  
ինչը լավագույնս դրսնորվեց «Ֆիդելիո» օպերայում, «Էգմոնտ» նախեր-  
գանքում, 5-րդ սիմֆոնիայում և այլ կորողներում: Այս իմաստով կարելի է  
համաձայնել Գեորգի Չիչերինի հետևյալ գնահատականի հետ: «Ինչ-որ  
տեղ ես կարդացել եմ, – գրել է նա, – որ Սոցարտի մոտ գերիշխում է Eroica-ն, իսկ Բերհովենի մոտ՝ Eroica-ն: Տարբերությունը մի փոքրիկ «ե» տա-  
ռի մեջ է, բայց այդ փոքրիկ «ե»ի մեջ մի ամբողջ աշխարհ է տեղակոր-  
վում»<sup>1</sup>:

Եվ Չիչերինը համամիտ է այն երաժշտագետներին, որոնք Սոցարտի  
արվեստում տեսնում են մի կողմից իրական կյանքը, ծաղկող հողը, լուսե-

1. Г. В. Чичерин, Моцарт, стр. 128.

դեն մաքրությունը, մյուս կրողից՝ տիեզերական ուժերը, հելլենական քառսատոնները, հոռեստեսությունը, դիվայինը: «Մոցարտի երկերում նկատվում է նաև «նախաստեղծ քառու» շարժումը», ավելացնում է Չիչերինը: Եվ այս ամենը Մոցարտը մարմնավորում է ու ներկայացնում «մարու ձեռքերով» ու սրտով՝ երերային հնչյունների միջոցով այնպես, ինչպես լույսը, որ բարախվելով ցեխի մեջ չի ապականվում:

Մոցարտն իր երերային պարզությամբ մնաց անգերազանցելի, սակայն «դեմոնիզմը», հերանոսական հովերը առավել դրսերվեցին դեկադանսի, անկումային արվեստի, այունիետն՝ 20-րդ դարում ալեկոնդվող էքսպրեսիոնիզմի ժամանակաշրջանում: Հիշենք Գուստավ Մայերի, Ալեքսանդր Սկրյաբինի, Առնոլդ Շյոնթերի և այլոց ստեղծագործությունները: Իսկ ֆաշիզմի օրոր պարզապես մշակույթի գոյությունն էր փոտանգված: Սակայն ֆաշիստների կողմից հրկիզված գորերի խարույկներից վյունիկի պես վեր հառնեցին դասականները: Նացիստները չկարողացան նաև լրեցնել ժամանակակիցների՝ Թոմաս Մանի, Վիլելմ Ֆուրտվենգլերի, Ռիխարդ Շտրաուսի, Արքուն Տուկանինի ձայնը:

Ֆաշիզմի նկատմամբ Ռիխարդ Շտրաուսի հակակրանքի մասին է վկայում մի դեպք, որը կոմպոզիտորին նվիրված մենագրության մեջ մեջքերել է Էռնստ Կրաուզեն: 1933-ին Շտրաուսը լրացրել էր կայսրական երաժշտական պալատի կողմից տրված մի հարցաթերթիկ, որի կետերից մեկը պահանջում էր ապացուցել կոմպոզիտոր լինելու փաստը, և որպես երաշխավորներ, անհրաժեշտ էր վկայակոչել երկու հայտնի ժամանակակիցների անունները:

Եվ Շտրաուս այդ հարցաթերթիկում, իբրև երաշխավորներ, գոել էր իր «նախանիների»՝ Մոցարտի և Վագների անունները:

Այս հեգճանքի մեջ լիակատար ճշմարտությունն այն է, որ Շտրաուս իրականում մեծ ազդեցություն էր կրել թե՝ մեկից, թե՝ մյուսից, և «վարդերի ասպետ» օպերայի հեղինակին, հիրավի, կարելի է անվանել 20-րդ դարի Մոցարտ:

Սակայն մինչև այդ «վարդերի բուրմունքին» հասնելը Շտրաուսը հարթել էր երկար ու ձիգ ճանապարհ, որն անցնում է փշերի և «չարի ծաղկեների» միջով: «Չարի ծաղկեներ» ասելով, նկատի ունենք բողերյան դեկադանսը, որի ազդեցությունը երկար ժամանակ գցացնել է տվել Շտրաուսի և այլոց արվեստում:

Դրա վառ օրինակն է 1905-ին ստեղծված «Սալոմե» օպերան: Ըստ Կրաուզեի, Սալոմեի թեման համահունչ էր 19-րդ դարի վերջի չափազանց բորբոքված տրամադրություններին: Եվ հուգումների այդ ալիբները գեղվեցին 20-րդ դար:

Չնայած սահմոկեցուցիչ բովանդակությանը, գուցեն հենց դրա շնորհիվ, Սալոմեի պատմությունը գրալի է շատերի ուշադրությունը: «Մինչև

1912-ը ֆրանսիացի 2.789 բանաստեղծներ տաղաչափել են Հերովդիասի աղջկայ մասին»<sup>2</sup>: Եթե հետևենք Սալոմեի տարածմանը՝ ժամանակի մեջ, ապա կտևնենք հետաքրքրական մի պատկեր:

1867-69 թվականներին Ստեֆան Մալարմեն ստեղծեց «Հերովդիաս» պոեմը:

1876-ին Գյուստավ Մորոն կերտեց «Հերովդեսի առջև պարող Սալոմեն» հայտնի նկարը:

1877-ին լոյս տեսավ Գյուստավ Ֆլորերի «Հերովդիաս» պատմվածքը, որը նոյն թվականին ուստերեն թարգմանեց Իվան Տուրգենևը: Այս թվականին ծնվեց նաև Յոհաննես Բրամսի նոյնանուն երգը (խոր՝ Գոդֆրիդ Կելլերի):

1881-ին ստեղծվեց Ժյուլ Մասնեի «Սալոմե» օվերան (ըստ Ֆլորերի):

1893-ին՝ Օսրար Ուայլի «Սալոմե» դրաման և այն զարդարող Օքրի Վինենտ Բյորդսլեյի «Սալոմե» նկարը՝ 1894-ին:

1905-ին՝ Ռիխարդ Շտրաուսի «Սալոմե» օվերան (ըստ Օսրար Ուայլի):

1906-ին՝ Ֆրանց Ֆոն Շտուկի «Սալոմե» գեղանկարը:

1907-ին՝ Ֆլորան Շմիտի «Սալոմեի ողբերգությունը» մնջախաղ-դրաման: Նոյն թվականին Վարդգես Սուրենյանցը կերտեց «Սալոմե» նկարը: Մեկ տարի անց Ուայլի «Սալոմե» դրամայի համար երաժշտություն գրեց Ալեքսանդր Գլազունովը:

1922-ին լոյս տեսավ Օսրար Ուայլի «Սալոմե» Վահան Տերյանի հայերեն թարգմանությամբ:

1925-1926-ին Հակոբ Գյուրջյանը և բրոնզից քանդակեց Սալոմեին՝ Հովհաննես Մկրտչի կտրված գլուխը սկոտեղի վրա բռնած:

Եվ վերջապես 1944-ին Պաուլ Հինդենիթը ստեղծեց «Հերովդիաս» մնջախաղը (ըստ Մալարմեի): Չատ չեն այն թեմաները, որոնց երբեւ անդրադարձել են այնքան շատ արվեստագետներ, որոնք, ստես, արձագանքել են մենք մյուսին: Ինչպես նշում է Էռնատ Կրաուզեն, Օսրար Ուայլը «Սալոմե» դրաման ստեղծել է Գյուստավ Ֆլորերի «Հերովդիաս» պատմվածքի և Յորիս Գյուլսմանի վեպի ազդեցությամբ: Ի դեպ, Հերովդիասի թեմային անդրադարձել էր դեռ Լեռնարդո դա Վինչին, հայտնի է նաև Շիցիանի համարեղ կտավը՝ «Սալոմեն» Հովհաննես Մկրտչի գլուխը ճեղքին»: Ուայլը իր դրաման գրել է ֆրանսերենով և հասցեագրել մեծ դերասանուի Սառա Բեռնարժեն:

Ռիխարդ Շտրաուսը օգտվել է Հեղվիգա Լախմանիի գերմաներեն

2. Արծովի բախչինան, Վարդան Մատրեսեան, Շամախեցի պարուիին, Եր., 2007, էջ 63: Այս գիրքը նվիրված է Սալոմեի կերպարի լավագույն կերտաղներից մեկին՝ հայ պարուի Արմեն Օհանյանին (Սովոր Փիրուղալյան, 1887-1976):

թարգմանությունից: Դրանայի տեքստում որոշ կրծառումներ կատարելով՝ Շտրաուսը ստեղծել է մեկ գործողությամբ կուռ օպերա:

Ահա այդ օպերայի հակիրճ բովանդակությունը: Հրեաստանի քառապետ թագավոր Հերովդեսի պալատում խնջույք է: Հին ջրհորից լսվում է թանտարկված Յոթանանի, այսինքն՝ Հովհաննես Սկրտչի, աղաղակը, որը գերում է Հերովդեսի խորք դրւատր Սալոմեին: Մինչդեռ Յոթանանը դատապարտում է թագուհում՝ անամոր Հերովդիաղային, արքունիքի խրախնաճները, Հերովդեսի հեշտափրությունը և ավետում Փրկչի գալուստը, Սալոմեն տենչում է Յոթանանի սերը, սակայն մարզարեն անհծում է այդ պացչու կնոջը: Հերովդեսը, գայրակղված Սալոմեի կրրու պարով, խոստանում է տալ պարուիլուն այն ամենը, ինչ նա կցանկան: Եվ հուրախություն Հերովդիաղայի՝ Սալոմեն պահանջում է արձարե սկուտեղի վրա մատուցել մարզարեի գլուխը: Անրմական կրրով բռնկված, Սալոմեն համբուրում է մարզարեի կտրված գլուխը: Ցնցված թագավորը հրամայում է սպանել Սալոմեին: Եվ զինվորները վահաններով ճգնում են այդ հրեշավոր կնոջը:

Օպերայի երաժշտությունը մանրամասնորեն հետևում է լիբրետոյին և արտացոլում գործողության մանրամասները: Երաժշտությունը կատարում է ոչ միայն հայելու, այլև կարելի է ասել, խոշորացույցի դեր: Այն տեսանելի, շշուափելի է դարձնում ամենանրին հոգեշարժումները, ուժեղացնում հուզականությունը, իսկ Սալոմեի պարում ասես ուրվագծում կնոջ մարմնի «դժոխային ելսէցները», ինչպես կասեր Դոստուսկու հեռուը: Երաժշտագետ Բորիս Ասաֆևը Գլինկայի սիմֆոնիկ երկերը բռնրոշել է որնկես «ուեսիլային»: Ակադեմիկոսը նկատի ուներ այն, որ լսերով այդ գործերը, պատրաճը է ստեղծվում, թե տեսնում են ու զգում այն, ինչի մասին պատմում է երաժշտությունը, օրինակ, Խսպանիան արտացոլող գործերում՝ մադրիդյան ամառային զիշերվա բուրմունքները և այլն: Առավելապես Ռիխարդ Շտրաուսի արվեստում՝ «Սալոմե» օպերայում, զգացվում են արևադարձային լուսնիկա զիշերվա զգիխչ բուրմունքները, մեղմ հովհկը, շշուկներ, հոգոցներ... Շտրաուսի նպատակն էր հափշտակել, հմայել, ցնցել, արքեցնել ունկնդրին: Այդպես էլ եղավ: Կայծից բռնկվում է հրդեհը և հասնում աղետալի շափերի, այդպես է նաև օպերայի երաժշտության անշեշ և անշեն վերելքը: Ենաստ Կրաուզեի խոսրով ասած, «այս նվազախմբային բոցը, շծածկելով երգարածինը, այնուամենայնիվ լարվածության զագարնակեսուում կարծես գերիշխելով՝ մերքընդերք զգացնել է տալիս իր վիրխարի ուժը»<sup>3</sup>: Եվ հերոսուին կրերի շիկացումը այրում ու մոխրացնում է հենց իրեն՝ Սալոմեին, միևնույն ժամանակ և իր գործին՝ Յոթանանին... Շիենգերի բնորոշմանը՝ «սեռերի զաղտնի պատե-

3. Է. Կրայզ, Ռիխարդ Շտրաուս, Մ., 1961, 328.

բազմի» գաղափարը շատ է արծարծվել 19-րդ դարավերջին, 20-րդ դարի սկզբին: Սեռերի այդ հակամարտությունն իր կենդանի մարմնավորումն է գտնել դրամատորդիքայում:

Երածշտագետ Միխայիլ Տարականովը «Ալբան Բերդի երածշտական քատրոն» աշխատությունում անդրադառնում է «սալոմեական» սիրո խնդրին: Սեր, որը ահավոր դաժան մի խաղ է: Եվ դա զարժանալի չէ: Անարդար, դաժան հասարակության մեջ նույնիսկ մարդկային լավագոյն զգացմունքը պատճառում է ցավ և տառապանք, Վերածվում իր հակապատկերի: «Է՞՞նչը կարող է սեր առաջացնել հղվացած Սալոմեի սրտում, – հարցնում է Տարականովը ու շարունակում, – միայն զիտակցուն այն քանի, որ իր սիրո էակը անդրդեմի է մնում զգացական հմայքի ազդեցությանը: Երիտասարդ մարդարեկի համար դիմադրությունը նետում է նրան մահվան գիրկը: Սալոմեի սերը մահաբեր է, ինչպես նրա համար, ով տրվել է այդ սիրո իշխանությանը, այնպես էլ նրա համար, ով կարողացավ դիմակայել»<sup>4</sup>: Ահա սալոմեական սեր-մենամարտի մի քանի հերոսուիմենը ևս: Դոստուսկու Ազյայան, Գրուշենկան, Իրսենի Հնդքա Գարլերը, Վենեկինի Լուլուն, Սթրինդերդի Ալիսան, Բյուլիսենի Սարին, Պրոսապեր Սերիմեի Կարմենը... Ծակատագրական սիրո կիրքը վառ կնրապով արտահայտված է մարմնի պլաստիկայի, պարի միջոցով: Պարում է Բիզեի Կարմենը, պարում է Դոստուսկու Գրուշենկան՝ զնշուների նվազակցությամբ, պարում է և դյուքում Շորապուի Սալոմեն: Օպերայում առանձնահատուկ տեղ է գրավում Սալոմեի «յոթ ծածկույթի պարը», որը հեղինակը ավելացրել է, եթե օպերայի պարտիտուրն արդեն ավարտված էր: Պար կատարվում է նաև օպերայից առանձին: Հատկանշական է, որ օգտագործելով ժամանակակից երածշտության նորագոյն արտահայտչամիջոցները և շնորհիկ նեծ վարպետության, կոմպոզիտորը վերստեղծել է արխայիկ, հնարքուր մի պատկեր, մասնավորապես՝ Սալոմեի էքստագի հասնող պլաստիկ պարը:

Նվազախմբային հնչողությանը հատուկ երանգ են հաղորդում չելեստան, հարգածայինները և օպերայի ավարտից մեկ տարի առաջ՝ 1904 թվականին ստեղծված հեկելֆոն նվազարանը։ Այս բարիտոն-հորոյը Շտրաուշ կիրառել է նաև «Էլեկտրա» օպերայում։ Իր երաժշտությամբ կոմպոզիտորն ասես մրցում է «Սալոնե» դրամայի հեղինակի պերճախոսության հետ։ Ուայլը երիտասարդ սիրիացու՝ Նարրարոի շուրբերով Սալոմեին նմանեցնում է «սպիտակ վարդի ցոլքին, որ երևում է արձարյա հայելու մեջ», Սալոմեի շուրբերով Հավիաննես Ակրտի ծայն համեմա-

4. М. Тараканов, Музыкальный театр Альбана Берга. М., 1976, стр. 277.

տում է մի «քուրվառի» հետ, որն արտասովոր բորմունք է սփռում»: Սալ-մեն, ունկնդրելով մարգարեի ձայնը, արտասովոր մի երաժշտություն էր լուս: Եվ եթե Օսքար Ուայլը բանաստեղծական լեզվով պատմում է, որ մարգարեի ձայնը Սալոնեն երաժշտություն էր թվում, ապա Ո-իխարդ Շտրաուսը իրականում հնչեցնում է այդ երաժշտությունը...

Շտրաուսի օրոք արվեստի և կյանքի փոխհարաբերությունների մասին բուռն վեճեր էին ծավալվել և ոչ միայն Եվրոպայում:

Բախսկում էին հետևյալ տեսակետները՝ «արվեստը արվեստի համար», «արվեստը հանուն կյանքի», «արվեստ՝ ի հեճուկս կյանքի»: Սարուր արվեստի ջատագով Օսքար Ուայլի կարծիքով արվեստի զարգացման միակ աղբյուրը հենց արվեստն է, այլ ոչ իրական կյանքը: Արվեստի մի տեսակը իր սյուժեները պիտի վերցնի մյուսից: Ըստ ճապոնացի Ակուտագավա Ռ-յունոսկեի, մի յուրօրինակ գործ ստեղծելու համար արվեստագետը նույնիսկ պատրաստ է իր հոգին սատանային տալ: «Այսպիսին է Սկրյարինը, - գրում է Ալեքսեյ Լուսկը, - նա սիրում է դիվայինը... չարի մեջ տեսնում իր ուժը և գեղեցկությունը: Այնտան չարը չար չէ, այլ՝ աստվածայն տարերը: Լսելով Սկրյարինի երաժշտությունը՝ ցանկություն է առաջանում նետվել անդունքը, ուզում ես ջարդել ծեծել, սպանել և ինքը էլ հոշոտվել...»<sup>5</sup>: Անշուշտ, փիխտոփայի այս ծայրահեղ գմահատականը պայմանավորված չէ լոկ նրա «Սատանայական պոեմի» ամվաճր, ոչ է «Աստվածային սիմֆոնիայի», «Պոեմ-էքստազի» կամ «Պրոմեխեսի» ագդեցությամբ, այլ առհասարակ Սկրյարինի հոգեկերտվածքով, որը Լուսկը բնորոշում է որպես հեթանոսական: «Արվեստ և կյանք» հիմնախնդիրը վառ կերպով արտահայտված է Ակուտագավայի «Դժոխքի տաճաշանքները» նովելում, որը հնչ-որ ընդհանուր եղբեր ունի «Սալոն» օպերայի հետ:

Ցանկասեր իշխան Հորիկսավան կարգադրում է իր պալատական նկարիչ Յոսիհիդեկան մի վարագույիր վրա նկարել «Դժոխքի տաճաշանքները», որի կենտրոնում գետեղված պիտի լինի վառվող կառը, որի մեջ հրկիզ-վում է մեղսագործ կինը: Յոսիհիդեկան կարծիքով գլուխգործոց կերտելու համար նկարիչը պետք է նկարի իրականությունը: Իշխանը իրամայում է հրկիզվող կառի մեջ նստեցնել հենց նկարչի անմեղ դստերը, որը խուսափում էր իշխանի նկրտումներից: Կառը հրկիզում են, և Յոսիհիդեկան նկարում, անճահացնում է կրակի մեջ մնոնող իր դստերը, որից հետո ինքնասպան է լինում: Ահա այսպես, գլուխգործոցը ստեղծվում է կյանքի գնով<sup>6</sup>: «Հրեշտակոր գլուխգործոց». «Սալոն» օպերային տրված Ռումեն

5. Культурология, Ростов на Дону, 1999, стр. 337.

6. Вопросы японской филологии, М., 1977, стр. 116.

Ողլանի այս գնահատականը կարելի է վերագրել նաև «Դժոխքի տաճանքներ» նովելին:

Սակայն ինչպես վերը նշվեց Մոցարտի «Դուանի» առիրով, երաժշտությունը «Սալոմե» օպերայում ևս բողարկում է բովանդակության կոպտությունը: Սա է պատճառը, որ Կրաուզեն փոքր-ինչ նահանջում է իր խիստ գնահատականներից՝ գրելով հետևյալը: «Ըստ երևույթին ձեզ ի գործու է այնքան գերազանցելու բովանդակությանը, որ «Սալոմե» պես պարողգիական դիպվածը վերածվել է արվածությունությամ պես մի բանի»<sup>7</sup>:

Սա դեռ Կրաուզեն է ասում, որը հեղինակի ժամանակիցն էր և նամակագրական կապ ուներ Շորուոսի հետ: Մինչդեռ մեր օրերում աշխարհը այնքան արհավիրքներ է տեսել, որ «Սալոմե» օպերան նմանվում է պատերազմի մասին մի ֆիլմի, որն այլև առանց զարհություն դիտում է ինքը՝ պատերազմի մասնակիցը:

Տեղին է հիշել Պարույր Սևակի խոսքը, որ կյանքն այնպիսի ողբերգություններ է խաղում, որ Շեքսպիրն էլ կնախանձեր...

---

7. Э. Краузе, Р. Штраус, стр. 332.

ՅԱՆ ՍԻՐԵԼԻՈՒՄ  
(1865–1957)

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յ

ան Սիրելիում ստեղծագործական մտածողությանը բնորոշ էր ծրագրայնությունը: Բանաստեղծ Էրկոյին հղած նամակում Սիրելիուսը գրել է. «Երաժշտությունն իր ներգործությունը կարող է լիովին դրսերել միայն այն ժամանակ, երբ այն կողմնորոշվում է որևէ բանաստեղծական այսուժուկ, այլ խոսքով, երբ երաժշտությունը և պոնզիան միավորված են: Այնժամ երաժշտությանը ստեղծված նիգամած մրնորտը պարզվում է, իսկ բառերը, որքան էլ գեղեցիկ լինեն, ճեռք են բերում առավել նեծ նշանակություն»<sup>1</sup>:



Ընդ որում, Սիրելիուսի այս գաղափարները վերաբերվում են ոչ միայն վոկալ, այլև նվազարանային, այսպես կոչված, ծրագրային երաժշտությանը: Եվ այս յուրահատկությունը բազմից դրսերել է կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության ողջ ընթացքում՝

առաջին կայացած գործից մինչև վերջին խոշոր ստեղծագործությունը, այսինքն՝ «Լեմինկյայնենի մասին սյուիտից» մինչև «Տապիոյա» սիմֆոնիկ պոեմը:

«Լեմինկյայնենի մասին սյուիտը» Սիրելիուսի վաղ շրջանի գործերից է: Ծրագրային այս ստեղծագործությունը հիմնված է ֆիննական «Կալևալա» էպոսի վրա: Էպոսի առանցքը երկու երկրների հակաղործման մի կողմից Կալևալան, ուր հարգի են աշխատանքը, գիտությունը, երաժշտությունը, գեղեցիկը, մյուս կողմից՝ հյուսական երկիր՝ Պոկյոլան, ուր ապրում են կախարդները, վիռկները, որոնք ատում են խաղաղ, աշխատանք հարևաններին: Սյուիտը նվիրված է էպոսի հերոսներից մեկին՝ քաջարի գինվոր Լեմինկյայնենի «ողիսականին»: Այն բաղկացած է 4 մասից՝ ա) «Լեմինկյայնենը և կղզու աղջիկները», բ) «Լեմինկյայնենը Տունելայում», գ) «Տունելայի կարապը», դ) «Լեմինկյայնենի վերադարձը»: Ցուրաքանչյուր մասին հեղինակը տվել է իր բացատրությունը՝ ծրա-

1. А. Ступель, Ян Сибеллиус, Л., 1989, стр. 27.

գիրը: Սուածին մասում Լեմինկյայնենը ճանապարհորդում է Հյուսիսային երկրում, տեսնում Պոկյողայի գեղեցկուիկիներին, իրապուրվում: Հրաժեշտին՝ սիրահարված աղջիկները խնդրում են երրուսին չլթել իրենց: Երկրորդ մասում պատկերվում է մահվան ստորգետնյա քագավորությունը՝ Տուտնելան, որտեղ Լեմինկյայնենը հայտնվում է զոհվելուց հետո: Հերոսի մայրը արևից իմանում է որդու սպանության մասին, գնում է տղային գունում և իր սիրո ուժով վերակենդանացնում նրան: Երրորդ մասը նկարագրում է Սանդարամնությունը: Ըստ Ֆիննական դիցարաբնության, այն շրջապատված է լայնահուն, բուռն գետով, որի սև ջրերի վրա սահում է Վեհապանձ կարապը և երգելով՝ ննջեցյալներին քաշում-տանում իր հետևից: Չորրորդ մասն արտացոլում է հերոսի դեգերումները և վերադարձը: Սիրելիուսը գուգահեն է անցկացնում Լեմինկյայնենի և Արիլլեսի միջև:

Խիզախությունը և գեղեցկությունը հերոսին դարձել էին կանանց սիրեցյալը: Պատերազմներից և արկածներից հոգնած՝ Լեմինկյայնենը վերադառնում է հայրենիք:

30-ամյա Սիրելիուսի այս սյուիտը առաջին անգամ հնչեց 1896 թվականի գարնանը, Հելսինկիի սմբֆոնիկ նվազախմբի կատարմամբ: Նվազախմբի փորձի ընթացքում երաժիշտները հանդիմանում էին, առարկում երիտասարդ հեղինակին: Սիրելիուսի կինը դահլիճում նստած լախս էր...

Այնուամենայնիվ, համերգը կայացավ, սյուիտը ընդունվեց սառնությամբ: Քննադատները նշեցին Վագների, Լիստի, Չայկովսկու երաժշտության ազդեցությունը և ազգային բնույթի նվազ դրսեւումը:

Սիրելիուսը սյուիտից հանեց առաջին երկու մասերը, որոնք չին հընչում ավելի, քան երեսուն տարի, մինչևն ֆինն դիրիժոր Շնենքուստի ամբողջական կատարումը: Այսօր էլ սյուիտի մասերից ավելի հաճախ կատարվում է 3-րդ մասը՝ «Տուտնելայի կարապը»:

Կարապը խորհրդանշում է հավերժական հանգստի արքայությունը: Զուրակների բրբացող առկայծող նվազակցությամբ հնչում է անզիական եղջերափողի վեհասրանց մեղենին: Այս պարզ և վշտարեկ մեղենին հիշեցնում է հովվի կանչը՝ Վագների «Տրիստան և Իզոլդա» օպերայից և հատկապես «Պարսիֆալ» օպերան բացող նախանվազը: Ինչպես և Վագները, Սիրելիուսը այստեղ կիրառում է ազդեցիկ մի հնարանը: Լարայինները սկսում են «ընդերքից», հետզհետե ծավալվում դեպի հնչյունային սանդղակի վերին ոլորտները, նոսրանում ու լուսավորվում, ինչպես ծանր, մոայլ ամպերի կերպափոխությունները... Հնչյունային այս «միզամածությունը» և առհասարակ, ամբողջ սյուիտը հիշեցնում է հյուսիսային կուսական բնապատկերները, որոնք պատկերված են հենց Սիրելիուսի, Եղելֆելտի, կոմպոզիտորի կոնց՝ Այն Յարնեֆելտի, Էրո Յարնեֆելտի և «Կալսալա» Էպուր արտացոլող Գալլեմ-Կալլելայի նկարներում:

Սիրելիուսին նվիրված մենագրության հեղինակ Ալեքսանդր Ստուպե-

Ա, անդրադառնալով «Տունեայի կարապին», գրում է. «Երաժշտական գրականության մեջ դժվար է նշել մի գործ, որի մեջ կյանքի կրբերից վերացումը զուգակցվում է անդարձ կորստի վշտի հետ: Այդ թվայալ հակասությունը լի է ճշմարտությամբ և մարդկայնությամբ, որոնք գերում ու հմայում են ունկնդիրներին»<sup>2</sup>:

## ՄԻՄՖՈՆԻԿ ՊՈԵՄ «ՏԱՊԻՈԼՅԱ»

Ցան Սիբելիուսի վերջին սիմֆոնիկ ստեղծագործությունը «Տապիոլյա» սիմֆոնիկ պոեմն է: Այն ստեղծվել է 1926 թվականին: Մինչ այդ կոմպոզիտորն արդեն կերտել էր բազմաթիվ ծրագրային գործեր, որոնցից են «Սյուիտ Լեմինկյանենի մասին», «Կարեկիա», «Սագա», «Ֆինլանդիա» պոեմները, «Պոկյուայի դուստրը» ֆանտազիան և այլն: Այս բոլոր գործերը ոգեշնչված են ֆիննական «Կալևալա», Էպոսով, հայրենի բնաշխարհի տեսարաններով: Այս ծրագրայնությունը այդքան հոգեհարազատ է Սիբելիուսին, քանզի այն լավագույն միջոցն է կոմպոզիտորի ազգային հոգեկերտվածքը դրսութերու համար, մարմնավորելու իր ժողովրդի հավատալիքները, անցյալի հերոսական անցքերը:

Երաժշտագետ Ալեքսանդր Ստուպենդ Սիբելիուսին նվիրված մենագրության մեջ տեղեկացնում է հետևյալը. «Իր քառասմանյակի շնմին Սիբելիուսը ծաղկում էր ապրում: Նրանք, ովքեր այդ ժամանակ հանդիպել են կոմպոզիտորին, նաև նկարագրում են նրան որպես առանձնահատուկ հյուսիսի, կապուտաչյա, ամրակազմ, քաց շիկահեր մի վիկինգի»<sup>3</sup>:

Ավելացնենք նաև, որ Սիբելիուսի երաժշտությանն էլ բնորոշ է վիկինգային քափիք, հզորությունը, մեծակերտությունը: Եվ դա մարմնավորվում է յուրահատուկ արտահայտչամիջոցներով:

Սիբելիուսը կիրառում է արիստոյիկ՝ հնագույն հնչյունաշարի, այսպես կոչված՝ պենտատոնիկա լադի դարձվածներ: Իրարից մեկ տոն հեռավորությամբ հնչյունային քայլերը, միջին և ցածր, մոայլ ունգիստըների ընդգծումը, փողային նվազարանների ունգային և այլ հնչերանգների շաղախումը, կարելո-ֆիննական ժողովրդական ուրիմերի տարրերը և այլ միջոցները ստեղծում են «հազար լճերի երկիր Ֆինլանդիայի» բնության և մարդու ներաշխարհի հնչյունային պատկերը: Սիբելիուսի 3-րդ սիմֆոնիայի առիրով Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովը ասել է հետևյալը. «Սի տեսակ այլ կերպ է հնչում, մեր երաժշտության նման չէ: Եվ դա լավ է»<sup>4</sup>:

2. Անդ, էջ 30-31:

3. Անդ, էջ 44:

4. Անդ, էջ 48:

Իր հերթին Ֆեռնանց Լիստը ոուս կոմպոզիտորների արվեստի մասին ասել է. «Ռուսական երաժշտությունը թարմ հովեր է ներմուծում եւրոպականի մեջ»: Կարելի է ասել, որ ծիածանի մի գույնն էլ ֆիննականն է: Անշուշտ, ոյուցազնական, «վիկինգային» հղորդությունը դրսնորվում է Սիրելիուսի մեծակերտ սիմֆոնիաներում, ջութակի կոնցերտում: Ինչ վերաբերվում է «Տապիոյա» պոեմին, ապա այն իր բնույթով ավելի գուստ է, նկարագրողական:

Ըստ ֆիննական դիցարանության՝ «Տապիոն» անտառների ոգու անունն է, իսկ «Տապիոյան» այդ ոգու բնակավայրն է՝ հյուսիսային անտառները: Կոմպոզիտորն ասես աննկատ կերպով թափանցել է այդ կուսական անտառների խորքը, ականջ դրել, այդ ոգիներով լի, այսպես կոչված, «գուգահեռ աշխարհի» անտեսանելի կյանքը պատկերել հնչյունների միջոցով:

Երաժշտության անտեսանելիությունը հաճախ ստիպում է գուգահեռներ անցկացնել այլ արվեստների հետ, որոնք հնարավորություն են տալիս ավելի պարզ կերպով արտահայտվել, դատողություն անել այս կամ այն ստեղծագործության մասին: Անավասիկ, Մարտիրոս Սարյանին նվիրված մի ֆիլմում, Վարպետի աշխատանքի ընթացքը լուսարաներու համար, դիմել են հետևյալ հնարանքի՝ կտավի փոխարեն Վարպետը ծաղկեներ էր նկարում ապակու վրա, որի հակառակ կողմից վրձնի շարժումներին «հետևում էր» նկարահանող խցիկի, հետևաբար և կինոդյատողի «աչքը»:

Սիրելիուսն էլ, իր հերթին, հնչյունը հնչյունին կցելով, ակորդը՝ ակորդին, ասես, քուփը՝ թվին, ծառը՝ ծառին գումարելով՝ լսողի առջև սփռում է մի անծայրածիր «անտառ»: Լսում են խորիդրավոր շշուկներ, ծաղից ծառ հանկարծակի թռչող էակների քւերի թրթիռը, խոլ արձագանքներ և այլն: Իր տովորութիւն համաձայն Սիրելիուսը, որպես բնաբան, այս հնչյունային բնապատկերին հղել է իր գրած հետևյալ քառյակը, որը վարագույրի պես բացում է հյուսիսային աշխարհի առեղծվածային գեղեցկությունը.

Հյուսիս աշխարհի մոայլ անտառները  
Նիրիում եմ՝ սուզված լոռության մեջ:  
Այնտեղ է ապրում վեհ արքան անտառի,  
Այնտեղ ոգիները ճախրում են անվերջ:

## «ԲԱՂԴԱՍԱՐԻ ԽՆՉՈՒՅՔ»

Լսեցեր Տիրոջ խոսքը...  
Ճեր խունկը ինձ համար պիղծ է...  
Զեր տոններից զգվել եմ...  
Ճեր ճեռքերոյ լիբն են արցոնքով...  
(Եսայիա, Ա, 14)

Ես ատում եմ, մերժում եմ Ճեր  
տոնները... Ճեր հացի ընծաներն էի...  
Հո երգերի աղմուկը հեռացրու ինձանից.  
(Ամուս, Ե, 21-23)

Բաղդասարի ճոխս խրախնաճի մասին վկայում է Աստվածաշունչը՝  
Դանիելի մարգարեության 5-րդ գլուխում: Ահա մի հատված այդ գլխից:  
«Բաղդասար թագավորը մեծ հացկերույթ արակ իր մեծամեծներից հա-  
զարի համար, և այն հազարի առաջին գինի իմենց: Բաղդասարը, երբոր  
գինին ճաշակել էր, հրամայեց որ թերեք այն ուսկի և արծարի անորները,  
որոնք վեր էր առել նորա հայր Նարուգողոնոսորդ Երուսաղեմի մի տաճա-  
րիցը, որ խմեն նորանցով թագավորը և նրա մեծամեծները, նորա կանայ-  
քը և նորա հարմերը:

....Նույն ժամումը դուրս եկան մարդի ճեռքի մատեր և գրեցին աշտա-  
նակին համդեապ թագավորական պալատի պատի ծեփի վերա, և թագավոր-  
ը տեսավ այն ճեռքի թարը, որ գրում էր»: Այնուհետև սարսափահար թա-  
գավորը կանչում է Բարեկլինի իմաստուններին և մեծ պարզ խոստանում  
նրան, ով կկարողանա կարդալ և վերծանել այդ անհայտ, խորհրդավոր  
գրերը: Սակայն ոչ որ չկարողացավ այդ անել: Այդ պահին խնջույքի տուն  
եկավ թագուհին և միսիքարելով թագավորին, առաջարկեց թերել Նարու-  
գողոնոսորդի կողմից գերված իրեա Դանիելին:

Նախքան գրերի իմաստը թացատրելը՝ Դանիելը հիշեցրեց Բաղդա-  
սարին, որ Աստված նրա հորը՝ Նարուգողոնոսորին, թագավորություն  
տվեց, մեծ իշխանություն, սակայն նրա սիրտը հպարտացավ, ամբարտա-  
վան դարձավ: Նա զրկվեց իր զահից, պատվից, մարդկանցից արտաք-  
սվեց և շարունակեց իր կյանքը վայրի կենդանիների հետ: Այնքան ժամա-  
նակ, մինչև որ հասկացավ, որ մարդկության վրա իշխանություն ունի  
Աստվածը և նա, ում Արարին է ցանկանում կարգել թագավոր: Դանիելը  
կարդաց անհայտ բառերը՝ «Մանե, Մանե, Թեկեղ ՈՒ Փարսին»: «Այս է  
խոսքի մեկնությունը. Մանե՝ Աստված համարել է քո թագավորությունը և

նորան վերջացրել. Թեկեղ՝ կշռվեցար կշիռքով և պակաս գտնվեցար. Փարես՝ բաժանվեցավ քո թագավորությունը և տրվեցավ Մարաց և Պարսից» (Դամիել, Ե., 25):

Այս լեկուց հետո Բաղդասարը հրամայեց Դանիելին հազցենել ծիրանի, պարանոցին կահել ուսկե շրբ և հոչակեց թագավորության երրորդ իշխան: Նոյն գիշերը Բաղդասարը սպանվեց, և Մարաց Դարեհը գրավեց թագավորությունը:

Մեր թվարկությունից առաջ 6-րդ դարից եկող այս պատմությունը գրավել է բազում արևեստագետների ուշադրությունը՝ ընդհուածինչն մեր ժամանակները: Դեռ բարոկո շրջանի գեղաճկարիչներն են պատկերել Բաղդասարի բարբարոսական պերճաճքը՝ ոսկյա, արծաթյա զավաքները, թագավորին շրջապատած հարրած կանանց և տղանարդկանց այլայլքած դեմքերը, սափորից թափվող գիճին, այն դաստակը, որը պատին գրել է անհայտ գրերը, վերջապես գունատ և տագնապահար Բաղդասարին, որի հայացքը կարծես մեխիվել էր պատի վրայի պապիացող տառերին:

Այդպիսին է Ունեմբրանդի վրձնած գլուխգործոցը: Որպես բնորոշում «Բաղդասարի խնջույք» արտահայտությունը կիրառում են քննադատելու, կշտամբելու չափազանց հարուստ, ճոխ խնջույքները, ինչպես նաև անհարկի, անտեղի խրախճանքները, մանավանդ վտանգի պարագայում, ինչը տաճում է կործանման:

Այս գաղափարը յուրովի փոխակերպվել է տարբեր բաղարակրթություններում, մշակույթներում, արվեստում:

Միջնադարյան Գերմանիայում ժողովրդական տոնախմբություններից մեկն էր կառնավալյան շքերթները: «Կառ-նավալը» բառակապակցությունը նշանակում է «կառք-ծովային»: Զմուն կապանքներից ազատվելիս ժողովուրդը հեթանոսական տոնախմբություններ էր կազմակերպում, փառարանում բնության զարդները: Եվ այդ ծովային կառքը, որին հարմարեցնում էին նաև անիվներ, քարշ էին տալիս թե՛ ջրի վրայով, թե՛ ցամաքով: Այդ նավի տախտակամածի վրա գետեղում էին ջրային ոգիներին, լուսավոր և խավար ուժերի, մահկան չաստվածներին: Սրանց շրախմբում բազմում էր զիսավոր կերպարը՝ բեղմնավորման խորհրդանշի «ֆալլոս», որը նոյն ինքը՝ սատանա-ծաղրածուն էր, հիմարը:

Հիմնվելով այս դիմակահանդեսի ավանդույթի վրա, 15-16-րդ դարերի գերմանացի գրող և նկարիչ Բրանտը ստեղծել է իր պատկերազարդ երգիծապատումը և անվանել «Տիմարների նավ»: Բացի նշանակածից այս դիմակահանդեսին նաև ավելացրել է բազում այլ կերպարներ՝ հարբեցողներին, որկրամուլներին, անառակներին, իշխանավորներին և այլն: Բրանտը գրել է. «Վայ այն երկրին, որը նեկավարում է ծեր տիխմարը, որն առջևում ոչինչ չի տեսնում... Վայն այն արդարադատությանը, որի դեկին տիխմարներն

**Են»<sup>5</sup>:** Նոյն ժամանակաշրջանում է ստեղծվել նաև Հիերոնիմոս Բոսխի «Տիմարների նավը» հայտնի նկարը, որում մի խումբ հարբած մարդիկ երգով ու նվազով, ճատնված տարերքին, գնում են ուղիղ դժոխը...

«Բաղդասարի խնջույքը» տարրորտնակ արտահայտության մի կերպարափոխությունը կարելի է համարել Պուչկինի բատերգության վերնագիրը՝ «Խնջույք ժանտախտի պահին», որը հիմնված է անզիացի բանաստեղծ Զոն Վիլսոնի «Ժանտախտով բռնկված բաղարը» պոեմի վրա:

Բախստի հեգմանքով, պրոլետարիատի առաջնորդ Լենինը քննադատելով իր իսկ հիմնած խորհրդային երկիրը, այն անվանել է «Տիմարների երկիր»: Պատմությունը ցույց տվեց, որ այդ «հարբած նավը» ոչ բևեռնագովանեց «կոմունիզմ» կոչվող նավահանգստում, այլ՝ «գժոխքում»...

Այսօր էլ շարունակվում է «Բաղդասարի խնջույքը», երբ մարդկության մեծամասնության դժբախտության, աղքատության վրա, «այս աշխարհի զորեները» կառուցում են իդնն թվացյալ երջանկությունը, խնջույքները և ապականելով ֆիզիկական ու հոգևոր էկոլոգիամ երկրագունդը վերածում են «Տիմարների նավի»: Պատահական չե, որ քրիստոնեական արքեստում Բաղդասարը խորհրդանշում է հակաքրիստոսի, Ների կերպարը...

Ինչպես տեսանք, «Բաղդասարի խնջույքը» թեման, գաղափարը արտացոլվել է գրականության, գեղանկարչության, բատերգության, բանահյուսության բնագավառում: Այն իր արտահայտությունն է գտնել նաև երաժշտական արվեստում: Հիշենք Գերոգ Հենդելի «Բաղդասար» օրատորիան: «Բաղդասարի խնջույք» է կոչվում նաև ֆիմն կոմպոզիտոր Յան Սիբելիուսի նվազախմբային սյուիտը:

Արևելյան արտացոլումը արևմտանվողական արվեստում կոչվում է օրիենտալիզմ՝ արևելապահտություն: Այս բնույթի գործեր կերտելիս կոմպոզիտորները կիրառում են տարբեր արտահայտչամիջոցներ՝ համապատասխան ձայնանակներ, ինյունաշարեր, նվազարամներ և այլն: 18-րդ դարասկզբին Եվրոպայում տարածում գտան, այսպես կոչված, ենիշերական գորքերի նվազախմբեր: Դրանք բաղկացած էին լինում մեծ և փոքր թմբուկներից, ծնծղաներից, աղնձյա շնկորներից, գուլնաներից, բուշուկից և սրանց հավելված, եռանկյունի հարվածային գործիքից: Այդ նվազախմբերը ավելի շատ աղմկում էին, քան նվագում, քանի ներգործում էին զինվորների ոտքերի և բնազդների վրա: Եվրոպական արվեստում դրանք ծերեք քերեցին նոր հնչեղություն, խորություն, հատկապես Հայենի, Մոցարտի, Ֆերհովենի, Սալերի և այլոց գործերում:

Ահա այդ «ենիշերական» նվազարամներով, հեթանոսական հնչմամբ

5. И. Ноффе, Мистерия и опера, Л., 1937, стр. 22-23.

սկսվում է և Սիրելիուսի «Բաղդասարի խնջույքը» սյուխտը. մեծ թմբուկի և ծնծղաների խոռ հարվածներ, եռանկյունիի «արծաթյա կաթիլներ» և այլ նվազարանների զուգորդումներ, որոնք ստեղծում են մի տարաշխարհիկ մքնուրս:

Մոայլ պարային նվազակցությանը ձայնակցում են լարայինները, որոնց 4-5 հնչյունից բաղկացած պտտվող դարձվածները գլորվում են մինչև 1-ին մասի վերջը: Ահա այս ֆոնի վրա ասես «արթնանում» են փողայինները, ինչպես Ռավեի «Քոլերոյում»: Սակայն, ի տարրերություն «քոլերոյի», այս սյուխտի 1-ին մասի շիկացող հնչողությունը չի հասնում պայքարունի, այլ գազարնակետից աստիճանաբար նվազելով՝ մարում է, վերադառնում իր սկզբին ու աներևությանում լուրջան մնություն մնություն է: Այս մասը հիշեցնում է արևելապաշտական մեկ այլ գործ՝ Ալեքսանդր Բորովիկի «Միջին Ասիայում» սիմֆոնիկ պատկերը, որտեղ, ըստ ծրագրի, նկարագրված է քարավանի հայտնվելը, մոտենալը և հեռանալը:

Սյուխտի 2-րդ մասը նվազարանային մի դյուքիչ «զուգերգ» է: Այս սիրերգությունը ծավալվում է լարայինների ֆոնի վրա, որոնց երկու հնչյունից բաղկացած նոտիվի կրկնությունը հիպնոսացնում է այնպես, ինչպես 1-ին մասի հիշյալ 4-5 հնչյունների անդադար պտտվող դարձվածը: Այս հիպնոսացնումը ստեղծում է մեկ այլ էֆեկտ, քում է, թե ժամանակը դրվում է տեղում: Նման արտահայտչամիջոցն ասես հավերժացնում է քիրլիական իրադարձությունները: Դառնալով 2-րդ մասի սիրերգությանը նկատենք, որ այն բնույթով ոչ թե Ռոմեոյի և Ջուլիետի սիրո պատմությանն է նման, այլ Սալոմեի կամ Կլեոպատրայի: Անշուշտ, Սալոմեն չի կարող ներկա լինել «Բաղդասարի խնջույքին», սակայն անցյալը վերստեղծելիս արվեստագետները ամեն մեկը յուրովի կիրառում են տիպական կայուն արտահայտչամիջոցներ: Նման անփառունակ խնջույքներ են պատկերված Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ», Սեն-Սանի «Սամսոն և Դալիլա» օպերաներում: Ի դեպ, Փավստոս Բուզանդի նկարգրած «Պապ քազավորի վերջին խնջույքը» հնչում էին նմանափառ նվազարանների տարատեսակներ՝ հարվածայիններ, սրինգներ, փողեր և այլն: Ինչպես Բադրասարի և Հերովդիեսի խնջույքները, այնպես էլ դրանք արտացոլող Սիրելիուսի և Ռիխարդ Շտրաուսի երաժշտությունը կարող են աղերսներ ունենալ:

Շտրաուսի «Սալոմեի պարի» և Սիրելիուսի սույն սյուխտի ելաւճներում էլ ընդհանուր պահեր կան, հատկապես հորոյի, ֆլեյտայի, կլառնետի քրանատիկ, օճազալար հնչերանգներում, որոնք ասես գծագրում են խնջույքում պարող կառոջ մարմնի պլաստիկան, ուրվագծերը: Երկրորդ մասի սիրերգությունը հետզիետե նվադում է, նման վերջալույսի շողերին, որոնցից հետո երրորդ մասի ֆլեյտայի հառնելը ընկալվում է որպես արևածագ: Հնաբույր «փոյուգիական» լադի հնչերանգները, մեղեղու վայրէջը լուսա-

վոր մի թախիծ են սփոռում, և պոետի պես մտածում ես՝ այս կյանքում գոնեն վարդերը շրապումնեին:

Սյուիտի Վերջին մասը սկսվում է լարայիմների թրուացող ոլորապտույտով, որից ցայտում է հորոյի ջինջ պարերգությունը: Հորոյի շուրջը մանկական անմիջականությամբ թշկոտում են ֆլեյտաները և կլանետները: Եվ հանկարծ ներխուժում է վալսը: Արտաքուատ անմեղ, սակայն թիզ անց պարզվում է, որ Սիրելիուսը մեջքերում է «Կուլենա», այսինքն՝ «Մահ» քատերգության համար գրված վալսի մի բեկոր:

Եվ սկսվում է «մահվան պարը»՝ սահուն վալսը ձևախեղվում է, ծամածովում, ինչպես ծուռ հայելիներում: Խոզ բասերի տեղում դրիվացող «տուկրացած» ոիթմը, ընդերքի հնշող ոնգաձայն բասկառնետը և սրան հակադրկող սիմֆոնիկ նվազախմբի ամենաբարձր ֆլեյտա-պիկոլոն և եռանկյունիի սառը հարվածները սահմոկեցուցիչ տպագորություն են ստեղծում: Ի դեպ, բասկառնետի և ֆլեյտա-պիկոլոյայի գրոտեսկային գորգակցումը դիպուկ է կիրառել նաև Ծոստակովիչը՝ 9-րդ սիմֆոնիայում:

Սիրելիուսի սյուիտը ավարտվում է ֆլեյտայի հնչյունների անհոգ թղոշկոտումներով...

Սյուիտը լսելուց հետո կարող է ծագել հետևյալ հարցը: Ինչպես՞ս կարող է մեղեղիների այս երկնային գեղեցկությունը ներդաշնակվել անառակության մեջ քաղաքած Բարերնի թագավորի խնջույքի նողկայի նրանուրությի և Բաղդասարի մահվան հետ:

Այս հարցին կարելի է պատասխանել «Սալրմե» օպերայի առիջիվ ասված Էռնստ Կրաուլեի խոսքերով: «Պղծությունը արտահայտված է գեղեցիկի միջոցներով: Հրաշագեղ, զգլիի երաժշտությունն, ասես, քողարկում է այս օպերայի բնավ ոչ վեհ բովանդակությունը»<sup>6</sup>.

Եվ «Սալրմե» օպերային տրված Ռոմեն Ռուլանի գնահատականը կարելի է վերագրել նաև «Բաղդասարի խնջույքը» սյուիտին: Այն է՝ «Հրեշավոր գլուխգործոց»...

## «ԹԱԼԾՈՒ ՎԱԼՍԵ»

Սիրելիուսի համաշխարհային ճանաչում գտած գործերից է «Թախծու վալսը»:

Ինչպես հայտնի է, այս վալսը «Մահը» դրամայի համար գրված երաժշտության մասերից է: Հիշյալ դրամայի հեղինակն է Սիրելիուսի կնոջ եղբայր Արվիդ Յարմեթելու:

Լև Տոլստոյի հայացքների ազդեցությամբ Յարմեթելու բողեց իր

6. Յ. Կրայզ, Բ. Ռեյբաս, ստ. 328.

պաշտոնը քաղաքում, տեղափոխվեց գյուղ և նվիրվեց հողագործությանը: Ինչպես և Տոլստոյին, ֆինն գրողին ևս հուզում էր մահվան և անմահության հարցը, որի դրսորումներից մեկն է «Մահը» դրաման:

Դրամայի գլխավոր հերոս Պաավալին բռնված է սևեռուն գաղափարով: Նա պնդում է, թե մահ գոյություն չունի: Բայց երբ մահանում են իր մայրը, կինը և երեխանները, Պաավալին հնազանդվում է ու հաշտվում մահվան անխուսափելիության գաղափարի հետ:

Դրամայի 1-ին պատկերում Պաավալին մահամերձ մայրը պատմում է որդուն, թե ինչպես երազում պատրաստվում էին պարահանդեսի: Գիշերը Սահվան ուրվականը մտնում է ննջարան՝ իր զոհին տանելու: Կինը կարծում է, թե այն իր հանգուցյալ ամուսինն է: Եվ այսպես, նրանք ողջագործելով, պարում են վալի հնչյունների ներքո: Որդին արթնանում է ու նորը գտնում մահացած: Ահա այս տեսարանի պարն է «Թախծոտ վալրը»:

Այս «մահվան պարում» բախվում են երկու կերպարներ: Առաջինը՝ մախսարանի սգո թեման է՝ ճռայլ, կաշկանդված մեղեղին, իսկ երկրորդը տեսիլային պարն է: Այս երկու կերպարները միահյուսվում են, ծավալվում, երաժշտությունը լարվում է ու հասնում իր գագարնակետին: Անշուշտ, գերիշխում է սգո թեման, որը վալի վերջարանում հափշտակում է ու ցնցում ողջ նվազախումբը: Վալսն ավարտվում է ջութակների լուսավորված և հետզհետե մարող համահնչումներով: Ինչպես հանրաճանաչ շատ գործեր, սիմֆոնիկ նվագախմբի համար գրված այս վալսը ևս կատարում են բազմաթիվ փոխադրություններով՝ փողային նվազախմբով, զանազան անսամբլներով, ինչպես նաև առանձին նվագարաններով:

Ըստ Ալեքսանդր Ստուպելի, Յարնեֆելտի դրաման, իր բարեմասնություններով հանդերձ, մոռացության կմատնվեր, եթե չիմներ Սիրելիոսի վալսը: Հիրավի, եթե դրամայում հաղթողը մահն է, ապա Սիրելիոսի երաժշտության մեջ հաղթողը անմահությունն է:

**ԱՐԵԱՆ ԲԵՐԳ**  
 (1885-1935)  
**ԿՈՆՅԱՔԻ ԶՈՒԹԱԿԻ ԵՎ ՆՎԱԳԱԽԱՐԻ ՀԱՍՏ**

**Ա**յսպես է կոչվում ավստրիացի կոմպոզիտոր Ալբան Բերգի Զութակի և նվազախմբի համար գորված կոնցերտը՝ «Հրեշտակի հիշատակին»: Նախքան կոնցերտին անդրադառնալը, որպես բնարան, վկայակոչենք Ստրավինսկոյ խոսքերը Բերգի մասին.

«... Դիտելով կոմպոզիտորներ Ալբան Բերգի և Անտոն Վեբեռնի լուսանկարը՝ ես չեմ կարող չիշել, որ այս երկուսը ընդամենը մի քանի տարի անց վախճանվել են վահաժան և ողբերգական ճահով: Արվեստագետներ, որոնք ապրել են աղքատ կյանքով, չճանաչված, որոնց երաժշտությունը վտարված էր իրենց իսկ սեփական երկրից...»

Նայում եմ և համեմատում այս երկու մարդկանց ճակատագիրը, ովքեր չեն հավակնել աշխարհի կողմից որևէ ուշադրույան, քայլ ստեղծել են երաժշտություն, որը հավերժացրել է մեր դարի առաջին կեսը, համեմատում են նրանց ճակատագիրը դիրիժորների, դաշնակահարների, ջուրակահարների «կարիերաների» հետ՝ մեր երաժշտական կյանքի այդ դատարկ պալարների հետ: Ահա թե ինչո՞ւ երկու մեծ երաժշտների, երկու ազնիվ մարդկանց պատկերող այս լուսանկարը շափազանց թուլացնում է արդարության հանդեպ իմ հավատքը<sup>1</sup>:

Ստրավինսկոյ նշած ապաշնորհ, քայլ հաջողակ դիրիժորները, դաշնակահարները, ջուրակահարները գալիս-զնում են, սակայն Ալբան Բերգի միայն Զութակի կոնցերտը քավական է, որ նա հիշվի դարեղար: Իր «Երկխոսություններում» իգոր Ստրավինսկին խոստովանել է, թե Բերգի հուզական «կլիման» խորը է իրեն: Քայլ դա չի խոշոնդրուել, որպեսզի Ստրավինսկին հնարավոր համարեր, որ Բերգը իր դարաշրջանի ամենաօժտված ձևաշինարարն է:

Բերգի երևակայությունը և գործիքավորման վարպետությունը Ստրա-



1. Игорь Стравинский, Диалоги, Л., 1971, стр. 106.

Վինսկին բնորոշել է որպես «ֆենոմենալ, հնչյունային համակցությունների գյուտներ՝ հրաշալի և ցնցող: Իսկ Բերգի օր. 6 «Նվազախմբային պիեսները», որոնք 39-ամյա կոմպոզիտորը ստեղծել է 1924 թվականին, Ստրավինսկին համարում է պարզապես «հրաշքի պես մի բան»: Հատկապես նա շեշտում է նվազախմբի «քազմաշերտ միաժամանակյա հնչողության հավասարակշռվածությունը և ամբողջականությունը»<sup>2</sup>:

Ստրավինսկու այս դիտարկումները կարելի է վերագրել նաև Չուրակի կոնցերտին: Այն ունի հուգիչ մի նախապատմություն, որի մասին տեղեկանում ենք կոնցերտի ձայնասկավառակի բացատրագրույկում զետեղված Վլուգանգ Շտաոփի հոդվածից:

Ամերիկացի ջուրակահար Լուիս Կրասների խնդրանքով Բերգը ճեղ-ճանուխս էր եղել կոնցերտի ստեղծմանը, երբ նրան հասավ իր բարեկամի 18-ամյա դստեր մահվան ցնցող գույքը: 1935 թվականի ապրիլի 22-ին վախճանված Մանոնը Ալմա Մալեր-Վերֆելի և Վալտեր Գրոպիուսի դուստրն էր: Քիչ անց, Բերգը գրել է Ալմա Մալեր-Վերֆելին և նրա նախկին անուսանում՝ «Մուսա Լեռան 40 օրը» վեպի հեղինակ Ֆրանց Վերֆելին հետևյալը. «Նախքան այս սարսափելի տարին բոլորնը, Ճեզ և Ֆրանց Վերֆելին կներկայացնեմ հրեշտակի հիշատակին նվիրված մի պարտիտուր, որի մեջ դուք կլսեք այն, ինչ ես զգում եմ, բայց այսօր չեմ կարող արտահայտել»:

Նոյն տարվա օգոստոսին Բերգը ավարտեց իր ստեղծագործությունը: Կոնցերտը սրտառուչ մի նվեր էր Ալմա Մալեր-Վերֆելին՝ ծննդյան օրվա կապակցությամբ: Իսկ դրանից շորս ամիս անց Բերգը վախճանվեց: Բերգը խոստովանել է երաժշտագետ Վիլի Ռայխին, որ կոնցերտում նա ծղգտել է արտացոլել սիրատուն աղջկա կերպարը: Վիլի Ռայխը հաստատում է, որ 1-ին (մաժորային) մասում լսողը իսկապես հափշտակվում է հրեշտականման աղջկա տեսիլրով: Եվ այն արտահայտված է նրագեղ, երազային մի շորջպարով, ինչպես նաև կարինտինյան ժողովրդական մի ազմիկ մեղեդու միջոցով, որը գալարափողը փոխանցում է շնչորներին: Մենանվագ-ջուրակը այդ մեղմօրոր մեղեդին պարուրում է Յոհաննես Բրամսի հայտնի «Օրորոցային երգի» հազիվ նշմարելի մի հնչերանգով: Եվ կարծես աղջկա կերպարը զարդարվում է լուսապակով: 215-228 տակտերում նշված նվազարաններին գումարվում են մյուս լարայինները, տափիդը և եռանկյունիի երկու մնաց հարվածները, և տեղի է ունենում հնչյունային այն հրաշքը, որի մասին խոսում էր Ստրավինսկին: Բերգը մեզ է փոխանցում մինչ այդ չլսված վերերկրային, տիեզերական հնչունաբույլեր: Եվ թվում է, թե պարուրվում ես այլ մոլորակների վրա աճող անհայտ ծաղկանց դրասանգներով ու բույրով...

2. Անդ, էջ 104-105:

Կոնցերտի 2-րդ մասը սկսվում է սուր ճիշով և ծավալվում է կենաց ու մահու վիթխարի պայքարը: Տեղատարափ հարվածները, հնչյունազանգվածի վայրիկնումները հետզինետե դադարում են ու մարտու կյանքի վերջին առկայժումներում:

Կոնցերտն ամփոփող «Աղաջոյում» տեսիլվում է, վերհառնում Յոհան Սեբաստիան Բախի թիվ 60 կանտատը եզրափակող խորալը: Կանտատը կոչվում է. «Ո՛վ հավերժություն, դու որդումնոյստ խոսք ես»: «Հավերժությունը հնչյուն է ոչ երկրային ականջների համար», - ասում է շեքսպիրյան Համլետի հոր ուրվականը: Ուստի մեր ընկալումը դյուրին դարձնելու համար ավելի մանրամասներ մեր դիտարկումները կոնցերտի մասին: Չե՞ որ կոնցերտում ևս արձագանքվում է հավերժի ոլորտը՝ մեր լարայիններով ու ֆլեյտաներով լրավորված «Երկնամերձ» հնչյուններում, մերք պղնձայ վողայինների և հարվածայինների գոշումներում ու դրայումնում, որոնք ավերում են դժոխքի ամրոցները: Ինչ վերաբերում է իիշյալ խորային, ապա նրա առաջին նախադասությունը մեղմորեն հնչեցնում է մենանվագ-ջութակը, երկրորդը նվազում են երեք կլաննետները և բասկլաննետը: Այնուհետև տեղի է ունենում «գույների խտացում», երրորդ նախադասության միայն կեսն է նվազում ջութակը, իսկ մյուս կեսում միջամտում են կլաննետները: Խորայի վերջին դարձվածք բնագրում երգվում է «Բավ է, բավ է» խոսքներով, իսկ կոնցերտում առաջին «բավ է» արտահայտությունը ջութակն է «երգում», երկրորդ «բավ է»-ն՝ կրկին եղածիոնակինչ կլաննետները:

Որպես «ռեմինիսցենցիա», այսիբ վերիւշ, կոնցերտի վերջում, ասես, հարություն է առնում «անուշիկ աղջկան» բնութագրող կարինտինյան մեղեդին, ինչը կամարակապում է, միավորում ստեղծագործության երկու մասերը: Իսկ սրան հաջորդող խորայի տեսիլքը ընկալվում է որպես հրաժեշտ երկրային կյանքին:

Այս կոնցերտը կարելի է կոչել նաև Ֆրանց Շուբերտի հայտնի կվարտետի անունով՝ «Մահը և աղջիկը»:

Բերգի կոնցերտում արտահայտված անհուն բախսիծը մերքընդերք իիշեցնում է իր իսկ «Վլոցեկ» օպերայի հմերանգները, Իզոլդայի մահը՝ Ռիխարդ Վագների «Տրիստան և Իզոլդա» օպերայից, ինչպես նաև 3-րդ գործողությունը բացող հովվի նվազը, հատկապես «տրիտուայն» դարձվածներում: Այս կոնցերտը կարելի է դասել նույնաբնույթ այնպիսի գլուխգործոցների շարքին, որպիսիք են Գուտավ Մալերի «Երգեր հանգույցալ երեխաների մասին», Մորիս Ռավելի «Հանգույցալ արքայադաստեր Պավանան»:

Մենք մի քանի խոսքով անդրադամք կոնցերտի նախապատմությանը և կերպարային ոլորտին: Այժմ փոքր-ինչ մասնրամասներ և տեսնենք, թե ինչպես՝ ինչպիսի՝ միջոցներով է տվյալ բովանդակությունը

մարմնավորվում իր ձևի մեջ: Կոնցերտի հիմնական թեմատիկ կորիզը, մոտիվը, բաղկացած է ընդամենը չորս հնչյունից: Ընդ որում, այդ հնչյուններն ունեն նույն տևողությունը և գտնվում են միմյանցից նույն հեռավորության վրա: Այդ ինտերվալը մաքուր կվինտան է՝ հինգ աստիճան: Այս չորս հնչյունները սկզբից շարադրվում են մերքեկից վեր, այսուհետև նույն քայլերով շարժվում դեպի վար: Արդյունքում ստացվում է ուր հնչյունից կառուցված մի իմաստային միավոր, որն ըստ Էտրյան գլխավոր մոտիվն է, շարժիչ ուժը, այսպես ասած, հնչյունազանգվածի «քրիստոր»՝, որն առաջինը շարադրում են տավիղը և կլաննետները: Ահա այդ մոտիվը՝ «սեմոլ-ֆա-դո-սոլ» և նույնությամբ՝ հակառակը՝ «սոլ-դո-ֆա-սի բնմոր»: Այս նույն մոտիվը մենանվագ-ջուրակը հնչեցնում է իր «քաց» լարերով, «սոլ-ու-լա-մի» և հակառակը: Հեռատեսորեն է վարվել կոմպոզիտորը, եթք որոշել է ջուրակի քաց լարերը հնչեցնել ոչ թե առաջին, այլ 2-րդ տակտում: Քանիզ եթք քաց լարերը հնչեին 1-ին տակտում, լսողին կթվար, թե ջուրակահարը ստուգում է նվազարանի լարվածը: Սինչերո կոնցերտի 2-րդ տակտում, ասես, ջուրակի նախաստեղծ ոգին է հնչում: Դա նման է մաքուր կտավի, որի վրա նկարիչը պատրաստվում է նկարել: Տեղին են ջնացի բանաստեղծի հետևյալ խոսքերը.

Վիճը կախել եմ ծառի մի ճյուղի,  
Ինք վերացել տխուր աշխարհից:  
Այդ ես չեմ նվազում՝ քամին է մոլոր  
Լարերը վիճին շարժում մեղմօրոր:

Անշուշտ, ջուրակի «մերկ» լարերի դողանջները, լարազարկերը և արտահայտչամիջոց են, ինչպես Հենրիկ Վենյավսկու՝ ջուրակի համար զըրված «Լեգենդ» պիեսում, սակայն նա ևս օգտվել է այդ հնարանքից ստեղծագործության խորրում, ոչ թե սկզբում: Ինչիցեւ, շարունակենք մեր ճամփորդությունը Ալբան Բերգի աշխարհում: Կոնցերտի նախարանի բոլոր տասը տակտերը շղայվում են այդ նույն գլխավոր մոտիվով: Բիւլով նվազախմբի ընդերքից, բասերի մոռայլ ձայներից՝ այն աստիճանաբար բարձրանում է մինչև վերին լուսավոր ոլորտները՝ նմանվելով հեռացող օդապարհիների: Գլխավոր մոտիվի սկիզբելը նմանվում է նաև քարի հարվածից լճում գոյացած համակենտրոն շրջանների ծավալմանը: Հետագա զարգացման ընթացքում այդ մոտիվը պարբերաբար հայտնվելով իր նախնական տեսքով՝ ընկալիում է որպես «լայրմոտիվ», կոնցերտի կառույցը ամրապնդող մի զարդագոտի: Խոկ երբ այդ մոտիվի ներսում հըմցյունների միջև ինտերվալները ընդլայնվում են, տրոհվում ու պայթում, տեղի է ունենում «շղայական ուեակցիա»: Հնչյունները ցիրուցան են լինում, կարծես ուղեծիրներից բռած աստղեր: Այս երևույթը վառ կերպով դրսնոր-

Վում է կոմցերտի 2-րդ մասի սկզբում, մոլեգնող մահվան տեսարանում: Այսպես, լսողը ականատես է լինում, թե ինչպես մի փոքրիկ մոտիվից, ծի-լից, շիվից Վերընճյուղում է բարձրութեց մի ծառ: ՈՒիլեթի խոսքով ասենք. «Ծառ, որի արմատները մեր սրտում են, իսկ սաղարթը՝ երկնքում»: Սա լոկ փոխարերություն չէ: Եվ ահա թե ինչու:

Ինչպես նշվեց, Վերընթաց և Վարընթաց շարժումը Բերգը իմաստավո-րել է հենց գլխավոր մոտիվում՝ սաղմնային, պոտենցիալ վիճակում: Եվ երաժշտության տարածության հետազա նվաճումը ընթանում է այդ երկու ուղղություններով, ընդ որում, դեպի Վեր ծավալվող և հետզիետե լուսավոր-վող ձայնները խորհրդանշում են երկինքը, ուր իր հանգրվանն է գտնում մարդկային հոգին, իսկ Վարընթաց ձայնները ակնարկում են երկիրը, հողը, սանդարամնետը:

Այս թե՛ռացումն իր լրումին է հասնում կոնցերտի վերջում:

Նվագախմբի ջուրակների մեղմոցով խացված «քաց» լարերի հեռա-վոր դողանջներում Վերջին անգամ հայտնվում է լայրմուտիվը...

Կոնտրաբասները շարունակում են լայրմուտիվի Վարընթաց շարժումը, մինչև այն սի բեմով հնչյունը, որով սկսվել էր կոնցերտը: Եվ դառնալով «ի շրջան յուր», ասես հիշեցնում եմ՝ «Հող էիր, հող դարձար»: Սինչետո տա-վիդը, հարվածայինները և փայտյա փողայինները, կարծես երկրի գգո-դականությունից ազատված, հանդարտիկ բարձրանում են ու մենանվագ-ջուրակի «հավերժացած» Վերնահնչյունի հետ աներևութանում երկնի կա-պույտում: Այս ամենը լավագույն արտացոլում է հիշյալ խորավի բովան-դակությունը.

Բավ է: Տեր, եքե կամենաս, ես կխաղաղվեմ:

Իմ Հիսուսը գալիս է՝ արդ, բարի գիշեր, ով աշխարհ:

Ես գնում եմ իմ երկնային բնակարանը խաղաղված,

Իմ մեծ ցավերը քողմելով ներքւում: Բավ է, բավ է:

ԿՈՄԻՏԱՍ  
(1869–1935)

Եվ ոլստեցինք հավետ մնալ  
հայ ժողովրդի ճշմարիտ զավակը...  
Կոմիտաս

**Կ**ոմիտասի ծննդյան 100-ամյակի առիթով, «Հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը» հոդվածում Արամ Խաչատրյանը գրել է:

«Կոմիտասի կյանքի գործը ես կնմանեցնեմ հիմք գցելուն: Այդ հիմքը լուսեղեն է, ներդաշնակ և միաժամանակ ամուր խարըսխված հարազատ հողին: Հիրավի, դրա համար էլ հենց Վերնաշենքը այդքան գեղեցիկ ու հաստատուն եղավ: Հասունացավ, առնականացավ ազգային կոմպոզիտորական դպրոցը, ստեղծվեցին հայկական օպերաներ, սիմֆոնիաներ, բալետներ, օրատորիաներ, կամերային երկեր»:<sup>1</sup>

Կոմիտասի պատմական այդ առաջնարդությունը յուրովի է գնահատում կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը՝ տողերիս հեղինակին «ՎԵՄ» ուղիղկայանով տված հարցազրույցում. «Եթե չիմեր Բախը, գերմանական երաժշտությունը, այնուամենայնիվ, կլիմեր, իսկ եթե չիմեր Կոմիտասը՝ հայ երաժշտության պատմական ընթացքը թերևս կխարավիեր»:

Իրոք, բավական է նշել Բախի նախորդներից Բուքստեհուտեին, Պախելբելին, Հայնրիխ Շյուտցին (Վերջինս հիմնադիրն էր գերմանական օպերայի, բալետի և օրատորիայի) համոզվելու համար, որ մինչև Բախը գերմանական երաժշտությունը բավականին բարձր մակարդակի վրա էր:

Բանաստեղծ Տյուտչևն ասել է. «Երանելի է նա, ով այս աշխարհն այցելեց նրա օրիհասական պահին»: Շակատագրական պահերին է, որ բացվում է կյանքի ողբերգական կողմը, հրափորձության է ենթարկվում մարդը, ժողովուրդը և պարզվում է, թե ով ով է:

Կոմիտասն ապրել է եղերական տարիներին, երբ վտանգված էր հայ ժողովրդի, նրա դարավոր մշակույթի գոյությունը: Հրի և սրի մատնված



1. «Սովետական արվեստ», Եր., 1969, թիվ 10, էջ 2:

ժողովուրդը դժվար թե կարողանար երկար ժամանակ անխարքար պահել իր ազգային դիմագիծը, սովորույթները, բանահյուսությունը: Գրի առնելով բազում երգեր, մաքրելով օտարամուտ ազդեցություններից՝ Կոմիտասը մշակում ու պայմանացնում էր, ինչպես ինքն էր ասում. «ամենն մաքուր հայելին ցեղին», այսինքն՝ երաժշտությունը, շնչավորում ու հավերժացնում էր հայոց երգը, մինչև «հայոց զա զարուն»... Հետագայում Ալեքսանդր Սպենդիարովը գյուղերում շրջելս ժողովրդական երգերում չեր նկատել այն գեղեցկությունը, որը շողշողում է Կոմիտասի հավաքած նույն երգերում: Եվ զաղտնիքն այն է, որ Կոմիտասն այդ դժվարին «ուխտագնացությունը» կատարել է ոտքով, իսկ Սպենդիարովը՝ կառուվ: Տեղին է մտաքերել Բախի և Հենդելի «ուխտագնացությունը» Լյութեկի եկեղեցի՝ լսելու մեծ երգեհոնահար Դիտրիխ Բուրստհուլդեին: Բախը ոտքով կըսրել-անցել էր ավելի քան 350 կիլոմետր «վիշտու» ճանապարհ, մինչդեռ Հենդելն իր հովանափոր Սատեզոնի հետ մեկնել էին Լյութեկ հարմարավետ կառուվ: Ահա սա է նաև այդ երկու համարների բնավորության, աշխարհնկալման տարբերությունը, որն իր դրոշմն է բողել նրանց արվեստի վրա...

Օժտված լինելով աստվածատուր շնորհով, զինված դասական երաժշտության բարձրագույն նվաճումներով՝ Կոմիտասը ոչ թե հիմնադրեց հայկական օպերա, սիմֆոնիա, այլ առաջնայինը համարեց ժողովրդական երգի, միջնադարյան հոգևոր երգարվեստի փրկության հրամայականը: Եվ պատահական չէ, որ Կոմիտասի բանահավաքության մասին խոսելիս համախ են գործածում «փրկել» բառը: Ահավասիկ, բանասեր Տիգրան Չիրունին գրում է. «Միայն երկու գիշերվան մեջ կորստե փրկված էին հիմնյակ մը նոր ժողովրդական եղանակներ»<sup>2</sup>:

Սուածին անգամ հայ ժողովրդական երգը ճեմարանի սան Կոմիտասը լսել էր Բարեկենդանի ժամանակ, Էջմիածնի մոտակա գյուղերից մեկի գոմում: Խորհրդանշական է, որ Բերդեհեմը հիշեցնող կենդանիների այդ անպահույց «մսուրից», ասես, եկավ հայ ժողովրդական երգի փրկությունը:

Յոր տարիների ընթացքում իր հավաքած երգերի ու պահերգերի մասին խոսելով՝ Կոմիտասը Խրիմյան Հայրիկին խնդրել է միջոցներ տրամադրել և հզոր քաջկով աջակցել՝ փրկելու համար այն գանձերը, որոնք թաղված են մնում անհայտության մեջ: Կոմիտասը գյուղից գյուղ էր շըրջում՝ ձայնագրելով քազմաքիվ երգեր՝ իրենց տարբերակներով: Իր անշուր խցում փակված՝ նա գիշեր ու ցերեկ գրադարձ էր այդ երգերի ոտում նասիրությամբ: Հայոց երգի ճակատագիրն է նման էր եղեռնից մազապուրծ, աշխարհով մեկ սփոված հայերի ճակատագիրն: Խաչիկ Դաշ-

2. Ռուբեն Թերենեցյան, Կոմիտաս, Եր., 1992, էջ 50:

տեսնի «Շանչպարների կանչը» վեպում նկարագրված է, թե ինչպես եղին-նի օրերին քրդերը գտնում էին անտեր երեխաներին և մեկ ուկով վաճառում հայերին: Մի անգամ, ոսկին սպառվելուց հետո, զրավար Անդրանիկի խնդրանքով, երգիշ Սիսակը քրդական մի երգ է երգում: «Ձո երգը ուկուց զրավոր է», բացականչում է արտասված քուրդը և զիջում երեխային: «Որբեր հավաքնենք, փաշա, շիրիլ անենք Հայաստանի համար», ասում է ֆիդայի Խարոն Անդրանիկին...

Ահա Կոմիտասի փրկած երգ-շիրիներից հետագայում վեր խոյացան Արամ Խաչատրյանի, Եղազար Հովհաննիսյանի, Եղվարդ Միրզոյանի, Տիգրան Մանուկյանի և այլոց գլուխգործոցները:

Եթե շիներ Կոմիտասը, մենք, պարզապես, չենք ունենա «Կոռումկը», «Անտումին», «Ծիրանի ծառը», «Մոկաց Միրզեն», մեր հորովաները...

«Վանեցոց գուրաներգում» ասվում է. «Գյուրան չէներ աշխարհն ի՞նչ էր, Աշխարհի շեն վը գյութնին էր»:

Մենք էլ կարող ենք ասել. «Կոմիտասը շիներ, աշխարհն ի՞նչ էր...»:

Գորբան երգիշների ժառանգորդ Սողոմոն Սողոմոնյանը (ապագա Կոմիտասը) ծնվել է 1869-ի սեպտեմբերի 26-ին, Անտումիայի Քյորահիա քաղաքում, կոչկալար Գևորգ Սողոմոնյանի և Թագուհի Հովհաննիսյանի ընտանիքում: Կես տարի անց, 17 տարեկան հասակում վախճանվում է Սողոմոնի մայրը: Տղայի խնամքը ստանձնում է տատը՝ Մարիամը: Ցուքամյա Սողոմոնին սովորելու են ուղարկում տեղի Ազգային Վարժարան: Քառամյա դպրոցն ավարտելուց հետո Սողոմոնն ընդունվում է Բյուսայի Վարժարանը, որը հոր մահվան պատճառով քողնում է ու Վերադարձն Քյորահիա: Միաժամանակ Սուրբ Թեոդորոս եկեղեցում դպրություն է անում: Բրուսայի առաջնորդ Գևորգ Վարդապետ Դերձակյանը Գևորգ 4-րդ կարողիկոսի հրամանով Էջմիածնի ճեմարանի համար «միջոցներից զորկ, ձայնեղ» մի տղա պիտի թերեր: Եվ քսան տղաներից Վարդապետն ընտրում է Սողոմոնին: Տղային ներկայացրին Վեհափառին: Սողոմոնը հայերեն գրել-կարդալ չգիտեր, և Վեհափառ Հայրապետը տաճկերենով նրան ասաց. «Դու զուր ես եկել այսուեղ, որովհետև մեր ճեմարանում ամեն բան հայերեն են անցնում»: Հետագայում հիշելով այս դեսքը, Սողոմոնը գրել է. «Մանկական միամտությանը համարձակություն եկավ վրաս և ասացի, թե «ես էլ եկել եմ հայերեն սովորելու»<sup>3</sup>:

Կարողիկոսի առջև Սողոմոնը երգեց «Լոյս զուարթը».

Ալէլուիա, ալէլուիա,

Լոյս զուարթ սուրբ փառաց  
անմահի Հօրն երկնաւորի...

3. «Սովետական արվեստ», 1969, թիվ 10, էջ 53:

Այս լրաբերգությունն այնքան հոգեց Վեհափառին, որ նրա արտասուրճները «ճերմակ մորուրի վրայով գլորվեցին վերարկուի ծալքերի մեջ»:

Այսպես Սողոմոնն ընդունվեց ճեմարան: Երաժշտության նրա առաջն ուսուցիչներն էին Ղևոնդ Վարդապետը և Սահակ արեղա Ամատոնին: Շուտով տղան կարողանում է գրի առնել ամենաքարդ եղանակները, խորանում է շարականագրության և եկեղեցական երգարվեստի մեջ:

↑ Ճեմարանում Սողոմոնը ծանոթանում է Մանուկ Արեղյանի հետ, որի հետ հետագայում հրատարակեց «Հազար ու մի խաղ» ընդհանուր վերտառությամբ ժողովածուները ճեմարանի 1-ին լարանի սան Սողոմոնի առաջին սեփական ստեղծագործություններից է «Ազգային օրիներգը՝ քառաձայն երգչախմբի համար (խոր)՝ 3-րդ լարանի ուսանող Արշակ Թաշշյանի): 1891-ին «Արարատ» ամսագրում լույս տեսած այս խմբերգը Կոմիտասի առաջին տպագրված գործն է, որի կատարելագործված տարրերակը հրատարակվել է 1895-ին: Սողոմոնը ոչ միայն ուսումնասիրում էր ժողովրդական և հոգևոր երգերը, այլև կատարում դրանք ճեմարանի սաների իր ղեկավարած երգչախմբով, որի ելույթներն, ըստ Արեղյանի, եղարավակում էր իր քազմաձայնած «Սիփանա քաջեր» երգով: Առաջին հոգևոր երգը, որ նոտագրել էր 5-րդ դասարանից Սողոմոնը, Հովակիմ Վարդապետի երգած «Օղինութիւն իրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի և ամենայն երկնային գօրացն» շարականն էր: Դեռ ճեմարանում ձայնեղ երգի Սողոմոն սարկավագը գգացել էր հայ ժողովրդական և հոգևոր երգի ընդհանուր արմատները, դրանք բնորոշել որպես «հարազատ քույր-եղբայր», որոնք «նույն կազմությունն ունին»: Հոգևոր շունչն առկա է նաև պարեղանակներում: Ահա ինչպես է բնութագրում Մշո շորորը (Ծանր պարը) Արշակ Չոպանյանը. «Կը պարեն Մշոյ Սուրբ Կարապետի մեծ ուստագնացութեան: Հանիսիսաւոր պար մը, գրեթէ կրօնական նկարագրով: Զայն կը պարեն բոլորը միասին, այր, կին, ծեր, մանուկ, անսահման բոլորապար մըն է, երբեմն երկու-երեք հարիւր հոգիով կազմած: Թմբուկի քանի մը հարուածներէ յետոյ՝ պարողները շրջանակը ձեւացնելու իրաւիրող զուտնան կը սկսի եղանակը օրորել, եւ բոլորակը կը տատանի թերեւ ու շատ համբ շարժմով մը... բոլորը անձայն, քաղցր ու ծանրաշուր յուզմունքով մը գինովցած, կ'ունկնեն մեղեդին, որ օդին մեջ կ'երկարածէ իր ցաւագին անուշութիւնը...»<sup>4</sup>:

1891-ին Սողոմոնն արդեն հավաքել և ձայնագրել էր 37 գեղջկական երգ, այդ թվում «Նոր ա քացվել սարի լալեն», «Մայրիկ, ես գնում եմ», «Կայնել ես վարդի հովին», «Գարուն ա, ծուն ա արել», «Արևին տես ու աստղերին» և այլն: Կոմիտասը ուսումնասիրում է Էջմիածնի մատենադարանի ձեռագրերը, խորանում խազագրության մեջ:

4. Կոմիտաս, Երկերի ժողովածու, Եր., 1982, հ. 6, էջ 161:

1891-ի մայիս-հոկտեմբեր ամիսները Սողոմոնն անց է կացնում Քյոթահիայում, հանդիպում հարազատներին: Նրա հայրենակից Սահակ Երեմյանը պատմում է. «Այցելելով «Ազգային վարժարանը»՝ նա բնագդական մղոնով վագում է դեպի ձախ անկյունը և ծալապատիկ նստում է փոշոտ ու կեղտու տախտակամածի վրա՝ խոնարհաքար մերժելով քաղականների խնդրանքը՝ թիկնարողի վրա նստելու...»: Այնուհետև թերում է Կոմիտասի խորքերը. «Տարիներ առաջ ոչ ոք չգործարուաց ինձ վրա, երբ ես նստում էի ճիշտ այստեղ, առանց բազմոցի, մինչ ուրիշները՝ գոյց բազմոցների վրա էին նստում: Ես երկու անգամ ծանր հիվանդացել եմ այստեղ: Այժմ բույլ տվեր ինձ իմ հոժար կամքով նստելու ու իշելու իմ անցյալ դժբախտ օրերը և այս չոր տախտակները»<sup>5</sup>: Իր ծննդավայրում Սողոմոնը ոչ միայն հուշերի գիրկն է ընկնում, այլև գրի է առնում հոգևոր երգեր՝ «Թափորի շարական», «Կեցո, Տէր, շնորհեա, Տէր», «Թիսու Ջրիսու ի փառ Աստծո»... Նույազրում է նաև իր ծնողների և հայրենակիցների հորինած մոտ 60 թուրքերն երգեր:

Քյոթահիայից Եջմիածին Վերադարձալիս, Կոմիտասը Պոլսում հանդիպում է Հովսեսի Շամիկյանին, որի երգած Ակնա տասը երգ գրառում է և 17 երգ հավելելով՝ հրատարակում է 1895-ին, Թիֆլիսում, Շամիկյանի «Հնուրյունը Ակնա» գրքում: Դրանցից են «Օրորը», «Հարսանեկան երգեր», «Պարերգ Բարեկենդանի և Զատկի», «Անտունի», «Համբարձման», «Ողբ» և այլ երգեր: Սողոմոնը ավարտեց Ժեմարանը 1893-ին: Ավարտական թեզմ էր «Շնորհալին, նորա դարը և նորա ժամանակի հոված կրոնական խնդիրները»: Ուսումն ավարտելուց հետո նա փոխարինում է Ենմարանի երաժշտության ուսուցիչ Կարա-Մուրզային: Խսկ նոյն տարվա նոյեմբերին առաջին անգամ Սողոմոնի դեկավարած քառաձայն երգչախումը մեծ հաջողությամբ կատարում է «Հայր մեր» շարականը: Սողոմոնը թթակցում է «Արարատ» ամսագրին, որտեղ շարունակարար հրատարակում է «Հայոց Եկեղեցական եղանակները» հոդվածը՝ հետևյալ Ենրավերնագրերով՝ «Հոգևոր երգերի ձևն ու բովանդակությունը», «Տաղ Հարության», «Շարականների ձևն ու բովանդակությունը», «Շարականների և հոգևոր երգերի եղանակները», «Մանրուսում», «Մանրուսման եղանակները»: 1894-ի սեպտեմբերի 11-ին Սողոմոնը ձեռնադրվում է վարդապետ: Խրիմյան Հայրիկը նրան շնորհում է Կոմիտաս անունը:

Հաջորդ տարի նա մեկնում է Թիֆլիս՝ Մակար Եկմալյանի մոտ ուսանելու: Ծիշտ է, Եկմալյանը անվճար է պարապում Կոմիտասի հետ, սակայն միևնույն է, Վերջինս նյութական դժվարությունների է հանդիպում: «Իմ ամսական ոռմիկս հազիվ բավարարում է կառքի, գրքի և թերթի վճրին: Նոյնական դեռ ձմեռվա շորեր չունեմ, փող էլ չունեմ: Հայրիկին գրել

5. «Սովետական արվեստ», 1969, թիվ 10, էջ 62:

Եմ: Խնդրում եմ դուք ևս Զեր կողմից հասկացրեք, որ... ես կարող լինեմ Ներ ուշք ուղղել ուսման վրա»<sup>6</sup>:

Եկմայանի մոտ Կոմիտասը յոր ամիս սովորում է երաժշտության տեսություն: Վարդապետի առջև գերխնիքիներ էին ծառացել՝ զտնել միջնադարյան խազագրության բանալին, բազմաձայնել և ներդաշնակել ժողովրդական և հոգևոր երգերը, մշակել իր ձայնը, կատարելագործել խրմավարական տեխնիկան և այլն: Ուստի անհրաժեշտություն առաջացավ կրթությունը շարունակել Գերմանիայում, ինչը հավանություն ստացավ կարողիկոսի կողմից:

Երեք տարվա ծախսերն իր վրա վերցրեց Ալեքսանդր Մանրաշյանը: Կոմիտասին հրաժեշտ տալիս, բարերարն ասաց. «Ես կսպասեմ համերգների»... Կարո՞ղ էր արոյոր Մանրաշյանը երևակայել, որ ոչ հեռու պապայում պատանու համերգներին անհամբեր պիտի սպասեին հանճարեղ Կլող Դեբյուաին, երաժշտագետներ Ռիխարդ Շմիդտը, Օսրար Ֆլայշերը, Լուի Լալուան, Սորբոնի համալսարանը, սիյուտրի հազարավոր հայրենարանը հայեր: Մանրաշյանը կարո՞ղ էր ակնկալել, որ տաս տարի անց երախտապարտ Կոմիտասը իր բարերարին պիտի նվիրեր «Հայ գեղցուկ երաժշտություն» խորագույն աշխատությունը, որ հայ երաժշտությունը պիտի թևածի բազում երկրներում...

Բնոյինում Կոմիտասը հանդիպեց Արքայական կոնսերվատորիայի ռեկտոր Յոզեֆ Յուխիմին, որը նպատակահարմար գտավ, որպեսզի Կոմիտասը սովորի Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում: Հետագայում Կոմիտասը խոստովանել է, որ դա ծիշտ որոշում էր:

Ըստ Կոմիտասի՝ մեկ տարում Շմիդտի կոնսերվատորիայում նա այնքան գիտելիք ձեռք բերեց, որքան ուրիշ տեղ պիտի ստանար վեց տարում: Դասերի խոտությունը արդարացված էր, քանզի Կոմիտասի ժամանակը սուր էր... Վարդապետն ընդունվում է նաև Քենինի Արքունի համալսարանի փիլիխոփայության բաժինը, որն ավարտում է 1899-ին: Կոնսերվատորիայում, ի թիվս այլ առարկաների, ուսումնասիրում է երաժշտության պատմություն, հարմոնիա, կոմպոզիցիա, խմբավարություն: Կոնսերվատորիայի քննական աշխատանքներից մեկն էր «Առ գետս Բարեկացոց» սաղմոսը՝ երգչախմբի, մեներգիշների և երգեհոնի համար: Այս երկը գերազանցեց ուսումնական պահանջները և վերածվեց արժեքավոր մի ստեղծագործության: Ըստ Դավիթի թիվ 137 (136) սաղմոսի, բարելոնացիք գերված հրեաներին ստիպում են ուրախ երգեր երգել: Սակայն հայրենարանը հրեաները ողբում են ու տենչում հատուցում: Նույն սաղմոսի հիման վրա երկեր են ստեղծել Պալեստրինան, Օռլանդո Լաստն, Բախը...

6. «Սովետական արվեստ», 1969, թիվ 11, էջ 56:

1861-ին այն բանաստեղծության է վերածել Ռաֆֆիմ՝ նպատակ ունենալով սրափեցնել հայ ժողովրդին: Մեծ եղեռնից հետո սաղմոսը շափած շարադրել է Հովհաննես Թումանյանը: Եկմայանը Պետերբուրգում եղած ժամանակ սաղմոսի խոսքերով խմբերգ է հորինել, ընդ որում՝ ուստեղն լեզվով, իսկ Կոմիտասը 1896-ին, Բերլինում՝ գերմաներենով: Կոմիտասի ուսանողական երգերից մեզ հասել են յոր մեներգ՝ դաշնամուրով և երեք խմբերգ՝ ա կապելլա (երեքը՝ Գյորեի խոսքերով, որոնցից էր նաև «Գիշերերգը»): Պրոֆեսոր Ռուբերտ Արայանը Կոմիտասի Սաղմոսը դիտում է, որպես 1895–1896 թթ. հայերի կոտորածների յուրովի արձագանք: Կոմիտասորդիայի ուսանող Կոմիտասի խմբերգում զացվում է «Մայր Արարտի ափերով», «Ես լսեցի մի անուշ ձայն» երգերի հնչերանգները, ինչպես նաև Մենուկսոնի խմբերգերի ազդեցությունը: Եվ Արարտի արտասուրն, ասես, խանճվում է Բաքելոնի գետերի ջրերին ու գերվածների արցունըներին... Եթե Սաղմոսը խորիրդանշում է բռնությունը, ապա Կոմիտասի «Մի գեղեցիկ պարզ գիշեր էր» երգը իրապես նկարագրում է Վանի անլուր կոտորածը, որի վկան, ըստ երգի խոսքերի, միայն լուսինն էր՝

Նա տեսնում էր անրիվ քյուրենք,  
Բըռնած սուր, թուր, հըրացան,  
Կոտորում են, կողոպտում են,  
Ավերում են անտեր Վան:

Եվ կարծես թե մեր երկնքից  
Խոսում էր այդ լուս վըկան, -  
«Վըրա՝ հասիր, հա՛յ ազգասեր,  
Զեռքից կերպա՛ Հայաստան»:

Սակայն Կոմիտաս վարդապետի կոչումը թույլ չէր տա՝ վրեժխնդրությունը տարածել հոգևորի ոլորտում. Եթե քրդերը ավերում էին, ապա վարդապետն արարում էր՝ շարունակում նաև քրդերեն երգել: Նույնիսկ Բեռլինի կոնսերվատորիայի նրա ավարտական աշխատանքը նվիրված էր քրդական ժողովրդական երգին: Տեղին է հիշել նաև թուրք բանաստեղծ Սնիմեղ Էմինի խոսքերով գրված Կոմիտասի երգերը: Հիշարժան է նաև այն, որ Բեռլինում վիպասան Վրբանես Փափազյանն իր ջուրակով Կոմիտասի համար նվազել է քրդական մի մեղեղի, և վարդապետը կյանված, հայկական ձայնանիշերով գրի է առել «Լուր-դա-լուր»: Այնուհետև Կոմիտասը ֆիսհարմոնի նվագակցությամբ հանապատրաստից երգեց «Լուրդա-լուր»: Փափազյանը ցնցված էր, հուզված էր նաև Կոմիտասի հակառակորդներից մեկը՝ Գրիգոր Վանցյանը, որը մամուլում վարկարեկել էր

Կոմիտասին, իսկ այդ պահին Աերողություն է խնդրել<sup>7</sup>: Բեռլինում Կոմիտասն ընդգրկվում է «Միջազգային երաժշտական ընկերություն» կազմակերպության մեջ, որի մասնաճյուղի նախագահն էր իր ուսուցիչ Օսբար Ֆլայշերը:

Վարդապետի պարտականություններից էին գիտական հոդվածների հրատարակումը, դասախոսությունները և համերգները: 1899-ի հունիսին, կոնսերվատորիայում Կոմիտասը կարդաց երկու դասախոսություն՝ նվիրված հայ երաժշտությանը: Իր գեկույցները նա ուղեկցում էր երգեցողությամբ՝ գերմանացիներից կազմած քայլակը երգում էր «Փառք քեզ, Տեր», «Սուրբ Ես, Տեր», «Ով զարմանալի» և այլ երգեր, ժողովրդական նմուշներից՝ «Սոնա յար», «Հոգ արեք, սարեք ջան», «Հայրիկ, հայրիկ» և այլն: Կոմիտասը երգեց նաև քրիերեն, արաբերեն, տաճկերեն, պարսկերեն ու նշեց դրանց և հայկական երգերի տարրերությունը:

Նման համերգ-դասախոսությունները դարձնում են հայ երաժշտության տարածման լավագույն ձևը:

Այդ համերգներում նա ընդգրկում էր նաև այլազգի երաժշտներին: Բացի գերմանացիներից կազմած հիշյալ կվարտետից, նշենք ուս, հայ, շվեյցարացի ուսանողներից փնջած երգաշխումբը՝ ժմեռում և Լոզանում: Նաև Փարիզի «Լամուրյե» հայտնի երգաշխումբը, որի հետ, ըստ Կոմիտասի սան, երգչուիկ Մարգարիտ Բաբայանի, վարդապետը «զարչարվում էր հայերեն արտասանելու և զգացնելու տարր համար...»: Մյուս կողմից նա զգուշանում էր օտարների գերիշխումից, որպեսզի շնաբարվի երգեցողության հայեցի բնույթը: Լինելով ազգային ինքնատիպության «զորեղ պաշտպան»՝ Կոմիտասն իր աշակերտ Սպիրիդոն Մելիքյանին արտագրել է տպել «Հայ ժողովրդական երգեր» ժողովածում, որպեսզի նա չտարվի գերմանական ազդեցություններով: Եվ Սպիրիդոնը 255 երգերից, ասես, պահպանի ուղղութեան էր շարել: Մեկ այլ ասիրով Կոմիտասը Բենլինից նամակով խնդրել է Եջմիածնի ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին, որպեսզի սաներին ընտելացնեն մեղմածայն երգեցողությանը: Նույն խնդրանքով նա դիմել է և կարողությունը՝ նշելով, որ «կուկորդ պատուելլ» խորթ է ինգևոր երգեցողությանը: «Հայ գեղջուկ երաժշտություն» հոդվածում ևս Կոմիտասը կշտամբում է զունայի րոի, անլոնի ժխտը: (Վարդապետը կարծես կանխազգում էր մեր օրերի մեծագույն չխորը: (Վարդապետը կարծես կանխազգում էր մեր օրերի մեծագույն չխորը: Հարիքներից մեկը՝ բարձրախոսների հակամարդկային աղմուկը...): Նույն սկզբունքայնությամբ նա քննադատում է Մակար Եկմայանի Պատարագում տեղ գտած անճշտությունները և պահանջում «որպեսզի լեզվի և եղանակի շեշտերն իրար համբուրեն»...

7. Ռուբեն Թերլեմեզյան, Կոմիտաս, էջ 54-56:

1899-ի սնապտեմբերին կոնսերվատորիան ավարտելուց հետո Կոմիտասը մերժում է Բեռլինի համալսարանում դասավանդելու առաջարկը՝ «իր երկիրը վերադառնալու, ինքզինքն իր տոհմային արվեստի վերանորոգմանը նվիրվելու համար»: Ըստ Հրաշյա Աճառյանի, մինչ այդ Կոմիտասը մերժել էր Բեռլինի օպերայում մեներգիչ աշխատելու հրավերը՝ պատճառաբանելով, թե ինքը կոչված է աշխարհին ծանրացնել և ապացուցել, որ դարեր ի վեր հայ ժողովուրդը ունեցել է իր ինքնուրույն երգն ու երաժշտությունը:

Եվ Կոմիտասը իրականացրեց այդ նպատակը: Ահա ինչ է գրել այդ մասին «Ժուլիանալ դը Ժնև» թերթը. «... ամբողջ ժողովուրդը մը ինքզինք կը քացատրէ իր ծայնով»<sup>8</sup>:

Տարբեր ժամանակներում հայ գործիչները հետաքրքրություն են առաջացրել և ուղղել աշխարհի հայացքը դեպի Հայաստան: Շնորհիվ Խաչատուր Արքայան՝ Պարրոտի արշավախումբը բարձրացավ Արարատի գագաթը: Արամ Խաչատրյանի արվեստով հիացած հայտնի քննադատ Քիանկովին 1945 թվականի հունիսի 28-ի «Նյու-Յորք ուորլդ թելեզրամ» թերթում գրել է. «...Դուք պիտի այցելեք Հայաստան, որպեսզի զգաք, թե ինչ է այնտեղ լսել Արամ Խաչատրյանը»<sup>9</sup>:

Կոմիտասի շնորհիվ Էջմիածնին դառնում է հայ երաժշտության հայտնի կենտրոն: Բավկան է նշել ֆրանսիացի երաժշտագետ Պիեռ Օքրիի և հնագետ Դյուվալի այցելությունը Էջմիածնին, որոնք բարձր գնահատեցին Կոմիտասի ճենարանական երգչախումբը, վարդապետի ուսումնասիրությունները, մանկավարժական մեթոդը և այն, որ «Արարատի ստորոտում, իրենց ազատ ժամերին աշակերտները նվազում են դաշնամուր, երգեհոն և լարային գործիքներ»<sup>10</sup>: Բացի այդ, Կոմիտասը շարունակում է հոդվածներ հրատարակել «Միջազգային երաժշտական ընկերության» Լայպցիգի և Բեռլինի համեստներում: Կոմիտասը պարբերաբար հրավիրվում է արտազնա դասախոսությունների և համերգների: 1901-ին Կոմիտասը մասնակցում է եկեղեցական երաժշտությանը նվիրված համաշխարհային երաժշտական կոնցրեսին:

Սեծ հաջողություն ունեցան Էջմիածնի երգչախմբի համերգները Թիֆլիսում՝ 1905 թվականի գարնանը: Հաջորդ տարվա դեկտեմբերին Կոմիտասի փարիզյան համերգում հանդես է գալիս նաև Արշակ Չոպանյանը՝ հայ բանաստեղծությանը և երաժշտությանը նվիրված զեկույցով:

1907-ի հունվարին Կոմիտասի ելույթների «ամսապատճի հաջողությա-

8. Անդ, էջ 43:

9. Բ. Յօզեֆոսի, Արամ Խաչատրյան, Մ., 1990, սր. 181.

10. «Սովետական արվեստ», 1969, թ. 12, էջ 55:

նը» Ժնևում և Լզանում ականատես էր Դերենիկ Դեմիրճյանը: Ի դեպ. 1907-ի հունիսի համերգը Ժնևում Կոմիտասը տվել է Վանա սովորական օգտին: Այնուհետև Կոմիտասը ելույթ է ունենում Վենետիկում, Մխիթարյանների միարանության դահլիճում: Որքան էլ գրաղված լիներ Կոմիտասը, նրա բանաստեղծական հոգին չէր կարող շնչարյակել Խոտավայոց՝ նրա քնությամբ, երաժշտությամբ, ճարտարապետությամբ: Եվ նա մի նամակում գրում է. «Խոտավիան շատ գեղեցիկ է, բայց մեր դժբախտ հայրենիքը ավելի գեղեցիկ է»: Արդյոք այս խոստովանությունը համահունց չէ՝ «Հայրիկ, հայրիկ» երգին, որը հաճախ երգում էր Կոմիտասը.

...Հայրիկն ասաց. «Իմ հայրենյաց  
Փուշն անուշ է, քան զվարդ,  
Եվ այն փշոց մեջը դարձեալ  
Կորոնեմ ես սիրուն Վարդ...»

Սեկուլես տարի Եվրոպայում շրջագայելուց հետո, 1907-ին, Կոմիտասը վերադասում է հայրենիք՝ «գարճայ վարդեր որոնելու»: Նա շարունակում է զրի առնել ժողովրդական երգեր, իր երգչախմբով Եջմանում մասնակցում է Խոհման Հայրիկի և Պերճ Պոռշյանի հիշատակին նվիրված երեկոյթին...

Վարդապետի արվեստն ամենուր հիացմունք է պատճառում՝ Եջմիածնում, Ժմանում, Փարիզում, Խորհրդում, թե Բարվում...

Եվ հատկանիշականն այն է, որ գնահատականներում հաճախ կրկնվում է «դաս» և «ուսուցանել» բառերը, սկսած ներ Օսքար Ֆլայշերի նամակից, որտեղ ուսուցիչը խոստվանում է աշակերտից ստացած դասերի մասին. «Զեր հմտալից և խորինաստ դասախոսության միջոցով խորունկ հայացք մը ձգել տվիք դեպի այն երաժշտությունը... որ մեզի՝ արևմտյան ներուս շատ բան ուսուցանել կարող է...»<sup>11</sup>: «Ի՞նչպիսի՞ դաս մ'է մեր երաժիշտներու համար», գրում է «Ժուռանալ դր Ժնև» թերթը (1907, թիվ 159)<sup>12</sup>: Իսկ «Գագես դր Լոզան» թերթի հոդվածագիրը խոստվանում է. «Լումիտասը կրնա մեզ՝ տեսակ մը զաղափարական առաջնորդ դառնալ» (1907, 12 հունիսի): Սինդեռ նոյն զնահատականը Կոմիտասն իր հոդվածում տվել է Ռիխարդ Վագներին, ասելով. «Վագները Գերմանիային ազգային երաժշտություն տվավ, իսկ օտարներին՝ դաս»<sup>13</sup>:

11. Առութենք Թերլիսմեայան, Կոմիտաս. էջ 28

12. ԱՐԴ, էջ 43:

13. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնակրոյթուններ, Ել., 1941, էջ 110.

Ժին: Չնայած վատացող պայմաններին և առողջական վիճակին, Կոմիտասը թեղմնավոր աշխատանք է կատարում: Շարունակում է հավաքել և ներդաշնակել երգեր, հրատարակել հոդվածներ (Երկու երգ տպագրում է գարեգին Ալենյանի «Գեղարվեստ» ամսագրում), ելույթներ է ունենում Երևանում, Բարձրում, Թիֆլիսում:

1909-ին Թիֆլիսի արքունական թատրոնում տեղի է ունենում հոգևոր երգեցողության համերգ, որ Կոմիտասի երգեցիկ խմբի կողքին հանդիս են գալիս նաև ոռուական, վրացական ու կաքրոլիկների երգչախմբերը: Այստեղ ևս Կոմիտասը արժանանում է առաջնության: Ունկնդիրներին գերեցին ոչ միայն «Պատարագի» հատվածների հոգենորոգ երգերը, այլև՝ պատշաճ կատարումը, որին Կոմիտասը հասել էր «քանկ զնով»: Բանն այն է, որ վարդապետին հրավիրել էին Թիֆլիս՝ փոխարինելու Ներսեսյան դպրոցի հիվանդացած խմբավարին: Ընդ որում, Կոմիտասին տեղիկացրել էին, թե երգչախումբը պատրաստ է, մնում է համերգը դեկավարել: Սակայն, ինչպես Կոմիտասը գրել է Չոպանյանին, խումբն անպատրաստ էր, և նա մի օր 14 ժամ պարապել է, որպեսզի հասցնի համերգային նակարդակի: «Հոգիս թերանս հասավ», խոստովանել է Կոմիտասը: Էջմիածին վերադառնալուց առաջ վարդապետը Ներսեսյան դպրոցի աշակերտների համար կարդացել է «Հայ ժողովրդական երգն ու հոգևոր երաժշտությունը, նրանց միջև եղած կապը» քեմայով դասախոսություն, որն ուղեկցում էր երգեցողությամբ: Վերջում ներկաների խնդրանքով Կոմիտասը երգեց «Անտումին»՝ «Սիրտըս նըման է ես փըլած տըլներ...»: Ներկայացվող շրջանի հետազոտությունների ամենամեծ նվաճումն էր խազերի քանալի զյուտը: 1909-ի մարտին Կոմիտասը նամակ է հղում Պոլիս՝ Հովհաննես Արշարունի եպիսկոպոսին. «Արդեն մաքուր, պատրաստ էր իայ Ծիշերով՝ ամբողջապես և եվրոպականը՝ մասսամբ, երբ 16 տարվա աշխատանքս պտուղ տվավ, գտա մեր հին խազերի հիմնական բանալին և սկսա կարդալ պարզ խազերով գրվածները»<sup>14</sup>: Ցավոք, Չոպանյանին հղած նամակում այս հանճարեղ զյուտի լուրը պղտորվում է ճեմարանում կատարվող անարդարությունների նկարագրությամբ: Երբեք Կոմիտասը հաղթարշավից Էջմիածին չէր վերադարձել այսքան մեծ «ավարով», այսքան արդյունավետ չէր աշխատել, և երբեք նրան այսքան վատ չէին ընդունել, որքան այս ժամանակաշրջանում:

Եթե տարիներ առաջ նա խնդրում էր ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին պաշտպանել իրեն վանականների գրպարտություններից կամ դիմում էր Տիրայր եպիսկոպոսին՝ Պետերբուրգում իրեն ապաստան տալու, ապա այժմ նա գրում է անձանք կաքրողիկոս Մատթեոս Խզմիրյանին. «Քսան տարվա ընթացքում շրջապատն ինձ բույլ չի տվել այն ան-

14. Կոմիտաս, Նամակներ, Եր., 2007, էջ 19:

լու, ինչ կարող էի, որովհետև տեսա միայն որոգայր, և ոչ արդարություն... Որոնում եմ հանգիստ՝ չեմ գտնում, ծարավի եմ ազնիվ աշխատանքի, խանգարվում եմ, փափագում եմ հեռու մնալ, խցել ականջներս՝ չլսելու համար, գոցել աշքերս՝ շտեսնելու համար...»: Ընթերցելով Կոմիտասի այս խոստովանանքը, ականջից հիշում ես Միքելանջելոյի հայտնի խոսքը-ը.

...Երբ իշխում են ոճիրն ու նենգությունը,  
Չզգամ, շտեսնեմ, խաղաղվեմ...

Վարդապետի խոցված տրտի բալասանն էր, իր խոսքերով ասած, «մեր հանձարեղ նախնյաց հոգեբուժի երաժշտությունը»: Դեռ 1906-ին Մարգարիտ Բաբայանին գրել է. «...Էլի միտիքարում եմ ինձ և ասում, որ կա բնության մեջ մի ազնիվ բան՝ գեղարվեստը, որ ամենքին մատչելի չէ և հենց այնտեղ եմ գտնում իս անդրբությունը... և զգում, որ մի վայրկան հեռու եմ պացել աշխարհի անօրենություններից»<sup>15</sup>: Իսկ կարողիկոսին ուղղված նամակի վերջում Կոմիտասը խնդրում է նշանակել իրեն Սևանի մենաստանի մենակյաց: Սակայն Կոմիտասին դրան էլ չեն արժանացնում: Եվ 1910-ին վարդապետը հեռանում է Էջմիածնից ու հանգրվանում Պոլսում...

Դեռ Պետրոս Աղամյանն էր ասում. «Արեն ունի միշտ յուր Կայեն»: Մինչդեռ Կոմիտասը շատ «կայեններ» ու «սապերիններ» տեներ: Կայեններից մեկն էր կարողիկոսի տեղակալ Գևորգ Սուրենյանցը, որը հանդես եկավ Կոմիտասի աշխատավարձը երկու անգամ կրճատելու նախաձեռնությամբ, այն դեպքում, երբ աշխարհական մի երգեցողության ուսուցչի վճարում էին տասն անգամ ավելի, քան Կոմիտասին: «Հատկապես տանջակի էր այն, որ երգչախմբի անդամները մշտապես փոխվում էին, ուստի Կոմիտասի փորձերը վերածվում էին «ախղիֆյան աշխատանքի»: 1909-ի ապրիլին նա գրում է Արշակ Շոպանյանին. «Համերգս ջուրմ ընկավ, զի ճեմարանում խառնաշփորտուններ զցեցին... Ֆավում եմ, որ այս մեծ և կարևոր հաստատությունն անարգանքի առարկա է դարձել հասարակության համար...»<sup>16</sup>: Մինչ այդ Կոմիտասը բազմից դժգոհել էր եկեղեցական երգեցողության մակարդակից և հարցն արմատապես լուծելու նախաձեռնությամբ դիմել էր կարողիկոսին՝ ազգային կոնսերվատորիա հիմնելու խնդրանքով: Սակայն այս նամակը, ինչպես և վերջինը, նույնպես մնացել էր անպատասխան: Տարիներ հետո, վերջին անգամ այցելելով

15. Մաքես Մուրայյան, Հայկական երաժշտական մշակույթի պատմություն, Եր., 1970, էջ 417:

16. «Սովետական արվեստ», 1970, թ. 6, էջ 60:

Եջմիածին, Կոմիտասը պիտի գրեր Մարգարիտ Բաբայանին. «Վաճրի երգեցողությունը դարձել է գյուղականեն ստոր, Ժխոր, աղաղակ, խառնակաձայն, տգետ...»<sup>17</sup>:

Կոմիտասը Պոլսում հանդիպում է ոչ պակաս «կայենների»: Եթե Եջմիածնում ոճանք դեմ էին ժողովրդական երգի «Աներխուժմանը» և Կոմիտասի բանահավաքությունը համարում էին անգործություն, ապա Պոլսում հակառակը՝ դեմ էին հոգևոր երաժշտությունն աշխարհիկ միջավայրում կատարելուն: Դիմ ընդունում նաև երգեհոնի գործածությունը նկեղեցում, արգելում էին Կոմիտասի ձայնասկավառակների տարածումը: Եջմիածնի դժվար պայմաններում Կոմիտասը կարողացել էր հավաքել և գրի առնել ավելի քան 4000 երգ: Դրանցից շատերը մշակել էր, բազմաձայնել տարրեր խմբերի համար, կատարել տարրեր խմբերով, իսկ Պոլսում՝ նաև իր նորաստեղծ «Գուսան» երկսեռ երգչախմբով: 300 հոգանոց այս խմբի ելույթները մեծ հաջողություն էին ունենում, արժանանում դրվասանքի հայ և օտար մամուլում: Երգչախմբի քարդ երկացանկն իսկ որոշ պատկերացում է տախու խմբի կարողությունների մասին: 1912-ին Կոմիտասը գրում է Մարգարիտ Բաբայանին. «Այս տարի սովորեցնում եմ հարսնիքի երգերը գիշաւորապես և մի քանի խմբերգեր Վագեներէն և Վելոյիէն, որպես և իմ մեծ ու ընդարձակ պատարազը, որ յոյս ունեմ այս Զատկին երգել տալու, որից արդէն անցել եմ մինչև «Սուրբ, սուրբ»ը, և շատ յաջող է առաջ գնում»<sup>18</sup>: 1911-ին Կոմիտասը ելույթներ է ունենում Ալեքսանդրիայում և Կահիրենում, Թուրքիայի հայարձակ շրջաններում: Եգիպտական «Էլ Վարան» թերթում վարդապետին անվանում են «Եկեղեցական երաժշտության հանճար»: Կոմիտասի կարևոր նվաճումներից էր 1914-ին Արմենակ Շահմուրայյանի հետ կատարած ձայնագրությունները, որոնք 1912-ին փարիզյան ձայնասկավառակների հետ մեծ ազդեցություն ունեցան հայ երաժշտության ապագա զարգացման վրա:

Մի փայլատակում ևս ունեցավ կոմիտասյան հանճարը: Դա նրա ելույթն էր 1914-ին, Երաժշտական միջազգային ընկերության փարիզյան համաժողովում: 1914-ի աշխարհամարտը մոտենում էր, կուտակվում էին նաև եղերական սև-մուր ամպերը: Այս օրերին Կոմիտասը գրում է իր բարեկամներից մեկին. «Խնճրիս համերգները չկրցա տակավին սկսել՝ աշակերտներիս զինվորագրության պատճառավ, սակայն և այնպես՝ շաբաթուս նոր խումբ կազմելու նախապատրաստություն սկսա...»<sup>19</sup>:

Իսկ ահա ինչ է պատմում Կոմիտասի սան Միհրան Թումանյանը. «Մեծ

17. Ան, էջ 423:

18. Կոմիտաս, Նամակներ, Եր., 2000, էջ 34:

19. Կոմիտաս, Պատարագ, խմբագրության՝ Խորեստ Արայանի, Եր., 1997, էջ 123:

պատերազմի տարին էր: Պոլիս... Ամեն կողմ իրարանցում, շփորություն և վախ... Մանավանդ, երիտասարդներու համար, որ զինվոր երթալու էին...»<sup>20</sup>: Բայց «ինչքան մուրը սև», այնքան Կոմիտասը՝ համար: Եվ Կոմիտասը շարադրում է Պատարագի մի նոր տարբերակ՝ արական խմբի համար: Ըստ Ռոբերտ Աքայանի, այդ երգչախումբը կազմված էր Պոլսու Ղալաքիա թաղի եկեղեցու ծառայողներից: Խսկ թե ինչով պահպեց Կոմիտասի այդ ահեղի աշխատանքը, վկայում է Միհրան Թումանանը: «Սարմին Տերունական», «Սուրբ, սուրբ», «Հայր մեր» և այլն, որ կերգեին մեկը մյուսի հետևեն, Վարդապետին տված ցուցմունքներուն հաճածայն.... այս նորաները երբեմն այնպիսի գեղեցիկ ու երերային հնչյուններու կվերաձվեին, որ սենյակը կողողվեր ծափով ու ցնծուրյամբ»... «Այս իրաշքը կատարվեցավ 50 տարի առաջ... Կոմիտաս Վարդապետի իրաշափառ շունչով օծանված, այս հինավորց երգերու Պատարագը մատուցվեցավ Ղալաքիո հնարույր կամարներուն տակ, առաջին անգամ ըլլալով»<sup>21</sup>: Սա 1915-ի ապրիլի 17 և 18-ի օրերին էին: Երկրորդ կատարումը ծրագրված էր մայիսի 2-ին՝ «Կանաչ կիրակի» օրը, սակայն այն «արյունոտ կիրակի» դարձավ:

Երիտրուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից կազմակերպված ցեղասպանության զոհ դարձավ նաև Կոմիտասը: Շնչար է, ամերիկան դեսպան Միրգենքառի ու քաջաժառանգ Սեղինի միջնորդությամբ Կոմիտասին վերադարձրին և արտուցին, բայց վարդապետը միայն իր համար չէր ողբում: 1915-ի հունիսի 12-ին Կոմիտասը իր դինում է իր «Վարապի երգը» «Հայր մեր» մանկական աղոքը.

Հայր մեր,  
Տուր մեզ, տուր քո շընորի  
Լի ու լի, ամեն օր.  
Հայր մեր,  
Կյանք տուր մեր մայրիկին,  
Կյանք տուր մեր հայրիկին,  
Հայր մեր,  
Մեզ պահե՛ քո աջով,  
Մեզ օրինե՛ Սուրբ Խաչով,  
Հայր մեր,  
Դու պահապան մեր:

20. Անդ:

21. Անդ, էջ 175:

Սա նաև աղոքը էր ողջ Հայաստանի փրկության համար, և որպեսզի այն տեղ հասնի, Կոմիտասը հնչեցնում էր անմեղ մանկան շուրջերով: Մանկական աղոքի ուժի մասին է վկայում նաև Սիշել Մոնտենը իր «Փորձերում»: Երբ Հնդկաստանի փոխարքայի նավին մոտալուտ կործանում էր սպառնում, նա իր ուսերին է նստեցնում մի մանչուկի, միակ նպատակով, որ այդ անմեղ երեխան օգներ՝ արժանանալ ու ապահովել Երկնավորի ողորմածությունը, և բոլորը փրկվեին կործանումից<sup>22</sup>:

Այսպես, «Հայաստան-նավը» վերջիվերջու փրկվեց, սակայն իր ժողովրդի ողբերգությունը ճաշակած Կոմիտասի գիտակցությունը խավարեց:

Եվ քանի տարի տառապելուց հետո, Փարիզի հոգեբուժական հիվանդանոցում, Վարդապետը վախճանվեց: 1936-ին նրա մարմինը տեղափոխեցին Երևան: Հրաժեշտին Կուլտուրայի տան դահլիճում Օպերային սիմֆոնիկ նվազախումբը՝ Սիրայել Թավրիզյանի ղեկավարությամբ, կատարեց Քերիովենի «Հերոսական սիմֆոնիայի» Սգր քայլերգը, իսկ Թարու Ալբունյանի ղեկավարած երգախումբը երգեց «Գարուն ա, ծուն ա արել» երգը:

Կոմիտասի մարմինը ամփոփեցին Պանթեոնում, ուր այդ պահին թևածում էր Հայկանուշ Դանիելյանի երգը՝

Զինար ես կեռանալ մի,  
Սեր դոնեն հեռանալ մի...

Կոմիտասի ստեղծագործական կենսագրությունը որոշ պատկերացում է տալիս նրա հետաքրքրությունների, մտահոգումների մասին: Եվ եթե ճակատագիրն այդքան անողոր չքախեր նրա դուռը, ո՞վ կարող է ասել, թե ինչ հայտնագործությունների ականատեսը կիմնեինք մննը: Համեմայն դեպս, նա պատրաստվում էր «մեծ բոիչքի»...

Լինելով մշտապես նյութական կարիքի մեջ, այնուամենայնիվ, նա հայրայրում էր տարբեր լեզուներով գրված բազում գիտական աշխատություններ, դասագրքեր, նոտաներ...

Դեռ Եկմալյանի մոտ ուսանելիս, Թիֆլիսում նա գնում է հարմոնիայի չորս դասագիրը (այդ քիում՝ Ռիմսկի-Կորսակովի և Ռիխտերի) և երգեցողության երեք գիրք, Բեռլինում՝ երգեցողության և յոր դասագիրը, նաև՝ Վայնգարտների «Դիրիժորության մասին» և Պետերսոնի «Դաստիարակություն երաժշտության միջոցով» աշխատությունները, Ռիմանի «Հարմոնիա»: Բացի այդ՝ Սոցարտի, Վագների բազմաթիվ օպերաների կլա-

22. Սիշել Մոնտեն, Փորձեր, Եր., 1991, էջ 279:

վիրմերը, Հենդելի «Փրկիչ» օրատորիան, Մոցարտի «Շեքվինմը»: Իր ունեցածին Կոմիտասն ավելացնում է Վալենտինիի «Ծվերական ժողովը» դաշտական եղանակները», Պրատի, Յաղասոնի, Կիմների, Գևարտի, Բերլիոզի գործիքագիտության և գործիքագիրման դասագրերը: Հետաքրքիր է նշել, որ խաղաղասեր, մեղմաձայն երգեցողություն սիրող Վարդապետը ծեռք է բերել նաև Սառոյի «Խազմական երաժշտության գործիքագիտության ձեռնարկը»: Ի՞նչ նպատակով էր Կոմիտասը ծեռք բերել այն, արդյո՞ք «Վարդան», «Սասնա ծոեր» օպերաներում կիրառելով համար, որոնք ինչպես և «Անուշ» օպերան, ցեղասպանության պատճառով այդպես էլ շիրականացան...

Կոմիտասը մեզանում առաջինն էր, որ գիտական իհմքի վրա դրեց ժողովրդական և հոգևոր երգի ուսումնասիրությունը: Որպես ազգագրագետ, բանահավաք՝ Կոմիտասին հետևեցին Սպիրիդոն Մելիքյանը, Սիկրան Թումանանը, Արշակ Բրուտյանը և ուրիշներ: Կոմիտասն առաջինն էր, որ երկու կամ ավել երգ գործարելով՝ ստեղծում էր մեկ օրգանական ամբողջություն: Օրինակ, «Ծիրանի ծառ» երգում միավորված են չորս երգ:

Վարդապետն առաջինն էր, որ ստեղծեց եվրոպական չափանիշներին համապատասխան երգչախումբ, ինչպես նաև համերգ-դասախոսություն տեսակը: Կոմիտասին ենք պարտական հայկական դաշնամուրային սյուիտի ժանրի ստեղծման համար, որը Բախի «Ֆրանսիական» և «Անգլիական» սյուիտների նմանությամբ կարելի է անվանել «Հայկական սյուիտ»: Ահավասիկ, «Մշո շորորը», ըստ Էնրիկյան, սյուիտ է, և «Յոր պարերի շարքը», որոնք Կոմիտասը մտադրվել էր գործիքագորել երկու տարբերակով՝ ժողովրդական և դասական նվազարանների համար: Սակայն, ինչպես նվազախմբի ստեղծումը, կոնսերվատորիայի հիմնադրումը և շատ ու շատ մտահղացումներ՝ մնացին անկատար, կորատյան մատնվեց նաև խազերի բանալին... «20-րդ դարի Շնորհալի», այսպես է անվանել Կոմիտասին Արշակ Չոպանյանը: Նույն հաջողությամբ կարելի է «Մաշտոց» անվանել, քանզի երես Մաշտոցը հայտնագործել է հայոց լեզվի հնչյուններին համապատասխան տառերը, ապա Կոմիտասը բացահայտել է հայոց երգի հնչյունաշարերը, որոնց հիման վրա կառուցել է հայկական ինքնատիպ բազմաձայնությունը:

Կոմիտասի նվաճումներից է խմբերգային բազմաձայնությունը, որի բարձրագույն նմուշներն են «Լոռու գլուքաներգը», «Կայերգ և սայերգ», «Գութաներգ», «Հարսանեկան երգերի» շարքերը, որի ծեսը, ըստ Կոմիտասի, «մի ամբողջական օպերա է»... Հոգևոր երգարվեստի հանճարեղ նմուշներից են «Ով զարմանալի», «Այսօր ծայնն հայրենական» երգերի մշակումները, «Պատարագը», հատկապես «Խորիուրդ խորին», «Սուրբ սուրբ» և այլ խմբերգեր:

Կոմիտասի խնդիրն էր երգին կցել մի բանի ծայն, որոնք հարմոնիայի

և պոլիֆոնիայի տեսանկյունից օրգանապես կմիահյուսվեին տվյալ մոնողիային: «Եվ Կոմիտասը լուծել է այդ խնդիրը բազմալաղային-բազմատոնալ պոլիմոնողիկ ֆակտուրային գոյացումների դիրքերից, որոնք 20-րդ դարի երաժշտության առաջատար միտումներն են, և այսպիսով ուղիներ հարթել կոմպոզիտորական արվեստի հետագա զարգացման համար», գրել է պրոֆեսոր Էդուարդ Փաշինյանը<sup>23</sup>: Կոմիտասի մեղեղիները, իր «հոգու քուրայում բրծված» միջնադարյան շարականներն ու տաղերը կյանքի են կոչել բազում ստեղծագործություններ: Այդ երգերը թևածում են Արամ Խաչատրյանի արվեստում, լարային քառյակի համար գրված Սարգսի Ասլամազյանի մանրանվագներում: Նարեկացու «Հավիկ» տաղը մեզ է հասել Կոմիտասի ձայնագրությամբ, որը նոտաների է վերածել Սուշեղ Աղայանը: Նոյն տաղի հիման վրա են ստեղծվել Լևոն Աստվածատրյանի «Prologue»-ը, Սերգեյ Աղաջանյանի «Պոլիմոնողիան», Էդգար Հովհաննիսյանի 1-ին սիմֆոնիան և այլն: Վերջինիս «Անտունի» բալետի առիթով Արամ Խաչատրյանն ասել է. «Հովհաննիսյանն ինքն իրեն լուծել է Կոմիտասի մեջ, իսկ Կոմիտասին՝ իր մեջ»<sup>24</sup>: Իսկ Տիգրան Մանսուրյանն իր «Հավիկը» ստեղծելիս հիմք է ընդունել Կոմիտասի ձայնասկավառակից կատարած իր իսկ ավելի ճշգրիտ՝ զգայուն նոտագրությունը: Կոմիտասի արվեստը շարունակում է ոգեշնչել կոմպոզիտորների և կատարողների նորանոր սերունդներին:

Տարիներ առաջ շախմատի աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը եկել էր Երևան՝ պաշտպանելու իր գիտական թեզը: Սովորաբար աշխատվին հանդես եկավ Վահագն Ստամբրուցյանը: Երգեհոնահարի վկայությամբ՝ համերգներից հետո ակադեմիկոս Վալենտին Ասմուսը խնդրեց Կոմիտասի բազմաձայնած «Խորհուրդ խորին» շարականը և հայացրով գամվեց նոտաներին: Երբ «արակիվեց», ասաց. «Խնչախիս՝ կատարելություն՝ նվազագույն միջոցներով առավելագույն արտահայտչականություն»...

Եվ Հորացիոսի թևավոր խոսքը, որ դրոշմված է մեծն Հայողնի շիրմաքարին, խոսք, որով Պուշկինն իր անմահությունը հոչակեց «Անձեռակերտ հուշարձան» բանաստեղծությամբ, վստահորեն կարող էր ասել և մեր Կոմիտասը.

«Ես իսպաո չեմ մեռնի»...

23. Երաժշտագիտական աշխատարյությունների մողովածու, Եր., սլր. 1, էջ 20:

24. Յ. Յոզեֆոսի, Արամ Խաչատրյան, ստոր. 258.

## ԱՐԱՄ ԽԱՎԱՏՐՅԱՆ (1903-1978)

Դուն շասիս, թե էս խիղճ սազանարն ո՞վ ա,  
Խոսկիս տերն իմ, հունարս էլ գրով ա,  
Արուրիմն իմ, ինձ կոսին Սայար-Նովա,  
Հենց բան կոսիմ, վոր ամպերումն ձեն համի:

«Ես ս իինգ հազար տարեկան եմ, նույն տարիքն ունի և Արամ Խավատրյանը,- մի առիրով ասել է Մարտիրոս Սարյանը,- արվեստագետներն իրենց մեջ տեղավորում են ժողովրդի կենացրությունն ու պատմությունն»: Վարպետի ասածը համարունչ է Կոմիտասի խոսրին. «Երաժշտությունը ամենեն մարուր հայելին է ցեղին»:



20-րդ դարի սկզբին ոչնչացման եզրին էր ոչ միայն հայ ժողովուրդը, այլև նրա դարավոր նշակույթը: Սաստկացել էր արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների հակամարտությունը: Նոր էր լոյս տեսել փիլիսոփա Վլադիմիր Սոլովյովի «Երեք զրույց պատերազմի», առաջադիմության, համաշխարհային պատմության վախճանի և հակարդիստովի մասին» գիրքը: Այդ աշխատության մեջ հիշատակվում է նաև հայերի կոտորածը, արծարծկուն են պանմոնղուիզմ, պանհիլամիզմ, պանգերմանզմ, պանսուլամիզմ, պանգերմանզմ:

1899-ին Ալեքսանդր Բլուկ ստեղծեց «Գամայուն՝ գուշակող հավը» բանաստեղծությունը, որը գրել է Վասնեցովի կտավի արեցությամբ: Երեմնի երջանկաբեր հավը, որը մուտքանական պոեզիայի կերպարներից է, արյունոտված կտուցով երգում է ու գուժում վերահս արհավիրքները՝ արևելյան հորդաների ավերածությունները, սով, հրդեհ, երկրաշարժ, անմեղների կոտորած...

Իսկ 1921-ին Վլադիսլավ Խոդասիչը գրել է. «Բավ է, պետք չէ վեհ արվեստը, այս աշխարհին երգն է ափսոս, մարի՛ր, Տասսոյի կանքեղ, դու էլ լոի՛ր, Հոմերոս: Հարմոնիայի սովով զավակը զուր է մարգարեանում»... «Սի խանգարիր առևտուրա՝ լոեցնում է նրան ամբոխը... Սակայն Արևել-

թից լսվեց ոչ միայն մահվան գույժը, այլև հորդաց լույսի ալիքը: Չորեց Կոմիտասի երգը, Խաչակյանի խոսքը, չլոեց «Հայրենյաց զողբան քնարը»՝ վեր խոյացավ Արամ Խաչատրյանի կենսահաստատ երաժշտությունը: Վերջինս, ամերիկացի երաժշտագետի բնորոշմանը, անրիծ լոյսի վերածուլուն է հնչյունի:

Խաչատրյանի պատմական առաքելությունն էր Արևելի և Արևմուտքի հաշտեցումը, արևելյան բովանդակության և արևմտյան ձևի, հովականի և բանականի ներդաշնակումը, ժողովրդական, աշուղական երգերի, պարեղանակների սիմֆոնիզացումը: Այստեղ է, որ ամբողջանում է համամարդկայինը:

Երաժշտագետ Վիկտոր Յուզեֆովիչի հետ զրուցելիս Տիգրան Մանսուրյանը հետևյալ օրինակն է բերել. «Եթե Բրամսի վերելքը նախապատրաստված էր նախորդների նվաճումներով, ապա Խաչատրյանը սխրանք է կատարել՝ հայերից առաջինն է ստեղծել նախ դաշնանուրի, այնուհետև ջուրակի կոնցերտները և միանգամից հասել է այնպիսի բարձունքների, որտեղ որ գտնվում են համաշխարհային երաժշտության նույնատիպ գլուխգործոցները»:

Թունաս Մանը ասում էր, թե արվեստը կարուն է՝ վերածովված կերպարների: Խսկ կարուտը հայի «գենի» մեջ է, նրա արխետիպի մաս է կազմում: Գրող Վլադիմիր Սոլոտուխինը զարմանում էր, որ հայերը կարող են կարուել նույնիսկ մի բան, որը երբեք չեն տեսել: Դա պապերի կորսված Հայրենիքն է, կորսված դրախտը, պանդուստի, անտուների և նրանց ժառանգների փափազը, որոնց սիրտը «նման է են փլած տներ...» Արամ Խաչատրյանն էլ չի ապրել իր Հայրենիքում, այլ այցելել է իրքու հյուր կամ որպես մրցույթի ժողորիի անդամ, հորենյանական համերգներով և այլ նշանակալի առիթներով: Երազել է վերանորոգել իր առանձնատունը Երևանում, որտեղ կկարողանար ժամանակ առ ժամանակ ապրել և ստեղծագործել: Ծիշտ է, տուն ունենալու այդ փափազն իրականացավ, բայց հետմահու՝ վեր խոյացավ Խաչատրյանի տուն-թանգարանը:

Արամ Խաչատրյանը կարուում էր ևս մի «չտեսած բան»: Դա ազատությունն էր: Սատիսլավ Ռոստրոպովիչը, որին նվիրված է Խաչատրյանի քավութակի կոնցերտ-ուսպանութան, խոստովանել է, թե բռնասիրության հեռացուիչ տարիներին միակ օդանցքն արվեստն էր: Ի դեպ, «Երաժշտական համրագիտարանուն» «Արամ Խաչատրյան» հոդվածում գրված է, որ հիշյալ ուսպողիայի առաջին կատարումը տեղի է ունեցել 1964-ին, Գորկի քաղաքում, և նշված է միայն դիրիժոր Գուսմանը, իսկ մենակատարի՝ Ռոստրոպովիչի անունը հանված է, քանի որ մինչ համրագիտարանի հրատարակությունը թափութակահարը «համարձակվել էր» տեղափոխվել ԱՄՆ:

Մի առիթով Խաչատրյանը նշել էր 84-ամյա Էռնեստ Անսերմեի առողջ

կեցվածքը, և երբ Յուզեֆովիչը հորդորել էր օրինակ վերցնել շվեյցարացի դիրիժորից, կոմպոզիտորը պատասխանել էր. «Այո, բայց նա իր կյանքում «48 թվական» չի ունեցել»... 1948-ին կոմունիստական գաղափարախոսութերն անարդարացիորեն բնադրատել էին Խաչատրյանին, Շուտակովիշին, Պրոկոֆիևին, Մուրադելիին և արգելել նրանց գործերի տպագրությունն ու կատարումն: Այսօր էլ ուժի մեջ է Խաչատրյանի դառը հեգնանքը, թե սիմֆոնիա գրելու համար անհրաժեշտ է տաղանդ, իսկ տպագրելու համար՝ հանճար:

Երաժշտագետներ Սարգարիտ Հարությունյանը և Զարա Տեր-Ղազարյանը, որոնք հրատարակել են Խաչատրյանի նամականին, նշում են, որ կոմպոզիտորի նամակներում զգացվում է նրա զգուշավորությունը, որտեղ «առկա է ժամանակի սարսափին այս ձևով սրողելու ճգուտումն ինքնապահանման բնագրով, իր աստվածատուր շնորհը ազգին ծառայեցնելու պատմական մղումը»:

«Ժամանակի սարսափիներ» Արամ Խաչատրյանը վերապրել է դեռ մանկուց: Եվ դա արտացոլվել է ոչ միայն իր երկերում, այլև՝ հուչերում:

«1915-ի գարնանը սարսափահար հայրս ու մայրս, երկու փորրիկ որդիների հետ միասին, բախտի քամահաճույքին լրելով մեր տունը, կազմարարական արիեստանոցը, երկար ճամփա ընկան դեպի Կուրամ՝ Եկատերինողար..., – գրում է Խաչատրյանը: – Գրեթե ամբողջ ճանապարհն անցանք ուտքով՝ մեզ վրա կրելով մեր խորուկ ունեցվածքը: Բարեքախտարար, քուրք դահիճները չկարողացան հասնել մինչև Թիֆլիս: Աշնանը մենք վերադարձանք տունին<sup>1</sup>: Այսուհետեւ նա հիշում է սովոր և այլ արհավիրքներ: Այդ ժամանակ Արամը 12 տարեկան էր: Նրա հայրը՝ Եղիան, ծագումով Գողթան գավառից էր, Խորենացոյ հիշատակած գողթան երգիչների, հայ առօջին բանաստեղծութիներից Խոսրովիդուստ Գողթացու, Կոմիտասի հետ սերել է նույն բնաշխարհից: Արամը սիրով հիշում է մորը՝ Դումաշին, որն ընտանիքին նվիրված համեստ, գեղեցիկ հայութի էր: Խաչատրյանի ծննդավայր Թիֆլիսը անվանում էին «երգող բաղարք»: Երգում էր մայրը, երգողներից մեկն էլ Արամն էր: Երգում էր և եղբայրը, Ալոնը, որը Մոսկվայում դարձավ ուալիոյի մեներգիչ: Թիֆլիսում հնչում էին Վրացական, հայկական, պարսկական, ուսական, բուրքական և այլ ժողովրդական ու աշուղական երգեր և պարեղանակներ, ինչպես նաև խուլական օպերաների մեղեղիներով ստեղծված վրացական երգեր: Մշակույթների խառնարան Թիֆլիսը Խաչատրյանի համար նույն էր, ինչ Վիեննան՝ Հայոնի և Բրամսի համար: Դեռ Զայկովսկին էր ասել, որ Թիֆլիսում Եվրոպան ու Ասիան ամենուր բախվում, միախառնվում են միմյանց: Առաջին անգամ կոմիտասյան «Չունչը» Արամը զգաց նրա սան

Սակայն Մելքոնի դեկապարած երգահամբի համերգներում: Երաժշտությունն այնքան էր հափշտակել Արամին, որ նույնիսկ մանկական խաղը, չարաճիություններն էլ երաժշտական բնույթի էին: Դպրոցի դասերի հաշվին նա իրենց տաճ ձեռնահարկում ժամերով հարվածում էր պղնջա տաշտակին՝ վերարտադրելով ու տարբերակելով լած ոիթմերը: Եվ հյուր ստիպված եղավ հնամաշ մի դաշնամուր գնել: Խսկ Առևտի ուսումնարանի վողային նվազահամբում նվագելիս նա այնքան էր տարփում իր իմպրովիզացիաներով, որ անհեռատես դիրիժորը թիւ էր մնում հեռացներ նրան:

Ստեղծագործական առաջին քայլերն էին՝ հորինում էր քայլերգեր, պարեղանակներ...

1921-ին Արամին հերքայր Սուրենը նկավ Թիֆլիս՝ Մոսկվայի հայկական թատրոնի համար դերասաններ ընտրելու և Արամին էլ նրանց հետ տապակ Մոսկվա:

1922-ին Արամն ընդունվեց Մոսկվայի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի կենսարանական բաժանմունքը, նաև Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանը՝ թավջութակի դասարան: Արամը և Լևոն երգում էին Մոսկվայի հայկական եկեղեցում: Եվ հետագայում Արամը պիտի ասեր. «Ինձ գերում էր հայկական հոգևոր երգերի վեհ գեղեցկությունը»...

Ուսմանը համատեղ Արամն աշխատում էր Մոսկվայի «Արարատ» գինու գործարանում որպես բեռնակիր:

Ի դեպ, ժամանակին պատանի Բրամսը նվազում էր պանդոկներում, ուր հնարավորություն էր տրված նրան անվճար և անսահմանափակ օգուվելու խմիչքից: Երկու հանճարեղ երիտասարդներն էլ դրյան-ինչ չգայթակղվեցին: Խաչատրյանը Յուզեֆովիչին խոստովանել է, թե ապրելով խաղողի երկրում՝ չի տարվել խմելով և առաջին անգամ կոնյակ խմել է 36 տարեկանում, «Երջանկություն» բալետի պրեմիերայից հետո: Շումանի խոսքով ասած՝ Բրամսի, ինչպես նաև Արամի օրորոցը մուսաները և հերոսներն էին պահպանում...

Բեռնակիրի ծանր աշխատանքը կարծրացրեց առանց այդ էլ «ուշացած» թավջութակահարի ձեռքերը, և նա ուսումը շարունակեց Միխայիլ Գնեսինի ստեղծագործական դասարանում: Դասեր վերցրեց նաև Ռեյմոնդ Գլիերից: Կանխազգալով Արամի առաքելությունը՝ փորձառու Գնեսինը ներշնչեց իր սանին, որ միայն ազգային հենք ունեցող արվեստը կարող է դառնալ համամարդկային:

Իր առաջին ստեղծագործությունը՝ «Ժափառական աշուղի երգը», Արամը նվիրաբերեց մորը: Մյուս գործերն էին՝ դաշնամուրային «Անդատինն» և «Վալս-էտյուդը», նաև «Պարը» և «Երգ-պոեմը» ջութակի և դաշնամուրի համար՝ նվիրված հայ աշուղներին:

«Արամ Խաչատրյան» աշխատոքյան մեջ Գեղրդի Խուբովը նշել է «Երգ-պոեմի» և աշուղ Զիվանու «Զախորդ օրերը» երգի նմանությունը՝ Ո-ոմանու Սելիքյանի գրառած տարրերակին<sup>2</sup>:

Այս շրջանում, Մոսկվայում, Հայաստանի Մշակույթի տանը Խաչատրյանը ծանոթացել է Չարենցի, Սարյանի, Սպենդիարյանի, դիրիժոր Գևորգ Բուտառյանի, ուժիսոր Ռուբեն Սիմոնովի և այլ գործիչների հետ:

1929-ին Խաչատրյանն ընդունվեց Մոսկվայի կոնսերվատորիա՝ Գնեսինի, այնուհետև՝ Նիկոլյա Մյասնիկովի դասարանը: Ուսումնառության տարիներին նա ստեղծում է երաժշտություն Պարոնյանի, Սունդուկյանի պիեսների բեմադրությունների, Շեքսպիրի «Մակբերի» համար, դաշնամուրային հայտնի «Տոկատան», «Ֆրին», քայլերգեր և խմբերգեր: Որքան էլ «Տոկատան» կրած լինի Պրոկոֆիևի «Տոկատայի» և առհասարակ «մուտորային» ոճի ազդեցությունը, այնուամենայնիվ Խաչատրյանի այդ գործը, նմանատիպ երգերի կողքին փայլում է իր լաղային, ոիքմիկ յուրօինակությամբ, վիրտուոզությամբ, ուժով, ազգային ոգով: Նոյնիսկ դաշնակահարի ձեռքերի շարժումն է նմանվում ժողովրդական հարվածային գործիքներ նվազողի շարժումներին...

Ժամանակին պատանի երգեհոնահար Սեբաստիան Բախը նվազակցելով քահանայի քարոզմերը, ձգտելով վերարտադրել, «Քարզմանել» քառորդ արձարծվող գաղափարները, իրադարձությունները՝ իր երաժշտական լեզվի արտահայտչականությունը մոտեցրեց խոսրի, պատկերի կոնկրետությանը: Գրեթե նման մի «գպրոց» էր անցել Խաչատրյանը, դաշնամուրով նվազակցելով, «Փոսեցնելով» համը կիմոֆիլմի հերոսներին (թատրոնի ու կինոյի համար գրված երաժշտությամբ): Պատահական չէ, որ այս իմաստով Խաչատրյանին բնորոշում էին որպես «նշանառու»:

Մյասնիկովի դասարանում Արամ Խաչատրյանը ծանոթացավ կուպողիտոր Նինա Մակարովայի հետ, և 1933-ին նրանք ամուսնացան:

Կոնսերվատորիան Արամն ավարտեց 1934-ին, 1-ին սիմֆոնիայով: Լավագույն շրջանավարտների ուսկետառ մարմարյա տախտակը զարդարվեց նաև Արամ Խաչատրյանի անվամբ:

1-ին սիմֆոնիայի պրեմիերան տեղի ունեցավ 1935-ին, Մոսկվայի Ֆիլհարմոնիայի նվազախմբի կատարմամբ՝ դիրիժոր Օյգեն Սենկարի ղեկավարությամբ: Սիմֆոնիան նվիրված է Խորհրդային Հայաստանի 15-ամյակին: 1-ին մասը Խուբովն անվանել է «Պոեմ Հայունիքի մասին»: Աշուղական համովակությամբ գովերգվում է հայրենիքը: 2-րդ մասում, ասես, սարյանական արևաշող մի բնապատճեր է՝ հովվի սրնգի կանչերով, որոնք արձագանքում են լեռներում ու վերջալուսի հետ մարտու: 3-րդ

2. Գ. Խոբոս, Արամ Խաչատրյան, ստ 48.

նասը խաշատրյանական պարային տարերըն է: Սիմֆոնիայի ձևագոյացով հիմնված է աշուղական ոճին բնորոշ երգային և պարային սկզբ-բունքների հակադրման, միավորման, փոխներքափանցման, ինչպես նաև նոյն թեմայից բխած հակապատկերների միասնության վրա: Միջանցիկ զարգացման այս մերողը՝ մոնորեմատիզմը, հատուկ էր ռոմանտիկներին՝ Լիստին, Ֆրանկին: Վերջինս այն յուրովի կիրառել է իր նույնական եռամաս սիմֆոնիայում:

Խաշատրյանի սիմֆոնիայի նախարանից ծագող գլխավոր թեմայում Խորլովը «աննկատ» նմանություն է տեսնում միջնադարյան «Dies irae» («Օրն ցաման») խորալային սեկվենցիայի հետ, որը մարմնավորում է Աստծո դատաստանի գաղափարը: Եվ հավանաբար, որպեսզի չըրկնվի 1948-ի հավատաքննիչների դատաստանը, հայազգի Խորլովը գրում է. «Սակայն խաշատրյանական թեմայի կերպարային իմաստը միանգամայն այլ է»: Որպես տարրերություն նշում է խորալի ստատիկ վիճակը և խաշատրյանի թեմայի շարժունակությունը: Չե՞ որ կարող էին հարցնել, ի՞նչ կապ ունի Հայաստանի երջանիկ կյանքի գովերգումը Աստծո Անեղ դատաստանի թեմայի հետ: Եվ Խորլովը այն ներկայացնում է որպես ժողովրդի արքնացած ուժի կերպար՝ հեղեղ Բորբոքին Դյուցազնական Սիմֆոնիային: Սինչեղ նման դեպքում «դատաստանի» թեմայի տեմպը փոխելուց չի վերանում նրա գաղափարական սեմանտիկան: Այնպես, ինչպես Բիզեի օպերայում Կարմենի նահը խորհրդանշող լայրենտիկը, որը սկզբում հնչում է ծանր, իսկ հետագայում կայծակի գիգազներով «շանթահարում» նվազախումբը վերից վար: Խաշատրյանի սիմֆոնիայում «Dies irae»-ին հաջորդում է «Ամպել ա կամար, կամար» երգը՝ որպես օժանդակ թեմա: Կոմիտասի ճշակած այս եղան հայտնվելը երաժշտագետը համեմատում է ծովի փրփուրից ծնված Ափրոլիտեի հետ:

Հիրավի, դաշնամուրը, տավլիղը և ֆլեյտաները մեծ ու փոքր ալիքների ու փրփուրի ժանյակներն են հյուտում, իսկ թավջութակները պայծառ ու գիստրում նվազում են երգը: Տոնական ֆինալում հիշեցվում է նախարանի աշուղական իմպրովիզացիան, որը և ամրողացնում է սիմֆոնիան:

Կարևոր համարեցինք ծավալվել դատաստանի թեմայի շուրջ, քանզի խաշատրյանի համար այն լոկ արտահայտչամիջոց չէր, այլ նաև գաղափար, դիրքորոշում, արդար դատի ակնկալիք: Բավական է նշել, որ այդ թեման նա կիրառել է «Սակրեի» թատերական թեմադրության համար գրված երաժշտության մեջ, 1-ին և 2-րդ սիմֆոնիաներում, «Սպարտակ» բալետում և մեր սուրբեկտիվ ընկալմանք՝ նաև ջուրակի և նվազախոնքի կոնցերտում: Ի դեպ, Խաշատրյանի 1-ին սիմֆոնիայի ստեղծմանը, 1934-ին, զուգադիպեց հայրենազուրկ Ռախմանինովի «Ռապսոդիան Պագանինիի թեմայով», իսկ Զուրակի կոնցերտին Ռախմանինովի «Սիմֆոնիկ պարերը» (1940): Այս չորս կորողմերում էլ մեծ դեր է խաղում դա-

տաստանի թեման: Եկ ամենուր՝ միանշանակ: Երաժշտության մեջ շատ թեմաներ են վերահմատավորվել, սակայն Աստծո դատաստանի թեմայի ցանկացած վերափոխում դիտվում է որպես շեղում կանոնից, նույնացուցիչ է և մնում է կոմպոզիտորի խոճի վրա:

1936-ին Արամ Խաչատրյանն ավարտեց ասպիրանտուրան՝ դաշնամուրի և նվազախմբի համար գրված կոնցերտով: Այն նվիրված է Լև Օրորինին, որը և այս ստեղծագործության առաջին կատարողն էր Մոսկվայի Փիլիարմոնիկի հետ: Դիրիժորն էր Լև Շտայնբերգը: Կոնցերտում պահպանված է դասական եռամաս ձեզ, տեմպերի հարաբերությունը՝ արագդանդաղ-արագ: Այն սկզբում է հզոր ակորդներով, ասես՝ հսկաների պարուի: Սրան հակադրվում է օժանդակ թեման, որը ժողովրդական երգ է հիշեցնում: Հայեցի բնույթն ուժեղացնում են դրամակահունչ հորոյի մենանվագը և մեղմօրոր ալտերը: Մշակման մասում այս երկու թեմաները և իրենց տարրերը ընթանում են մի խաղացկուն շարժման մեջ: 1-ին մասի վերջում դաշնամուրի կադենցիան դրսեորում է նվազախմբի վիրտուոզ հնարավորությունները, որից հետո այս հատվածն ամփոփվում է զիշավոր թեմայի հզոր ակորդներով: 2-րդ մասի վեհաշունչ թեման Խաչատրյանը ստացել է՝ վերափոխելով քաղաքային մի ծեծված երգ: Տարբերությունն այնքան է, որ կարելի է ասել, զուրը զինի է դարձել, պղինձը՝ ոսկի: Մոտորային ֆինանս արդարացնում է հեղինակի կատարողական հանձնարարականը, այն է՝ արագ և փայլուն: Կոնցերտը պսակվում է շրեղ «հրավառությամբ»:

## ՈՎ ԺԱՍՏԱՇԿՆԵՐ, ՈՎ ԲԱՐՁԵՐ

Խորհրդային գաղափարախոսությունը, աթեիզմը, ազգածոյլ քաղաքականությունը, իրականությունը արվեստում արտացոլելու սոցիալիստական ուսալիզմի մերողը պարտադրում էին արվեստագետներին գովերգել խորհրդային կյանքը և քարցնել աշխարհից դառը իրականությունը: Այլ կերպ Արամ Խաչատրյանը ստիպված չէր ինի ստեղծել օրինակ, «Զոն Լենինի հիշատակին» կամ աղբեջանցի աշուղ Բայրամովի խոսքեռով «Պոեմ Ստալինի մասին»-ը, որտեղ կան հետևյալ խոսքերը.

Ես նայում եմ ժողովրդին,  
Հոգուս մեջ գարուն է,  
Չկա ոչ աղքատություն, ոչ վիշտ...

Նույն ժամանակի մասին նահատակ քանաստեղ Օսիպ Մանեկ-տամը գրել է.

Մենք ապրում ենք, բայց չենք գգում,  
Որ սա երկիր է,  
Խոսում ենք շշուկով, և մեզ սաստում են  
Կրեմլում բազմած լեռնցու բունցըով,  
Եվ ամեն մահապատիժ երկարացնում է նրա կյանքը,  
Լայնացնում օսերի թիկունքը...

Ընդվել է և Շոստակովիչը: 1936-ին ստեղծած և արգելված 4-րդ սիմֆոնիայի տարակուսելի կրկնարանությունների դրվագն, ըստ դիրիժոր Գենայի Ռուսական կոնցերտի շատախոսության, անհերքել բանավեճերով, այն «տոնազն» է, որոնք կուսակցությունը հարուցում ու պարտադրում էր ամբողջ ժողովրդին:

Եվ Պրոկոփևի, Շոստակովիչի, Խաչատրյանի երկերում ներշնչված, ամփոփված սերը, գորությունը, ընդվզումը մեծապես նպաստեցին ժողովրդի գիտակցության, ճաշակի, արժանապատվության պայծառացմանը: Նրանց գործերը սասանեցին բռնատիրության հիմքերը՝ մերը ննան ջրի կարիքի, որը բար է ծակում, մերը գաղտնի ականների, որոնք պայքում են ժամանակի ընթացքում...

Ստալինին նվիրված «Սիմֆոնիկ պոեմը» գրվել ու կատարվել է 1937-1938 թվականներին, երբ տանջանահ էին անում Չարենցին, Բակունցին և այլ նոտավորականների:

Եվ առաջ նկավ երկատվածությունը, խոսքի ու գործի հակատություն՝ թե՛ կյանքում, թե՛ արվեստում: Այս հարցում, ի տարրերություն պոեզիայի և գրականության, որոնց արտահայտչամիջոցը կոնկրետ խոսքն է, երաժշտությունն ավելի լավ վիճակում է: Երաժշտությունը լուսուի պես կարող է ծաղկել ճահճում, բայց չապականվել: Չե՞ որ հնարավոր է իշխանություններին հաճո, անհերեր խոսքերին կցել լավ երաժշտություն կամ գործիքային երաժշտության միջոցներով խարազանել, ընդվզել, ծաղրել բռնատիրությունը: Այս առումով անգերազանց էին Շոստակովիչը, Պրոկոփևը՝ իրենց գրոտեսկային երկերով: Խաչատրյանը գրոտեսկին դիմել է ավելի սակավ, բայց նույնպես դիպուկ կերպով, օրինակ՝ 2-րդ սիմֆոնիայի սկերցոյում և ջութակի Կոնցերտի 1-ին մասի կողայում:

## ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆՉԵ

1939-ին Մոսկվայում տեղի ունեցած Հայկական արվեստի տասնօրյակում ներկայացվեց Խաչատրյանի «Երջանկություն» բալետը, որը հետագայում վերաձեց «Գայանե» բալետի:

Ո՞ւր կորան «Երջանկության» կոլեկտիվ տնտեսությունը՝ կոլխոզը, ուղ-

ճացած «Քշնամու կերպարը», Սովորի սահմանը խախտող լրտեսները, ինտերնացիոնալ ընտանիքները, Արարատյան դաշտի խաղողը փչացնող բամբակի պարտադրված ցանքերը... Այս ամենից մնացին բալետային սյուիթները՝ հանճարեղ «Սուսերով պարը», որ ժամանակին աշխարհում ամենաշատ կատարվողն էր, «Այշեի պարը», որոնք հայտնի են նաև Յաշ-ա Հայֆեցի փոխադրությամբ՝ ջութակի և դաշնամուրի համար։ Նշենք նաև «Վարդագույն աղջիկների պարը», «Օրորոցայինը», միմֆոնիզացված ժողովրդական պարերը՝ «Տույ-տույ», «Փշատի ծառ», «Կոռունկի պար», «Ծալախո», «Ուզունջարա» և այլն։

Ժողովրդական երգն ասես ծաղիկ լիներ, որից Խաչատրյանի երևակայության մեղուները «մեղր» էին քամում (ի դեպ, մեղեղի բառի հունարեն արմատը նշանակում է հենց մեղր): Եվ կոմպոզիտորը ժողովրդին առատորեն Վերադարձնում էր նրանից Վերցրած «պարտք»: (Այդպիսին է նաև «Պեպոյի երգը», որը Ղարաբաղում երգում էին որպես ժողովրդական երգ): Խաչատրյանն ասես կանխազգալով ապագա զանգվածային մշակույթում կատարվելիք անխնա աղավաղումները՝ կոչ էր ամում ակնածել հասունանալ և նոր միայն օգտվել ժողովրդական երգից:

Խորպվելի իր ժամանակի ոգուն համահունչ է բնութագրում նաև Խաչատրյանի դաշնամուրի, ջուրակի և բավջուրակի կոնցերտները՝ գրելով. «Այստեղ դրսերկում է մեր կյանքի գեղեցիկի զաղափարը, որը գործիքային այդ եռապատճմի հիմնական զաղափարն Ե»<sup>1</sup>: Արվեստագետը սահմանափակություն էր համարում Խաչատրյանի արվեստին տրված Ասաֆի զնահատականները: Ակադեմիկոսը Խաչատրյանի արվեստը որակում էր որպես «մայսևառաջ երաժշտության խրախնձանք, «գեղրնիզմ» և ոութենայան տեմպերամենտ»<sup>2</sup>: Սրանով ստվերվում էր Խաչատրյանի արվեստի ողբերգականությունը և հերոսականությունը: Եթե անզամ նշում էին, ապա դրամը վերագրվում էին իկ որպես «հետաղաքայացք հայացք հայ ժողովրդի ողբերգական անցյալին», ոչ նաև՝ ներկային: Ժամանակին Մոցարտին է ընկալում էին որպես մի «արևամանուկ» և նրա երաժշտության «ծաղիկների» ներք չին նկատում անդունդները:

Տեղին է հիշել Դամբեի «Աստվածային կատակերգության» վերաբերյալ Ծովականութերի մի դիտարկումը: Ըստ փիլիսոփայի՝ դժոխքի պատկերումն ավելի հաջող է ստացվել, քան դրախտի, քանզի իրականությունն ավելի նման է դժոխքի, քան՝ դրախտի: Գույք Խաչատրյանի պարագայում զեր է խաղում նաև մեկ այլ գործոն, որը պարզաբանում է լատվիացի պոետ Ինանտ Զիենդրինսը. «Ըերսափիրը առաջարկում է մարդկային զգացմունքների այնպիսի մեծ կաղապարներ, որ պիտանի են հավասարապես

1. Г. Хубов, Арам Хачатурян, стр. 149.

**2. УГн, тг 423:**

այս և այն ժամանակների համար, այն և այս ժամանակի սերունդներին... բայց սպառել դրանք չի տրված բազում սերունդներից և ոչ մեկին<sup>3</sup>...

Իրոք, եթե պատերազմական սերունդը Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիան ընկալում էր ավելի շատ որպես ընդվզում տվյալ պահի քշնամու՝ ֆաշիզմի դեմ, ապա մեր սերունդը, լսելով «Որսկան ախաղեր» երգը, որը սիմֆոնիայի 3-րդ մասում միահյուսվում է դատաստանի խորավին, այն կարող է ընկալել որպես ոչ միայն ֆաշիզմի, այլև ամեն տեսակի բռնակալության դատապարտում՝ ստալինիզմի, հայոց ցեղասպանության, որի գույժը, ինչպես հայտնի է, հասել էր նաև փոքրիկ Արամին: Հենց այդ տարիներին էր Արամը մորից լսել «Որսկան ախաղեր» երգը: Եվ սիմֆոնիայի 3-րդ մասը նաև մի հուշարձան է պատերազմի ամենառոբերգական գոհին, որն, ըստ Խաչատրյանի, հանուն Հայրենիքի նահատակված զինվորի մայրն է:

Բերելովենը երաժշտական ստեղծագործությունը համարում էր մի ուղերձ սրտից սիրտ, իսկ լսողի արձագանքը, կենսավորձը գումարվում ու ամբողջացնում է տվյալ ստեղծագործությունը: Դիվային ուժերի պատկերումը և ծանակումը բացահայտում է շարի «քարստոցը», գինաբափում նրան: Սա տեղի է ունենում նաև Սկերցոյում: Սիմֆոնիայի 2-րդ մասը՝ Սկերցոն, կոչվում է «Մահվան պար»: Մահվան պտուտահողմը, ծամածությունները պատկերված են վրացական «Լեզգինկա» պարի ոիբրով: Այս գաղտնագրությունը կարող է ընկալվել որպես Ստալինի ծագումը նշող մի ակնարկ: Ինչպես վրացուն օսերի հետ Մանդելտամի նոյնացնելը՝ իբրև կովկասցու հավաքական կերպար, չպետք է նաև ամացնի օսերին, այնպես էլ «Լեզգինկայի» այս բացասական դերը՝ վրացիներին, մանավանդ որ «Գայանե» բավետում նոյն «Լեզգինկան» կենան պար է: Ինչ վերաբերում է միևնույն թեմայով հակապատկերներ ստեղծելուն, ապա դա շատ տարածված է դասական արվեստում՝ թեկութեան նոյն թեմայի հմչեցումը մաժորում և մինորում... Սիմֆոնիայի 2-րդ մասում «Մահվան պարին» հակադրվում է Գայանեին հիշեցնող նրբագեղ կերպարը, որն առավել ընդգծում է մահվան դաժանությունը: Սակայն, ի տարբերություն ոռմանտիկների «Աղջիկը և մահը» թեմայի, այս հակադրումը սիմֆոնիայում ստանում է համամարդկային հնչելություն:

Հիշեցնենք, որ «Զանգով սիմֆոնիա» անունը տվել է Խուբովը, քանզի սիմֆոնիան սկսվում է եկեղեցական զանգով, տագմանապալի դողանջներով, նարատով, որն ազդարարում է պատերազմի սկիզբը և պայքարի կոչում համայն ժողովրդին: Եվ իբրև բնարան երաժշտագետը քերում է անգլիացի պոետ Չոնի Դունի խոսքը. «Մի՛ հարցրու, թե ո՞ւմ մահն է գուժում

3. И. Знедонис, Эпифанис, М., 1977, стр. 126.

զանգը, այն թու հիշատակն է դորանջում»: Իսկ սիմֆոնիայի ֆինալում, բրուկներյան սիմֆոնիզմին հատուկ տիեզերասփյուռ եռահնչյունների շեփորումով ազդարարվում է Հաղթանակը:

Հնչյունները մարդկանց պես հետզինետն ժողովում են, վերածվում մի ահոնիլ բազմության: «Ողջագորվող միջինների» այս վիթխարի ուժի առջև տեղի է տալիս մահը: Սիմֆոնիան բացող զանգի տագնապալի դողանջները վերափոխվում են ու հնչում որպես ցնծալի ավետիս...

## ԶՈՒԹԱԿԻ ԵՎ ՆՎԱԳԱԽԱՄԱՐԻ ԿՈՆՑԵՐՏԸ

Արամ Խաչատրյանը իր ջութակի կոնցերտի մասին գրել է. «Այս կոնցերտը հորինելիս ինձ համար որպես անհասանելի օրինակ ծառայել են այնպիսի գլուխգործոցներ, որպիսիք են ջութակի համար ստեղծված Մենդելսոնի, Բրամսի, Չայկովսկու և Գլազունովի կոնցերտները: Ես ճգոտում եմ ստեղծել ունկնդիրների լայն զանգվածի համար մատչելի վիրտուոզ մի գործ, որը կառուցված է սիմֆոնիկ ծավալուն զարգացման սկզբունքով»<sup>1</sup>:

Ջութակի կոնցերտը Արամ Խաչատրյանի ամենից կուտ կառուցվածքն ունեցող ստեղծագործությունն է: «Ահա այն ասպարեզը, որտեղ առավելագույն ուժով ու լիությամբ դրսևորվեցին խաչատրյանական առողջ «կյանքի վիխսովայությունը», զգացմունքների շոայլությունը, մտքի խորությունը»<sup>2</sup>: Դմիտրի Շոստակովիչը այս խորերն առավել ևս կարելի է վերագրել Ջութակի կոնցերտին: «Եիշտ է, ինքը՝ Խաչատրյանը, լավագույն համարում էր Թավջութակի կոնցերտը, և հեղինակի հետ հարկ է հաշվի նստել, մանավանդ որ թավջութակ նվազարանն իր «առաջին երգն» էր, ուստի և իր շիրականացված կատարողական նտահղացումները, կարուր նաև «վստահելը» է հենց Թավջութակի կոնցերտին, ինչպես նաև «կոնցերտուապտիհային»: Սակայն երաժշտության ընկապման «քոյլատթելի սուրյեկտիվությունը» շատ երաժշտազների իրավունք է տվել գերադասել Ջութակի կոնցերտը: (Ի դեպ, Եղվարդ Միրզոյանը նախապատվությունը տալիս է դաշնամուրային կոնցերտին): Ջութակի կոնցերտը նվիրված է մեծն Դավիթ Օստրախին, որը և առաջին կատարողն էր՝ ՍՍՀՄ պետական սիմֆոնիկ նվազախմբի հետ (դիրիժոր Ալեքսանդր Գառիկ, Մոսկվա, 1940): Կոնցերտում Խաչատրյանը հանդես է գալիս որպես հասուն վարպետ իր նվազումներով, իորով բում պորեկումներով: Ինչպես իրարության մակարդակով Արարատն է ձևավորվել, այնպես էլ արվեստագետի հոգու էներգիայի ժայթրումից գոյացել են Սարյանի «Մասինե-

1. Г. Шнеерсон, Арам Хачатури, М., 1960, стр. 24.

2. В. Юзэфович, Арам Хачатури, стр. 83.

ը», «Հայաստան» որմնանկարը, այդպես է կյանքի կոչվել նաև Խաչատրյանի կոնցերտը: Այս կոթողն էլ կոմպոզիտորի հնչունակերտ Հայաստանն է, բանավոր Հայրենիքը: Այսպես մեր սերունդն ընկալեց այս ստեղծագործությունը՝ Սիրայի Սալունցյանի ղեկավարած՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի և ջուրակահար Ժան Տեր-Մերկերյանի համահանձարեղ մեկնաբանությամբ: 1-ին մասի գլխավոր թեման հայտնվում է ջուրակի «Աներխուժումով», որի ոիրմն, ասես, առյուծակերպ Միերի ծիռու դոփյունն է, ոյուցազնի սրտի բարախունը, որից և բխում է Կոմիտասի մշակած ժողովրդական «Քելե, քելե» երգը: Գլխավոր թեման ծագում է կոնցերտի բնարանից՝ առաջին հինգ տակտից:

Մեր ընկալմամբ, այս բնարանում կարելի է նկատել Անեղ դատաստանի մշտնջենական թեմայի ազդեցությունը: Գլխավոր թեմայի առնական տարբերքին հաջորդում է սրտառուչ օժանդակ թեման, որը «Երգում» է ջուրակը: Մեղնողին խաղողի վազի պես պարուրում է ֆիեյտայի, կլասնետի «հնչյունայուները»: Իսկ տավիղը և բավզութակները պահպանում են շարժման զարկերակը: Չորսակի «աշուղային», Վիրտուոզ կարենցիայում սկզբից, իբրև վերիուշ, անցնում է օժանդակ թեման, հետո՝ գլխավորը, որոնք մշակման բաժնում տարբերակվելուց և «փորձությունները» հաղթահարելուց հետո ունարիզայում վերագունում են իրենց նախնական դիմագիծը և հերթագայությունը: 1-ին մասի վերջում՝ կոդայում, գլխավոր թեմայի առաջին մոտիվի վայրիվերումներում ջուրակի ունգիստրային «տսույններում», փողերի «սեղորված», ոնցային ծայներում հերոսի դիմակով հայտնվում է չարը և բախվելով «Դատաստանի» շեփորներին՝ պարտվում է: Գրտեսկային այս դրվագը և ամբողջ 1-ին մասն ավարտվում է հաղթական շեշտով:

Կոնցերտի 2-րդ մասում ընդհանրությունների կողքին առավել ցայտուն է զգացվում արդիական և անցյալ դարի 40-ականների սերնդի ընկալման տարբերությունները: Զարագույժ ֆագոտի, թավզութակների շրջումների, այնուհետեւ կլատնետի և բրրուացող ալտերի տագմապահ նախաբանում, այդրան ցածր ունգիստրում, դժվար է տեսնել հայեցողականություն, երազանք, որը զգացել է Խորովը: 2-րդ մասի վերաբերյալ որը Խորովը համարում է «սերենար», նա գրել է. «Պետք չէ ողբերգական կամ դրամատիկական իմաստ վերագրել «սիրո երգչի, իր տիխորության երգի» այս իմայրովիզացիայում... նրա մեջ այդ բանը չկա... նրանում արտահայտված է սիրո տաճաշից թախիծը, հանդիպման անհամբեր սպասման թախիծը և թաքուն կասկածները»: Իսկ նվագախմբի հղոր պոռթկումը երաժշտագետը դիտում է իբրև «տաք մրրիկ»: Մեր կարծիքով, եթե այս կարտուակեզ թեման սիրո երգ է, ապա որդեկորույս մոր սիրո երգ է, նման վարդանի մոր ողբին: Այն գալիս է անցյալի խորբերից, դատնում իրական և մարում վերջալույսի շողերի պես:

Նման մեկնաբանությունը համահունչ է նաև կոնցերտի ստեղծման ժամանակին՝ Հայրենական մեծ պատերազմի նախօրեին: Իր վիշտը պատմելիս ջուրակը մերք հոնգուր-հոնգուր լախս է, մերք ծածուկ հեկեկում՝ այն դրվագում, որտեղ ջուրակը նվագում է սուրդինայով (մեղմոցով) խլացված ձայնով: Թեման կրկնվելիս, առանց մեղմոցի, հնչում է վեհ ու առնական, ասես, անցյալից տեղափոխվում ենք իրականություն: Նվագախումքը մերք «համբերում» է, մերք՝ միջամտում: Ողբերգական է ալտերի մենանվազը, իսկ երք ջուրակը լրում է, կարծես Հայաստանի «քարերն են աղաղակում», ողջ նվագախմբի նվազը վեր է խոյանում, ժողովրդի պես ուրի եկում, բարձրանում այն հնչյունաշարով, որով սկզբում անցել էր մեկուսի ջուրակը: Նման կարճատև պոռքկում և մարում հիշեցնում է Բրամսի 4-րդ սիմֆոնիայի 2-րդ մասը, նաև Ռայման Մարիա Ռիլկեի «Ընձառյութ» բանաստեղծությունը, որտեղ ազատատենչ ընձառյուծի աշքերում կրակ է բռնկվում, թոհջի է պատրաստվում, սակայն վանդակի ճաղերը տեսներով, մարում է աչքերի «զմրովստ կրակը», փակվում է վարագույրը: Նման ավարտ ունի նաև Խաչատրյանի կոնցերտի 2-րդ մասը: Իսկ «վանդակի ճաղերը», «երկարե շղթաները» փշրվում են կոնցերտի հաղթական և ցնծալից ֆինալում:

Ֆինալի «ոռողո-սոնատի» պարային շրջապտույտում ճախրում են նախորդ մասերի բոլոր հիմնական թեմաների հնչերանգները՝ սա կրկին խաչատրյանական մոնորթնատիզմն է, որը կամարակապում է մասերը: Ֆինալի գլխավոր թեման կոնցերտի բնարանի շառավիղն է, իսկ Վարդնքաց, խոնարհվող օժանդակ թեման դժվար է տարբերել ժողովրդական բնօրինակի ծաղկավետ դրասանգներից: Նորը և հինը ողջագորվում են մի ջուրջապարում՝ մերք շղթայվում, մերք հնչում միաժամանակ՝ պոլիֆոնիկ բազմաշերտ հյուսվածքում: Եթե Գուտավ Մալերն իր 8-րդ սիմֆոնիայի մասին ասել է, թե «ողջ տիեզերքն է երգում», ապա Խաչատրյանի կոնցերտի ֆինալում «ողջ տիեզերքն է պարում»:

Ժամանակին հեռավոր գորգահեռներ էին տանում Խաչատրյանի և Սեմյուլստինի կոնցերտների միջև, լոկ փայլի, վիրուտովության իմաստով: Նման ավելի մոտ գուգահեռներ կարելի է անցկացնել և Բերհովենի ջուրակի կոնցերտի հետ: Երկու ֆինալներում էլ նոյն եռատրուկ գարկերակն է, նոյն լուսավոր ռեմաժորը և մինոր էակիզողների նոյն դերը: Խաչատրյանի ֆինալում ևս մինոր դրվագներն անցյալի թախծոտ, բայց լուսավոր վերիուշ են, ողոնցում ժամանակի գգացողությունը մի պահ վերանում է, թվում է, թե այս շրջապտույտը հավերժ է: Եվ ջուրակի, ֆլեյտայի, հորոյների հնչյունների ներքո մեր «գողրան բնարահար» Արամը, ասես, վերիշշում է իր մոր պարը:

Սակայն մենանվագ ջուրակի գլխապտույտ կայրէջրից կրկին բոնրկվում է «տիեզերի պարը», վերադառնում է ու շիկանում 1-ին մասի «միեր-

յան թեման», որով և ամբողջանում է համճարեղ կոնցերտը:

«Սպարտակը» Խաչատրյան-արվեստագետի, Խաչատրյան-քաղաքացու «դաստավճիռն է ամենայն շարի և բոնատիրության հանդեպ: Եվ այն հաստատվում է ամենաքարձր ատյանով՝ Աստծո Անեղ դատաստանով: Ինչպես և նախորդող գործերում, այս քայլսում և Խաչատրյանը մեջքերում է միջնադարյան «Dies irae» («Օրն ցաման») թեման, որն, սաեւ, կոմպոզիտորի մեծակերտ ստեղծագործությունները կապող, շղայող լայրմուտիվն է:

Մինչեն Գերօգի Խորովը դատաստանի թեմայի մեջքերումը «Սպարտակում» դիտում է իբրև լոկ գեղարվեստական հնարանք: Նա գրում է, թե Խաչատրյանը «կողորիտի ավելի մեծ նոայլության համար պարտիտորի մեջ նոցրել է «Dies irae» սեկվենցիայի մոտիվը (Անդարատմերի մարտում, ապա ձևափոխված՝ Ռետիարիոսի և Մարմիլյոնի դրամա-էպիզոդում), այսուհետեւ ավելացնում. «Dies irae» սեկվենցիան ծագել է Սպարտակի ապստամբությունից տասներկու դար հետո: Բայց ներենք կոմպոզիտորի այս անախրոնիզմը<sup>3</sup>: Քարձր գնահատելով և մեծապես օգտվելով Խորովի աշխատությունից՝ արտահայտենք մեր տեսակետն այդ ժամանակախախտման վերաբերյալ: Եթե քայլսի երաժշտական թեմաները հեղինակը քաղած լիներ Սպարտակի ապստամբության օրերին ստեղծված նմուշներից, որոնք չեն պահպանվել, միևնույն է, հետագայում ծագած չարը դատապարտող «Dies irae» խորալի մեջքերում կլիներ արդարացված: Այն կրնկալիքը որպես հեղինակի պատմության դատավճիռ, որը վեր է ժամանակներից: Այն նման է նաև կադրի «հետևում» հնչող և դիտողին տրամադրող վերահաս հատուցման ակնարկումի: Վերջապես, մի՞րե անախրոնիզմ է «Ընչարի» պարը՝ Սպարտակի քագաղության պատկերում<sup>4</sup>:

Սպարտակը հաղթեց շարին՝ սրով և ոգու ուժով, իսկ Խաչատրյանը՝ երաժշտության զորությամբ և գեղեցկությամբ: Այսօր էլ աննվազ ուժով հուզում է Սպարտակի և Ֆրիգիայի «Ալաջոն»:

Ամբողջատիրական ժամանակաշրջանում «Սպարտակ» քայլսի կերպումը Արամ Խաչատրյանի կողմից սիրագործություն էր և մարտահրավեր: Աշխատանքը քայլսի վրա կոմպոզիտորը սկսել է Ստալինի կենդանության օրոք և ավարտել 1954-ին: Պրեմիերան իրականացրեց Լենինգրադի Կիրովի անվան օպերային թատրոնը: Ծիշտ է, 1956-ին Ստալինը

3. Գ. Խյօս, Արամ Խաչատրյան, ստր. 355.

4. Տեղին է նշել, որ Ուրենք Դոբրինելի և Բրենդան Շոնիստին «Պատերազմ և խաղաղություն» վեպի հետուառելքրանավորման մեջ (2007) պարահանդեսի տեսարանում Խաչատրյան Ուստուգան և Անդրեյ Բոլյոնսկին «ճախրում են» Արամ Խաչատրյանի «Իմականականդեսի» վալսի ներքո (Ժամ. խմբ.):

շկար, սակայն կար նրա «ուրվականը», որը բախտում է աշխարհում մինչ օրս: Սպարտակի կերպարի մասին կոմպոզիտորը գրել է. «Այժմ, երբ աշխարհի հալածված շատ ժողովուրդներ պայքար են ծավալել հանուն ազատության և անկախության, Սպարտակի անմահ կերպարը ձեռք է բնում հատուկ հմայր... Ես միշտ գգացել եմ Սպարտակի հոգեհարազատությունը մեր դարաշրջանին»:

«Սպարտակ» բալետով Խաչատրյանը վերջակետ է դրել այն բանավեճին, թե նրա խառնվածքում գերիշխում է «գեղոնիզմը», կյանքի զգացական ընկալումը, վայելքը: Սրանից իր բխում էր այն, որ կոմպոզիտորը տարված է ավելի շատ երաժշտության «մարմնով», քան «հոգով»: Մրանով էին բացատրում գործիքակորման նոխուրյունը, «տտիպ» հարմոնիանը, նվազախմբի մեծ կազմը, բանակը, օրինակ, 3-րդ սիմֆոնիայում, տեղ-տեղ նաև «Սպարտակում»... Այս բալետում, կարելի է ասել՝ Խաչատրյանը Աստծուն տվել է Աստծուն, Կեսարինը՝ Կեսարին:

Բալետում բախվում են երկու ընեղներ՝ մի կողմից կայսերական Հռոմի բիրու հզորությունը, ճոխուրյունը, մյուս կողմից Սպարտակի և իր զինակիցների ազնիվ ուժը, ազատատենչ ոգին: Եվ այս ընեղների միջև ծխածնվում է Ֆրիգիայի ու Սպարտակի ողբերգական սերը: Խաչատրյանի հիշյալ «Ճոխասիրությունը» խիստ տեղին էր՝ պատկերելու համար Հռոմի շքեղ համդիսուրյունը, ուղի բարբերը: Այդպիսին են բալետի նախարանը՝ «Հռոմի հաղթահանենքը», «Կրասովի խորհմանը», հատկապն «Եզինայի պարը», ճույն ուժով կոմպոզիտորը պատկերել է ապստամբների հաղթարշավը, Սպարտակի «Ազատության պարը», բրակիացիների «Մրերով պարը», «Պարը վահանների վրա», որի մեջ լսվում է գլադիատորների քայլերգի թեման, ազատության Ապոքենող...

Եվ ինչպես խորեոգրաֆիայի միջոցներով, այնպես էլ երաժշտամիջոցներով, կոմպոզիտորը հստակորեն զատում է, բնութագրում ծշմարիտ սերը (Ֆրիգիա) և տոփանքը, զայթակղությունը (Եգինա), բռնության վրա հիմնված արատավոր երջանկությունը, բարսուային օրգիաները և ազատության ազնիվ բերկրանքը, գերվածների հայրենաբաղդությունը և գերողների դաժանությունը, հերոսությունը և դավաճանությունը (Գարմողինս), Ֆրիգիայի «Գուշակության պարը», «Գաղեսական կույսերի պարը», որը ձյան գնդիկի պես զլորվելով խոշորանում է (ինչպես Ռավելի «Բոլերն»), «քահիվում» է՝ Կրասովի ճամբարում հայտնված Սպարտակին ու ջարդուիշուր լինում և շատ ու շատ դրվագներ: Նշելով հալածված ժողովուրդների պայքարը՝ հանուն ազատության, Խաչատրյանը չէր կարող նկատի շունենալ իր հարազատ ժողովրդի դարավոր պայքարը: Ժողո-

Վուրդ, որին ինչպես բանաստեղծն է ասել, ճնշելով աղամանդ են դարձրել: Եվ «Սպարտակում» ժայռում է այդ ժողովրդի հինգ հազար տարվա ընթացքում կուտակված, զսպված ուժը, և բացվում է Միերի բարացած դուռը...

Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված այս ակնարկում անդրադարձանք կորողային այն գործերին, որոնք պատկերացում են տախու կոմպոզիտորի առաքելության, ստեղծագործական դիմագծի, նրա արվեստի բարձուների մասին: Ինչ վերաբերում է թափութակի կոնցերտին, 3-րդ սիմֆոնիային, ջուրակի, թափութակի, դաշնամուրի կոնցերտ-ո-պատուհաններին, երգերին, «Մանկական ալբոն»-ին և այլ երկերին, ապա դրանք կարող են խնդրո առարկա լինել մեկ այլ հոդվածի համար:

Նշենք միայն, որ կյանքի վերջին տարիներին Խաչատրյանը ստեղծել է սոնատ-ֆանտազիա՝ թափութակի (1974), սոնատ-մենախոսություն՝ ջուրակի (1975) և սոնատ-երգ ալտի համար (1976): Վերը նշված կոնցերտները և այս սոնատները զարգացման մի նոր պատույտի վրա դրեցին աշուղական արվեստին բնորոշ երգն ու մորմորը, իմայրովիզացիան, վիրտուոզ նվազը: Խաչատրյանի հոգևոր կյանքը նմանվեց իր ստեղծագործություններին, որոնք հաճախ սկսվում և ավարտվում են միևնույն թեմայով: Ստեղծագործական ուղին նա սկսեց աշուղներին ծոնած ջուրակի «Երգ-պոեմնով» և ավարտեց սայաթնովյան քամանչայի «հանգովք»: Ջուրակի սոնատի մի դրվագում, ըստ հեղինակի նշան հանձնարարականի, կատարողը աղեղի պոչով պիտի հարվածի ջուրակի կզակիմ՝ արտաքերելով ոիթմիկ պատկեր, որը կյանքի հեռավորությունից կարծես ծայնակցում է փորդիկ Արամի առաջին ոիթմիկ «նախշերին», որոնք նա հարվածում էր պղնձեն տաշտակի վրա: Սոնատի համատեքսուում այդ հարվածները (նաև «այիցիկատոնները») ընկալվում են նաև որպես ճակատագրի հարվածներ, պետանկտանգության ծառաների գիշերային թակոցներ, որոնք հասնում էին մեծ ու փոքրի ականչին և ստիպում, ինչպես Դավիթ Օյստրախին է խոստովանել, ճամպրուկը պատրաստ դրան մոտ պահել... Սոնատները կոմպոզիտորի վերադարձն է իր ակունքներին, կարուն է թիֆլիսյան սազանդարների քամանչայի, թառի, դափի հանդեպ:

Խաչատրյանի վերջին գործերը լոկ վերիուշ չեն: Յուզեֆովիչի հետ ունեցած գրույցում Տիգրան Մանսուրյանը այդ երկերը գնահատել է հետևյալ կերպ. «Արամ Խաչատրյանի 3 մենանվագ սոնատներն, ըստ իս, վարպետի նոր խորըն են, բացառիկ խոր բովանդակություն ունեցող երաժշտություն»<sup>6</sup>:

6. Վ. Խոզեֆովիչ, Արամ Խաչատրյան, ստ. 243.

Ալտի սոնատը, որի մեջ առկայժում է «Սարի գյալին» ժողովրդական երգը, կոմպոզիտորի «կարապի» երգն էր: Նա վախճանվեց 1978 թ. մայիսի 1-ին Մոսկվայում...

Անհավատության տարիներին, երբ ավերում էին հերթական եկեղեցին, մի հավատավոր կին փլատակներից փրկել էր Փրկչի սրբապատկերը և իր կյանքը վտանգելով՝ այն թարուն պահում էր մեջքին կապած: Տարիներ անց, նրան հարցրել էին, թե ինչպես է նա կարողացել այդրան ժամանակ պահել սրբապատկերը: Նա պատասխանել էր. «Այդ ես չեմ պահում սրբապատկերը, այլ նա էր ինձ պահում»:

Ահա այդպիսին է Խաչատրյանի արվեստի համար իր ժողովրդի երգը, որն Արիադնեի թեյի պես, փոքրիկահոյզ հյուսիսի տնակները կապող պարանի պես պահպանեց լյանքի արհավիրքներից, փրկեց նրա արվեստը:

Ցուցեֆովիչը մենագրության մեջ բերում է ամերիկացի երաժշտագետի մի հասկացություն՝ «Khatchaturianconsciosus», որով նա բնորոշում էր ամերիկացիների կողմից կոմպոզիտորի երաժշտությունը գիտակցելը, ըմբռնելը: Արամ Խաչատրյանի արվեստը քարձր են գնահատել նաև իր արվեստակիցները: Շոստակովիչը գրել է. «Մեր կոմպոզիտորներից առաջինը նա կարողացավ անվիճելի համոզականությամբ քացահայտել Խորհրդային Արևելքի երաժշտության սիմֆոնիզացիայի քազմապիսի հնարավորությունները՝ դրամատիկական տուր վիճակներ, հայրենասիրական գաղափարներ, հոգեկան խոր ապրումներ»<sup>7</sup>: Խաչատրյանի ստեղծագործությունները կատարել և կատարում են սկսած Երեխաներից մինչև աշխարհահոչակ երաժշտներ: Որպես դիրիժոր, հեղինակային համերգներով Խաչատրյանը հանդես է եկել Հայաստանում, Անգլիայում, Շապոնիայում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում: Նրա հաղթարշավը շարունակվել է Լատինական Ամերիկայում, Բելգիայում, Նորվեգիայում և այլուր:

Խաչատրյանը նաև մեծ մանկավարժ էր: Մոսկվայի կոնսերվատորիայում, նրա բազմազգ դասարանում ուսանել են ճապոնացի Նորուտ Տերահարան, ուսմինացի Անատոլ Վիերուն, կուրացի Լոպես Խորխեն, ուկրաինացի Բոգդան Տրոցյովը, Անդրեյ Եշպայը, Էդգար Հովհաննիսյանը. Միքայել Թարիկերդիկը, Էդվարդ Խաղագործյանը և ուրիշներ: Վարպետն ասում էր. «Ի՞ն աշակերտներն իմ երկրորդ կյանքն են...»:

Խաչատրյանն իր վերջին հանգրվանը գտավ Երևանի Պանթեոնում՝ Կոմիտասի, Սարյանի, Խսահակյանի և այլ մեծերի կողքին: Սակայն նրա սիրտը շարունակում է քարախել իր երաժշտության մեջ:

7. Մ. Հարությունյան, Ա. Բարսամյան, Հայ երաժշտության պատմություն. Եր., 1996, էջ 294:

«Խաչատրյանի երաժշտությունը լսելը նույնն է, ինչ որ սեփական սրբագիր բարձրախունը, – գրում է լիբանանցի երաժշտագետ Դակրուքը: – Հենց այդպիսին էլ պետք է լինի մեր երաժշտությունը»: «Խորհրդային Արևելքի երաժշտության համար Արամ Խաչատրյանը պատուիան բացեց դեպի երաժշտական մշակույթի լայն աշխարհը» (Կարա Կարաև): Իսկ հնդիկ Նարայան Մենոնը գրել է. «Եվրոպական արտահայտչամիջոցներով երաժշտություն հորինող և փառքի ծգտող ասիական երիտասարդ կոմպոզիտորների համար Արամ Խաչատրյանի արվեստը, նվաճումները նման են փարոսի լույսի»: Այս խոստովանությունները ևս վկայում են Խաչատրյանի արվեստում ազգայինի և համամարդկայինի ներդաշնակության մասին:

Բառափոխելով Վազմերին տրված Կոմիտասի գնահատականը, իրավամբ կարելի է ասել, որ Արամ Խաչատրյանը «Հայաստանին ազգային երաժշտություն տվեց, իսկ օտարներին՝ դաս...»:

## ՄՊԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՍՏՐԱԴԻՎԱՐԻՈՒՄ

Տարիներ առաջ ինձ բախտ է վիճակվել տեսնել և լսել Արամ Խաչատրյանին իրեւ դիրիժորի, նաև հանդիպել ու գրուցել նրա հետ: Կոմիտասի անվան կոնսերվատորիայի մի լսարանում կոմպոզիտորը հարցուի փորձ էր անում ուսանողներին, եթաքրքրվում մեր նվագով, ճաշակով, երազանքներով: Սակայն թողենքը այդ անպանույց լսարանը և նոովի տեղափոխվենք Օլմպոս, որ միայն մեծերն են հանդիպում, և դիտենք հեռվից: Այստեղ գագաթի և ստորոտի միջև ընդիմանուրը նրնոյրտն է՝ ստեղծագործական բերկրանքի, մանկական անմիջականության, որը հատուկ է հանճարներին:

Նման հանդիպումներով հարուստ է Խաչատրյանին նվիրված մենագրությունը՝ գրված Նյու Յորքի «Sphinx Press» հրատարակչության պատվերով: Հերինակը՝ «Նուգեֆուսիչը, շփվել է կոմպոզիտորի հետ նրա կյանքի վերջին տարիներին, գրի առել հարցագրույցները, գումարել իր դիտարկումներին ու ամփոփել գրքում (մինչ այդ լույս էր տեսնել «Գրույցներ» ականավոր կոմպոզիտորի հետո) գիրքը»: Գյորեի ու Էքերմանի գրույցները հիշեցնող նոր գիրքը ընդգրկում է Խաչատրյանի հաղբարշավը՝ առաջին քայլերից մինչև, անմահություն: Կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործական վերելիք «կադրերը» առկայօնում են ընթերցողի աշքերի առջև:

Մենագրության մեջ լուսաբանվում է Խաչատրյանի ստեղծագործական հասունացման ընթացքը, արծարծվում են պատմական պայմանները, երբ իշխող գաղափարախոսությունը ներխուժում էր, խաթարում ստեղծագործական մտքի թոհքը, պահանջում գովերգել խորհրդային ապրելակերպը: Սակայն ոչինչ չէր կարող ընկնել Խաչատրյանին: Համատարած քառին ու խավարին, պատերազմին կոմպոզիտորը հակադրում էր իր հնչյունային վեհ «տաճարները», ոիրմ ներարկում այս անոիրմ աշխարհին: Եվ մեկը մյուսի հետևից «Ժայռում» էին նրա գլուխգործոցները՝ դաշնամուրի, ջուրակի, թավշուրակի կոնցերտները, «Գայանե» և «Սպարտակ» բալետները, պատերազմի ոլքերգործունը և դառը բերկրանքն արտահայտող «Զանգով սինֆոնիան», որում «Ուսկան ախսպեր» սրտակեղեք երգը միահյուսված է Աներ դատաստանը հիշեցնող լատինական խորավին: Որքա՞ն գեղեցիկ է ասել զմայլված ամերիկացին: «Եթե լույսը, անաղարտ լույսը վերածուես հնչյունների, ապա դրանից ծնված երաժշտությունը կլիմի Խաչատրյանի երաժշտությունը»: Այդ լույսն էլ է Արևելքից ծագում: Խաչատրյանի պատմական առաքելությունն էր արևելյան երաժշտությունը ներմուծել համաշխարհայինի մեջ: Խաչատրյանը «խաչասերեց» արևելյան միաձայնությունը եվրոպական քաղ-

մածայնության հետ, ժողովրդական, աշուղական ոսկեղենիկ բնակտորները ձուլեց դասական երաժշտաձևերի մեջ, ստեղծեց մի նոր որակ:

Մարդ և արվեստագետ խաչատրյանի կերպարն ամբողջանում է հայրենական և արտասահմանյան գործիչների առնչությունների, համագործակցության, հասարակական քազմաճյուղ գործունեության մեջ: Իր «վարակիչ» արվեստով ու հորդորներով նա ուրիշներին էլ մղում էր արարելու: Արտիստիկ խառնվածքի տեր էր և Վագների պես պահանջ ուներ «արվեստավորելու» շրջապատը, կյանքն ապրելու գեղեցիկի օրենքներով: Չերմ խոսքով ոգևորել գիտեր երիտասարդներին: Երբ Ղազարոս Սարյանն իր տաղանդավոր սանին ներկայացրեց Խաչատրյանին, նա անմիջապես քաջալերեց: «Տիգրան Մանսուրյան՝ որքա՞ն լավ է հնչում հայտագրի համար»: Խաչատրյան-երևույթն ուսումնասիրող Յուզեֆովիչը հույց արժեքավոր է համարում Մանսուրյանի մի հատկանշական դիտարկում: «Չատերն են մեղադրել նրան սնափառության մեջ: Նրանք հաշվի չին առնում, որ դարեր շարունակ ճճված նման մի ազգի մեջ, որպիսին մերն էր, մի ժողովրդի, որն իր գեներում կրում էր ազատագրվելու անհագ ծարավը, պիտի որ հայտնվեր հենց այդպիսի մի արվեստագետ, որպիսին էր Արամ Խաչատրյանը, և այդպիսի հաղթական, կենսասեր և այլպիսի, երեւ կուգեք, փառասեր...»: Եթե Չեխովը կոչ էր անում մարդուն օրեցօր, կարիլ առ կարիլ իր միջից դուրս մղել ստրուկը, ապա Խաչատրյանի ազատատենչության «փննդորդ ալիքի» վրա վեր խոյացած «Սպարտակը» ազատության կոչ է համայն մարդկությանը: Պատահական չէր ասում բալետմայստեր Պ. Գուսկը. «Սենք սպասում ենք ձեր նոր գործին, ինչպես մանանա՝ երկնքից»: Եվ ասածը կարող է վերաբերել ոչ միայն «Սպարտակին»... Խաչատրյանին սպասում էին ամենուր՝ ԽՍՀՄ-ի, Գերմանիայի, ճապոնիայի, ԱՍԽ-ի և այլ երկրների սիմֆոնիկ նվագախմբերը, աշխարհի բոլոր ծագերում փափագում էին լսել նրա հեղինակային համերգները, և նա հասցեց հանդես գալ 42 երկրներում: Նրան սպասում էին ԽՍՀՄ կոմպոզիտորների միությունում, որի երեսնմի դեկավարն էր, Գերազույն խորիրդի նիստերում՝ իրեւ Հայաստանի պատգամավորի, քատրոնների, Ֆիլմերի պրեմիերաներին, որոնց երաժշտության հեղինակն էր: Խաչատրյանին սպասում էին սաները, պատասխանի, խորհուրդների էին սպասում քազմարիկ նամակագիրներ: Կտավը ձգած՝ Սարտիրոս Սարյանը պատրաստվում էր նկարել մի նոր դիմանմկար, այս անգամ՝ մագերը սպիտակած կոմպոզիտորի: Նրան սպասում էին ջութակահարներ Օյստրախը, Կոզանը, դաշնակահար Օքորինը, դիրիժորներ Խայկինը, Ռոժենստվենսկին, քաջութակահար Կնուշևիցկին: Անհնար է բոլորին քարեկել: Լինում էր նաև, որ ինքը՝ Խաչատրյանն էր սպասում, և ահա այդպիսի մի դեպք:

Կոմպոզիտորը պետք է հանդիպեր սյուրուալիստ նկարիչ Սալվադոր

**Դալիին:** Չաղաքից դուրս կանաչ դաշտում մի տարօրինակ դյոյակի հասպ, որի դուռը հազիվ գտավ: Ներ անցրից մտիկ տվեց սպասավորը, ժայթքեցին «Սուսերով պարի» կայծկլտող հնչյուններն ու հեղինակի գրի խին «քափիվեցին», մի դուռ բացվեց, դուրս պրծավ սուսերով մեկը՝ լրիվ մերկանդամ պարելով, պտտահողմի պես մոտեցավ կոմպոզիտորին ու դիմացի դրոնով անհետացավ... Սպասավորն ազդարարեց: «Հանդիպումն ավարտված է»: Սալվադոր Դալին էր պարում: Երիցս ճիշտ էր Բյուֆոնը՝ ոճն ինքը՝ մարդն է:

Պատահել է, որ ինքը՝ Խաչատրյանն է պարել: Ամերիկահայ դաշնակահար Շահան Արծրունին խնդրել էր կոմպոզիտորին մեկնարանել դաշնամուրային գործերից մեկը: Սի քանի խոսրից հետո Խաչատրյանը հանեց բաճկոնը և սկսեց պարել:

Խաչատրյանի խոստովանությամբ՝ «Սուսերով պարը» հորինել է մեկ շնչով, 11 ժամում՝ բալետի պարտիտորն ավարտելուց հետո, տեղի տալով քեմադրող Ն. Անիսիմովայի և պարողների խնդրանքին: Պրեմիերայից հետո պարը տարածվեց աշխարհով մեկ: «Ենց գրեթե բոլոր նվազարաններով. հեղինակն այն լսել է նոյնինսկ մի խոլ գյուղում... սղոցով նվագելիս: Հայտնի է նաև խտալացի նկարիչ Վ. Լոմնիցկու «Սուսերով պար» կոմպոզիցիան: Յաշա Հայֆեցը, ի թիվս մյուս համարների, փոխադրել և կատարել է «Սուսերով պարը» ջութակով: Սղոցից մինչև ջութակագործների արքա Ստրահիվարիուսը. ահա աշխարհի ամենատարածված ստեղծագործության շառավիղը»:

Հիշյալ մենագորության մեջ հիշատակվում են Խաչատրյանի համով՝ պումբները թելգիայի թագուիի Ելիզարեթի, Վազգեն Վեհափառի, Հոռմի պապի, արքաստագետներ Իգոր Ստրավինսկու, Արքուր Ռուբինշտեյնի, Հերբերտ Ֆոն Կարայանի և այլ մեծերի հետ: Խաչատրյանը հատուկ ջերմությամբ է հիշում Յան Միքելուսիմ, որին տեսել է Ֆինլանդիայում հյուրախաղերի ժամանակ: Հյուսիսի և Հարավի հսկաները ողջագործեցին: Շվեյցարիայում Խաչատրյանն ու իր կինը՝ կոմպոզիտոր Նինա Մակարովան, իյուրընկալվել են Չարլի Չապլինի տանը: Խաչատրյանին հետաքրքիր էր նաև Չապլինի երաժշտական ջիղը, «ասկայն Չապլինը բացեց դաշնամուրը եւ, զիտես ինչու, չնվագեց»: Վերջում դերասանը ձայնադարանից հանեց Խաչատրյանի ջուրակի կոնցերտի սկավառակը և խնդրեց հեղինակի ընծայագիրը:

Աննոռանալի էր նաև հանդիպում «Ում մահն է գուժում զանգը» վեսի հեղինակ Հեմինգվուեյի հետ, որի ականջին ևս հասել էին «Զանգով սիմֆոնիայի» կենարար ղողաճները: Խաչատրյանի հեղինակային համերգը Հավանայում գրողի կինը՝ Մերին, բնորոշեց իրևն «երկու հրաշք»: Մեկը Հավանայում գրողի կինը՝ կինը՝ Մերին, բնորոշեց իրևն «երկու հրաշք»: Մերաժշտությունն էր, մյուսը՝ Հավանայի սիմֆոնիկը՝ Խաչատրյանի ղեկա-

Վարությամբ: Հեմինգվուեյը, որը Զմյուտնիայի նավահանգստում 1922-ին տեսել էր թուրքերից մազապործ վիրավոր հայերին, այժմ կարող էր տեսնել վերածնված հայ ժողովրդի զավակին, որը Նարեկացու պես կարող էր ասել. «Ես՝ զարկված, ՀԱՌԹՈՂ եմ կրկին»...

## ԱԼՄՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1911-2000)

**Պ**ատմության ընթացքում Արևելի և Արևմուտքի քաղաքակրությունների միջև տեղի են ունեցել և շարունակվում են երկակի պողոցներ՝ ավերճան և արարման: Ավերում են, պառակտում են զավթիչները, արարում և հաշտեցնում են արվեստագետները:



Արևելի և Արևմուտքի մերձեցման, ներդաշնակության գործում ամենանշանակալի ներդրումներից է Վոլֆանգ Գյորեի «Արևմտա-Արևելյան դիվանը»: Գյորեին է պատկանում «համաշխարհային գրականություն» հասկացությունը, որի հանճարեղ նույշներից է հենց իր իսկ «Դիվանը»:

Անդրադառնալով «Դիվանին»՝ բանաստեղծը գրել է. «Խմ մտադրությունն էր ուրախությամբ կապել Արևմուտքը և Արևելը, անցյալը ներկային, պարսկականը գերմանականին... հասկանալ մեկը մյուսի օգնությամբ<sup>1</sup>:

Սինչդեռ հիշյալ երկու բևեռների միջև ավերիչ պրոցեսներն ավելի արագ էին ընթանում, քան փոխսնբուննան և ներձեցման: 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին փիլիսոփա Վլահիմիր Սոլվյովը, բանաստեղծ Ալեքսանդր Բլակը և հատկապես Օսվալդ Շիննելերը (Վերջինն իր «Եվրոպայի մայրամուտը» աշխատության մեջ) գուժում էին արևմտյան քաղաքակրության կործանումը Արևելի կողմից: Եվ ասպարեզ ելան մտահոգ գործիչներ, որոնք իրենց կյանքը և արկեստը նվիրեցին համայն մարդկության հաշտության, համաշխարհային արժեքների պահպանման, շենացման և ապագային փոխանցման գործին:

Այդպիսին էին Ալբերտ Շվայցերը, Նիկոլայ Ռեբիխը, ջութակահար Յնեհուի Մենուկինը, գրող Հերման Հեսսեն, լիբանանցի գրող Խալիլ Ջըրուանը, Արամ Խաչատրյանը, հնդիկ սիրարահար և երգահան Ռավի Շանկարը և ուրիշներ:

Այս գործնարացում իր ուրույն տեղն ունի նաև ամերիկահայ կոմպոզիտոր Ալամ Հովհաննեսը:

Գյորեի ուսուցիչ Հերդերը համայն մարդկությունը դիտում էր որպես մի

1. Л. М. Кессель, Гете и Западно-восточный диалог, стр. 29.

տիեզերակունչ տավլո՛ մեծ վարպետի ձեռքում, իսկ յուրաքանչյուր ժողովուրդ փիլիսոփային թվում էր յուրովի լարված մի լար՝ այդ վիրխարի տավլիդի վրա: Եվ Հերդերը ըմբռնում էր այդ տարրեր հնչյունների համապարփակ ներդաշնակուրյունը<sup>2</sup>: Այս իմաստով, Ալան Հովհաննեսի «տավլող» և փնջված է քազում «Ժողովուրդների ճայներից» հայկական, կորեական, հնդկական, չինական, ճապոնական, դրդգական և այլն: Լինելով հայոց ցեղասպանությունից փրկված աղանացի Հարուրյուն Զարմարչյանի և շոտլանդուի Մաղլեն Սրորի զավակը՝ Ալանը, քաջ գիտակցում էր խաղաղության, ազգերի բարեկամության անհրաժեշտությունը և արժեքը: Եվ սա չէր կարող չագել նրա աշխարհայացքի և ստեղծագործական առանձնահատկության վրա:

Հայաստանում Ալան Հովհաննեսի արվեստի հանդեպ հետաքրքրությունը գնալով մեծանում է: Դեռ 1965 թվականին, որպես «Անդրկովկայան գարուն» փառատոնի հյուր, կոմպոզիտորն այցելել է Երևան: Մինչ այդ, 1962 թվականին Հայաստանի ֆիլիարմոնիայի նվազախումբը կատարել էր նրա «Ստորոտմներ Օրփեոսի մասին» սիմֆոնիկ պոեմը՝ Օհան Դուրյանի գլխավորությամբ: Այսօր Երևանում գործում է կոմպոզիտորի անունը կրող կամերային նվազախումբը՝ Սերուժան Սիմոնյանի դեկավարությամբ: Ալան Հովհաննեսի երաժշտության լավագույն մեկնարաններից է Հայաստանի պետական կամերային նվազախումբի դեկավար Արամ Ղարաբեկյանը, ինչպես նաև դիրիժոր Ռուբեն Ասատրյանը, որի դեկավարությամբ Հայաստանի ֆիլիարմոնիկ նվազախումբը հաջողությամբ կատարեց «Ան» սիմֆոնիան՝ պատմական մայրաքաղաքի 1000-ամյակին նվիրված հանդիսությանը:

Կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության մասին տեղեկություններ ենք քաղում նաև Ցիցիիլա Բրուտյանի «Սփյուռքի հայ երաժշտմերը» գրքից (Երևան, 1968, էջ 347-371), արվեստագիտության դրկտոր Լիլիթ Երնջակյանի հոդվածից (Հայկական Հանրագիտարան, Երևան, 1980, էջ 556), 1993-ի սեպտեմբերի 2-ին «Հայրենիքի ճայն» թերում իրապահկված Այրին Փափազյանի բովանդակալից հարցազրույցից և այլն:

Ալան Հովհաննեսը ծնվել է 1911 թվականի մարտի 8-ին, Մասաչուսեթս նահանգի Սոմերվիլ քաղաքում: Ալանի երաժշտականությունը վառ կերպով դրսևորվել է դեռ մանկուց: Հորինելու փորձներ սկսել է 7-8 տարեկանից: Ավարտելով տեղի քոլեջը՝ պատանին ընդունվեց Բոստոնի Նյու Ինգլենդ կոնսերվատորիա՝ Ֆրեդերիկ Կոնվերսի ստեղծագործական դասարանը, դաշնամուրի դասեր ստացավ Արելահյա Պրոլետորից և Հենրիխ Գերհարդից: Հետագայում Ալանը կատարելագործվել է նաև անվանի կոմպոզիտոր Բոգուսլավ Մարտինովի դեկավարության ներքո: 1930-ա-

2. Անդ, էջ 27:

կան թթ. նրա անունը մերքընդերք սկսեց երևալ Բոստոնի փիմֆոնիկ նվագախմբի համերգների հայտագրերում: 1933-ին Հովհաննեսն արժանանում է Սամուել Էնդիկոստի նրգանակին, նրա սիմֆոնիան կատարում է Նյու Ինգլենդի կոնսերվատորիայի նվազախումբը՝ Ուղես Գուդրիջի ղեկավարությամբ: Խակ 1939 թվականին բրիտանական ռադիոնը ներկայացն նվազախումբը կատարեց Ալանի նոր սիմֆոնիան՝ Լեսլի Հյուարդի ղեկավարությամբ: Երածշտագետ Ֆիդլիս Բրուտյանն իր ակնարկում նշշրերում է կատարել «Նյու Յորք սան» թերթից (1939, սեպտեմբերի 23): Դիրիժոր Հյուարդը գրել է. «...Նրա երածշտուրյունը գորեք է, առնական և երածշտական տեսակետից շատ ամբողջական, նա համարձակ է, չի հեռանում երածշտական արվեստի հիկական ակունքներից, չի երապուրվում քրոնատիզմներով, որով այժմ շատ են գայրակղված երիտասարդ երաժիշտները: Նա շատ տաղանդավոր է և, անշուշտ, դեռ շատ կստեղծի ավելի նշանակալից երկեր»<sup>3</sup>:

1940-ին Երիտասարդ կոմպոզիտորը վերանայեց իր հայացքները, ստեղծագործական առաջին փուլը և իրեն բնորոշ պահանջկուտուրյանք ոչնչացրեց մինչ այլ ստեղծած մեծ թվով գործեր։ Սա տեղի ունեցավ Ֆինլանդիա կատարած իր այցելությունից հետո։ Նպատակն էր խորոշյանք ուսումնասիրել մեծն Յան Միքելուսի ստեղծագործական ժառանգությունը, որի ազդեցությունն ակնհայտ էր, և որի համար քննադատում էին Ալանին։ Օրինակ, Ալանի 1-ին սիմֆոնիայում մեծապես զգացվում է Միքելուսի «Բաղդասարի Խճջույքը» սյուիտի արհայիկ ոճը, գործիքավորումը, դիատոնիկ և օրոնմատիկ լատերի գուգակցումը և այլն։

Ստեղծագործական ճգնաժամից Հովհաննեսը շխուալրվեց և ներշնչանքի նոր աղբյուրներ գտավ, այն է՝ հայկական և արևելյան երաժտության դարավոր և անսպառ պաշարները: Այսպես, նա խորացավ հնդկական, ճապոնական, չինական, կորեական և այլ մշակույթների ոլորտը: Անշուշտ, այս որոշնան մեջ թիվ դեր չվարդաց Ալանի մասնակցությունը Քոստոնի երիտասարդ արվեստագետների խմբում, որոնք հոգնել էին Արևմուտքի ուրբանիստական, մերձենայալիքան մշակույթից և հանգրվան էին փնտրում Արևելյի կուսական մշակույթում: Այս ծանապարհին Ալանը գտավ Կոմիտասին, իսկ Ուորըրքառնի հայկական եկեղեցում որպես երգեհոնահար աշխատելու ընթացքում նա իր համար բացահայտեց հայկական շարականների ու տաղերի կենսական ուժը: Հետագայում «Ամերիկա» հանդեսը պիտի գրեր. «... նա ամերիկյան ամենաականավոր ստեղծագործողներից մեկն է: Շատ արագ և զատ ամենայնի նույնափառ հեշտությամբ նա գրում է կոնցերտներ, երգեր, խմբերգային ստեղծագոր-

<sup>3</sup> Անօհական Թորության, Սփյուռքի հայ երաժշտները, Երևան, 1968, էջ 348-349:

ծուրյուններ: Նրա երկերը, շատ պարզ թվալով, իրենց մեջ միահյուսում են միջնադարյան եվրոպական և հնագույն արևելյան երաժշտության տարրերը»:

Ծագումով հայ ամերիկացի կոմպոզիտորը 30 տարեկանից դիմեց հայ երաժշտության ակունքներին և շատ բան քաղեց այնտեղից, ինչպես ինտոնացիոն-մեղեդային կառուցվածքի, այնպես էլ գրության ձևի տեսակետից<sup>4</sup>: Ալան Հովհաննեսի արվեստը արևելյանի և արևմտյանի մի այնպիսի աննախադեպ միաձուլում էր, որ հաճախ ոժվար է զուգահեռներ անցկացնել, տիպարանական բացահայտումներ կատարել: Այս հանգամանքը ևս պատճառ է դարձել երաժշտագետների տարրեր, երբեմն իրարամերժ գնահատականների: Օրինակ, տարաշխարհիկ տարրի առկայության վերաբերյալ Օյին Դատիկիսը Ալանին համարել է «ամենաինքնատիպ և տարաշխարհիկ արտահայտվող ամերիկյան կոմպոզիտորներից մեկը»<sup>5</sup>: Մինչդեռ 1961-ի մայիսի 10-ի «Մյունիսեն Սերկուրի» թերթում կարլ Ռայնհարդ Վիտտենը գրել է. «...Ալան Հովհաննեսը, անշուշտ, մեկն է ամենաինքնատիպ երաժշտությունը... մի երգահան, որ գիտցավ բոլոր ոճերի միջով գտնել իր ինքնատիպ ճանապարհը: Նա իրեն թույլ է տվել կրել միայն տարաշխարհիկ ֆոլկլորի որոշ ազդեցություն: Նրա երաժշտությունը պլաստիկ ուժ ունի, բխում է իր իսկ ինքնատիպ արտահայտչականությունից... Դա մի վկայություն է զորեղ ստեղծագործական անհատականության»<sup>6</sup>:

Այս առիթով կոմպոզիտորը խոստովանել է, թե չնայած ոժվար է միշտ նոր բան փնտրել, այնուամենայնիվ, ինքը չի ցանկանում կրկնվել:

Ժամանակին Էկինկտիկայի (քաղմանության) կողմնակից էր Կամի Սեն-Սանսը, անշուշտ, եթե այն օրգանական միաձույլ է և ազդեցիկ: Իսկ թե որքանով է ազդեցիկ Ալան Հովհաննեսի բազմաոճ, գումագեղ երաժշտությունը, այդ մասին կարող է եղբակացնել յուրաքանչյուր կատարող և ումկնիր:

Ալան Հովհաննեսի արվեստն առավել ըմբռնելու նպատակով հարկ է անդրադարձնալ բազմանությանը և արևելյան մշակույթի որոշ առանձնահատկություններին: Իբրև ստեղծագործական մեթոդ՝ բազմանությունն առավել զարգացավ 20-րդ դարի արվեստում: Այդ մեթոդը կիրառող կոմպոզիտորները իիմնականում միահյուսում էին թեկութեալ տարրեր դարաշրջանների, սակայն նույն քաղաքակրթության տարրերը, նվաճումները: Օրինակ, Արվո Պյարտի «Կոլաժը» (BACH)՝ Բախի անվան տառերին

4. Անդ, էջ 355:

5. Անդ:

6. Անդ, էջ 364:

համապատասխան ձայնանիշերի հիման վրա, Լուչանո Բերիոյի «Կոլաժ-սիմֆոնիան», որտեղ կոմպոզիտորը նպատակ է ունեցել միահյուսել անցյալը և ներկան, Մանրի, Դերյոսիի, Ստրավինսկու ոճերը: Իսկ ահա Ալֆրեդ Շնիտկեի «Moz-Art a La Haydn» (*«Մոց-Արտ՝ Հայնդի ոճով»*) ստեղծագործության այս խոսուն անվանումը բազմանության մի խորհրդանիշ կարելի է համարել: Հայ կոմպոզիտորների երկերից կարելի է նշել Էնգար Հովհաննիսյանի Չուրակի, կլավեսինի և լարայինների համար գրված «Բարոկկո-կոնցերտը», Տիգրան Մանսուրյանի «Պարտիտոր», «Պրելյուդ»՝ նվազախմբի համար: Նորաստեղծ գործերից է Միքայել Կոլժայանի «Գրույց Յոհաննեսի հետ» ջութակի կոնցերտը, որտեղ հայկականը միաձուլված է Բրամսի Չուրակի կոնցերտի, Բախի 2-րդ Բրանդենբուրգայան կոնցերտի բնանաներին:

Ինչ վերաբերում է Ալան Հովհաննեսին, նա զուգացել է ոչ միայն տարրեր ժամանակների, այլև տարրեր քաղաքակրթություններում բյուրեղացած ոճերը, ժանրերը։ Լինելով Արևելքի տարրեր երկրներում կոմպոզիտորը ուսումնասիրել է նրանց անցյալի և ներկայի արվեստը։ Ծապոնիայում Հովհաննեսը խորացել է 8-րդ դարում ծևափորված շինական պալատական երաժշտության ազդեցությամբ ստեղծված հագակու (որ նշանակում է նրբագեղ երաժշտություն) կոչված պարային ներկայացումների ուսումնասիրության մեջ։ Երաժշտական հանրագիտարանից տեղեկանում ենք, որ «իս սկզբանե այդ հասկացությունը նշանակում էր մայրամաքային երաժշտա-քատերական արվեստ։ Հետագայում Հազակու անվամբ կոչում էին ազգային ոճի բոլոր ստեղծագործությունները, որոնք ժառանգաբար կապված էին հարևան երկրների նշակույթի հետ»<sup>7</sup>:

Հազակու ժանրը ոճերի մի խառնարան էր, որ կազմված էր Չինաստանից ներմուծված և իր մեջ ներառած Հնդկաստանի, Տիրեթի, Սամարյանդի, Բուխարայի, Կորեայի մշակույթի տարրեր: Շապոնագետ Յոփանը նշում է, որ հազակու պարային ներկայացումները, այսինքն՝ նվազախմբի որոշակի խմբով նվազակցվող պարերը, կոչվում էին «քուգակու»: Բուգակուի նվազախումբը բաղկացած էր միայն փողային և հարվածային նվազագարաններից, որոնք լավագույն ընդգծում էին պարային ոիկորը: Հաճախ բուգակու պարերին նախորդում էին նախանվագներ, իսկ հետո՝ միջնանվագներ, որոնցում ընդգրկում էին նաև լարային նվազարաններ: Այս ավանդույթը պահպանվել է մինչև մեր օրերը<sup>8</sup>: Հավանաբար բուգակուի այդ ազդեցությունն է պայմանավորել Հովհաննեսի ընդգծված սերը Վերոնչյալ գործիքային կազմի հանդեպ, ինչպես օրինակ, «Անի» սիմֆոնիայում՝ գրված միայն փողայինների և հարվածայինների համար (բացառությամբ այլ գործիքային կազմի հանդեպ)։

7. Музыкальная энциклопедия, М., 1982, т. 6, стр. 631.

8. Искусство Японии, М., 1965, стр. 26.

բյուն է կոնտրարասը, որ ծովագում է բասերին): Առհասարակ, մշակութային փոխներքափանցման գործում հարց է ծագում, թե ո՞ր կողմն է գերիշխում: Ալան Հովհաննեսի երաժշտական մտածողությանը ավելի բնորոշ է համադրումը, քան հակադրումը, ստատիկան, քան դինամիկան, նկարագրողականությունը, հայեցողականությունը, մեղիտացիան, քան հերոսականությունը, ողբերգականությունը: Ավելի հոգեհարազատ է «սյուիտային», ավարտուն պատկերների կոնտրաստային շարքը, քան «սոնատային ալեգրո» ձևին հասուկ սրընթաց զարգացումը, թեմաների բախումից, տրոհումից բխող պայքուցիկ «շղթայական ռեակցիան», այսինքն՝ բերիովնեան սիմֆոնիզմը: Ցոփանը գրում է. «Հագակու երաժշտության մեջ սոնատային ձևը կազմավորող տարրերը շատ քիչ են զարգացած: Երաժշտության բնույթը, ընդհանուր առնամբ, բավական միապաղատ է... հակադրությունները բույլ են...»<sup>9</sup>: Կարծում ենք, այս ամենն իր դրոշմը քողել է Ալան Հովհաննեսի երաժշտական մտածողության վրա: Ավելացնենք նաև, որ կոմպոզիտորի ստեղծագործությանը բնորոշ չեն պաուզաները, մի քանի, որի համար ժամանակին Չայկովսկին դիտողություն էր արել երիտասարդ Գլազունովին:

Հեկավարվելով Ալեքրու Շվայցերի տեսությամբ՝ Ալան Հովհաննեսին կարելի է դասել «գեղանկարիչ»-երաժիշտների շարքը, իսկ նրա երկերի գգալի մասը՝ Կոմիտասի խոսքով կարելի է բնորոշել որպես «ձայնանկարներ»:

Բավական է նշել նրա գործերի ծրագրային անվանումները՝ «Ծաղկած դեղձենին», «Հին ծառը», «Արջունա», «Վանա լիճ», «Արցախ» և այլն:

Հայտնի է, որ ստատիկան, գեղանկարչականությունը բնորոշ են նաև ճապոնական և չինական պոեզիային: Անդրադառնալով կոմպոզիտորի 3-րդ սիմֆոնիային՝ 1960 թվականի ապրիլի 11-ին ճապոնական «Ասախի իվնինգ օյուս» բերքը գրել է, թե «սիմֆոնիայում չկա կոպտության ոչ մի տարր, ոչ մի սրություն»<sup>10</sup>: Այս նրությունը հավանաբար պայմանավորված է նաև մեկ այլ գործոնով: Ժամանակին Առնոլդ Շյոնբերգը նշել է, որ ամերիկյան իրականության մեջ չկա ողբերգականության զգացողությունը, որն այդրան անհրաժեշտ է ստեղծագործողին: Երևի Ալան Հովհաննեսի պարագայում գուգադիպել են ամերիկյան ապրելակերպը և արևելյան հայեցողությունը: Հատկանշական են Էրազմ Ռուտերդամցու խոսքերը, որոնք կարող են բնութագրել Արևելքի շատ արվեստագետներին. «Ես տանել չեմ կարող բախումները այն աստիճան, որ եք սկավի պայքարը, ավելի շուտ կլեմ ճշմարտության կուսակցությունը, քան անդորրը»<sup>11</sup>:

9. Անդ, էջ 38:

10. Ցիցիլիս Բրուտյան, Սվյուտքի հայ երաժիշտները, էջ 359:

Ալան Հովհաննեսի երաժշտության անկոնֆիկտ դրամատուրգիայի պատճառները միայն նշվածները չեն, այլև արևելյան աշխարհայացքին հատուկ ստատիկային, նիրվանային ձգտելու, բայրայիշ ժամանակի անողորդ հոսքից Վեր խոյանալու նղումը: Արևելքում ժամանակի յորովի զգացողության մասին վկայել է նաև լեհ կոմպոզիտոր Գրաժինա Բացկիչը: Մի խումբ լեհ երաժշտների Դեկիում հրավիրել էին ծանոթանալու հնդկական երաժշտությանը: Համերգը սկսվեց երեկոյան ժամը 6-ին: «...Հնչում էր միապաղաղ, անպանույց մի երաժշտություն, որն ստեղծվել էր 2000 տարի առաջ...»: Վեց ժամ անց հյուրերը հրաժեշտ են տվել տեղացիներին: Սակայն կազմակերպիչները տիրել էին, բանզի բվացել եր, թե եվրոպացիք չեն հավանել հնդկական երաժշտությունը: Հնդիկները առաջարկում էին մնալ մինչև համերգի վերջը, այսինքն՝ առավոտյան ժամը 6-ը: Պատկերացնո՞ւմ եք՝ 12 ժամ... Մինչ այդ հնդիկները բացատրում էին լեհերին, որ ջուրակը լավ է նվազակցել «քարլայով», այսինքն թնրուկով, քան դաշնամուրով<sup>12</sup>: «Սուրբ Վարդան» սիմֆոնիայում, հատկապես լարայինների ֆուզաներում, Ալան Հովհաննեսը լայնորեն կիրառել է լիտավլուներ, նաև այլ հարլամածայիններ: Իսկ տեմպի մասին նշել է նոյն երաժշտագետ Յոֆանը, թե հազարու երաժշտության տեմպը դանդաղ է և անընդհատական: Հաճախ այդպիսին են նաև Ալան Հովհաննեսի հնաբույր երկերի տեմպերը:

«Աստվածային երկարածգություններ». Ծուրետի երաժշտությունը բնութագրող Ծումանի այս խոսքերը որոշ իմաստով կարելի է վերագրել և Հովհաննեսի մի քանի գործերին, օրինակ՝ «Սուրբ Վարդան», «Լուսի քառար», «Սուրբ Հեղինե լեռը» սիմֆոնիաներին:

Կոմպոզիտորի գործերում առկա են նաև այնպիսի միաձոյլ դրվագներ, որոնց մասին դժվար է ասել՝ արևելյա՞նն է գերիշխում, թե՝ արևմտյանը: Օրինակ, «Հին ծառը» լարային կվարտետում հայկական մեղեդին հնչում է միապաղաղ նվազակցությամբ, որը հիշեցնում է ճապոնական սյամիսն կմիթրային նվազարանը: Կամ «Լուսի քաղաքը» սիմֆոնիայում նման նվազակցությամբ չինական «պենտատոնիկա» կոչված հնչյունաշարի միջավայրում ճախրում է փոքր ֆլեյտայի հայկական թեման, որ նման է շվիի նվազին:

Նշենք նաև, որ պենտատոնիկա լադը ոչ պակաս հարազատ է Ալան Հովհաննեսին, որքան հայկական լադերը: Ի դեպ, «չինական» կոչված պենտատոնիկա լադը վաղող ի վեր կննցաղավարում է նաև Ծոտլանդի-

11. Л. М. Кессель, Гете и Западно-восточные языки, стр. 29.

12. Г. Бацеевич, Особая примета, М., 1984, стр. 45-47.

այում՝ Ալանի մոր հայրենիքում։ Գուցե այստեղ դեր է խաղացել նաև ժառանգականության գործունը։

Հովհաննեսն իրեն համարում էր «մելոդիկ կոմպոզիտոր»։ Աշխարհը, բնությունն էլ նա ընկալում և անդրադարձնում է որպես երաժշտություն, մեղեղիների հյուսվածք։ Այսպես, զմայված Երևանով, հայրենի լեռնաշխարհով, Ալանը քացականչել է։ «Մեղեղիներ են, հզոր մեղեղիներ։ Մեկը երկարում է, մյուսը տակից գնում, իրար հատում են, միանում, հետո մի ուրիշ վիթխարի մեղեղի է սկսվում։ Հրաշաի պոլիֆոնիա է։ Եվ մեղեղիների միջև հնչում է լուրիքունը... Այսպես պետք է լինի նաև մարդու երաժշտությունը... Կոմիտասը տվել է դրա մեծ օրինակը։ Եվ հիմ հայկական երաժշտության, յոթերորդ դարի մեր դասական մեղեղիների մեջ այս լեռները կան։ Սեր նախնիքը խորապես զգացել են այս սրբազն բնությունը»<sup>13</sup>։

Ալան Հովհաննեսի այս խոսքերը կարելի է վերագրել հենց իր երաժշտությանը, հատկապես «Արքիկ» անունը կրող գալարափողի և լարային նվազախմբի համար գրված կոնցերտին։ Այստեղ յուրաքանչյուր ձայն, մեղեղի իր գիծն ունի, սակայն բոլորը ենթարկվում են մեկ ընդհանուր զաղափարի։ Նման պոլիֆոնիան կոմպոզիտորը համեմատել է տիեզերական մարմինների հետ, «որոնցից յուրաքանչյուրն ունի իր ծիրու... պտղուփում է արևի շուրջը...»<sup>14</sup>։ Գալարափողի կոնցերտի մեղեղիները միանգանայն հայեցի են։ Լարայինների ծգվող դամի վրա նշմարվում են «Անտունի», «Դեկ յաման» երգերի ակնարկումները։ Ի դեպ, «Անտունի» երգը տեսրիվում է նաև «Սուրբ Վարդան» սիմֆոնիայում։ Այստեղ լարայինների դամի վրա գալարափողը «պատմում» է իր տեսած «ծովի», «Են փլած տների» մասին... Գալարափողի կոնցերտը նույն հաջողությամբ կարելի էր անվանել «Հայրենարարադ պատկերներ»։

Ալան Հովհաննեսը հաճախ կիրառում է երկանյան պոլիֆոնիա, նվազախմբի երկու խմբերի տևական երկխոսություն, ինչպես «Սուրբ Հեղինե լեռը» սիմֆոնիայում։ Օգտագործում է նաև միաձայն շարադրանքը՝ «ունիտոն» կամ «օկտավա»՝ սահուն կամ ոիթմիկ հումկու քայլերով, ինչպես «Լույսի քաղաք» սիմֆոնիայում։ Տպափորությունը ցնցող է՝ Եմիլ Վերիանի խոսքով ասած, թվում է, թե լեռները տեղից պոկվել ու քայլում են դեպի քեզ։ Նման մեծակերտ շարժման դասական օրինակներ հանդիպում ենք Հենդելի, Բրուկների և այլ մեծերի արվեստում։

«Լույսի քաղաքը» Ալան Հովհաննեսի ամենադիմամիկ գործերից է, ինչպես նաև «Սուրբ Հեղինե լեռը», որտեղ վառ կերպով պատկերված է աշխարհակործան հրաբխի ժայռքում։ «Լույսի քաղաքը» սիմֆոնիայում նկատվում է Բրուկների, Մալերի սիմֆոնիաների տիեզերականությունը։

13. Ֆիցիլիա Բրուսյան, Սփյուրքի հայ երաժիշտները, էջ 366-367։

14. Անոյ, էջ 367։

Նվազախմբի ակորդային վիթխարի քայլերից հետո, ձգվող ձայների ֆոնի վրա, տրոմբոնի կանչերին արձագանքում են զալարափողը և շեփորը, որոնք ագդարարում են երկնասաւաց, շարականահունց մի մեղեղի: Այսուհետև վողայինների միջև վերսկսվում են հարցական վողսկանչերը, որոնք նմանվում են Չարլզ Այզի «Անպատասխան մնացած հարցը» ստեղծագործությանը: Մյուս կողմից, այդ հարցականները «սեպտիմա», «օկտավա», «նոնա» հեռավորությամբ վերընթաց բոիցները, այսինքն՝ 7, 8, 9 աստիճանի ինտերվալները, իշխեցնում են Բրուկների, Վագների երկերի արտահայտչամիջոցները: Բրուկների 9-րդ սիմֆոնիայի 3-րդ մասը սկսող միստիկ ինտերվալը՝ նոյն փոքր «նոնան» է, իսկ Վագների Տրիստանին խորհրդանշող փոքր «սերստա» բոիչը և դրա լուծումը՝ Տրիստանի սիրո այդ անձնական պոռեկումը, Ալան Հովհաննեսի մոտ տեղափոխված է հանամարդկային, տիեզերական ոլորտ: «Լուսի քաղաքը» եղրափակող ոյուցանական ֆուզան վկայում է, որ Հովհաննեսը հավատարին է իր իդեալին՝ «Հուդա Մակարայնցի», «Փրկիչ» օրատորիաների հերինակ Հենդելին...»

Ինչպես նշվեց, Ալան Հովհաննեսի բազմանությունը բնավ ոճավորում չէ, այլ հաճախ օրգանական միաձույլ սինթեզ: Նրա արվեստն ունի ոչ միայն գեղարվեստական, այլև ճանաչողական մեծ նշանակություն: Այն ոճերի, ժամբերի, արտահայտչամիջոցների, տարբեր քաղաքակրթությունների մի հանրագիտարան է: Այսպես, 1-ին իսկ սիմֆոնիայում զգացվում է Յան Սիրելիոսի, Բրուկների ազդեցությունը: Չինական ոճով, տավիղի միապաղատ, անվերջ կրկնվող նվազակցության ֆոնի վրա ծավալվում է կլառնետի օճազգալի ստորը: Այսուհետև կրկին միահյուսվում են արևելյան դիատոնիկ և արևմտյան բրոնատիկ հնչյունաշարերը: Հանկարծ, զուգահեռ կիխնտաներով՝ պայքարուի պես, ներխուժում են պղնձյա փողայինները և հարվածայինները: Նոյնպիսի պայքարուիկ ուժգնությամբ ընդհատվում է և ֆիետայի մենախոսությունը: Եկ այդպես շարունակ՝ մինչև 1-ին մասի վերջը, որն ավարտվում է, ավելի ճիշտ անսպասելիորեն՝ «կախսվում» է երկու կլառնետների մաքոր «կվարտա» ինտերվալի վրա: 2-րդ մասը ընարական մի ինտերմեցցոյ է: Այն սկսվում է հորոյի մեղեդիով, որը հիշեցնում է Վերածննի շրջանի իտալական ծաղկավետ մեղեդիները, մասնավորապես՝ Վինչենց Գալիլեյի ոճը: Հորոյին արձագանքում են կլառնետը, ֆագոտը: Այնուհետև տավիղի կրկնվող նվազակցությամբ և լարայինների «դամի» վրա մի նոր զրույցի են բռնվում փայտյա փողայինները, որն ավարտվում է ավելի աշխույժ, գնայուն նվազակցությամբ: Երածշտական այս «աղյունական» պարտեզում կրկին հայտնվում է գայթակողող օձի կերպարը: Այսինքն՝ կրկին կլառնետի օճազգալի հնչյունները, որն ավարտվում է վերջին մասը, որի մեջ շարունակվում, ուզ և գուսերի դրդուունվ սկսվում է վերջին մասը, որի մեջ շարունակվում, լարգանում են 1-ին մասի իրադարձությունները: Սիմֆոնիան ավարտ-

վում է հենդելյան մեծակերտ ֆուզայով: Եվ, ինչպես առաջին մասում, աճ-  
րող սիմֆոնիայի վիթխարի հնչյունային զանգվածը, այստեղ ևս, ինչպես  
մի մազից՝ կախվում է երկու նուրբ կատարութերի մաքրությունը «կվարտա» ին-  
տերվալի վրա: Կարծես հարցը մնում է բաց, անպատասխան: Տեղին է  
մտարերել Ավետիք Խաչակյանի հետևյալ բանատեղծությունը.

Տիեզերքն այս անսահման  
Իր ծանրությամբ ահագին  
Կախված է սոսկ մի մազից,-  
Եվ այդ մազն է իմ հոգին:

Կավարատա Յասոնարին ասում էր. «Մեկ ծաղիկը ավելի շատ պատ-  
կերացում է տալիս ծաղիկի մասին, քան հարյուր ծաղիկը»: «Մեկ հնչյունը  
ավելի հնչյուն է, քան հարյուր», կարող էր ասել 20-րդ դարի նորարար  
Անտոն Վերեներ՝ նկատի ունենալով «պուանտիլիստական» երաժշտո-  
թյունը: Մեկ, անհատականացված հնչյունի՝ որպես իմաստային միավորի  
մասին, որոշ պատկերացում են ունեցել նաև անցյալում: «Ծապոնիայի  
շինականացված երաժշտագիտությունը հիմնված էր առանձին վեցրած  
մեկ հնչյունի վճռորոշ դերի ճանաչման վրա», գրում է ճապոնագետ Յո-  
ֆանը և շարունակում. «Ահա այս սկզբունքով է խորապես տարրերվում  
Հին Արևելիք շատ երկրների երաժշտագիտությունն անտիկ շրջանի տե-  
սությունից, որտեղ գերիշխողը մի քանի հնչյունից բաղկացած, մեղեղիա-  
կան դարձվածն է»<sup>15</sup>: Սրանով կարելի է բացատրել նաև այն, որ Ալան  
Հովհաննեսին ահոելի հնչյունազանցվածների կողքին կիրառում է առան-  
ձին բնահատուկ հնչյուններ կամ դրամց խաղը: Օրինակ, մարդմբա նվա-  
գարանի կամ օդում հալվող զանգակների հնչյունները, որոնք ընկալվում  
են որպես մշուշ, թերև ամպերի ծվեններ, ինչպես դա տեղի է ունենում  
«Ֆանտազիայում» և այլ գործերում: Ալան Հովհաննեսի կողմից կիրառ-  
ված մի քանի սկզբունք ևս, որոնք կարելի է բնորոշել որպես «ամրիվա-  
լենտ»՝ հակադրամիանություն: Դապնական ավանդական երաժշտու-  
թյան մեջ երե երգը հնչում էր մինոր տոննայնության մեջ, ճապոնական լա-  
դում, ապա նվազակցությունը պիտի հնչեր մաժորում, չինական հնչյու-  
նաշարի մեջ: Այս բենեները մարմնավորում են իգական և արական սկզբ-  
ունքները (ին-յան), ծախս և աջը, երկիրը և երկինքը, ստվերը և լույսը:  
Հայտնի է, արևմտյան արվեստում նշված թևեռները երբեմն բնորոշվում  
են որպես ապոլոնյան և դիոնիսյան սկզբունքներ: Ինչպես են այս «ան-  
տիմոնիաները» դրսեորդվում Ալան Հովհաննեսի արվեստում: Նախ, ինչ-  
պես նշվեց, կոմպոզիտորը հաճախ է դիմում երկածայն կոնտրաստային և

15. Искусство Японии, стр. 28.

իմիտացիոն պոլիֆոնիկ և հետերոֆոնիկ շարադրանքին՝ նվազախմբի նույն կամ տարրեր խմբերի համադրումով։ Երկիր-երկինք, ստվեր-լուս հակադրամիանությանը հանդիպում ենք նաև «Սուրբ Վարդան» սիմֆոնիայում։ Տրոնքոնի ճախրող, լուսաշղող շարականահունց մեղեղին զուգադրվում է մոայլ բասերի դրդյունով, կարծես ալեկոծվող հրահեղուկից ուրբերի տակ հողն է ցնցվում։ Դա առավել ևս զգացվում է «Սուրբ Հեղինե լոռ» գործում «Քրաքիսի» տեսարանում։ Երկինք-երկիր, լոյս-խավար հակադրությունները դրսերպվում են նաև ջուրակի և լարային նվազախմբի համար գրված կոնցերտում, «Լույսի քաղաք» սիմֆոնիայում։ Նվազախմբի բամբ ձայների ոլորտում, պոետի խոսքով ասած, «նախա-ստեղծ քառուն է շարժվում», մինչդեռ վերևի ձայները լուս են «մաղում»։ Եվ այդ լուսներն այսուների հերքագայությունը կարծես անապատում Մովսեսին ուղղորդող լուս ամայի ընթացքն է պատկերում։

Անշուշտ, եվրոպական երաժշտությունն իր խորհրդաբանությունն ու իմաստն ունի։ Ահավասիկ մի օրինակ։ Գուտավ Մալերի 3-րդ սիմֆոնիայի 1-ին մասի վերաբերյալ հնան Բարտովան գրել է. «Գլխավոր պարտիայից, որն, ասես, մարմնավորում է արարչագործության ծանր, մուռ ոլորտը (ըստ Մալերի՝ նեռ չկենդանացած բնությունը) դեպի կապոր պարտիան (որը կարծես կերպավորում է արարչագործության փխրուն, լուսավոր, հեռավոր «քարձունքի» արձագանքը) ակտիվության զարթոնքի մի ալիք է հառնում»<sup>16</sup>.

Նույն երկինքը, նույն երկիրը արտացոլվում են նաև Ալան Հովհաննեսի սիմֆոնիաներում, կոնցերտներում, սակայն, ինչպես նշվել է, դրանք տարրերվում են Բեքհովենի, Շոստակովիչի, Մալերի, Արամ Խաչատրյանի սիմֆոնիաներից ոչ միայն արժեքով։ Եվրոպական արվեստում Տիեզերքի ուժերի պայքարի «քատերաբեմը» մարդու սիրտն է։ Եվ այդ պայքարը ընթանում է «խավարից դեպի լուս», «տառապանքի միջով դեպի ազատություն», «վիշերի միջով առ աստեր»։ Այս ամենը բխում է աղամական մեղքի գիտակցումից և ճերրազատվելու մղումից։ Պատահական չեն Հեգելը և մյուս մեծերը երաժշտությունը համարել են առավելապես քրիստոնեական արվեստ, այնպես, ինչպես ճարտարապետությունը և քանդակը՝ հերանոսական։ Զանի որ Ալան Հովհաննեսի արվեստը կրել է նաև հնդկական ուսագայի ազդեցությունը, ինդիկ երաժշտագետ Ռաֆիալ վա Մենոնի խոսքերը կարող են լրացնուիլ լուս սփռել Ալան Հովհաննեսի արվեստն ըմբռնելու խնդրի վրա։ «Սիմֆոնիան կամ կոնցերտը կարող են լինել գեղեցիկի և զաղագարի գագաթները, սակայն դրանք ավարտուն գործեր են... Ռազմայում այդպես չեն։ Ռազմայում չկա ավարտվածություն, քանզի աշխարհում ոչինչ ավարտված չեն։ Ռազման, ինչպես կյանքը, միշտ

16. И. Барсова, Симфонии Густава Малера, М., 1975, стр. 112.

գտնվում է կայացման վիճակում, հավերժական ծևափոխման մեջ... Նա չունի անցյալ, և նա չի կարող նույն ճանապարհը երկու անգամ անցնել...»<sup>17</sup>: Մնում է ավելացնել, որ «քեզիս-հակաբեզիս-սինթեզիս» երրորդությունը, որը բերելու վենյան սիմֆոնիզմի շարժիչ ուժն է, բնորոշ չետական երաժշտամտածողությանը: Այս իմաստով Ալան Հովհաննեսի արվեստում «սիմֆոնիա», «կոնցերտ» հասկացություններն իմշ-որ շափով պայմանական են: Իսկ ահա բազմաձայնության բարձրագույն երաժշտամեջ՝ «ֆուգան», հաճախ է հանդիպում նրա արվեստում: Պատճառը, հավանաբար, այն է, որ ճայների միջյանց նմանակումն՝ իմբրտացիան, առհասարակ ենթադրում է պոտենցիալ անվերջություն, ինչպես անվերջ կոչված կանոնում: Իսկ արևելյան ճեմերը, ինչպես ուզան, հակում ունեն անվերջության:

Հստա ամերիկացի քննադատ Ֆրեդ Գրյունֆելդի, «Ամենայինամիկ, ներուժ հավասարակշռությունը, որ երբեւ նվաճվել է Արևելքի և Արևմուտքի կողմից, իրազործվում է Ալան Հովհաննեսի երաժշտությամբ: Հայ-շուլանդացի ծագումով մի ամերիկացի երգահան, որ երկու հնարավոր աշխարհներից կերտել է լավագույնը: Վենետիկի Սան Սարկոյի ճարտարապետության պէս նրա երաժշտությունն իր ուժը քաղում է արվեստի մեջ երկու ուժեղ հոսանքների մրցումից, և արդյունքը շրեղորեն բյուզանդական է»<sup>18</sup>: Արևել-Արևմուտք մշակութային փոխհարաբերության մասին խոսելիս անհնարին է շրջանցել մեծն Արամ Խաչատրյանի պատմական առաքելությունը: Հայունի է, որ ակադեմիկոս Ասաֆիկ Արամ Խաչատրյանին անվանել է «երաժշտության Ռուբեն»: Հիրավի, ճոխ և գումազել է նրա երաժշտությունը: Սրա հետ մեկտեղ, Խաչատրյանի արվեստը օժտված է ներքին Վիթսարի գորությամբ: Մեծ է և նրա շառավիղը՝ քնարականից մինչև համաժողովրդականը, տոնականից մինչև տիեզերական ողը: Խաչատրյանի երաժշտությունը, կարելի է ասել, ավելի երաժշտական է, հոգեբանական: Ի դեպ, Ֆրիդրիխ Շելլինգը դիմու բնորոշել է որպես «երաժշտության երաժշտություն»: Մինչդեռ Ալան Հովհաննեսի երաժշտությունն ավելի գեղանկարչական է: Պատճառը նաև այն է, որ Ալան Հովհաննեսը ավելի շատ արտացոլում է աշխարհի տեսանելի գեղեցկությունը և այն արտահայտում նվազարանների հնչերամգների, գույների խաղով: Իսկ զուտ երաժշտական սկզբունքը դրսերվում է առավելապես պոլիֆոնիկ դրվագներում, հատկապես ֆուգաներում: Ալան Հովհաննեսի արվեստն իր մեծակերտությամբ, պանթեիստականությամբ հանդերձ, այնուամենայնիվ, սուրբեկտիվ է, ինչպես Ակրյարինի երաժշտությունը, որը

17. Պահան Մեհոն, Յանի հնդինակոմ մայսկի, Մ., 1982, սր. 38.

18. Ֆիցիլիս Բրուսայան, Սփյուռքի հայ երաժիշտները, էջ 369:

Առյանպես հաճախ ուղղված է դեպի տիեզերք: Արիմքնոյ է նաև տաղանդ-ներին բնորոշ մանկական անմիջականությունը, զարմանալու ունակությունը և բերկրանքը: Տեղին է մեջքերել ճապոնացի պոետ Կորայասի հասայի հետևյալ եռաստոր:

Փասիանն այնպես է կանչում,  
Կարծես ինքն է բաց արել  
Սուազին աստղը:

(բարգմ.՝ Նաիրի Զարյանի)

Այդպես էլ Ալան Հովհաննեսը: Լսելով «Ծաղկող դեմքենին» կամ «Վարդենին ծաղկում է» գործերը, թվում է, թե կոնսուլտորը առաջինն է տեսել այդ ծաղկեները և շտապ կանչում է, որպեսզի ուրիշներն էլ իր հետ հիմնան ծաղկունքով...

Հնդիկ մեծագույն ջութահակար Նեյդանը «Հինդու» բերրում գրել է. «Հովհաննեսը հեշտությամբ, զգայնությամբ ու արվեստով կառուցել ու զարգացրել է «Դհավալամբարին»՝ ոգեկոչելով դրա մեջ իր մեղեղիների ողջ խոհական-աղերսական բնույթը... Բնուրյան երևոյթների նկարագրական բնույթը՝ հնդկական նվազարանների արտահայտչական հնարավորություններով, վկայում է ստեղծագործողի հնարամտությունն ու վարպետությունը... Կյանքի և արվեստի մեջ համամարդկային, հանրությանուր մտածողության նոր դարաշրջանի սկիզբը առանձնապես հաջող է արտացոլված երաժշտական ձևի այդ հոլով հաջողված, թեկուզ միայն առաջին նախնական փորձներում»<sup>19</sup>:

Ինչպես տեսնում ենք, նոյն նպատակին հայ ուհիվրաները՝ Արամ Խաչատրյանը և Ալան Հովհաննեսը, հասել են տարրեր ուղիներով, ինչն առավել հարստացրել է համաշխարհային արվեստը։ Ըստ Գարեգին Նժդեհի, հայկական հնագույն երգերում անփոփած վեհ գաղափարների վերարձածումը և տարածումը «հայ մտաւրականութեան կողմօն ո՛չ մի-այն հայկական, հայրենասիրական, այլև համամարդկային պարտակա-նութիւն է»<sup>20</sup>. Եվ այդ պարտականությունն իր վրա են վերցրել թե՛ Արամ Խաչատրյանը, թե՛ Ալան Հովհաննեսը։

Ինչպես կանաչ դաշտը, մարգագետինները՝ գունավոր, երփներանգ ծաղիկներով, այնպես էլ հայկական ժողովրդական, հոգևոր և գուսանական երգերի հնչերանգները զարդարում են Արան Հովհաննեսի ստեղծագործությունները: Նշենք մի բանիստ: Զորակի և դաշնամուրի համար զրոված մանրանգագներում տեսական են «Մաճկար» երգի դարձվածները: Ինչպես Խաչառյանի Զորակի և դաշնամուրի «Երգ-պոեմում», Հով-

**19. ԱՐԴ, էջ 357:**

20. Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդիհ, Եր., 2003, էջ 152.

համեսի «Շատախ» պիեսում դաշնամուրի կրկնարանությունները (ռեպետիցիա), այսինքն՝ նոյն հնչյունի կրկնությունները, նմանակում են բառի հնչողությունը:

Չուրակի և դաշնամուրի համար գրված «Օրորը» պարզապես զուտ հայեցի ստեղծագործություն է, իսկ Չուրակի 2-րդ կոնցերտում նկատվում են Վանա «Ավետիս», «Հանոր» և այլ երգերի հնտոնացիաները:

«Լուսածագ» երկում զգացվում է Կոմիտասի դաշնամուրային գործերի ագրեցությունը, որոնցում Կոմիտասը նշել է «քառի և դակի ոճով», «փողի և թմբուկի ոճով», «նայի և քառի ոճով» և այլն: «Ծաղկող դեղձնին» երկում ճապոնական խաղիկներին նիահյուսվում է «Զոշարի» պարի դարձվածը, որը հնչում է նաև «Սուրբ Վարդան» սիմֆոնիայում: «Լույսի քաղաքը» սիմֆոնիայում փայլատակում է «Հոյ Նազան» երգի մի դարձվածը: «Հին ծառը» կվարտետում յուրօրինակ մի թեմա է հնչում, որի սկիզբը քվում է չինական, իսկ վերջը՝ հայկական: Դեռ ավելին, «Լույսի քաղաքը» սիմֆոնիայի 3-րդ մասի փորք ֆեյտայի թեման ձուլված է չինական, հայկական և խապանական հնչերանգներից, իսկ այս մեղենու նվազակցությունը քվում է, թե բոլերոյի ազդեցությունն է կրել: Այս «անցուղաքը» հիշեցնում է «մեցկե» կոչված մանրաքանդակի մետամորֆոզները: Եվ զարմանալի չե, քանզի Ալան Հովհաննեսն այնքան զգայուն է, որ, ինչպես ուզայի մեծ վարպետները կասեին, նա կարող է լսել-տեսնել «հնչյունի հակառակ երեսը»: Այս մերրափանցության շնորհիկ է, որ կարողանում է ընդհանություններ քացահայտել հայկական, հնոկական և այլ երաժշտությունների միջև: «Նա լավագույն կարող է միացնել հնագույն հոգևոր երաժշտությունը խիստ ժամանակակից երաժշտության հետ», գրել է «Նյու Յորք Չորնը Ամերիկը» թերթը<sup>21</sup>: Ինչ վերաբերում է Ալան Հովհաննեսի զուտ հայկական բնույթի գործերին, ապա կարելի է նշել նրա երգերը և խմբերգերը՝ «Արարատը» (Ավետիք Խասհակյանի խոսքերով), «Յար Նազանի» (Համաստեղի խոսքերով), «Վասպուրականը» երգերը՝ գրված Վիլյամ Սարոյանի խոսքերով և այլն: Այս երկերը, և առհասարակ, Ալան Հովհաննեսի ամրող ժառանգությունը կարուտ են լուրջ, մանրակրկիտ ուսումնասիրության և անաշառ զնահատականի, մանավանդ, որ նրա արվեստը եղակի է իր տեսակի մեջ: Իսկ դա նշանակում է քացահայտել հնտազութել Հովհաննեսի երաժշտությունը սանող ակունքները, մշակույթները, ավանդույթները: Օրինակ, 1965 թվականի փետրվարի 2-ին «Օրեգոն ջործը» գրել է. «Հովհաննեսը ոչ միայն կոմպոզիցիայի վարպետ է և գիտի նվազախումբը, այլև իր հույսերը փոխանցում է երաժշտությանը... նրա երաժշտության մասամբ քախծոտ երանգը պետք է վերագրել երգահանի հայկական ժառանգությանը»<sup>22</sup>:

21. Անդ, էջ 354:

22. Անդ, էջ 370:

Փաստորեն, ըստ ամերիկացի քննադատի, «հայր» և «քախիծ» հոմանիշներ են: Հավանաբար նա տեսյակ էր հայոց ճակատագրից, ցեղասպանությունից: Հիրավի, Ալան Հովհաննեսն արդեն աշխարհին նայում էր հայի աչքերով, հայի գիտակցությամբ: Այդպես էլ ժամանակին նա նկարագրել է իր տեսածն օդանավից. «Հրաշք պատահեց, – գրում է նա, – դեպի հյուսիս՝ մի քարձր ձյունակերտ հրաշք՝ մեծ Մասիսը... Ես գիտեի, որ բոլոր հայերն ու բոլոր բանաստեղծները ողբացել են այս երկու տորբ զագաթների խորանի վրա... Ու արևածագի երկվորյակ լուսե զագաթները՝ գույզ պահակների նման, հսկում են իր սրտին հանգչող Վանա լիճը, որ կարծես ծովացել է Հայաստանի կորած փառքի համար հեղած արցունքներից»<sup>23</sup>: Ալան Հովհաննեսի այս խոսքերն առավել ևս արժեքավոր են, քանզի դրանք բացահայտում են իր հսկ երածշտուրյան շարժառիքները և բանաստեղծական ենթատերստը: Կարող է հարց ծագել՝ իսկ որտեղից է թիում երա բազում գործերից ճառագոր անանա բերկրանքը:

Նախ՝ Ալանը լավատես էր, բացի այդ, նա էլ կարող էր Գարսիա Լորկայի պես ասել. «Ամենատխուր ուրախությունը բանաստեղծ լինելն է»: Եվ քանի որ հնդկական ուազան ևս սմուցել է Ալան Հովհաննեսի արկեստը, ուստի տեղի են Մենոնի հետևյալ խոսքերը. «Երածշտուրյունը հոգևոր կրոն է... իրականությունը նուրբ ըմբռնելու մի հոգեվիճակ, բերկրանքի, սրանչացման և զարմանքի մի վիճակ»<sup>24</sup>: Եվ ինչպես Վոլթրամգ Գյորեն, Ալան Հովհաննեսը ևս «ուրախությամբ կամքում էր Արևմուտքը և Արևերքը»...

Նույն զգացողությամբ կոմպոզիտորը վերաբերել է նվագարանների նրբերանգներին: Սարստիոնը մերք նմանակում է դուրուկին, մերք՝ հյոնդկական շենայի նվազարանին: Չինական տամտամի, մեծ բնբուկի, զանգերի, զանգակների միապաղաղ ոիբրմ հիշեցնում է բուրդյալկան տաճարներում կատարվող արարողությունները: Իսկ տավիղը, լարայինների պիցցիկատոնները նմանակում են հնդկական բամպուրին, որի մասին երգիշ Ֆայազ խանը ասել է. «Դա նվազարան չէ, այլ պարզապես իմ մայրն է»: Մի բացառիկ նվազարան, որի հիմնական և դրանց արձագանքող լարերից հոսող հնջունները պարուրում են երգը, յուրովի շողարձակում հնչյունների խորքից...

Անշուշտ, նշվածով չեն սպառվում այն աղբյուրները, որոնց ազդեցությունները կրել է Ալան Հովհաննեսը: Կոմպոզիտորը կիրառել է նաև 20-րդ դարում բյուրեղացված բազում արտահայտչամիջոցներ: Օրինակ, կլաստեր կոչվածը, որ նշանակում է մի խումբ հարակից հնչյունների համըն-

23. Անդ, էջ 358:

24. P. Մեսոն, Հայոց առաջնորդությունը և արարությունը, էջ 40.

թաց, իոծ հնչողությունը, կամ, ինչպես կոմպոզիտորն է ասում, «ազատ դժուգը»: Դա այն է, երբ նույն մեջեղիական դարձվածքը միաժամանակ կատարում են տարրեր նվազարամներ, բայց տարրեր տեմպերում: Արդյունքում, ասես, երաժշտական մի ամպամածություն է գոյանում ու անհայտանում: Հնարանքներից մեկն էլ «սահող պիցցիկատոն» է, երբ կսիրից հետո հնչյունը տեղից սահում է դեպի վերջին հնչյունը և մարում: Դա հատկապես լավ է լսվում բասերում: Նշենք նաև «ալետորիկայի» սկզբունքը, երբ կոմպոզիցիան կամ մի մասը հորինվում է պատահականության իրման վրա, հնչյունների պատահական գուգորդումների եղանակով:

Դժվար է պատկերացնել մի կոմպոզիտորի, որը 20-րդ դարում կերտել է սիմֆոնիաներ, և իմանալով Պրոկոփևի, Շոստակովիչի, Խաչատրյանի, Ստրավինսկու մասին՝ չի ուսումնասիրել նրանց արվեստը: Բացառություն չէ և Ալան Հովհաննեսը: Մանավանդ քննադատները բազմիցս նշել են նվազախմբին տիրապետելու նրա վարպետությունը: Պատահական չէ, որ Ալանի մեծակերտ գործերում տեսիլվում է Շոստակովիչի ազդեցությունը, հատկապես նրա վերջին՝ 15-րդ սիմֆոնիայի: Շոստակովիչի այս սիմֆոնիան բազմառության կատարելատիպ է: Ի տարբերություն Ալան Հովհաննեսի՝ Շոստակովիչն իր երաժշտությանը միաձուել է նույն քաղաքակրթությանը պատկանող հեղինակներ Ռոսամիի, Վագների երաժշտությունը: Այդուհանդերձ, Ալան Հովհաննեսի արվեստում նկատվում է հիշյալ սիմֆոնիայի գործիքավորման ազդեցությունը, հատկապես հարվածայինների և փողայինների:

Ոնանք կարող են պնդել, թե Շոստակովիչի 15-րդ սիմֆոնիայի վերջարանում, որն արտացոլում է հավերժությունը, կարելի է նկատել հնդկական ռագայի ազդեցությունը: Ինչ խոսք, դժվար կիմնի հերթել նման վարկածը, բանգի ամենայն հավանականությանը հանճարեղ սիրարահար Ռավի Շանկարի լեզենդար ելույթները Մոսկվայում պիտի որ արժանացած լինեն Շոստակովիչի ուշադրությանը:

Ամփոփելով Ալան Հովհաննեսի արվեստի վերաբերյալ մեր թողուցիկ դիտարկումները, նշենք, որ դրանք ինչ-որ չափով կարող են նկատվել որպես սուրբեկտիկ տպագորություններ: Եվ դա բնական է, երբ խոսքն ամենանձնական արվեստի մասին է, որի ընկալումը կախված է նաև ամհատի գեղագիտական ճաշակից ու կենսափորձից: Այսպես, օրինակ, մեր վերոհիշյալ այն մտքին, թե Ալան Հովհաննեսը քիչ է օգտվել պարուզաներից, լուրջումից, կարելի է հակագրել հենց կոմպոզիտորի մտքերը պառագմերի մասին: «Հովհաննեսը հսկայական նշանակություն է տալիս հընչող նոտաներին մեջ ամփոփվող կամ նրանց նույնությունը բարձնված ու չլսվող նոտաներին: Նա գտնում է, որ հնչող նոտաները չլսվողների զարդարանդակներն են միայն, որ ողջ հնչող երաժշտության մեջ ամփոփված է, կա,

գոյություն ունի շինչող երաժշտությունը... Զլսվող, շինչող այդ երաժշտությունը բացառիկ կարևոր է, էական, ինչպես և մինչոր հիսուսակերպը՝<sup>25</sup>

Անշուշտ, դա այդպես է: Սակայն մեզ հայտնի գործերում պատկաները այդքաղ չեն ընդգծվում: Մանավանդ, եթե հաշվի առնենք այն, որ Հովհաննեար ստեղծագործել է Անտոն Վեբեռնի դարաշրջանում, մի կոճպղիտորի, ում «պուանտիլիստական» երաժշտությունը համարում են «զուրբյուն, պաուզաներ՝ շրջապատված հեշտուներով»: Ավելորդ չեն մտարերել նաև Ալանի մտերիմ համախոհ Չոն Ջեյշին, ում ստեղծագործական սկզբունքները ևս բխում են ձեն-բորդիկմի փիլիսոփայությունից, որին բնորոշ են պարադոքսը, ինտուիցիայի պայծառացումները, լուրյան խորհուրդը:

Ալան Հովհաննեսն Ամերիկայի ամենաքեղմնավոր կոմպոզիտորներից էր: Եվ դա այն պարագայում, երբ նա իր բյուրավոր գործերից մոտ 1000-ը ոչնչացրել էր: Ի դեպ, այս փաստի վերաբերյալ գոյուրյուն ունեն տարրեր վարկածներ: Ըստ Ֆիշիխա Բրուտյանի, 1940 թվականին, երբ Բոստոնի քննադատները նշեցին Սիրենիոսի ազդեցությունը, Ալանը այրեց իր բազմաթիվ գործերը: Եվ որպես ներշնչանքի նոր աղբյուր, նա դիմեց հայկական և արևելյան երաժշտությանը<sup>26</sup>: Մինչեն Այրիս Փափագյանին տված հարցազրույցում ասվում է հետևյալը. «Նա (Հովհաննեսը) ցավով է հիշում իր վաղ շրջանի այն համարյա 1000 ստեղծագործությունները, որ ոչնչացրել է իր իսկ ձեռքով: Դա կատարվեց 1942 թվականին՝ Ահարոն Քովկանդի և Լեռնարդ Բերնսթայնի խիստ քննադատությունից հետո»: Մեկ այլ աղբյուրից տեղեկանում ենք, որ Ալան Հովհաննեսը իր մոր «իսիստ հսկողության տակ, ընդհանրապես չի առնցվել հայկական մշակույթին... 1930 թվականների սկզբներին պատահնին պատահաբար բացահայտում է Կոմիտաս Վարդապետի երաժշտությունը՝ և... որոշում է ասպարեւ մին: այլ գործ շուրջ 1000 գործերը, և այդպես է անում Ե»<sup>27</sup>:

Պատմության մեջ նման դեպքերը թիվ չեն: Հշենք Սանդրո Բուտիշելին, որը կրոնական գաղափարախոս Սավոնարոլայի դրդմաք Ֆլորենցիայի հրապարակում այրել է իր խոկ աշխարհիկ բնույթի կտավները և հետո սկսել է նկարել Տիրամոր պատկերը և արտացոլել հոգևոր այլ պատկերներ:

25. Ֆիզիկա բրուսյան, Սփյուռքի հայ երաժիշտները, էջ 366:

26. Անդ, էջ 349:

27. «Հայաստանի Հանրապետություն», 28.02.2008:

մը, հայկական շարականից մինչև հմուկական ռազմա, գողտրիկ երգերից մինչև օպերա, քոչարիից մինչև բալետ, հովկի շվիի կանչից մինչև ամպագոռոյ տրոմբոններ և շնչորներ... Կոմպոզիտորը ստեղծագործել է գրեթե բոլոր ժանրերով և ձևերով, աշխարհիկ և հոգևոր՝ մադրիգալներ, մոտենաներ, մեսսաներ, կոնցերտներ, ռապսոդիաներ, մշակել է տարրեր ժողովորդների երգեր, պարնηանակներ, 19 շարական և այլն: «Հովհաննեսը երաժշտություն գրող մերենա Ե», այսպես է բնորոշել նրան Նյու Յորքի ֆիլհարմոնիկ նվազախմբի գլխավոր դիրիժոր Անդրե Կոստեյանեցը: Եվ այս ամենը հնչեցրել են աշխարհահռչակ այնպիսի երաժշտներ, որպիսիք են Ֆրից Ռայները, Լեոպոլդ Ստոկվակին, Յեհուդի Մենուկինը, Ժան-Պիեռ Ռամպալը, Ռոբերտ Շոուն, ինչպես նաև հայտնի սիմֆոնիկ նվազախմբեր և այլ երաժշտներ: Ալան Հովհաննեսի բազմաբնույթ արվեստում, այնուամենայնիվ, գերիշխում է սիմֆոնիկ ժանրը: Նա կերտել է 67 սիմֆոնիա: Եվ եթեն Եվրոպայում ձևավորված «սիմֆոնիա» երաժշտածնն ըստ Էնրիկան նվազարաններով ներկայացվող տիեզերական դրամա է, որի ասպարեզը մարդկային սիրտն է, ապա Ալան Հովհաննեսի մոտեցումն այլ է:

Եվ նա, որ իր իղձերի հանգրվանը համարում էր Երևանը, Վկիվեկաննեայի ոգով կարող էր ասել. «Հայաստանիս հողը՝ ահա իմ երկինքը»:

Եվ որքան էլ Ալան Հովհաննեսին համարենին «քափառական հայ», մինույն է, նրա հայրենաբաղդ սիրտը լեռներում էր... Պատահական չէ, որ կոմպոզիտորի արվեստում լեռների թեման, կարենի է ասել, լայրմոտիվի դեր է խաղում: Նա պարզապես փառաբանում է լեռները: Ալան Հովհաննեսի վերջին՝ 67-րդ սիմֆոնիան կոչվում է «Ներքող լեռներին»: «Մեղմ լեռներին հաջորդում են խոր ձորերը, ապա վայրի սրածայր ժայռերը...», այսպես է նկարագրել Հովհաննեսը օդանավայրի իր տեսածը: «Ինձ թվաց, թե սիրելի ու վաղեմի Հովհաննի եպիսկոպոսն իր առյուծային ծայրն է քարձուացնում առ Աստված՝ «Գարրիել Հրեշտակապետին փողը շուտով պիտի հնչի ինձ համար»<sup>28</sup>...

28. Ֆիցիիա Բրուսյան, Սփյուռքի հայ երաժշտները, էջ 358:

## Ա Ռ Ն Չ ՈՒ Թ Ց ՈՒ Ն Ն Ե Ր

ԲՅՈՒԿԼԻՆ-Ը ԱԽՍԱՎԱՀԱՆՈՎ-ԶԱՐՅԱՆ.  
«ՄԵՌՅԱԼՆԵՐԻ ԿՂՋԻՆ»

Առնող Բէօկլին ծեր օրերին  
խաղ էր բաշխում իր պատերին:  
Կոստան Զարյան

### VILLA BÜCKLIN

Վիլլա Բէօկլին՝ վայր հովասուն  
բըլրան ծոցը պատսպարուած՝  
ուր ջուրերը հազարքոչուն,  
սաւառնումնվ արձաքացած  
լոյս են նադում արձաններին,  
եւ պսակազարդ՝ բացում, ցատկում,  
ողջոյն տալով երկինքներին՝  
փաքքուած կապոյտ սաւաններում:  
Բայց իմ հոգին՝ դաշոյններով  
տառապանքի վիրատրուած՝  
մեծ արձանիդ պէս փշրուած  
եւ ընկճուած-սարսափելով,  
վիլլա Բէօկլին, միշտ երգն է նոյն,  
սրտակտոր, անագորոյն,  
լսում կեանքի արձագանքից  
ու հեռաւոր խորհուրդներից...

\* \* \*

Վիլլա Բէօկլին, քո նոճիներ՝  
երազների փետուր-փետուր  
իջնող սարսուռ՝  
ինչքան այրուած յիշատակներ  
գիտեն պատմել ձայնով տխուր:  
Եվ երբ բամին  
լաց է տրորում ծառաստանում՝  
ծաղկապսակ քո լայն ուղին  
իին սէրերի ջահն է մարում  
ու ողբ ողբում սեւ ամպերին:

\* \* \*

«Մեռելների Կղզին» լրած,  
մոճիները՝ խումբ-խումբ ցցուած  
դէաի երկինք տրտմուրիսներ՝  
այս ժայռերում ապաստանած  
մունջ շուրբ են կամ հոգիներ:  
Մահ թերողի սրինգը այստեղ  
մի հոգեստանջ երգ է սովորմ.—  
մի պատմութեան ծայնը արեւ  
սրսլիումով սուզ է սրփոռում:  
Ծերմակ քաջամիդ հագած կիճեր  
սաղապաճեն անցան, գնացին,  
ու ժայռի ճօսու ուրուականներ  
յիշատակին խունկ ծխեցին:  
Միայն մենիկ առքիւրն է որ՝  
կարկաչում է հեզակայլակ  
ու ծառերին պատմում աղուոր  
առասպելը արեւաքագ:  
Ու ամէն ինչ հե՞տ է, փափաք:

Հանրաճանաչ ճշմարտություն է դարձել «Արվեստը արտացոլում է կյանքը» բանաձևում: Մինչդեռ լսու Օսքար Ուայլի և, այսպես կոչված, «մաքուր արվեստի» այլ ջատազովների, արվեստը ոչինչ չի արտահայտում, բացի ինքն իրենից, և «մաքուր արվեստի» իդեալին առավել համապատասխանում է երաժշտությունը և օրինամենտը՝ գեղազարդը<sup>1</sup>: Ուայլը գտնում է, որ արվեստի զարգացման միակ աղբյուրը, ուղին այն է, եթի արվեստի մի տեսակն իր սյուժեները փոխառում է մյուսից, այլ ոչ թե իրական կյանքից: Ավելին, անգիտացի գրողը պնդում է, թե «կյանքը կարող է գեղեցիկը քաղել միայն իրենից վեր կանգնած արվեստից, քանզի կյանքն ավելի է նմանակում արվեստը, քան հակառակը<sup>2</sup>: Արվեստի այլ տեսակներից սյուժեների փոխառնան հայտնի օրինակներ են Ֆերենց Լիստի «Պրելյուդներ», «Համլետ», «Դանքեի լոքերցումից հետո», Պյոտր Չայկովսկու «Ռոմեո և Ջուլիետ», «Համլետ», «Եվլուոր Բեովլուզի «Զայլը Հարուլը» և այլ գործեր, որոնք ներշնչված են պոեզիայով:

Քիչ չեն այն երկերը, որոնք կյանքի են կոչվել գեղաճկարչության ազ-

1. Կարելի է ավելացնել՝ նաև դասական բալետը, այսպես կոչված, «մաքուր պարը», որի կողմանակցների կարծիքով՝ պարը կարիք շունի գրական սյուժեի, այն ինքնարովանդակ է (ծան. խմբ.):

2. Культурология, Ростов-на-Дону, 1999, стр. 289.

դեցությամբ: Ահավասիկ, Մողեստ Մուտքագուկու «Պատկերներ ցուցահանդեսից» (ըստ Նիկոլայ Գարտմանի), Գուտտավ Մալերի 1-ին սիմֆոնիայի սգո քայլերգո (ըստ Ժաք Կալոյի փորագրանկարների), Պաուլ Հինդեմիթի «Գեղանկարիչ Մատիաս Գրյունեվալդ» սիմֆոնիան, Ղազարոս Սարյանի «Հայաստան» պանոն (ըստ Մարտիրոս Սարյանի)և այլ ծրագրային գործեր: Ոչ պակաս գլուխգործոցներ են ստեղծվել Առնոլդ Բյոկլինի (1827-1901) խորհրդապաշտական արվեստի ազդեցությամբ: Եվ ոչ միայն սիմվոլիստ-գեղանկարիչների շրջանում, այլև երաժշտության և պոեզիայի ասպարեզում:

Ըվեյցարացի նկարիչ Բյոկլինի գործերում գերիշխում են դիցաբանական, ֆանտաստիկ հերոսների կերպարներ: Հայտնի նկարներից են «Պանը և Նիմֆան», «Ողիսւսը և Կալիպտոն», «Ֆլորան», «Ծովափնյա Վիլլան», «Մեռյալների կղզին» և այլն: Որոշ թեմաներ խորացնելու նպատակով Բյոկլինը ստեղծում էր տարրերակներ: Այսպես, «Ծովափնյա Վիլլան» ունի երկու տարրերակ, իսկ «Մեռյալների կղզին»՝ չորս:

Նկատի առնելով հոգեհարազատությունը նկարչի բօրինակին, արտացոլման բարձր մակարդակը, հայ մեծանուն գրող Կոստան Զարյանի (1885-1969) "Villa Böcklin" բանաստեղծական շարքը և Սերգեյ Ռախմանինովի (1873-1943) «Մեռյալների կղզին» սիմֆոնիկ պոեմը, պայմանականորեն կարելի է դասել Բյոկլինի նկարների «տարրերակների» շարքը:

Բյոկլինի արվեստի հետ հայ բանաստեղծը առնչվել է դեռ Խոտիխյում: Կոստան Զարյանը գրել է. «Եկել ենք Հայաստան գիտակցարար, այս քշվառության հետ հաղորդակցվելու համար, «այո՞» ասելու նյուրական քշվառություններին: Այլապես Պոլսի էլ չէնք գնա՝ կմնայինք Բյոկլինի վիլլայի շքեղ բնակարաններում, որ Ֆլորանի քաղաքապետությունը տրամադրած էր հայ բանաստեղծին»<sup>3</sup>:

Թվում է, թե և Զարյանը, և Ռախմանինովը հորինելիս գրի են առնում Բյոկլինի վրձնով և ներկապնակով: Մենք, մեր հերթին, մի պահ օգտվենք Զարյանի «բյոկլինյան» գրչից, կերպարներից, որպեսզի առավել դիպուկ արտացոլենք Ռախմանինովի երաժշտության եկացները, «անհունապար, ոսկեխավար» մքնոլորտը:

Արվեստների համագործակցության լավագույն խրան էր հենց Բյոկլինի հիշյալ թեման: Նկարչի նախասիրած նոճիների սոսափյունը որպես «լայրմոտիվ» փոխանցվում է կտավից կտավ և, հանապատասխանաբար, Զարյանի երկից՝ երկ, արձագանքվում նաև Ռախմանինովի պոեմում, հատկապես ջուրակների բրբիններում...

Համաձայն հունահոռնեական ասքերի, Զարոնը՝ այրվող աշքերով մի

3. Կոստան Զարյան, Նավաստումար, Եր., 1999, էջ 15:

ծերութի, իր մակույկով ստորերկրյա գետով հանգուցյալների հոգիները տեղափոխում էր Վերջին հանգրվանը՝ խորհրդավոր մի կղզի: Ծիշտ է, Բյուլինի մակարում նշմարվում են լույսի, կյանքի հեռավոր արձագանքներ, սակայն հիմնական շեշտը մահն է: Մինչդեռ Ռախմանինովի պոեմում, ուր նույնպես գերիշխում է մահը, կյանքը, թեկուզն տեսիլիքի պես, կարելի է ասել, նույնպես «գործող անձ է» և հակադրվում է մահվան:

Մահվան և կյանքի այդ «հակադրամիասնուբյան» մասին լավ է ասված նաև Կոստան Զարյանի «Villa Böcklin» քերրվածում... Ըստ այլմ է՝ Ռախմանինովի պոեմում երաժշտությունը ծավալվում է երկու ոլորտներում: Մահվան տիրույթը համապատասխանում է նվազախսմի «ընդերքին», ուր դրդում են մթամած բասերը, հարվածային նվազարանները, իսկ կյանքի ոլորտը՝ բարձր նվազարանների վերին ռեգիստրներին, ուր քևածում են լուսավոր ֆլեյտաների, հոբոյների, ջութակների հնչյունները: Այս երկու ոլորտների միջև պարբերաբար տեղի է ունենում «անցուղարձ»: Անշուշտ, երբ խոսքը երկրային և անդրեկրային աշխարհների կապի մասին է, «անցուղարձ» բառը տարօրինակ է հնչում, քանզի մահկանացուներից դեռ ոչ ոք չի վերադարձել հանգուցյալների աշխարհից: Սակայն արվեստում այդ «անցուղարձը» հնարավոր է: Պատկերավոր ասած, մեզ՝ դիտողներին էլ հեղինակը «գետեղեղ» է հանգուցյալների աշխարհում, ուր տեսնում ենք նոճիներ, նշմարվում է թիավարող Քարոնը, ժայռակոփ տունը՝ պարապ լուսամուտներով, լուսավորված արձանը և այլն: Այս ամենը անհնարին կիմներ տեսնել, եթե նկարի խորքից չքափանցեր «արևաթափ» աշխարհի լույսը: Եվ լսելով Ռախմանինովի պոեմը՝ քվում է, թե կոճաղպիտորը նկարը դիտելիս, Օրփեոսի պես, իշնում էր հանգուցյալների աշխարհ և վերադառնում «զույս աշխարհ», նրա հոգին սավառնում էր երկու աշխարհների միջև:

Սիմֆոնիկ պոեմի հեղինակը, ինչո՞ւ չէ, նաև լսողը, պոետի պես կարող է ասել.

«Մեղյալների կղզին» լրած.  
Նոճիները՝ խումբ-խումբ ցցուած  
դէպի երկինք տրտմութիւններ՝  
այս ժայռերում ապաստանած  
մունջ շուրեք են կամ հոգիներ...

Ահա այսպես, մահվան թեման կարմիր, ավելի ստույգ, սև թելի պես անցնում է նաև Ռախմանինովի պոեմի միջով:

Կյանքի թեման կարելի է բնորոշել նույնպես Կոստան Զարյանի խորերով.

Այդպէս և մենք, սրտով ընկճուած,  
 իննելութեան դաժան ճամբում  
 երազների շողն ենք ըմպում  
 Ու սև գինին պատրամբների՝  
 որպէս զի կեանք մի քիչ լինի:

Ուխմանինովի պոեմը բացվում է Քարոնի մակույկի թիակների միապաղաղ հարվածների նմանակումով, որոնք հետզհետե ալեկոծում են ու փրփրացնում Ստիգոս գետի սև ջրերը: «Ենց այդ ոիրմիկ պատկերի վրա է հիմնված մահկան թեման: Կարելի է ասել, որ պոեմի ձևակառուցմը, դրամատուրգիան ոչ ակնհայտորեն հիմնված է «մոնոթեմատիզմի» սկզբունքի վրա: Այսինքն՝ երաժշտական ստեղծագործության կառուցման մի սկզբունք, որը հիմնված է մեկ թեմայի կամ թեմաների մեկ համալիրի հատուկ մեկնաբանության և շարադրման վրա: Այսպէս, պոեմում բարախող «կյանքի թեման» բխում է հենց մահկան թեմայի կերպարանափոխությունից, որ տեղի է ունենում լարայինների և փայտյա փողայինների. Զարյանի խորքով ասած, «արևարագ» հնչերանգների ազդեցությամբ: Եվ հակառակը, նույն թեման, «ծամածովնով» բարք ձայների, կլատնտների, ֆագոտների ոնքային տեմբրերով, խլացված շեփորի սահմուեցուցի հեջումով, քրոմատիկ կիսատոնների օծագալար սողումով և փոքրորկումով, արտացոլում է մահկան կերպարը: Մահկան թեման Ուխմանինովն իր հերթին բխեցրել է Անեղ դատաստանի գաղափարը մարմնավորող՝ «Dies irae» («Օրն ցաման») «սեկվենցիայից»՝ երգասացություն, որը վաղուց ի վեր ընդունված է Հռոմի կաքոլիկ եկեղեցու կողմից: Ըստ երաժշտական հանրագիտարանի, այս սեկվենցիայի առաջին գրառումները վերաբերում են 12-րդ դարին: Տեքստի վերջնական խմբագրությունը վերագրվում է 13-րդ դարի վաճական Տոմազո դի Չելանոյին<sup>4</sup>: Ահա այդ տեքստը՝

### Dies irae

Այն օրը՝ օրն ցասման  
 Տիեզերքը փոչի կղարձնի:  
 Վկա են Դափիքը և Սիրիլան:  
 Դողը կպատի բոլորին,  
 Երբ հայտնվի դատավորը,  
 Որպեսզի բոլորին խիստ դատի:

4. Музыкальная энциклопедия, М., 1974, т. 2, стр. 240-241.

Ի դեպ, այս խոսքերը երգվում են Մոցարտի, Քելուրինիի, Շումանի, Դվորժակի, Վերդիի և այլոց ուրվիշներում, սակայն նշված հեղինակների հորինած երաժշտությամբ: Իսկ նույն «Օրն ցասման» երգասացորդյան բուն մեղեղին, առանց խոսքերի, նույնպես օգտագործել են բազում կոմպոզիտորներ՝ Հեկտոր Բեոյիոզը, Ֆերենց Լիստը, Պյոտր Չայկովսկին և ուրիշներ: Հաշվի առնելով այս երգասացորդյան կարևորությունը և տարածված լինելը՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այս թեմային:

Աշխարհիկ ստեղծագործություններում դատաստանի թեման երկու նշանակություն ունի: Եվ այն օգտագործվում է հաճախ մարդկության, հասարակության կյանքի օրիհասական պահերին: Ստեղծագործության հեղինակը մի կողմից հայցում է Արարջի արդար դատաստանը, մյուս կողմից՝ ինըն է ընդգործ, զգուշացնում չարագործներին, իիշեցնում հատուցման մասին: Բավական է ուշադրություն դարձնել այն տարերվերին, երբ կոմպոզիտորները կիրառել են «Օրն ցասման» թեման: Դրանք կան պատերազմական, կան բռնատիրության, կան այլ արհավիրքների ժամանակաշրջաններն են: Շոստակովիչի «Համլետը» ստեղծվել է 1932-ին, այսպես կոչված, «Մեծ տեռորի» օրերին, Արքյուր Հոնեգերի «Մեռյալների պարը»՝ 1938-ին, 2-րդ աշխարհամարտի շեմին: Նիկոլայ Մյասկովսկին 2-րդ դաշնամուրային սոնատը գրել է 1908-ին և վերախմբագրել 1944-ին: Նույն և 6-րդ սիմֆոնիան գրվել է 1921—1923 թթ. և կրկին խմբագրվել 1947-ին, երբ Խորհրդային Սիուրյունը ֆաշիզմից հազիկ ազատված, կրկին ընկալ ստույնյան բռնապետության տակ: Արամ Խաչատրյանը «Օրն ցասման» խորալ կիրառել է 1-ին սիմֆոնիայում՝ 1934-ին, 2-րդում՝ 1943-ին, իսկ «Սպարտակ» բալետում՝ 1954-ին: Ի դեպ, 1957-ին այլ թեման օգտագործել է նաև Էդվարդ Սիրգոյանը՝ «Խնուրովուկցիա և պերաբետուում մորթիե» գործում:

Դատաստանի թեման Ռախմանինովն առաջին անգամ կիրառել է 1909 թվականին՝ «Մեռյալների կրզիմ» պրեմիամ, այնուհետև 1934-ին՝ «Ռապսոդիա Պագամինիի թեմայով» ստեղծագործության մեջ, 1936-ին՝ 3-րդ սիմֆոնիայում, իսկ 1940-ին՝ «Սիմֆոնիկ պարերում», որի առաջին կատարումը տեղի է ունեցել Ֆիլադելֆիայում՝ մասնաւոր Յուջին Օրբանիի դեկավարությամբ:

Դառնալով Ռախմանինովի պոեմին՝ նշենք, որ այն սկսվում է Անեղ դատաստանի թեմայով, որը, սակայն, դեռ հնչում է ստվերակերպ՝ հայտնվում են թեմայի միայն առաջին շրջա հնչյունները, որոնց երաժշտության հետագա զարգացման ընթացքում զումարվում են պակասող հնչյունները, և թեման վերհանում է իր ամբողջ տեսքով: Եվ ինչպես լուսինն ամպի տակից, դատաստանի այս թեմայի «գենքը» հետզհետեւ բացվում է, ավելի ճանաչելի դառնում: Ու թվում է, թե Անեղ դատաստանի օրն

**Է**մոտենում: Այսպէս, պոեմում անտիկ, մոայլ առասպելը մեկնաբանվում է քրիստոնեական աշխարհընկալման լույսի ներքո: Քարոնի թեման ունի նաև մկարագրական նշանակություն, ինչպես Ֆելիքս Սենդելսոնի «Հերքիդներ» նախերգանքը բացող թեման: Պարզապես, Սենդելսոնին Հերքիդյան կղզիներ տանող նավը ընթանում էր մերք ամպամած, մերք ժպտերես Ատլանտյան օվկիանոսում: Մինչդեռ, ինչպես գրում է Վասիլի Շոկովսկին. «Հավերժ գնում է Քարոնի նակույկը, բայց միայն ստվերներ է նա տանում»...

Պուեմի երաժշտության զարգացման ընթացքում, ինչպես նշվեց, Քարոնի թեման «անդրաշխարհից», տվյալ դեպքում նվազախմբի «ընդերքից», պարբերաբար բարձրանում է «զույս աշխարհ», վերափոխվում կյանքի բերկրանքն արտահայտող թեմայի: Այնուհետև, ինչպես պիտու կասեր, «Սիրո մակույկը, բախվելով կյանքի ալեկոծ ծովի ժայռակուտ ափին», փշրվում է ու վերստին գահավիժում ստորգետնյա Ստիգո գետի մութ ջրերի մեջ: Պուեմում մերը ընդմերք կածվելում են տարբեր ոճերի դարձվածներ, շողեր, որոնք սակայն ներդաշնակվում են ուսմանինով՝ յան մեղեղայնության հոդահոս ծավալման մեջ:

Օրինակ, կյանքի, լույսի թեման և նրա փոխակերպումը համակված են արևելյան երանգներով: Եվ դա բնական է, նախ ինչպես ասում են, լույսը Արևելքից է գալիս, բացի այդ Ռախմանինովի երաժշտական նտանողությանը խիստ բնորոշ է «օրինանուալիզմ»՝ արևելյապաշտուրյունը: Այսպես, եռորդի մենանվագներից մեկը հիշեցնում է Արամ Խաչատրյանի Չուրակի կոնցերտի մի դրվագը: Պոեմի լուսեղեն ոլորտում մի պահ պոռկում է սկրյաբինյան «Էքստազը», հուզավառությունը: Խակ մահվան կերպարը աղերսներ ունի Գուստավ Սալերի «Երգ մեռյալ երեխաների մասին» ստեղծագործության, Զայկովսկու 6-րդ սիմֆոնիայի հետ...

Ամփոփելով նշեմք, որ պատմի կիզակետում կենաց և մահու թնաները հնչում են միաժամանակ՝ հակադրամիասնական գոյակուրյան մեջ, կյանքի երազային թեման ջութակների և ֆլեյտայի հնչյունների թերով ճախրում է հեռավոր բարձունքներում։ Մինչդեռ ավելի շոշափելի է մահվան թեման, որի վերադարձով է ավարտվում է Ռախմանինովի «Սեոյալ-Շենի կողմին» պոեմը։

Ինչպես տեսանք, մահվան և Անեղ դատաստանի ունիվերսալ բառայի դիմել են տարրեր Ժամանակների, տարրեր ժողովուրդների բազում արմեադատենք: Հիրավի, ինչպես Միքայել Նալբանդյանն է ասել.

«Այնեւայն տեղ մահը մի է»...

## ՈԳՈՒ ԸՆՏԱՆԻՔ

Սոնատ և սոնետ  
Բերհովեն-Թերեյան  
Պետրարկա-Լիստ

Բոլորի համար ընդհանուր  
Ժառանգությունն ու խնդիրը

Միավորում են արվեստագետներին...<sup>1</sup>  
Թոնաս Էլիոբ

**Ա**րվեստի ճյուղերը հաղորդակից անորմերի են նմանվում: Ըստ Արքերու Շվայցերի, արվեստագետի հոգում միաժամանակ ապրում են և գեղանկարիչը, և բանաստեղծը, և երաժիշտը: Նրա արվեստը հիմնված է սրանց համագործակցության վրա: Այս կամ այն արվեստագետը պարզապես «խոսում» է այն լեզվով, որն իր մեջ գերիշխում է՝ ընտրում է այն լեզուն, որն առավել հոգինարագատ է: «Երբեմն անհատը դժվարանում է նախապատվորյուն տալ այս կամ այն ճյուղին: Այդպիսին էր երիտասարդ Վոլֆանգ Գյորեն, որը դեռ չգիտեր՝ գեղանկարչության եր նվիրվելու, թե՞ պոեզիային»<sup>2</sup>:

Ըստ Շվայցերի, Բախու գեղանկարիչ է երաժշտության մեջ: Խոկ Շիլերը մի առիթով խոսուովանել է, թե բանաստեղծություն հորինելիս հաճախ երաժշտական կողմն է «տեսիլվում», հետո նոր՝ ասելիքը: Ֆրիդրիխ Նիցշեն նույնական երաժիշտ է, խոկ Բերհովենը, ինչպես և Ռիխարդ Վազմերը, առավելապես բանաստեղծ է: Ակադեմիկոս Բորիս Ասաֆիկը Արամ Խաչատրյանին բնորոշել է որպես «երաժշտության Ռուբենս»...

Այն հարցին, թե ի՞նչ են արտահայտում նրա 17-րդ և 23-րդ տարբերությունները, Բերհովենը պատասխանել է. «Կարդացե՛ք Շերսպիրի «Փօքորիկը»: Եթե նոյն հարցը տային Վահան Թերեյանին իր «Հրաժեշտ», «Բացալայություն» և «Վերադարձ» ստեղծերի վերաբերյալ, ապա բանաստեղծը պիտի պատասխաներ: «Լսե՛ք Բերհովենի 26-րդ տարբերությունը՝ դաշնամուրային այս տոնատը, այսպես կոչված, ծրագրային երաժշտության բարձրագույն նմուշներից է: Սոնատի ծրագրի վերծանման հետ կապված է հետաքրքրական մի պատմություն:

Երաժշտագետ Եղուարդ Հանալիկը պնդում էր, որ նվազարանային երաժշտությանը տրված չէ արտացոլելու, մարմնավորելու որևէ կոնկրետ,

1. Թ. Էլիոբ, Մելոյաների երկիրը, Եր., 1991, էջ 116:

2. М. Друскин, История зарубежной музыки, стр. 228.

առարկայական ծրագիր: Եվ որպես օրինակ, թերում է հենց Բերիովենի հիշյալ ստնատի անհաջող վերծանումը՝ մի երաժշտագետի կողմից: Վերջինս, նշելով ստնատի երեք մասերի հեղինակային վերնագրերը՝ «Հրաժեշտ», «Քացակայություն» և «Վերադառն», կարծել է, թե խոսքը սիրո զույգի մասին է: Համալիկը հեգնում է, թե մնում էր, որ այդ երաժշտագետը պարզեր, ամուսնացած զույգի մասին է, թե՝ ոչ:

Սինդեռ Բերիովենի կողմից իր աշակերտ, քաղաքական գործիչ երց-հերցոգ Ռուդոլֆին նվիրված այս ստնատի ծրագիրը միանգամայն այլ է: Ստնատը գրվել է Վիեննայում, 1809 թվականի գարնանից մինչև 1810-ի սկիզբը: Այդ ժամանակ Ավստրիայի մայրաքաղաքը պաշարված էր Նապոլեոնի գործերով: Կայսերական ընտանիքը և իշխան Ռուդոլֆը լրեցին Վիեննան: Երկու ամիս անց պաշարումը հանվեց և քանակցություններից հետո իշխանական պատվիրակությունն անվնաս վերադարձավ: Վիեննական կոնֆրենսից հետո, երբ խաղաղությունն արդեն հաստատվել էր, կոնդողիստորը գրել է. «Վայրենի ավերումից հետո փորր-ինչ խաղաղ է: Աներևակայեի արհավիրքներից հետո... Սի քանի շաբաթ անընդհատ ես աշխատել եմ ավելի շատ հանուն մահվան, քան անմահության... Այդ դարաշրջանից ես այլևս ոչ մի կայուն քան չեմ ակնկալում...»<sup>3</sup>: Ահա այս իրադարձություններին է նվիրված Բերիովենի ստնատը: Ստնատի առաջին մասի նախարանը քացվում է, այսպես կոչված, «գալարափողային ուլեւ դարձվածով»: Գալարափողերի պարագայում այն քատկացած է լինում «սեքստա-կվինտա-տերցիա» վերջնարկ մատորային քայլով:

«Եղերափողային» այս տիպական դարձվածը ճանապարհի, ճաճ-փորդության խորիդանից է: ճանապարհի տպավորություն է ստեղծում և առաջին մասի Ալեգրոյի թեման իր նվազակցության զարկերակով: ճանապարհի, ընթացքի այս գաղափարն իր զարգացումն է գտել Ֆրանց Շուբերտի երգերում: Բերիովենն իր ստնատի սկզբում այս վերընթաց դարձվածը հետ է շրջում և վարժներաց այդ խոնարկող քայլն ավարտում քախծուում մինորում: Մոտիվի յուրաքանչյուր հնչյունի վրա հեղինակը գեր-մաներենով գետեղեղ է երեք վանկ՝ «Le-be wohl», որ նշանակում է «Մնաս քարով»: Ստնատում գերիշտող, պարբերաբար կրկնվող այս դարձվածը, որն ըստ էության «զայրմոտիվ» է, առաջին մասի վերջում հնչում է մաժո-րային լուսավոր երանգով, ինչը ներշնչում է հոյս և լավատեսություն:

Ստնատի երկրորդ մասը խոհական է և թեմատիկ նյուրով հիշեցնում է առաջին մասի նախարանը: Երաժշտությունը հագեցած է հոգոցներով, հարցական հնչերանգներով: Ահա այս «մանանեխի» հատիկներն են, որ ունանտիկմերի, հատկապես Ֆերենց Լիստի, Ռիխարդ Վագեների, Սեգար

3. A. Швейцер, И. С. Бах, стр. 323-324:

Ֆրանկի արվեստում վերածվեցին մեծակերտ, սիմֆոնիկ հիմնության: Սոնատի երրորդ մասը ոչ թե ապարտվում է, այլ իրքև կապող օղակ, գետակի պես ընկղողվում է երրորդ մասի հնչյունային «ծովի» մեջ:

Երրորդ մասը լի է ցնծությամբ, շեփորային կանչերով: Ըստ Անտոն Ռուբինշտեյնի. «Չկա ավելի սրտառուց թեմա, քան ֆինալի առաջին թեման... Այն հայտնվում է բոլոր երանգներով, ինչպես իրական հանդիպման պարագայում: Արագավազ պասաժներն արտահայտում են բերկրանքի պոտրկումներ, իսկ ալդորդային կտրուկ շեշտերը նմանվում են անհամբեր հարցուվորձի...»<sup>4</sup>:

Ուստի մեծ դաշնակահարն այնքան էր հափշտակված այս սոնատով, որ ասում էր. «...Սոնատն այնքան արտահայտիչ է, ոս այնքան եմ ձուլվել այդ երաժշտությանը, որ կկարողանայի յուրաքանչյուր տակտի տակ գրել այն, ինչի մասին ասվում է, նշել բոլոր գգացումները, նոյնիսկ իրաժեշտի պահին տեղի ունեցող բոլոր ժեստերը, գրկախառնումները: Բայց... «Վեհից մինչև ծիծաղելին ընդամենը մեկ քայլ է, և մենք այդ սահմանը չենք անցնի»<sup>5</sup>:

Մենք եկ գգուշությամբ նշենք, որ Բերեհովենի սոնատի ներշնչմամբ ստեղծված Թերեյանի սոնետները բնակ երաժշտության «քառացի» թարգմանությունը չեն, քանզի խոսքի կոնկրետությունը չի կարող փոխանցել երաժշտությանը հատուկ անորոշությունը: Հիրավի, եթե Թերեյանը չնշեր «Պերեհովենի սոնատին վրայ» խորագիրը և սոնետների վերնագրերը, ո՞վ կարող էր կուհել, հաստատել դրանց կապը Բերեհովենի հետ: Պոետն արտացոլել է սոնատից ստացած ընդհանուր տպակորությունը, տրամադրությունը: Բացի այդ, Թերեյանն իր հերքին արտահայտել է իր գգացմումները, աշխարհընկալումը, իր կենսափորձը, հոգեշարժումները: Օրինակ, միայն մեկ «Վերադարձ» բառը, որպես խորհրդանիշ, որպես «արխետիպ» որքան տարրեր գուգորդումներ կարող է արքանացնել:

Զարմանալի մի դեպք: Հայտնի դաշնակահար Բենո Մոհիսենիչը Ռախմանինովի 10-րդ (սի-մինոր) անվերնագիր արեւյոտի բովանդակությունն արտահայտել է մեկ բառով՝ «վերադարձ»: Եվ հեղինակն այն հաստատել է: ԱԱՆ-ում ապաստան գտած հայրենազորկ Ռախմանինովի կյանքի միակ երազանքը մնացել էր Ուուսաստան վերադառնալը: Նույն «վերադարձ» բառը Ուենքրամնի արվեստում կապված է անառակ որդոյ վերադարձի, Հոմերոսի «Ողիսականում»՝ Ողիսակի վերադարձի, իսկ Միլրոնի պոեզիայում դրախտի հետ: Աշխարհով մեկ սկիռված հայերի համար «վերադարձ» բառի գերագույն իմաստն է՝ «Ձենք», լատ, թելք, երանք մըր էրգիր»: Եվ որքան ել տարրեր լինեն այս «վերադարձները», նրանց ընդհան-

4. А. Альшванг, Людвиг ван Бетховен, стр. 260.

5. Ю. Кремлев, Фортепианные сонаты Бетховена, М., 1970, стр. 248.

բացնողը սերն է և բաղձանքը...

Որքան էլ երաժշտության և խոսի միջև մշուշոտ լինի կապը, այնուամենայնիվ, Թեքեյանի սոնետների և Բերհովենի հիշյալ սոնատի միջև, թեկուզեւ արտաքին, բայց ընդհանուր ինչ-որ բան կարելի է նկատել: Օրինակ, առաջին սոնետը, սոնատի պես սկսվում է հրաժեշտի մոտիվով, այն է. «Մնաս բարով», որը կրկնվում է չորս անգամ, և ինչպես սոնատում, այստեղ էլ այն ձեռք է բերում «զայթմոտիվի» նշանակություն: Ավելի հեռավոր և «սուբյեկտիվ» ասոցիացիա է երկրորդ սոնետում տեսիլվող երազը, որ «կը շողայ սրտիս մէջ ու կը մարի համրաքար», նաև «Երբեմն լոյս մը նիհար, որ կը ցայտէ ձեռքիս վրայ»:

Երրորդ սոնետի հերթ, «առենան» իր զարկերակով նմանվում է սոնատի երրորդ մասի արագ տեմպին և ցնծագին տրամադրությանը.

Բայց չափ չունի, չունի՝ սիրտս ու կը զարմէ սիրտս ծափ,  
Վարար գետի մը վրայ սիրտս կ'երթա՛յ ափէ ափի...

Եթե Թեքեյանը տվյալ դեպքում երաժշտությունը վերածել է պոեզիայի, ապա Ֆերենց Լիստը բազմից վարվել է հակառակ կերպ:

Երաժշտագետ Սիխայիլ Դրոսկինը գրում է. «Լիստի երաժշտությանը բնորոշ է գեղանկարչական կերպարային սկզբունքը: Իր արվեստի միջոցներով նա ձգտել է փոխանցել «սեսողական» պատկերները՝ այն, ինչը բորբոքել է նրա ստեղծագործական երևակայությունը՝ ճամփորդության տարիներին, բնության հետ հաղորդվելիս կամ կերպարվեստի գլուխգործոցները դիտելիս: Կոնպոզիտորն արտացոլել է նաև այն, ինչն իր ընթերցած գրականության մէջ առաջացրել է տեսողական պատկերացումներ»<sup>6</sup>: Եվ արդյունքում ստացվել է արվեստների մի օրգանական սինթեզ, որը կարելի է բնորոշել բանաստեղծ Ժար Պրևերի բարախաղով. «գեղաժշտություն» և «երաժնկարչություն»... Լիստն այնքան էր կանված կերպարվեստով, որ նտախայից բեռլիոզին գրել է. «...Ռաֆայելը և Սիրելանջելըն օգնեցին ինձ ըմբռնելու Մոցարտին և Բերհովենին»<sup>7</sup>: Լիստի ծրագրային գործերից են սիմֆոնիկ պոեմները՝ «Համլետ» (ըստ Շեքսայրի), «Իդեալներ» (ըստ Շիլերի), «Մագեպա» (ըստ Հյուգոյի) և այլն: Ավելացնենք նաև «Դանքե» սիմֆոնիան, դաշնամուրային պիեսներից «Նշանդեքը» (ըստ Ռաֆայելի), «Մտածողը» (ըստ Սիրելանջելոյի) և այլն: Լիստին ոգեշնչել է նաև Ֆրանչեսկո Պետրարկայի պոեզիան: Վկայությունն են «Պետրարկայի սոնետները» պիեսների շարքը:

6. ԱՅԴ:

7. Յ. Միլևտեն, Փ. Լիստ, Մ., 1971, թ. 1, սր. 228-229:

Դաշնամուրային այս պիեսները գրված են բանաստեղծի երեք սոնետների հիման վրա՝ թիվ 47, թիվ 104, թիվ 123: Այս սոնետները զարդարում են «Ուխտագնացության տարիներ». 2-րդ տարի. Խտախա» ժողովածուն: Սոնետների այս երեքնուկը միավորված է ոռմանտիկ սիրո զեղումներով, սրանչացմամբ, նրագեղությամբ ու Վեհությամբ:

Հիրավի, երեքնուկ, քանզի Լիստն առանձին այս սոնետների շարքը ենթարկում է երաժշտական օրենքներին: Նա կերտում է եռամաս ամբողջական մի միմետրիկ ձև, որի խաղաղ՝ առաջին և երրորդ մասերի միջև ալեկոծվում է դրամատիկ, պորկումնալից երկրորդ սոնետը: Առաջին սոնետում Պետրարկան օրինում է այն օրը, ժամը, երբ գերվեց իր սիրեցյալից, օրինում է նաև նրան փառաբանող իր «արցունքության երգերը»... Մի խորով այն ամենը, ինչ կապված է իր Դոննայի հետ: Այդպիսին է և Լիստի համահունչ երաժշտությունը՝ սիրո «օրիներգությունը»:

Երկրորդ սոնետում նույն «սիրո գերությունը» Պետրարկան բնորոշում է որպես դաժան և նենզ: Եվ ալեկոծվում է պոետի սիրտն ու անհծում ինքն իրեն: Այս սոնետում տիրում է «ամրիվալենտ»՝ հակադրամիասնական հոգեվիճակը: Ահավասիկ:

Չունեմ ես հանգիստ՝ պայքարն է ուժգին,  
Իմ սրտում հրդեն է, սառույց, խիճն և վախ:  
Թվում է քոչում եմ ամպերից անդին,  
Բայց կրկին պարտված, ընկնում եմ, ավա՛դ:

Ահա այսպես էլ Լիստի դաշնամուրի հնչյունարույլերը՝ մեր վեր են խոյանում, հուզավառվում, մեր՝ զահավթում, մեր՝ հալվում եթերում, մեր՝ կերպարափոխվում ամպերի պես, մեր՝ իրարիսի պես ժայրքում, մեր՝ երկնրից հջնում հանց օրինության «անձրև» պապակ սրտին...

Երրորդ սոնետում վերականգնվում է առաջին սոնետի խաղաղ մքնուրություն, լուսավոր քախիծը, գորովանքը: Եվ հաստատվում է այնպիսի ներդաշնակություն, որ «Երբեք երկիրը լսած չէր: Երկինքը խոնարիկում է ու մոտնում երկրին», և բանաստեղծը հաշտվում է տիեզերքի հետ... Ի դեպ, իր տոնայնությամբ ու հնչերանգով այս սոնետը հիշեցնում է Լիստի «Սիրո անուրջներ» պիեսը:

Ինչպես վերը նշվեց, Ռուբինշտեյնը պատրաստակամ էր Քեթիովենի ծրագրային սոնատում յուրաքանչյուր տակտի տակ գրել համապատասխան խոսքեր: Լիստը մերթընդմերք, ասես, իրագործում է դա: Օրինակ, երրորդ սոնետի սկզբում կոմպոզիտորը նշում է կատարման բնույթը՝ հանդարտ, խաղաղ, նրագոյն և արտահայտիչ: Խակ 61-րդ տակտում նշված է «նրբագոյն», «ներդաշնակ»: Սրանով Լիստը ձգտում է երաժշտությունը կատարելապես միաձուլել Պետրարկայի սոնետի տեքստին, որի վերջում

պոետը նույնապես օգտագործում է «հարմոնիա»՝ ներդաշնակություն առանցքային բառը...

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Լիստը ստեղծել է Պետրարկայի սովորությունը երաժշտական կատարյալ համարժեքը: Եվ թվում է, եթե Ռուբինշտեյնը կամ հենց ինքը՝ Թեքեյանը, Լիստի այդ երեք պիեսները վերածեն խոսքերի, ապա արդյունքում կստացվեին Պետրարկայի նույն սովորությունը:

Սա արվեստների համագործակցության, արվեստագետների հոգեհարազարդության լավագույն դրսևորումներից է: Պատահական չե, որ որպես բնարան մեջբերել ենք Էլիոթի հայտնի միտքը և այժմ ներկայացնում ենք արվեստարան Անդի Ֆույյոնի համահունչ գաղափարը:

«Եթե հարկ լինի կապեր և հարաբերություններ փնտրել բոլոր արվեստագետների միջև, ապա կտեսնենք, որ... նրանց բնորոշ են ոգու՝ ձևերին առնչվող նմանությունները... Անհրաժեշտարար հանգում ենք «հոգևոր ընտանիքների»... «Ճեկի ընտանիքներ» հասկացությանը... Իրաք հետ երեւէ դույզն-ինչ կապ չունեցած վարպետների միջև, որոնց բաժնում է ամեն ինչ՝ բնությունը, տարածությունը, դարերը, ձևերի կյանքով հաստատվում են սերտ հարաբերություններ...»<sup>8</sup>:

Այսպիսով, այս աշխարհին հրաժեշտ տված, միմյանցից դարերով բաժնված հիշյալ արվեստագետների գլուխգործոցները նրանց «վերադարձի» մշտահունչ ավետիսներն են:

ՀՐԱԺԵՇՏ, ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԴԱՐՁ...

8. Ա. Ֆույյոն, Զեերի կյանքը, Եր., 1999, էջ 69-70:

## ՍԱՐՈՅԱՆ-ՍԻԲԵԼԻՈՒՄ

**Վ**իյամ Սարոյանը մի առիթով ասել է, թե մեծին ճանաչելու համար ինքդ պիտի մեծ լինես: Եվ դա կարելի է վերագրել հենց իրեն՝ Սարոյանին, քանզի նա ըստ արժանվույն գնահատում էր ժամանակի մեծերին և հաճախ հաղորդակցվում նրանց հետ:

Սարոյանը մտերիմ էր Զորջ Գերշվիլի հետ, հանդիպել է Բերնարդ Շուին, Չապլինին, Պիկասոյին, Էլիոթին, Եղիշե Չարենցին և այլոց:

1935-ին շրջագայել է Հայաստանում, Ռուսաստանում և այլ երկրներում: Այցելելով Ֆինլանդիա՝ Սարոյանը հանդիպել է մեծ կոմպոզիտոր Յան Սիբելիուսին (1865-1957): Երիտասարդ գրողը այդ նվիրական «ուստագնացությունը» կարողացավ իրագործել շնորհիվ իր առաջին վաստակի, որը ստացել էր «Խնդզախ պատանին բռչող ճոճածողին և այլ պատճը վածքներ» ժողովածովի համար: Հիրավի, Սիբելիուսին այցելելը մի ուստագնացություն էր, պատահական չէ, որ նոյն 1935-ին կոմպոզիտորին հանդիպել է և Ալան Հովհաննեսը, իսկ հետագայում՝ նաև Արամ Խաչատրյանը: Սիբելիուսի կերպարը գրավել է և կանադահայ անվանի լրսանկարիչ Հովսեփի Քարշին, որն իր կատարած հայտնի լրսանկարում կարողացել է «կանգնեցնել» Սիբելիուսի ներքին կյանքի ամենաքնահատուկ «ակնքարթներից» մեջը:

Սիբելիուսը մեծ հեղինակություն էր վայելում թե՛ իր հայրենիքում, թե՛ արտասահմանում: 1890-ական թվականների վերջին Ֆինլանդիայի հանար դժվարին ժամանակաշրջանում կառավարությունը երիտասարդ կոմպոզիտորին շնորհեց ցմահ բռշակ<sup>1</sup>: Մինչ այդ, 1889-ին, արտասահմանում կատարելագործվելու նպատակով, ի թիվս մյուս արվեստագետների, Սիբելիուսն արդեն ստացել էր պետական բռշակ: Եվ մինչև 92 տարեկանը կոմպոզիտորն ապրեց՝ շրջապատված մեծ հարգանքով ու փառքով: Նրան այցելում էին և՛ երկրի ղեկավարը, և՛ պարզ մարդիկ, և՛ արտասահմանյան հյուրեր: Եվ բավկական էր Վիլյամ Սարոյանը Հելսինգֆորսի մի երաժշտական խամություն արտասահմեր «Յան Սիբելիուս», «Ֆինլանդիա» բառերը, որպեսզի վաճառողությին հնչեցնի «Ֆինլանդիա» սիմֆոնիկ պոեմի ձայնագրությունը և զանգահարի Սիբելիուսին՝ լսափողը փոխանցելով գրողին: Սարոյանը գրում է. «Եվ մինչև ուշի կգայի՝ ես արդեն հեռախոսով Սիբելիուսի հետ էի խոսում...»:

«Ես երկրի այսինչ մասում եմ ապրում, - ասաց նա, - եկեք ինձ մոտ ժամը յոթին...»:

Եվ այս հանդիպման մասին Սարոյանը նոյն օրը երեկոյան գրեց մի

1. Л. Энтелиес, Сибирь в композиторов XX века, Л., 1975, стр. 93.

պատմվածք, իսկ տարիներ անց՝ մի փոքրիկ լրացում, որպես մի հետգործյուն:

Սիրելիուսի երաժշտությանը Սարոյանը ծանոթացել էր դեռ Ֆինլանդիա մեկնելուց վեց տարի առաջ: Դա «Ֆինլանդիա» էր և «Ֆինլանդիա» սիմֆոնիկ պոեմը, որոնք նա հաճախ էր լսում ԱՄՆ-ում: Ի՞նչն էր այդքան հրապուրել գրողին: Չէ՞ որ նոյն ժամանակաշրջանում ԱՄՆ-ում հնչում էին Սորիս Ռավելի, Ռիխարդ Շտրաուսի, Սերգեյ Պրոկոֆիևի և այլ մեծերի գլուխգործոցները: Ի՞նչ ընդհանուր բան կարող էր լինել 70-ամյա ֆինն կոմպոզիտորի և 26-ամյա ամերիկահայ գրողի միջև: Մի բանիսի մասին Սարոյանն ինքն է նշել: Օրինակ, երկուսն էլ հաղթանակ էին: «Բարի հսկա». հետագայում այսպես պիտի կոչեին Սարոյանին: «Յան Սիրելիուսն անսովոր խոշոր մարդ էր՝ մեծ, խիստ լերկ գլխով: Նա մշտապես նոյնպես նյարդային էր, որքան եւս», գրում է Սարոյանը: Երկուսն էլ երեխայի անմիջականությունը պահպանած իմաստուններ էին: Իսկ սա ամերիկացի քննադատ Ռասկոյի տված բնութագիրն է Սարոյան-գրողին՝ հիշյալ հանդիպումից մեկ տարի առաջ. «...Նա բուռն է, պոռքկուն և խելացի, նա թախծուտ է, բնրուշ ու մարդկային, նա միամիտ է ձևանում, սակայն բնավ միամիտ չէ... Նա ատում է դաժանությունն իր բոլոր դրսնորումներով, նա հարգում է մարդկային արժանապատվությունն ու հպարտությունը»<sup>3</sup>: Ըստ երաժշտագետ Էկմանի՝ «Սիրելիուսի խոսքը հագեցած էր պարադրսներով և փոխաբերություններով, ընդ որում անհնարին էր որոշել, թե ինչն է նա լուրջ ատում, ինչը՝ լոկ խաղ է, տարօրինակություն»<sup>4</sup>:

Սարոյանն իր պատմվածքում իր իսկ աշքերը բնորոշում է որպես «Վայրի», իսկ Սիրելիուսի ժայտը՝ «քարկացած-բարի», դեմքը՝ «անողոք-գորեղ»:

Անշուշտ, կոմպոզիտորի և գրողի ընդհանրությունները չեն սպառվում Սարոյանի կողմից նշվածներով: Լսելով «Ֆինլանդիա» պոեմը, ծանոթանալով այդ կոթողի ստեղծման պատմությանը՝ ավելի շատ ընդհանրություններ են բացահայտվում երկու արվեստագետների միջև:

«Ֆինլանդիա» պոեմով Սիրելիուսը նշանավորեց 20-րդ դարի սկիզբը, որը պիտի անկախություն բերեր իր երկրին: Ֆինն ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը նոր փուլ էր քեակոխնել:

19-րդ դարավերջին ավելի էր սաստկացել ցարական Ռուսաստանի ճնշումը ֆինների համեմատ: 1899-ի մանիվստով Նիկոլայ 2-րդը վերաց-

2. Վիլյամ Սարոյան, Յան Սիրելիուսի «Ֆինլանդիան», Յան Սիրելիուսը Յարվենապատճենի իր տանը, «Արտասահմանյան գրականություն», Եր., 1, 2005 (քարզ). Արձի Բահչին-յանի:

3. Հայկական տպետական հանրագիտարան, Եր., 1984, հ. 10, էջ 241:

4. А. Ступель, Ян Сибелius, Л., 1989, стр. 19.

բեց Ֆինլանդիայի «քաղաքական ինքնավարության վերջին փշրանքները»<sup>5</sup>: Նույն թվականին Հելսինկիում տեղի ունեցան մի շարք հաճողական միջոցառումներ: Ամփոփիչ ներկայացմանը ցուցադրվեցին, այսպես կոչված, «կենդանի պատկերներ», որոնք մարմնավորում էին Ֆինլանդիայի պատմության և դիցարանության դրվագները: Պատկերված էր «Կալևալա» եպոսի հերոս, երգիչ Վյայնյամյոնենը, ֆինն ժողովրդի մկրտությունը և այլն: Ինչպես գրել է երաժշտագետ Ստուպելը, ներկայացումն ուղեկցվում էր Էյն Լեյնոյի բանաստեղծություններով: Վերջին տեսարանում, որը կոչվում էր «Ֆինլանդիան արքնանում է», ներկայացվեցին ֆինն անվանի գործիչները, ինչեցին երիտասարդությանը ուղղված կոչեր, իսկ ետնարեմից նշանարկում էին տեխնիկական և նշանակութային առաջընթացի խորհրդանշները՝ ֆիննական ժողովրդական դպրոցի և շոգեքարշի դրվագները:

Ահա այս «կենդանի պատկերների» համար Սիրելիուսի ստեղծած նախերգանքներից վերջինը՝ «Ֆինլանդիա» անվամբ սիմֆոնիկ պոեմը, տարածվեց աշխարհով մեկ: Այս կոտ, մեծակերտ ստեղծագործությունը սկսվում է պղնձյա փողայինների շեփորումով, դողանջներով, այնուհետև նաև հարվածայինների դրոյումով, ինչը ընկալվում է որպես համայն ժողովրդին ուղղված կոչ, ապա հնչում է թախծոտ, բայց վեհաշոր մեղնին, որին արդեն իսկ իր յուրօրինակությամբ կարելի է բնորոշել որպես սիրելի-ուսան նվազերգության տիպար: Այս երկու հակառիք ուղրտները, ամպերի պես բախվելով, «կայծակներ» են ցայտեցնում սիմֆոնիկ նվազախմբի հնչունային «երկնակամարում»: Սույն բախումից ել բռնկվում ու ծավալվում է լարված պայրար, որն ավարտվում է լուսավոր ուժերի հաղթությամբ և վերածվում համաժողովողական տոնախմբությամ: Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի ցնցող տպավորություն է գործել այս հայրենաշունչ կոքողը հայրենազորկ բիրլիստից Սարոյանի վրա, որը Ամերիկայի պես ազատ աշխարհում նմանվում էր բիրլիական հսկա, շղթայված Սամսոնին...

Անդրադառնալով «Ֆինլանդիա» պոեմի նշանակությանը՝ երաժշտագետ Լեոնիդ Շնտելիսը մեջբերում է ֆինն գործընկերոջ խոսքերը. «Ծնորհիվ այդ ստեղծագործության, ամբողջ աշխարհն իմացավ, որ հեռավոր Հյուսիսում ապրում է մի ժողովուրդ՝ փորբարիկ, բայց հանուն իր գոյության արիարար պայրարող»<sup>6</sup>:

Սարոյանը պատրաստվել էր Սիրելիուսին տասից ավելի հարց տալ: Բայց հուզված երիտասարդը հազիվ կարողացավ մի քանի հարց ուղղել կոմպոզիտորին: Սիրելիուսը նշեց, որ ամեն ինչ չէ, որ խոսքերով կարելի է

5. Ամի, էջ 33:

6. Л. Энтелис, Силуэты композиторов XX века, Л., 1975, стр. 92.

արտահայտել: Եվ դա հնչումների կրաշագործ ասել է խոսքի վարպետ Սարոյանին:

Հիրավի, խոսքի մեկ այլ վարպետ Ֆրիդրիխ Նիցշեն ասում էր, թե պոեզիայի բոլոր միջոցները միասին վերցրած ի զորու չեն փոխանցելու մի գողտրիկ մեջերու արտահայտչականորյունը:

Հանդիպման սկզբից ևեր կոմպոզիտորն, ասես, արվեստագետի իր հավատամբը հաստատեց: «Երաժշտությունը նման է կյանքին, – ասաց Սիրելիուսը, – այն սկսկոմ և ավարտվոմ է լուրջամ մեջ»: Ահա Սարոյանի հետևյալ հարցը. «Քաղաքների աշխարհը, գնացքներ, նավեր, երկնաքերեր, գետնուղիներ, օդանավեր, գործարաններ, մերենաներ, աղուկներ, ի՞նչ էֆեկտ սրանից...»: Սիրելիուսը պատասխանեց, թե երաժշտությունը է խոսում իր փոխարեն. «Միայն թե ոչ բառեր: Երաժշտության մեջ ինչ-որ բան այլ է»...

Եվ վերջին հարցը. «Ի՞նչն է մարդուն մեծ դարձնում»: Սիրելիուս ասաց, թե նարդ չի կարող նման բանի նասին խոսել: Երիտասարդ գրողն իր պատմվածքում հանդիպման անհարթությունները վերագրում է իր հուզվածությանը ու խոստովանում. «Դա հուզմունք էր... Դա չափազանց իշմար բան էր, որպեսզի այդ մասին խոսվեր... Ես բարձրություն զգացի, բանի որ նա այնքան երիտասարդ էր... Նյարդային, եռանդուն, անհամբեր, այնքան զարմանալիորեն անմեղք»: Սարոյանի մնացած հարցերը, փաստորեն, հուտորական էին և ինչ-որ չափով պարունակում էին իրենց խկ պատասխանները: Օրինակ, ճշմարի՞ն է, որ արվեստի բոլոր տեսակների նախատիպերը պոտենցիալ կերպով գոյուրյուն ունեն բնուրյան մեջ և արվեստագետի խնդիրը դրանք բացահայտելն է, ձևավորելը և բյուն-դացնելը:

Ասվածը, կարծես, արձագանքում է Սիրելանջելոյի այն խոսքին, թե բանդակագործը մարմարից հանելով ավելորդ մասերը, ի հայտ է բերում քարում թարմված պատկերը:

Մեկ այլ հարցում խորըն իրականության, բնուրյան, կյանքի և, այսպես կոչված, «երկրորդ իրականության», այսինքն՝ արվեստի, համապատասխանության նասին է: Այս հարցին Սարոյանն ինքն է պատասխանում պատմվածքում: Երբ իրականացավ գրողի իդգը՝ Սիրելիուսի երաժշտությունը լսել հենց հեղինակի հայրենիքում, թեկուզ ձայնագրությամբ, նա գրեց. «Քիչ բան չէ՝ լսել «Ֆինլանդիա» պոեմը Հելսինգֆորսում»: Շատ դիպուկ է Սարոյանի հետևյալ արտահայտությունը. «Դա «Ֆինլանդիան» էր: Եվ դա Ֆինլանդիան էր»: Առաջին «Ֆինլանդիան» պոեմի անունն է, ուստի չակերտված է, իսկ երկրորդը պոեմի ծննդավայրն է: Մինչ այդ նախադասությունը Սարոյանը գրել էր. «Ֆինլանդիա» բառն ուժեղ է, լավն է, և ես այնտեղ եմ...»: Արվեստագետի և նրա երաժշտության ու իրականության, ապրելակերպի փոխարարերությունները լուսաբանող հետաքրքր-

րական օրինակ է բերում և մեկնաբանում հնդիկ երաժշտագետ Ռազիավակ Մենոնը: Քաջ գիտակցելով, թե զարգացող երկրների մարդիկ որքան են ձգուում ապրել հարուստ երկրներում, մի երիտասարդ հնդիկ երաժշտի հրավիրել են Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ սարողի վրա նվագել սովորեցնելու: Նա հրաժարվել էր և ասել, թե ովքեր ցանկանում են իրենից սովորել, պետք է զան Հնդկաստան, և նա անվճար կպարապի նրանց հետ: Նա զգում էր, թե որքան էլ Ամերիկայում կյանքը հարմարավետ լինի, միևնույն է, այն ոչ ճշմարիտ է, քանզի զուրկ է մի քանի կարևորագույն քաղաքիչներից և լի է գայրակղություններով: «Հնդիկ երաժշտը օրգանապես միաձուված էր իր ապրելակերպի հետ, և փոխել այն՝ կնշանակեր երաժշտությունը զրկել այն ներդաշնակությունից, առանց որի կդառնար տեխնիկայի արվեստ, թեկուզ՝ փայլուն տեխնիկայի», ամփոփում է երաժշտագետը<sup>7</sup>:

Այս, թի բան չէ Սիրելիուահն լսել իր հայրենիքում Սուտմիում, ինչպես ֆիններն են իրենց երկիրն անվանում: Հետաքրքրական էր նաև Արամ Խաչատրյանի հանդիպումը Սիրելիուսի հետ 1955-ին. «...Ես հուզմունքով անցա մեծ կոմպոզիտորի տան շեմքից ներս: Համեստ կահավորանք, ամեն ինչ շատ պարզ: Նա ողջագործվեց և երկար ու սեղում նայեց աշբերիս մեջ... Սիրելիուսը շատ էր պատմում իր հանդիպումների մասին... Սի անգամ ուղիղով նա լսել էր իրեն անծանոք մի ջութակի կոնցերտ և անհամբեր սպասում էր, թե խոսնակը երր կիայտնի, թե ինչ երաժշտություն է դա և ով էր այդրան հիասքանչ կատարում: Պարզվեց, որ հնչում էր Արամ Խաչատրյանի Չուրակի կոնցերտը Դավիդ Օյստրախի կատարմամբ: «Ոմանք երաժշտություն գրում են գլխով, ոմանք՝ ուտքերով, իսկ ոմանք՝ սրտով», ասաց Սիրելիուսը՝ իրաժեշտ տալով ինձ: Կուզեի մտածել, որ նա ինձ դասում է Վերջիններիս կարգին: Սիրելիուսի երաժշտությունը, իմ խորին համոզմամբ, միշտ թիսել է մեծ արվեստագետի սրտից»: Հենց դա է հնարավորություն տվել նրան ֆիննական երաժշտությունը համեն իր երկրի սահմաններից և փառավորել աշխարհով մեկ»<sup>8</sup>: Ի դեպ, 1978-ին “Смена” ամսագրում տպված Արամ Խաչատրյանի հոդվածը հենց այդպես էլ կոչվում է՝ «Երաժշտությունը պետք է գրել սրտով»...

Յուրաքանչյուր երկիր իր գրավչությունն ունի: Խտալիան, Հունաստանը, Ֆրանսիան գովերգել են բազում արվեստագետներ: Միջերկրականի շերձ գրկում այս բացօրյա բանգարանները այցելել են շատերը: Ականդինավիայի «գրկաբաց» ժայռերը, առնական գեղեցկությունը և զորությունը ևս գովերգել են տարրեր ժամանակի, տարրեր ազգերի արվեստագետներ:

7. Բաղչավ Բ. Մենոն, Հայուն հնդկական մասնակի, Մ., 1982, սր. 57.

8. Վ. Յօզեֆովիչ, Արամ Խաչատրյան, սր. 185-186.

Հայունի է Եվգենի Բարատիմսկու (1800-1844) «Ֆինլանդիա» քերթվածը և  
մեկ այլ գողտրիկ բանաստեղծությունը:

### Ֆինլանդիա

Ժայռերի գիրկն ես առել ինձ՝ երգչիս,  
Գրամիտներ ֆիննական, գրամիտներ դարավոր,  
Երկրի սառուցյալ թագի պատվավոր  
Հսկաներ անթիվ, անդուլ պահակներ:  
Որքա՞ն եմ գերված ձեզնով, ահա տես՝  
Այնտեղ անսահման իր մուգ ջրերով,  
Ծովն է խառնվել երկնքին ծավի:  
Այստեղ շարքերով ժառերը խմբված  
«Քայլում» են հանդարտ՝ ժայռից դեպի ծով,  
Եվ պաղ ջրերի արծաք-հայելում  
Իրենց կուսական գեղն են վայելում:  
Օրն է ավարտվում, լույս է երկնքում:  
Գիշերը անմուր իշնում է, ճնճում,  
Աստղազարդ զգեստով զուգված-զարդարված,  
Բազմում ֆիննական ժայռերին զմայլված:  
Արդ, սա է հողը Օդինի ցեղի՝  
Հեռավոր ազգերի սարսափն ամեհի,  
Սա է օրբանն անհանգիստ օրերի,  
Գոռում-գոյշումի, ահոելի ավարի:  
Լոել է այժմ այդ կոչնակը զիւ,  
Չեն լավում Սկալդի երգերը վսեմ,  
Մարել է վառված դարավոր կաղնին,  
Վերամբարձ կոչերը ցրել է քամին:  
Որդիք տեղյակ չեն նախնյաց սիրանքից,  
Եվ սառած հողում իրենց կոտքերի,  
Հանգում է հայրերի փառքը վաղեմի:  
Այստեղ ամենուր լուրջուն է տիրում:  
Ո՞ւր եք, հերոսներ կեսպիշերային,  
Որ գրոհում էիր ալեկոծ ծովում:  
Զեր հետքը կորել է ձեր իսկ եզերքում,  
Այդ դո՞ւք եք ամպերից ժայռերին նայում  
Թախսոտ աշքերով, ապշած հայացքով:  
Պատասխան տվեք, լսնք ձայնը իմ,  
Որ լուս գիշերով հնչում է, կանչում

Ձեզ, որդիք հավերժ, արև ժայռերի:  
 Ինչպէ՞ս եք պոլկել ձեր բարե երկրից,  
 Ինչո՞ւ եք տխուր, ինչո՞ւ ձեր դեմքին  
 Տեսա ես ժայտ, բայց և նախատինք:  
 Եվ դուր չքվեցիր ստվերաց աշխարհում,  
 Չնիշվեցին նույնիսկ անուն-ազգանուն:  
 Իսկ մեզ ի՞նչ ասենք, ի՞նչ արժեք ունի  
 Մեր անլուրջ ցեղի փառքը անտեղի:  
 Օ, այս ամենը պիտ գնա-կորչի:  
 Բոլորի համար օրենքն կա մի հիճ՝  
 Դա ոչնչացման օրենքն է դժմի:  
 Եվ ամեն ինչում անիմանալի  
 Ողջույնն եմ լուս լուս մոռացումի:  
 Բայց ես՝ անհայտս, կյանքի սիրահար՝  
 Համուն հենց կյանքի, ես հոգով անհոգ,  
 Կերկնչե՞մ արդյոք բախտից անողոք  
 Ես՝ անցավորս, հավերժ՝ ինձ համար:  
 Ցնորք չէ՝ արդյոք վախը մոռացման:  
 Արդ պահը իմն է, ես էլ՝ պահինը.  
 Գայիս են, գնում մարդիկ անհամար,  
 Նրանց համար չէ իմ մեղմ տավիղը:  
 Թեկուզե ձայնս խոլ է ու նվազ,  
 Բայց ինձ տրված են շոայլ պարզեներ՝  
 Հնչյունի դիմաց՝ հնչյուն աննվազ,  
 Երազի դիմաց՝ կրկին երազեր:

Ընթերցողին կարող է բավար քանի այս բանաստեղծությունը գրված է Սիրելիուսի երաժշտության ազդեցությամբ: Սինչեն Բարատինսկին այս կերտել է 1820 թվականին, երբ Սիրելիուսը դնու չեր ծնված: Կարելի է պատկերացնել և հակառակը: Կոմպոզիտորն, ասես, Վերստեղծել է, հընչյունների միջոցով պատկերել բանաստեղծության կերպարները: Սիրելիուսն ինքը լինելով մեծ «ակալը», «վիպասան», անհասանելի ուժով հնչեցնում է պապանձված Ակալի «ճրգը վսեմ», արտացոլում վիկինգների սխրագործությունները, խստաշունչ բնության անկրկնելի գեղեցկությունը:

Մյուս բանաստեղծության մեջ Բարատինսկին գրում է.

Իմ մատիտն անարվեստ  
 Պատկերեց ձեզ խիստ ու վես:  
 Տխուր Ֆինլանդիայի ժայռեր...

Կենդանացրի իմ կամքով  
Չիգ ժայռերը արսորիս...

Եթե գոյության պայքարը, դաժան բնությունը վիկինգներին ստիպում էին նորանոր հողեր նվաճել, իշխել ծովերում, ապա նրանց հետնորդ Սիրելիուսը նվաճում էր նորանոր հոգևոր հորիզոններ, ոգու նոր բարձունքներ, հավերժացնում հայրենիքի գեղեցկությունը... Սուտմի գեղեցկությամբ էր ներշնչված նաև ֆրանսահայ գեղանկարիչ Հովհաննես Ալսագյանի «Ֆինլանդիայի լճերը» բնապատկերը, որտեղ նկարիչը ոչ թե «անարվեստ մատիտով», այլ բարձրարվեստ վրձնով «կենդանացրելը» է Ֆինլանդիայի «ասուած լճերը», ծանր ամաբերը: Իսկ թե ինչպիսին է տեսել Սուտմին Վահրամ Փափազյանը, կարելի է կարդալ իր հուշերում:

«Սիրելի ծյունախառն փորորկի միջից գնացըր տարավ ինձ ու իմ իմայրեսարիոյին դեպի հյուսիս: Սառած պատուհանների հետևից անցնում էին ու անցնում անտառներ, անտառներ, դարձյալ անտառներ հականողների, որոնց ծյունից ծանրացած ճյուղերը տարածվել էին թերի նման...»<sup>1</sup>: Եվ դժվար է ասել, թե որտեղ էր փորորիկն առավել մոլեզին՝ Ֆինլանդիայի ծյունապատ լեռներում ու դաշտերում, թե՝ Հետինկի քատրոնի թեմում, որ Վահրամ Փափազյանը Օթելլո էր խաղում... Ի թիվս այլ հատկությունների, մեծ դերասանը նշում է, որ ոչ մեկը իր «ուսած ժողովությունը չէր իիշեցնում ֆիններին իրենց մաքրասիրությամբ...»<sup>2</sup>:

Վահրամ Փափազյանի ասածը կարելի է վերագրել նաև հոգևոր մարդությանը: Բավական է լսել «Տուոնելայի կարապը» լեզենդը՝ «Կալևալա» էպոսից: Ինչպիսի մաքրություն՝ մահվան արքայության սև ջրերի հայելում արտացոլված է լուսովի պես կարապի ճերմակ «քոցը»: Հիրավի, Սիրելիուսի երաժշտությունը վառ վկայությունն է Վահրամ Փափազյանի ասածի և քննադատ Ֆլոդինի հետևյալ բնորոշման: «Անշուշտ, Սիրելիուսը... առավել ճշմարիտ և առանց որևէ ճիգի իր երաժշտության մեջ արտահայտում է ֆինն ժողովրդի բնավորությունը»<sup>3</sup>:

Իրոք, Սիրելիուսի երաժշտության մեջ, մասնավորապես, «Ֆինլանդիա» պոեմի լուսն հայելում Սարոյանը տեսնում էր այդ երկրի բնությունը, մաքրությունը, մարդկային բնավորությունը: Նա գրում է. «Ալղիկները գեղեցիկ էին, շատ հանդարտ և շատ քաղաքավարի: Գրողի գործն է հայտնաբերել, թե ինչպես են նման բաները լինում՝ այդ երաժշտությունը և Ֆին-

1. Աղօվի Բախչինյան, Հայաստան-Ականդինավիա, Եր., 2003, էջ 237:

2. Ան:

3. А. Ступель, Ян Сивеллиус, стр. 23.

Գալեն-Կալելայի որմնանկարներին<sup>4</sup>: Այդպիսին են Գալեն-Կալելայի վրձնած նկարները՝ ըստ «Երալեալա» էպոսի: Նշենք նաև Է. Յարնեֆելտի, Ա. Էղելֆելտի բնապատկերները, որոնցում հավերժացել են ձյունը և հողը, սկին տվոր հսկա եղամիները, սառած լճակները, քեռային օրվա լույսը...

Յո. Ռուներերգի խոսքերով գրված Սիրելիոսի «Ես այլս չեմ հարցը նում» ոռնանսում հարց է տրվում, թե ինչո՞ւ գարունը հավերժ չէ, ինչո՞ւ են ծաղիկները քառամում: Եվ ավարտվում է հետևյալ պատասխանով. «Ամենայն գեղեցիկը հավերժ չէ»:

Սակայն հենց այս գեղեցիկ ոռնանսը, ինչպես և Սիրելիոսի ու Սարոյանի լավագույն կորողները, հավերժ են: Հիրավի, գեղեցիկը հավերժանում է արվեստում...

Սիրելիոսի հետ հանդիպմանը նվիրված իր պատմվածքում Սարոյանն անդրադառնում է երաժշտության նշանակությանը, արվեստագիտի առաքելությանը: «Օ՛հ, Տեր Աստված, մարդու համար չկամ աշխարհագրական սահմաններ: Եվ աշխարհի քառսի մեջ ընկղմված երաժշտությունը զախշախում է սխալմունքի դժոխային պտուղները՝ անտեսելով անապատը և կերտելով մի անդասակարգ հասարակություն: Անցյալ տարի Անգլիայում քագավորը լսեց և իմացավ ճշմարտությունը, և վաղը Ներքրասրայում մի երեխա կլիմ և կիմանա ճշմարտությունը, և նույնը կլիմի քագավորների և երեխաների հետ՝ հիմիկվանից սկսած, հարյուր կամ հազար տարի հետո»:

4. Из истории зарубежной музыки, М., 1971, стр. 48.

## ԳՅՈՒԹԵԻ «ՎԱՐԴԸ» ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՏՈՒՄ

Փորիկ տղան մի վարդ տեսավ,  
Տեսավ մի վարդ դաշտի միջին...  
Գյութ

**Վ**աղուց ի վեր արվեստը բնորոշվում է որպես երկրորդ իրականություն: Այն կարելի է դիտել նաև որպես մի «մեղիում» (ոգեմիջնորդ) հավերժի և հպանցիկ իրականության միջև: Այս իմաստով «երկրորդ իրականությունը» ավելի իրական է, քան` առաջինը:

Տեղին է հիշել Գարեգին Նժդեհի ասույթը. «Ի՞րևս անօք՝ վաղուց է խորտակվել Բեթհովենը, չկայ նա, կան սակայն, մնում են նրա ակորդներն աստուածային»<sup>1</sup>: Արվեստում նույնիսկ անկենան իրերն ասես կյանքի են կոչվում, իմաստավորվում: Դա հաճախ իրագործվում է այս կամ այն առարկային մարդկային հատկություններով օժտելու միջոցով՝ մի երևույթ, որը կոչվում է անտրոպոմորֆիզմ:

Օրինակ, վարդը: Քանի՛-քանի՛ պոետներ, նկարիչներ գովերգել են վարդի կերպարը: Ծաղկապաշտ ճապոնացի Բասյոն ասել է, որ յուրաքանչյուր ծաղկի խիզախությունն այն է, որ ծաղկում է յուրովի: Այդեւս էլ արվեստում յուրաքանչյուր արվեստագետ յուրովի է «պահում» իր «ծաղկու»: Խոսքը տարբեր մենակաքանությունների մասին է, քանի որ միևնույն առարկան, երևույթ՝ իրք խորհրդանիշ, իր մեջ պարունակում է մենափառյան տարբեր հնարավորություններ, ավանդույթ դարձած պատկերացումներ: Արվեստում տարածված խորհրդանիշներից է վարդը: Այս ծաղիկն ունի մենափառյան ահոելի դիապազոն: Ահավասիկ, Զեյմս Հոլի խորհրդանիշների բառարանից տեղենկանում ենք, որ Վեներային խորհրդանշող վարդը, ի սկզբանե, սպիտակ էր, իսկ երեք փուշը ծակեց նրա ոսքը, արյան կարիքներից վարդը կարմրեց: Քրիստոնեության շրջանում վարդը դարձավ Մարիամ Աստվածածնի խորհրդանիշը: Տիրամորը երբեմն անվանում էին «ամփուշ վարդ», քանզի փուշը մեղքի խորհրդանիշ է<sup>2</sup>: Ըստ ավանդույթի, նախքան Աղամի մեղսագործությունը դրախտում վարդն աճում էր առանց փուշ: Խտալական միջնադարյան արվեստում Տիրամայրը պատկերվել է նաև վարդը ձեռքին (կամ մանուկ Հիսուսի ձեռքին)<sup>3</sup>: Հայտնի են նաև ֆլամանդացիներ Յակոպ Յորդանսի և Էրազմոս

1. Գարեգին Նժդեհի, Ասոյքներ, Եր., 2002, էջ 64:

2. Լյ. Խոլլ, Словарь сюжетов и символов в искусстве, М., 1999, стр. 124.

3. Անդ, էջ 124, 485:

Քվելինի կտավները, որոնցում Տիրամայրը և մանուկ Հիսուսը շրջապատված են վարդի դրասանգներով:

Կարմիր վարդը նաև խորհրդանշում է նահատակների արյունը, որի կաթիլներից վարդեր են քիսում: Սպիտակ վարդը նշանակն է սրբության: Իսկ դեղին վարդի խորհրդը թափիծն է: Տարիներ առաջ տարածված մի երգում հենց այդպես էլ ասվում էր. «Ժելտա րօզա-Յմելեմա ուեչալի»: Արևելյան պոեզիայում վարդը և սոխակը խորհրդանշում են սերը: Հիշենք Զամին, Հաֆեզին, Սաադիին, Նաղաջ Հովհաննին, Սայաթ-Նովային:

Անդրադառնալով Պետրոս Ղափանցու պոեզիայի խորհրդաբնությանը՝ քանասեր Թեոդիկը գրել է. «Էջմիածնի միարան Ղափանցի Պետրոս վարդապետը «...քաղձացել է, որ «Վարդենին»՝ Հայ ազգը, նորատունկ բողբոջի...»<sup>4</sup>: Նույն խորհրդանշիշը տեսնում ենք Գրիգորիս Աղքամարցի կարողիկոսի «Ծաղկունք ասեն» տաղում, որի մասին գրականագետ Մայիս Ավդալբեկյանը նկատել է. «Այս դեպքում բլբուլ հեղինակ պիտի դիտել իսկ վարդը՝ Հայրենիքը»<sup>5</sup>:

Արևմտաւելորպական պոեզիայում վարդին նվիրված ամենահայտնի քանաստեղծություններից է Վոլֆգանգ Գյորեի «Վայրի վարդը»:

Գերմանագետն Լևոն Սարգսյանի փոխանցմանը՝ գերմանական գրականագիտության մեջ ընդունված մեկնարանությամբ վարդը կույս աղջկա խորհրդանշիշն է: Աղջիկը դիմադրում է տղային, քայլ ապարդյուն՝ տղան տիրանում է նրան:

Մեկնության խնդիրներ են ծառանում ոչ միայն այս կամ այն քանաստեղծության բնագիրն ըմբռնելու, այլև քարգմանելու կամ երաժշտության վերածելու պարագայում: Օրինակ, Ֆրանց Շուրերտի «Վայրի վարդը» երգը վկայում է, որ կոմպոզիտորի և պոետի մեկնարանության մեջ տարածականություններ չկան: Շուրերտի երգի խաղացկուն մեղեդին այնքան պարզ է, որ ժողովրդական երգի է նմանվում, նույնիսկ մանկական երգի: Սրան նպաստում են նաև մեղեդու հեշտունների կրկնարանությունները, քառակուսի կառուցվածքը: Անպաճոյց է նաև հարմոնիկ հենքը: Մեղեդին ծավալիում է մաժոր հարմոնիաների վրա: Լուսավոր մաժորում քաւծող երգի 16 տակտերի ընթացքում հանդիպում ենք միայն երեք մինորային ակորդ, այն էլ հապանցիկ տեսիլիք պես չքանում են: Զարմանում ես, արդյոք սա նո՞ւյն Շուրերտն է, որը այս երգից մոտ մեկ տարի առաջ, 1814-ին կերտել է իր ամենաողբերգական երգերից մեկը՝ «Գրեթենն ճախարակի մոտ»՝ նույն Գյորեի խոսքներով, մինչդեռ անմեղությունը կորցրած աղջկա վշտի մասին հետազայում այնքան ուրախ երգ է գրել:

4. Շուշանիկ Նազարյան, Պետրոս Ղափանցի, Եր., 1969, էջ 54:  
5. Գրիգորիս Աղքամարցի, Տաղեր, Եր., 1984, էջ 9:

Այս պարադոքսը կարելի է լուծել Ալեքսանդր Պուշկինի հայտնի բանաստեղծության օգնությամբ: Ահավասիկ:

Եթե կյանքը քեզ կխաբի,  
Սի՛ զայրացիր, մի՛ սրգա,  
Խոնարի եղիր ու մի լար,  
Հավատա՝ լավ օր կգա:  
Սրտի կյանքն ապագան է:  
Ներկան՝ խորը ու տանջալի,  
Անցողիկ է ամեն բան,  
Կանցնի ու կըմոռացվի:

Ահա այսպես, երբ կյանքի բարձունքից հետադարձ հայացը ես ձգում, անցյալն այդքան ցավոտ չի ընկալվում: Այս առումով Գյորեի «Վարդ» երգը կարծես հանճարի մի ժամանակակից լինի:

Նման տրամադրությամբ է համակված Ֆրիդերիկայի երգը՝ Ֆրանց Լեհարի նույնանուն օպերետից, որը նվիրված է Գյորեի կյանքին: Օպերետում պոետի սիրեցյալ Ֆրիդերիկան հիշում է իր անցյալն ու երգում նույն «Վայրի վարդը» երգը...

Մեկնաբանության տեսակետից չի տարբերվում նաև Հայնրիխ Վեռների «Վայրի վարդը» երգը, որը գրված է Շոթերտի ազդեցությամբ: Սրանց կողքին Սավլանդը Դավիթ պատկերած շրեն վարդի պես վեր է խոյնում հայ դասական ռոմանսի հիմնադիր Ռոմանոս Մելիքյանի (1883–1933) «Վարդը»: Այս ռոմանսը և «Աշնան երգը» լույս են տեսել 1911-ին, Պետերբուրգում: Նոտաների անվանաթերթը ծաղկազարդել է մեծն Վարդգես Սուրենյանցը: «Վարդը» ռոմանսը գրված է Հովհաննես Թումանյանի բարգմանանության հիման վրա՝ բարգմանություն, որ իր դասականությամբ և ժողովրդի կողմից սեփականացնելու առումով համարվում է ինքնուրույն բանաստեղծություն: Թե ինչպես է մեկնաբանել այն Մելիքյանը, կարելի է տեսնել Դավիթ Սողոմոնյանին հասցեազրկած նամակում. «...Ինչ կա ավելի խոր ապրեցնող մի հեռանկար, քան մահը, երբ մարդ զգում է, թե ինչքան ասելու-երգելու բան ունի, երբ տեսնում ես, որ բոլոր վաս հույսերը դեռ հեռվում են, և դու ձգտում էիր այդ գեղեցկության, բայց հանկարծ Fatum-ը (ճակատագիրը- Դ. Ե.) գալիս է... և «բայց էլ շօգնեց փշոտ վարդին...»<sup>6</sup>:

Արվեստագետի տագիանը արտահայտված է նաև Աքարեկ Խնկոյանի խոսքերով գրված «Ես բլրով եմ» երգում, որի մասին Գ. Գյորակյանը

6. Գ. Գյորակյան, Ռոմանոս Մելիքյան, Եր., 1960, էջ 47-48:

գրում է. «...Վշտահար սոխակի կերպարը, որից խել են վարդը, և այլս չի խմանում, թե այսուհետև ո՞ւմ համար պիտի երգի իր երգերը, այստեղ ավելի շատ ընկալվում է որպես ողբերգական կերպարը այն երգչի, որը կորցը-րել է կյանքի ամենաքանչ ու գեղեցիկ պարզեղ, տաճաշիորեն վերապրում է իր արվեստի ավելորդությունն ու ապարդյունությունը»<sup>7</sup>: Ինչպես հավերը նախազգում են մոտալուտ երկրաշարժը, այնպես էլ Ռոմանոս «սոխակը», ասես, նախազգում էր 1915-ի հայերի ցեղասպանությունը, այնուհետև՝ 1917-ի հեղաշրջումը, որից հետո ոուս քանաստեղծ Վլադիսլավ Խողասկիը գրել էր.

Բավ է, պեսոք չէ Արվեստը վնի,  
Երկրին երգն է ափսոս,  
Հանգիր, Տասոյի վառ կանքեղ,  
Դու էլ լրիր, Հոմերոս...  
Գեղեցիկը և հուր լեզուն  
Խորթ է խուտն ամբոխին:  
Հարմոնիայի սովոր որդուն  
Չի ընդունում քաղքենին...

20-րդ դարասկզբից սկսած մշակույթի գոյության մասին մտահոգությունը համատարած էր: 1920-ին լուս տեսավ Օսվալդ Շիննցլերի «Եվրոպայի մայրամուտը» աշխատության 2-րդ հատորը, որը ներկայացնում է համաշխարհային մշակույթի պատմության ելեկցները: Մշակույթին հերթական հարվածը հասցրեց նացիստական Գերմանիան: Ըստ Էռիքյան, կոմպոզիտոր Անտոն Վեբենը արտահայտում էր Եվրոպայի ամբողջ մտափրականության տագնապը. «Այն, ինչ կատարվում է այժմ Գերմանիայում, հավասարագոր է հոգևոր կյանքի ավերման»<sup>8</sup>: Ոչ պակաս ավերածությունների ականատես ենք նաև այսօր, երբ «մշակույթը ողբում է ինքն իր վրա»... Այնպես որ, ժամանակին Ռոմանոս Մելիքյանի մտահոգությունը տեղին էր: Պատահական չէ, որ մի գողտրիկ վարդի քառամելը նրա սրտում արձագանքվեց որպես մեծ աղեսի սկիզբ:

Ռոմանոս Մելիքյանը պարզապես վերահմաստավորել է Գյորեի քանաստեղծությունը և ստեղծել սնիփական մի զոլվսգործոց...

Շուրեստի մեկնությունը պայմանավորել է իր իսկ երգի պարզ ձևը, տևողությունը, որ պարունակում է 16 տակտ, նոյն և Վենոնիի երգը, որ տևում է ընդամենը 14 տակտ: Շուրեստի երգը շարադրված է արևաշող

7. Անդ, էջ 131-132:

8. А. Венеци, Лекции о музыке, М., 1975, стр. 26.

«առլ-մաժոր» տոնայնության մեջ, Վեռների երգը՝ հովվերգական «Փա-մաժոր»-ում, իսկ Ռուսանու Մելիքյանինը՝ «Լուսնի սոնատի» խորհրդավոր «ղող դիեզ-մինորում»՝ համակած բերհովունյան խստաշում քանարեգությամբ և դրամատիզմով։ Մելիքյանի երգի մեղեդին բաղկացած է երկու մասից՝ նախերգից և կրկներգից։

Ինչպես լուսինը ամպի տակից, դաշնամուրի և տակու նախանվագի ընդերքից բխում է երգի մեղեդին։ Հոգոցի պես այն սկսվում է շոնչ-պառագայից՝ «Ի խորոց սրտի», նման Շոպենի դաշնամուրային 1-ին բարյադի թեման սկսող պառուզային։ Մեղեդին աստիճանաբար բարձրանում է վեր։ Հնչուժը կոտակվում է և 21-րդ տակուում բարձրակետում, ամենալարված պահին հանկարծ մարդում է (սուրբտու պիհնիսինո) և կրկներգում մեղեդին հետզինետև խոնարհվում է խորաշունչ պառուզաներով «կապակած» և «աեկվենցիայի» վարընթաց օղակներով վերադառնում է ի «շրջան յուր»։

Երգի առաջին մասում Գևորգ Գյորգակյանը նկատում է. «Վարդը տեսած ու մուտ վազող տղայի անհամբեր, բորբոքված վիճակը, քաղելու որոշումը, ապա վարդի թառամելը»։

Իրոք, 21-22 տակտերում բոլոր արտահայտչամիջոցները խորհրդանշում են թառամելու պահը, սակայն թառամելը «պիրոցես» է, որը շարունակվում է մինչև երգի վերջը։ Ի դեպ, վարդի ակնքարքային թառամելը տեղի է ունենում Գյորեի «Ֆառաւստում»՝ «Մեֆիստոֆելի շնչից», երբ Զիքելը Գրեքսինի համար վարդեր էր պոկում։ Ըստ Գյորգակյանի, Ռոմանովի երգի երկրորդ մասը «արտահայտում է իրադարձության ընդհանուր ողբերգական լուծման հետ կապված ափսոսանքի ու թախծի զգացմունքներ»։

Հիրավի, ափսոսանքի արտահայտությունն այնքան է տարածված հայկական երգերում, որ դրանք կարենի է բնորոշել որպես «ափսոսանքի ժանր»։ Ահա «ափսոսանքի երգերից» մի քանի դարձվածները։ Օրինակ՝ «Հազար ափսոս, Մոկաց Սիրզեն», «Ափսոս, Անուշ, սարի ծաղիկ», «Զէ՞ք Անին ափսոս է», «Քայց ափսոս, որ երաց էր» և այլն։ Սա պայմանավորված է այն մեծ կորուստներով, որ ունեցել է հայ ժողովուրդը։

Ի՞նչ արտահայտչամիջոցներով է կոմպոզիտորը արտահայտում ափսոսանքը։

Նախերգի նվազակցության կաշկանդված (սիմեոպային) ոիթմի զըսպանակը արձակվում է կրկներգում, ինչի հետևանքով հնչումային զանգված պոռքերումին՝ «մակընթացությանը» հաջորդում է կրկներգի «տոնաւտվությունը»։ Մյուս դիպուկ հնարքը հետևյամ է. մինչ մեղեդին գահավիժում է, բայց խորանում, դաշնամուրի աջ ձեռքի ակորդմերը հակառակ

շարժումով վերընձյուղվում են՝ կրկնությամբ հանդերձ, յոթ անգամ: Տարբեր աստիճաններից վերսկսվող այդ յոթ հնչյունաբույլերը կարելի է համեմատել երկնքում անհետացող օդապարիկների հետ, որոնք քամին պոկել են մի երեխայի ձեռքից, և նա ափսոսանքով նայում է նրանց հետևից:

Կամ դա հենց պոկված վարդի բույրն է «քուլա-քուլա» գոլորշանում երկրից՝ երկինք...»

Երգի ազդեցիկ արտահայտչամիջոցներից է նաև հարմոնիան: Իր երգի մեղեդին Ռումանոս Մելիքյանը թևավորում է Վազմերի, Շոպենի արվեստում բյուրեղացած ռոմանտիկ հարմոնիաներով՝ ստեղծելով հնչյունային մի միկրոտիեզերը, որում ճախրում է երգը: Բավական է նշել Շոպենի հիշյալ 1-ին քայլայի սկիզբը: Ավելին, Մելիքյանը երգում կիրառում է հետևյալ վագներյան սկզբունքը, որ վառ կերպով արտահայտված է «Տրիստան և Իզոլդա» օպերայում: Դիստոնան, լուծում պահանջող լարված ակրորդ լուծվում է, ավելի ստույգ փոխակերպվում է հաջորդ լարված դիստոնանս ակրորդի, որն իր հերթին լուծման կարիք ունի: Այսպես, ստեղծվում է դիստոնանսների մի շղթա, որը երկարագում է լարվածությունը և լուծումը դառնում է բվացյալ:

Հետաքրքրական գուգաղիպուրյամբ թե՛ Վեռները և թե՛ Ռումանոս Մելիքյանը նույն «Վարդը» երգի կրկներգերում (իսկ Շորերտի մոտ՝ ութիրորդ տակտում) կիրառել են միևնույն հարմոնիկ դարձվածը՝ այսպես կոչված, ընդհատված դարձվածը կամ, այսպես կոչված, կեղծ տոնիկա: Ամենալարված դիստոնանը՝ դրմինանտ սեպտակորդը, փոխանակ լուծվի սպասվող տոնիկայի (կոնստոնանս) մեջ, լուծվում է լադի վեցերորդ աստիճանի եռահնչյունի մեջ: Տվյալ համատեքստում այդ ժամանակավոր հանգրվանը կյանքի ընդհատման, հիարափության, ափսոսանքի տպավորություն է թողնում, ինչը համահունչ է հենց վարդի հետ կատարվածին:

«Վարդ» երգում դաշնամուրի դիստոնանսի (հարց)-կոնստոնանսի (պատասխան) հերթագայությունը, խաղը նմանեցնում է աստղերի քարրող լուսին: Երգի վերջում կոմպոզիտորը, հնարավորություն ունենալով լուծելու դիստոնանը, խուափում է, և երգի դաշնամուրային նվազակցության վերջին ինտերվալը մնում է շլուծված, անպատասխան: Եվ ասես Ռումանոս Մելիքյանն էլ Վահան Տերյանի պես հարցնում է: «Մի՞թե վերջին պուտն եմ ես...»

Ինչպես վերը նշվեց, տարբեր ազգերի կոմպոզիտորները գյորենի քանաստեղծության բնագրում նույնն են տեսել միևնույն խորհրդանիշը միանշանակ մեկնարանել, մինչդեռ Մելիքյանը ստեղծել է ողբերգական հակապատկեր: Եվ դա կարենի է քացատրել Նարեկացուն բնութագրող Հովհաննես Թումանյանի հետևյալ խոսքերով. «Այստեղ («Նարեկում»- Դ. Ե.) արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է, երկիրը բռնած, տանջած հոգին է, որ մոնչում է

մինչև Երկինք»<sup>10</sup>: Հայ հոգու հիշյալ հատկությունները նկատել է նաև ֆրանսիացին՝ Ռոմեն Ռուանը, 1906-ին Փարիզում կայացած մի համերգի առիթով, գրելով. «Երաժշտության մեջ հստակ դրսերպեցին ազգային առանձնահատկությունները: Հայը խոր է, ողբերգական և առնական նույնիսկ իր երազկոտության մեջ»<sup>11</sup>:

Հիրավի, արվեստը՝ Երկրորդ իրականությունը, ավելի իրական է. այսօր չկան Թումանյանը, Գյորեն, Շուբերտը, Ռոմանոս Սելիքյանը, չկա նաև «փորձիկ տղան», և սակայն նրա պոկած վարդը արվեստում մնում է անքառամ և մշտարույթ:

Ամփոփելով՝ մի աճգամ ևս հարկ է նշել, որ Թումանյան-Ռոմանոս Սելիքյանի «Վարդը» իր արժանի տեղն ունի արվեստի անդաստանում՝ Գյորե-Մոնցարտի «Սանուշակի», Գյորե-Շուբերտի, Գյորե-Վեոների, Գյորե-Լեհարի անքառամ «ծաղիկների» կողքին: Եվ նկատի ունենալով մեկնաբանության բազմազանությունը, երախտապարտ կոմպոզիտորները վըստահորեն կարող են Գյորեին դիմել բանաստեղծ Վահիդ Թարթիզիի խոսքերով: «Բո վարդը, քո նոճին խել են սրտիս անդորրը, քո հակինքը մանուշակ դարձած, փրթում է հասմիկի վրա...»<sup>12</sup>:

10. Թումանյանը բնանատ, Եր., 1939, էջ 177-178:

11. Վ. Յօզեֆովիչ, Արամ Խաչատրյան, ստր. 62.

12. Е. Р. Яковлев, Искусство и мировые религии, М., 1977, стр. 131.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից.....5

Միեր Նավոյան. Դանիել Երաժիշտ. Ի.-Ի.Ա. դարեր.....6

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հանիբալ դարպասների մոտ է».....10

Մոնողիա, պոլիֆոնիա և հոգևոր երաժշտություն .....

15

Մոնողիան և պոլիֆոնիան փիլիսոփայական տեսանկյունից.....22

Պատմության «պոլիֆոնիան» .....

27

Ֆոնոսֆերա՝ անաղարտության ոլորտ .....

35

Պալիմոդոմոն - դարձգիր .....

41

## ՀԱՍԱԾՆԱՐՀԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայնրիխ Շյուլց .....

47

Գեորգ Ֆիլիպ Տելեման .....

57

Գեորգ Ֆրիդրիխ Հենդել .....

62

Յոհան Սեբաստիան Բախ .....

75

Բախ. «Չարչարանքներ ըստ Հովհաննոյ» պասիոնը .....

81

Անտոնիո Վիվալդի. «Տարվա եղանակները» .....

84

Ֆրանց Ֆոնտեֆ Հայդն .....

89

Հայդն. «Մեր խաչված Փրկչի յոթ խոսքները» .....

97

Վոլֆգանգ Ամադեոս Մոցարտ. «Մահվան հետ կատակելու

աստվածային արվեստը» .....

100

Դարերի երկխոսությունը. Մոցարտի «Բախիանան» .....

110

«Ուրվիեմ».....112

Լյուտվիգ Վան Բերիովն. Բնություն-արվեստ .....

117

Ֆրիդերիկ Շոպեն. «Դու բրոնզ չեմ, այլ եթեր...» .....

127

Արցունը և անձրև .....

131

Նիկոլ Պագանինի. «Այստեղ,ուր վերջանում է մեր երևակայությունը, սկսվում է Պագանինին» .....	136
Յոհաննես Բրամս .....	147
Դաշնամուրային կոնցերտ թիվ 1 .....	158
Ռիխարդ Շտրաուս. «Սալոմե» .....	164
Յան Սիբելիուս. Ծրագրային ստեղծագործությունները .....	171
Սիմֆոնիկ պոեմ «Տապիոյա» .....	173
«Քաղաքարի խնջույքը» .....	175
«Թախտու Վալսը» .....	179
Ալբան Բերգ. Կոնցերտ ջութակի և նվագախմբի համար .....	181

## **ՀԱՅ ԵՐԱԺԾՈՒԹՅՈՒՆ**

Կոմիտաս .....	186
Արամ Խաչատրյան .....	203
Ո՞վ ժամանակներ, ո՞վ բարեկը .....	209
Ակունքների կանչը .....	210
Ջութակի և նվագախմբի կոնցերտը .....	213
Սղոցից մինչև Ստրառիկարիուս .....	221
Ալան Հովհաննես .....	225

## **ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բյուլին-Ռախմանինով-Զարյան. «Մեռյալների կղզին» .....	243
Ոգու ըմտանիք .....	250
Սարոյան-Սիբելիուս .....	256
Գյորեի «Վարդը» Արարատյան դաշտում .....	267

**ԴԱՆԻԵԼ ԵՐԱԶԻՇՏ**  
DANIEL YERAZHISHT

**ԱՍԵՆԵՆ ՄԱԶՈՒՄ ՀԱՅԵԼԻՆ ՑԵՂԻՆ...**  
Ակնարկներ դասական երաժշտության մասին

**THE BEST REFLECTION OF THE NATION...**  
**Essays on Classical Music**

Համակարգչային շարվածքը և էջադրումը՝ Սուսաննա Դուկասյանի  
Սրբազրիչ՝ Հեղինե Սուրադյան

Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, Երևան - 2008:  
Publishing House of Museum of Literature and Art ,Yerevan - 2008.

Չափսը՝ 60x84 1/16. Թուղթը՝ օֆսեր:  
17.25 տպ. մամուլ:



«Ամարաս» գովարան,

Երևան, Տիգրան 44

Երևանի պատմական գույքի պահպան

Հեռ. 560 479, 567 464

ՎԻԵԼԻԿԱ

ԵՐԳՈՏԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻՅ

36794



## ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ

Ծնվել է 1946 թ. Երևանում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական (1971) և օպերային-սիմֆոնիկ դիրիժորության (1974) բաժինները, այնուհետև Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1985), պրոֆեսոր Գենադի Ոնժեստվենսկու դեկանվարությամբ: Դիմնադրել և դեկանվարել է «Չարական», «Տաղարան», «Գանձեր» հնագույն երաժշտության համույթները: Դայկական և արևմտաեվրոպական միջնադարյան երաժշտության նմուշների նրա մշակումները՝ անսամբլի, ծայնի և երգեհոնի համար, ծայնագրվել են Ռադիոյի ֆոնդի համար, թողարկվել սկավառակներով: Անսամբլը հանդես է եկել Մոսկվայում, Ռիգայում, Տալլինում և ԽՍՀՄ այլ քաղաքներում, ինչպես նաև Ռումինիայում, Բուլղարիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում և այլուր: Սասմակցել է հոգևոր երաժշտությամբ նվիրված միջազգային փառատոններին, Բախի և Յենդելի 300 ամյակին (Մերձբաթիկայում): Դեղինակ է բազմաթիվ երաժշտագիտական հոդվածների: 2001 թվից Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դոցենտ է: